

ԱԿՆԱՐԿՆԵՐ
Մ Ի Ձ Ե Ն
Գ Ր Ա Կ Ա Ն
Ի Ա Յ Ե Ր Ե Ն Ի
ՊԱՏՄԱՌՈՅԱԼ

Ա

ОЧЕРКИ ПО
ИСТОРИИ СРЕДНЕАРМЯНСКОГО
ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

1

ԱԿՆԱՐԿՆԵՐ
ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա

1117



Միջին գրական հայերենը, որ XIII—XVII դարերի հայոց կենդանի գրական լեզուն էր, հայերենի զարգացման ամենից ավելի քիչ ուսումնասիրված մի շրջանն է: Սույն հատորը, որ կազմել են Հ. Անտոյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատակիցները (Հովհաննես Մուրադյան—«Ներածություն», «Հնչյունաբանություն», Մարկեն Մուրադյան—«Քառագիտություն», Սամվել Անթոնյան—«Եսեևարձան համակարգը», «Չթիզվող խոսքի մասեր»), բազմապիսի սկզբնաղբյուրների հանդամանակից բնությամբ ներկայացնում է միջին գրական լեզվի ինչպես ընդհանուր, նույնպես և առանձին կարգերին հասուկ կարևոր իրողությունները:

Խմբագրությամբ
Է. Ք. ԱՂԱՅԱՆԻ

26216

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

«Միջին գրական հայերենի պատմության ակնարկներ» այս հատորը, որ կոչվելով-հեղինակային աշխատանք է, իր մեջ ընդգրկում է «Ներածություն» և «Հնչյունաբանություն» (հեղինակ՝ Հ. Գ. Մուրադյան), «Քառագիտություն» (հեղինակ՝ Մ. Հ. Մուրադյան), ձևաբանությունից՝ «Խոնարհման համակարգը» և «Չթեփվող խոսքի մասեր» (հեղինակ՝ Ս. Մ. Անթոնյան) բաժինները:

Աշխատության հեղինակներն իրենց առջև նպատակ են դրել՝ ի մի բերել և ամբողջացնել այս բնագավառում մինչև օրս կատարված հետազոտությունների արդյունքները, ամենաբազմազան սկզբնաղբյուրների բնձնաժամ փաստական նյութի հիման վրա վերանայել տեսական որոշ դրույթներ ու եզրակացություններ, հնարավորության սահմաններում ավելի ամբողջական տեսով ներկայացնել լեզվական առանձին մակարդակներում հանդես եկող միավորների նկարագիրը: Եվ չնայած այն բանին, որ մինչև այս աշխատության հրատարակ գալը, մեր լեզվի պատմության այս շրջանի հետազոտության բնագավառում կատարվել է որոշակի աշխատանք (տե՛ս սույն աշխատության «Ներածություն» առաջին բաժինը), այնուամենայնիվ, այս գիրքը իր մի շարք կողմերով, հատկապես լեզվական նոր նյութի ընդգրկման ու մեկնաբանման տեսակետից, նոր խոսք կարող է լինել գիտության արդի էություն:

Հեղինակները, միաժամանակ, հետո են այն մտքից, քե սույն հատորում ներկայացվածը իր բնարկած խնդիրների, առաջ հաշված հարցադրումների ու դրանց լուծման, ինչպես նաև փաստական նյութի ընդգրկման տեսակետից, այս բնագավառում կատարվող աշխատանքի վերջին սահմանն է: Հայտնի է, որ միջին հայերենը մեր լեզվի այլ փուլերի համեմատությամբ ավելի բիշ և ոչ ամբողջ խորությամբ ուսումնասիրված բնագավառ է: Այս իսկ տեսակետից էլ բնական պիտի համարել, որ այստեղ առաջ հաշված որոշ հարցադրումներ, որպես նորություններ, կարող են երբեմն վիճելի լինել, իսկ որոշ եզրակացություններ էլ՝ դեռևս ո՛չ բավարար հիմնավորված ու փաստարկված: Անշուշտ, միջնադարյան նոր սկզբնաղբյուրների հայտնաբերմամբ ու օգտագործմամբ, Մատենադարանի ձեռագրային ֆոնդի ավելի լայն ընդգրկմամբ, հետագայում գաղտնի են ավելի ճշգրտվել ու լրացվել այս կամ այն հարցի մեկնաբանման

նև կազմած եզրակացություններն ու կոանումները: Սակայն, այսուհանդերձ, այն հարցերը, որոնք առաջ են բաշխված այս աշխատության մեջ, իրենց բնույթով ոչ միայն կարող են նետաճրճություն ներկայացնել, այլև՝ մեծապես նպաստել այդ հույն ուղղությամբ կատարվելիք նետագա որոնումներին:

Հեղինակները պատրաստ են ընդունելու ամեն մի օգտակար խորհուրդ ու անաշտ քննադատական դիտողություն, որոնք կօգնեն նրանց իրենց նետագա աշխատանքներում:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ն Ե Ր

Հ. Գ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն Ե Բ Ա Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Միջին հայերենի պատմությանը նվիրված ամեն մի նոր ուսումնասիրություն, գիտության մեջ նոր խոսք ասելու իր հավանության հետ միասին, չի կարող անտեսել այն ուսանելին ու արժեքավորը, որ ձեռք է բերվել գիտության նախորդ շրջանի անխոնջ մշակների ջանքերով: Միայն այդ բոլորի բըննագատական յուրացմամբ և փաստական նոր նյութի ուսումնասիրությանը է հնարավոր լուսարանել լեզվի պատմության ավյալ շրջանի բազմաթիվ հարցերը: Իսկ այդ հարցերը, իրոք որ շատ են՝ ինչպես ընդհանուր տեսության, այնպես և լեզվական կոնկրետ երևույթների մեկնության տեսակետից:

Չնայած որ սույն ուսումնասիրության մեջ այս կամ այն լեզվական երկվութի բնության ընթացքում որոշակի վերաբերմունք է ցուցաբերվում նախկինում դրանց պատմական լուսարանման նկատմամբ, այնուամենայնիվ, այստեղ անհրաժեշտ է միջին հայերենի ուսումնասիրության պատմության ու համառոտ ակնարկի, նկատի ունենալով այն հիմնական հեղինակներին ու նրանց աշխատությունները, որոնք որոշակի դեր են խաղացել այս բնագավառի գիտական մտքի զարգացման գործում:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեջ խոշորագույն իրավարձություն էր մեծ հայացոտ Ա. Այաբնյանի «Քննական բերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության լույս աշխարհ գալը (1866 թ., Վիեննա): Գրարարի հմուտ մասնագետ, օժտված լեզվական երևույթների խոր գիտողականությամբ, միաժամանակ կանգնած լինելով ժամանակի լեզվաբանական մտքի առաջավոր դիրքերում, Այաբնյանը հայոց լեզվի պատմության մի շարք կենտոտ հարցերի բնության մեջ հանդես բերեց դրանց պատմականության խոր ըմբռնում:

Մեր նպատակից ու ծրագրից դուրս է՝ տալ այդ մեծարժեք ուսումնասիրության մանրամասն վերլուծությունը կամ՝ նրանում արժարժված բոլոր հարցերի շարադրանքը: Այդ աշխատությունից մեզ, մասնավորապես, հետաքրքրելու է նաև հարցերը, որոնք անմիջապես առնչվում են միջին հայերենի առաջացման, զարգացման և նրա հետ կապված այլ խնդիրների հետ:

Նպատակ ունենալով պաշտպանելու աշխարհաբարի դատը և այդ կապակցությամբ ուրվազծելու աշխարհաբարի առաջացման պատմական ընթացքը, Այաբնյանը դար առ դար հետևում է հայերենի լեզվական հուշարձաններում տեղ գտած փոփոխություններին, հին լեզվի օրինակափոխություններից

կատարող շեղումներին, քննում է դրանց էությունը և ցույց տալիս, որ աշխարհաբարի տարրերը սկիզբ են առնում դեռևս Հին լեզվի (գրաբար) ընդերքում և աստիճանական զարգացմամբ միայն հասնում լեզվական նոր որակի: Արդևն իսկ V դարի մատենագրության առանձին հուշարձանների լեզվական բնութագրեր նրան բերում է այն համոզման, որ «...եղած դեոտոլոգիաներն ու բեզմած օրինակները պիտավորաբար երկու բան կհաստատեն. մեյ մը՝ Հին մատենագրական հայերենին ժամանակակից ընտանեկան կամ ուսմական հայերենի մը գուրությունը և մեյ մնալ՝ որ հիմա աշխարհաբարի հասուկ մնացած կամ զուտ աշխարհաբար երևցած բացատրություններ արդեն նախ հուշարձաններին կենդանի էին՝ մասնավոր նույն հասարակ լեզվին մեջ, կամ թե բաներ, գրավոր լեզվին մեջ ցանցա՞ր՝ բայց բնուստի խոսվածքի մեջ, որչափ կերևա, սովորական էին»¹:

Սակայն IV—V դարերի Հայաստանում մատենագրական հայերենին զուգահեռ քրիստոնեական կամ ուսմական հայերենի՝ գուրությունը Այսրենյանը չի բնութանում որպես երկու տարրեր լեզուների (կամ բարբառների) առկայություն: Այդ երկուսի տարրերությունը նա ընդունում է «...այնչափ միայն՝ որչափ որ միշտ և ամեն տեղ կենդանի լեզու մը յուր բարձրագույն և խոնարհանուցուն կարգերը կունենա, յուր գրավորական ու ժողովրդականը կզանազանե, հասարակորեն քերականական տարբերություններով ալ, որոնցմե որչափ ավելի կխորշի մատենագրությունը՝ նույնչափ ավելի հեռու կմնա այն մասին, որ արքունի սկսած է տիրող ըլլալու եվ ա՞ն աչա մասն է՞ որ իրար ալ՝ հառաչացած զարգացած՝ հետզհետե առած նորանոր ձևերովն ու կրած այլալուծություններովը վերջին դարերուս կենդանի լեզուն եղած է»²:

Գրաբարի ընդերքում աշխարհաբարի տարրերի առաջացման ու զարգացման նույն երթանությունը Այսրենյանը գալիս է նաև միջին շրջանի լեզվական հուշարձանների ուսումնասիրությանը: Հատվածներ մեջերևում միջնագրության առակներին, Մխ. Հեքացու Ջերմանց միախարությունից (ԺԲ դար), Սմբատի Պատմությունից (ԺԳ դար), որոնց լեզուն մի շարք էական կողմերով տարբերվում է Հին մատենագրության լեզվից, Այսրենյանը իրավացիորեն նկատում է, որ այդպիսի մի լեզվական որակ անհնար է, որ սակզովք մի հարյուրամյակի բնթացում: «Մենք այս լեզուն,— գրում է նա,— գործածության ժամանակին ստեղծվել է ժԱ և ԺԲ դարերուն լեզուն կանվանենք, բայց խորհրդածություն մը ասոր ժամանակագրական գիրքի կճշգրտես—նթև, ինչպես բացահայտ կտեսներ, ԺԱ և ԺԲ դարուց լեզուն և մեր կամ մեր նախընթաց գարուներ իրարու շատ մերձավոր են, և 6, 7 հարյուր տարվա փոփոխությունն այնչափ մեծ չէ եղած, բնական է հետևյալին՝ թե անկե գտնե քանի մը զար հառաջ ալ նույն իր կամ գրեթե նույն. որպիսի շքանք թե՛ ի՞նչ գարուն մեջերը նոր հայերենի մը հանկարծ երևան էլած է. վասնզի կարելի չէ մտածել՝ որ հարյուրավոր նորանոր բառեր, այնչափ նշանակությունը այլալուծություններ, տարրեր տարրեր կատմություններ, և միով բանիմ՝ բոլորովին նոր քերականություններ նոր լեզու մը՝ մեկ կամ երկու դարու միջոցին մեջ կերպացած ընդհանուր ու հասարակ եղած և հնույն տեղը փոխանակած ըլլա՞ծ»:

Տարբեր դարերի մատենագրական հուշարձանների լեզվական փաստերը քննությանը Այսրենյանը որոշակի փորձ է անում կատարելու հայոց լեզվի պատմության այս ժամանակահատվածի շրջանաբաժանումը: Նա VI դարի վերջին մինչև X դարն ընկած ժամանակաշրջանը անվանում է միջին դարեր: Այս էտապի համար բնորոշ է համարում նախորդ շրջանում ստեղծված լեզվական նոր երևույթների զարգացումն ու գործածության հանախացումը: Ընդ որում, կթև մատենագրության սկզբին մինչև VI դարը Հին և նոր լեզվի միջև եղած շեղումները ունեն դեռևս կենդանի լեզվի գրավոր և բանավոր արտահայտություններին հասուկ տարբերությունների առահման, այգա VII դարը համարում է այն սահմանագիծը, որտեղ որոշակիորեն արդեն ծնված է նորը, թեև դեռևս թույլ և չճանաչված:

Հին գրավոր լեզվին զուգահեռ բանավոր խոսակցական լեզվի զարգացումը VII դարից հետո ընկած ժամանակաշրջանում, ըստ Այսրենյանի, հասցնում է այն բանին, որ արդեն XI դարում Հին մատենագրության լեզուն զարգարում է կենդանի լինելուց, որին փոխարինելու է գալիս Հին ընդերքում ծնված նոր լեզուն: XI—XV դարերի այս հայերենը Այսրենյանը անվանում է «նախնայաց» կամ «ստորին գարուց ուսմիտրեն», որի բնորոշ առանձնատեսություններից է համարում՝ «անձալուծություն, անմխորհնակություն և օտարությունը հաճախություն»³: Իր ուսումնասիրության արդյունքները Այսրենյանին հիմք են տվել ստեղծել, որ «...զարգացածությանը սկզբներին հառաջ Հայաստանի (և կիլիկիայի) աշխարհիկ լեզուն բանի մը տեսակ էր»⁴: Սա նշանակում է, թե Այսրենյանը զարգացման միասնական պրոցես չէր վերագրում միջնագրարի բանավոր խոսակցական լեզվին: Եվ հենց այդ հիմքի վրա է, որ նա աշխարհիկ լեզվի զարգացումը դիտում է որպես առանձին զավառականների զարգացում, որոնք իրենց ընտանի ընթացքով հասան ժամանակակից բարբառներին և նրանց տարրեր հիմքերի վրա բարձրացող գրական լեզուներին:

Սակայն չպետք է մոռանալ, որ Այսրենյանի աշխատության նպատակը միջին հայերենի, իր խոսքերով ասած՝ «նախնայաց ուսմիտրենի» ուսումնասիրությունը չէր: Հետևելով աշխարհաբարի տարրերի առաջացման և նրանց զարգացման պրոցեսին, նա կողմնակի կերպով տվել է նաև հայոց լեզվի միջին շրջանի պատմության հետ կապված մի շարք տեսական հարցերի քննությունը:

Ինչի որ աշխարհաբարի առաջացման ու կազմավորման պրոցեսի ամբողջ ընթացքը միաժամանակ նաև միջին հայերենի առաջացման ու կազմավորման պատմությունն է, այս իսկ տեսակետից էլ Այսրենյանի «Բնական քերականությունը» և հատկապես այդ աշխատության «նախաշավիղ» բաժինը, որպես տեսական ուսումնասիրություն, իր մի շարք գրույթներով մինչև այժմ էլ չի կորցրել իր թարմությունը և գիտական արժեքը: Միաժամանակ Այսրենյանի «Բնական քերականություն» որոշակի դեր է խաղացել հայերենի հետագա պատմական ուսումնասիրությունների տեսության և մեթոդի մշակման գործում: Լեզվի պատմական զարգացման բնութանում, հատկապես մեր լեզվի միջին շրջանի՝ «նախնայաց ուսմիտրենի» առանձնացումը որպես հայերենի պատմական մի փուլի, որը ոչ թե լեզվի ազավազման կամ խաթարման արդ-

¹ «Բնական քերականություն», էջ 62:
² Անդ, էջ 120:
³ Անդ, էջ 161:

⁴ Եզվ. աշխատությունը, էջ 147:
⁵ Անդ, էջ 166:

յունք էր, այլ նրա բնական և օրինաշարի զարգացման հեռանկարը, որը զերբով է հետագա ուսումնասիրողների կողմից: Այս առումով Ղ. Հովնանյանի «Նետազոտությունը նախնայաց ռամկորների վրա՝ աշխատությունը Ալշարյանի գրությունների հետագա զարգացումն ու փաստական հիմնավորումն է՝ հատկապես միջին հայերենի նյութի բնութագրումը:

Հովնանյանը ևս իր առջև նպատակ չի դնում բննարկվող շրջանի լեզվի համակողմանի հետազոտությունը, այլ՝ «...այն մասանցն եվեթ պիտի նվիրենք մեր գլխավոր ուշադրություն, որը կապ ու հարաբերություն ունին արդի լեզվին հետ, այն մասանց՝ կրեան՝ զորս եղանակով իվիք մեկի սեպհահանան ենք կամ՝ որոնց մեկի բնտանանալ բազմալի կերտա՞: Սուսումնասիրության այդ եղանակը ունի միակզամայն գործնական նպատակներ. «նախնայաց ռամկորները՝ պետք էր ուսումնասիրել արդի լեզվի կառուցվածքը հասկանալու և մյուս կողմից՝ արդի լեզուն միջին հայերենի բառերով ու գործածությունով հարստացնելու համար:

Իր աշխատության «նախաշարիչ» բաժնում Հովնանյանը իր առջև խնդիր է դնում պարզել, թե որտեղից և ե՞րբ ժազեց «նախնայաց ռամկորները»: Այսուհանդերձ Հովնանյանը V դարի Հայաստանում ընդունում է առանձին դավառականների առկայությունն այն շարժով, որ գրանցից մեկի վրա բարձրացած գրավոր լեզուն ժողովուրդը սկսեցին արդի լեզուն ևս օգտագործելու անշուշտ շատ տարրեր չլիլույթով»:

Գրականության սկզբնավորման շրջանում իրարից որոշ տարբերություններ ունեցող գավառականների գոյությունը սպացուցելու համար, բայց Ալշարյանի բերած փաստարկներից, Հովնանյանը նշում է նաև հետևյալները. ա) արփի, սաղաթթ, փարթամ, առփանք, տրոհել, հրճուե... ամանցված՝ աղօթել, ողջունել, ուրախանալ, ուրախացուցանել, պատասխանել, զեղչուկ, վաղմիկ... բառերի գործածությունը Սահակի և Մեսրոպի կրտսերադուռնի աշակերտների լեզվում. բ) կրտսեր աշակերտների օգտագործած նախածանցների մեծ մասը մեկնվում է հայերենից ավանդված բառերով. անհասկանալի են մնում՝ բաղ-՝ մակ-, տրամ-՝, փաղ- և այլ ամանցներ, որոնք, հավանաբար, այլ բարբառներ են վերցված. գ) հին բայական ձևերին դուրսհեռ, սկզբնապես դեռևս շատ բիշ, բայց հետագայում ավելի հաճախ հանդիպող նոր ձևեր՝ անցան=անց, կլա=ել, իբա=էշ, հասա=հաս, մտա=եմտա, կեցա=եկեաց, կեցա=եկաց... տուն=ետուն, դրին=եղին, դարք=եզար, լսեց=լուսա, հասի՞ր=հաս, դիտացի՞ր=գիտա՞, տու՞ք=տո՞ւր, դր՞ք=գի՞ր և այլն»:

Այս փաստերից Հովնանյանը եզրակացնում է՝ «Ըստ մեզ՝ ավելի պատշաճ կերևա բռնի թե այս ամենայն բառերն ու ձևերը ի դրս առաջին թարգմանույց չեն գտնվիր, վասնզի անձանթթ էին զեռ այն դարուն, կամ այն բարբառուն՝ որը հիմն առին գրավոր լեզվին, հատուկ ըլլալով այլ գավառական բարբառը, հորոց հետո առին երկրորդ թարգմանիչը կամ հաջորդ գարուց մասեակադիր»:

Ըստ Հովնանյանի, իրարից ոչ շատ տարբերություններ ունեցող այդ գա-

վառականներն են, որ գրավոր լեզվին դուրսհեռ գարգանում են հետագա զարգացում, իսկ գրավոր լեզուն չի կարողանում գրանք անհետացնել և միակ տիրելուց դառնալ՝ «նախնայաց ռամկորներ»,— եզրակացնում է Հովնանյանը,— ծառայած է Հայաստանի ժամանակակից գավառականներին, և դանդաղ եղանակավորումամբ՝ հին գրավոր լեզվին. կամ թե խառնուրդ է ժամանակակից գավառական բարբառոց և գրավոր լեզվի»¹⁰:

Միջնագրայան հուշարձանները Հովնանյանին դիտել են տալիս, որ գրանք լեզվական տեսակետից նույն ժամանակաշրջանում միատարր չեն: Որոշ «նեղի» նակների մոտ զեռև շարունակվում է հին լեզվի ավանդական կիրառությունը. մի այլ կարգի հուշարձաններում լեզուն առավել ժողովրդական է՝ համարյա մի այլ կարգի լեզվի տարրերից. մի կրթող կարգի աշխատությունների լեզուն խառնված հին լեզվի տարրերից. մի կրթող կարգի աշխատությունների լեզուն խառնված հին լեզվի տարրերով. Այս իսկ տեսակետից էլ Հովնանյանը, ըստ օգտագործած լեզվի բնույթի՝ գրավոր հուշարձանները դասակարգում է չորս հիմնական խմբերում. ա) գրաբար աշխատություններ, որոնք բացառապես գրված են հին՝ ավանդական լեզվով. բ) սովախառն գրականություն, որտեղ իշխող լեզուն գրաբարն է, որք, սակայն, զերծ չէ ժողովրդական լեզվի տարրերից. գ) գրաբարախառն, ուր գերիշխում է ժողովրդական լեզուն՝ գրաբարյան որոշակի տարրերով. և դ) ռամիական գրականություն, որի հիմնական լեզուն ժողովրդական խոսքն է:

Հովնանյանը իր ուսումնասիրության առարկան է դարձնում սովական գրականությունը և նրա լեզվի հետազոտությունը: Եվ թե՛ն իր հետազոտած գրականության լեզվի տարրերի առաջին արձագանքները նա արձանագրում է VII դարից սկսած, բայց ազգագրի մասենագրության սկիզբը համարում է ներսեռ Շնորհալու (XII դար) հանկուկները, որպես այդ գրականության սկզբնավորման հիմնական աղբյուր: Այս ձևով ժամանակագրական հաջորդականությունը ուսումնասիրությունը Շնորհալուց հասցվում է մինչև նորագույն բժշկարանները, ներառելով միջնագրայան ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական աշխատությունները: Փնտրվում եղանակը առավելապես բանասիրական է. գրավոր հուշարձաններից բերվում են ընդարձակ բաղվածքներ, երբեմն նաև՝ համեմատական տեքստեր: Աշխատության այս մասը պարունակում է առատ փաստական նյութ:

Հովնանյանի ծառայությունը նրանում է, որ Ալշարյանից հետո նա ամենայն ուժով ընդգծեց և փաստական հարուստ նյութի հիման վրա սպացուցեց «ռամիագիր» գրականության ու «ռամիորեն» լեզվի ինքնուրույն գոյությունը միջնագրայան, որոշակիորեն ցույց տալով այն գրավոր հուշարձանները, որոնք գրված են ժողովրդական լեզվով, դրանով իսկ հող նախապատրաստելով այդ լեզվի հետագա գիտական ուսումնասիրության համար:

Այս իսկ տեսակետից Յոզեֆ Կարստի ուսումնասիրությունները և հատկապես նրա Historische Grammatik des Kilikisch-Armenischen (Strassburg, 1901) աշխատությունը առաջընթաց մի քայլ էր միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում: Այստեղ առաջին անգամ պատմա-համեմատական մեթոդով հետազոտության են ենթարկվում միջնագրայան գրական հուշարձանների լեզվական երևույթները: Հեղինակը, մի կողմից օգտագործելով Ալշարյանի և Հովնանյանի աշխատանքի արդյունքները և մյուս կողմից իր իսկ

¹⁰ Ղ. Հովնանյան, Հետազոտությունը նախնայաց ռամկորների վրա, Տեղա Կ, 1897, Վիեննա, էջ Ը:

⁷ Անգ, էջ 2:

⁸ Անգ, էջ 16:

⁹ Անգ, էջ 7:

Հավաքած Հակալատկալ նյութի մշակմամբ, ապիս է այն լեզվի ամբողջական պատկերը, որ ինքը անվանում է կիրիկյան Հայերենը:

Միջին Հայերենի սկզբնավորման ու ծագման տեսական հարցերում Կարսոց Հիմնականում հանգում է իր նախորդների տեսակետին: Նրանց նման ընդունելով, որ Հին Հայերենը լեզվական տեսակետից ներկայացնում էր համեմատաբար մի միասնություն, ապետարանություն, որոնց առկայությունը դասական հայերենում հնարավոր է համարում միայն որպես կենդանի ժողովրդական կամ խոսակցական լեզվի արտահայտություններ: Կարսոի կարծիքով՝ գրական կյանքի ամենավաղ շրջանից սկսած, խոսակցական լեզվի ազդեցությունը մշտականորեն անհավասարելի դարձացման մեջ է եղել, թեև V—X դարերի ժամանակամիջոցում այդ խոսակցական լեզվի տարրերը գեոս կերպորդական, ստորագույն դեր են խաղացել: Սակայն, արդեն X դարից առաջ, Հին Հայերեն գրական լեզուն մահացման էր դատարանում, թեև այն երկար ժամանակ շարունակում էր իր գոյությունը խիստ կանոնների ենթարկված գրական լեզվի տրադիցիաների ուժով: Այդ տրադիցիաների հաղթահարման կենսական ուժը Կարսոց տեսնում է հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած բազաբական իրադարձությունների մեջ, երբ XI դարում Կիրիկիայում հայկական պետականություն ստեղծվեց, հայ ժողովրդի հասարակական-բազաբական, անտեսական ու կուլտուրական կյանքի ժամրուկյան կենտրոնը բուն երկրից տեղափոխվում է այստեղ, երբ բազաբական, անտեսական ու կուլտուրական վերածնունդի դուրսհանումը հնացած տրադիցիաների շղթաների հետ միասին՝ փշրվում են նաև Հին մեծած լեզվի կաշկանդող շղթաները: Սկսվում է գրական մի նոր շրջան, որն առավելագույն համապատասխանում էր հայ ժողովրդի կյանքին և նրա պոետիկան նոր պայմաններին: Փրական այդ ստեղծագործությունները գրվում են ժողովրդի բերանում խոսվող կենդանի լեզվով, որն իր առանձնահատկություններով «հավասարապես տարբերվում է ինչպես Հին, այնպես և նոր հայերեններից և ներկայացնում է հատուկ լեզվական շրջան, որը կարող է կոչվել որպես միջին հայերեն»¹²:

«Այսպիսով,—գրում է Կարսոց,—միջին հայերեն մենք անվանում ենք Հին և նոր հայերենների միջև ընկած անցման ժամանակաշրջանը»¹³, որի սկիզբը համարվում է X, իսկ ավարտը՝ XV դարը, որտեղից սկսվում է նոր հայերենի ժամանակաշրջանը:

Չնայած այն հանգամանքին, որ միջին հայերեն կոչված լեզվաշրջանը իր բնորոշ առանձնահատկություններով մի բնոցանոր զարգացման վիճակ է մասնանշում, այնուամենայնիվ, Կարսոց գտնում է, որ այն չի ներկայացնում մի միասնական ու միաստոր լեզու, քանի որ նրա մեջ որոշակիորեն կրելում են բարբառային նշանակալից երանգներ: Իր այս միտքը ապացուցելու նպատակով նա բերում է հետևյալ փաստարկումները: Մխիթար Հերացու լեզուն Սմբատի լեզվից տարբերվում է հետևյալ հատկանիշներով. ա) Հերացու մոտ հոգնակի ուղղակիոր ռենի ս վերջավորությունը, Սմբատի մոտ միայն 4 բառում. բ) ը-ն հանաթ դարձանում է ի-թ. օր. չի ժխտական մասնիկում. մինչդեռ Սմբատի մոտ՝ չր. գ) Հերացու մոտ վաղակատար դերբայը վերջավորվում

է լու, Սմբատի մոտ՝ ել: նշված հեղինակների լեզվից Կարսոց տարբեր է համարում Բնիկի 1358 թ. մի արձանագրության լեզուն. ինչպես՝ Լսիր, Սմբատի մոտ՝ ալսոր, Նորտերի(ն), Սմբատի մոտ՝ Նորտեր(ն), հեծելի, Սմբատի մոտ՝ հեծելու, բերաց, Սմբատի մոտ՝ երբը: Տարբեր է նաև ախրապատկիում հանդի-հանդի (Սմբատի մոտ՝ տենույ), շաքս (Սմբատի մոտ՝ շաք), երիկ (Սմբատի մոտ՝ ալրիկ), անձնական դերանվան III դեմքի համար ոյր (Սմբատի մոտ՝ իր), ոյրեն, յ-ոյմէն (Սմբատի մոտ. յիրմէն) և այլն: Վերջապես, սրանցից բոլորովին տարբեր են վարդանի մոտ հանդիպող՝ քի սրտումս դրի գըր խոսքը, քեղ աղօթք են տանում» ժողովրդական ձևերը, որոնք Կարսոց համարում է արևելահայ բարբառների առաջին վկայությունները¹⁴:

Այսպիսով, թեև Կարսոց միջին հայերենը համարում է լեզվական մի առանձին շրջան, որն իր առանձնահատկություններով մի կողմից տարբերվում է Հին ու նոր հայերեններից և մյուս կողմից էլ Հինց իրեն իսկ բնորոշ գծերով ներկայանում որպես մի բնոցանոր վիճակ, այնուամենայնիվ, միաժամանակ շեշտում է նաև այդ նույն շրջանում բարբառային տարբերությունների գոյությունը:

Այն հանգամանքը, որ քննարկվող ժամանակաշրջանի «սովակաղիք» մասնագրության գերակշիռ մասը ներկայանում է կիրիկյան շրջանից և իր լեզվական առանձնահատկություններով համեմատական մի փոսնություն է կազմում, որը սակայն ունի որոշակի տարբերություններ այլ գրական հուշարձանների լեզվից, Կարսոին բերում են այն եզրակացության, թե սկիզբի-հարձանների տարածված ոչ միակ բարբառն էր, թեև նա մեղ համար ամենայլ հայանի և կարևոր միջին հայերենյան բարբառ էս¹⁵: Լեզվական փաստերի անմիտրոսակությունը և այդ հիմք վրա մի միասնական լեզվի ընդունման անհնարնությունն է եղել պատճառը, որ Կարսոց իր ձևերի տակ շունենալով ամբողջ միջին հայերենի հետազոտության համար անհրաժեշտ նյութը, բավարարվել է միայն կիրիկյան հայերենի ուսումնասիրությունը, մի բան, որ շատ որոշակիորեն ընդգծված է նրա նախատության վերնագրում: Այս բոլորից երևում է նաև, որ միջին հայերեն ասելով՝ Կարսոց հասկանում էր հայերենի Հին և նոր շրջանների միջև ընկած պատմական ժամանակամիջոցի լեզուն: Կիրիկյան հայերենը, որի հետազոտությանը զբաղվում է նա, այդ շրջանից մեղ լավ հայտնի բարբառներից մեկն է:

Անդրադառնալով հայոց լեզվի պատմության մեջ կիրիկյան հայերենի գրաված դիրքին, Կարսոց գտնում է, որ այն իր հնչյունական վիճակով և բերականությամբ պատկանում է հայ բարբառների արևմտյան խմբին: Պատմական այդ ժամանակի համար Կարսոց նույնիսկ ընդունում է միջին արևմտահայերեն մի խոսվածքի գոյությունը, որը եղել է, թեև ոչ ամբողջ արևմտյան խմբի, ապա գոնե, նրա բարբառների մի մասի մայրը:

Նկատելով, որ կիրիկյան հայերենը իր լեզվական որակով շատ բան ունի Հին հայերենից և, ըստ էության, Հին հայերենի բանավոր-խոսակցական լեզվի բնական զարգացումն է, Կարսոց եզրակացնում է. «Գրական լեզվից դուրս կանգնած մի Հին հայերեն բարբառի ընդունումը, որից առաջացած լինի կիրիկյան հայերենը, պարզապես բացառված էս¹⁶:

¹¹ Տե՛ս Historische Gramm., էջ 2:
¹² Անց.

¹³ Նշվ. աշխատությունը, էջ 3—4:
¹⁴ Անց, էջ 5:
¹⁵ Անց, էջ 6:



Կարստի սույն աշխատությունը իր փաստական հարուստ նյութով և տեսական ընդհանրացումներով մի խոշոր ավանդ էր հայագիտության և հասարակական հայտնի լիզվի պատմության բնագավառում: Այս աշխատությունը ևս, ինչպես կտեսնենք, իր որոշակի ազդեցությունն է թողել միջին հայերենին նվիրված հետագա ուսումնասիրությունների վրա¹⁶:

Մեր լեզվի միջին շրջանի ուսումնասիրության հարցերով զբաղվել է նաև անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը: Հատկապես ուշադրության արժանի գործ է նրա «Շին գուսանական ժողովրդական երգեր» աշխատությունը, որտեղ հայ հին ժողովրդական երգերի՝ հայրենների հետ կապված բազմաթիվ բանասիրական ու գրականագիտական հարցերի բնութային հետ միասին, նա անդրադարձել է նաև նրանց լեզվին:

Աբեղյանը իր ուսումնասիրությունը կատարել է հիմք ունենալով Կարստի վերջ նշված աշխատությունը: Վերջինս նրա համար ծառայել է որպես համեմատության եզր՝ հայրեններում միջին հայերենի ձևերի ձայն բերելու և, առհասարակ, հին հայերենի լեզվական ձևերից շեղվող բառային և քերականական նորարանությունները մեկնաբանելու համար: Հարուստ փաստական նյութի բնութայինը Աբեղյանին բերել է այն համոզման, որ նշված երգերի՝ «Հայրենների լեզուն միակերպ չէ: զրանց մեջ գտնում ենք լեզվական շեղումներ, որոնք միջին հայերենից (ընդգծումը հեղինակինն է) — (Վ), բուններ: Իշխող լեզուն է միջին հայերենը (ընդգծումը հեղինակինն է) — (Վ), որ իր հնչյունների գրությունը պատկանում է քերականության արժեքներին և համարվում է Կիլիկիայում խոսված բարբառը (նյութի ունի Կարստի տեսակետը: — Վ): Գրան շատ մտա են եղել հյուսիս-արևմտյան Հայաստանի և փոքր Հայաստանի բարբառները¹⁷:

Հայրենների լեզվի անմիջորինություն և նրանց մեջ սակա լեզվական շեղումները միտքը Աբեղյանի մոտ հիմնավորվում է սկզբնաղբյուրների բազմաթիվ փաստերով: Մեկնույն բառի տարբեր գրությունները, քերականական միևնույն իմաստի գրություններ տարբեր ձևերը և, առհասարակ, լեզվական միևնույն միավորների տարածակուսությունները ավել երգի տարբերակներում՝ Աբեղյանը համարում է միջնադարյան հայ բարբառների լեզվական առանձնահատկությունների գրություններ:

Աբեղյանը իր այս ուսումնասիրության համառոտությունը շարադրել է նաև «Գուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուի (Երևան, 1940 թ.) ներածության մեջ, որ մի քանի լեզվաբանական, թեև ամփոփ, բայց ավելի որոշակիորեն ավել է հայրենների և ժողովրդական այլ խաղերի լեզվի էական կողմերը: Հարցի սուտաբանման տեսակետից ավելորդ չենք համարում մի հատված մեջ բերելու այդ ներածությունից:

«Մեր այս հին տաղերը, — գրում է Աբեղյանը, — լինելով աշխարհականների բանաստեղծություն, հորինված են ոչ թե հին կենդանական հայերենով, գրարար լեզվով, այլ ժամանակի կենդանի խոսակցական լեզվով, որ 12-րդ դարից սկսած դարձել է գրական լեզուն: Դա միջին հայերենն է, որ մի անցման լեզու է հին հայերենից դեպի նոր հայերենը և մեզպես գրարարին դեռ ավելի

¹⁶ Կարստի ազդեցությունը աշխատություններից մեկը՝ նվիրված միջին հայերենի բառադարձի բնութայինը (Միջին հայերենի բառաբան), զեռես առաջ է և գտնվում է Երևանի Մարտի 1-ին անվան Մատենադարանում:

¹⁷ Տե՛ս Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀԽՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 1927, № 2—3, էջ 225:

մտա է, քան աշխարհագրորդ, բայց նրանցից մեծ շահվելով տարբեր է: Գրարարի ազդեցությունը, գրական ճանապարհով, չի երևում հայրենների մեջ, ինչպես հասարակ այդ տեսնում ենք նույն միջին հայերենով հորինող բանաստեղծների երգերի մեջ: Գուսանական երգերը հենց այդպես էլ զերծ պիտի լինեն գրարարի ազդեցությունից, որովհետև գրարարը վաղուց դադարած է եղել կենդանի ժողովրդական լեզու լինելուց:

Պետք է նկատի ունենալ և այն, որ այդ գուսանական ժողովրդական տաղերը հորինված են զանազան դարերում և այլ և այլ տեղերում, և դրանց հեղինակները եղել են զանազան բարբառներով խոսող մարդիկ: Բնականաբար այդ փոքրիկ երգերի լեզուն միակերպ չի, զրանց մեջ երևան են գալիս նաև տարբեր բարբառների ձևեր: Այս քանի որ զրանք ապրել են քերականից, գրանց լեզուն ևս, ինչպես ժողովրդական երգերի լեզուն ընդհանրապես, միշտ ենթարկվել է եղել փոփոխության, միշտ վերանորոգվել է: Վարժանուները նկատի ունենալով՝ տեսնում ենք, որ հին լեզվական ձևերին, հնացած բառերին ու բառաձևերին, բառերի հին շարադրական ձևերին փոխանակել են նորերը: Համարում ենք հայերեն բառերի տեղ անցնել են օտար բառեր, մի բարբառային ձև կամ բառ փոխված է մի ուրիշ բարբառային ձևի կամ բառի: Այսպես՝ նույն բառերը գործածված գտնում ենք տարբեր ձևերով՝ օմբեր, ումբեր, ումբեր, լուներ, այլ, ալ, էլ, առ, էն, կայր, կար, կիր, օտից, օտվուտ, անկա, ինկա, ընկա, մեկա, տեսանել, տեսնել, տեսնուլ, էլանել, էլնել, էլնուլ, չեմ միջին, չեմ սիլկա, չեմ սիրել և այլն: Երբեմն այսպիսի տարբեր ձևեր կան ոչ միայն վարժանուներին, այլև միևնույն հայրենի մեջ: Հին ձևի հետ նորը, մի բարբառային ձևի կողքին մի ուրիշ բարբառով¹⁸:

«Բայց և այնպես, շնայելով այս բոլոր լեզվական շեղումներին, հայրենների մեջ իշխող լեզուն միջին հայերենն է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին¹⁹»: — Լեզվագետն է Աբեղյանը:

Քանի որ Աբեղյանի օգտագործած գրավոր աղբյուրների գրությունները հայրենների մեջ իշխող լեզուն միջին հայերենն է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին¹⁹»: — Լեզվագետն է Աբեղյանը:

Քանի որ Աբեղյանի օգտագործած գրավոր աղբյուրների գրությունները հայրենների մեջ իշխող լեզուն միջին հայերենն է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին¹⁹»: — Լեզվագետն է Աբեղյանը:

Հայոց լեզվի պատմության, այդ թվում նաև միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում իր նշանակալից ավանդն ունի մեծածառն հայագետ Ն. Աճառյանը: Նրա գրչին պատկանող այնպիսի մեծածառն աշխատություններ, ինչպիսիք են «Հայոց լեզվի արձատական բառարան», «Հայոց անձնանունների բառարան» և այլն, իրենց մեջ պարունակում են ոչ միայն հայոց լեզվի պատմության տեսական հարցեր, այլև բազմազան հարուստ փաստական նյութ՝ այդ նույն հարցերի վերաբերյալ: Միջին հայերենի տեսության հարցերի

¹⁸ Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 19—20, 19 հետ:

նույն միավորների տարբեր արտահայտությունների մեկնաբանությունը անհամեմատ հեշտանում է, երբ նկատի ենք ունենում նոր հայերենի բարբառների նմանօրինակ փաստերը: Այս տեսակետից հատկապես շարժական կարևոր է հայերենի բարբառների բազմաշարժական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների հաշվառումը՝ միջին հայերենի ժամանակաշրջանում տարբեր վայրերում խոսված հայերենների հնչյունական համակարգի բացահայտման համար, որը, ի դեպ, զովար է անել միայն հին հայերենի հետ համեմատությունների միջոցով:

Չնչունաբանական հետազոտությունների համար կարևոր նշանակություն ունի նաև փոխառությունների և նրանց դարգարծության հիմունքների պարզաբանումը: Այս տեսակետից որպես համեմատության կեր վերցվում են փոխառու լեզվի բառաձևերը, որոնք համեմատվում են հայերենում դրանց դրանց դարձված ձևերի հետ: Նման համեմատություններով պարզվում են ո՛չ միայն օտար բառերի՝ հայերենում դրավոր արտահայտության հիմունքները, այլև, որ ավելի կարևոր է, բացահայտվում են միջին հայերենի տարբեր դարձվածներում հին հայերենի համեմատությանը կատարված հնչյունափոխական երկվույթները: Նույն նպատակներին կարող են ծառայել նաև օտար արդյունքներում առաջարկված հայերեն բառաձևերը:

Այս սկզբունքները կիրառելիս նկատի է առնվում նաև մի այլ հանգամանք: Բանն այն է, որ միջին հայերենը զրի է առնվում ո՛չ որպես մի նոր՝ հայերենի բնույթին խորթ լեզու, որը կտրված է իր պատմական անցյալից: Որպես դրավոր լեզու, նա առավելապես հիմնված է անցյալի ավանդույթների վրա: Բավական է ասել, որ գրություն մեջ օգտագործվում է ո՛չ թե նորաստեղծ մի այբուբեն (ինչպես, ասենք, նոր պարսկերենում, պահլավերենի համեմատությամբ), այլ հաջողությամբ գործարկվում է դարերի բնություն բուն ձևերում: Հին լեզվի գրության սկզբունքների պահպանումը և անցյալի գրական ժառանգության օգտագործումը իրենց հետ բերում են նաև լեզվական ավանդական ձևերի առատ կիրառությունները:

Առհասարակ, միջնադարյան հայ հասարակությունը իր մշակույթի, գրականության և ռոկերո կյանքի բոլոր թևերով կապված է իր անցյալի հետ: Նորը ստեղծվում է անցյալի ժառանգության յուրացմամբ, անցյալի ուսանելի փորձի հաշվառմամբ, նախորդ շրջանի գրական ու դրամական նվաճումների օգտագործմամբ: Եվ ձեռք առնելով մեծ հաջողություններ, նաև այն, որ միջնադարում կրթական գործը առավելապես կատարվում էր հին հայերենով, նրա նորմաների ուսուցմամբ, որը իրականանում էր հին դասական մասենագրության երկերի ընթերցմամբ, ապա պարզ կլինի, թե ինչու՞ են ուժեղ պիտի լինեն հին լեզվի ազդեցությունը միջին դարական հայերենի վրա, որի գրական ու գրավոր հուշարձանների ստեղծողները նշված հասարակական միջավայրի ծնունդն էին:

Այս բոլոր հանգամանքները պայմանավորում են այն իրավիճակը, որ միջնադարյան մասենագրության և այլ գրավոր հուշարձանների լեզվում համասարպես հանդես են գալիս և՛ հին, և՛ նոր ձևերը: Գրական ու գրավոր որոշ արդյունքներում գերակշռում են հին, մյուսներում՝ նոր լեզվաձևերը: Շատ դեպքերում, նույնիսկ նույն հեղինակի միևնույն աշխատության կամ այլ գրավոր սեքստում, այդ հինն ու նորը հանդես են գալիս իրար կողք կողքի: Հաս-

կանալի է, որ լեզվի պատմության տվյալ շրջանի համար կարևոր ոչ թե ավանդական ձևերն են, այլ դրանցից կատարվող շեղումները: Եվ բանի որ այս նորը ոչ միշտ է ստանում գրավոր արտահայտություն (ավանդապահության պատճառով), ուստի չպետք է այն տպավորությունը ստեղծվի, թե այն լակ պատահական բնույթ է կրում: Անկախ հին և նորի բանական հարաբերության, զուգակցության լեզվաձևերի մեջ միշտ առաջնությունը պատկանում է նորին:

Հին լեզվի ձևերից կատարվող շեղումների մեջ էլ, իրենց հերթին, նկատելի են տարբերակներ՝ տարածներ: Սրանք, ըստ էության, ժամանակի խոսակցական-բարբառային լեզվաձևեր են, որոնք թափանցել են դրավոր խոսքի մեջ և մեծ արժեք են ներկայացնում լեզվի պատմության համար:

Այսպիսով, միջին հայերենի լեզվական շրջանի առանձնացման հիմքը նրանում կատարված որակական փոփոխություններն են, որոնք բացահայտվում են հիմնականում նախորդ շրջանի լեզվական ձևերի համեմատությամբ: Այդ և այլ համեմատությունները երևան են բերում լեզվի բոլոր մակարդակներում տեղի ունեցած էական փոփոխություններ, որոնք և հանդիսանում են մեզ հետաքրքրող լեզվական շրջանի բնորոշ առանձնահատկությունները:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ձեռք համառոտակի թվարկելու լինենք այդ առանձնահատկությունները, որոնք տվյալ զեպրում խիստ կարևոր են միջին հայերենի բնութագրման համար, ապա կարելի է ասել հետևյալը⁴².

1. Հնչյունաբանական տեսակետից միջին հայերենում արձանագրվում են հետևյալ երևույթները.

- ա) Հին հայերենի յոթ ձայնավորների (ա, ե, է, ի, ո, ու, ը) փոխարեն միջին հայերենի համար բնորոշ են վեցը՝ a, e, i, o, u, ə: Եթե հին հայերենում է և է ձայնավորները հակադրվում էին միմյանց իրենց բաց կամ փակ լինելու հատկանիշով, ապա միջին դարերում կա՛մ փոխվում է դրանց տարբերակման հիմքը, կա՛մ էլ վերանում է դրանց տարբերությունը: Որոշ վայրերում է-ն բառասկզբում, իսկ այլ տեղերում նաև բառամիջում, ստանում է յե երկհնչյունի արժեք կամ նույնիսկ՝ երկբարբառային արժեք: Միջին հայերենի այլ տարբերակներում հին ե-ի և է-ի դործածությունը տարբերությունը չկան և դրանք, ըստ հաճախ, գրության մեջ փոխարինվում են մեկը մյուսով: Նույնպիսի երևույթ արձանագրվում է նաև ո-ով արտահայտված հնչյունի իմաստափոխման մեջ: Որոշ տարբերակներում այն բառասկզբում վերածվում է երկհնչյուն ՎՕ-ի կամ երկբարբառային ՎՕ-ի, այլ տարբերակներում ունի պարզ օ ձայնավորի որակ: Նկատելի է նաև, որ այդ ձայնավորը, որոշ վայրերում, բառամիջի դիրքում կա ստանում է երկբարբառային երանգ (ՎՕ): Սրանց զուգահեռ արձանագրվում է նաև օ>ու հնչյունափոխություն:

բ) Միջին դարերում հայերենի բոլոր տարբերակները պահպանել են ա, ի ձայնավորների՝ բառամիջման ժամանակ շեղում հետ կապված հնչյունափոխության հատկությունը: Սակայն այստեղ նորն այն է, որ նման փոփոխու-

⁴² Միջին հայերենի լեզվական առանձնահատկությունների շարգարանը սրվում է պրոֆ. Գ. Բ. Չաչուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ սրված բնութագրումների և մեր անձնական գիտությունների հիման վրա:

րը, գրական և բանավոր-խոսակցական լեզվի բոլոր գրոհորումները, այն անկեր, ինչ որպես օրինակի երևույթ հասուկ է նրա պատմական զարգացմանը:

ԿՐԻՏԻՆ ԸՆՅԵՐԵՆԻ ԼՈՒՔԻ, ՆՐԱ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱԺԱՆՎԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՏՈՒՄ

Ինքին հասկանալի է, որ մի լեզվի համակարգում կատարված նման որակական փոփոխությունները (ինչպիսիք հասուկ են միջին հայերենին) չէին կարող առաջանալ միանգամից, մեկ կամ երկու հարյուրամյակների ընթացքում: Գրանց առաջացման համար իրավացիորեն ենթադրվում է պատմական զարգացման երկարատև ուղի:

Ոճանց այն ենթադրությունը, թե միջին հայերենի, ինչպես և առհասարակ, մեր բարբառների լեզվական կատարվածքը եղել է նախապես (գրաբարի շրջանում), բայց, իբր թե, պատմական որոշ հանգամանքների պատճառով չի գրանցվել ու ավանդվել գրավոր հուշարձաններում, փաստական բավարար հիմք չունի: Այդ ենթադրությունը չի հաստատվում ո՛չ միայն բավարար փաստաբանական փոփոխությունների բացահայտության պատճառով, այլև նրանով, որ միջին հայերենի համակարգի բոլոր այն երևույթները, որոնք գիտվում են որպես հնրից կատարված շեղումներ, լիովին բացատրվում են որպես նախորդ շրջանի լեզվական միավորների պատմական փոփոխություններ: Ետպատկան շրջանից մեզ հասած մասնին լեզվական փաստերը և հայերենի բարբառային բաժանվածության ասանկ հատ ու կենտ տեղեկությունները միայն կարող են հաստատանք միջին հայերենի առանձին լեզվական երևույթների նախնականությունը, բայց ո՛չ նրա ամբողջ կատարվածքի գոյությունը այն ժամանակներում:

Վերն արգեն ասվել է, որ լեզվական հուշարձանների քննության ընթացքում ուսումնասիրողը ժամանակագրորեն ինչպես ետ է գնում, այնքան ավելի նվազում և երբեմն, նույնիսկ, դադարում են նորն արձանագրող փաստերի վկայությունները: Եվ այդ առավել վերաբերում է 12-րդ դարից առաջ ընկած ժամանակաշրջանի լեզվական հուշարձաններին, որոնց մեջ, քանի գնում ենք զգալի մեր գրականության սկզբնավորության շրջանը, միջին դարերի պայտերներում վկայվող երևույթները անհետանում են, և այդ շրջանի լեզվի ընդհանուր օրինակափոխություններից կատարվող շեղումները քնդրումում են այնպիսի միկրոսկոպիկ բնույթ, որոնց հայտնաբերումը՝ նույնիսկ հմուտ հետազոտողից, պահանջում են մեծ ջանքեր ու կարողություններ: Օրինակահանր է ծագումը. կեն հին հայերենի գրառման ժամանակաշրջանում նրան զուգահեռաբար գոյություն ունեցող նաև միջին հայերենի լեզվական կատարվածքը, ապա ինչո՞ւ այն մասնագրություն մեջ երևան չի գալիս այնպես, ինչպես միջին դարերում: Լարքի պատասխան չի կարող լինել վերը նշված պատմական հանգամանքները՝ ընդհանուր հայտարարությունը, որովհետև նման հանգամանքներ գոյություն ունեն նաև միջին դարերում: Մտնում է կարծել, որ միջնադարում հանգեն եկող լեզվական որակը գոյություն չունեցող հին հայերենի գրառման

շրջանում, որ այդ նոր համակարգը հայերենի պատմական զարգացման հետագա վիճակն էր՝ նրա ներքին զարգացման արդյունքը:

Սակայն միայն կիրենի կարծել, թե միջին հայերենը իր բոլոր գրառումներով հանգեմը առաջացել ու զարգացել է հին հայերենի գրաբար վիճակից: Գրաբարը գրավոր և գրական մշակման ենթարկված լեզու էր, թեև իր գրառման շրջանում հիմնված էր կենդանի խոսակցական լեզվի վրա: Այդ լեզվի մշակման ու հետագա զարգացման ընթացքը այնպիսին էր, որ չէր կարող հասցնել միջին հայերենի որակին Ավելին. գրական մշակման ընթացքում նրա մեջ մտնված արհեստական տարրերը նրան ավելի էին հեռացնում այդ լեզվի երբեմնի բանավոր-խոսակցական հիմքից: Ավելի հիշա կլինի ասել, որ միջին հայերենի զարգացել է գրի առման շրջանի հայերենի այն բանավոր-խոսակցական տարրերակներին, որոնք առանձնապես խիտա տարբերություններ չունեին ժամանակի գրավոր լեզվից, բայց և, այնուամենայնիվ, ինչ-ինչ առանձնահատկություններով տարբերվում էին նրանից: Եվ հենց այդ տարբերակները հիմքի վրա էր հետագա գրերում նախապես եղած տարբերությունները զարգանում, ծավալվում և առաջացնում են միջին հայերենի առանձին տարրերակները:

Պատմական զարգացման ընթացքում 5-րդ դարի գրական լեզուն և նրան ժամանակակից բանավոր-խոսակցական լեզվի տարբերակները ունեցել են միանգամայն այլ ճակատագրեր:

Պատմական ու քաղաքական մի շարք օրինակով ու սուրյակով հանգամանքների պատճառով՝ գրական լեզուն հետագա դարերում աստիճանաբար ենթարկվում է մեկուսացման: Գրանում, թերևս, անհավասարաչափ հրահանգություն է ունենում հայկական պետականության վերացումը: Եթե միասնական ա կենտրոնական պետականության պայմաններում երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը և գրանց զարգացումը այս կամ այն լուծով ապահովում էին նաև միասնական լեզվի գոյությունը, ապա կենտրոնական պետականության վերացման հետ միասին, նշված կապերի թուլացումը, սահմանափակվում էին գրական լեզվի հասարակական ֆունկցիաները: Հայ պետականության կորստով, փաստորեն, գրական լեզուն զուսում է կենդեղու պաշտոնական լեզուն. նրա հասարակական ֆունկցիան զանազանափակվում է միայն կենդեղու շրջանակներում և գործադրվում է նրա կարիքներին համապատասխան: Դրան հակառակ, հայ հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում շարունակվում է հարողակցման իր գեր կատարել բանավոր-խոսակցական լեզուն:

Ստեղծված քաղաքական պայմաններում գրական լեզուն հնարավորություն չունեցող լինել իր ազդեցությանը ենթարկելու բանավոր-խոսակցական լեզվի տարբերակները և գրանք իր մեջ նվազում: Այդ մասում և՛ գրական լեզուն մասնաշաղկապ զրգառության և գրական երկերի բավարարման հրատարակությունների միջոցով, մի բան, որ, սակայն, անիրականանալի էր այն ժամանակվա տնտեսական և արտադրության միջոցների զարգացման մակարդակի պայմաններում: Տպագրական արհեստի բացակայության պայմաններում, երբ գրքերի քաղաքացուցումը կատարվում էր արտագրությունների միջոցով, ինչպես՝ գրական երկեր կարելի էր արատազրել, որ հնարավոր լինող գրանցով մի ամբողջ ժողովրդի լեզու պահել գրական լեզվի ազդեցության տակ: Նկատի ունենալով այն ժամանակվա պայմանները և սճրատարակա-

⁴⁴ Կարևոր հանգամանք է նաև այն, որ թեև հին հայերենի լեզվական հուշարձանները մեզ հասել են միայն միջնադարյան քնդորինություններով, բայց դրանց մեջ բացի որպեսզական տարբերություններից և ոչ կական շեղումներից (որոնք նույնպես հին հայերենյան են), այլ առանձնահատկություններ հանգեն չեն գալիս:

կան՝ հնարավորությունները, պետք է կարծել, որ սկզբնապես հայաստան գիրքը թվով շատ սահմանափակ էր և եղածներն էլ հիմնականում էկզիզացու և երկրի ունեւոր զարկ սեփականությունն էին: Մյուս կողմից՝ գրական լեզուն գրք-ձագորդները այն մշակման ենթարկելիս, անտեսում էին բանավոր-խոսակցական լեզվում կատարվող տեղաշարժները: Ընդհակառակն, գրական լեզվի մշակման ընթացքում նրա մեջ մտածվում էին հայրենի ընդհանուր պարզացմանը խորթ, արհեստական տարրեր, որոնք գրական լեզուն ավելի էին հեռացնում նրա ժողովրդական հիմքերից: Բավական է նշել, որ գրական լեզվի մշակման ընթացքում կատարված այնպիսի նորամուծություններից մեկը, ինչպիսին էր նախածանցների ստեղծումը և նրանցով բազմաթիվ նոր բառերի կերտումը (որը, ի դեպ, հետագայում բնորոշվեց գրական լեզունների կողմից), անարձագանք մնաց բանավոր-խոսակցական լեզվում:

Ժողովրդական լեզվի ակունքների նկատմամբ անտարբերությանը զուգակցվում էր ավանդապահությունը: Գրականության սկզբնավորության շրջանի լեզուն համարվում էր օրինակելի և պարտադիր իր բոլոր կողմերում: Նրա մշակումը բնորոշվում էր միայն բանավորական և ոճական սահմաններում:

Այս բոլոր հանգամանքները նպաստում են այն բանին, որ գրական լեզուն՝ դարարք, դասապարտվում է մեկուսացման և աստիճանական մահացման:

Մինչև VII—VIII դարերը, բանի զեռ բանավոր-խոսակցական լեզվի մեջ կատարված փոփոխությունները չէին հասնում այնպիսի մի աստիճանի, որ ակնհայտ լիներ նրա խզումը գրական լեզվից, վերջինս զեռնու շարունակում էր իր նեղ հասարակական ֆունկցիաների կատարումը, սակայն հետագա մի քանի դարերի ընթացքում այդ խզումը դառնում է որոշակիորեն ընդգծված, բանի գրանքի ընթացքում այդ խզումը դառնում է օրակարգի հարց: Ուստի և որով և գրական լեզվի հիմքի խզիլը պահանջում է օրակարգի հարց: Ուստի և այս տեսակետից տարբերակ չեն XI—XII դարերում հին գրական լեզվի անհասկանալիության և ուսմիտրեն՝ ժողովրդական լեզվով գրելու անհրաժեշտության մասին արված հայտարարություններն ու խոստովանությունները:

Հակասակ գրական լեզվի (գրաբանի), որը զրված էր որոշակի շրջանակների մեջ և կաշկանդված ավանդականությանը, ժողովրդական լեզվի բանավոր տարբերակները շարունակում են զարգանալ իրենց օրինաչափություններով: Արտաքին ոչ մի հանգամանք չի խաչեցրելու նրանց այդ շարժանքը: Ընդհակառակն, հայ ժողովրդի կյանքում ստեղծված պատմական պայմանները որոշակիորեն նպաստում են այդ ներքին շարժանքը:

Եթե հայ ժողովրդի կենտրոնական պետականության վերացումը բացասարար է անդրադառնում միասնական գրական լեզվի և նրա ազդեցության ապահովման գործում, ապա այն, մյուս կողմից, ստեղծում է տերիտորիալ-բազմաբանական ու տնտեսական մասնատմանություն, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում առանձին տերիտորիալ կամ վարչական շրջանների լեզվի անկաշխանդ զարգացման համար: Միասնական ու կենտրոնական պետականության վերացումը, ավելին՝ օտար զավթիչների արշավանքները, հայ ժողովրդի ազատագրական պատերազմները, թշնամու զերակշիռ ուժերին դիմադրելու նրա օրհասական միգրացիոն, այդ պատերազմների պատճառով երկրի ավերածությունը, տնտեսության անկումը և այդ հիմքի վրա որոշ ընդհանրական վարչերի բնակչության տեղահանությունները, բռնի և կամուրջի գաղթը, բացասարար են անդրադառնում մի շարք աստիճաններով: Երկարատև օտար

լուծը իր հետ բերում է լեզվական օտար ազդեցություններ (նախ՝ արարական, այնուհետև թուրք-թատարական ու պարսկական), բնակչության տեղահանություններն ու զաղթերը փոխում են բնակավայրերի բնակչության կազմը, ստեղծում լեզվական փոխազդեցություններ (նույն լեզվի տարբեր բարբառներ միմե), առաջացնում առանձին համայնքներ՝ մեկուսացած հայ բնակավայրեր: Այսպիսի պայմաններում վարչական որոշ շրջաններ մի քանի սերունդների ընթացքում վարում են մեկուսացած կյանք: Քաղաքական մասը միավորումներում ամփոփված որոշ տերիտորիալ շրջաններ համեմատաբար ավելի սերտ հարաբերությունների ու կապերի մեջ են մտնում, և այդ հիմքի վրա դրանց տերիտորիալ լեզուները մշտական փոխազդեցության մեջ են դրվում: Այս բոլորի հետևանքով, ժողովրդի խոսած լեզուն, որ ունի իր զարգացման ներքին օրենքները, տարբեր վայրերում զարգացման ուղույն հունի մեջ է բնկում: Ներքին այդ օրինաչափություններից մի բանիսը, թերևս, բնօրինակում հակական են եղել և որոշակիորեն ընդգծվել են զեռնու ավելի վաղ շրջանում, ուստի և նրանց զարգացման արդյունքները ամենուրեք նույնն են, ինչպես օրինակ՝ կարելի է հիշել հնչյունական համակարգում դի- ր արտասանությունը, կամ առ երկարաբանի օ պարզ ձայնավորի վերածվելը և այլն: Սակայն կան նաև երևույթներ, որոնք ընդգրկում են վարչական մեծ տերիտորիաներ կամ պարզապես՝ վայրից վայր ունեն բարբառային ընդգծված տարբերություններ:

Այսպիսով, հայերենի գրի առման շրջանի բանավոր-խոսակցական լեզվի դատարաններն են, որ վերը նշված գործոնների փոխազդեցություն և իրենց ներքին զարգացման օրինաչափությունների ուժով զալիս հասնում են մինչև միջին դարերը, ստեղծելով լեզվական մի նոր համակարգ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով՝ հանդերձ:

Մասնենագրական ավայաները վկայում են, որ այդ նոր համակարգը իր ընդհանուր գծերով, թեև զեռնու տարածման, երևում է արդեն IX—X դարերում, և ամենայն հավանականությամբ, նրա տարբերակներից մեկը, Անիի թագավորության բազատունիների ժամանակաշրջանում, կարող էր բարձրանալ գրականության աստիճանի, եթե այդքան վաղաժամ չկործանվեր այդ պետությունը: Այդ են վկայում վիճակի տրամադրությունների, ձեռագրերի հիշատակարանների, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու տաղերում և այլուր հանդիպող ժողովրդական լեզվի մեկերը:

Մական լեզվի պատմական զարգացման ընթացքը շարունակվում էր: Հայ ժողովրդի բերանում հնչվող լեզուն XI—XII դարերում արդեն որոշակիորեն տարբերվում էր գրգային՝ հին գրական լեզվից: Եվ եթե գրավոր լեզուն պետք է ծառայի հասարակությանը, ապա պետք է վերանայվեր կամ փոխվեր նրա խոսակցական հիմքը:

Կիլիկյան հայիական պետության ստեղծումը՝ առաջանում է խիտ անհրաժեշտության՝ որոշելու գրավոր և բանավոր լեզվի փոխհարաբերության հարցը: Նորաստեղծ պետականության հիմքեր մտնապնդելու, նրա բազմաբանական ու տնտեսական գործունեությունը ապահովելու, հասարակության արտադրական հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև նման մի գաղափար հասարակության կուլտուրական պահանջները բավարարելու համար հին գրական լեզուն պիտանի չէր, բանի որ այն հասարակության լայն խավերի համար անհասկանալի էր: Հենց այս հիմունքով էլ կիլիկյան պետության

Իրիգոր Ախալցխեցու հիշատակարանից (գրված Հերմոնի վանքում)

Ու մինչև ի գրոց կէսս, որ կու գրէի միաբանատուն ու սեղանատեղ կայր, յետոյ վանիցս անտեսն գնաց ու վանից սեղանատեղս անկեցաւ ու երկդասակութիւնն ի միարանքս անկաւ, որ բամբասանք ու արտունջն շատացաւ, ու եղան ամէն ինքեագրութի իցւոր: Ու ամէն խոց ունէին ու ես ոչ, ու ամէն հաց ունէին ու ես ոչ, ու զվանիցս հացն վերայ իրեանցն բաժանեցին ու ինձ ոչ ամփն, թէ նայ դարիս է, նրայ բաժին մի տէր, ու ամէն մոնթ, սպասար ունէին ու ես ոչ, ու ամէն սիրելի ունէին, որ հաց ու թաց կու բերէին ու ինձ ոչ, ու ամէն կուրթիւնն ի վարդապետի խոցն, ուտելն ու խմելն ու ես ոչ, ու վարդապետն զամէն մարդու քաղց գիտնէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ միաբանքն մին մին տանէր ի խոցն ու կերակրէր ու զիս ոչ, ու ամէն մարդու գո՛ւ ու զանգատ հարցանէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ միթիթաբէր ու զիս ոչ, ու ես նրայ սրբութեանն համար նատի կու գրէի սոված ու քաղցած ու զին ոչ: Տեսեալն զման մին զիրն Գ(3) ար հաց չկերայ ու ես ուղեցի ոչ, մին զիրն Բ(2) ար անաթի կացի ու ուղեցի՝ նա հաց սովին ոչ, ու մին ար մինչև իրեկան անաթի կացի, մին խիար բնկաւ զէն կերայ ոչ ու մենակ, մինչ չիրիկուն, զիր կու գրէի: Նոր ի ժամ կու երթայի եղբարքն ինձ քէն ին արեւ, ի հետս խաւսին ոչ, ու վազէնէ մինչ չիրիկուն մաս վարդապետն զան զիշերոյի՝ ես ի մատն էի ոչ, ու շարաթն մէկ հետ դարբնակն կուզէր վարդապետն, թէ կու երթամ ու ես յմեն կարէի ոչ, ու վարդապետին մեծ աշակերտն ինձ խիար կու աւզէր, կու երթէր մաս ի վարդապետն, թէ Ախալցխեցուն արիանկ կու տաս ու ինձ ո՛չ: Եղբարցս ազնութիւնն այս շափս էր ու մարմնաւոր ուրախութիւնն ինձ ի յայս գրոցս գրելս այս շափս էր: Ու վարդապետն զիրեանք բամբնց աշակերտացն Բ(2) ու Գ(3) ու ինձ մէկ մ'ոչ: Ատուծոյ համար, ով որ դարիպութիւն չէ գնացել, թող այլ կու երթայ. զճողու խոցն ի սասանայէ լեզուա տակ կարեմ ոչ: Ու ճանապարհ կայր ինձ դնալու ու միտքս հանգէր ու. և զայն ամէնայն վիշտս քաշել եմ ի գրոց գրելս ու մարդ գիտէր ոչ: Մին այլ մեծ աշակերտն զմին փոքր արեկա կու ձեռէր, թէ Գրիգորին թուղթ յէ՛ր կու կոկիս ու ի դու ձգես ոչ: Տեսոյ արարին սատուած, որ զամենայն տարակոյս ի մարդու կու բանալ ու զամենայն քաղց կու լծու ու կերակրէ, յարոյց մին բարի մարդ ու եղաւ ինձ հայր ու իր կուակիցն ինձ մայր, մինչև զգիրքս լմնցի՝ զաղին շալակովն հանապաղ հաց ինձ կու զրկէին, տացէ նոցա տէր սատուած զայն հացն, որ ստանն ու այլ ոչ քաղցնումս... Ու ես հէնց խեղճ ու մենակ, որ մէկ բարձ չրի բերող անգամ ոչ ունէի, բայց դասուած ազնական ունէի, ու կաման սատուծոյ սխալ ու կարողութեամբն նորին 2Գ(74) արն վճարեցի (ԺԵ Գ. հճՏ, հ. 1, էջ 657—658):

Աղվանքի Մարկու կարողիկոսի հիշատակագրութիւնից

Ես՝ Մաթէոս Աղուանից կաթողիկոս ունէի մաս Յոհանէս էրէցն՝ Ատաբէր իրիցու որդին 2Թ(6000) զեկան ստակ ու Ի(20) թաղար ցարեն՝ դասալու շա-

փոփն: Իրեանքն ի Քրիստոս փոխեցան, իրք մին շունին, զոր զիմ պարտքն տէրի, տանուտէրք և բ[ահանա]յք՝ մէջ բնկան, աւետարանս ու Ա(1) ձի, Ա(1) թ[ամբ] բերին, թէ այլ իրք մին շունին, երես զրին, թն խեղճ են, ես այլ խղաւցի, ձին ու թամբն յետ տվի, զանապարհն առի (ԺԵ Գ. հճՏ, հ. 1, էջ 439):

Աղբամաւում՝ Խոննա տիկնոջ պատվերով բնորինակված Անտարանի հիշատակարանով

Արդ, որք ճաշակեք յատուածային բուրաստանն և յամենայի սեղանոյս, որք պատահէք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ՝ յիշեցիք յերկնագնաց յաղաթն ձեր գլխոց յիշեցեալ գտացող սուրբ Անտարանիս զտոնէն, և զծնաւոյցն զՄկրտիչն և զՈսկին, և զկողակիցն զՅովանէսն, և զորդին զԲարիոն, որ դասն ցաւ և անբուժելի ախտ հանդիպաւ և ի յիսանէ հեռացաւ, և ի տանէ և ի լընգանեաց բաժանեցաւ, և ի յաշխարհէս վայելիցաց անողորմ երես դարձուցեր, և ի յաւտար երկիր է մտնոր, և ինձ էնց սուր ահեղ տուեր, որ կոկիծն ի սիրտս է հասեր և զիմ աչերս է յարտ պահեր, զիշեր ու ցերեկ լացեր, և արև ի յիմ սիրտս չէ դիպեր, ոչ անձինս միթիթար գտեր և ոչ լեզուս յորդոր զրուցեր, զբան արարչին լսեր և անձինս ունէի գուրբ Անտարանս ստացեր, և իմ զաակիւն փոխան եմ եզեր (ն. տ., հ. II, էջ 143—144):

Տաւիխիսում բնորինակված ձևագրի գրել Գավրի հիշատակարանից

Եւ ձէն ընդաւ քաղաքս, թէ բիշ հեծել է. ի քաղաքէս ԲՃ(200) լաւ տղամարդիկ ի դուրս կան յետնէ՝ ինչուր ի Լամին՝ ի չրի են զէն գնացին հետեակ, զազրած, նետերն հասած և անարող(՝) և անսլեհ...Եւ մեծ հեծելն ի դուս էին եկել, և երկու զիմաց բուրեղ, և զամեն կողմերէ և ի սուր քաշել, և զամենոց զուխն տարել: Վայ ինձ զէն աուրս սուրն, զլացն ով կարէ բերան պատմել, որ զէն տղամարդիկն անզոյս և մերկ բերելն զատու ի գաս, հէնց որ ոչ ով զիր մտնելն չկարէր հանաչել: Եւ զայն աուր լացն, զողբն ոչ ով չի կարել պատմել, վայ ինձ Ռ(1000) բերան (ն. տ., էջ 169):

Վայոց-Չարում բնորինակված Յայսմատուրի գրիչների հիշատակագրութիւններից

ա) Գրիչ Զախնա

Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին (ն. տ., էջ 358): ԶՔրոմա նորորդոջ բահանայ յիշեցիք յաղաթն, որ այսպար երեկ ու ինձ երկու ձիթով քաղաքը երեք, որ ես կերաւ. նաև զմայր նորս, որ աղարկիւղ էր զայն մեծ-մեծ հացերն:

Գիտեմ որ տուն և զիր պահպան կայ յայն ճառս, ապա վկայ է արս, որ յարեմեան շէկք, մի մեղադրելի:
Ով ասոր կարգացցոյ, ինձ հայցի թվաց, թէ բան կայ պահպան, թէ կարես նա բերան ասայ, թէ չէ՛ նա վայ տուր զծոյս, որ յայլ տեղ կամ յայլ զիրք որոնեցի ոչ (ն. տ., էջ 359):

բ) Գրիչ Գարաւս

Արհմեան է արարիչն աստուած, որ զմեզ բարով թափեց ի յն գրքէս, զի Բ. Եղբարքս է. (7) ասրի էր, որ վերա ինք, Թ. (1000) բոունք պոծանք:

Գ. (3) տեղ է գրած յ[Ե]ղեգին, Հերոմոնի վանք, Աստուածածնուան, էս տետրուս...

Թողութիւն արարէք, ով եղբարք, մասս մանկազով կարել ի, հնչանք կարացի զեւի, փառք աստուծոյ: Ա. (1) սլլարի արին զնաց:

(ն. տ., էջ 359):

Ըստեղս հասայ՝ բարկութիւնն ձեռն ընդաւ. ացին (<ասացին>), թէ Հասան-բէկ կոտանցաւ, աւրիմանկն պահեցաւ, զորոյ խառատեցաւ տետրս լլմեցեաց, վա՛յ մեզ:

Շնհատր շիրզուն՝ իմ բիրն մեռաւ. իմ շքիւն կոտրեցաւ, թողութիւն արարէք:

Չէս տետրս գրելիս խիստ զանապայ, վա՛յ,

Մէք լուծի, Ա. բոյր ունի, էն էլ մեռաւ, վա՛յ,

Քանի միտս ընկնէր, զբիշս ձեռնու վեր ընկնէր,

Խրատ կարաւա ի՛ւ շտեսայ, (վա՛յ):

Սուրբ Սարգսի պատին ացի ծոռ կենամ. ինքն զուխս ման երկի ու բիրն շերադի տեսայ ու խիստ զանապայ, հնձն որ ձեռս թուպցաւ ու կաղամբարն վեր ընկաւ:

Այս ճառս գրեցաւ

Ացին թէ տերն վաղշանեցաւ

Նայիփանու գասատրեցաւ.

Մեղատրս հնձն զանուցաւ,

Որ ձեռս թիւացաւ

Ով ընթերցող եղբարք, ազաչեմ զձեզ, զի խոշորանաց գրոյս յամեղագիր լիք, զի ժամատուն կու շինին, բան էի արել և ձեռս խամացել էր. յամենայն ժամ վարդապետն կանչէր և նս վառանցաւ... թէ տետրս լմենմ (ն. տ., էջ 360):

Բովում է, մեկնարանութիւններն ավելորդ են: Չնայած եղած ընդհանրութիւններին, որոնք պայմանավորված են այդ բարբառների տերիտորիալ ընդհանուր զարգացմամբ, բերված հատվածները լեզվական տեսակետից ունեն նաև էական տարբերություններ: Հատկապես պետք է շեշտել Վայոց Չորում գրված ձեռագրի հիշատակագրությունների լեզուն, որը մի փոքրիկ հատվածում որոշակիորեն երևան է բերում բուրգովին ասորերի կառուցվածքի առանձնահատկություններ: Այստեղ հանդիպող հնչյունափոխական անպիսի երեփույթները, ինչպիսիք են՝ ցաշտեսց>ցեթից, արարեալ>արել, կայո>կէր, այս>էս, այն>էն, այլ>էլ, մայր>մէր, այնչափ>հնչանք, էաք>ինք, (չ)ուհէի>(չ)ուհի, այտեղս>բստեղս, ասացին>ացին, մատես>մասս, ձեռնս>

ձեռս, բոյր>բիր, թուպցաւ>թիւպցաւ և այլն և այլն (որոնց մի մասը հատուկ է նաև բերված մյուս հատվածների լեզվին՝ որպես արևելյան քարտեզների), ձեռքանեան այնպիսի ակնհայտ օրինակներ, ինչպիսիք են՝ զրում ի (զրում էի), Աստուածածնուան (նեթգ. հուշ.), գրելիս (անկ. զերբ.) և այլն, դրա լավագույն ասպացույցներն են: Հատկանշական է նաև այն, որ Աղթմաբարում խոնձա տիկնոջ պատվերով ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում, որ սերսվում է առավելապես գրաբար լեզվով և հետո միայն անցնում ստանդարտական լեզվին, որոշակիորեն երևում է վաղակատար զերբայի եւ-ով ձևերի կիրառությունը, հակառակ մյուս հատվածների, որոնց մեջ այդ զերբայը հանդես է գալիս ել վերջավորությամբ:

Հարկ չկա այստեղ կանգ առնելու նաև այլ կարգի (բառապաշարային, շարահյուսական և այլ) տարբերությունների վրա: Ակնհայտ է, որ նշված հատվածների լեզուն իր էական կողմերով տարբերվում է այն լեզվից, որ անվանվում է կիրիկյան հայերեն և որի առանձնահատկությունները հատուկ են նաև արևմտահայ մի շարք բարբառների: Եվ նթէ վերը նշված ստանդարտականությունները արձանագրվում են որպես համակարգ XV դարում, ինչ խոսք, որ դրանք գոյություն ունեն նաև նախորդ XIII—XIV դարերում, հետևաբար և կիրիկյան հայերենը միջին հայերենի միակ զրևարումը կամ նրա զարգացման մի փուլը չէր:

Ինչպես վերև արդեն ասվեց, կիրիկյան հայկական պետականության վերացմամբ՝ աստիճանաբար սկսում է թուլանալ նաև նրա գրական լեզվի ազդեցությունը՝ տարբեր վայրերում խոսվող հայերենների վրա: և այդ հիմքի վրա ավելի է աշխուժանում են տերիտորիալ բարբառներից: Այդ պրոցեսին նպաստում են երկրի խիստ մասնատվածությունը, տարբեր վարչական շրջան ներս ու գավառների տնտեսական ու բաղաբական թույլ կապերը, նրանց փակ ու մեկուսացված կյանք վարելը և այլն: Ժողովրդի միակ բաղաբական միավոր ուժը մնում է եկեղեցին, բայց վերջինս էլ անտարբեր է գտնվում նոր ժամանակների լեզվի նկատմամբ և իր՝ մշակութային, դազափարական գործունեության ընթացքում շարունակում է կերտել գրաբար լեզուն: Երկրի մասնատվածությունը նպաստում է արդեն իսկ մասնատված լեզվական տարբերակների ինքնուրույն զարգացմանը: Քաղաքական աննպաստ հանդուժանքների բերումով հայ հասարակության հոծ զանգվածներ հեռանում են բուն երկրից և քաղաքային ստեղծում մար երկրից շատ հեռու՝ տար լեզվական միջավայրում: Այսպիսի գաղութներ են ստեղծվում Ղրիմում (Սուրխավ, կաֆա), Ուկրաինայում (Կիև), Ռուսիայում, Լեհաստանում (Լվով, Կամենեց-Պոդոլսկ), Հունգարիայում և այլուր: Կարված մայրենի լեզվի սեուցող ակունքներից, լեզվական օտար միջավայրում, հայերենի այդ տարբերակները զարգանում են մի կողմից՝ իրենց ներքին օրինաչափություններով և մյուս կողմից՝ ենթարկվում շրջապատի լեզուների ազդեցությանը, որը նրանց աստիճանաբար հանում է պատմության ասպարեզից:

Բուն երկրում, ընայած բաղաբական ու տնտեսական աննպաստ պայմաններին, հայ հասարակությունը ոչ միայն կարողանում է պահպանել իր գոյությունը, այլև ստեղծում է նյութական և հոգևոր արժեքներ: Գրավոր լեզվի աշխարհաբարացումը ավելի ուժեղ է արտահայտվում այս ժամանակվա գրական հուշարձաններում: Եվ ընայած այն բանին, որ դեռևս որպես գրական լեզու շարունակում է գոյություն ունենալ նաև գրաբարը, բայց, այնուամենայն-

նիվ, պրակտան երկերի հիմնական լեզուն գտնուում է ժամանակի խոսակցական լեզուն:

XVI—XVII դարերում շատ որոշակիորեն ընդգծվում են ժամանակակից հայ բարբառների հիմնական հատկանիշները. սակայն գրական լեզվի դարձալուծումը գնում է ոչ թե այդ բոլոր տարբերակների դրի առանձնապարհով, այլ երկու հիմնական ուղղություններով: Արևմտահայ և արևելահայ բարբառների տարբերությունների հիմքի վրա ուղղագծվում է դարձացման երկու հիմնական տեղեկնց, որոնք հետագայում հասցնում են աշխարհարարի երկու տարբերակների առաջացմանը:

ՄԻՋԻՆ ԼԱՅՆՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՆՔՆԵՐԻ ԼԱՐՅՑԸ

Մենք վերը տեսանք, որ միջին հայերենի լեզվական շրջանի համար տարբեր գիտնականների վերջնում են տարբեր ժամանակահատվածներ (այստեղ կանգ կանենք դրանցից երեքի վրա):

Կարսը միջին հայերենը տեղավորում է X—XV դարերի միջև ընկած ժամանակամիջոցում: Եթե նկատի ունենանք, որ նա բացառապես դրավում է կիլիկյան հայերենի բնույթով, ապա նրա ընդունումը ժամանակագրության մեջ վերջին սահմանադիրը՝ XV դարը, արդարացվում է: X դարը իր բնութագրած լեզվական շրջանի սկիզբը համարելիս, Կարսը, Չավանաբար նկատի է ունեցել մի կողմից այդ ժամանակաշրջանում ժողովրդական լեզվի տարբերի առկայությունը և մյուս կողմից ենթադրելով, որ XII—XIII դարերում գրի կառուցումը նոր լեզուն պետք է որ ունեցած լիներ առնվազն 2—3 հարյուրամյակի զարգացման պատմություն: Հետևաբար Կարսի ընդունած ժամանակագրությունը վերաբերում է ոչ միայն կիլիկյան գրական հայերենին, այլև նրան նախորդած նախապատրաստական շրջանին:

Պրոֆ. Ս. Դավաբյանը, ինչպես սրղեն սովել է, միջին հայերենը տեղավորում է X—XVII դարերի սահմանագծում: Այստեղ ևս X դարը որպես սկիզբ վերցվում է, նկատի ունենալով նոր լեզվի տարբերի առաջին վկայությունները: Եվ բանի որ միջին հայերենը չի սահմանափակվում միայն կիլիկյան հայերենով, ուստի և այն հասցնում է մինչև XVII դարը: Բնականալիկյան հայերենի շրջանաբաժանման համար հիմք են նանդիտացել բնութագրող բար, այդպիսի շրջանաբաժանման համար հիմք են նանդիտացել բնութագրող լեզվի առանձնահատկությունների ամենավաղ վկայությունները և ամբողջ շրջանին բնորոշ առանձնահատկությունները, ընդհուպ՝ մինչև վաղ աշխարհարարի ձևավորումը:

Պրոֆ. Գ. Զատուկյանը միջին հայերենի լեզվական շրջանը տեղավորում է XII—XVI դարերի միջև Ըստ որում, նախապատրաստական շրջանը, որ նա անվանում է նախամիջին հայերենյան ենթաշրջան (հին շրջանի վերջին էտապը), ընդգրկում է VIII—XI դարերը: Միջին հայերենի ամբողջ շրջանը նա բաժանում է երկու ենթաշրջանների՝ կիլիկյան նորմավորման և աշխարհարարացման: Առաջինը ընդգրկում է XII—XIV դարերը և բնորոշվում է այն առանձնահատկություններով, որոնք հատուկ են կիլիկյան գրական հայերենին: Աշխարհարարացման ենթաշրջանը ընդգրկում է XV—XVI դարերը, երբ կիլիկյան պետականության անկումից հետո Հայաստանի մասնատումը և շարունակվող պողոթները՝ էլ ավելի են ուժեղացնում բարբառային եղած տարբեր

ությունները, սույն բերում նոր գծեր, բարբառների, ենթաբարբառների ու խոսածրների աճող տարբերություններ... Գրական լեզվի տարբերակների ամփոփանկությունը ավելի է աճում, բարբառայնություններն ավելի են բազմանում՝ և այլև, որոնց դարգացումը, ըստ էության, հասցնում է լեզվական նոր շրջանին՝ աշխարհարարին:

Պատմության ամեն մի շրջանաբաժանում, անշուշտ, ունի որոշ պայմանականություն: Այդ առավել վերաբերում է լեզվի պատմությանը, որտեղ մի ժամանակահատվածում արձանագրվող լեզվական որակը երբևր չի ստեղծվում անմիջապես ու միանգամից, ուստի և անհնար է սահմանադրել նրա սկզբի անվերապահ ժամանակը: Սակայն իր պայմանականությունը հանդերձ, ամեն մի շրջանաբաժանում ունի նաև իր գիտական հիմքը: Այս իսկ սեռակիտից, միջին գրական հայերենի սկզբնավորությունը ավելի ճիշտ կլինի համարել XII դարը, եկատի ունենալով հետևյալ հանգամանքները: Նախ (որ ամենակարևորն է) այս ժամանակահատվածում է, որ հասարակայնությունը գիտակցվում է նոր գրական լեզվի անհրաժեշտությունը և հենց այդ անհրաժեշտության գիտակցմամբ էլ ժամանակի խոսակցական լեզուն՝ իր ուրույն համակարգով, ստանում է դրավոր արտահայտություն: Այսու կողմից, նախորդ շրջանում այդ համակարգի տարբեր դրավոր լեզվում գեղես որակ չեն կազմում: դրանք հանդես են դալիս որպես շեղումներ հին լեզվական ձևերից: Եվ չնայած այն հանգամանքին, որ XII դարում արձանագրվող լեզվի կառուցվածքի հիմնական տարրերը, անշուշտ, կալին նախորդ դարի խոսակցական-բանավոր լեզվում, բայց բանի որ նրանք այդ ժամանակինում ամբողջությամբ՝ որպես համակարգ, չեն արձանագրվում և չեն ստանում ընդհանուր նանաշում, ուստի և չեն կարող համարվել գրական լեզվի սկզբնավորության ժամանակի չափանիշներ:

Միջին հայերենի պատմության մեջ XII—XIV դարերը որպես առանձին ենթաշրջան առանձնացնելը նույնպես պայմանական է:

Հայերենի պատմական զարգացումը միջին դարերում նրան հասցնում է բարբառային բաժանվածության, սրտք ստեղծում են միջին հայերենի տարբերակները: XI—XII դարերի սահմանագծում հայերենի բանավոր-խոսակցական լեզվի տարբերակները հավասար դիրքում և պայմաններում էին. երկրի բազարական դրությունը նրանցից և ոչ մեկին առավելություն չէր ստելու: Գրական լեզվի ֆունկցիան կատարում էր դրաբարը, մինչդեռ ժողովրդի խոսակցական լեզուն հայերենի տեղային բարբառներն էին: Բայց հենց որ կիլիկյան պետականության պայմաններում այդ բանավոր-խոսակցական լեզուներից մեկը բարձրանում է պետական-պաշտոնական լեզվի աստիճանին, փոխվում է նրա դիրքը և հարաբերությունը միջին հայերենի մյուս տարբերակների նկատմամբ:

XII—XIV դարերում նոր գրականությունը ստեղծվում է առավելագույն այդ լեզվի հիմքի վրա, չնայած այն բանին, որ գրի առնված այդ լեզվի կողմին շարունակում են դրություն ունենալ հայերենի նաև մյուս տարբերակները: Վերջիններս իրենց բազարական դիրքի պատճառով չեն դառնում գրական լեզու և այդ իսկ պատճառով որոշակիորեն հանդես չեն դալիս դրավոր աղբյուրներում: Եվ արտաքինապես ստեղծվում է այն ուսավորությունը, որ իբր թե կի-

¹ Տե՛ս Գ. Ք. Ջատուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, էջ 48:

իկիյան հայերենը միջին հայերենի զարգացման մի փուլն է միայն: Բայց, այնուամենայնիվ, բանի որ բազարական անցքերի բերումով XII—XIV դարերի սրբանշանության մեջ իշխող լեզուն կիլիկյան հայերենն է և նրան են ստորագրավում հայերենի բարբառները, միանգամայն արդարացիվում է դրական հայերենի այս ժամանակահատվածը կիլիկյան գրական հայերեն կամ կիլիկյան նորամուտն ենթադրանք անվանելը:

Միջին հայերենի երկրորդ ենթաշրջանը ընդգրկում է XV—XVII դարերի միջև ընկած ժամանակահատվածը: Այս ենթաշրջանում կիլիկյան գրական հայերենը կորցնելով իր բազարական հիմքերը, զրկվում է նաև հայերենի մյուս տարբերակների նկատմամբ ունեցած իր գերազանց գիբրի: Եվ միայն այն պատճառով, որ նա որպես գրական ու գրավոր լեզու (Քեն ոչ մշակված ու խիստ նորամուտով) ունեցել էր մի բանի դարերի կիրառություն (գրանով իսկ ստեղծվելով որոշակի ավանդակություն), որոշ ժամանակ, ինքնիշխան, պահպանում է գրական լեզվի իր ֆունկցիաները: Սակայն, հետագա դարերում, աստիճանաբար սահմանափակվում են նրա գերիշխանության շրջանակները, մասնավորապես որ նա իր առանձնահատկություններով առավելագույնս հարկով մտնում էր որևէ միջավայրում: Այսպիսով, այս ենթաշրջանի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նախորդ շրջանում ստեղծված գրական լեզվի ազդեցության թուլացմամբ՝ սկսում են աշխուժանալ հայերենի տեղիում ընդգծվել նրանց զարգացման տարբերությունները: Եվ բանի որ այս ժամանակաշրջանի հայերենի զարգացման հիմնական ստեղծանքները կանխորոշում են աշխարհաբարի ձևավորումը, ուստի էլ ոչ միայն արդարացիվում, այլև նպատակահարմար է այն միջին հայերենի աշխարհաբարացման ենթաշրջան անվանելը:



Սույն ուսումնասիրության հիմքում ընկած են պրոֆ. Գ. Բ. Զահուլյանի միջին հայերենի պատմության շրջանաբաժանման սկզբունքները, միայն այն տարբերությամբ, որ այստեղ երկրորդ ենթաշրջանի վերջը համարվում է XVII դարը, նկատի ունենալով, որ այս էտապի առանձնահատկությունները շարունակվում են քնդհուպ XVII դարի վերջը: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, այդ բաժանումներն ու անվանումներն ունեն պայմանական բնույթ, և կարևորը այստեղ ոչ թե՛ են գրանք են, այլ լեզվական նյութի պատմական բնույթն է: Այս իսկ տեսակետից, բնորոշելով հանդերձ միջին հայերենի պատմության մեջ զարգացման երկու հաջորդական էտապների գոյությունը և լեզվական երևույթների բնույթները առանձնավ զարգացման այդ էտապները հաշվառմամբ, սակայն, սույն հետազոտության մեջ, կրկնություններից խուսափելու համար, նպատակահարմար է համարվել այդ ենթաշրջանները շտապանաջանելու առանձին դրվանների մեջ: Լեզվական երևույթների բնույթն պատմական հաջորդականությունը պահպանելու նպատակով՝ միջին հայերենի ամեն մի օրինակից հետո ընկնում է իր առաջացման, գոյության ու զարգացման բնագրի մեջ, մատենագրության մեջ նրա առաջին իսկ վկայություններից սկսած մինչև երկրորդ ենթաշրջանի վերջը:

Միջին հայերենի սկզբնադրույթները, ըստ իրենց բովանդակված նյութի ու հորինման բնույթի, խիստ բազմազան են. դիտարկելով պատմական ասեղծագործությունները, պատմագիտական և քաղաքական աշխատությունները, ձևապարհ բառարաններ ու բերականագիտական երկեր, ժամանակագրություններ, ձևագրերի հիշատակարաններ ու վիճակային արձանագրություններ, պետական ու պաշտոնական փաստաթղթեր, արտոնագրեր ու կալվածագրեր, տարբեր իրերի և առարկաների վրա փորագրված կամ սանդղագրով ձևաչափակազարդված և այլն և այլն: (Ամենայն առումով, որպես սկզբնադրույթներ կարող են ծառայել միջնադարյան գրությունները մեզ հասած բոլոր գրավոր հուշարձանները, և ինչպես որևէ ունենանք, որ ամենահին ձևագրերը պահպանվել են IX դարից):

Բնական է, որ սկզբնադրույթների բնույթի և բովանդակության նման բազմազանությունը իր հետ բերում է նաև լեզվի արտահայտչական միջոցներին, նրա ոճական ձևավորումներին և լեզվական այլ ձևերի տարբերություններին, որոնք պայմանավորված են մի կողմից՝ տվյալ հեղինակի նպատակագրությամբ, նրա երկի ներքին բովանդակությամբ, հին գրավոր լեզվի տիրապետելու աստիճանով և մյուս կողմից՝ այն սղղագրության, որ տվյալ գրավոր խոսքի վրա ունեցել է իր ազդած միջավայրի խոսակցական լեզուն:

Հիշյալ աղբյուրների մի մասը, չնայած այն բանին, որ հորինված է ավելի վաղ ժամանակներում և իր լեզվական առանձնահատկություններով անմիջապես չի առնչվում ուսումնասիրվող շրջանին, սակայն ընդօրինակված լինելով միջնադարում, այս կամ այն չափով իր վրա կրում է որսագրության ժամանակի լեզվի կիբրը: Այդ հիմնականում արտահայտվում է հին ուղղագրական նորմաներից կատարվող շեղումներով, որոնք, անշուշտ, կարող են բացատրվել նորմաներից կատարվող շեղումներով, որոնք, անշուշտ, կարող են բացատրվել նրա հետաքրքրություններին, կայացնել լեզվի պատմության մեջ հետաքրքրող էտապի համար: Սակայն, ինչ խոսք, որ այս բոլորի մեջ հիմնականը, այնուամենայնիվ, այն գրավոր աղբյուրներն են, որոնք անմիջապես վերաբերում են միջին հայերենին: Սրանց մեջ, լեզվական տեսակետից, ավելի պակաս արժեք ունեն այն աշխատությունները և բնագրերը, որոնք առավելագույնս զբղված են գրաբար լեզվով: Դրանցից, մասնավորապես, պատմագիտական և բերականագիտական աշխատություններում լեզվական առանձին ձևերի՝ հին նորմայից կատարվող շեղումները կամ նրանց մեջ թափանցած օտար բառերը, ինչպես նաև բերականների կողմից այս կամ այն ուղղագրական կանոնի մասին արված գաղափարայինները, կամ ժամանակի բանավոր խոսքի մասին արտահայտած դիտողությունները արժանի հիմք կարող են տալ մեր պատկերացումներին:

Ինչ վերաբերում է այն գրավոր աղբյուրներին, որոնք զբղված են միջին հայերենով և լեզվական տեսակետից պարունակում են հարուստ և առատ նյութ, ապա դրանք իրենց հորինման և մեզ հասած գրությունների ժամանակի տեսակետից միասնական չեն: Մի կողմ լեզվական ամեն մի հեղինակի լեզվական անհատականությունը բնորոշող առանձնահատկությունները, մեզ հետաքրքրող սկզբնադրույթները զբղված են տարբեր ժամանակներում (XII—XVII դդ. սահմաններում) և տարբեր վայրերում: Հասկանալի է, որ օգտա-

գործման ենթակա լեզվական այդ ամբողջ նյութը իր նպատակին չի կարող ծառայել, եթե նկատի չունենանք այդ աղբյուրների ժամանակագրությունը: Եվ իսկապես, XII—XVII դարերում ստեղծված երկերի լեզվական փաստերը չի կարելի քննել որպես մի ժամանակի և մի միասնական լեզվի արտահայտություններ, ինչպես նաև XII դարում ստեղծված, բայց XVII դարի ընդօրինակությամբ հասած ընագրի տվյալներով հիշտ չի լինի գաղափարներ անել XII դարի լեզվի վիճակի մասին: Այս իսկ տեսակետից կարևոր է նաև սկզբնաղբյուրները գնահատել ըստ նրանց ժամանակագրության:

Ըստ ժամանակի՝ աղբյուրները բաժանվում են երկու խմբի.

ա) սկզբնագիր աղբյուրներ՝ բառիչ բուն իմաստով, որոնք իրենց հորինման օրը գրություն ժամանակներով համընկնում են: Սրանք մեզ հասել են իրենց սկզբնական ընագրերով, առանց միջնորդավորության (չեն ընդօրինակվել), ուստի և հավաստի աղբյուրներ են իրենց ժամանակի լեզվական երկվայթների ուսումնասիրության համար: Եվ քանի որ այս սկզբնագիր աղբյուրներն իրենց հերթին տարբեր պատմական ժամանակների ծնունդ են, հետևաբար նրանք լեզվի պատմության համար արժեքավոր են ոչ միայն տվյալ լեզվական երևույթի հավաստիության տեսակետից, այլև հնարավորություն են տալիս հետևելու այդ երևույթների առաջացման օրինակներին: Այդպիսի սկզբնագրեր են հայերեն ձևաբանների հիշատակարանները, վիճակային արձանագրությունները, տապանագրերը և այլ լեզվական հուշարձաններ (հատկապես ետիք դարերում): Սրանց մեջ հատկապես արժեքավոր են ձևաբանների հիշատակարաններն ու արձանագրությունները և՛ իրենց վավերականությամբ, և՛ նրանով, որ միջին հայերենի վաղ շրջանի, հատկապես նրան նախորդած շրջանի (որ չափազանց կարևոր է լեզվի պատմության համար) ուսումնասիրության այլ սկզբնագիր աղբյուրներ չառ քիչ կամ նույնիսկ չեն պահպանվել: Մյուս կողմից, եթե այլ տիպի գրավոր աղբյուրները համարյա հնարավորություն չեն տալիս մի ժամանակահատվածում քննելու տարբեր վայրերում հայերենի ունեցած դրսևորումները, ապա հիշատակարաններն ու արձանագրությունները առատ նյութ են տալիս այդպիսի քննության համար, չնայած այն բանին, որ դրանց լեզուն շատ զիջերբում ունի որոշ կաղապարայնություն և առանձին ընագրերում՝ գրաբար հորինվածը:

Վիճակային արձանագրությունների մասին պետք է ասել նաև հետևյալը՝ Դրանք փոքրագրված են պատմական հուշարձանների վրա տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում: Դրանց բնագրերին հնարավոր է լինում ծանոթանալ միայն հրատարակված՝ սպագիր վիճակում: Այդ նշանակում է, որ այդ աղբյուրները ուսումնասիրողի ձեռք են անցնում ոչ անմիջապես, այլ մասնագետ և ոչ մասնագետ հավաքողներ միջնորդությամբ: Սակայն արձանագրությունները, որոնք շատ զիջերբում գրված են փակագրություններով, կամ ժամանակի ընթացքում զգվար ընթանելի ու եղծված հատվածներ ունեն, աղբյուրագետների կողմից ունեցել են տարբեր վերծանություններ: Նախկինում արձանագրությունների վերծանումը և նրանց բովանդակության վերականգնումը առավելագույնս հետապնդել են պատմագիտական նպատակներ: Այդ իսկ պատճառով, վերծանությունների ժամանակ ուշադրությունից վրիպել են լեզվական ոճաբանները, առաջնությունը տրվել է վերականգնվող արձանագրության բովանդակությանը: Հասկանալի է, որ այդպիսի սկզբներով նեոկայացված արձանագրությունների տեքստերը գիտական մեծ արժեք ներկա-

յացնել չեն կարող՝ հատկապես լեզվաբանական ուսումնասիրությունների համար: Արձանագրությունների վատահեի աղբյուրներ են այն հրատարակությունները, որոնց մեջ վերծանությունները կատարված են գիտական հիմունքներով և որոնց կից կան նաև դրանց բնագրերը հաստատող լուսանկարներ: Նման ժողովածուներ (Փիվաններ), ինչպես նաև առանձին պատմական հուշարձանների ուսումնասիրության կից արձանագրություններ հրատարակվել են վերջին տասնամյակների ընթացքում՝ սովետահայ հմուտ աղբյուրագետների կողմից՝:

բ) Գրավոր աղբյուրների երկրորդ խմբի մեջ մտնում են այն բոլոր գրական օր գրավոր հուշարձանները, որոնք չեն ներկայացված հեղինակային ընագրերով, կամ, որ նույնն է, մեզ են հասել հետագա արտագրություններով: Այս տիպի աղբյուրներում, ինչպես այդ երևում է նույն երկի տարբեր գրություններում համեմատություններից, նկատելի են ոչ միայն ուղղագրական, այլև բնագրային շեղումներ օր տարբերներում⁶⁰: Արդ, այս տարբերություններից ո՞րն է հարադատ հեղինակային ընագրին, մի հարց, որի լուծումը պահանջում է բանասիրական մանրակրկիտ աշխատանք, որը մեր խնդիրներից ու նպատակներից զուրս է: Սակայն այդ տարբերությունների համեմատությունը ցույց է տալիս, որ մի ձևագրում, օրինակ, տվյալ բառը ունի իր ավանդական գրությունը, մի երկրորդում այն ներկայանում է այնպիսի մի ուղղագրությամբ, որ ակնարկում է նրա բարբառային արտասանությունը, մի այլ դեպքում տվյալ բառը առհասարակ փոխարինված է այլ հմուտից ընտել և այլն: Հասկանալի է, որ առաջինը արժեք չունի, այն ներկայացնում է ավանդական բառաձևը, մյուս երկուսը հետաքրքիր են նրանով, որ մի զեպքում նշվում է կատարված հնչյունափոխական երևույթը, մի այլ դեպքում՝ բառի տեղային կիրառությունը: Շատ հնարավոր է, որ այդ փոփոխությունները հատուկ են եղել հենց հեղինակային լեզվին. բայց բանի որ մենք հեղինակային բնագրեր վերականգնել չենք կարող, մնում է, որն, այդ փոփոխությունները վերագրել գրության ժամանակի և վայրի լեզվի առանձնահատկություններին:

Մի բանի կոնկրետ օրինակներ 2. Երկվայցու տաղերից մեկում, որ զետեղված է համեմատաբար ամենավաղ ձևագրերից մեկում (Մաշտոցի անվան Մատենադարանի № 8029 ձևագիր), ընդօրինակված 1376 թ. Տերտուր երկվայցուց և կողմից, հանդիպում ենք հետևյալ բառաձևերին՝ աղվոր, անուշ, խաբվիլ, բարուն, ստեղծեց, ջոհար կամ ջուհար և այլն: Նույն բառերը նույն տաղի XVI—XVII դարերի գրությունների մի մասում ունեն հետևյալ արտահայտությունները՝ աղուոր, անուշ, խաբուիլ, բարուն || բարուն, ստեղծեաց, ձոհար և այլն: 1376 թ. ձևագրի մեջ արձանագրական երևույթների արտահայտություններ են, որոնք մեզ հայտնի են մեր ժամանակակից բարբառներից: XVI—XVII դարերի գրություններում գրանք ունեն ավանդական ուղղագրություն, որը մեզ ոչինչ չի ասում կատարված փոփոխությունների մասին (բացի վերջին օրինակից, որտեղ փոխառյալ բառի գրադարձված ձևը նշում է, որ տվյալ գրչի ապրած լեզվական միջավայրում հին հայերենի խուլերը ձայնեղացել էին): Հնարավոր է, որ 1376 թ. ձևագրից հիշյալ բառերի ուղղագրու-

⁶⁰ Տե՛ս օգտագործված աղբյուրների ցանկը:
⁶¹ Այդ բանում համոզվելու համար բավական է միայն Քերթևի միջնադարյան հեղինակների գիտական հրատարակությունները:

Ամենահին ձևագիրը (№ 8030), որի մեջ տեղավորված են նրա արտատիրերով գրված կրոնական բովանդակությունները կրթության (որոնցից այլ ձևագրաբան տարբերակներ հայտնի չեն), ունի 1341 թ. գրչույուն: Սակայն այս ոտանավորները լեզվական հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ իրենց բովանդակությամբ համապատասխան՝ գրված են պարսերով: Այն ստեղծագործությունները, որոնք իրենց մեջ ունեն միջին հայերենին հատուկ լեզվական ձևեր, ավանդված են համեմատաբար աղիկի ուղի ընթացիկությամբ: Գրանց մեջ երեք տաղ տեղ են գտել 1417 թ. մի ձևագրում (№ 8689) և մեկը՝ 1466 թ. ձևագրում (№ 425), որոնք ունեն նաև ետին դարերի գրչության արտաբերականներ: Տաղերի մնացած մասը մեզ հասել է XVI—XVIII դարերի արտաբերություններով, ուստի և գրանցված զեմար է պատկերացում կարգին Կելառացու ապրած ժամանակաշրջանի լեզվի մասին, մանավանդ որ ձևագրերը ունեն բառական, քերականական և ուղղագրական տարբերություններ:

Հովհաննես (Պուլ) Երզնկացու (XIII դար) ավանդված են բազմաթիվ ստեղծագործություններ, այդ թվում շափաթ ռիկեր, զանազան մեկնություններ (գրանց մեջ նաև Մեկնութիւն քերականին), քարոզներ, ճառեր և այլն: Սակայն սրանց մեջ լեզվական հետաքրքրություն հատկապես ներկայացնում են շափաթ գործերը: Ամենահին ձևագրերը, որոնց մեջ պահպանված է բանաստեղծի տաղերի մի մասը (թվով չենք), վերաբերում են 1314, 1331, 1376 թվականներին. տաղերի մյուս մասը ընթրինակված է XV—XVI և հետագա դարերից հասած ձևագրերի մեջ, հետևաբար Երզնկացու ժամանակաշրջանի լեզվի մասին աղիկի հավաստի և ստույգ փաստեր կարող են տալ վաղ շրջանի գրչություններով հասած ձևագրերը:

Յրիկի (XIII դ.) տաղերից տարբեր ժամանակներում հրատարակվել են տարբեր ժողովածուներ: Մեղանում առաջին ժողովածուն լույս է տեսնում 1337 թ., որը պարունակում է ընդամենը 21 տաղ: Այս ժողովածուն նպատակ չի դնում տալու տաղերգուի ոտանավորների բաղադրական բնագիրը՝ այն թողնելով է ախորձիական հրատարակությանը: 1941 թվականին լույս է տեսնում Յրիկի բանաստեղծությունների չի նոր ժողովածու, որն ընդգրկում է շուրջ չորս տասնյակ տաղեր: Այստեղ բնագրերը ներկայացված են տարբեր ձևագրերի բաղադրությամբ, սակայն, մի բան, որ տարբերակ է՝ օգտագործված ձևագրերը նկարագրված չեն, և մեզ անհայտ է մնում նրանց գրչության ժամանակը:

Յրիկի ոտանավորների ամենակատարյալ հավաքածուն Տիրայր արքայապետի Նյու-Յորքում հրատարակած «Գիվանես» է: Այս ժողովածուում զետեղված տաղերի համեմատական բնագրերը կազմելիս հեղինակը օգտագործել է տարբեր երկրների գրագրաններում պահվող հայերեն ձևագրերը (այդ թվում նաև նախասովետական Հայաստանի՝ Էջմիածնի գրաստան ձևագրերը): Գիվանի մեջ ընդգրկված տաղերը ունեն իրենց ժանտարբերությունները, առանձին ձևագրերի տարբերակները և գրչական տարբերությունները: Բայց այստեղ ևս բացակայում են օգտագործված ձևագրերի գրչության թվականները⁵⁴, մի հանգամանք, որ անհնար է դարձնում կամ, աղիկի հերոս, զեմար

⁵⁴ Ձևագրերի նկարագրության, նրանց գրչության թվականների և գրանց հետ կապված այլ զրույցների թղթերը՝ հեղինակի արտասահման մեկնելու ժամանակ, մնացել են Էջմիածնում և այդ թեմ պատճառով տեղ չեն գտել ներկա հրատարակության մեջ: Մեր պրպատումները պարզեցին, որ այդ զրույցները բազմաթիվ այլ ձևագրերի ու գրությունների հետ միասին գտնվում

բացնում է գրանցում նկատվող լեզվական երևույթները մի որոշակի ժամանակի վերագրելը⁵⁵:

Կոստանդին Երզնկացու և բժշկապետ Գրիգորիսի՝ մեզ հասած երկերի մասին խոսք եղել է վերը:

Արժեքավոր սկզբնաղբյուր է նաև «Գիրք վաստակոց» (Геопоника) աշխատությունը (Վենետիկ, 1377 թ.): Սա հիմնականում երկրագործության վերաբերյալ մի ժողովածու է, որ նախապես կազմված է եղել հունարեն՝ հույն տարբեր հեղինակների երկերից կատարված ծաղկաբազում, ապա թարգմանվել է արաբերեն, որի վրայից էլ կատարված է հայերեն թարգմանությունը: Հայերեն թարգմանությունը կատարված է համարում XIII դարում՝ Կիլիկիայում: Եվ չնայած այն բանին, որ հրատարակված բնագրի հիմքում ընկած է անթվական մի ձևագիր, բայց դատելով աշխատության լեզվից, որ հարում է կիլիկյան հայերենին, պետք է կարծել, որ այն հարապատրոն է արտահայտում թարգմանության ժամանակի լեզվական վիճակը:

Վարդան Այգեկցու (XII—XIII դդ.) առակները ցրված են տարբեր դարերի ձևագիր մատյաններում: Սրանց դիտական համեմատական բնագրերը կազմել ու հրատարակել է Ն. Մտոր՝ օգտվելով ինչպես Հայաստանի, այնպես և նրանից դուրս գտնվող գրագրանների ձևագրային ֆոնդերից: Բնագրերը պատրաստված են խնամքով, արված են տարբեր ձևագրերում հանդիպող տարբերակներով, բերված են հիմնական բնագրից խիստ շեղումներ ունեցող տարբերակները և այլն: Սակայն, չնայած այս բոլորին, այդ բնագրերի հիման վրա զեմար է ճշգրիտ պատկերացում կազմել Վարդան Այգեկցու ապրած ժամանակի, առավել քան՝ հեղինակի լեզվի վերաբերյալ: Այդ զեմարությունը առաջանում է ո՛չ միայն այն պատճառով, որ նշված ձևագրերը հասել են մեզ ետին դարերի գրչություններով, այլև մի այլ գրեղ պատճառով, որը պայմանավորված է առակների ժանրային առանձնահատկություններով: Բանն այն է, որ առակները իրենց բնույթով աղիկի մաս լինելով ժողովրդական ստեղծագործություններին, ազատ և անկաշխանց կերպով ենթարկվել են փոփոխությունների: Ձեռագիր մատյաններից ընթրինակվելիս նրանք ենթարկվել են խմբագրությունների, վաղից վաղ իրենց մեջ առնելով խմբագրողների լեզվի առանձնահատկությունները: Ի տարբերություն գեղարվեստական այլ ստեղծագործությունների, առակները ունեցել են նաև բանավոր կյանք. նրանք պատմվել են ժողովրդի բերանում, փոխանցվել սերնդից սերունդ և այդ ձևով փոփոխությունների ենթարկվել: Անհատի երբեմնի ստեղծագործություն հանդիսացող առակը մի քանի սերունդների ընթացքում բանավոր կյանք վարելուց հետո նորից է դրի առնվել, և այսպիսով ստեղծվել են միևնույն առակի մեկից աղիկի տարբերակները: Այս իսկ տեսակետից առակների մատուցած լեզվական նյութը կարող է ունենալ ընդհանուր ճանաչողական արժեք և կարող է օգտագործվել միայն այն ժամանակների համար, որում նրանք դրի են առնվել:

են Մաշտոցի անվան Մատենադարանի՝ Տիրայր վարդապետի անվան սակ պահվող արխիվում (չլույսիկ № 47), որը բաղկացած է 17 թղթապանակներից: Մեզ հետաքրքրող ձևագրերի գրչության թվականները պարզելու համար պահանջում էր մեծաերկրիտ և տեղական բանասիրական ախտատես:

⁵⁵ Մաշտոցի անվան Մատենադարանում Յրիկի տաղերը պարունակող ամենահին գրչության ձևագրերը վերաբերում են XV—XVI դարերին:

XV—XVII դարերի լեզվական հուշարձանները իրենց հորինման և գրչության ժամանակներով կա՛մ մտատիրապետ համբնկնում են, կա՛մ գրանց տարբերությունները առանձնապես մեծ չեն:

Հովհաննես Թլիսուրացու (XIV—XV դդ.) առղերի ամենահին ձևն ազգային օրինակները պահպանվել են XVI և հետագա դարերի: Ժամանակագրորեն հին է նաև 1513 թվականին հրատարակված առաջին տպագիր Տաղարանը, որտեղ այնտեղ ստեղծագործությունների հետ միասին կան նաև Քլիտարացու առղերը: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողները⁶⁶, այդ տպագիր Տաղարանի հիմքում բնկած ձևերը արդեն ունենում է եղել մի քանի բնագործակութուններ: Հետևաբար, ինչպես Տաղարանը, այնպես և այլ գրչություններով հասած առղերը հեղինակային անմիջական բնագործ չեն:

Բժշկական Ամիրդովլաթ Ամասրացու (XV դ.) երկերից հրատարակված են երկուսը՝ «Անբիտաց անպէտ» և «Յուրաբ բժշկութեան»: Գրանցից առաջինը Կ. Քասառչյանի հրատարակությունն է (Վիեննա, 1926 թ.), ուր սկզբնաղբյուրների համեմատությամբ ճշտված են բազմաթիվ փոխառյալ բառեր ու տերմիններ (որոնք ազատազգված են եղել բնագործակութունների ժամանակ), որով և բնագիրը, բժշկագիտական տեսակետից, մեծապես շահել է: Սակայն այդ հրատարակությունը լեզվական հետազոտությունների տեսակետից ունի մի պակասավոր կողմ. հրատարակիչը ավանդական ուղղագրությունը պահպանելու ձգտումով՝ սրբագրել է բնագրում հանդիպող ուղղագրական սխալները: Ահա թե ինչպես է մեկնաբանում այդ բանը Կ. Քասառչյանը. «Ուղղագրության մասին անհոգ է Ամիրդովլաթ, օրինակ զերդ գրած է «դէտ», խե՛ն՝ «խե՛վ», ձուր՝ «ձուր», երբ՝ «եխի», ցրդի՝ «ձրթի» և «թրթի», թըջի՝ «թըջի», թմրեցնել՝ «զրմրեցնել», թարգման՝ «թարգման», փտած՝ «փխած», բարթ՝ «բարթ», դուրս՝ «զուրս», շոդի՝ «շորի», զարնել՝ «զարնել», անթուսի՝ «անդուսել», անկան՝ «անկանն», փայծղան՝ «փայծղանն» և այլն. իսկ ու-ով գրվելիք շատ բառեր գրված են վ-ով. ինչպես՝ «բխտավորութիւն», «պատեղվոր», «լվանա», «լցվիչ» և այլն: Ասոնցմի կատ զ զիմորոշ հողն առհասարակ գրած է ա-ով Արդ. այս բոլորը կարևոր համարեցի սրբագրել ներկա հրատարակության մեջ»⁶⁷:

Ակնհայտ է, որ վերը բերված բառերի ուղղագրությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում որպես կատարված հնչյունափոխական երևույթների վկայություններ:

Ամիրդովլաթի մյուս աշխատությունը՝ «Յուրաբ բժշկութեան»-ը, հրատարակվել է ակադ. Ստ. Մալխասյանցի կողմից (Երևան, 1940 թ.): Աշխատության դիտական տեսար պատրաստելիս հաշիվ են առնված այդ երկի՝ Հայաստանի Մատենադարանում առկա տարբեր ձևագրերը. դրանց համեմատությամբ բնագրի են հեղինակի լեզվին հատուկ ձևերը, իսկ ձևագրային տարբերությունները նշվել են սողապատկան:

Սակայն սրանց համեմատությամբ, լեզվական տեսակետից, անհասանելի արժեք է ներկայացնում Մաշտոցի անվան Մատենադարանի № 8871 ձևագիրը, որը պարունակում է Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» աշխատության հեղինակային օրինակը: Այս բնագիրը մեծապես արժեքավորվում է նրանով, որ, որպես հեղինակային ձևագիր, կարող է ուղեցույց հանդիսանալ մյուս՝ հրատարակված աշխատությունների լեզվական նյութը օգտագործելիս:

Մկրտիչ Նազաշի (XV դ.) առղերի առավել կատարյալ ժողովածուն հրատարակվել է մեզանում (Երևան, 1965 թ.), որի մեջ հաշիվ են առնված ինչպես նախորդ հրատարակությունները, այնպես և մեր Մատենադարանում պահպանված ձևագրերը: Հեղինակի տուրքից միայն մեկն է պահպանվել իր ազգրան գաղափարների գրչությամբ հասած մի ձևագրում (Ձև. 965, 1432 թ.): Տաղերի մնացած մասը մեզ հասել է XVI և առավելապես XVII դարի բնագործակալություններով:

Գրիգորիս Աղթամարցու (XVI դարի առաջին կես) առղերի դիտահամեմատական բնագրերը հրատարակել են Ն. Ակինյանը (Վիեննա, 1958 թ.) և Մ. Ավգյարեղյանը (Երևան, 1963 թ.): Մրանցից երկրորդը ավելի կատարյալ է, բանի որ կազմված է ինչպես Ակինյանի հրատարակության հաշվառմամբ, այնպես և մաշտոցյան Մատենադարանի բազմաթիվ ձևագրերի հիման վրա, այդ թվում նաև 1556 թվականի գրչությամբ № 8968 ձևագրի օգտագործմամբ, որտեղ պահպանված են Գ. Աղթամարցու 17 առղերը և որը իր գրչության ժամանակով համեմակում է հեղինակի ապրած ժամանակին:

Ինչպես վերև արդեն ասվել է, միջնադարում մայր Աշխերիցից դուրս ստեղծվում են հայկական առանձին՝ կղզիացած գաղթօջախներ: Գրանց լեզվի մասին հնարավոր է լինում որոշ գաղափար կազմել այդ վայրերում բնագործակված ձևագրերի և դրանց կից արված հիշատակագրությունների ընկալությամբ: Այդ գաղթօջախներից առաջիմ միայն մեկին՝ Կամենեց-Պոդոլսկի հայկական համայնքի լեզվի վերաբերյալ մենք ունենք ավելի լավ պատկերացում, շնորհիվ ձի շարք հրատարակված նյութերի և մասնավորապես դատական այն արձանագրությունների, որոնք հայտնաբերվել և հրատարակվել են վերջին ժամանակները: Արձանագրությունները բնագրեր են, գրված XVI դարի երկրորդ կեսում և լրիվ պատկերացում են տալիս Կամենեց-Պոդոլսկի հայության լեզվական վիճակի մասին:

XV—XVII դարերի լեզվական երևույթների մասին, բացի այդ դարերի հեղինակների գործերից, արժեքավոր նյութ են տալիս նաև այն ձևագրերը, որոնք թեև ստեղծված են եղել ավելի վաղ ժամանակներում, բայց մեղ են հասել ետին դարերի գրչություններով և մի քանի բնագործակություններով: Նույն դարում կատարված որևէ աշխատության մի քանի ձևագրերի համեմատությամբ ցույց է տալիս, որ նաև այն բանին, թե ում կողմից և որտեղ է կատարվել տվյալ ձևագրի արտագրությունը, բնագրում համապատասխանաբար արտահայտվում են տարբեր բարբառային առանձնահատկություններ արձանագրող գրագրություններ, քերականական տարբերություններ և այլն:

Միջին հազարեկի երկրորդ և միջնադարի նյութերն այս տեսակետից ավելի առատ ու բազմազան են: Այստեղ օգտագործվում են նաև հայ ժողովրդական միջնադարյան երգերը, զեղարվեստական արձակը, որոնք որպես ժողովրդական ստեղծագործության նուշերն, հիմնականում ապրելով բերանացի, ավելի շատ են ենթակա եղել փոփոխությունների ու ձևափոխությունների, քան տառնաձև հեղինակային գործերը: Արձակի որոշ ստեղծագործություններ նույնիսկ ունեն այնպիսի տարբերակներ, որոնք լեզվական տեսակետից խիստ տարբերվում են իրարից:

⁶⁶ Տե՛ս է՛մ. Պիվալյան, Հովհաննես Թլիսուրացի, Երևան, 1960, էջ 20—29:

⁶⁷ Տե՛ս Ամիրդովլաթի Ամասրացու Անբիտաց անպէտ կամ բառարան բժշկական երկուց, ի լուս տած հանդերձ ձևագրություններ Կ. Քասառչյան, Վիեննա, 1926, էջ 48:

Ինչ խոսք, որ այս նույն ժամանակների լեզվի առանձնահատկությունների բացահայտման համար առաջ նշույթ են տալիս նաև ձևազարկի հիշատակարաններն ու վիժմական արձանագրությունները, մանր ժամանակագրությունները և այն բույր սկզբնաղբյուրները, որոնց մասին խոսք չեղավ այստեղ, բայց որոնք գրի են առնվել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում և այս կամ այն շափով նպաստում են հարցի ուսումնասիրությանը:

ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միջին հայերենի հնչյունական համակարգի և վերջինիս մեջ հին հայերենի հնչյունների կրած փոփոխությունների հետազոտությունը, բնականաբար, կատարվում է այն սկզբնաղբյուրների հիման վրա, որոնց մի մասի նկարագրությունը տրվել է վերը: Եվ շնայած այդ աղբյուրների բնական հարուստ փաստական նյութին, այնուամենայնիվ, նման հետազոտությունը կապված է որոշակի զեղբարությունների հետ: Այդ զեղբարություններն, առաջին հերթին, պայմանավորված են նրանով, որ միջին հայերենը մեզ չի ներկայանում որպես մեր օրերի կենդանի խոսակցական լեզու: Այն անցյալ, պատմական մի էտապ է, որ արձանագրված է միայն գրավոր հուշարձաններում: Այն հանգամանքը, որ այդ լեզուն օգտագործում է հին հայերենի գրի առման ժամանակներում հորինված մետրոպոլիտանային տարբեր, դեռ ոչինչ չի նշանակում, քանի որ դեռևս հարց է՝ մետրոպոլիտանային տարբեր այս շրջանում պահելի, թե՛ փոխել էին իրենց հորինման շրջանի նշանակությունը:

Հայտնի է, որ ինչպես միջին, այնպես և հին հայերեն տեքստերը մենք այժմ կարգում ենք ավանդական՝ մեր այսօրվա արտասանությունը: Այդ արտասանության մեջ շատ բան չի համընկնում իր նախնական՝ գրի առման շրջանի հնչմանը, որը նախապես հարազատ էր իր գրային պատկերին: Գրության և արտասանության միջև առաջացած այդ տարբերությունները պատմական զարգացման արդյունք են, որոնք ավելի ընդգծված ձևով հանդես են գալիս հայերենի բարբառներում: Այսօր էլ մեր ժողովրդի երկու գրական լեզուներում (արևելահայ և արևմտահայ) միանգամայն այլ արժեքներ են տրվում ձայնեզ և խուլ պայթականներն ու պայթափականներն արտահայտող տառանշաններին: Արևելյան գրական հայերենը համեմատաբար ավելի հարազատորեն է արտահայտում այդ տառերին տրված նախնական հնչյունական արժեքները (առավելագույն բառակազմի դիրքում), որին հակառակ՝ արևմտահայ գրական լեզվում դրանց տրվում են այլ հնչյունական արժեքներ: Սակայն, ինչպես հայտնի է, երկու դեպքում էլ գրության ձևը մնում է նույնը՝ ավանդականը, և դրանք (գրության ձևերը) արտաբնապես ոչնչով չեն մատնում իրենց ներքին տարբերությունները: Եվ եթե այդպես է մեր օրերի հայերենի տարբերակներում, ապա կարո՞ղ ենք արդյոք պնդել, թե նման մի երևույթ թաքնված չէ նաև պատմության գիրկն անցած լեզվի գրավոր հուշարձաններում: Այս հանգամանքը մեզ ստիպում է ընթացիկ ավանդական գրության խաբկանքին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանց հնչման հիմնական առանձնահատկությունները հայտնի են հին հայերենից: Անհրաժեշտ է գառնում պարզել, թե

այդ ավանդական գրույթյան մեջ այս կամ այն տառի տակ հնչյունական ի՛նչ արժեք էր թարգմտված: Այդ անհրաժեշտությունը առաջանում է հենց նյութի քննության բնթացքում, լեզվական փաստերի ճնշման տակ, երբ հին ուղղագրական կանոններից կատարվող շեղումները, այս շրջանում կատարված փոխառյալ բառերի զրգադրված ձևերը որոշակիորեն ակնարկում են հնչյունափոխական այնպիսի երևույթներ, որոնց մի մասը մեզ հայտնի են մեր ժամանակակից բարբառներից: Եվ չնայած այն բանին, որ ուղղագրական տարբեր շեղումները և օտար բառերի զրգադրման սկզբունքները մասնաբաժանության մեջ ոչ միշտ են հետևողականորեն արձանագրվում ու կիրառվում և ամենուրեք չէ, որ նույն են, այնուամենայնիվ, այդ հակասությունների հիման վրա է, որ հնարավոր է լինում թափանցել իրականում կատարված և այն ժամանակ դրույթյուն ունեցած հնչյունափոխական երևույթների էություն մեջ: Այս նպատակի իրականացման հիմնական երկական այն է, որ ավանդական՝ հինց ժառանգված բառաձևերից կատարվող շեղումները դիտվում են ոչ այլ ինչ, եթե ոչ որպես հին գրական լեզվի համեմատությամբ բանավոր-խոսակցական լեզվում կատարված փոփոխությունների արտահայտություններ: Գեա այսօր էլ, գրական լեզվի ուղղագրական նորմաներին ոչ բազանուս մեկը, իր գրավոր խոսքի մեջ թույլ է տալիս այնպիսի սխալներ, որոնք կամ զգալի են ընդհանուր խոսակցական, կամ նեղ բարբառային արտասանության նորմաներից: Կատարված փոփոխությունների արտահայտություններում ևս հին գրական լեզվի նորմաներից կատարվող ուղղագրական շեղումները ունեցել են իրենց նմանօրինակ հիմքը: Սակայն, մյուս կողմից, եթե մենք մեր ուսումնասիրությունների ընթացքում պետք է հենվենք նմանօրինակ սխալների կամ շեղումների վրա, ապա պարզ է դառնում, որ այս գեպքում հետադարձության ոլորտի մեջ կարող են մտցվել միայն այնպիսի քննարկեր, որոնք առանց որևէ միջնորդավորման՝ ուղղակիորեն ներկայացնում են իրենց բուն ժամանակի լեզվական վիճակը: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ լեզվական քննության վերջ նշված սկզբունքների կիրառման դեպքում, կարևոր է ո՛չ այնքան տվյալ սկզբնաղբյուրի հորինման, որքան նրա գրույթյան ժամանակը: Ինչպես արդեն ասվել է վերք, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միևնույն երկի տարբեր, և նույնիսկ նույն ժամանակաշրջանում. կատարված առանձին ընթացիկությունները հանդես են բերում օտար բառերի զրգադրման, հայերեն բառերի ուղղագրության տարբերություններ: Փաստական այդ նյութերը, անշուշտ, ժամանակադրորեն պահպանվում են մի կողմից որպես միևնույն լեզվի պատմական զարգացման տարբեր էտապների գրառումներ (թեև այստեղ ևս բացառված չէ նաև բարբառայնությունը), մյուս կողմից, նույն ժամանակաշրջանում հանդես եկող տարբերություններ՝ որպես տերիտորիալ-բարբառային արտասանության արտահայտություններ: Ինչ խոսք, որ այս տեսակետից, ուշ գրություններով ավանդված աղբյուրները թյուր, ոչ ճիշտ պատկերացում կարող են տալ մեզ հետադարձորդ՝ վաղ ժամանակաշրջանի լեզվի հնչյունական համակարգի մասին: Այդ իսկ պատճառով աստվել նպատակահարմար է դառնում առաջին հերթին օգտագործել վիճակային արձանագրություններն ու ձևազարդերի հիշատակարանները, ինչպես նաև այն սկզբնաղբյուրները, որոնք ժամանակագրորեն մոտ են կանգնած ուսումնասիրվող ժամանակաշրջանին:

Լեզվական միևնույն ձևի տարտեսակությունները, նույն բառի տարբեր գրությունները որոշակի զվարթություններ են առաջացնում տվյալ շրջանի հնչյունական և հնչյունափոխական հիմնական օրինաչափությունների որոշման գործում: Այնուամենայնիվ, չնայած այդ զվարթություններին, անհրաժեշտ է լինում, նկատի ունենալով օգտագործվող ձևերի համախականությունը և տարածվածության աստիճանը, առանձնացնել հիմնական օրինաչափությունները, զրգան դասելով ոչ հիմնականներից, որոնք մեծ մասամբ նեղ բարբառային տարբերությունների արտահայտություններ են:

Վերջապես, կարևոր է նաև հնչյունական տարբեր երևույթների տեղանայությունը, որը, սակայն, որոշ դեպքերում անհնար է լինում կատարել: Այդ խնդրի լուծումը զվարթանում է նրանով, որ միջնադարյան մատենագրության զրգակչի մասը հեղինակային սկզբնաղբյուր չեն, ուստի և դրանց մեջ հանդիպող կամ արձանագրվող լեզվական ձևերը չեն կարող հատկացվել այն լեզվական միջավայրին, որի ծնունդն է տվյալ երկի հեղինակը: Նույնիսկ ձևազարդերի հիշատակարանները, որոնց մի մասի գրույթյան վայրերը որոշակիորեն հայտնի են, ոչ բոլոր դեպքերում են հնարավորություն տալիս երևույթը տեղանայացնելու, քանի որ զրիչը համախ լինում է լեզվական այլ միջավայրից: Թերևս այս է պատճառը, որ նույն վայրում գրված ձևազարդերում հանդիպում են հերյունական և լեզվական այլ կարգի տարբերություններ: Նման դեպքերում, հնչյունական երևույթը տեղայնացնելու փոխարեն՝ հնարավոր է լինում միայն այն արձանագրել:

Այս բոլորից հետո անհրաժեշտ է ավելացնել նաև հետևյալը: Քանի որ միջին հայերենի հնչյունական համակարգի, նրա մեջ կատարված փոփոխությունների ուսումնասիրությունը հնարավոր է լինում անել միայն գրավոր աղբյուրների հիման վրա, ուստի լեզվական միավորների քննության ժամանակ, թեև մի կողմից մենք նկատի ենք ունենում լեզվական տրադիցիան, բայց մյուս կողմից՝ ամբողջովին տուրք չտալով այդ տրադիցիային, հնարավոր միջոցներով աշխատում ենք պարզել քննարկվող շրջանի հայերենի հնչյունական համակարգում տեղի ունեցած փոփոխությունները: Նկարագրելով միջին հայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները, միաժամանակ պատշաճ ուշադրություն են արժանանում նաև պատմական հնչյունափոխության երևույթները: Վերջիններիս նկատմամբ որոշակի փորձ է արվում պտրղելու նրանց առաջացման կամ առաջին վկայության ժամանակը և տալու նրանց զարգացման բնթացը (իհարկե, օգտագործելով նաև այդ բնագավառում այլ ուսումնասիրողների ստացած արդյունքները):

Կրկնությունները խուսափելու նպատակով ուսումնասիրությունը չի բաժանված միջին հայերենի՝ վերջ նշված ժամանակագրական երկու էտապների: Առանց խախտելու ժամանակագրական հաջորդականությունը, հնչյունական երևույթները բնվում են իրենց պատմական զարգացման մեջ:

Լեզվական փաստերն օգտագործելիս հիմնական շեշտը դրվում է սկզբնաղբյուր աղբյուրների և առավել վաղ ընթացիկություններով հասած քննարկերի վրա: Այստեղ էնքան անաչնորդվել ենք այն սկզբունքով, որ լեզվի պատմության համար ավելի կանխ են տվյալ հնչյունական երևույթի ավելի վաղ վկայությունները, քան դրանց ետին դարերում արձանագրվող ձևերը:

2. Հայտնի է, որ միարտյան այբուրենի հորինման շրջանում՝ այդ այբուրենի ա, ե, է, ի, ո, ու, ք տառերը ունեցել են ծայրավոր հնչյունների արժեքներ։ Քանի որ միջին դարական հայերենը օգտատիրոջում է այդ նույն այբուրենը, հետևաբար բնական կլինի կարծել, որ նա նույնպես նշված տառերը գործածում է որպես համապատասխան ծայրավոր հնչյուններ արտահայտող նշաններ, կամ Սակայն այս ենթադրությունն ինչքան էլ ակնհերթ թվա, այնուամենայնիվ, կարիք ունի փաստական հիմնավորման, եթե հատկապես նկատի ունենանք, որ նույն բանը չի կարելի սակ բազմաձայններն արտահայտող տառերի վերաբերյալ։

Առաջին հերթին դիտենք այդ տառանշաններն ունեցող հետևյալ նվազագույն հակադրությունները.

զարդ : դերդ	բան : բուն	հուս : հով	զար (զար) : դիր
կար : կեր	լար : լար	կաս : կոզ	կաց : կից
հազ : հեզ	զարկ : զուրկ	կասն : կոխ	լաց : լից
բար : բեր	ծառ : ծուռ	բաց : բոց	կար : կիր
խաշ : խեշ	կամ : կում	կաթ : կոթ	մաս : միս
շաղ : շեղ	համ : հում	կապ : կոպ	շար : շիր
տաղ : տեղ	մազ : մուզ	շար : շոր	տապ : տիպ
բարզ : բերդ	կալ : կուլ	կաճ : կոճ	և այլն

Ինչպես երևում է՝ նշված զույգերի տարբերակումը գրություն մեջ տեղի է ունենում ա, ե, ու, ք, ի տառերի հակադրությունների միջոցով։ Իրոք, առաջին այբուրենի զույգերն իրարից տարբերվում են միայն ա և ե տառանշաններով, երկրորդում՝ ա և ու, երրորդում՝ ա և ո, չորրորդում՝ ա և ի, այն ժամանակ, երբ զույգերի մյուս նշանները նույնական են։ Կարելի է օրինակներ բերել նաև ե : ու (ա, ի), ու : ք (ի), ք : ի (զարդ, զուրկ) համար, սակայն դրանով երևույթի էությունը չի փոխվի։ Վերը բերված զույգերի հակադրությունից երևում է նաև, որ ա, ե, ո, ու, ի տառերը հնչյունի արժեք ունեն։

Սակայն սրանով դեռևս չի պարզվում, թե հիշյալ տառերը հնչյունների որ կարգին են պատկանում։ Որ դրանք ծայրավորների արժեք ունեն, մեզ թեւադրվում է այն պարզ իրողությամբ, որ բերված բառաշարքերում դրանք՝ ինչպես միջին հայերենից առաջ, այնպես և նրանից հետո (այժմ), հնչվում են որպես ծայրավոր հնչյուններ։ Բայց, մյուս կողմից, նկատի ունենալով դրանց մեր արդի հնչյունը, ինչպես նաև՝ մեր ժամանակակից բարբառներում նրանց ունեցած համապատասխանությունները, կարող ենք ենթադրել նաև նույն ծայրավորների որակական այլ առանձնահատկություններ։ Այսպես՝ ա տառանշանը հնարավոր է որ ձ-ին զուգահեռ ունեցած լինեք նաև այլ տարբերակներ (չրթնախաղացած, քմայնացած և այլն)։ Նույնը կարելի է ասել նաև ու-ի և ո-ի մասին։ Միաժամանակ, ո-ն հնարավոր է որ ունեցած լինեք ո՞՞՞ երկբարբառային երանգ կամ պարզապես՝ երկհնչյուն ո՞՞-ի, ինչպես և ե-ն՝ պարզ բաց e-ի, կամ յե երկբարբառային ու յե երկհնչյունային արժեք և այլն։

Միջին հայերենին արդյոք հասող էլ են եղել այդ առանձնահատկությունները և արդյոք դրանք հնչյունական արժեք են ունեցել, թե միայն միևնույն ծայրավոր հնչյունի դիրքային կամ բարբառային արտահայտությունները լի-

նելով, մնացել են լոկ որպես նրա հիմնական տարբերակներ։ Կասկածից դուրս է, որ եթե վերը նշված առանձնահատկություններից մեկն ու մեկը հանդես գար իմաստատարբերակիչ դերով, և դրությունները հնարավորություն չտար այն արտահայտելու, ապա լեզվի մեջ անհրաժեշտորեն կստեղծվեք պահանջող ձևը։ Դրա լավագույն օրինակը հենց միջին հայերենում օ և Ֆ դրերի մուտքն է՝ պայմանավորված դրանց հնչյութային արժեքավորման հետ։ Սակայն այս բացատրությունը դեռևս չի նշանակում, թե միջին հայերենում ընդհանրապես և նրա տարբերակներում մասնավորապես, չէին կարող սեղի ունեցած լինել ծայրավոր հնչյունների վերը նշված փոփոխությունները։ Ինչպես կրեաններ ստորև, լեզվական փաստերի քննության ընթացքում, այդ փոփոխությունների մի մասը իրապես արձանագրվում է մատենագրության մեջ։

3. Միջին հայերենում մուտք գործած տարբերակները քննությունը, հայերենում նրանց գրադարձված ձևերի համեմատությունը փոխառու լեզվի մայր ձևերի հետ, ցույց են տալիս, որ հայերենի ա դիրը համապատասխանում է օտարլեզվյան a հնչյունին։ Հատկանշական է, որ այդ գրի արժեքը հիմնականում մնում է նույնը՝ բառի մեջ գրված բոլոր դիրքերում, այսինքն՝ այն, ինչպես բառամիջում ու բառավերջում, այնպես և բառասկզբում, ունի միևնույն նշանակությունը։ Այդ համապատասխանությունը երևում է մի կողմից՝ միջին հայերենում ավելի ընդհանուր գործածություն ստացած այնպիսի փոխառյալ բառերում, որոնք արձանագրվում են համարյա ամենուրեք և տարբեր գրավոր հուշարձաններում, ինչպես, օրինակ՝ արբ. atlas=ատլաս (Վիմ. արձանագրություններում, տե՛ս օր. ԿՂ Սան. 111, 1197 թ.) =արլուս (գեղ. գրա-կանություններ մեջ, տե՛ս օր. Ֆր. Գիվան, էջ 545, Կոստ. Նրզ. 140 և այլուր), արբ. balai=հալալ (Ջևադրերի հիշատակարաններում՝ ամենուրեք, տե՛ս օր. ԺԳ ՀՃՀ. 189, Նախիջևն, 1324 թ., 353, Անի, 1347 թ. և այլն. Վիմական արձանագրություններում, տե՛ս օր. ԿՂ Սան. էջ 147, 1061 թ., 162, 1275 թ., ԴՎՃ. I, Անի, էջ 13, 1008 թ., 44, 1036 թ. և այլն), նաև՝ յալալ ձևով (ԺԳ ՀՃՀ. 282, Արճճ, 1336 թ. և այլն), արև. թրք. athabeg=արսբակ (Գ. Հոփս. ՀՃ. 451, 1173 թ., 839, 1224 թ. և այլն)=արսպակ (ԺԳ ՀՃՀ. 614, 1396 թ. և այլն). նույնը նաև արձանագրություններում, արբ. 'alati=պալեի (Սմբ. Գաս. Կոստ. Նրզն., Ֆր., նաև ձև. հիշատակարաններում, տե՛ս օր. արձանագրություններում), արբ. xabar=խարար || յապար (Կոստ. Նրզն., Հոփս. Նրզն., Սմբ. Տար., Մխ. Հեթ. և այլն, ինչպես նաև արձանագրություններում, հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում) և այլն, և այլն։

Եվ եթե այս տիպի օրինակների նկատմամբ կարելի է առարկել այն պատճառարանությամբ, թե սրանց ընդհանուր ուղղագրությունը կարող է պայմանավորված լինել այդ բառերի լայն գործածությամբ և այդ հիմքի վրա ընդհանուր ուղղագրության մշակմամբ, սակայն մյուս կողմից գրադարձման նույն սկզբունքը առկա է նաև ավելի սակավաթիվ հանդիպող բառերում, որոնց մի մասը տերմիններ լինելով կամ վերաբերելով հասարակական կյանքի այս կամ այն բնագավառին, իրենց գործածության ոլորտով եեզ՝ ո՞՞՞ համահայկական րևույթ ունենալով, այնուամենայնիվ, փոխառու լեզվի հնչյուններ արտահայտում են ա դրի միջոցով։ Այդպիսի բազմաթիվ բառերից կարելի է հիշել միայն ավելի բնորոշները. այսպես, օրինակ՝ միայն կիրիկյան հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող բառերից՝ հֆր. passage=բասսե ժրաշակիրների արշավանք, հֆր. plaid=բլաշիլ եղատարանում պաշտպանվել, հֆր.

canne, cane=զան շերկարսթյան շափ», լու. legato=լիկաթ/լիկաթ բռնովի պատի գեղպան», հուն. λογιστικος=լոլոլիսա «ճանաչված պարանքի պինճ», ֆր. marc=մարկ շարձաթյա դրամ», ֆր. bassine=պացին շեհնք. լոգանքի տաշան և այլն, և այլն. բժշկագիտությունը՝ դեղագրությունը վերաբերող տերմիններ, ինչպիսիք են՝ արբ. buhran=բուրխան «Տեխնոլոգիան նպաստում», արբ. lablāb=լաբլաբ բարդեղ, պատասուկ, պրս. zukham=զուքամ «Շարձաթյա», արբ. qārufa=կարուքալ//լիարուքալ «ուպակա միզաման», արբ. qī-fāf=կիֆալ «գարկերակ», արբ. nammat=նամամ «վալլի դազմ», պրս. šah-balut=շահբալուտ «արքայակաղին», արբ. šarāb=շարապ «մրգաշուր, օշարակ», պրս. sarsām=արսամ «գանգոլիզի պատանների բուրբուրում», պրս. isphānax=sāfānax «ճամիչ», արբ. tabāšīr=տապաշիր «կալիճ և այլն, և ինչպես նաև տարբեր լեզվական հուշարձաններում հանդիպող այլ հազվադեպ բառեր, ինչպիսիք արբ. ālath=ալաթ «պարագանք, պիտուլքներ», արբ. basar=բասար «բնաստություն», պրս. mažād=մաջաա «ճանուրդ», պրս. sarhang=(դրամիտություն) սրահնալ «դրամի սրահ և այլն, և այլն: Մյուս կողմից էլ հայերենի առե՛ն օտար լեզուներում տառադարձված այլ լեզուների օ-ով, ինչպես, օրինակ՝ ապակա= 'Асапакъ, Աճի=آسی, Արնիչ=آرنيچ, Բարնիզ=برنيچ, Բալու=بالو, Բազ-բանգ=دآبوزو և այլն (արարերենում e ձայնավոր շլինելու պատճառով այն տառադարձվում է օ-ով կամ i-ով)՝

Այսպիսով, միանգամայն օրինաչափորեն՝ բերված օրինակներում փոխառու լեզվի և ձայնավորը համապատասխանում է հայերենի ա զրին, ինչպես նաև հակառակը: Այս օրինաչափությունը առավելագույն պահպանվում է միջին հայերենի առաջին կտապում և հատկապես նրան նախորդած սկզբնական շրջանում: Թեև այստեղ հանդիպում են նաև օտարլեզվյան օ-ի և (ե)-ով տառադարձված մասնակի դեպքեր (ինչպես, օրինակ՝ պրս. hamyan=հեմիան՝ ներս. Շնորհ. ԲՉ, 569, արբ. ha]ib=հեհիպ, ԳՂ, Սան. 149, ԺԳ դար, արբ. sarraī=սերեֆիկ // սերեֆիկ. Անս. 81 և այլն), սակայն դրանք կարող են բացատրվել կամ փոխառու աղբյուրի բարբառային բնույթով, կամ օտար օ-ի մասնակի բնույթով: Հավանական կարելի է համարել, որ այն, որոշ դեպքերում ու բառերում, ունեցել է առաջնային շարքի ստորին բարձրացման օ-ի որակ, որը հայերենում, հատկապես նրա այն տարբերակներում, որոնց հատուկ չէր առաջնային շարքի օ-ն, համապատասխանաբար արտահայտվել է և (ե)-ով, ինչպես այդ որոշ վայրերում սովորական է դառնում հետագա (XV—XVII) դարերում կատարված պարսկական ու ֆուրքայան փոխառությունների մեջ: Եվ նրան նկատի ունենանք, որ նոր պարսկերենում վերացել է երկու և կարճ օ-ի հակադրությունը, և դրանց տարբերակումը կատարվում է ետնալեզվայինության ու առաջնալեզվայինության հատկանիշների վրա, այսպես բացատրված չէ, որ այդ երևույթը սկսած լինել արդեն միջին հայերենի վաղ շրջանում:

Հայտնի է, որ արաբերենը և պարսկերենը (վերջինս ալեյի վաղ ժամանակներում) ունենին կարճ և երկար ձայնավորներ: Հայերենին խորթ էր ձայնավորների քանակական հատկանիշը: Նշված լեզուներում երկար ու կարճ օ-երի հակադրությունն այնքան որոշակի է եղել, որ հայերի կողմից օ կարճ

ճշյունը ընկալվել է որպես սեզուցիցայի ենթարկված ձայնավոր և որոշ լեզվական հուշարձաններում, որպես ուղղափառ, արտահայտվել է հայերենի ք-ի միջոցով, կամ ուղղակի սղվել է՝ դրոթյան մեջ շարտահայտվելով: Այսպես, օրինակ՝ մի կողմից ունենք արբ. qal'a=կալա «ամր», պրս. mazgīth=մազգիթ, արբ. malīs=մելիս «հավաքում», արբ. nazla=նազալ, «զրիպ հիվանդություն», արբ. bal'jam=պլլամ «դրձմ և այլն, որոնք ձայնավորի սղումը ունեն նախաշեշտ վանկում, մյուս կողմից այդ երևույթը արձանագրվել է բառավերջի գիրքում՝ շեշտի տակ, այս դեպքում արտահայտվելով դր միջոցով: Այս տեսակետից հետաքրքրական է XIV դարում Սյունիքում գրված մի ձեռագրի (Մաշտոցի անվան մատենադարանի № 7151 ձեռագիր) մեջ գեներված արաբերեն-պարսկերեն-հայերեն անվար բառարանի նյութը՝ Այս բառարանում (որի արաբերեն ու պարսկերեն մասերն էլ հայաստան են) օտարլեզվյան բառերի կարճ և ձայնավորը որպես օրինաչափություն ներկայանում է ք առաջով: Նույնիսկ պարսկերենի բայական ۵ت۵ (դան, քան) վերջավորությունները, որոնք շեշտի տակ են, ունեն դրն, քրն գրությունը՝ քրներն մի քանի օրինակներ բառարանի պարսկական և հայկական մասից՝ փակագծերում տալով պարսկերենի արաբատառ ձևերը և դրանց ընդունված տառադարձությունը. հրղ դաղրն—բրաունս տալ (حق۵ادان=haqq dādan), քիքի բիղրն—քէն քարչի (کين۵کشيد۵=khin khašidan), ազուղրն—փորձել (از۵م۵زم۵=āzmūdan), փասուղրն—գարման (فار۵م۵دان=farmudan), բերուն ազըղրն—արտաքս բերել (بر۵ورد۵ان=brūn āvardan), փուրսիղրն—հարցանել (پرس۵يد۵=phursidan), բըղըղըն գրիֆըն—լանձն անուլ (بگرد۵گرفت۵=bagardan phursidan), բըղըղըն խուսարըն—ի ներս հարցել (در۵خواست۵ان=andar xasthan), նագան գուֆըն լանկարձակի սահլ (نگاه۵گفت۵=nāgāh gufthan) և այլն, և այլն:

Այս օրինակներից կարելի էր ենթադրել, որ բառարան կազմող կուրորեն հետևել է բնագրի գրությունը և հայերենում գրադարձել է միայն այն ձայնավորները, որոնք պարսկերենում արտահայտված են տառանշաններով: Բայց այս ենթադրությունը ճիշտ կարող է լինել միայն Դ-ով արտահայտված ճշյունի համար: Ս և յ ձայնավորները հայերենում գրադարձված են և այն դեպքում, երբ պարսկերենում դրանք գրություն մեջ քանակայում են: Հետևաբար, գրադարձության նման սկզբունքի կիրառման պատճառը բնագրի գրությունը կուրորեն հետևելը չէ, այլ մի ուրիշ հանգամանք: Կարծում ենք, որ պարսկերենում գրությունը շարտահայտված օ-ն այնքան թույլ ու կարճ մի ձայնավոր է եղել, որ այն ընկալվել է որպես հայերենի ք-ին մոտ մի ճշյուն և միայն այդ հիմունքով արտահայտվել ք-ի միջոցով:

Սակայն անկախ գրության այս ձևերից, որոնք առավել վերաբերում են արաբերենի ու պարսկերենի կարճ օ ճշյունի բնույթին, բան հայերենի ա-ին, վերջինս էր գրային արտահայտությամբ հիմնականում համապատասխանում էր իր ալանգական ճշյունական արժեքին և իր մեջ միավորում էր այն բոլոր հնարավոր ճշյունական տարբերակները, որ նա կարող էր ձեռք բերած լինել բանավոր լեզվի առանձին տարբերակներում: Այս իսկ տեսակետից դժվար է տալ

1 Արաբերեն օրինակները բաղված են «Երասխանի աղբյուրները Հայաստանի և Հարևան երկրների մասին» գրքից (Սբան, 1965 թ.), որտեղ նման տառադարձման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել: Հանրաճ օրինակը վերջում է կարտի նշված աշխատությունը:

2 Այս բառարանի վրա մեզ սիրով մասնառուցող արեջ Մատենադարանի գիտաշխատող Հ. Ամալյանը:

երս բնախոսական ճշգրիտ բնորոշումը՝ Այդ տարրերակների հիմքի վրա է, որ բնական-խոսակցական լեզվի առանձին արտերաններում (բարբառներում) հետագայում տեղի են ունենում ա>է, ա>օ և այլ հնչյունափոխական երև-վույթներ՝:

4. Միջին հայերենում ձայնավոր հնչյունների արժեք ունեն նաև ու և ի տառանշանները՝ Մյանցից ու զիրք, ճիշտ է, ձայնավորից առաջ արտահայ-տում է նաև Վ բազմաչար, սակայն մեր լեզվի այս շրջանի համար դա ոչ թե հնչյունական, այլ ուղղագրական նշանակութուն ունի:

Ու=Ս համապատասխանությունը հաստատվում է այն բազմաթիվ փո-խառյալ բառերի օրինակներով, որ միջին հայերենի շրջանում վերջովի են տարրեր լեզուներից. բերներ մի շարք օրինակներ. արբ. ʃuʃan=տուրան (ա-մենտերք), ʃulab=ուլայալ (բժշկագիտական աշխատություններում, ինչպես, օր. Մխ. Լեբ. ՋՄ ձև. 416, 259, 44 և այլն), zukham=զուքամ (ն. տ.) պս. արբ. burj=բուրջ/պուրջ (ժԳ ճճ. 106, 1314 թ.). նաև Անիի վիճակայն արձա-նագրություններում), հֆր. duc=աուխ/գուլ (Մանր ժմնկ. I, էջ 74, 1296թ. Մժբ. Տար. 19. Անիի արձանագրություններում և այլն), արբ. qumās=կումաշ (Անս. 19), ֆր. double=աուլլ (ն. տ.), թրք. çavuş=չավուշ/չավուշ (ն. տ) և այլն: Օտար՝ մասնավորապես արաբական աղբյուրներում հայերենի ու-ն արտահայտված է և արժեքով. այսպես, օրինակ՝ Աբդիա=عميد: Բայլու=اولیٰ ذیالقدر/اولیٰ ذیالقدر, Մուշ=موش: և այլն:

Նկատի ունենալով այս և բազմաթիվ այլ նման համապատասխանու-թյուններ, հայերենի ու զրանշանի տակ պետք է հասկանալ այնպիսի մի ձայ-նավոր հնչյուն, որը իր շրթնայնացվածությունը հակադրվելով մյուս բոլոր ձայ-նավորներին, միեւնույն ժամանակ հակադրվում է օ շրթնային ձայնավորին իր արտաբերման տեղի և լեզվի բարձրացման աստիճանով ճիշտ է, լեզվի բարձ-րացման աստիճանով մեղ հայտնի չէ, բայց նկատի ունենալով մեր բարբառնե-րում այդ ձայնավորի ունեցած տարրերակները, կարող ենք ենթադրել, որ այն

³ Պրոֆ. Ս. Ս. Կարաչյանի իր «Միջին հայերեն աշխատության մեջ (էջ 147) բերում է միջին հայերենի ձայնավոր հնչյունների համեմատական տախտակը, որտեղ, ի բառ այլ ձայ-նավորների, տալիս է նաև ա-ի բնախոսական նկարագրի՝ որպես ծոնալեզվային, միջին բարձ-րացման, շրթնապարզաբային ձայնավոր: Նման սահմանում կարելի է բնութեկի խիստ վերա-դասվումը, քանի որ ա ստանով արտահայտված հնչյունի նման բնութագրման համար պետք է ունենալ կենդանի խոսքի տվյալներ: Մինչդեռ միջին հայերենը մեղ համար պատմական լուսալ է, որի որպիսի ունեններ մենք բնկալում ենք մեր այսօրվա լեզվական պրակտիկայով:

⁴ Որ ամբողջ միջին հայերենի համար ա տառանշանի տակ պետք է մեկտրել և հնչյոթի բոլոր հնարավոր տարրերակները, ապացուցում են մեր բարբառների փաստերը: Ժամանակակից հայ բարբառների մի մասում ք ձայնավորը մնում է նույնպիսի, բարբառների մի այլ խմբում, որպեսզի դիրքում, այն հանդես է գալիս առաջին շարքի ստորին բարձրացման ն-ի որակով մի կրթող խմբում, նույն դիրքում, ք-ի դիմաց է, երբ որոշակիորեն զարգացել է նախորդից (ն-ից): Բարբառների այլ խմբերում հայերենի ք-ի փոփոխության այլ ուղղություն է նկատվում, որով վաշերում (օր. Ն. Բալազետի խոսվածքում և այլուր) ք-ն ետնալեզվային ստորին բարձ-րացման՝ շրթնալեզվային երանգով ձայնավոր է, ուրիշներում նույնի դիմաց մարտ շրթնայնա-ցած օ ձայնավոր է (օր. Աղուզիսի բարբառում), որ նույնպես զարգացել է իր նախորդ տար-րերակից և այն: Ժամանակակից հայ բարբառներում տեղի ունեցած այս փոփոխությունները ունեցել են իրենց արմատները միջին դարերում, հետագայում միջին հայերենի ա-ն էլ իր որակով եղել է այնպիսին, որ հիմք է տվել հետագա այդ փոփոխություններին: (Այս շարքերի բնախոս-մը առաջինը բացառում ենք, թուղելով հայերենի պատմական հնչյունաբանությանը):

⁵ Տե՛ս «Վերաբանական աղբյուրները Հայաստանի և Հարևան երկրների մասին աշխատությունը:

արտահայտում էր ինչպես ետնալեզվային, այնպես և առաջնալեզվային շրթ-նայնացած ն ձայնավորը: Միջին հայերենի շրջանում դրանք իմաստատարե-րիչ արժեք չուներին և հանդես էին գալիս որպես նույն և հնչյոթի կրկու տար-րերակներ, ուստի և արտահայտվում էին նույն գրանշանով: Հենց այդ երկու տարրերակների հիմքի վրա է, որ հայ բարբառների մի մասում, այնտեղ, որ ու-ն ունեցել է ետնալեզվային արտաբերում (միայն մի աստիճանով տարրեր-վելով օ-ից), պատմականորեն հնչյունափոխվել է օ-ի (հմմտ. Հարսարզի, Զանգեզուրի, Մեղրու և այլ բարբառների օրինաչափ փոփոխությունները), մինչդեռ ու-ի առաջնալեզվային տարրերակը որոշակի դիրքում մնացել է ան-փոփոխ (ն): Հատկանշական է նաև, որ միջին հայերենում նույն ու-ի միջոցով արտահայտված են նաև իւ և սյ կրկնաբարտներից պարզված ձայնավորները, որոնք մեր բարբառների մի մասում ունեն առաջնային շարքի շրթնայնացած ձայնավորի (ն) որակը:

5. Ի դրի հնչյունական արժեքը երևում է հետևյալ օրինակներում. արբ. պս. *alani=ալանի (Մժբ. Դատ., կատ. երզնկ., Ֆր. և այլն), արբ. *amir=ամիր (հիշատակարաններում, արձանագրություններում և այլուր), արբ. Abu-ud-ğarib=Ապլլարիպ (Մժբ. Տար., Անիի արձանագրություններում և այլուր), հֆր. sire=սիր (Մժբ. Տար., Մանր. ժմնկ. և այլն), պս. igdiš=իկաիշ (Անս. 63), հֆր. lige=լից (ն. տ.), թրք. yarğudı=արղուչի (Մանր ժմնկ., ժԳ ճճ. և այլն), ինչպես նաև օտար աղբյուրներում, ալիպիսի տեղանունների հասա-ցարձակման մեջ, որոնց նույնպես ձևերը հայտնի են մեզ. Ալիս (գետը)=اليس, Արիգ=اريق, Անի=انی, իրիգան/չիրիգան=حجران, Դիլի/Դուլից=دودو, Վարդանիս=وردنيس և այլն:

Այս և նման բազմաթիվ օրինակներում ի=i համապատասխանությունը գոյություն ունի ինչպես շեշտի տակ, այնպես և շեշտից առաջ ու բառասկզբ-բում, բացառությամբ բառասկզբի այն դեպքերի, երբ այն գտնվում է շփա-կան-պայթիկան (սկ, սպ, շկ և այլն) կապակցություններից առաջ: Այդ դի-րում i-ն բնկնում է՝ ենթադրելով մի թույլ p-ի արտասանություն, թեև այն գրություն մեջ չի արտահայտվում (օր. պս. isphanax=սպանախ. Մխ. Լեբ.):

6. Ավելի պրոլեմատիկ է և և է տառերի հնչյունական արժեքի հարցը՝ Թեև միջին դարական հայերենը հետևելով ավանդական գրությանը՝ աշխատում է պահպանել այդ դրերի հին ուղղագրական նորմաները, սակայն փաստոր-րցույց են տալիս, որ դրանցից հատկապես և-ի հնչյունական արժեքը փոխվել էր բոս բառում գրաված դիրքի:

Մենք վերը, հայերենի ա դրի հնչյունական արժեքի մասին խոսելիս նշե-ցինք, որ նրա տակ կարելի է ենթադրել նաև Զ ձայնավորի առաջնալեզվային տարրերակը՝ նկատի ունենալով փոխառյալ մի շարք բառերում փոխառու լե-զուների այդ ձայնավորի դիմաց հայերենի գրության մեջ երբեմնակի հանդի-պող է (և)-ով ձևերը՝: Սակայն նման գրադարձությունը բխում է ոչ թե է // և

⁶ Տե՛ս «Վերաբանական աղբյուրները աշխատության մեջ:
⁷ Կարսը այս հնչյունը համարում է կարճ կամ բաց e(ə) ձայնավոր, հիմք ունենա-լով հետևյալ համապատասխանությունները. բնուպիթ-արբ. [äbdir ulr-ʃil] = արբ. (խոց.) särtif, բրվան=նյքթ. khärvän, գամբեթ=նյքթ. gumbäd, չարկ=նյքթ. çarğak, հառնեղ = հֆր. harnais (harnes, harness), ցասուկ=հֆր. chasteł, ֆրեկ=հֆր. frère. Պեկեր=իտ. Benetto, հֆր. Benett, Մանսել=հֆր. Mancel, Գուպի=հֆր. Isabelle, Բուսեկ=հֆր. Roger (տե՛ս նալ. այն. էջ 18): Ինչպես կարելի է նկատել բրվան բրվան օրինակներից, իսկապես հֆր., իտ.

գրերի հնչյունական արժեքից, այլ պայմանավորված է միայն նրանով, որ ստաշնային շարքի ձայնավորը ավելի հարմար է համարվում զբաղաճելու այդ տառով, և զբային արտահայտություն ստանալուց հետո, այն վերաբաղրվում է որպես Ե:

Հին հայերենի գրի առանձն ժամանակաշրջանում մետրոպոլյան այբուբենում և և է գրերի առկայությունն ինքնին ակնարկում է, որ զրանք տարբեր հնչյունական որակներ էին Ապացուցված է, որ զրանքից առաջինը ներկայացնում էր բաց Ե ձայնավորը, իսկ մյուսը՝ երկրորդապարսկյան երանգ ունեցող ԵՅ հնչյուն, որն արդեն զատական հայերենում կորցնելով իր երկրորդական հնչյունը՝ վերածվել էր փակ Ե ձայնավորի: Հայերենի ետգոսական շրջանում, բանավոր լեզվի հետագա զարգացման քննազտում, խոսակցական տարբերակներում այդ ձայնավորները թերևս նույնանում են: Արդեն իսկ մեզ հասած հայերեն առաջին ձևազրկում արձանագրվում է և և է գրերի գրության շփոթ: Այնտեղ, ուր բառ ավանդական ուղղագրության պետք է գրվեր և, գրվում է է, ուր պետք գրվեր է, ունենք՝ և: Այսպես, օրինակ՝ 887 թ. գրչությանը Լազարյան ձեռագրանի հայտնի ավետարանի ձեռագրում ունենք եթե, եղեալ եին, գայթաղին, կոչին և այլն, փոխանակ՝ եթե, եղեալ էին, գայթաղիին, կոչին և այլ ձևերի: Այս ձևազրկը բացառություն չէ: Նույն երևույթը առկա է նույն ժամանակների և այլ ձևազրկում: Ինչպես, օրինակ՝ IX դարի գրչությանը հասած № 1001 ձեռագրում՝ ոչ ծանկեր, ոչ իրկներ, եթե, առեհեև և այլն: Նույնը նաև IX—X դդ. գրչության № 985 ձեռագրում՝ խնրին, թևայե, եթե զույց կր, գիտի, գիտիք թե և այլն: Նույնը նաև հիշատակարաններում ու արձանագրություններում՝ մեղաց (Գ. Հովս. հձ. 152, 988 թ.), համբերալ (ն. տ. 153, 988 թ.), երեց (ԿՂ Լազար. 991 թ.), լթե (ն. տ. 1021 թ.) և այլն, և այլն: Օրինակները կարելի է բազմապատկել:

Սակայն շարժվել է կարծել, թե նշված օրինակներում է-ի փոխարեն Ե և հակառակ գրությունը կիրառվում է հետևողականորեն. զրանք զուգահեռ արձանագրվում են նաև ավանդական գրությանը ձևեր: Այդ երկու տառերի գրության շփոթը ավելի է հաճախանում հետագա դարերում, երբ համարյա ամենուրեք, հատկապես բառամիջի դիրքում, խախտելով ավանդական ուղղագրությունը, մի գրի փոխարեն գրվում է մյուսը:

Ե-ի և է-ի գրության շփոթը, նույն դիրքում մեկը մյուսով փոխարինելը, անշուշտ նշանակում էր, որ զրանք տվյալ զիգրերում իրենց հնչյունական որակով նույնանում էին: Հայերենի խոսակցական տարբերակների մեծադուրյն մասում հենց նրանց արտասանության նույնության պատճառով է, որ և և է գրերի արժեքները զբավոր լեզվի տարբեր դրսևորումներում բնկավրում են որպես մի հնչյուն՝ գրության տարբեր արտասանություններով:

Այս տեսակետից ուշադրավ է նաև հետևյալ երևույթը: Գրաբարի ևս երկրարբար միջին հայերենի տարբերակների Ֆեծագույն մասում հնչյունափոխ-

օրինակներ Ե-ին հայերենում համապատասխանում է է-ն, սակայն արարա-գարական փոխառությունների մայր Աճերում ոչ թե Ե է, այլ ստաշնային շարքի ստորին բարձրացման ն, որը չի նույնանում ֆրանս-իտալական Ե-ին, թեև այդ ն-ի արտասանական տեղով շատ մոտ է Ե-ին և հայերենում այդ նպատակով ներդրվում է է-ի մեջջող: Միամասնական պետք է նշել, որ այդ նույն բառերի ն-ի զիգայն հայերենում ունենք ո՛չ միայն է, այլև զուգահեռաբար՝ և (սերժիկ, շարեկ, ֆրեբ և այլն), ինչպես նաև բաղիկ // բառպի, Բուլվի, կուրաք՝ վկայված ձևերը, որոնքց առաջինում ն-ն ուղի է, իսկ մյուսներում դատարանական հանգրժ ներկայացված է հայերենի ա-ով:

վում և գրության մեջ արտահայտվում է և և է գրերով, բառ որում, ես-ի փոխարեն և-ն հանդես է գրված փակ վանկում (զրեալ>զրեկ, գրեաց>գրեկ, թեև մասնակիորեն հանգրվում են նաև է-ով ձևեր), իսկ է-ն՝ բառավերջի բաց վանկում (գրեալ>գրել): Կասկածից դուրս է, որ զրանք նույն հնչյունի արտահայտման տարբեր ձևեր են, և տվյալ զիգրում տարբեր տառերով արտահայտվելը ո՛չ թե հնչյունական, այլ ուղղագրական արժեք ունի:

Սակայն այս բոլորի հետ միասին մենք չենք կարող անցնել մի շարք փաստերի կողքով, որոնք ակնարկում են նաև այլ համապատասխանություններ: Անտարակիճ է, որ միջնադարյան աղբյուրներում, այնուամենայնիվ, հանգրվում են այնպիսի բառաձևեր և օտար բառերի այնպիսի տառադարձություններ, որոնք նշում են բառամիջում և և է տառերի հնչյունական տարբեր արժեքների մասին: Նկատի պետք ունենալ նաև այն, որ մեր ժամանակակից թարգմանների մի մասում հին հայերենի և է ձայնավորների կրած փոփոխությունները հիշեցնում են միջնադարում նկատվող այդ երևույթը: Հենց այս հիմունքով է, որ Կարսոսը կիրիկյան հայերենում և գրի համար, շեշտի տակ, ենթադրում է իե (կամ ye) արժեքը: Ըստ այդ վարկածի ենթադրվում է, որ միավանկ բառերի բառակազմում և բառամիջում, ինչպես նաև բազմավանկ բառերի վերջին վանկում և-ն պետք է որ արտասանվեր իե, իսկ բազմավանկ բառերի ինչպես բառակազմում, այնպես և շեշտից առաջ դեմքված դիրքում՝ Ե: Կարսոսի այս եզրակացությունը մի կողմից հենվում է նրա այն տեսական դրույթի վրա, ըստ որի՝ կիրիկյան հայերենի իր հնչյունական և ձևարանական առանձնահատկություններով հարում է հայ բարբառների արձայնային խմբին և. որպես այդպիսին, չէր կարող չունենալ նրա առանձնահատկությունները, մյուս կողմից այդ ենթադրությանը հիմք է տվել հայերեն որոշ բառերի առաջադրձությունը օտար լեզուներում. ինչպես՝ Մանծիկեր = Μαντζικέρτ, սուսպե = Ασσπετζ, պարն Օշին Վասիլեց = barone Ossino Bassilieni, ինչպես՝ նպրա. čaryšik = չարեկ և չարեկի⁸, հֆր. banier = պաներ, հֆր. chancelier (բուռ. չանչիլեր) = շանցիլեր, հֆր. solier = սուլեր⁹:

Այսպիսով, նկատի ունենալով այդ փաստերը, բառամիջի դիրքի համար կարելի է ենթադրել և-ի երկրորդապարսկյան իե արժեքը, սակայն ո՛չ որպես համահայերենյան երևույթ, այլ որպես և-ի արժեքի մի տարբերակ, քանի որ այդ նույն դիրքում արձանագրվում են, ինչպես արդեն ասվել է, և-ի և է-ի դուրսև գրությունների բազմամիով վկայություններ ոչ միայն Կիրիկյանից դուրս, այլև կիրիկյան մատենագրության մեջ. այսպես՝ զեղ // զեղ, ամեն // ամեն, մէն // մեն, աղկ // աղկ, բուէ // բուէ, զարթէ // զարթէ // զարթի, զղէ // զղէ, սամարչէ // սամարչե, սերժիկ // սերժիկ, ֆրէր // ֆրեր, պոթը // պոթը և այլն, և այլն, որոնց մրա տառացույց է ստեղծ հենց ինքը՝ Կարսոսը: Նշանակում է՝ շեշտի տակ և = իե համապատասխանությունը նույնիսկ կիրիկյան հայերենի համար ընդհանրական և օրինալից չէր:

⁸ Այս բառաձևեր ունի նաև շաւիկ գրությունը: Ամենայն հավանականությամբ, այս բառի մեջև ձևը փոխառում լեզվում եղել է ոչ թե ձի՛ցիկ, այլ ձի՛ճիկ, ինչպես և ասվել է և. պարսկերենում (شیرک)։ Հայերենում նախ առաջադրվել է շարեկ // շարեկ՝ և-ի և է-ի հնչյունական նույն արժեքով, և հետո միայն շարեկ՝ բառ և-ի բարբառային արտասանության Բ միջի այդ, Կարսոսը շաւիկ բառակեր քաղել է հֆրիկ գրությունից աշխատանքներից, որի հրատարակության հիմքում ընկած ձեռագրի գրչության թվականը անհայտ է:

⁹ Տե՛ս Կարսոս, եղվ. աշխատությունը, էջ 19:

Օ-ն ճայնաժողովների մեջ միակ Տնչյունն է, որ իր շրթնայնությունն հատկա-
 ներշով հարում է ա-ին, սակայն, ինչպես արդեն ասվել է վերը, նրանք հավա-
 նարար տարբերվում էին իրարից արտաբերման ժամանակ լեզվի բարձրաց-
 ման աստիճանով, և այդ հիման վրա է, որ ստեղծվում են նվազագույն հակա-
 դրություններ (ինչպես՝ թուր : թոր, լուր : լոր, խուց : խոց, կուժ :
 կոժ, կուս : կոս, կուշ : կոշ, կուտ : կոտ, հուն : հոն // հուն, հուր : հոր // հոր
 և այլն, և այլն)։ Սակայն, այն հանգամանքը, որ երանց տարբերակումը իրակա-
 նանում է միայն լեզվի բարձրացման տարբեր աստիճանների միջոցով, և վեր-
 չհենքեր էլ գտնվում են նույն ետին շարքում, իրար կողք-կողքի՝ հնարավորու-
 թյուն է ստեղծում մի աստիճանից մյուսին անցնելու, որով փաստորեն կա-
 տարվում է հնչյունափոխություն։ Թերևս արանով է պայմանավորված վաղ
 միջնադարյան աղբյուրներում հազվագիտորեն արձանագրվող այն երե-
 վույթը, երբ միևնույն բառի գրություն մեջ զուգահեռաբար հանդիպում են *ա* և *ու*
 որ երբևէ կարևոր այս մասին ենթադրում է, որ կիրիկյան հայերենում *ա*-ն
 ուներ *օ*-ի և *ու*-ի միջին արտասանություն, և այդ հիմքի վրա է, որ օտար
u-ն և *o*-ն հայերենում հակադրաբար արտահայտվում են *ա*-ով կամ *ու*-ով
 ևս բերում է հետևյալ օրինակները. Ruricus = Ռուրիկ, Curchus, Culchus, Curco,
 Courc, Courc (Coricus, Colco, Corc **ձեռքի կողքին**) = կոսիկոս, **Ֆր.** bou-
 teiller, bouteiller = Պղպեղ, **ՏՖր.** chaperon = շաբրոն/շաբրուն, **ՏՖր.** chalonge
 = շալունջ, **ՏՖր.** comte = գուևր¹²։ Մրանցից, իսկապես, մի բանիսը ունեն
 տարբեր գրություններ, հատկապես Ռուրիկ // Ռուրիկ՝ կիրիկյան ժամա-
 նակագրություններում, Սմբատի Տարգրում և այլն, սակայն մյուս օրի-
 նակների վկայությունները խիստ հազվագիտ են։ Չնայած վերջին հան-
 դամանքին, այնուամենայնիվ, փաստ է, որ նշված օրինակները վկայ-
 րում են *և*՝ *ա*-ով, *և*՝ *ու*-ով, բայց չենք կարծում, թե նման զուգահե-
 ռությունների պատճառն այն է, որ *ա*-ն ունեցել է *ու*-ի և *օ*-ի միջին ար-
 տասանությունը։ Այդ գրություններից մեկը պարզապես օտար բառաձևի պատ-
 ճենումն է, իսկ մյուսը՝ հետագա հնչյունափոխության արդյունք։ Մանավանդ,
 ինչպես կանաններ ճայնավորների հնչյունափոխությանը նվիրված բաժնում,
 միջին հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներին խորթ չէր ինչպես
n>ու, այնպես և *ու>ա* հնչյունափոխությունը։ Սկզբնապես, իհարկե, ենթա-
 դրելի է, որ *n>ու* փոփոխության համար միջանկյալ օղակ է հանդիսացել *ու*-ի
 մի այնպիսի արտասանություն, որ ավելի շուտ ունեցել է *ու*՝ երկարարտաչին
 երանգ¹³։

Այստեղ կարևոր է նշել նաև հետևյալը։ Այն երկարարտաչին հնչյունափոխու-
 թյամբ առաջացած *օ* հնչյունը ամենայն հավանականությամբ լրիվ շափով չէր
 համընկնում միջին հայերենում *ա* գրին տրվող հնչյունական արժեքին (հա-
 մենակն զնայ, ո՛չ ամբողջ միջին հայերենում)։ Այդ երկուսի լրիվ նույնության

զնայում ոչ մի անհրաժեշտություն չէր զգացվի ա-ից առաջացած *օ*-ի համար
 այդտեղի մեջ լրացուցիչ մտցնել մի նոր տառ (օ)։ Ար մատենագրության մեջ
 հանդիպում են *ա* (օ), և զուգագրությունների բավական թվով փաստեր, այդ
 նշան է այն բանի, որ միջին հայերենի որոշ տարբերակներում գրանք իսկա-
 պես նույնական էին, սակայն, մյուս կողմից, երբ անհրաժեշտաբար գրու-
 թյան մեջ շփոթվի *ա*-ի հնչյունական արժեքի հետ՝ ապա ակնհայտ է, որ
 գրանք տարբերվում էին իրարից՝ եթե ոչ ամբողջ միջին հայերենում, այսպ
 զոնե նրա տարբերակների մեծաքանակ մասում։

Հայտնի է, որ գրաբարի դասական շրջանում և ստանով արտահայտվող
 հնչյունը, ակնյա բառում գրաբար զրբքի ուրևուր օ ճայնալորի արժեք, այդ
 թվում նաև բառակցում։ Միջին հայերենի բառակցքի *ա*-ի համար ուսում-
 նասիրողները այլ արժեքներ են տալիս։ Ըստ որում, տարբեր ուսումնասիրող-
 ներ հնչյունական արժեքի տարբեր սահմաններ են նշում։ Կարսոյ, օրինակ,
 կիրիկյան հայերենի բառակցքի *ա*-ին վերագրում է *vo* երկհնչյունային արտա-
 սանություն, բայց միայն միավանկ բառերի համար. երկու և ավելի վանկ
 ունեցող բառերի բառակցքի *ա*-ի համար ընդունում է *օ* համապատասխանու-
 թյունը Պրոֆ. Ս. Ղազարյանը բառակցքի *n>vo* համապատասխանությունն
 ընդունում է ո՛չ միայն ամբողջ միջին հայերենի համար, այլև որպես ընդհա-
 նուր օրինակափոխություն՝ միավանկ և բազմավանկ բառերի համար, թեև բա-
 ցառված չի համարում նաև առանձին բառերում *n=օ* համապատասխանու-
 թյունը¹⁴։ Երկու ուսումնասիրողներ էլ տվյալ հնչյունափոխական երևույթի
 հիմնավորման համար մատենագրական փաստեր չեն բերում, և, ըստ էու-
 թյան, նշված *n>vo* փոփոխությունը բառակցումը ընդունում են որպես ինք-
 նին հասկանալի մի բան, հավանաբար նկատի ունենալով մեր բարբառներում
 կատարված փոփոխությունները և մեր գրական լեզուների ավանդական ար-
 տասանությունը։ Այդ երևույթի հիմնավորման համար մատենագրական փաս-
 տեր չբերելը բացատրվում է ո՛չ թե նրանով, որ սույն գիտնականների ուշա-
 զրբությունից վրիպել են գրանք, այլ պարզապես նրանով, որ օգտագործած
 մատենագրությունը նրանց այդ սրպի փաստեր չի բնձնել։ Փոխառյալ բա-
 ները, որոնք հարուստ նյութ են տալիս հայերենի մյուս հնչյունների արժեքի
 որոշման համար, *ա*-ի բառակցքի գիրքի համար համարյա ոչինչ չեն տալիս։
 Այն հատ ու կենս օրինակները, որոնք բառացիորեն հնարավոր է լինում պե-
 րկն սկզբնագրերից, խոսում են ոչ թե բառակցքի *n>vo* արժեքի մասին, այլ
 վերաբերում են *n=օ* համապատասխանությանը։ Այսպես, օրինակ՝ Հայոց

նակներում *ու*-ն ունեցել է *ու*՝ երկարարտաչին արտասանություն։ Կարսի իր, իհարկե, ենթադրե-
 նակ, որ օձանցի մեջ և կապակցությունը փոխարենվել է *ու*-ով՝ պարզապես *n>vo* հնչյունափո-
 խության փաստի հաշվառմամբ, բառակցումը նրա ունեցած հնչյունական արժեքի անօղակա-
 լով, բայց այս զնայում անբացատրելի է մնում, թե ինչու՞ այն բառերում, որոնց մեջ օձանցի
ա-ին նախորդում է ձայնավոր՝ ավելանում է *յ*։ Ամենայն հավանականությամբ այդ *յ*-ն մտնում
 է հորանցի կանխման նպատակով, իսկ վերջինս կարող էր անցի ունենալ միայն երկու ձայնա-
 վորների միացման սահմանագիծով։ Այսպես զատված՝ ցուր է ընդունել, որ լրիվաբար, ամուս-
 նայուր բառաձևերի չ-ից հետո ո՛չ թե *vo*-ն հնչյունակապակցություն է (որն սկսվում է բացառա-
 լով), այլ երկարարտաչին *ու*՝ ձայնավոր մի հնչյուն։ Մեր ենթադրությունն էլ ընդունելու լինե՞ր,
 այնուամենայնիվ, մի բան որոշակի է, որ *ա*-ն երբեմն բառերում պարզ է ընդունել, որ

¹⁴ Տե՛ս Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 216։

¹² Տե՛ս Kärst, նշվ. աշխատությունը, էջ 21։
¹³ Արդյոք անդրձայնի այդ վճեհար չե՞ն երկվայնցում որոշ նկատարներում հանդիպող այն
 բառաձևերը, որոնց մեջ օձանցավոր բառերի ավանդական –աուր, –ուր վերջավորություններում
 ըստ է թուզվում –ու Այստեղ կարելի է հիշատակել, որե՞նով Գրիգորիս բժշկագետի աշխա-
 տության վաղ շրջանի գրություններում հասած նկատարի հետևյալ օրինակները. ուժուհայ (մյուս նկ-
 առարում և հրատարակության տեքստում՝ ուժովուհայ <ուժով-անայ), որ անհայտարևն ուժու-
 հայ բառաձևն է, ինժուար (փե, Բուժատար), կաւուր (փե, կարևոր), ամուսնայուր (փե, ա-
 մասնատար ամուսնացած), նզցուր (փե, նզցուր) և այլն։ Մենք կարծում ենք, որ այն օրի-

Ոստան տեղանունը արարական աղբյուրներում հանդիպում է **اوستان** (ustān) արտահայտությամբ, բանի որ արաբերենը չունի օ ձայնավոր, բնականաբար այն արտահայտել է Ա-ի միջոցով: Բայց դա էլ իր հերթին նշանակում է, որ հայերենի այն տարբերակում, որից վեցցված է այդ բառը, այն տվյալ դիրքում (բառասկզբում) ունեցել է օ, բանի որ ՎՕ-ի արտասանության գեղարվեստ արաբ-րենը հնարավորություն կունենար այն արտահայտելու (գոնե ՎԱ-ի միջոցով): Մի այլ օրինակ՝ 1237 թ. գրչության մի ձևագիր հիշատակարանում ունենք. «բանդի մեք Գրիգոր և Վարդան, որպես զվառիս և զընդար ամուրք ընդպանք զարուստ մշակին» (Գ. Հով. Տձ. 922), այստեղ ընդգծված բառը հայերեն վախ-ն է, որի գաղտնավանկի Ը-ն հնչյունափոխվել է Թ-ի՝ բառասկզբում ստեղծելով ՎՕ հնչյունակապակցությունը, բայց այն չի տառադարձվել Թ-ով¹⁵: նման մի օրինակ ունենք XV դարից. «իշեցէր ի Քրիստոս զմահտեան Մկրտչն է զվովկն մեք պարտե ետաշտուրն» (ԺԵ ՏՃՏ. 511), ընդգծված բառը փոխառություն է արաբերեն vakhil բառանից, որի հոգնակին է vukhala, այն էլ նոր պարսկերենում արտասանվում է vokhala, հայերենը թերեւս եղակի է հոգնակի ձևերի հոնամահնացիայով կազմված բառաձև է, բայց այստեղ ևս բառասկզբի ՎՕ հնչյունախմբի դիմաց հայերենում ունենք նույնպիսի հնչյունախումբ՝ վա- Այս օրինակների վրա կարելի է ազդեցություն հասկանալ զաղթօրհանների մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի քաղաքի, հայկական դատարանի արձանագրություններում վիչայվող մի բանի օտար բառերի տառադարձությունները, որոնք նույնպես նշում են բառասկզբի Թ>Օ համապատասխանությունը: Այսպես, այդ սկզբում պարսկերենում ունենք՝ վայր «համայնքի ընտրովի առաջնորդ, ալպա», որից վայրա-բրին, վայրձապ, անձնանուններում՝ Վայրձա, Վայրձավոր, Վայրձի, Վառք-չուցա և այլն: Անասուրկիլի պիտի համարել, որ եթե այս զաղութի հայերենում բառասկզբի Թ-ն հնչյունափոխված լիներ ՎՕ-ի, ապա նշված անունները պիտի տառադարձվեին Թ-ով: Բայց իրականում ունենք օտար հնչմանը հարազատ վա կապակցությունը, որ նշանակում է, թե հայերենի այս տարբերակում բառասկզբի Թ>ՎՕ փոփոխությունը տեղի չէր ունեցել:

Վերը բերված օրինակները լավագույնս խոսում են այն մասին, որ բառասկզբի Թ-ն միջին հայերենի ոչ բոլոր տարբերակներում էր փոխվել ՎՕ-ի: Այդ նույն միտքը կարելի է հիմնավորել նաև այն երկրորդություններով, որոնց մեջ բառասկզբում մի վայրում գրվում է Թ, մի այլ վայրում՝ ա(օ): Այսպես, օրինակ՝ «ի թագաւորութեան Աշէլի» (ԺԳ ՏՃՏ. 158, 1319 թ. Ահիբի) և «ի թագաւորութեան Աշէլոյ» (ԺԳ ՏՃՏ. 157, 1319 թ. Գեղարքունի), «ի շառանգի Ռալի-լիանց» (ԺԳ ՏՃՏ. 99, 1314 թ. գրիչը կիլիկիայի Ահիբի ուխտից), «...յնպիսոպատութեան... տէր Օրբելի» (ԺԳ ՏՃՏ. 157, 1319 թ. Գեղարքունի): Ահիբերտրեն այս օրինակներում բառասկզբի Թ-ն ունի օ հնչյունի արժեք (հմտ. նաև լու. Ossin)¹⁶: Այսպես նաև Տերտեր նրեանցու կողմից 1341 թ. ընթրիքային լած ձառնարիի ձեռագրում (№ 8030. էջ 34բ) որի բառի թեքված ձևերից մեկում ունենք արդյուն: Յովհաննէս անձնանունը միջնադարյան աղբյուրներում հանդիպում է բազմիցս, այլ և այլ գրություններով, և դրանց մեջ նաև Ովանէէս (ԺԳ ՏՃՏ. 158, 1319 թ. Վասպուրական), Ոհաննէս (Գ. Հով. Տձ. 817, 1221 թ.)

ձևերով, որոնք նույնպես ահնարկում են բառասկզբի Թ-ի պարզ օ ձայնավորի արժեքը: Այս փաստերից առնվազն կարելի է մակարբերել, որ միջին հայերենի մի շարք տարբերակներում բառասկզբի Թ-ն համապատասխանությունը դործուն օրինակներում էր, և այդ իսկ տեսակետից ճիշտ չէր լինի ամբողջ միջին հայերենի համար ընդունել Թ>ՎՕ փոփոխությունը: Սակայն, մյուս կողմից, չի կարելի մոտել նաև ռատունասիրվող շրջանի հայերենի որոշ տարբերակներում բառասկզբի Թ-ի կրած փոփոխության փաստը: Պետք է ենթադրել,

որ այդ փոփոխությունը նախ սկսվում է Թ-ի (ՎՕ երկրաբարառային արձեքավորմանը): Թերևս այդ հիմքի վրա է, որ հայերենի որոշ տարբերակներում Թ-ն հետագայում արձեքավորվել է պարզ օ ձայնավորի (Մյունխեր, Մեդեր, Կարճահան և այլն), այլ տարբերակներում բառասկզբի (ՎՕ երկրաբարառք սկսում է ընկալվել որպես օ) Երկհնչյուն, և հայերենի ընդհանուր օրինակափոխությամբ՝ Թ-ն ձայնավորից առաջ հնչյունափոխվելով Կ-ի, Թ-ի դիմաց ստացվում է ՎՕ երկհնչյուն: Այստեղ ևս սկզբնաղբյուրներում պատահող առանձին, հատ ու կենտ օրինակներ մասնում են կատարված փոփոխությունը: Այսպես, օրինակ, Կոստ. Երզնկացու տաղերից մեկում ունենք. «Բլրույն առ յիս խոսելով, թե՛ դու վանց վո՛ւր ես իսկ եղել» (120): Ընդգծված բառը Թ, ով գերանվան թեքված որչ ձև-վից անաշույժ բարբառային տարբերակ է: Այն ենթադրում է նախ բառասկզբի Թ>ՎՕ (ՎՕ երկրաբարառային ձևից) փոփոխություն (voysr) գեռևս այն մասնակալ, երբ չէր կատարվել երկրաբարառք պարզեցում, այնուհետև ոչ երկրաբարառք օրինակից փոփոխությամբ ստացվել է վուր ձևը: Գրիգորիսի «Փնու-թին բնութեան և նորին ցատց» աշխատության մեջ արաբերեն **اوستان** բառը տառադարձված է **اوستا** (ցնորք, մտքի պղտորում)¹⁷: Կասկած լինել չի կարող, որ այստեղ բառասկզբի Թ-ն արտահայտում է մի երկհնչյուն, որ սկսվում է Կ-ով¹⁸: նման մի օրինակ են նաև արաբերեն vaqf բառի հայերենում՝ ոխվ, օղվ, օղբ գրություններով բառաձևերը, որոնք հանդիպում են միջնադարյան հիշատակարաններում և այլուր, որոնց մեջ արաբերենի ԿՎ-ի դիմաց բառասկզբում ունենք Թ (Թ>ՎՕ հնչյունափոխությունը թերևս կարելի է բացատրել նաև շրթնատամնային Կ-ի ազդեցությամբ?):

Այս օրինակներում բառասկզբի Թ>ՎՕ համապատասխանությունը գոյություն ունի ինչպես միավանկ, այնպես էլ բազմավանկ բառերում: Օրինակները թեև ընդհանրապես չեն կարող ևս, և այդ իսկ պատճառով էլ զգվում է դրանք տեղայնացնել, բայց պետք է ընդունել, որ, եթե միջին հայերենի որոշ տարբերակներ բառասկզբի Թ-ն ընկալում էին որպես պարզ օ ձայնավոր, ապա այլ տարբերակներում Թ-ի փոփոխությունը ընթանում էր կապված բառի վանկերի բանակի հետ: նախ, ինչպես սազվեց, որոշ տարբերակներում այն ունեւ երկրաբարառային արժեք, իսկ

¹⁵ Տե՛ս էջվ. աշխատությունը, էջ 144, թեև ձևագրերից մեկը ունի նաև սուտա, սաւա, որանցից հասկանալի երկրորդը գրադարձակ ձևերում է: Սակայն նույն բառը առանց գրադարձակ տարբերակների ան՛ս նույն տեղում, էջ 135:

¹⁶ Գրիգորիսի հիշյալ աշխատությունը հեղինակային բնագիր չէ (ամենավաղ ձեռագիրը XV դարից է) և, ամենայն հավանականությամբ, այն ստեղծ է մի շարք ընդօրինակությունների միջով: Վկայելով դրան բառասկզբի Թ-ի գոյությունը կարող է այնքանով միայն վստահություն երբեք, որ այն որպես բովանդակական ստորին, և ո՛չ ընդհանուր գործածության բառ, կարող էր պահպանել հեղինակային գոյության ձևը: Սակայն նույն ձևագրում հանդիպում են նաև հայերեն բառեր, որոնց բառասկզբի Թ-ն արտահայտված է առ գոյությունը (սառնեհ<սունեհ, յաւանեհ<յաւանեհ, աւաղանեհ<աւաղանեհ), որոնք, հայտնի չլ՛ գտալու են հեղինակային բնագրից, թե հետագա ընթրիքափոխություններից:

¹⁷ Որ դա ինչպես վախ բան է, ապացուցվում է կողք գրված հոմանիշ բառով՝ եզար=զար. ԹԵԶԱՐ զմտիտ, եհաբաբ:

¹⁸ Տե՛ս Kars է, էջվ. աշխատությունը, էջ 19:

այնտեղ, որտեղ ո՛նք արժեքավորվում էր որպես երկհնչյուն, մի մասում այն հասուկ էր միայն միավանկ բառերին, մի այլ մասում երևույթը ընդգրկում էր նաև երկվանկ և բազմավանկ բառերը:

8. Մեթոդային այբուբենի մեջ հայերենի ձայնավորներն արտահայտող տառերից է նաև ը-ն: Ճիշտ է, սրանով արտահայտված հնչյունի արժեքը բն-նարկվող ժամանակաշրջանի փոխառու լեզուների փաստերով անհնար է սուտ-դել, բայց նկատի ունենալով, որ հայերենի պատմական տարբեր փուլերում և նրա բարբառներում հին ը-ին միշտ համապատասխանում է նույնձ հնչյունը, այդ համապատասխանությունը բացառված չի համարվում նաև միջին հայե-րենում: Այստեղ մի կողմից հաշվի են առնվում շեշտի տակ գտնվող ըստ: աստ, ընդ: անդ և նման ձևերի նվազագույն հակադրությունները և մյուս կող-մից՝ բառակարգի և բառամիջի գաղտնավանկային՝ համեմատաբար թույլ դժը-սևորման գեպերը¹⁰: Ըստ որում, ձայնավորների մեջ լինելով ամենաթույլը, նրա բացարձակ կիրառության հիմնական դրոշմը (ըստ ուղղագրության կանոն-ների) սահմանափակվում է միայն բառակարգի դիրքով (ըզուլ, ըզուկ, ընկեր, ընկուզ, ընկուզ, ընտիր, ընթերցող, ըստմ, ըստփիկ և այլն), այն էլ հիմնա-կանում ղ, ն, մ, ու ձայնորդներից առաջ: Բառակարգի դիրքում համեմատաբար ավելի թույլ գրանցում ունի սուլական || շշական+պլթական կապակցություն-ներից առաջ: Ընթ կնե այս դիրքում, ըստ ուղղագրական կանոնների, բացառ-վում էր նրա նշանացի արտահայտությունը, սակայն միջնադարյան ձևազրե-րը նման գրության բազմաթիվ օրինակներ են տալիս: Մի բանի օրինակներ միայն մի ձևազրից՝ բառակերպելի (Չեռ. 8030, էջ 3բ, 1341 Թ.), բառիզներ (ն. տ. 7բ), ըսգնեռ գեկերպարան (ն. տ. 59ա), քսգեցարտք (ն. տ. 65ա), ըսզեցոյ (ն. տ. 98բ) և այլն: Համեմատաբար թույլ դիրք է նաև բառամեջը, որտեղ այս հնչյունը հանդես է գալիս գրգռողականերում: Մասնազրույթյան մեջ, և հատկապես շափածո ստեղծագործություններում, ուր շափազանց կարե-վոր է բառերի վանկատման պարզությունը, բանաստեղծական տողի վանկա-լին կառուցվածքը, գաղտնավանկերում լավող ձ-նը շատ հաճախ ստանում է գրավոր արտահայտություն (ինչպես՝ շրնալուս, շրթներ, քրթներ, լքուի, խթ-մել, շրնձել և այլն): Առաջին իսկ պահանջով ձևազրերում էլ հանդիպում ենք նույն երևույթին. այսպես՝ IX—X դարերի գրչվյալքը № 985 ձևազրում՝ հրքաման (3բ), սրլոյ մեռան (ն. տ. 7ա), ոչ օրտեմ (Տա) ժողովրդականը (Տա) և այլն: Հատկապես առաջին վանկում ը-ի առկայությունը պայմանավոր-ված է հայերենում երկու բազմաշեղծ բառ սեկելու անհնարությամբ: Ինչպես վերը ասվեց, կնե այդ բազմաշեղծության սուլական || շշական+պլթական դու-րդրությունը են, ձ-նը արտասանվում է բառակարգում, մյուս բազմաշեղծների դուրդրության գեպում ձ-նը արտասանվում է առաջին բազմաշեղծ հնուտ: Այս առանձնահատկությունը, որ խարսխված է հայերենի արտասանական բա-զմյի վրա, գալիս է գեռես հին հայերենից և հարասեղել է մինչև մեր օրերը: Այսօր էլ մենք նման բառերի արտասանության ժամանակ հնչում ենք մի թույլ ձ, որը շատ որոշակիորեն, որպես վանկաբար ձայնավոր, հանդես է գալիս հատկապես բառերի վանկատման ժամանակ (լը-սել, խը-մել, հըն-ձել և այլն):

9. Հին հայերենի ձայնավորներն արտահայտող տառերի հնչյունական արժեքները պարզելուց հետո, միջին հայերենի ձայնավորների ընդհանուր նկարագրի ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ է քննել նաև այն փոփո-խությունները, որ կրել էին այդ հնչյունները մեզ հետաքրքրող ժամանակա-շրջանում: Այդ բանը մասամբ արվել է և ու գրքերի արժեքների քննության ընթացքում, երբ ցույց էր արվում, թե ինչպես դրանք պահպանելով իրենց ավանդական դրույթյան ձևերը, միջին հայերենի առանձին տարբերակներում, արժույթմանային, արտահայտում էին տարբեր հնչյունական երանգներ:

Այս բաժնում նպատակ է դրվում քննել միջին հայերենում հին հայերենի ձայնավորների մեջ կատարված պատմական այն փոփոխությունները, որոնք հատկապես պայմանավորված են եղել հայերենի շեշտադրության առանձնա-հատկությամբ և կամ նրանց արտաբերման հետ կապված հոգեբանական ու արտասանական այլ գործոններով: Այդ փոփոխությունները, ինչպես կտես-նենք, երբեմն կրում են ընդհանուր, երբեմն՝ մասնակի բնույթ, բայց, այնու-ամենայնիվ, իրենց էությունը հարազատ ու արկապկան են մեր լեզվի միջին շրջանին և դրանով իսկ՝ նրա հնչյունական նկարագրի կարևոր գծերն են:

10. Հայանի է, որ գրաբարում շեշտը կայուն-շարժական էր և հիմնակա-նում դրվում էր բառի վերջնավանկի ձայնավորի վրա: Շեշտից առաջ գտնվող վանկերի ձայնավորների արտասանությունը բնականաբար թուլանում էր: Բայց կնե այդ հանգամանքը որևէ կական հետևանք չէր թողնում ա, ո, և ձայ-նավորների արտասանության որակի վրա¹¹, այսպես, հատկապես բառաթևերման, բառարարման ու մասնացման ժամանակ, երբ շեշտը տեղափոխվում էր ավե-լացած վանկի կամ վանկերի վերջին ձայնավորի վրա, նախնական բառածևի վերջին վանկի ու, ի, է ձայնավորները ենթարկվում էին հնչյունափոխության: Ըստ որում՝ ու-ն և ի-ն հնչյունափոխվում էին բ-ի, կամ պարզապես օզվում, կ-ն նույն պայմաններում փոխվում էր ի-ի:

Հայերենը նշված ձայնավորների հնչյունափոխական այս առանձնահատ-կությունը պահպանեց իր դրույթյան ամբողջ ժամանակաշրջանում: Ավելին, հայերենի որոշ տարբերակներ նշված ձայնավորների սղման կամ բ-ի հնչյու-նարկությունը հատկությունը տարածվեցին նաև մյուս ձայնավորների վրա:

Այդ բանը որոշակիորեն երևում է նաև միջին հայերենում: Շեշտը միջին դրական հայերենում ևս կայուն-շարժական է: Այն, գրաբար-ի նման, միշտ բառավերջի լիարժեք ձայնավորի վրա է: Սակայն ուսումնա-սիրողների կողմից միջին հայերենի համար ընդունվում է երկու շեշտ՝ զլեա-վոր և երկորդական: Գլխավոր շեշտը ընկնում է բառավերջի վանկի ձայնա-վորի վրա, երկորդականը՝ առաջին վանկի ձայնավորի վրա (երկվանկ և բազ-մավանկ բառերում): Առաջին վանկում երկորդական շեշտի ընդունումը հիմ-նավորվում է նրանով, որ բազմավանկ բառերում բառաթևերման ժամանակ

¹⁰ Թր բազմավանկ բառերի բառակարգի ը-ն ևս թույլ ձայնավոր է, երևում է Հևանյուլ օրի-նակից՝ «...Սրչափ ևս առակի զնտախիս նորս (լազարյան նեմարանի 887 Թ. գրչությունը ավե-տարած, էջ 257), որտեղ ընտանիք բառի ը-ն գրություն մեջ չի արտահայտվել: 9. Խարսխի հա-վելմամբ սակեմվել է գաղտնավանկը:

¹¹ Հաս ու կնես բառերում այդ ընդհանուր օրինաչափությունից կատարվող շեղումները, ինչպես, օրինակ՝ աստուած—աստուծոյ, արժատ—արժատի, լիտեմ—լուտեմ || լիտեմ, ծիծեռն—ծիծեռն, սիտեմ—սիտեմ (ևս սիտեմ) և այլն (ՏԿ՝ Կ. Ա. Արամանյան, Գրաբարի ձևա-նարկ, Երևան, 1958, էջ 11, 12), սեղան չէին խախտում հիմնական օրինաչափությունը:

ձայնավորների սղում կամ անկում տեղի է ունենում միայն միջնավանդում, բայց ո՛չ առաջին և վերջին վանկերում, հակառակ մեր մի շարք բարբառների, որոնց մեջ բազմավանկ բառերում շեշտից առաջ գտնվող բոլոր ձայնավորներն են հնչյունափոխում կամ սղվում, ներառյալ նաև առաջին վանկում գտնվող-ները (օրինակ՝ Մեկրո, Կարճևանի և այլ բարբառներում), որք բացատրվում է միայն մի սուբ շեշտի առկայությամբ:

Միջին հայերենում վերջնավանկային շեշտին դուրսհանա, որոշ տարբերակներում ենթադրելի է նաև շեշտի վերջիններս գործածություն, ինչպես այց հասուն է մեր արևելյան շատ բարբառներին:

Շեշտի առանձնահատկության հետ կապված վերը նշված հնչյունափոխական երևույթների օրինակներ մենք կտեսնենք հետագա շարադրանքում:

11. Մեր լեզվի նախորդ շրջանի՝ դարբանի համար, ինչպես արդեն սովել է, ա-ն կառուց ձայնավոր էր, բանի որ այն բառաթերթն, բառարարգման ու անհնչյուն կամ պղտմբ բազմավանկ բառերի միջնավանկում և երկրորդ՝ որպես գործուն օրինաչափություն, նույն փոփոխությանն է ենթարկվում նաև բառաթերթման ժամանակ, երբ շեշտադրվում է Առաջին զեպարում գործ ունենք պատմական հնչյունափոխության հետ, երբ ա-ի սղումը կամ անկումը սակա է բառական անկախ և ուղիղ ձևերում և չի կապվում տվյալ համակարգի մեջ գործող շեշտի հետ կապվող հնչյունափոխության հետ: Երկրորդ զեպարում օրինաչափությունը գործուն և տվյալ համակարգին հասուի առանձնահատկություն է և անմիջապես աննշվում է շեշտադրության և նրա ազդեցությանը կապարվող փոփոխության հետ: Թեև երկու զեպարում էլ էական նշանակություն է ստանում շեշտը, սակայն մի զեպարում նրա ազդեցությունն արձանագրվում է որպես ավարտված հետևանք, իսկ երկրորդ զեպարում՝ շարունակվող: Քննենք այս երկու զեպարներ առանձին-առանձին:

ա) նախ՝ ա-ի սղումը կամ անկումը բառական ուղիղ ձևերում: Անշուշտ, այս փոփոխությունը կատարվել է շեշտի ազդեցությամբ: Արդեն պատմական շրջանում սկսել է ընդհանրանալ նախաշեշտ վանկերի ձայնավորների, այց վերում նաև ա-ի, արտասանության թուլացումը, և քանի որ այլալ դեպքում ա-ի կորուստը կամ փոփոխությունը չի անդադարձել բառիմաստի շեփոխան վրա, ուստի և այն ընկել կամ սղվել է Հայերենի այն տարբերակներում, որտեղ բազմավանկ բառը բացի դիտավորից ունեցել է նաև երկրորդական շեշտ, այն էլ առաջին վանկում, ա-ի սղումը կամ անկումը տեղի է ունեցել միջնավանկում: Այս ներույթը հատկապես հասուի է կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին: Արցախ, Պարոն Կոստանդինի 1271 թ. դաշնագրում ունենք՝ հասկնալ, հավնել, կոն Գ-ի 1288 թ. արտոնագրում՝ մեռնիլ, պանրեչիլ, մմբատի Դատաստանագրքում հանցնալ, քազուր // քազվուր, զանկավուր, զանկտել, սպաննել, տուզնվիլ և այլն, Սթա. Հերացու Զերմանց Մխիթարության 1279 թ. ձեռագրում՝ դարակել, հասկնալ, տաճալ, խոճալ, անցնել, տապկած և այլն, Անտիո Անտիոքա այրատության մեջ՝ հարցնել, ասցել, զանկտել, մտաղցնել, դատասնել, ամբնալ, հանցել, ավտալ, էլնել և այլն, Գրիգորիսի «Քննություն քննության մարդու...» աշխատության մեջ՝ ուժովնալ կամ ուժուրնալ, արձկնալ, հասնել,

տաճալ, տալցնել, հասնիլ, յաւնալ, երեւալ, հաստնալ, էլնել, կատիլ, սպրտուց, սպրակիլ, սպրակուրին, ցամբիլ և այլն, Ամիրջուլաթի «Ուսումն բժշկութեան» աշխատության հեղինակային ձեռագրում՝ պակնել, հասկնալ, բամբիլ, հիրընդուրին, հարցնել, հասնել և այլն, և այլն: Օրինակներ չենք բերում այլ հեղինակներից և այլ աղբյուրներից, որոնք ավելի հետին շրջանից են և չի են այս հնչյունափոխությունը վիայող օրինակներով:

բ) Ա-ի սղումը կամ անկումը բառաթերթման կամ անհնչյուն ժամանակ կատարվում է նույն հիմունքներով և վիայվում է վերը հիշատակված սղորդադրություններում: Այստեղ շեշտի տակ գտնվող ա-ն բառաթերթման ընթացքում շեշտադրվելով՝ հնչյունափոխվում է ր-ի կամ ընկնում: Այս օրինաչափությանն են ենթարկվում ո՛չ միայն բազմավանկ բառերը, այլև նաև երկվանկ բառերը, որոնք երկրորդ վանկում ունեն ա. ինչպես, օրինակ՝ ապրանք, զանկատ, դարպաս, հրահու, ճակատ, խանդակ, բաղաբ և այլն: Մի քանի օրինակներ սկզբնաղբյուրներից. «...Արգիլէին զվանկներուն կուտան» (Լեոն Գ-ի արտոնագրում), «...Արքա կաղնուց որ ի մեր ձեռք կան» (ն. ա.), «Քանց կարեն հանել ու տանել (չուրն) խանկով» (Մմբ. Դատ.), «Երաստաներուն բաներն» (ն. ա.), «ժողով զամէն զվաղնուց եպիսկոպոսներն» (ն. ա.), «սպրեւացն» (Անու.), «ի դարպակն» (ն. ա.), «ստնու զիբ իբառունքն դարպակն» (ն. ա.), «ի կաղն» (ն. ա.), «մնաց զրիզոն տուզնալ ներք» (ն. ա.), «Եկրթ միլ» (Ամիրջ. Ու. բժշկ.), «Բաղնի անդկուն պատճառն» (ն. ա.), «Կալա անուն հիրընդին» (ն. ա.), «չաղի վերին բարն» (ն. ա.), «ի հակտին վերայ է» (ն. ա.), «այն մեծ երկին» (<Երակին), ի փայղէն, բերին, ի խղչկն (ն. ա.) և այլն:

12. Պետք է ենթադրել նաև, որ միջին հայերենի որոշ տարբերակներում (հատկապես արևելյան) բառական շեշտը ունի այլ առանձնահատկություն: Հավանաբար այն վերջիններս էր և իր քննությունը սուր: Այս ենթադրությանը հիմք են տալիս սկզբնաղբյուրներում հանդիպող հնչյունափոխական այն զեպարներ, երբ բազմավանկ բառերում ընկնում է ո՛չ մի բառամիջի ձայնավոր և պահպանվում առաջին վանկին, այլ ընդհակառակն՝ մնում է բառամիջին և ընկնում բառասկզբի կամ առաջին վանկի ա-ն: Հարատի վանկի միմաստ արձանագրություններում վկայված են նման ձևեր. Երաստի «ե ու պկասցանել զանա՝ նգովան է» (Կղ. Հաղբ. 145, 1061 թ.), «եթէ որ այս դրաչ ճակտ կա կամ պկասցանել զանա՝» (ն. ա. 156, ժԱ դ.), «կատարողն արհնհին Այ, և զիհանդէն (<խափանողն) դատին» (ն. ա. 171, ժԳ դ.): նույն վայրի 1067 թ. մի արձանագրության մեջ դուրսհանաբար գործածված են Սեհալ և Սահակ սեհակային ձևերը (ն. ա. 157): Սրանց վրա կարելի է ավելացնել՝ «...եո Տիրապետ՝ Հուպետի որդիս վկալ հմ» (ժԴ հճ. 330, 1341 թ.) օրինակը, որտեղ Հայրապետ անձանիվան մեջ շեշտից առաջ սղվել ու հնչյունափոխվել են ա ձայնավորը և այ ներկարբառը: Միջնագրում տարածված բառան է Ռատա-կալ, Ռրատուկ անձանունը, որը առաջացել է Արիստակ-ից՝ բառասկզբի ա-ի անկմամբ, այն վկայվում է առավելապես Վայոց ձորի, Սյունիքի, Վասպուրականի, Իշխանյաց երկրի, Արևելյան Հայաստանի այլ վայրերում գրված ձեռագրերի հիշատակարաններում և արձանագրություններում (տե՛ս ժԵ հճ. 216, II, III Դհճ. II, և այլն): Ավելի հին վկայություն է՝ Գ. Հովս. հճ. 216, 1030 թ., 222, 1040 թ.:

Բառասկզբում ա>ը արձանագրվում է մի քանի բառերում: Նկատելի է, որ այդ հնչյունափոխությունը կատարվում է ն ռեզալիսից առաջ. ինչպես՝ ան-

Միջին գրական հայերենի ժամանակաշրջանում այս երևույթն արձանագրվում է տարբեր վայրերում գրված ձեռագրերի և վիճակն արձանագրությունների մեջ, մի հանդամանք, որ վկայում է երևույթի ոչ միայն օրինալայփ, այլև համահավակն լինելը: Ահա մի շարք օրինակներ XII—XIV դարերի սկզբնադարձություններից: «Գեեցի ...զատեապարսեան եւ ալի ի մեծահոյակ վանքս Մաղարդիս» (Գ Նզվ. հձ. 451, 1173 թ.), «...ձեռնապոլսեամբ...բերեցվածոց» (ն. տ. 554, 1190—91 թթ. Այրիվանք), «...Գրեցաւ ի քիլին» (ն. տ. 739, 1208 թ. Սանահին), «...ստեղծվամբ գործ գործառնին» (ն. տ. 954, 1244 թ. Կիլիկիա), «...ի Ոս քվի ...ավաբ գՄանիշա ինտե» (ն. տ. 184, 1233 թ.), «ավաբ ի Սանահինս... միարանքս տվաբ» (ն. տ. 133, 1221 թ.), «ավի հուրատունն» (ն. տ. 162, 1275 թ.), «ավաբ խաշ մեծածախս» (ն. տ. 154, 1291 թ.), «ի քվականիս հոտց» (ԳՆՎ. III, Վայոց ձոր, 49, 1149 թ.), «ուխտ ավաբ հեբրեներ... ս ժողովուրդ ալի իշխատակ հոտր ինտե» (ն. տ. 51, 1259 թ. Վայոց ձորի արձանագրություններում բազմիցս՝ ալի, ալին, ավաբ), «գլոմեակոթն ալի սր Աստեղիտցս» (ԳՆՎ. II, Տաթև, 21, 1281 թ.), «ի վերս հանգստարանի հաբ ինտ ե վեր... իմ վերն արենն» (ԿԳ, Հաղբ. 175, 1189 թ.) «վերտողոյ իտրոյ» (ն. տ. 259, 1225 թ.), «վերտողին» (ն. տ. 184, 1233 թ.), «ավաբ ձ գահեկանն» (ն. տ. 168, 1253 թ.), «ի քիլի Չժ» (ն. տ. 166, 1261 թ.), «բաժ ու տամդա լին ալի» (ԳՆՎ. I, Անի, 23, 1280 թ.), «ավաբ զմեր պահեղն» (ն. տ. 40, 1293 թ.), «կատարեցի ...պատվական մարդարիտս...ի քվականից հայտոց...» (ԺԳ հձ. 31, 1304 թ. Երզնկա), «ես չի հնտա արվեստի» (ն. տ. 50, 1307 թ. Արձնշ), «ի քվականուրեանն հայոց» (ն. տ. 70, 1310 թ. Վան), «հաճոյ քվեր ... փաստ մատուցանենն տվողին» (ն. տ. 139, 1318 թ. Եղվազար), «...ոչ հաշվելով զծաշս ... և դատուքս արվեստավորացն» (ն. տ. 141, 1318 թ. Եղիվազար) և այլն, և այլն:

Այդ հնչյունափոխությունը արտահայտվում էր նաև ու շաղկապի մեջ, երբ այն հանդես էր գալիս ձայնավորից առաջ. բառ որում այդ երևույթը գրության մեջ տարբեր կերպ էր արտահայտվում. կամ պարզապես ու-ի փոխարեն գրվում էր վ, կամ ու-ի հետ նաև վ: Այսպես, օրինակ՝ Պարոն Կոստանդինի Սարգիսյանի օրոշոյ 1271 թ. գաշնագրի տեքստում ունենք՝ «Կու լինէր շատ զրոյց ի մեր մէջ վ ի իբրէնցն»: «Անսիդ Անտիոքայց քարգամանակն աշխատության մեջ բարդ թվականի կազմում» «Պարպանն սայ իր վանն թուպրեոյ տանավարն ար, և տասնվարսն ար վանն իրացն որ կու շարչելք... և հետ երկու տասնվարսն տվլի: խ: ար ալլ» (Անս. 23): Նույն տեղում՝ որպես նախադասություններ կամ համազոր անդամներ շաղկապող բառ. «համենայ դատասեյ ու վ ոչլի գիրաուներն ի իբր խամլեն» (ն. տ. 23), «աճնդէ ու վ ուրանայ և առ թ՝ Չէ» (ն. տ. 27) և այլն:

17. Մասնագրությունը որոշակի փաստեր է տալիս նաև u>o հնչյունափոխության վերաբերյալ, որը թեև քննույց չէ միջին հայերենի բոլոր տարբերակների համար, բայց որպես պատմական հնչյունափոխության երևույթ, հետաքրքիր է հայերենի ժամանակակից մի շարք բարբառներում սուխ նույն երևույթի առաջին վկայությունը լինելու տեսակետից: Երևույթը արձանագրվում է արդեն իսկ X դարի սկզբնադարձությունում, ինչպես, օրինակ, Մլրև թագուհու ավետարանի հիշատակարանում՝ «ես Մլրէ ... հայոց քազնի» (Գ. Նզվ. հձ. 109, 912 թ.), Վայոց ձորում 990 թ. գրված մի արձանագրության մեջ՝ «բազում աշխատութեամբ եւ մեծ յաստ քերի դռն եկեղեցոյս. կանգնեցի

նշան սորբ խաշիս զուակաց արեւշատքանն» (ԳՆՎ. III, 41—42): Հետագա դարերում նույնպես հանդիպում են նման վկայություններ, ինչպես Տաթևի 1365 թ. մի արձանագրության մեջ՝ «յանուն սրբուն ածածինն» (ԳՆՎ. II, 30): Սրանց վրա պետք է ավելացնել մի բանի բաների ա-ով և ու-ով հանդիպող զուգադրությունները, որոնք նույնպես խոսում են վերը նշված հնչյունափոխության մասին: Օրինակ, Մխ. Հերացու «Զերմանց մխիթարութիւն» աշխատության № 416 ձեռագրում արաբերենից փոխառված «ձ» բառը բազմիցս հանդիպում է նապոյ // նապայ // նուպայ գրություններով: նման զուգադրություններ կան Սմբատի «Տարեգրութն», որակի Ռուբէն անձնատերը հավասարապես հանդես է գալիս և Ռուբէն ձեռով: Ավելի լավ օրինակ է Գոգթան զավատում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում հետևյալ վկայությունը. «բառնայ ի մենջ տէր սատուած զսով, դուր, դմարախ, գրորտ, զորուակ (չորակ), գրալի» (ԺԵ, հձ. II, 256, 1467 թ. Յղնա): նման մի վերը նշված է առինա Հարթաթի արձանագրություններից մեկը՝ «նոտսմն ամենայն փրկչիս... Ասլայմազի դուստն Ալամն հա(ն)գաւ առ Փս» (ԿԳ, Հաղբ. 142, 1655 թ.): Թերևս լինեն և այլ օրինակներ: Չնայած այն բանին, որ երևույթն արձանագրող վկայությունները շատ մանրակի տեսակետից միասնական չեն, բայց տարածական տեսակետից որոշ շահով տեղայնացած են և հաստատվել են հատկապես Արևելյան Հայաստանի խոսվածքներին: Հատկանշական է նաև այն, որ Յղնայում գրված հիշատակարանում, որից բխում են ու>o հնչյունափոխության օրինակները, միաժամանակ կան նաև ո>ու փոփոխության վկայություններ (ինչպես՝ Գոգթան > Գոգթան, պարսն > պարուն): Դա կարևոր հանգամանք է, բանի որ այն բարբառներում, որոնց մեջ հին հայերենի ու-ն օրինալափոխուն փոխվել է ո-ի, հին ո-ն էլ իր հերթին փոխվել է ու-ի:

18. Սույն ժամանակների գրավոր լեզվի մեջ իրենց արտահայտությունն են ստացել բանավոր-խոսակցական լեզվում ու-ի պատմական հնչյունափոխության և այլ երևույթներ:

Ու-ն ընկել կամ ը-ի էր փոխվել բառակազմում, հատկապես դ-ից առաջ: Այսպես, օրինակ՝ ուղարդ բառի մեջ ընկել էր առաջին վանկը: Միջին հայերենի այն տարբերակները, որոնք դ-ով բառ չէին սկսում, գրանից առաջ որպես հենարան դնում էին ը: Օրինակներ՝ «Ով խոհեմդ, թէ ապաշխարութեան հարցներն ինչուրովի պատն լմենլ լինի, նա զորդ է» (Գ. Նզվ. հձ. 665, XII դ. վերջեր), «եւ լրէլ (= եկավ) զար ի Մլունն» (ԺԳ հձ. 295, 1337 թ. Այսա), բայց նաև՝ «Պարզարուն պարտի որ ըղորդ լսէ զպարտին զանգատն ու զնարա պացխունն և դատել ըղորդ» (Անս. 15), «եւ ըղորդ հասակն տանուհինդ տարին է» (ն. տ. 17), «Փան ու սսեն որ հիանդ է ըղորդ» (ն. տ. 25), «մէկն ըղորդ է և մէկն ծուռ» (Ամիրք. Ուս. քժչկ. ծա), «եւ ինքն ըղորդ է զես այլ աղեքն» (ն. տ. իր): Այս նույն բառակցից է նաև ըղորդել, ըղորդարին, ինչպես՝ «Եկզում... գեբրակուրն կու ըղորդ, որ ծամելու հնշս լինի» (Ամիրք. Ուս. քժչկ. ծա), «եւ այս է ըղորդարինն, որ ցուցնել պիտի» (Անս. 67), «Պատաստրին պարտ է փեսակ ըղորդարամբ եւ ընտրել զակամայ սպանութիւն» (Մմբ. Դատ. 32—33) և այլն: Այս բառակները հանդիպում են և այլ սկզբնադարձությունում և հարատևում են մինչև մեր ժամանակակից բարբառները:

Ուղեք բառի դիմաց ունենք ըղուդ, ըղեղ (հնարավոր են նաև առանց ը-ի մեկը), ինչպես՝ «ըրուպ կրակցի է... կրակ գակննջ ու զեղրուն ու զըղուդ... ո՛ր է ըղուդն, ի կրակոյն էր արժեւ, ըղուդ չունէր» (ԺԳ հձ. 275, 1335 թ. Կի-

լիկիա), նույն բառածեղերը նաև բժշկագիտական աշխատություններում, ինչպես՝ «Եւ յառաջն իրենք զցատան իր ի յղովն լինի, թէ որպէս լինի երակացն շարժիչն ըզիդն ցատոյն և այն անզամոցն, որ ի յղեպանն բնծախն» (Գրիգ. 3), «ասարայ այն մաշկն, որ ի վերայ զպանն է» (ն. տ. 52), «հաստապի ցան ի զուսն» (ն. տ. 54), «իրենն հարամ ըզուտ ասեն» (Ամիրգ. Ոս. բժշկ. իս), «սուր կն ըզիկ և երակ...» (ն. տ. 61) և այլն:

Նույն երևույթը տեղի է ունեցել նաև ուլարիկէ բառում: Հայերենի որոշ տարրերակներում այն բառակազմում ստացել է յ հնչյունը՝ յուլարիկ, ինչպես և ունենք վկայված... «...և թէ որ դատարանի զարպան և յուլարիկ ու կոչէ զինք... և յուլարիկ հետ մի այլ ... յուլարիկ դարպանն երկու լիծ ճորտ» (Անս. 25), այնուհետև ունի դից ստաց հնչյունափոխվել է ը-ի, որը գրովյան մեջ սովորաբար չի արտահայտվում. ինչպես, օրինակ՝ «...վարպպետ մի յղրիկն զաշկերանն, թե զուս գլուխ զնէ... յղրիկն չորս արեղոյ» (ԺԿ ՏՃ. 275, 1335 թ. Կիլիկիա), «յղրիկն պագն յազնութիւն» (Մանր ծմնկ. II, 61, XIII դ. Կիլիկիա), «Գոչ և ձեծվոր չէ պարա յարիկն թագովորին» (Ամր. Գատ. 12), «...և թէ երէցի հեծման մարդ յարիկ թէ շուտ զնա ի յինա բանն» (ն. տ. 32), «...ի սիրան յարիկ» (Մր. Հեր. 46բ), «Ձկորեկն յարիկ յորպէ» (ԺԿ ՏՃ. II, 283, 1469 թ. Տաշոզ գյուղ), և այլն: Սրանց զուգահեռ արձանագրվում է նաև առանց չ-ի հավելման և դ-ից առաջ ու-ի անկմամբ ձևը (կրթման հենց նույն սկզբնագրություններում), ինչպես՝ «Եւ թէ այլ ասլ զնո, թե հրանդ կմ, նայ զրկէ դարպանն երկու լիծ ճորտ այլ» (Անս. 25), «...տաշկն շայտակոն հանապաղ հաց ինձ կու զրկիւն» (ԺԿ ՏՃ. I, 658, 1419 թ. Հերմոնի վանք), «Ոչ զրեկեցեք քեզ նաֆադայ... զրիկ յորպանցրն նաֆադայ» (Յր. 332), «զարունն ի լեղզն ի սիրան կու զրկէ» (Ամիրգ. Ոս. բժշկ. իր), «զիկքն ի սիրան զրկէ» (ն. տ. ին) և այլն: Բարբառային մի այլ տարրերակ է ալարիկ (Հուլարիկ), որունը պետք է ենթադրել, որ ոչ թե ու-ն է հնչյունափոխվել ա-ի, այլ ու-ի անկումից հետո ա-ն ավելացել է որպէս հնձարան. օրինակ՝ «...մեզ նոր կարասն զինի իր ալարիկն մին գաւ» (ԺԿ ՏՃ. 429, 1478 թ. Վայոց ձոր), «ալարիկալ էր դայն մեծ-մեծ հացերն» (ն. տ. 359, 1474 թ. Վայոց ձոր), «Ձիւն որ քեզ բա-մին հասնի անդնինն, դու դայն ալարիկ (Հովհ. Նրզն. 151. այս տեքստի մի այլ տարրերակում՝ յուլարիկ):

19. Հին հայերենի ի ձայնավորը միջին հայերենում պահպանել էր հնչյունափոխվելու իր հատկությունը: Այստեղ ևս, բառաթիւքման ընթացքում ի-ն շեշտադրույա լինելով փոխվում էր ը-ի կամ սղվում: Այդ մի կողմից արտահայտվում էր հին հայերենից ավանդված բառերում, ինչպես, օրինակ՝ «զարբրի փութան» (Մր. Հեր. 11բ), «կիսատար շուր ի վերայ մարմնայն և ի դիտոյն շափէ» (ն. տ. 28բ), «սերիկի ուսուց» (ն. տ. 31բ), «...ի մտին ջուրն արի» (ն. տ. 42բ), «ի վերայ ստին և լեղզին պահէ» (ն. տ. 45) և այլն, և մյուս կողմից՝ այլ լեզուներից մուտք գործած օտար բառերում, ինչպես, օրինակ՝ «լինի որ վկայովն խոսմն զիմախոս է... վկայութիւն երես ի խամբն» (Անս. 29), «...և թէ վկայն լիծ (-ճորտ) չլինի, նա վանս (<վանս) այնոր շմայ՝ չիշվէ վկայութիւն ի վերայ լինն» (ն. տ.), ինչպես նաև արանից կազմված լեզուների «ճորտություն, հպատակություն» բառում և այլն: Բառաթիւքման ընթացքում ի-ի փոփոխության այս ստանձնահատկությունը, որ գործում էր միջին հայերենի տարրերակների մեծադույն մասում, ժառանգություն էր հին հայերենից:

Ի-ի պատմական փոփոխությունը արձանագրվում է միայն մի ուղղութեամբ: Դա ի>ե հնչյունափոխություն է, որ արտահայտվում էր նաև գրովյանում: Այն շարք օրինակներ. «Ատանար սկզբնադրակ յուսան» (<լուսանիչ) և շնորհագիր ստոս այս» (ԺԿ ՏՃ. 93, 1313 թ. Աղթամար), «...ցանկացից եղաք այսմ յուսանը... բանից» (ն. տ. 98, 1313 թ. Կիլիկիա), «զբարի շատանըն» (Գ. Հովս. ՏՃ. 814, 1221 թ. Տարսոն), «երկի ընդ Միջագետաց աշխարհս ի վար մեհնի Տեղես» (ն. տ. 878, 1231 թ. Հռոմիկ), «Ուղի հաւատով» (Ձեւ. 8029, 232բ), «Ճամբորտ է այս բանս, ուղից, հավատայ» (ն. տ. 233բ), պիղծ>պղծ (ն. տ. 232ա, 236ա), «ի պիղծն փախի» (Անս. 29), «երևնայ ի մարզն պիղծ նշաննի» (Գրիգ. 50), «վասն վկայ լինելոյ ուղեղ բարդութեանն» (Մանր ծմնկ. II 39, XIII դ. Կիլիկիա), «լցեալ պիղծ ճորով» (ն. տ. 46), «թոնն մեծին Մագսուրսի» (Դճվ. III, Վայոց ձոր, 50, 1283 թ.) և այլն: Գրովյան այս ձևերը, հատկապես ուղից, պիղծ, հանդիպում են շատ հաճախ, տարբեր սկզբնագրություններում: Ի>ե հնչյունափոխությունը առավել հետևողականորեն է արտահայտվում Ամիրգովյանի «Ստանման բժշկութեան» հեղինակային ձեռագրում. մի բանի օրինակներ՝ «Եւ թին մն ջրացն մարդուն» (է: շեղ > (էլ), «զիտացիր որ ձեծեց (<ծիծ) թուլ միս է» (լզ), «պիղծ հիւրնգութիւն բերէ» (լթ), «տապաղային զարութիւնն այն է, որ ինքն տեսութեան հորուն ի կնց է (լ), «զիտացիր որ հարմինն ի վերայ պահարանի շատ գրանք են շինել, ես դամենն կարգու իրեն» (հզ) և այլն: Այս նույն բնագրում առաջերկայ անմտնությունը ունենք ճիւղս>հուսուս, այն բանից հետո, երբ ավարտվել է ի>ու հնչյունափոխությունը. օրինակ՝ «Եւ աշունն քամի փչէ հուսուսայ» (ձզ), «զարունն ի ժիր հուսուս քամի փչէ» (ձէ), ինչպես նաև «հուսուսային քամի փչէ» (ձզ) և այլն:

20. Վերը՝ հին հայերենի ձայնավորներն արտահայտող տառերի հնչյունական արժեքի բնութիւյն ժամանակ արդեն խոսք է եղել այն մասին, որ ե զիրը միջին հայերենի տարբեր գրանշարումներում ստացել էր հնչյունական տարբեր արժեքներ: Բանի որ նրանով արտահայտված հնչյունը ներկայացնում էր հին հայերենի բաց Է ձայնավորը, ուստի և նրա արժեքի մեջ կատարված փոփոխությունն ամբողջովին վերաբերում էր այդ ձայնավորի հնչյունափոխությանը: Վերը շարադրվածը շիրկնելու համար հիշեցնենք միայն, որ կքն միջին հայերենի որոշ տարրերակներում հին ե-ն բառի մեջ գրաված բոլոր դիրքերում ուներ Է պարզ ձայնավորի արժեք, այսպ այլ տարրերակներում բառակազմում վերածվել էր յԷ երկհնչյունի, նախապես ունենալով լԷ երկբարբառային արտասանություն: Կային նաև միջին հայերենի այնպիսի տարրերակներ, որոնց մեջ բառավորում ևս, շեշտի տակ, ե-ն ուներ երկբարբառային երանգ:

Թեքես հենց այս հիմքի վրա է, որ հին ե-ն հայերենի մի շարք բարբառներում հնչյունափոխվել է ի-ի, լԷ-ի երկբարբառային արտասանության մեջ գրավառությունը տալով ի բաղադրիչին: Այս փոփոխությունը արձանագրվում է նաև միջին հայերենում: Թեև այստեղ այդ օրինակափոխությունը ենթարկվում են ոչ մեծ թվով բառեր, բայց դրանցից մի բանիսի հանախակնությունը բազմակն մեծ է: Նկատելի է նաև, որ արձանագրվող օրինակներում հնչյունափոխությունը տակ է Ի-ից առաջ ընկած դիրքում: Օրինակներ. «Բարձար ի յնն իրիցանու գրածն» (Դճվ. I, Անի, 24, 1269 թ.), «տեսայ զԱնոյ իրիցանուս» (ն. տ. 23, 1280 թ.) «իրիցուն որդոյն» (ԿՂ. Հաղթ. 217, 218, ԺԳ գ.), «Գագիկ իրիցոյ» (Դճվ. III, Վայոց ձոր, 49, 1149 թ.), «իրիցակին վախճանի»

նափոխությունը, որը նույնպես կենդանի է մեր ժամանակակից մի շարք բարբառներում, ապա զրա առաջին վկայությունը հասնում է մինչև X դարը:

Վերը նշված Մարգարե անձնանվան բառավերջի է-ն մի շարք բարբառներում ընկնելով՝ տվել է Մարգար, այժմ շատ սովորական, բառանկեր: Միջնագրչյան աղբյուրները այս ձևի համար նույնպես ունեն վկայություններ, այսպես, օրինակ, «Նսուտ զրկ սուրբ անտարանս յիշատակ ինձ... էրէց եղբարաց իմոց Քումրի և տէր Մարգարին» (ժԵ ՏՃՏ. I, 336, 1427 թ. Շամբի-ձոր գավառ), «...յիշատակ ինձ, և ... Տիրաբարին, Քրիստոսաբարին, Իսրայէլին, Մարգարին, Քոռոսին...» (ժԵ ՏՃՏ. III, 128, 1488 թ.), «յիշատակ ... մաւրս Զմուրթին. և եղբարս Մարգարին» (ն. տ. 362, 1424 թ.) և այլն:

22. Ա-ի կրած փոփոխության մասին մասամբ արդեն խոսվել է ձայնավորներին արտահայտող տառերի հնչյունական արժեքի քննության ընթացքում: Այդտեղ, ճիշտ է, շեշտը հիմնականում գրվել է այն բանի վրա, թե միջին հայերենի շրջանում հին հայերենի ու հայոց հնչյունական ինչ արժեք էր արտահայտում, բայց հենց այդպիսի հարցադրումն էլ հնարավորություն էր տալիս բացահայտելու ո-ի, որպես ձայնավոր հնչյունի, դիրքային մի շարք փոփոխությունները: Ըստ որում, ինչպես ցույց էին տալիս փաստերը, փոփոխության ընթացքը ամբողջ միջին հայերենի համար միասնական և ընդհանրական չէր: Հայերենի որոշ տարբերակներ, ինչպես բառակերպում, այնպես և բառամիջում, ո-ին տալիս էին նույն օ արժեքը, որ նշանակում է, թե զրանց մեջ հին օ հնչյունը փոփոխության չէր ենթարկվել: Դեռ ավելին՝ այստեղ հին ո-ն և ա-ից առաջացած ո-ն նույնանում էին: Տարբերակների մի այլ խումբ այլ կերպ էր սովորաբարում ո-ն, թեև այստեղ ևս փոփոխությունների առկա վիճակը միասնական չէ: Ենթադրելի է միայն, որ այս խմբի բարբառներում ո-ի հնչյունափոխության ընթացքը նախապես եղել է միասնական: Այն ամենուրեք

սկսվել է ո-ի ՍՕ երկբարբառային արժեքավորումը՝ բարձր մեջ զրաված բոլոր դիրքերում և այնուհետև խմբի առանձին տարբերակներում ստացել զարգացման տարբեր ընթացք: Այդ հիմքի վրա խոսվածքների մի մասում բառակերպ ՍՕ-ն զարգացել է ՎՍՕ-ի կամ պարզապես՝ ՎՕ-ի. այդ անցումը միանգամայն արդարացիված է, քանի որ հայերենի համար միանգամայն օրինաչափ է Ա>Վ հնչյունափոխությունը ձայնավորից առաջ: Այս դեպքում ո-ի երկբարբառային արտասանությունը մեծ մասամբ պահպանվում է նաև բառամիջի դիրքում: Այլ բարբառներում նախնական ՍՕ երկբարբառային արտասանությունից զարգացել է Ա, ինչպես բառակերպի, այնպես և բառամիջի դիրքերում: Գրան թեքին նպատակ է երկբարբառի հնչերանգի մեջ կատարված փոփոխությունը. հավանաբար այն ստացել է իջնող երկբարբառի երանգ, որի ժամանակ արտասանության մեջ շեշտվել է առաջին բաղաբիշը և այնուհետև ամբողջապես պարզվելով՝ արդյունքում ստացվել է Ա պարզ ձայնավոր:

Ա-ի երկհնչյունային և երկբարբառային փոփոխության վերաբերյալ փաստեր, ինքնան որ այդ հնարավոր էր մատենագրական ավելի քան մեկ բերվել են վերը, այստեղ կանգ կառնենք հատկապես ո>ա հնչյունափոխության և այդ ձայնավորի այլ կարգի փոփոխությունների վրա:

Միջին հայերենի առանձին տարբերակներում կատարված ո>ա հնչյունափոխությունը հիմնավորվում է մի շարք փաստերով: Նախ՝ մատենագրության մեջ, թեև ցար ու ցրիվ, այս ու այնտեղ, բայց այնուամենայնիվ հանդիպում են բառանկեր, որոնց մեջ բառ կատարված հըն-

չյունափոխության ու հնչական վիճակի՝ ո-ն արտահայտված է ու գրով: Գա առավել ակնհայտ երևում է, երբ համեմատում ենք այնպիսի բառանկեր, որոնց մեջ հերթագայվում են ո || օ || ու դրերը. այսպես, օրինակ՝ ամառ սովորական գրությունը զուգահեռ ունենք նաև ամառ || ամառ (ժԳ ՏՃՏ. 146, 1318 թ.), ամառ (ն. տ. 98, 1318 թ., 104, 1314 թ., 123, 1316 թ. և այլն), կարողիկ բարձր դիմաց՝ կարալիկ (ԳԼ. 2այր. 154, 1024 թ.), կարալիկ (Գ. 2այր. ՏՃ. 766, 1214 թ.), կամբուն-կամբուն (Գ. 2այր. ՏՃ. 564, 1193 թ., 618, 1198 թ. և այլն), կամբուն (ն. տ. 632, 1198 թ., 631, 1198 թ., 901, 1233 թ., ինչպես նաև Սմբ. Տարեքի՝ ամենուրեք և այլն), նաև կարուն (ժԳ ՏՃՏ. 68, 1310 թ.), Քումս կամ Քովմս-Քումս (Գ. 2այր. ՏՃ. 510, 1185 թ.), Քումս (ժԳ ՏՃՏ. 42, 1306 թ., 132, 1317 թ. և այլն, և այլն): Այսպիսի նուագրություններ ունեն նաև այլ բառեր. ինչպես՝ կարողիկու-կարալիկու-կարալիկու, կարողիկուսիրին-կարալիկուսիրին-կարալիկուսիրին, Գոմար-Գոմար-Գոմար, նույնիսկ փոխառյալ բառերում՝ ջամար-ջոմար (Զեռ. 8029, 231 ր. 1376 թ.) և այլն: Ավելի հին վկայություններ են ո>ա հնչյունափոխության հետևյալ օրինակները՝ «Աստուած բուրւ (՝Յողու) գուր (՝Հոյր) գանցանք» (Գ. 2այր. 235, 1058 թ.), «յառաջնորդութեամբ հար Քումսուտ» (ն. տ. 246, 1064 թ.), կազարյան ճեմարանի գլխաւարանի անթիվակիր մի հիշատակարանում՝ «մեղացա քուլուսիրն ... Տեք պագուն Սիմաունի» (Գ. 2այր. ՏՃ. 85) և այլն:

Այլ հնչյունափոխությունն առավել որոշակիությամբ հանդես է գալիս Գողթան գավառում գրված ձեռագրերի հիշատակարաններում: Այստեղ բացի Գոմար, Քումս, Մուսէ և այլ տարածված անուններից, որոնք հանդես են գալիս և այլ վայրերում գրված սկզբնաղբյուրներում, ունենք նաև հետևյալ վկայությունները. «...նորոգեցաւ ի Քոմի ՔՅԶ (1467), ի Քազարուսիրն պարուն Զանհանջ միբզախ, ի հայրապետութիւնն տեսն Ստեփանոսի արհն-պիկոսպոս Կուլքան գաւառս» (ժԵ ՏՃՏ. II, 256, 1467 թ. Յճան), «...յիշեցէք յաղաթս Տմաուն աբեղն ... փաստոր պատուով և ծածկուցով պահէ զուրոր տեսարանս» (ն. տ. 420, 1477 թ. Գողթան գավառ), «ցանկացող եղեալ աստուածային պատուբանիս բահանալ ումն կրանաւոր ճգնաշտեսակ տէր Կաստանգ» (ժԵ ՏՃՏ. III, 480, XV դ., Ազուլաց վանք): Իբրևով վկայություն հնչյունափոխությունը արտահայտված է ընդգծված պարուն>պաուն, Կուլքան>Կուլքան, Տմաուն>Տմաուն, ծածկեց>ծածկուց, ումն>ումն բառերում, որոնք ինչպես շեշտի տակ են, այնպես և շեշտից դուրս, ինչպես բառամիջում են, այնպես և բառակերպում: Միջին հայերենի այս տարբերակում, ինչպես արդեն նշվել է վերը, հին հայերենի ու-ն էլ իր Տերթին հնչյունափոխվում էր օ-ի (գրություն մեջ արտահայտվում էր ո-ով), որը ավելի հավաստի է դարձնում ո>ա հնչյունափոխության գոյությունը:

Կատարված հնչյունափոխություն օգտին են խոսում նաև այլ փաստեր. մասնավորապես այնպիսի բառանկեր, որոնք խիստ փոփոխության ենթարկվելով է արտասանւոյն այլևս նման չլինելով իրենց նախավոր ձևերին և վերջիններիս հետ իրենց ունեցած կապի մթաղմամբ, մատենագրության մեջ հանդես են գալիս միայն հնչյունափոխված վիճակով: Այսպես է, օրինակ, մինչ որ կապակցությունը, որը միջին հայերենում հանդես է գալիս այլևայլ ձևերով, նախնականի ավելի մոտ է միջնոր ձևը, որն արդեն ունի ո>ա փոփոխությունը. օրինակ՝ «Եր ահուայն ի տեղն մնայ և խիստ ցաւ լինի և մինչև

ի-ի. «գիտեմ, ալք, քեզ չէ դիմար, ազատել գհիւանդս ի ցուէն» (Խաչ. Կեչ. 140), «թև շոր լինի՞ դիմար է զրուցելու» (Անիրգ. Ուս. բժշկ. 19)։ ձմել>ծիմել՝ ետրեթաց թերի անմանությամբ. «թաղթ և մաշ և վլիտան, որ է ծիմել» (Մխ. Հեր. 40ա), զրի>զիրի՝ ետրեթաց լրիվ անմանությամբ. «վասն այն դիպաւ ուտրս ի բարի, որ աւելի չանք չի զիրի» (Ֆր. 288), նույնը նաև՝ ճնի>ճնիրի. «զիր չուրն լնդի է արել այնոր համար, որ ճանճ է ճնիճի որ մէջն թմո» (Անիրգ. Ուս. բժշկ. 19), «եւ թէ շատ լինի և բիշ գիճութիւն՝ զուշակ է ճնիճի լի- նիս» (Ն. տ. հո) և այլն։

Նկատուելի է Բ-ի հնչյունափոխությունը բառակցումը և բառամիջում՝ ստ. շա կապակցություններից առաջ. ինչպես՝ «սամաճորսն յխտակի» (Մխ. Հեր. 26ա), «կաթն սր և յխտակ» (Ն. տ. 41ա), «տալ... գիւրչիփարս ի ճանկերոյն յխտակած» (Ն. տ. 50), «և անց յխտակի ի պղտորութենն... պղեի նուշն ձե- ծնն ի մէջն արկանն, շուտ յխտակի» (Վաստ. 5), «զիւնքն նոյնպես յխտակ սեռանեա» (Ն. տ. 11), «քակեցք գիւտեմարանս իմ և մեծագինս շինեցէք» (Ձեռ. 8030, 81ա), «թէ ևս յայս աւետարանս յոսկիչն յիշատակել եմ ու անփոյթ ստենի, նա սատուած դիմ մեղքն ոչ թողու... յիշատակալվեմ ամօթով լինին» (ԺԵ հՃ. I, 228, 1419 թ. Ոստան) և այլն։

Սակայն այս փոփոխությունները մասնակի բնույթ ունեն և հատուկ են եղել միջին հայերենի բանավոր-խոսակցական տարրերակների մի մասին միայն։

26. Զայնավորների պատմական փոփոխության վերը նկարագրված երե- վույթները, անշուշտ, կատարվել են տարբեր պատճառներով։

Բառական ուղիղ ձևերում ձայնավորների սղման կամ Բ-ի փոխվելու հիմ- նական շարժառիթը անպայմանորեն եղել է միջին հայերենի շեշտադրության քունսնձահատկությունը։ Հենց այն հանգամանքը, որ երկվանի վաղամիջակ բուռնի թեման ժամանակ, բացի ի, ու ձայնավորներից այդ փոփոխվածն էին ենթարկվում նաև մյուս ձայնավորները, հիմք է տալիս ասելու, որ բառա- կան ուղիղ ձևերում ևս բառամիջի ձայնավորների սղումը կատարվել էր շեշտի ազդեցությամբ։ Ըստ որում այս հնչյունափոխությունը խիստ տրիպական է կի- լիկյան հայերենի և միջին հայերենի արևմտյան այլ տարրերակների համար։ Այստեղ թևն ա և է ձայնավորների հնչյունափոխությունը արձանագրվում է սակավ օրինակներով, բայց դա բացատրվում է ո՛չ թե օրինաչափության ան- հետեղարկանությամբ, այլ միայն նրանով, որ այվայ գիրքում, ա-ի համեմա- սությամբ, մյուս ձայնավորները ավելի բիշ հաճախակիություն ունեն։

Բառակցումը կատարված փոփոխությունները հիմնականում արձանա- գրվում են հին ձայնորդներից առաջ ընկած դիրքում։

Ձայնավորների հնչյունափոխության մյուս զեպերը պայմանավորված չեն շեշտով։ Դրանց մի մասի մեջ կատարված փոփոխությունները պարզապես արդյունք են հարևան հնչյունների ազդեցության և այս իսկ տեսակետից էլ դիտելի են որպես փոխազդեցական կամ դիրքային փոփոխություններ։

Միջին հայերենի բանավոր-խոսակցական որոշ տարրերակներում նկա- տուելի է նաև մի այլ օրինաչափ երևույթ, կեր ձայնավորների փոփոխությունը չի կարելի բացատրել ո՛չ շեշտով և ո՛չ էլ հարևան հնչյունների ազդեցությամբ։ Այդ հատկապես վերաբերում է ա>ն, ո>ու, ե>ի, ինչպես նաև ե>ա, ո>ո, ի>ե փոփոխություններին։ Այս շարքերի համադրություններից երևում է, որ

եթե մի զեպում ավելի լայն բացվածքի ձայնավորներն են փոխվում ավելի նեղերի, ապա մյուս զեպում կատարվում է հակառակը՝ նեղ բացվածքի ձայ- նավորներն են փոխվում ավելի լայն բացվածքի ձայնավորների. քնց որում, այդ անցումները կատարվում են նույն շարքի սահմաններում, այսինքն՝ երբ փոխարկվող է փոխարկված հնչյունները մյուս են արտարարման նույն ոլոր- տում։ Այսպես, ո-ն և ո-ն, որոնք փոխարկվում են մեկը մյուսին՝ նույն կոնս- լեզվային շարքի շրթնայնացած ձայնավորներ են, այն տարրերությամբ, որ ո-ն ո-ի համեմատությամբ ունի պղեի վերին աստիճանի և ավելի նեղ բաց- վածքի արտասանություն։ նույն ավելի փոխում է նաև ե-ն և ի-նի, որոնք որպես առուցնային շարքի ձայնավորներ իրարից տարբերվում են լեզվի բարձ- րության և բացվածքի աստիճանով։ Մյուսնց մեջ թերևս բացառություն կարելի էր համարել ա>ե և ե>ա զույգերը, բայց այստեղ էլ պետք է կարծել, որ ա՛յն ն-ն, որ տեղաշարժվում էր է-ի, ոչ թե կոնսոլեզվային ո-ն էր, այլ նրա առաջ- նեղեզվային ստորին բարձրացման տարրերակը՝ ճ-ն, որը նույն շարքի միջին բարձրացման Ե-ի հետ գտնվում էր նույնպիսի հարաբերության մեջ, ինչպիսիք էին մյուս զույգերը։

Ձայնավորների այս տեղաշարժերը որպես համակարգային օրինաչափու- թյուններ շատ տարածված ձևով են արձանագրվում միջին հայերենի սկզբնաղ- բրյուններում, թեև դրանցից մեկը (ո>ու և ու>ո) շատ որոշակիորեն վկայվում է սղույնայնում է Գողթան գավառում։ Այնուամենայնիվ, ինչպես նաև, այնպես և մյուս հնչյունափոխական երևույթների արժեքը կաշատում է նրանում, որ դրանք առաջին պատմական վկայություններն են այն փոփոխությունների, որոնք այժմ արձանագրվում են մեր ժամանակակից բարբառներում։

ԳՐԱՐԱՐԻ ԵՐԳՐԱՐԱՆՆԵՐԻ ՓՈՓՈՒՅՈՒՄՆԵՐԵՐ ՄԵՂԵ ԱՅՏԵՐՆԵՐՈՒ

27. Գրաբարում, ձայնավորներից բացի, վանկարաների արժեք ունեն նաև երկբարբառներն ու եռաբարբառները։ Գրանք ձայնավորների կամ ձայ- նավորի ու ձայնորդի սերտ զուգորդությամբ արտաբերվող բարձր հնչյուններ էին։ Գրաբարի երկբարբառներն էին՝ ալ, աւ, եա, իւ (իւ), ոյ, տ (վերջինս միայն հոլովական վերջավորության մեջ). եռաբարբառները՝ եայ (իայ՝ միայն բառում), եաւ, ալ (վերջին երկուսը նույնպես հիմնականում հոլովական վեր- չավորության մեջ)։ Երկբարբառներից ալ, աւ, իւ (իւ)–ը շեշտի նկատմամբ ինքուր էին, այսինքն՝ նրանք բառական անկաս ձևերում կարող էին լինել ինչ- պես շեշտի տակ, այնպես և շեշտից դուրս, այնպես որ շեշտազուրկ լինելիս հնչյունափոխության չէին ենթարկվում. օրինակ՝ վայտ–փայտի, վայտակերտ. ձայն–ձայնի, ձայնաղու. ալգուտ, ալգուաւէր. կարաւտ, կարաւաւաւաւ, կա- րաւաւաւնէ. հիր–հիրաւմեւար և այլն։ Մրանց հակառակ, եա, ոյ երկբարբառ- ները և եայ, եաւ, ալ եռաբարբառներ ունեն որոշակի դիրքային կիրառու- թյուն. հանդես էին գալիս միայն բառավերջ շեշտալ վանկար և շեշտի նկատ- մամբ զգալուն էին, այսինքն՝ բուռնթեման կամ բառարարդման ու ածանց- ման ժամանակ շեշտակորույս լինելով՝ հնչյունափոխվում ու վերածվում էին պարզ ձայնավորների, այսպես, օրինակ՝ առեւան–առեւնի, առեւանայեւ. մա- տեւան–մաւաւեւնի, մաւաւեւնալիր. երեւոյր–երեւոյրի, երեւոպկան. ծածկոյր–ծած-

կայրի, պաշտանեայ-պաշտանելի, աշուայ-աշուի և այլն: Շնչոյ հետ կազմած այս առանձնահատկությունն է հենց, որ որոշակի դեր է խաղացել երկրաբարրաների ու եռարարրանների մի մասի հետագա պատմական Նշյունափոխութեան համար:

Արդեն իսկ գրարարի դասական շրջանում նկատելի է որոշ երկրարրանների փոփոխություն (ընկեաց>ընկէց): Գրարարի ետզասական շրջանում սկիզբ առած երկրարրանների ու եռարարրանների պարզ ձայնափորի վերածվելու տնեղենցը հետագա դարերում սկսում է ավելի ծավալվել և ընդհանրանալ՝ հայերենի բանավոր խոսակցական լեզվի համեմատի ծավալվել և ընդհանրանալ՝ հայերենի մամանակաշրջանում այդ փոփոխությունները, որոշակի օրինակափոխություններով, արդեն ավարտված իրողություններ են: Ըստ որում, բանավոր-խոսակցական լեզվի դրսևորումներում հիմնականը հին երկրարրանների և եռարարրանների վերացումն է, նրանց վերածվելը պարզ ձայնափորների, այն զեպքում, երբ բանավոր լեզվում կատարված փոփոխությունների հիմքի վրա իմաստավորվում են դրանց նոր արտասանությունները որպես Նշյունական կապակցություններ՝ հատկապես հին գրական լեզվի և նրա աղբյուր-ձայնարկներում գրավոր լեզվում մուտք գործած բառաձևերի մեջ: Այսպիսով, բննաբերվող լեզվական շրջանում գրարարի երկրարրաններն ու եռարարրանները այլևս հին որակը չունենին, նրանք ավանդական արտասանությամբ գիտակցվում էին որպես Նշյունական կապակցություններ, իսկ բանավոր-խոսակցական լեզվում պարզապես վերածվել էին պարզ ձայնափորների:

Քննենք դրանց փոփոխություններն առանձին-առանձին:

28. Գրարարյան այ երկրարրառը միջին հայերենյան տեքստերում այնտեղ, որտեղ արտահայտվում էր ավանդական դրությունը, բնկալվում էր որպես երկհնչյուն այ: Հատկապես կիրիկյան դրական հայերենում, որի վրա առավել զգալի է հին լեզվի գրավոր ավանդների ազդեցությունը, բնագրերում առավելություն է արվում այ գրությունը, ինչպես՝ այս, այդ, այն, այն, այսոր, այսոր, այնոր, հայր, մայր, կորայր, այրուկին, այրիկ և այլն, թեև այստեղ ևս նկատելի է խոսակցական լեզվում կատարված փոփոխությունների ներթափանցում գրավոր լեզվի մեջ: Գրարարյան այ երկրարրառի այ երկհնչյունային արժեքը բացահայտվում է հատկապես փոխառյալ բուրերում, որոնց մայր ձևերի ai || ay երկհնչյունները հայերենում առանցարժեքում են այ-ով ինչպես, օրինակ՝ ֆր. plaide—բայթ, որից և բլայթի օգտատրանում պաշտպանվել» (Անս. 19, 23, 33), հֆր. maistre—մայստո (Մմբ. Տարեգ. 188, 199, 218; Կիրիկյան գաղնազերում), արբ. maydan—մայտան «Տրապարակ» (Մմբ. Տարեգ. 51), հֆր. bail—պալլ «պարտի փոխառորդ» (Անս. 9), որից պալլորիքն (Անս. 11, 17), հֆր. saisie—սայգայ, որից սայգի «զբաղ զնչ» (Անս. 23, 57), հֆր. faillier—ֆայլի «դատի մեջ պարտվել» (Անս. 61, 63) և այլն:

Անշուշտ, մատենագրության մեջ հանդիպում են նաև այնպիսի բառաձևեր, որոնց մեջ այ-ը ակնհայտորեն երկհնչյունային կամ երկրարրառային արժեք չունի, ինչպես հետևյալ բառաձևերում՝ առնալույստանո (Գ. Չովս. հձԿ. 556), պատմայգիրք (ն. ա. 975), դերայհուշակ (ն. ա. 36), սրբաշուք (ն. ա. 45), համայլուշուշ, մեղսալարախչ (ն. ա. 49), աստուածայազհ, աստուածայնուազ, բազմաշարար (ն. ա. 77) և այլն, և այլն: Նման օրինակներում յ-ն հավելուական է, և ինչպես երևում է, դրվել է բարբոթությունների մեջ և հոգակապից հետո և պարզապես սխալ գրություն է, չլայնամանավորված ոչ մի Նշյունափո-

փոխական երևույթով²²: Այս տիպի գրություններում յ-ի առկայությունը, թերևս, պետք է բացատրել նրանով, որ բարբոթյան առաջին եղբր և հոգակապի հետ գիտակցվել է որպես մի ամբողջություն և վերջում ստացել չ՝ ըստ ուղղագրական այն կանոնի, թե բառավերջի ա-ից հետո միշտ գրվում է կիսաձայն չ:

Հին գրական հայերենի այ երկրարրառը իր երկհնչյունային արտահայտությունից բացի, մատենագրության մեջ հանդես է գալիս նաև պարզ ձայնավորի արժեքով: Դա պատմականորեն կատարված փոփոխություն է, որ տեղ էր ունեցել հայերենի կենդանի-խոսակցական դրսևորումներում և իր արտահայտությունն էր ստացել նաև գրավոր լեզվում: Կիրիկյան հայերենի մեջ նման փոփոխությունները գրական լեզվի նորմա չեն. գրանք գրավոր լեզվում արձագանքներ են բանավոր-խոսակցական լեզվում կատարված Նշյունափոխական տեղաշարժերի: Այնուամենայնիվ, այն, ինչ հետագայում որպես օրինաչափ երևույթ մուտք է գործում գրավոր լեզվի սահմանները, արձանագրվում է նաև այս շրջանում: Դեռ ավելին, մատենագրական փաստերը ցույց են տալիս, որ այ երկրարրառի (և առհասարակ բոլոր երկրարրանների) պարզ ձայնավոր վերածվելը սովորել էր միջին հայերենի նախորդ շրջանում:

Այ-ի պատմական փոփոխությունը սկիզբ է կրել հին հայերենի և երկու հիմնական ուղղություններով. աչ>ա և աչ>լ: Փաստերը ցույց են տալիս, որ առաջինը ծավալվում է օրինաչափի է դառնում առավելապես արևմտյան, իսկ երկրորդը՝ արևելյան բարբոթներում: Գրական լեզվում այդ փոփոխությունները նախապես թույլ արտահայտություն են ստանում. հետագայում ավելի համախանում են դրանց գրավոր վկայությունները: Բերենք օրինակներ նախ աչ>ա Նշյունափոխության վերաբերյալ. այսպես՝ «զպարսն Սիրն» (Գ. Չովս. հձ. 235, 1058 թ. Կիրիկյա), «իշչուշիբ... և մաբ իմ» (ԺԳ հձԿ. 27, 1304 թ. Կիրիկյա), «գտտացող սարս... գաղը հարպան Վրթանէս... Վրթանէս հարպանը ընչից խնդրեաց... Ի Վրթանէս հարպանիս ազգէ... Ի հարպան Վրթանիսուս» (ն. ա. 421—422, 1356, Վրիմ), «տղ եղբար» (Գ. Չովս. հձ. 591, 1195 թ.), «Ես որ կարգալ և ընդօրինակէր» (ն. ա. 686, 1201 թ. Երզնկա), «Որք կարգալ գիս կարգալիս իշնցեղք» (Գ՜՜՜. 1, Անի, 7, 1222 թ.), «Կանգնեցի գահես գաս» (ԿՂ Սանահ. 114, 1181 թ.), «զզոգրեք վարէ և հանէ յիրմէ» (ՄԹ. Չեր. ձև. 416, 24ա), «Եթէ որ մշակ վարձէ, ու առանց խնամոց հանցալ շատ հայածնեղ է բան» (ՄԺ. Գառ. 18, վերջինիս համար ճմմտ. նույնի հայցը ձեղ է 9, 15, 21, 26, 27 և այլն), յերկանէ (<երկայն), փածղան (<փաժաղան), վարկ (<վարկել), լանէ (<լայնք), վար (<վայր), աս (<ասյ), հանց և այլն՝ բժշկապետ Գրիգորիսի աշխատության մեջ, թեև պետք է նշել, որ այստեղ ևս, ինչպես միջնա-

²² Տարբերակ է, որ կարտք վիսայուշեով այս կարգի գրությունները (երս մոտ՝ աստուածայազ, զգալարեակ, ձեռնաշրջեց), որան և կովան է գարնում ապագուցելու կիրիկյան հայերենում աչ>ա Նշյունափոխությունը: Նա կարծում է, որ կեն նման բառաձևերում այ գրության մեջ յ-ն համր է, և այ-ը ամբողջությամբ մենարարրառի արժեք ունի, այս կիրիկյան հայերենում այ երկրարրառը արտասանվում էր a (անս. KATSI, Եղվ. աշխ. էջ 23): Այդ մտքը սպառնացելու համար նա վերցնում է նաև բառավերջի զերբը, որ համար, գրարարից ավանդված բուրերի մեջ, բառավերջի յ-ն (ա-ից հետո) գրություն մեջ բաց է թողնվում, սակայնով նույն բուրի այ-ով և ա-ով զուգարբություններ (ձայնայ|| ձայն, բահանայ|| բահանա, Մմբառայ|| Մմբառա և այլն): Սակայն պետք է նկատել, որ բառավերջի բաց վանկում այ-ը երկարբառ չէ, և այս պերբում յ-ն պարզապես ընկել է. Իսկ որ կիրիկյան հայերենում սուր էր ունենել այ>ա Նշյունափոխություն, հատկապես նրա բանավոր-խոսակցական տարբերակում, ստացուցվում է անմիջական փաստերով:

ասորոց բառակնի ու-ի փոխարեն գրված է ա: Նշանակում է ա>օ Տնչունա-
փոխության առաջին վկայությունը հասնում է մինչև IX դարը: Հարորդ՝ X դա-
րից Ա. Ա. Աբրահամյանի կողմից բերված օրինակներն են՝ պաշտոնեայի և
վառոտ բառակներ²⁵ (ավանդական պաշտոնեայի և վառոտ և՛ների գիմաց),
որոնց մեջ ա-ը ներկայացված է ո-ով: Սրանց վրա կարելի է ավելացնել
9ՏՏ թ. մի ձեռագրի հիշատակարանում հանդիպող յուզածոյ օրինակը («բան-
զի ոչ ձեթի ի պարզ և յուզածոյ ի վնաս սկարտութիւն անգար» Գ. Հովս. Հձ. 152), որտեղ նույնպես ա ներկայացված է ո-ով: Սրանց վրա կարելի է նաև հակասակ տա-
րտահանության միտումը, երբ ա-ը գիտադիցվելով որպես ո ձայնավորի ար-
տահանման նշան, ավանդական ո-ի փոխարեն գրվում է ա, ինչպես, օրի-
նակ՝ յազգամուկի (փոխ. յոզնամուկ), երբն անգամ վիչայված 988 թ. գրու-
թյամբ մի ձեռագրի հիշատակարանում (չչազգամուկ և անարժան ժառաջ...
յոյժ յազգամուկ էի» Գ. Հովս. Հձ. 153)²⁶: XI դարից կարելի է հիշել հետևյալ
օրինակները. «քնձահաց 3(300) զանհկան օր կարալիկս իշատակը» (ԳՂ.
Հարք. 154, 1024 թ.), «գժորտս զյազգամուկս իշեհսէրք» (Գ. Հովս. Հձ. 220,
1036 թ.) և այլն:

Վերը ասվեց, որ ա>օ Տնչունափոխությունը ավելի վաղ կատարված
լինելու հիմքեր ունի, բան մատենագրական փաստերն են վկայում: Այդ են-
թադրությունը նկատելի ունենք ո՛չ միայն այն, որ լեզվական ամեն մի նոր երե-
վույթի դրի առմանը միշտ նախորդում է նրա առաջացման և կայունացման մի
որոշակի շրջան, այլև այն, որ սկզբնաբարձրերում արձանագրվում է ա-ի
այլ կարգի մի փոփոխություն, որը ա>օ Տնչունափոխությունը զարձանում է
ավելի հին: Դա ա-ի փոխարեն ա-ի առկայությունն է:

Հայտնի է, որ հայերենի մի շարք բարբառներում, այդ թվում նաև միջին
հայերենի որոշ տարբերակներում, ձայնավորների նեղացման ընդհանուր պրո-
ցեսում օ-ն Տնչունափոխվում է Վ-ի (կոկ>կուկ, կոկիկ>կուկիկ): Բարբառնե-
րում նկատելի է նաև, որ այդ Տնչունափոխությունը ընդգրկում է նաև ա-ից
առաջացած օ-ն (ազալթթ>ազոթթ>ազութթ): Մի բան պարզ է, որ նախ կա-
տարվել է ա>օ անցումը, որի հետևանքով ա-ից ստացված օ-ն և նախնական
ա-ն դիտակցվել են որպես նույն Տնչուններ և ապա այդ հիմքի վրա ունեցել
հետագա փոփոխություն՝ օ>ւ: Սկզբնադր աբղյուրներում թևե շատ սակավ,
բայց օրինակներ կան ա (օ)>ու անցման համար. այսպես՝ «աստուներ
ածային նշանիս իշեի զհայր Սուփան» (ԳՏՎ. III, Վալոյց ձոր, 15, X դար),
«միաբանք Ա ժամ սամաննեցին օր 3ակորին տուրին» (ն. ս. 51, 1289—
99 թ.), «մի յուճարի զնոցայ խուսքն յսե(ա)» (Ձեռ. 8030, էջ 104ա,
1341 թ.), «(իշեցեք) և դմորուն (>մորուն) զՄէլէք խաթուն» (ԺԵ ՀձԿ. II,
224, 1464 թ. Շատվան գյուղ):

Եթե այս փոփոխության առաջին վկայությունը X դարն է, ապա պետք է
ընդունել, որ ա>օ փոփոխությունը շատ ավելի վաղ պիտի կատարված լիներ,
որի լրիվ ավարտից ու կայունացումից հետո միայն հնարավոր պիտի լիներ
օ>ու անցումը: Նշենք նաև, որ Վալոյց ձորը աշխարհագրական տեսակետից
անմիջապես հարում է ժամանակակից Զանգեզուրին, որի բարբառներում
խեռտ օրինակաբար են ինչպես ա>օ>ու, այնպես և ո>ու Տնչունափոխություն-

ները, ինչպես նաև Գողթան գավառին, որտեղ գրված միջնադարյան ձեռագրե-
րը փաստեր են տալիս ո>ու Տնչունափոխության վերաբերյալ:

Ինչպես արդեն ասել ենք, չնայած կատարված ա>օ Տնչունափոխու-
թյանը, գրություն մեջ երկար ժամանակ այն արժանակում էր արտահայտվել
առ առանձին, թեև այնտեղ, ուր նա ենթարկվել էր փոփոխության՝ արտասան-
վում էր օ: Գրության և արտասանության միջև առաջացած այդ հակասությու-
նը որոշակի զգվարություններ էր ստեղծում գրավոր լեզվի համար և այդ, հատ-
կապես նա պատճառով, որ բանավոր լեզվում շատ հեղեղերում ո-ով և ա-ով
արտահայտված Տնչունները համընկնում էին իրենց արձեղով, մինչդեռ գրու-
թյունը, որ հիմնված էր ավանդական ուղղագրության վրա, ստիպված էր տար-
բերակել դրանք: Սրան ավելանում էր նաև այն, որ հին ու-ի Տնչունական
արձեղք միջին հայերենի մի շարք տարբերակներում ուներ երկարաբառային
կամ երկՏնչունային բնույթ և լրիվ կերպով չէր համընկնում ա>օ-ի հետ:
Ժիշտ է, հայերենի որոշ դրսևորումներում ո-ն ուներ նաև օ պարզ ձայնավորի
արձեղք, բայց պետք է ենթադրել, որ այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ,
նկատի ունենալով ինչպես բառակարգի դիրքն ու բառամեջը, այնպես և բառի
միավանկությունն ու բազմավանկությունը, միջին հայերենի բոլոր տարբերակ-
ներում ա-ը և ո-ն նույն Տնչունը արտահայտել չէին կարող: Այս հակասու-
թյունների հաղթահարման պահանջով է, որ անհրաժեշտություն է առաջանում
ա-ից Տնչունափոխված ձայնավորը արտահայտել մի նոր տառանշանով, որի
համար վերցվում է լատիներենի օ-ն:

Գծվար է ասել, թե ե՛րբ, ո՞վ և որտե՞ղ առաջին անգամ գործածության
մեջ գրեց այդ տառը: Ընդունված է ասել, որ նորամուծությունը կատարվել է
XII դարում: Սակայն, եթե վստահելու լինենք փաստերին (քանի որ դրանք
սպաղիք աբղյուրներից են), ապա պետք է ընդունել, որ օ-ի առաջին վկայու-
թյունները հասնում են մինչև XI դարի սկիզբը: Այդ օրինակներն են, նախ՝
1007 թ. Մակեդոնիայում գրված մի ձեռագրի հիշատակարանում՝ «չաղօսը
իշեցեք» (Գ. Հովս. Հձ. 201), և ապա՝ հայոց Պետրոս կաթողիկոսի (Գեոտա-
կարձի) 1046 թ. գրած մի հիշատակարանում՝ «մեծա փափագնեօ էս որել»
(ն. ս. 231):

Օ տառի կիրառությունը պետք է կարծել, որ նախապես եղել է անհատա-
կան նորամուծություն: Մյուս կողմից ենթադրելի է, որ նրա մուտքը լուրջ դի-
մադրության է հանդիպել հայ լուսավորչական հոգևորականության կողմից՝
որպես սրբապոփոխություն սուրբ մեսրոպյան տառերի մեջ մի նորը, այն էլ լա-
տիներենը ընդունելի: Թեև այս է կողմ պատճառը, որ չնայած գրության և
արտասանության մեջ առաջացած հակասության հաղթահարման պահանջին
և վերջինիս լուծման նպատակով առաջարկված ու կիրառված տառափոխակին,
ձեռագրերում միայն հաս ու կեն օրինակներ են պատճառում ընդհուպ մինչև
XIII դարը, իսկ որոշ ձեռագրեր նաև XIV—XV դարերում համարունը նարու-
նակում են ավանդական ալ գրությունը: Միայն սկսած XIV դարից առանձին
ձեռագրեր (այն էլ, թեև, կապված ավյալ գրչի զավանաբանական պատկա-
նելության հետ) սկսում են հետևողականորեն կիրառել օ տառը: Որպես ընտ-
րված օրինակ կարելի է հիշել 1306 թ. IX դարի մի ձեռագրի հիշատակարանի
ընդօրինակության մեջ հետևյալ օրինակները՝ անհետադառելի, յոժարութիւն,
մտօր, հոսանք, արդեօր, օգտեաց, օգնականութիւն, աստանօր, աղօթից,
օրինակ, համոտօտարար, պարզեօր, ամօթ, գորութիւն, խօսեցայց և այլն, և

²⁵ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Եզվ. աշխատությունը, էջ 75:

²⁶ Անգ.

այն (Գ. Հովս. հձ. 617), կրք մտա կողմից, օրինակ՝ Ամբաստի Տարգրերի XIII—XIV դդ. ընդօրինակված ձեռագրում օ գրույթյան փոխարեն ամենուրեք աւ լ²⁷:

XIV—XV դարերից սկսած հազմահարվում է հին հայերենի աւ-ի ավանդականութունը, և փակ վանկի հնչյունափոխված աւ-ի փոխարեն ձեռագրերում սկսում են գրել օ: Որոշ գրիչներ նույնիսկ շափազանցությունների են հասնում. աւ-ի փոխարեն օ են գրում այնպիսի դիրքերում, որտեղ այդ հնչյունափոխությունը բացառվում էր (եյօ<էյաւ, մեծօ<մեծաւ և այլն):

32. Գրարարյան եւ երկրարարող, ինչպես մարդն սովել է, ունեւ բարի մեջ իր կայտն աղեր, այն հանգես էր գալիս սրայն շեշտի տակ՝ վերջնավանկում. բոտ որում, այդ դիրքը առկա էր ո՛չ միայն բառական ուղիղ ձևերում, այլև ստեղծվում էր փերականական վերջավորությունների մեջ, Բառաթեթման, բառարարգման եւ ամանցման ժամանակ՝ շեշտից առաջ ընկնելով, հնչյունափոխվում էր և պարզ ձայնավորի (ինչպես՝ սենեակ-սենեկի, սենեկապետ):

Միջին հայերենի շրջանում հայերենի խոսակցական տարրերակներում գրարարյան եւ երկրարարող հնչյունափոխվելով վեր էր սովել և պարզ ձայնավորի, որը գրույթյան մեջ արտահայտվում էր և || կ առերով: Պատմական հնչյունափոխություն այս երևույթը թերեւս պետք է կապել գրարարում եւ-ի շեշտից առաջ ե-ի փոխվելու հատկության հետ. հավանական է, որ այդ դիրքում կատարված փոփոխությունը այնուհետեւ սեղել է բառական ուղիղ ձևերին և հետագայում ընդհանրացրել Արդեն իսկ X—XI դարերի սկզբնադարի աղբյուրներում արձանագրվում են եւ-ի և հնչյունափոխվելու փաստեր, ինչպես՝ «Որդի Աշոտի սիւնեց (<սիւնեաց) իշխանի» (ԳՆՎ. III, վայոց ձոր, 13, X դ.), «Քողում, ասացեր» (ն. տ. 14, 931 Բ.), «Գրիգոր գրել է յետին կրթանաւոր» (Գ. Հովս. հձ. 193. Ժ—ԺԱ դ.) և այլն:

Այս հնչյունափոխությունը, չնչիս քանցանքով, ընդհանուր է ամբողջ միջին հայերենի, կամ ավելի ճիշտ՝ նրա բանավոր-խոսակցական բոլոր տարրերակների համար: Այն արտահայտվում էր.

ա) Բառական անկախ կամ ուղիղ ձևերում, ինչպես՝ «ոչ էի տղեկ բայից և բարեց» (Գ. Հովս. հձ. 680, 1201 Բ.), «այլ բանս մտա ամեաց արբանկն սատանայի» (ԺԲ հձ. 46, 1307 Բ.), «զրեցաւ մատենս այս» (ն. տ. 20, 1203 Բ.), «ի Բվականութեանս հալկապետ սեռի» (ն. տ. 92, 1313 Բ.), «մի սիրել զաշխարս ու կենեմ» (Ձեռ. 8029, 238ա, 1376 Բ.), «ի մտունե» (ԿԼ. Հաղթ. 180, 1221 Բ.), «ես Շաշ միակեցս... յիշեցեր զՇաշ միակեցս» (ԳՆՎ. III, վայոց ձոր, 68, 69, 1297 Բ.), «...ես հաշատուր միակեց» (ԿԼ. Սանահ. 159, 1280 Բ.), «մտա ի սէնեկ քո» (Ձեռ. 8030, 56ա), «փոխեցաւ ի մահառանկ ի կենեմ» (ն. տ. 69ա), «վա՛յ ինձ որդեկ իմ» (ն. տ. 71ա), «անտի եւ անցաւոր է այս կենեմ» (ն. տ. 76բ), ցորեն (Լեւո Գ-ի 1288 Բ. գաշնագրում), «նման է իր շտեթն ի կորեկ» (Գրիգ. 35), «նմանն ի մանր կորեկ» (ն. տ. 40) և այլն: բ) -ևաւ, -ենաւ, հոգեակերտներում. ինչպես՝ «ուրի ոտներ» (Մխ. Հեր. Ձեռ. 416, 21, 1279 Բ.), դեղեր (ն. տ. 30ա, 38բ). Բիսանդուրներն (ն. տ. 34ա), արեւ (ն. տ. 39բ), կարներս (ն. տ. 40բ), Բիրբերն (ն. տ. 10բ), զգրազում քաղաքս և զբերդես կառ» (Գ. Հովս. հձ. 906, 1236 Բ.), «երկու դաս ար-

բերն» (ն. տ. 857, 1227 Բ.), «երբ զուտերս ի սուրբ Գրիգորոյ յանապատան» (ն. տ. 854, 1227 Բ.), «համարարման արեւ» (ն. տ. 873, 1231 Բ.), «կէին ամէն շներն» (ԺԳ հձ. 276, 1335 Բ.), «այսպեցիկ դիատիս և զպնջմներն սպանել են» (ն. տ. 274, 1335 Բ.), յամեն տաներս (Մմբ. դաս. 13), «ամէն մարդոյ կենեմ» (ն. տ. 16), «յաւ դիտենային զայրուկնոջ բաներն» (ն. տ. 20), «ամենայն վաներն» (Մմբ. Տարեգ. 14), «անկաներ յամուր բերգես» (ն. տ. 26), «սառսբեաց առ կոմսերն... կոմսերն փախեան» (ն. տ. 171), «կանգնեցի կին զշխերն» (ն. տ. 158), «զամենայն հայերն» (ն. տ. 171), «կանգնեցի զպատես» (ԳՆՎ. II, Տաթև, 24, 1251 Բ.), «շինեցաւ դուռնս և բշներս» (ԳՆՎ. I, Անի, 7, 1206 Բ.), «շինեցի հալալ ընչուր իմով զպաշտեանեաց» (ն. տ. 34, 1213 Բ.), «հաղորդանն հողերն» (ն. տ. 63, 1215 Բ.), «շարարատս զղերն... այս զղերն» (ԿԼ. Հաղթ. 168—169, 1210 Բ.), Բարսեր (Անս. 9, 13, 25, 27 և այլն), Են (ն. տ. 11), արեւ (ն. տ. 27), որբեր (ն. տ. 51), Իրաներ (ն. տ. 43), ձայրեր (ն. տ. 59), այսպես եւս Գրիգորիս բժշկապետի աշխատության մեջ՝ Եղեր, գաներ, լաբեր, շուեր, ազբեր, խոցեր, մաշկեր, կուլեր, մաղներ, արեւ, ծնկներ, աշեր, կոներ, արմիներ և այլն, և այլն:

գ) Գրարարյան անցյալ զերբայի -եալ վերջավորության մեջ, ինչպես՝ «ապալինել յողորմութիւն այս» (ԳՆՎ. I, Անի, 43, 1050 Բ.), «բաժ ու ամազա շին ավել» (ն. տ. 23, 1280 Բ.), «...որ յառեւն շեր լել» (ն. տ. 30, XIII գ.), «զոր էր բերել ի վանքս ու ի յանտրութենէ խաղտել էր ու կորել» (ն. տ. 64, 1310 Բ.), «անիծել լիցի» (ԿԼ Սանահ. 139, 1291 Բ.), «շինել էր» (ն. տ. 145, ԺԳ դ.), «ի փորացաւութեան դուռն յիշել եմ» (Մխ. Հեր. 30բ), «շարութիւն լինի հանգիպել... զամբոխն բնիկ դարտիկ լինի» (ն. տ. 34բ), «ամբոխոյ զարուրթին հատել լինի և կորել» (ն. տ. 38ա), «զի բանանայ անուսն եղել, զահագի արն չեմ յիշել, ոչ տեր մեղայ եմ ասացել, զերթ խոյ ի տղիմ եմ քաալիլ» (ԺԳ հձ. 22, 1304 Բ.), «զոտոյ ազն իմայիլի զխաղտել ընկրկեցան... և հնամաճաւ եղել մինչև ի մուտս արեւոս» (ն. տ. 24, 1304 Բ.), «աշխատել են ի հետ մեր ու զայրիկն ու զկողորմիկն պատրաստել են մեզ» (ն. տ. 28, 1304 Բ.), «զգիրքս է կապել» (ն. տ. 34, 1305 Բ.), «ապցել են ի սուրբ աւանտարանս» (ն. տ. 50, 1307 Բ.), «զբացել է յես» (ն. տ. 52, 1307 Բ.), «շէլի ամենեկն լսել զայս» (ն. տ. 61, 1309 Բ.), «այսր աղաղաւ եմ գրել» (ն. տ. 70, 1310 Բ.), «տեսել զվայրապար կացո իմ» (ն. տ. 143, 1318 Բ.), «ենազանդել ին շար հրատարակել» (ն. տ. 276, 1335 Բ.), «յոյժ զարհուրել եմ և Բիացել զարմանամ» (Ձեռ. 8030, 1341 Բ. 38 բ), «զարմացել եմ» (ն. տ. 40բ), «զբել ես» (ն. տ. 45բ), «զարմել ատէ» (ն. տ. 68ա), «զիս էլ ստեղծել» (Ձեռ. 8029, 231ա), «հանաչիլի որ հին Թաղավորի է լի» (Մմբ. Գաս. 17), «վասն անհատութեան չէ մեղի հայրն» (ն. տ. 15), «զիւր հնկան ավել է» (ն. տ. 13), «սուրբ առաքեալքն են սամմանել» (ն. տ. 19), «ապել են» (Անս. 19, 23 և այլն), «այրել ես» = արել ես (ն. տ. 15), «հետ իրենց ծննդանն է լի» (ն. տ. 19), «ես զայն իրքն կալել եմ... մեղու է» (ն. տ. 23), «պարս է լի ի մէջն» (ն. տ. 37), «շատ մարդ է մեղել» (Գրիգ. 50) և այլն, և այլն:

դ) Բայերի անցյալ կատարյալի եղակի երրորդ դերի -եաց վերջավորության մեջ, ինչպես՝ «զնց զայս սուրբ անտարանս» (Գ. Հովս. հձ. 569, 1193 Բ.), «սպաստարեց մեզ» (ն. տ. 718, 1204 Բ.), բնմայտրեց (ն. տ. 716, 1204 Բ.), ստեղծեց... պատունց (Ձեռ. 8029, 233բ), Բրամայեց, յարիւնց, խարեց, Բրապուրեց (ն. տ. 234ա), փորձեց (ն. տ. 236բ), զպանց (ն. տ. 237ա), կապեց (Մմբ. Գաս. 26), ձայնց (ն. տ. 20), «ժողկեց զանտարանս և

²⁷ Եթեզորին մեզ օ գիրը գրույթյան շուրջ, այլ բոս հին ձևեր՝ աւ կորելով միջու. մեր հրատարակության մեջ այն բոլոր աւ-կերք, որ օ պիտի կարգացնեն՝ օ արկները (Մմբաստի Տարգրերի հրատարակելի առաջարկեր, էջ Ժբ):

երկրաբարտի՝ բանավոր-խոսակցական լեզվի բոլոր տարրերակներում պարզ-վելու ֆոնի վրա, գրովյան այդ ձևը մեծ է միայն երկնշյուրում արտահայտելու համար՝ Առաջիմ եղակի մի օրինակ է Հաղթարի վանքի արձանագրություններում հանդիպող Բալբա գործիականի ձևը, որի մեջ գրական արտասանության փաստը վկայվում է նաև հայերեն բոլորում. ահա այդ հատվածը՝ «Ես Մարիամ, դուստր Կիրակի արքայի, իմ Բալբա... միարանեցա» (ԿՂ. Հաղբ. 176, 1200 թ.):

Սակայն այս չէ միջին հայերենի համար բնորոշը: Քննարկվող շրջանում, ընդհանրապես, հին հայերենի ոչ երկրաբարտը մյուս երկրաբարտների նման պարզվել ու փոխարկվել էր պարզ ձայնավորի: Որպես առավել հիմնական օրինակաբանություն արձանագրվում է նրա ոչ>ու փոփոխությունը, որը շատ որոշակիորեն արտահայտվում էր նաև գրովյամբ: Այս հնչյունափոխության հիմքը, պետք է կարծել՝ նույնն է, ինչ որ շեշտի տակ հանգես եկող մյուս երկրաբարտներին, այն է՝ նախաշեշտ հնչյունափոխված ձևի անցումը բառական ուղիղ ձևին:

Միջին հայերենի շրջանում ոչ>ու փոփոխությունն արդեն ավարտված իրություն է և հաստատվում է վկայությունների բավական լայն ընդգրկմամբ ու փաստերի առավել հաճախականությամբ: Հատկանշական է, որ երևույթը ընդգրկել էր ո՛չ միայն բառական ուղիղ ձևերը, այլև հոլովական -ույ, -այ վերջավորությունները: Ըստ որում, չնայած այն բանին, որ միջին հայերենի շրջանում այդ վերջավորությունները բնկալվում էին որպես ո՛ ձայնավոր (այդ զեպետում, ինչպես կունենենք, յ-ն համբ տառ էր), բայց ստորև բերվող օրինակները հավաստում են, որ պատմական հնչյունափոխությունը ընդգրկել էր նաև այդ զիրքը՝ հավանաբար նախքան յ-ի անկումը, փակ վանկում՝ հոգրի հավելմամբ: Գա հաստատվում է հատկապես այն օրինակներով, որոնց մեջ նույն աղբյուրում միևնույն բառը զուգահեռաբար հանդես է գալիս և՛ ոչ, և՛ ու հոլովիչներով: Քննելիք մի շարք բնորոշ օրինակներ ինչպես բառական ուղիղ ձևերում, այնպես և հոլովական վերջավորություններում կատարված հնչյունափոխության համար: Մի. Հերացու «Ջերմանց միտքարութիւն» աշխատության 1279 թ. ընդօրինակության մեջ (Ձեռ. № 416) ամենուրեք ունենք ուժ< ույժ, վատում<վատույժ. ինչպես՝ ուժ տար (26ա), ուժ տան (32ա), ուժ առնու (36ա), վատում լինի (27բ, 28ա, 29ա, 33ա և այլն), «յիւրիւն» (<երկույն) տար զայս զեպ» (ն. տ. 42բ), «երկուսն տար խնկույն» (ն. տ. 47ա) և այլն: Դրիցորհի «Քննութիւն բնութեան մարդոյ...» աշխատության մեջ՝ «հին ընկուզն (<ընկույզ) և սոխն» (էջ 52), «չիլն որ րուզ (<բույզ) է» (73), «տղայքն այլ ըստ (<շոյտ) ողջանան» (ն. տ. 73, 113), «յառաջն յիշենք զխուլն, զի խուլն լինի զեղ օրսն» (ն. տ. 31), կոյշ>կուշ (ն. տ. 85), «չընան Լինկն» (ն. տ. 107), «մարդն որ լուծ լինի և յայնն սև լինի կամ կանանչ» (ն. տ. 210), ուժ (ն. տ. 209), գրույ>գրուց, շատագրուց մարդն (ն. տ. 204) և այլն: «Սնսկզ Անտիբաբալ աշխատության մեջ՝ «ամ լինան այրել» (էջ 27, 29, 37, 39 և այլն), «վատում լինու» (ն. տ. 35), «գառատենն յիրիկունն լինայ լի» (ն. տ. 27), «ինչվի յիրիկունն» (ն. տ.) և այլն: Այլ սկզբնաղբյուրներում. «ու ի ցուցս (<ցուցս) մարդկան» (Գ. Հովս. հձ. 40, 1170 թ.), «չում (<լոյժ) տառապանաք» (ն. տ. 555, 1190 թ. Արքիվանք), «տառուած ողորմի Առուծին հագուն (<հոգուն) և Աղբարականն որդուն (<որդուն)» (ն. տ. 569, 1193 թ.), «մեծն ի յայս սրբունուն (<սրբունուն) Մանէ» (ն. տ. 681, 1201 թ. Գարանապաշտ գա-

վառ), «զգվան արտաու (<արտաու) նրուսպէլի» (ն. տ. 774, 1215 թ. Երեսպաղմ), «ի լիշխանութեանս մերոյ Վահրամա...» առա (<որոյ) ալբ ծիտա ողորմեցի» (ն. տ. 803, 1219 թ.), «սուլ աշխատանց վախճառուց (<փոխհատուց) լինել» (ն. տ. 113, 1252 թ.), «զգիր անփութ (<անփութ) արնէ» (ն. տ. 976, 1246 թ.), «գրեցա... ի խնդրոյ մեծ պարագանին Հայոց Սբմբատա... եղբար թագաորին Հայոց Հերմոյ... ի թագաւորութեանն Հայոց Հերմոյ» (ն. տ. 953, 1244 թ.), «տղորմեցի... և Աստուածաբա... ի փրկութեան եղբար իմոյ Աստուածաբոյ» (ն. տ. 686—87, 1201 թ. Գարանապաշտ գավառ), «զունն (<զոյն) զնայ և անդիտան լինի» (Ձեռ. 8030, 77բ), «թէ անուլ (<անուլ) է ու թէ վատ» (ն. տ. 81բ), «անձինն զարութիւնն որ է ուժն» (ն. տ. 83բ), «պաշտել անուլ քաղցր եղանակ» (ն. տ. Ծն. ԲՁ 565), «Գրեցա տունցուց (<տանցուցս)» (ԺԵ, հձՏ. I, 99, 1409 թ. Երեսպաղմ), «ձիթի տակն էր և ճրպն լուս (<լոյս) պակաս» (ԺԵ հձՏ. 387, 1428 թ. Խոյթ գավառ), «յուսն (<լոյսն) ամենեցուն» (ն. տ. 59, 1406 թ. Տաթև), «երբ կու տա իմ աչքս լուս (<Ժ հձՏ. 312, 1338 թ. Միս. Անեցի), «իրենց որդուն Չաքարի եւ վասն մեր հագուս յիշատակ բերաք չուր» (ԴՏՎ. I, Անի, 64, 1310 թ.), «միարանքս ետուն մեզ զատիկ ճագալուց (<ճագալուց) մեզ պատարաղել» (ԿՂ. Հաղբ. 214, 1273 թ.) և այլն, և այլն:

Միջին հայերենում և հատկապես նրա բանավոր-խոսակցական տարրերակների մեծադուր մասում զարբոյրան էլաբ և նրա սեռական-արական Բեռ հոլովաձևին փոխարինում են համապատասխանաբար Բուր և Բուր (գրույթյան մի քանի տարրերակներով), Բուրոյ // Բուր բառաձևերը: Ըստ որում, որանց ստանում են միջին գրական հայերենի նորմայի աստիճան. իսկ Բայր և Բեռ ձևերը դիտվում են որպես գրաբարյան բառաձևեր: Մի քանի օրինակներ ձևազարկի հիշատակարաններէջ Խոյշ>Բուր փոփոխության համար. «լիշեցէք և զԲուրն իւր» (ԺԵ հձՏ. 135, 1413 թ. Եկեղեց գավառ), «լիշեցէք և զԲուրն իւր» (ն. տ. 444, 1434 թ. Կաֆա), «զԲուրն իմ զՇամշէն» (ն. տ. 660, 1429 թ. Մեծոփա վանք), «զԲուրն զեղիտարեղ» (ԺԵ հձՏ. II, 138, 1460 թ. Արծիկ), «բառ մանկ և գուտար ի մարէ, Բուր յեղարւլ» (ն. տ. 149, 1461 թ. Եղերգու վանք՝ Մուշի մաս), «լիշեցէք և Բուր իմ Յաղիզ» (ն. տ. 228, 1464 թ. Լրէրան վանք), «զԲուրն իմ» (ն. տ. 305, 1470 թ. Աղթամար) «զԲուրն Բուր» (ն. տ. 323, 1471 թ. Խառաբաստ վանք) և այլն, և այլն: Այս բանի վրա հարուստ ուղղորդություն դարձրինք այն պատճառով, որ չնայած Բուր բառաձևի այսքան տարածվածությանը, այնուամենայնիվ, մասնագրության մեջ հանդիպում է նաև Բիւ հնչյունափոխված տարրերակը, որը մի այլ բարբառային օրինակություն է, առաջիմ դրա առաջին վկայությունն է Հաղբարի վանքի 1273 թ. մի արձանագրության մեջ՝ «Բիւրենց հայրենաբն» (ԿՂ. Հաղբ. 196), իսկ XV դարից՝ Վայոց ձորում գրված մի հիշատակարանի հետևյալ հատվածներ՝ «Բիւր մեռավ, իմ շքինն կուրեցաւ. ինքն զուխս ման երկի ու Բիւրն յնպագի սեսայ ու խիտա դառնացայ» (ԺԵ հձՏ. II 360, 1474 թ.):

Հետագա դարերի հիշատակարաններում և այլ սկզբնագիր աղբյուրներում ոչ>ու հնչյունափոխության վկայությունները շարունակվում են: Այս տեսակետից հատկանշական է Ամիրջուլուֆի «Ուտուն թշկութեան» հնդկաալիսին ձևազարքը, որի մեջ ունենք՝ զայն>զուն, յայ>լուս, բնկոյզ>բնկուց, շոյտ>շուտ, Բնոյլ>Բնուլ, ստոյզ>ստուր, բոյս>բուս, ոյժ>ուժ, յոյժ>լուծ, մրնագոն>մրնուժ, անոյլ>անուլ, քայլ>քուլ և այլն, և այլն:

34. Արդեն իսկ դարարի շրջանում արձանագրվում է և ու իւ երկրաբար-

բաների արտասանության նույնացում, որը արտահայտվում էր նաև գրովյան մեջ՝ ստեղծելով միևնույն բառի ուղղագրական զուգաձևություններ, ինչպես՝ այնք // այիր, աղբեր // աղբիր, առեմ // առեմ, բեր // բիր, հարեր // հարիր, մեա // միա և այլն³⁵։ Սրանցից եւ-ով ձևերը համարվում են ավելի հին, այն ժամանակ, երբ հետագա դարերում մատենագրության մեջ ավելի կիրառելի են գտնվում իւ-ով ձևերը։

Նկատի ունենալով այս երկրաբարոհ հետագա պատմական հնչյունափոխության ընթացքը և միջին հաշիւներին ժամանակաշրջանում նրա դրավոր արտահայտության ձևերը, պետք է ենթադրել, որ, չնչին բացառություններով, այս երկրաբարոհ հնչյունական արժեքին առավել համապատասխանել է իւ-ով ձևը։ Այդ է ապացուցում նաև նրա հետագա երկհնչյունային արժեքավորումը, որ ավանդաբար հասել է մեզ և այժմ գոյություն ունի որպէս գրական արտասանության նորմա։

35. Գրաբարում իւ-ը հարում էր այն երկրաբարաներին, որոնք կարող էին լինել ինչպես շեշտի տակ, այնպես և շեշտից դուրս. բառաթեքման ու անանցման ժամանակ շեշտազուրկ լինելով՝ հնչյունափոխության շէր ենթարկվում (ինչպես՝ բեր, բիրակն, բիրական, առեմ-առիւծոյ և այլն)։

Լինելով բարդ հնչյուն, բաղկացած ի և Վ ձայնավորներից՝ այս երկրաբարան իր մեջ կրում էր փոփոխության ենթարկվելու երեք պոտենցիալ հնարավորություն։ Ռըպես բարձրացող հնչերանգով երկարառա, նա կարող էր վերածվել երկհնչյունի (ՅՎ)՝ պահպանելով միայն երկրորդ բաղադրիչ ձայնավորական հատկանիշը։ Այդ նույն հնչերանգով նա կարող էր վերածվել իր երկրորդ բաղադրիչի որակին (Վ), իսկ որոշ դեպքերում՝ առաջին բաղադրիչի ազդեցությամբ փոխել արտասանության տեղը (Ս)։ Փոփոխության երրորդ հնարավոր պիւնկեց կարող էր ստեղծվել ինչն ինչ հնչերանգի ղեկավար, երբ երկրաբարոհի պարզեցման պրոցեսում վանկարարի հիմնական զերբ իր վրա էր վերցնում առաջին բաղադրիչը (ի)։ Վերջին երկու դեպքում էլ, նույն ժամանակահատվածում, երբ նրա էր ստեղծվել ինչն ինչ հնչերանգի ղեկավար, որ հայերենում ի-ն և Վ-ն համեմատաբար թույլ ձայնավորներ էին։

Միջին հաշիւներում, նրա գործառնության շրջանում, հին երկրաբարոհների պարզեցման րնգհանուր պրոցեսում, իւ-ի փոփոխության այդ երեք վիճակներն էլ արձանագրվում են դրավոր սկզբնազրույթներում։

Գրաբարյան իւ (իւ) երկրաբարոհ երկհնչյունային արժեքը, նրա պարզ ձայնավորների վերածվելու հիմքի վրա, շատ գյուրություն արտահայտվում էր իր հին իւ գրովյամբ, ուստի և անհրաժեշտություն չկար նրա երկհնչյունային արժեքը արտահայտելու համար որևէ նոր միջոցի գիմնելու։ Մակայն, այ-նուամենայնիվ, սկզբնազրույթները որոշ փաստեր տալիս են նրա երկհնչյունային արտասանության։ Այսպես, օրինակ՝ միա բառածին դիմաց մի շարք վկայություններով ունենք միուս գրությունը. ինչպես՝ զգմիւսն սիրիցէ, կամ դիմին մեծարիցէ, և գմիւսն արհամարհիցէ (Չեւ. 8030, էջ 53ա, բ), «Ի բո միուս անկամ գալտեանեց» (ն. տ. 70ա), «միուս անկամ գալտեանե» (ն. տ. 100ա), «ի միուս անգամ գալտեանեն» (Ժճ ճճՆ. I, 325, 1424 թ.) և այլն։ Կատարված նույն փոփոխության մասին են վկայում նաև հետևյալ փաստերը։

Ամերկովյաթի «Ռատուն բժշկութեան» հեղինակային ձևագրում ունենք արին բառի այրուն գրությունը. ինչպես՝ «Եւ հանց որ այրունն ի Ժծն եփո» (էջ 16), «Եւ ինքն գայրունին դմորուն ինք քաշէ» (ն. տ. 104)։ Պարզ է, որ բերված օրինակներում այրուն բառածին առաջինը է արյուն նախադր ձևից՝ րշ>ր գրափոխությանը նման օրինակներ են նաև՝ «Գայ գայրիւն» (Անս. 33), «այրոյն շիկի ելած» (ն. տ. 61) և այլն, թեև սրանց մեջ և ձայնավորը արտահայտված է իւ, ոչ տառանշաններով։

Քննարկվող շրջանի մատենագրական աղբյուրները ավելի առատ փաստեր են տալիս այդ երկրաբարոհ պարզ ձայնավորի վերածվելու վերաբերյալ։ Այստեղ առկա է երկու կարգի փոփոխություն՝ իւ>ու և իւ>ի։ Պետք է ենթադրել, որ դրանք նախապես եղել են նույն երկրաբարոհ երկու տարբեր բարբառային հնչյունափոխության դրսևորումներ՝ կապված դրանցում հնչերանգի (բարձրացող կամ ինչոզ) բնույթի հետ։ Մակայն միջին հաշիւներին շրջանում բարբառային այդ սահմանները խախտված են, և նույն վայրերում սկզբնազրույթներում հանդիպում են և՛ այս, և՛ այն օրինաչափությանը ենթարկվող բառեր։ Այնուամենայնիվ, միջին հաշիւների տարբերակների մեծամասնության համար բնորոշ է իւ>ու փոփոխությունը, բացառությամբ որոշ ձևերի, որոնց մեջ գրական լեզվի համար տիպական է իւ>ի անցումը։ ենթադրելի է նաև, որ իւ-ից առաջացած Վ (ու) ձայնավորը վայրից վայր ունեցել է նաև բնայնացման երանգ, որը, սակայն, գրովյամբ իր արտահայտվելը։ Բերենք իւ>ու փոփոխությունը արձանագրող մի շարք վկայություններ. «աստուած թուզու գուր (<զուր) գլանցանքն» (Գ. Նովս. հճ. 235, 1058 թ.), «գնեց դաչա սուր ավետարանու... ուր լիշտասի ուր ծնողած» (ն. տ. 569, 1193 թ.), «ողորմի Աստուծին հոգուն» (ն. տ. 569, 1193 թ.), «և զնայն բուրայապատիկ եւս արարին» (ն. տ. 381, 1170 թ.), «Եւսթե եւ Կուրյոն՝ ձուրն եւ աղակիւն» (Միւ. Գաւա. 16), «ուր (<իւր) մեզայն թողութիւն հայնցեթ» (ԺԳ ճճՆ. 234, 1313 թ.), «նայ որ պատկիւն դժարնայ, և երբ նստի և ի յունն ելնէ՛ զուսեանյ... և շնչուն ելնեն զուր լինի» (Գրիգ. 107) և այլն։ Փաստերն ավելի առատ են հարորդ գարերի սկզբնազրույթներում՝ «Արի և քաջ վարդապետին Աստեաց եպիսկոպոսին» (Ժճ ճճՆ. I, 63, 1406 թ.), «Գրեցու ի վանքս զՍտաթե, յերկիւս Աստեաց» (ն. տ. 87, 1405 թ.), «Տաթե», «եղև դրաւ սորա ի յուրհարուր թվականի և լիտուն և եթն յաւկազրդի» (ն. տ. 89, 1408 թ.), «ով պատուական եղբայրը, բնորեղը ի բուրաց» (ն. տ. 112, 1410 թ. Սարկիզպանց վանք), «Եւ վերջին ատացող խաւն (<հաւն) ներսւ... խաւն եոցղեղին» (ն. տ. 125, 1411 թ.), «յիշեցեր... գխաւն Թոււնէն» (Ժճ ճճՆ. II, 313, 1471 թ. Աղթնամար), «գաթեալ իշեշեթը... զխաւն Մարգարէն» (ն. տ. 10, 1456 թ. Բաղշէ) և այլն։ Ինչպես նաև Ամիր-գովյաթի հեղինակային ձևագրում՝ «գարունն ի լեղէն ի սիրտն կու զրիկ» (էջ 10), «Եւ թե ձուն (<ձիւն) լինի, նայ ձինն սպակոթիւնն աշիցն զնն առնէ» (Ժզ), «գիտացիր որ աստուած զժարունն ոսկերքն հիմն և սուն (<սինն) է արել անձինն» (Ժբ), «հնուտային (<հնութային) բամի փշէ և անձարն և ձուն պալապալա զայ» (ն. տ. ձզ), «բիթն արունիւն» (ն. տ. ձզ), «կարմիրը հասարն ի հաւուր զր շուրն խառնէ» (ն. տ. ձա) և այլն։ XVI—XVII դարերից շատած ձևագրերում ավելին հաճախ են նման գրությունները։

Տեղի ունեցած իւ>ու հնչյունափոխությունը վկայվում է նաև այնպիսի գրություններով, որոնց մեջ ու-ի փոխարեն գրված է իւ։ Այս տեսակետից առայժմ ամենահին վկայությունն է 944 թ. Անիի արձանագրություններից մեկը. «Եւ Շուշան տիկեաց տիկին, զիգակից (փոխանակ՝ զուգակից) Գրիգ-

³⁵ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբան, Երևան, 1958, էջ 8.

քո իշխանին» (Դճվ. I, 32) օրինակը նման օրինակներ կան և հայերը դարերգի ինչպես՝ «գիպակից» Գրիգորին (Դճվ. I, Անի, 55, 1210 Բ.), «Ենդեր, որ ի յայս անգամուներս ընծային՝ այս են. կայ որ ի ձինը (<ձան>) լինին, և են որ ի շեքսերս» (Գրիգ. 164. նույն էլում երկու անգամ) և այլն:

Վերև ասվել է, որ իւ երկրարբարը շնչունափոխությունը հնչյունափոխություն: Ասիական մյուս կողմից միջին հայերենում ունենք այսպիսի վկայություններ՝ «Ուտից, որ ի սե մադձէ լինի, յայն որ ընծայիալ է ի յարճէն և իւր մբրէն» (Գրիգ. 33), «սեբուն ի յարճեն ընծայի» (ն. տ. 36), «Իբրեանքս ի յայրած աքր-ճին բուխարէն լինին» (ն. տ. 43), «Քաթիկ ի յայն աքճէն ի վերայ հացին և ձօք ի շուն մի այլ» (ն. տ. 46), «և թէ ձուն լինի, նայ ձնին սպուկովին աշիցն զեն անէ» (Ամիրդ., Ուսմն. բժշկ. ժղ) և այլն: Պարզ է, որ բերված օրինակներում սղվել կամ Բ-ի է փոխվել ոչ թե իւ երկրարբար, այլ նրանից առաջացած ու ձայնավորը, որին և հատուկ էր հնչյունափոխություն հատկությունը:

Ի>X հնչյունափոխությունը հիմնականում արձանագրվում է գերանդական և ևս բառերում, թեև այս օրինակափոխության հարում են նաև հատ ու կենսայ բառեր: Այսպես, օրինակ՝ «Իրենց որդուն» (Դճվ. I, Անի, 64, 1310 Բ.), «Ինք իր կամա ուղէ» (Սմբ. Գառ. 27), «պարտի թաղարն զիւ իրաւունքն տանել ըզորք» (ն. տ. 9), «Եւ նորս զերենց տասնեակն տան յիրենց եկեղեցացն» (ն. տ. 12), «պատեճ է որ ալտան իր» (Անս. 25), «Երկը զիւ պէտքն» (ն. տ. 27), «Ի յիրենց շինի ընկալ» (ն. տ. 33), «զըզդիքն վար յիրմէն» (Մի. Հեր. 24ա), «ամբն մարդը միտք իրեն հաւանի» (Հովհ. Երզն. 186, 1376 Բ. ձևապատմ.) և այլն, և այլն: Առհասարակ միջնադարյան տեքստերում սովորական ևս ևս լին, իրեն, իրենց և այլն: Այս օրինակափոխության են հարում նաև մի բանի այլ բառեր. ամենավաղ վկայությունն է՝ «ես Մոսի սիենաց տիկին... մատառն էր անակն եղիւր Մոսի Սիենաց» (Դճվ. III, Վայոց ձոր, 13, X Գ.), կին Սմպատա որդի Աշտի Սիենաց իշխանի» (Դճվ. III, Վայոց ձոր, 13, X Գ.), «մատառն էր անակն եղիւր Մոսի Սիենաց» (ն. տ. 13, X Գ.), այսպես նաև՝ երկիւ>երկիւր (Անս. 29, Մի. Հեր. 20ա, բ. 26 բ և այլն), այս բառի դիմաց հանդիպում է նաև երկիւր ձևը (Հովհ. Երզն. 185, 1376 Բ. ձևապատմ.), որը համեմատելի է երկիւր տարբերակի հետ:

Մատենագրության մեջ հանդիպում են նաև իւ երկրարբարի ոչ դրոշյան դեպքեր. ինչպես, օրինակ՝ առաջն (Մի. Հեր. 43բ, 46ա), աղալ (ն. տ. 48ա, 50ա), նոլը (ն. տ. 45բ), գործածված սովորական աբիւն, ախիւ, նիւր ձևերի հետ միասին, «փորելին պիմն պարսպին խորզարն, և հանեայ զքարն և սղն (<սիւն>) եղեալ ի սեղիին» (Սմբ. Տարեկ. 163), «շինեաց յանուն իւր սղն մի ի բաղարին Հոռոմ» (Մանր ժմնկ. II, 39, XIII Գ. Կիրիկիա) և այլն: Գրություն այս ձևերում ոչ-ը այլ բան չի ներկայացնում, բան նույն ու հնչյունը: Ուղղագրական այս շեղումները այն բանի հետևանք են, որ միջին դարերում հայերենի և ձայնավորը արտահայտվում էր ո՛չ միայն ու գրանշանով, այլև իւ, ոչ ստուսակապիցություններով, բանի որ գրանցով արտահայտվող երկրարբարները հնչյունափոխությամբ ստացել էին Ա-ի արժեք:

Գրչադրական տարբերակներով ունենք նաև գիւլ, գեւղ, գեւաղ, գեղ: Մրանցից երկրորդը գրչության հին ձև է, որից և զարգացած պիտի լինի վերջինը՝ գեղ ձևը: Վերջինս մյուսներին հավասար տարածված բառաձև է (օրինակ՝ «Ի գեղն, որ կոչի Երկրակ» (ԺԳ ՀՃՏ. 94, 1313 Բ.), որ կենդանի է նաև մեր ժամանակների բարբառներում: Գրանցից առաջինը՝ գիւլ («Ի գիւլս որ կոչի Աւանս» ԺԳ ՀՃՏ. 132, 1317 Բ.), ըստ իւ երկրարբարի հնչյունափոխության

ընդհանուր ընթացքի, պետք է որ ունենա և արտասանությունը (գրական լեզվի չս տարբերակի հետ միասին), ինչպես և ունենա՝ «Ի գալս եկեղեցի իսկի շկար շինած» (Դճվ. III, Վայոց ձոր, 192, 1263 Բ.) օրինակում: Հավանաբար բարբառային մի այլ ձև է գեւաղը, որը ունի նաև գրության գեղ տարբերակը («Ի գեւաղս, որ կոչի Բաւանց» ԺԳ ՀՃՏ. 133, 1317 Բ.):

Եւ>X հնչյունափոխություն արձանագրվում է եւլ>ել բառում, ինչպես՝ «Կոմն լիտր մի ել տայ պարունին» (Սմբ. Գառ. 13), «Ա. լիտր ել, Բ մեղք» (ԺԵ ՀՃՏ. I, 71, 1407 Բ. երգան) և այլն, թեև հանդիպում է նաև իւլ բառաձևը:

Այսպիսով, շնայած այն բանին, որ իւ և եւ երկրարբարների արտասանության նույնացման պատճառով հիմնական փոփոխությունը ւ է, բայց, այնուամենայնիվ, կան բառեր էլ, որոնք տարբեր բարբառներում փոփոխության հիմքում ունեցել են ևս տարբերակը. զրանցից են հատկապես գեւլ>գեղ, եւլ>ել և վերը հիշատակված երկիւլ>երկիւր, թեև եւլ գոյնի մի այլ օրինակներ:

36. Գրաբարյան իւ կապակցությունը հետագայում ստանում է երկրարբարի արժեք: Իս երկրարբարի հնչյունափոխությունը փաստորեն նույնանում է եւ-ի փոփոխության հետ: Այդ ընդհանուր ընթացքը թերևս պայմանավորված է եղել նրանով, որ դրանց առաջին բաղադրիչները դարձել էին նույն հնչույթի տարբերակներ: Թեև օրինակները բիշ են, բայց եղածներն էլ մի ընդհանուր օրինակափոխության տակ են գնում, այսպես, օրինակ՝ «շիշառակ ինձ և Մարկ տիկնա... զՄարկ տիկնա... իշման արժանի արասիր» (Գ. Հովհ. Հճ. 555—56, 1190 Բ.), Մարկ (ն. տ. 1015, 1250 Բ.): Այսպես նաև միջին հայերենում լայն տարածում ստացած մլիլ թվականում, որ հնչյունափոխված է միակ ձևից:

37. Ետարբարաներից իայ-ը գրաբարում իսկ արձանագրվում է սակավաթիվ բառերում: Միջին հայերենի այն տարբերակները, որոնք գործածության մեջ ունեցել են միայն բառը, այն հնչյունափոխել են մլն-ի, որտեղ ետարբարի դիմաց e պարզ ձայնավոր է: Մի բանի օրինակներ. «Մարզ որ մարզ պրկէ՝ ամէնն զինէ կենս՝ պրկալին է, եւ զրեհն՝ մլն պարունին» (Սմբ. Գառ. 12, 17, 28 և այլն), «Յեա իր մահում ապոլ որդին ծառանկէ պապենի պարանն մլն» (Անս. 19, 59, 79 և այլն), «զանձըր սրբիւր վան օրենց, Մլն կանգնելով հայրի դիմաց» (Հովհ. Քիլ. 198) և այլն: Այս նույն օրինակափոխությամբ ունենք մեակ || միեակ || առաջացած միայնակ բառաձևից: Երկու ձևվերն էլ հավասարապես հանգիս են գտել սկզբնաղբյուրներում և շատ հասարակ հենց նույն ընագրում. ինչպես՝ «Ու ի հետ տարյն ու աւորն մեակ յա գայ, առանց ոչինչ դիմախօսութեան առնու զտպանքն» (Անս. 13), «ձիաւոր այնէ միեակ» (ն. տ. 17), «Իր որդիքն միեակ... կարեն զալ ու շարնջել և առնուլ զպարանքն» (ն. տ. 23), «մեակ ի դարդան շղիմէ» (ն. տ. 31), «մեակ կարճ համէ, որ կովին» (ն. տ. 33), «մեակ մարզ ի ներս անէ» (Սմբ. Գառ. 8, 21) և այլն:

38. Այլ ետարբարի հնչյունափոխությունը փաստորեն նույնանում է եւ-ի փոփոխության հետ: Լինելով բառաձևերում և կորցնելով վերջահանգ յ-ն, այն վերածվում էր երկրարբարի. հետևաբար փոփոխությունը գնում էր նույն ուղղությամբ, ինչ որ եւ երկրարբարին: Ըստ որում, արձանագրվում են ինչպես բայ, այնպես և փակ վանդերում կատարված փոփոխություններ: Այս տեսակետից միջին հայերենի համար բնորոշ բառ է գրաբարի Էրխառնեայ բա-

³⁰ Հրատարակված տեքստում՝ գրեկն:

ուսանը, որ մի կողմից ունի Բրիտանի Նշչունափոխված ձևը, ինչպես՝ «գո-
տորեաց բազում թուրք և բուրդ և Բրիտանի» (Գ. Հովս. 5Ճ. 878, 1231թ.),
«Նայ Բրիտանիէս ի մեկ տեղի պիտի ժողովն և սպանեն» (ԺԳ ՀՃ. 275,
1335 թ.), «Եթե Բրիտանի գրիտանի կամաբ սպանէ» (Սմբ. Գատ. 11), «այսպ
թէ Բրիտանի այլ լինի սպանածն» (ն. տ. 31), «Գու երկրվոր զեռ Բրիտանի»
(Անս. 25) և այլն³¹, մյուս կողմից, այս բառը ունի նաև Բրիտանայ. գրչությու-
նը. և թե նկատի ունենանք չի համարվում, այսպ և նորարարաի փոխարեն ա
է. այսպես՝ «ասէ թէ ես Բրիտանայ հմ» (Ձեռ. 8030, 86ա), «ով որ Բրիտանայ
է՝ թե մահ չանդիպի չիշոցար ոչ չայնչից գրիտանիէն» (ն. տ. այստեղ փակ
վանկում կրկին եայլ): Հանդիպում են փակ վանկում նաև եայլ>այ փոփո-
խության զեպեր, ինչպես նույն ձևարարում «եթէ երայլ եթէ չեթանսոր»
(49ա), երայլն (45բ) և այլն: Սակայն այստեղ էլ միջին գրական չայերենի հա-
մար հիմնականը եայլ>է փոփոխությունն է, որ հավանաբար նախ կատարվել
է փակ վանկում և հետո միայն ընդհանրացել՝ ընդգրկելով նաև բաց վանկը:

39. Ենարարականերից այլ-ը, ինչպես ասվել է, հիմնականում հանդես էր
գալիս Նշոյվական վերջավորության մեջ: Միջին հայերենի ժամանակաշրջա-
նում այդ վերջավորության ւ-ն ընկել էր, և հին հայերենին հասուկ թեքված
այնպիսի բառաձևեր, ինչպիսիք էին, օրինակ՝ որդայ, բարայ, հոգայ և այլն,
այս շրջանում հանդես էին գալիս որդայ, բարայ, հոգայ (Երբեմն նաև
Նոդերով): Հնոյվական այ վերջավորության մեջ ւ-ի անկումը արձանագրվում
է դեռևս առաջին իսկ ձևագրերում և նրանց ժամանակակից վիմալան արձա-
նագրություններում, ինչպես, օրինակ՝ «ի Թագաորութեան Սնայատա որդ
Վասակա» (ԳՏՎ. III, Վայոց ձոր, 41, 990 թ.), «խաչս Սարգիս առաջնորդի
եկեղեցայ է» (ն. տ. 14, X գ.), «ի Թագաորութեանս Սմայատա որդա Աշոտ»
(ԳՏՎ. II, Տաթև, 19, 1043 թ.), «ես Գրիգոր վասն իմ մեղուցեալ հոգայ» (ԳՏՎ.
I, Անի, 13, 1008 թ.), «ևսու զիմ որդայն զԱպուխամրի սգերածին» (ն. տ.
32, XI գ.) և այլն: Ամենահին վկայությունն է VI—VII դարերի մի տապանա-
քարի վրա պահպանված մակագրության մեջ որդա սեռականի ձևը. «աճ բնա-
գիրը. «Այս է հանդիստ Դաթի Գրթունեայ ուն որդա Վասակա բայրլպալ(չա)ի»
(Հայ. արձ. առակ. 50, Ապարան): Այս փաստերը վկայում են, որ նշված եռա-
բարբառի մեջ ւ-ի անկումը կատարվել էր միջին հայերենի ժամանակաշրջա-
նից դեռևս շատ առաջ: Ի-ի անկմամբ այդ եռարարաբը վերածվում էր երկ-
բարբառ ոչ-ի և օրինաչափորեն փակ վանկում Նշչունափոխվում ու-ի: Մի
բանի օրինակներ՝ «Յատարնվորս ենք կարատ յերկնիցն ի բաւառն» (Հովհ.
Երզնկ. Ձեռ. 8029, 1376 թ. էջ 231ա), «մեր վասն արեւշատութեան) պարոն
Շահանշի և Խոսանդիկն և իրենց որդուն Չարարի և վասն մեր հոգայ յիշա-
տակ բերաբ չուրս» (ԳՏՎ. I, Անի, 64, 1310 թ.) «Այս նշան փրկական կանգ-
նեալ մակորոսէ յանուն սրբուն ածածնին» (ԳՏՎ. II, Տաթև, 30, 1365 թ.)
և այլն:

40. Ես և նորարարաբը հանդես էր գալիս շեշտի տակ՝ բառավերջում: Սրա
փոփոխությունն արձանագրվում է երկու ուղղություններ: Բաց վանկում, երբ
նրան չէր հաջորդում որևէ բաղաձայն, նրա ւ բաղադրիչը ստանում էր ւ-ի ար-

ձևը, և մնում էր ես երկարաբաբը, իսկ սա, ինչպես ասվել է վերը, փոխվում
էր օ-ի: Հնոյվական վերջավորությունից զուրս նման բառեր բիչ են հանդի-
պում. այստեղ ունք սնաւ>սե, առաջնաւ>առել (վերջինս կազի ֆունկցիա-
նով), որոնք տարածված բառաձևեր են միջին հայերենում: Ինչպես կարելի է
նկատել, նույն փոփոխությանն էր ենթարկվում նաև եզակի զործիականի ես
վերջավորությունը. մի օրինակ ես՝ արևդ հովանել (<Նշոյվանեա) սուրբ Գրի-
գորի» (ԺԳ ՀՃ. 117, 1315 թ.):

Հոգնակի զործիականի եսվ վերջավորության մեջ Նշչունափոխությունն
այլ ընթացք էր ստացել: Ենարարաբն այստեղ թեև գտնվում էր փակ վան-
կում, բայց վերածվել էր ո՛չ թե մեծարարաբի, այլ երկհնչյունի՝ եսվ>եօվ:
Հնչյունափոխությունն այստեղ ընդգրկել էր եռարարաբի միայն ա մասը, սա-
կայն այս անցումը փաստորեն կատարվել էր այն բառերի հոգնակի զործիա-
կանի ազդեցությամբ, որոնք ունեին ալ վերջավորություն, և օրինաչափորեն
աւ-ը Նշչունափոխել էին օ-ի, ինչպես՝ աշակերտ-աշակերտաբ>աշակերտօբ,
հրաման-հրամանաբ>հրամանօբ, իր-իրայլ>իրօբ և այլն: Այսպիսով, եսվ>
եօվ փոփոխությունը գրական լեզվին հասուկ օրինաչափություն էր, և նրա
նման ածբերավորումը կապված էր ա երկարաբաբի ընդհանուր Նշչունափո-
խության հետ:

ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՅՏՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱՅՏՐԱՇՓԱԿԱՆՆԵՐ

41. Ուսումնասիրվող շրջանում Նշչունափոխությունն ընդգրկել էր նաև
միջին հայերենի բաղաձայնական համակարգը, հատկապես նրա պայթական
պայթական Նշչունների ձայնեղ և խուլ շարքերը: Այդ փոփոխություններն
իրականում ավելի բազմազան էին, քան նկարագրված են գրականության մեջ
և իրենց բնույթով հիշեցնում են այն ելևէջները, որոնք արձանագրվում են մեր
ժամանակակից բարբառներում:

Միջին հայերենի շրջանից այդ փոփոխություններից գիտության առա-
վել լավ հայտնի է միայն մեկը՝ կիրիկյան հայերենի բաղաձայնական համա-
կարգը: Այս համակարգի գիտական առաջին նկարագրությունը պատկանում
Խուլ շփական Վ Շնչյունի գրավոր առաջին վկայությունները արձանագրվում են XIII դարի սկզբնաղբյուրներում, թեև բացառված չէ նաև, որ նրա գիտակցումը և բանավոր-խոսակցական լեզվում նրա կիրառությունը կատարված լինի գրի առնվելուց ավելի վաղ, ենթադրելի է նաև, որ ֆ-ի՝ որպես վ-ի խուլ լծորդի, առաջացումը և գիտակցումը նախապես տեղի է ունեցել հայերենի բանավոր-խոսակցական լեզվի արևմտյան տարրերակներում, հատկապես կիլիկյան հայերենում, որի հետ և առնչվում են առաջին վկայությունները: Բացի վերը բերված օրինակներից այստեղ կարելի է հիշատակել նաև օտար բառերի տառադարձությունները. ինչպես՝ «...ևս Կոտորդին ծառայ ստանուշ ևս որդի պարոն ճաֆրե... այսմնաց ֆրէր Իանն» (Կոտանդինի 1271 թ. գաշնագրում), «...և զինչ խկի ֆառնի կտաւ եղն հաստ ու բարակ...» (Առն Գ-ի արտոնագրում, արա հետ հմտ. «...ապրիշմադործ և փառեզ շրիկ» (Գհճ. I, Անի, 22, 1276 թ.), «...և յալժժամ ենն թագաւորն երուսաղէմի և խաչապղեստ ֆրեւն» (ՄՍԲ. Տարեգ. 178), «...ու թէ հիլայամն ֆայլլ» նա հագաւ զմեղանքն» (Անս. 63), «...և քշտօղն տփրեղէ, նա հագաւ զմեղանքն» (Ն. ա. 31), «...տեսէր որ իմ ֆուլան լիճ ձորս երեկ առչն ֆուլան լճերոյ» (Ն. ա. 11), «...և թէ սերեֆիկ ոսկի զնէ կամ արծաթ» (Ն. ա. 81), «...Ջրաբեպաշա իշխան զսիր ճոֆր... յիշեսջիբ» (Գ. Հովն. հձ. 977, 978, 1248 թ.), «...յամս նիլիֆառայ կայսեր Յունաց» (Ն. ա. 117, ձևագիրը 965 թվից է, բայց ընթերցանված է ԺԳ գրում), «...յախճանեցաւ զունն ճաֆուն՝ սիր ճուանն» (ՄՍԲ. ժմնի. II, 83, 1296 թ. Կիլիկիա) և այլն, և այլն: Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել կիլիկյան մատենագրությունից, որտեղ օտար լեզվյան Վ-ն համապատասխանաբար հայերենում տառադարձված է ֆ-ով: Սակայն միշտ այսպես չէ այլ սկզբնաղբյուրներում: Օրինակ, Մխ. Հեթացու Ջերմանց միսթարության 1279 թ. ընթերցանությունը հասած ձևագրում (№ 416), օտարլեզվյան Վ-երը հիմնականում տառադարձված են ֆ-ով, ինչպես՝ լիլպար (21ա, 25ա, 40ա և այլն), Երևուփար (21բ), Բափար (21բ, 32ա, 44ա և այլն), շափ (60բ) և այլն, այն դեպքում, երբ վենետիկյան հրատարակությունը, որի հիմքում բնկած է ավելի ուշ շրջանի մի այլ ձևագիր, այդ բառերի ֆ-ի փոխարեն ունի ֆ՝ նոնֆար, բաֆար, շաֆ և այլն: 1279 թ. ձևագրում ֆ-ով հանդիպող հաս ու կենտ օրինակները որակ են կազմում, բանի որ այստեղ հիմնական սկզբունքը Վ-ն ֆ-ով արտահայտելն է: Մյուս կողմից նկատելի է նաև, որ այս ձևագիրը հետագայում ենթարկվել է վերանորոգման, որոշ տեղերում անհնայտորեն ֆ-ն ընչված ու վրալից ավելացված է ֆ: Այս փաստերը խոսում են այն մասին, որ ֆ-ի կիրառությունը, զոնև այս ձևագրի ընթերցանության ժամանակներում, զոնևս զրական լեզվի նորմայի չէր վերածվել: Կարելի է ենթադրել նաև, որ օտար բառերում Վ-ի փոխարեն ֆ գրությունը գալիս էր հեղինակային քննադրից, որին հետևելով ընդգրկանվողը, այնուամենայնիվ, որոշ տեղերում գրաբն ուղղել և դարձրել է ֆ:

Մյուս կողմից պետք է կարծել, որ միջին հայերենի բանավոր-խոսակցական ո՛չ բոլոր տարրերակներին էր հասուցել Վ-ն: Այսօր էլ մեր արևելյան բարբառների մի մասը (Մյունիքի, Ղարաբաղի և այլն) չի ձանաչում այդ Շնչյունը և օտար փոխառությունների մեջ, գրաբարի նման, դրա փոխարեն զնում է

փ: Ինչ խոսք, որ այդ հատկությունը հայերենի այդ տարբերակները պետք է որ ունեցած լինեն նաև միջին դարերում:

Հարող դարերում, հատկապես սկսած XIV-ից գրական ու գրավոր լեզվի մեջ փոխառյալ բառերի օտարերկրյան (-ի դիմաց բացառապես սկսում է գործածվել Փ-ն: Այստեղ զեղարվեստական գրականության և հատկապես բժշկագիտական աշխատություններում առատորեն օգտագործվում են արաբապարսկական ժառոտ ունեցող բառեր, որոնք ստուգարձվում են բոտ հնչական գրության. այսպես, օրինակ՝ latīf=լատիֆ, hayf=հայիֆ, nāfe=նաֆայ, sadai=սադաֆ, khāfer=քաֆուր, fiqān=ֆիզան, saīra=սաֆրայ, bi-sīfath=բեսիֆաթ, bivafa=բեվաֆայ, lafā=լաֆա և այլն, և այլն: Նույնիսկ հին ձևադրերի ընդօրինակությունների ընթացքում, երբ գրիչներին հայանի էր տվյալ օտար բառի արտասանությունը, նրանք հին փ-երի փոխարեն գնում էին Փ:

59. Հին հայերենի շլականները, որոնք արտահայտվում էին ժ և շ տառերով, առաջինը ձայնեղ, երկրորդը խուլ հնչյունի արժեքով, նույն որակով հանդես էին գալիս նաև միջին հայերենի շրջանում: Բազմաթիվ օտարերկրյան բառեր, որոնք այս շրջանում փոխառվել ու տառադարձվել են հայերենում՝ § հնչյունի դիմաց համապատասխանաբար ունեն շ դիրք, այսպես, օրինակ՝ պր. bi-šumār=բեշմար, պր. gulbašakhar=գուլբաշաքար, պր. šadī=շատի, պր. šah-baluth=շահբալուտ, պր.-արբ. šaf=շափ, շաֆ, արբ. šarāb=շարաբ, արբ. tabāšir=տապաշիր, պր. igdīš=իգիշ, ար. qumāš=կումաշ, արբ. šelx=շելև և այլն, և այլն: Օտարերկրյան §-ի տառադարձումը շ-ով և մյուս կողմից՝ հին հայերենից պակասված բառերի կազմում շ-ի գրության հետևողականությունը, բավարար սպացույցներ են արձանագրելու, որ միջին հայերենի շրջանում շ տառով արձանագրված § հնչյունը մնացել էր անփոփոխ և ընդհանուր էր ամբողջ հայերենի համար: Անշուշտ մասնահարության մեջ արձանագրվում են նաև սաանձին բառերում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք, որպես փոխազդեցական հնչյունափոխության երևույթներ, կրճատվեն առանձին:

Մերոպյան այբուբենի ժ տառով արտահայտվող հնչյունի համար փոխառյալ բառերում համապատասխանություններ չկան. սակայն այն հանգամանքը, որ գրության մեջ ժ-ի և շ-ի փոխանցումներ չկան, դրանք շին շփոթվում մեկը մյուսով, պետք է ընդունել, որ այս հնչյունը ևս միջին հայերենում մնացել էր անփոփոխ:

60. Միջին հայերենում սուլականներն արտահայտվում էին մերոպյան այբուբենի զ և ս տառերով, առաջինը՝ ձայնեղ, երկրորդը՝ խուլ հնչյունի արժեքով: Միջին դարերում այդ տառերին տրվող հնչյունական արժեքները ևս որոշակիորեն արտահայտված են օտար բառերի տառադարձության մեջ: Այսպես, ձայնեղ շ = զ համապատասխանության համար ունենք, արբ. zūkhām = զուքամ, արբ. nazīa = նզլայ, արբ. bīzarqatun = պզրիտուն, արբ. arzaq = ըրզակ, արբ. mazād = մազատ, հֆր. harnais = հաննեզ⁶⁰, հֆր. saisia = սալզայ, պր. mazgith = մզկիթ և այլն:

Այստեղ միայն thaza = թաժա բառն է, որ որոշ սկզբնաղբյուրներում (Մխ. Հեր. Ամիրց. և այլն) շ-ի փոխարեն ունի շ, որը հայերենում ոչ թե հնչյունա-

փոխություն արդյունք է. այլ համահունչ է. որ այդ ձևով էլ վերցված է՝ որպես փոխառու լեզվի բարբառային տարբերակ:

Սույլ s = ս հնչյունի համապատասխանությունն են արտահայտում արբ. rasm = ասաժ, արբ. qurs = կուրս/դուրս, արբ. šandāl = սանալ, պր. sarsām = սարսամ, արբ. savdā = սավալ, պր. Ispanāx = սպանախ, արբ. bašar = բասար, պր. bi-sīfath = բեսիֆաթ, պր. dāstān = դասան, արբ. majlis = մճլիս, ֆր. princesse = քրնժէս, իտ. contestabile = գուեզուտապլ, լատ. dux = դուքս, արբ. rayl = ըրալիս, ֆր. maistre = մայստ, պր. sarhang = սրահանգ, ֆր. assises = անսիզ, հֆր. chastier = շասիէ, արբ. šadr = սատր, ֆր. sol = սոլ, ֆր. passage = բասաճ, ֆր. losselin = ձաւոլին, ֆր. sénéchal = սինշալ, ֆր. sire = սիր և այլն, և այլն:

Ինչպես նկատելի է, մասնավորապես ֆրանսերենի ss-ն բառամիջում և s-ն բառակազմում հայերենում արտահայտվում են ս-ով. միակ բացառությունը ֆր. bassin = պացին (Անտ. 45) բառն է, որ ss-ի դիմաց հայերենում պայթաշփական ց է: Այս տարբերությունը համանաբար գալիս է փոխառու լեզվից:

Վերը բերված օրինակները ցույց են տալիս միջին գրական հայերենում մերոպյան այբուբենի երկու տառերին՝ զ-ին և ս-ին տրվող հնչյունական արժեքները: Իսկ ինչ վերաբերում է այդ հնչյունների փոփոխությանը, ապա նկատելի է, որ հատկապես զ-ն որոշակի դիրքում կորցնում է իր ձայնեզությունը՝ վերածվելով ս-ի, որը արտահայտվում էր նաև գրության մեջ: Այդ հնչյունափոխությունը ընդհանուր միջին հայերենյան բնույթ չէր կրում. համանաբար այն կատարվել էր նրա այն տարբերակներում, որոնց մեջ սակա էր ձայնեղ պայթականների խլացում: Այդ միտքը թևակազմում է այն փաստով, որ ավանդական զ-ի փոխարեն ս-ն հանդիպում է հիմնականում ձայնեղ պայթականներից առաջ ընկած դիրքում, այսպես, օրինակ՝ «...արտաքին սգալութեանս... սգալութիւն ի սգալեաց, և սգալութեամբ էրցն տրամակալի» (Գ. Զով. հձ. 226, 1046 թ.), «...սոզեցեալ ձայն» (ն. տ. 229, 1046 թ.), «կազուրի» (ն. տ. 363, 1154 թ.), «սզուշացուցանէ» (ն. տ. 42, 1170 թ.), «վշտանէս սսգա հայոց» (ն. տ. 813, 1221, Տարսոն), «եմք սրադեայր» (ն. տ. 866, 1230 թ.), «Ի տառնոս սգաստութեան» (ԺԳ հձ. 18, 1303 թ.), «ճգնասգեստ կրանաւորի» (ն. տ. 52, 1307 թ.), «զհինզ սգարեսն» (ն. տ. 140, 1318 թ.), «եմեազին սգեստիք պարարեցին գեայ... և ետուն զամենայն պէտս սգեստիցն» (ն. տ. 141, 1318 թ.), «սգաստութիւն սգարեսաց» (Ձեռ. 8030, 34ա, 1341 թ.), «զխորտակեայս կազուրեցես» (ն. տ. 36ա), «սզուշութեամբ» (ն. տ. 37ա), «սրազեցուցանէ» (ն. տ. 40բ), «սգալութեանցն» (ն. տ. 41բ), «սկիսքն» (ն. տ. 42ա), «սգաստանալ» (ն. տ. 47ա), «սզեկու ...սզեցուցանէ» (ն. տ. 53բ), «սզեկու զկերպարանս» (ն. տ. 59ա), «սզեկու զինձակ» (ն. տ. 59բ), «սազող եղև ձայն» (ն. տ. 61ա), «սազողական է ձայնն» (ն. տ. 61բ), «սգաստութիւն» (ն. տ. 61բ), «ոչ սազ անիցես սիտղով» (ն. տ. 62բ), «սգաստացուցի» (ն. տ. 74բ), «սզեցուցանեն նմա» (ն. տ. 87ա), «սզուշանալ» (ն. տ. 93ա), «զմերին ըսզեցու» (ն. տ. 93բ) և այլն, և այլն:

Անկասկա դիրքում զ-ի փոխարեն ս-ի գրություն համարյա չի հանդիպում. մեզ հայտնի է միայն «Արտավառ անուն» (Գ. Զով. հձ. 718, 1204 թ. Մուշ) օրինակը, որտեղ բառավերջի զ-ն նույնպես խլացած է: Մասնահարության

⁶⁰ Հին ֆրանսերենում ձայնավորների միջև և բառավերջում հանդես էկող s-ն սկզբն էլ ձայնեղ շ-ի արժեք:

մեջ թերևս կարող են լինել նման հաս ու կենտ այլ օրինակներ ևս, որոնք մեզ չեն հանգիպել: Սակայն միանգամայն օրինալագի պետք է համարել ոչ անկախ դիրքում գ-ի խաչացումը միջին հայերենի որոշ տարրերակներում: Ար միջնադարյան որոշ բարբառներում պայթականներից (ավյա զեպզում՝ խաչացած պայթականներից) առաջ հին ձայնեղ գ-ն խլանում էր, ապացուցվում է նաև նրանով, որ առհասարակ հին ա-ի գ գրությունն չի ցրանցվում: Այստեղ, ս-ի ձայնեղացումը հանդիպում է միայն բառակցորի և բառակցորի անկախ դիրքերում, այն էլ շատ եզակի օրինակներում, ինչպես, օրինակ՝ «իշեցեք Զուրխաս» (Գ. Հով. հճ. 759, 1212 թ.), Արտաշէլ (ն. տ. 22, 1254 թվականին կատարված՝ 618 թվականի ձեռագրի ընթացիկացության մեջ):

Հին ձայնեղ գ-ի դիմաց ծ ունենք մարզպան > մարծպան բառում, որտեղ հավանաբար ծ-ն ունեցել է ձայնեղ ձ-ի օրակ՝ օրինակ՝ «...նս բուրգս, Հասան, Համազասպ(պ), Սարգիս, որդիք Սմբատս, որդո Համզասպ մարծպանի» (ԿԳ. Մանահ. 106, 1191 թ.):

61. Ինչպես արդեն նշվել է, հին հայերենում շփականներից ո՛չ բուրն էին, որ նույն շարքում հանդես էին գալիս ձայնեղ և խուլ դույզներով. դրանցից էր նաև x (խ)-ն, որը միակ եռնալեզվային շփական բաղաձայն էր հին հայերենում: Սակայն այն հանգամանքը, որ հայերենի բաղաձայններն առհասարակ, այդ թվում նաև շփականների դերակցիո մասը, ունեին իրենց ձայնեղ և խուլ տարրերակները (գ: ս, փ: շ, իսկ միջին հայերենի շրջանում նաև վ: ֆ), պատենցիալ հնարավորություն էր ստեղծվում եռնալեզվային շփական x-ի բացակա դույզի առաջացման համար: Այսպիսով, խուլ x (խ)-ի կողքին ձայնեղ չ-ի առաջացումը կատարվում էր դուռ հայկական հողի վրա՝ հին հայերենի ձայնորդ գ հնչյունի պատմական փոփոխությանը: Գտնական զրբարի գ-ն, որը հին հայերենի լ ձայնորդի կատակային մի տարրերակն էր, իր պատմական զարգացմամբ վեր է ածվում եռնալեզվային ձայնեղ շփական չ-ի՝ պահպանելով գրային արտահայտության իր հին ձևը: Այնպես որ միջին հայերենում դ գրով արտահայտված հնչյունը ինչպես հին հայերենից ավանդված, այնպես և փոխառյալ բառերում, այլևս չունեցր իր հին արժեքը: Այս առումով էլ այս հնչյունի բնութագրերը շնորհելով ձայնորդների բաժնին, կատարում ենք այստեղ:

Անառյանը դեռևս 1948 թ. իր «Ե»-րը և զարձավ Դ» ուշադրավ հողվածում գրում էր. «Ամենքիս հայտնի է, որ Ե դարում հայերը ունեին երկու տեսակ Լ. մեկը նուրբ Լ, որ արտասանվում էր լեզվի ծայրով, ինչպես այսօրվա մեր Լ ձայնը, և երկրորդ՝ հաստ կամ թանձր Լ, որ արտասանվում էր լեզվի հետևի մասով: Այսպիսի հնչյուն ունեին նաև լատիները, ունեին լեհերը և ինքս էլ լսել եմ Պոլսի հունաց արդի արտասանության մեջ: Այսպիսի Լ ձայնը հին հայերը գրում էին ղ տառով, որ ապա ավելի թանձրանալով, զարձավ արդի կոկորդական ղ և օրանով ստացանք այնպիսի աններդաշնակ բառեր, ինչպես են խաղաղ, խաղող, ուղիղ և այլն: Սրանք նախապես հնչում էին խալալ, խալալ, ուղլի և այլն»⁴²:

Հաշվի առնելով այն հազամանքը, որ ժամանակակից բոլոր հայ բարբառներում համատարած է հին ղ-ի եռնալեզվային չ-ի վերածվելու երևույթը,

ակ. Հ. Անառյանը իր այդ ուսումնասիրության մեջ հանգում էր այն եզրակացության, թե «ղ ձայնի կոկորդային չ հնչումը արդեն ձևացած է եղել հայտնության մեջ նախ բան Կիլիկիայի զաղթականությունը (1080 թ.) և նախ բան Բագրատունյաց պետության կործանումը և Անիի գաղթը (1046 թ.)»⁴³:

Անառյանը այդ երևույթի սկիզբը դնում է IX դարը՝ հենվելով մասենագրական երկու փաստի վրա: Դրանցից մեկը Բուլա անվան տառագարձությունն է (արբ. կամ թրբ. 𐌸𐌹𐌶-𐌸𐌹𐌶 «ցուց»), որը IX դարի արարական հայտնի ոստիկանի անունն է: Սակայն Անառյանը այս անվան տառագարձության նկատմամբ վստահ չէ: Հաշվի առնելով, որ բուլա «ցուց» անունը հետագա դարերում հայոց մեջ շատ տարածված ու սովորական բառ էր և որ Բուլա ոստիկանի անունն էլ այդ ձևով հանդես էր գալիս այդ դարերից հասած ձևագրերի մեջ, Անառյանը հնարավոր է համարում նրա նախնական Բուլա ձևի սրբագրությունը: Այս տեսակետից էլ լավագույն վիճարկում է համարում Կազանկատվացու մոտ հանդիպող Բաղաղի ամիրայի անվան տառագարձությունը, թեև սա ևս էաին շրջանի ձևագրային ընթացիկացության հասած ձև է: Բաղաղի անձանանունը Անառյանը նույնացնում է ամիրա Հասան-բին-Ալի-ալ Բաղաղի-ալ Մամունի անձնավորության անվան հետ, ապա եզրակացնում է. «Բաղաղի կամ Բաղաղիս այնպիսի անսովոր անուն է, որ կարելի չէ մտածել, թե որն էր իր սրբագրած լինի Բուլա անվան նման, ուստի նա անշուշտ հարագատ է և ղ = 𐌸 տառագարձությունը տանում է Թ դարի կեսը»⁴⁴:

Անառյանի ինչպես այս, այնպես և մյուս օգտագործած փաստերը թեև չեն զալիս սկզբնաղբի աղբյուրներից, բայց շնորհիվ նրա մտքի խորախափանցողության, ղ-ի չ դառնալու ժամանակաշրջանի հարցը հիմնականում ստացել է իր ճիշտ լուծումը:

Մեր կողմից հավաքված լեզվական փաստերը, որոնք զալիս են միայն սկզբնաղբի աղբյուրներից, ներկայացնում են այդ երևույթի հետևյալ իրական պատկերը:

ա) Օտարլեզվյան չ-ն հայերենում այն զեպզում կարող էր արտահայտվել ղ-ով, երբ վերջինս ունենար տառագարձվող հնչյունի արժեքը. հակառակ զեպզում չ-ն պետք է արտահայտվեր բոտ հայերենի արտասանական բաղալի հնարավորության՝ նրան մոտ հնչյունով: Նման հնչյուն արտահայտող տառանշան էր խ-ն: Եվ իսկապես. 391 թվականին գրված մի խաղաղի վրա կարգում ենք՝ «...ես Խաբիր կանգնեցիք սուրբ Քրիստոսփորո (հոգոյն), դիս լիշեցեք» (Հայերեն արձանագրությանը արարիկներ, էջ 51): Ընդգծված հատուկ անունը արբ. 𐌸𐌹𐌶 𐌸𐌹𐌶 բառն է, որի 𐌸-ն, որ հետագա դարերում տառագարձվում է ղ-ով, այստեղ արտահայտված է խ-ով (որ խ-ն այս շրջանում ուներ x-ի արժեք, կտեսնենք ստորև): Նույնպիսի տառագարձություն ունենք նաև Հաղպատի 1021 թ. գրված մի վիճակական արձանագրության մեջ՝ Ալլխաբիփ⁴⁵ (ԿԳ. Հաղպ. 150) անվան մեջ, նույնը նաև Սանահնի XI դարի առաջին կեսի մի արձանագրության մեջ՝ «...ես Արլխաբիփ Հայոց մարգարան» (ԿԳ. Մանահ. 97): Այստեղ նույնպես արբ. Abu-ul-ḡarib անվան չ-ի դիմաց

⁴² Նշված այնտեղից, էջ 36:

⁴³ Անդ, էջ 36:

⁴⁴ Կոստանյանիցի վիճ. Տար.-ում, էջ 15, սխալ է վերածված. Ապաղարիպ՝ փոխ. Ապր-խարիփ:

⁴⁵ Հ. Անառյան, Երբ և զարձավ Դ, 2002 ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1948, № 5, էջ 32:

Հայերենում ունենք խ: Սակայն նույն ժամանակների վիժակն արձանագրություններում ունենք նաև ՚ = ղ համապատասխանությունը: Այսպես, Անիի Արլարիբի Պահլավունու եկեղեցու արձանագրություններից մեկում ունենք «...նա Ապղարիայ մարզպան...» (ԳՏՂ. I, Անի, 46, 1035 թ.), որտեղ Հայերենի ղ-ն արդեն համապատասխանում է արաբերենի ڤ-ին: Մի բանի տարով ազելի վաղ վիշալություն է Անիի Առաքելոց եկեղեցու արձանագրություններից մեկում հանդիպող Արղղամը անձանական օրհնակը, որտեղ նույնպես ունենք ղ-՚ համապատասխանությունը: Ահա արձանագրության այդ հատվածը. «...շնորհուն Այ ես Արղղամը որդի Ահհրամա իշխանաց իշխանի» (ն. տ. 12, 1031 թ.)⁶⁵:

Այս օրինակները համադրելով Սանահնի և Հաղպատի վանքի արձանագրություններում վիշալած ձևերի հետ, կարելի է ենթադրել, որ օտարերկրյան ՚ -ի դիմաց ղ-ով և խ-ով գուրգահեռ ձևերի գոյությունը պայմանավորված է եղել նրանով, որ հայերենի ղ-ն վաղուց արդեն ունեւր հոնալեղվալին ՚ -ի արժեք և այդ հիմքի վրա է փոխվել իր լծորդ խ-ին: Սակայն այս ենթադրությունը ճիշտ լինել չի կարող, քանի որ, ինչպես կտեսնենք ստորև, այս ժամանակներում ղ-ի լծորդը ոչ թե խ-ն էր, այլ ՚-ն, և սրանք են, որ գրության մեջ հաճախ շփոթվում են մեկը մյուսով: Մյուս կողմից կարելի է ենթադրել նաև, որ խ-ով ձևը ներկայացնում էր ազելի հին վիճակ՝ որպես արտահայտություն այն բանի, որ Հայերք բառ իրենց արտասանական բազայն հնարավորությունների՝ օտարերկրյան ՚ -ն բնկալում էին որպես Ն: Ըստ այս վարկածի, որ ազելի հավանական է, խ-ով ձևերը ազելի հին են և զալիս են այն ժամանակներից, երբ հայոց մեջ ղ-ն զեռես 1-ի մի տարբերակն էր: Մի բան միայն անստարակելի է, որ արդեն XI դարի սկզբներին օտարերկրյան ՚ -ն հայերենում տառագրվածում էր ղ-ով, որ նշանակում է, թե այն արդեն ետնալեղվալին շփական բաղաձայնի արժեք ուներ, ուստի և կատկային ձայնորդից շփական բաղաձայնի անցնելու պրոցեսը վերաբերում է նախորդ դարին (կամ դարերին):

ր) Ուշագրով է մի այսպիսի երևույթ ես: Ինչպես վերք արդեն ասվել է, հին Հայերենում ղ-ն որպես 1-ի մի տեսակը, լծորդվում էր հայերենի ՚-ի հետ: Այս իսկ տեսակետից պատահական չէ, որ հայերեն առաջին իսկ ձևագրերում գրովումք մեջ միևնույն բառում շփոթվում են ղ և ՚ տառերը: Սա, անշուշտ, մի կողմից նշանակում է, որ սրանք իրենց հնչյունական արժեքներով մոտ էին իրար, և մյուս կողմից, որ բխում է վերք ասածից՝ ղ-ն զեռես չունեւր հատկազգվալին շփական բաղաձայնի արժեք: Այստեղ կարելի է հիշատակել օրինակ, Մատենադարանի ՄՄ 985 (ժամ. IX—X դդ.), 1001 (ժամ. IX դ.) ձևագրերը, Ազարյան ձեմարանի 887 թ. գրությունը՝ ազնաարանք և այլն, որոնց մեջ ալլ // ալու, լուք // լուք, գալլ // գալու և այլն ձևերի հետ առկա են այնպիսիները, որոնց մեջ ղ-ի 1 արժեքը կասկած չի հարուցում, ինչպես, օրինակ՝ «...զանենայն հրանդո որ նեղեալ եին» (Աղ. ձեմ. ազ.): նման ձևեր հանդիպում են նաև նույն ժամանակներում գրված այլ ձևագրերում⁶⁶: Հե-

տաբրերի օրինակ է նաև Անիի Առաքելոց եկեղեցու արձանագրություններում արբ. halal բառի հալալ տառագրությունը զուգահեռ, մի անգամ հանդիպող հաղալ գրությունը (տե՛ս ԳՏՂ. I, 13, 1008 թ.): Այս արձանագրության քարք թեև մաշված է, բայց լուսանկարի մեջ որոշակիորեն երևում է ղ տառի գույքը, որտեղ ղ-ին տրված է 1-ի արժեք, այն զեպրում, երբ մի քիչ ազելի ուշ՝ 1031 թ. գրված, այդ նույն հուշարձանի մի այլ արձանագրության մեջ Արղղամը անձանական տառագրությամբ վիշալվում է ՚ -ը համապատասխանությունը:

Քանի որ անցումն այս շրջանում արդեն կատարված իրողություն է, ուստի և կարելի է կարծել, որ վերք բերված halal բառի տառագրության մեջ թույլ տրված սխալը զալիս է նախորդ շրջանի՝ ՚-ի և ղ-ի ուղղագրական շփոթից, մի երևույթ, որ հայերեն որոշ բառերում շարունակվում է մինչև XII դարը:

դ) Ուշագրության արժանի փաստ է նաև այն, որ եթե մինչև XII դարի կեսերը խիստ հաճախական է ՚-ի և ղ-ի գրության շփոթը, ապա նշված ժամանակից հետո մատենագրության մեջ սկսվում են ղ-ի և խ-ի ուղղագրության խախտումները, մի երևույթ, որն իր հերթին ղ-ի արժեքի փոփոխության մի նոր ապացույց է: Այսպես, օրինակ, VII դարի մի ձեռագրի հիշատակարանում, որն ընդօրինակվել է 1170 թվականին, թուրք բառի ղ-ի փոխարեն մի բանի անգամ արձանագրված է խ. ինչպես. «...բխտայն շարագրութիւն» (Գ. Հովս. Տձ. 37), «...նւ գրեցան բոս խնդրողացն պիտոյից բոլոր եր» (ն. տ. 38), «...Բուխտա առաջին խոստովանութեան» (ն. տ. 45): Պարզ է, որ բերված օրինակներում ղ-ի փոխարեն խ գրությունը հնչյունափոխության հետևանք է, բայց այդ հնչյունափոխությունը կարող էր կատարվել միայն այն զեպրում, եթե ղ-ն արդեն ունեւր ՚ -ի արժեքը: Ղ-ի չ հնչման մասին է խոսում նաև ավանդական խ-ի փոխարեն ղ գրությունը, ինչպես վիշալվում է նույն ձեռագրի հիշատակարանում. «...փաղալ յաղահաց յափշտակողաց» (Գ. Հովս. Տձ. 42, 1170 թ.), քանի որ, եթե ղ-ն ունենար 1-ի արժեք, չէր կարող փոխարինել խ-ին: Հետագա՝ XIII—XIV դարերում ազելի են հաճախանում ղ-ի և խ-ի ուղղագրական խախտումները, ինչպես, օրինակ. «...լինէր արեան ճապալիս ի բաղում տեղիս» (Գ. Հովս. Տձ. 813, 1221 թ. Տարսուն), «...շատ պակաս գոտյ յառաջին օրինակն և որշափ կարի, խորդեցի» (ն. տ. 845, 1226 թ.) և այլն: Այսպիսով՝ ղ > չ փոփոխությունը ղ-ն զաղարում է ՚-ի զույգը լինելուց և զառնում է խ-ի լծորդը և այդ հիմքի վրա որոշ դիրքերում հնչյունափոխվում խ-ի (ղ-ի դիրքային այդ փոփոխությունների մասին տե՛ս § 89):

Այժմ, սկզբնադարյունների նյութի հաշվառմամբ, զեռես զժվար է ասել, թե ղ-ի չ հնչումը նախապես Նյուստանի ո՛ր մասում առաջացավ և այնուհետև տեղիտորիալ ի՛նչ հաջորդականությամբ տարածվեց, թեև Անադոյանը զանում է, որ «Իմ ենթադրությամբ ղ ձայնը նախ երևան եկավ հյուսիսում, Աղվանքի սահմանակից հայոց մեջ՝ Ք դարի սկզբից (Կաղանկատացին), կար իջավ հարավ. ժ դարի կեսին զեռ տառանյալ գրության մեջ է (Գրասխանակերտացի), իսկ ՓԱ դարում արդեն ամբողջ երկրում տարածված է (Ասորիկ)»⁶⁷:

Առայժմ ամենահավաստի փաստերի հիման վրա կարելի է արձանագրել հետևյալը. ղ-ի չ հնչման առաջին վիշալությունները առայժմ տալիս են միայն

⁶⁵ նման օրինակներ հաճախանում են հետագա թվականների արձանագրությունների մեջ:
⁶⁶ Այսպես, օրինակ, հնուտ աղբյուրագետ, պատմաբան Վ. Հախրաբյան «Կոստանդնուպոլիսի համաձայնագրի բնագրի կցած իր ուսումնասիրության մեջ, խոսելով Կրիկիայում 1098 թ. գրված Կանոնագրի Մ 131 ձևագրի գրության հանգամանքների մասին, ուղղագրական այլ դիտարկությունների շարքում նշում է նաև՝ «Գրիչը անհետազգայնություն է հանդես բերել ղ և ՚ տառերի գրծածությունների մեջ, հաճախ գրում է, օրինակ՝ փաշղալ, ալլ, ալլում, իսկ ազելի հաճախ՝ ալլ, ալլում» (էջ LX):

⁶⁷ Տե՛ս 2. Անատյան, նշվ. հոդվածը, էջ 40:

XI դարի սկզբնադարյունները: X դարի արձանագրությունները նույն օտար բառերի 7-ի դիմաց դնում են խ: Այս նույն ժամանակներում սկզբնադարյադարյուններում դև-ն և Լ-ն հանդես են գալիս որպես լծորդ հնչյուններ, և Լ-ն շատ հաճախ գրություն մեջ շփոթվում է դ-ի հետ: Ղ-ի 7 հնչյունն ձևավորմամբ դ-ն դառնում է համապատասխան խույ շփական խ-ի ձայնի լծորդը, այս փոփոխությամբ խախտվում է նախորդ շրջանում սովորյալ 7 հնչյունափոխությունը և ստեղծվում է մի նոր հակադրություն՝ դ: խ, և այս հիմքի վրա արձանագրվում են վ>խ հնչյունափոխության օրինակներ:

Այս բոլորից բերելու հանգել այն եզրակացության, որ Ղ-ի 7 հնչյունն սկզբը հավանաբար պետք է համարել IX դարի վերջերս կամ X դարի սկզբները և այն ավարտված համարել XI դարի սկզբներին:

62. Հանդիման համապատասխան շփական խ-ի մասին բիշ րան է մեղում սակեր: Վերը շարադրվածից ինքինքն բխում է, որ մեծադասարարայունների խ տառով արտահայտվող հնչյունը միջին հայերենի շրջանում էլ պահպանում էր խ-ի ափսոսքը: Այդ որոշակիորեն երևում է փոխառյալ այն բառերում, որոնց մեջ օտարերկրյան X հնչյունի դիմաց հայերենը դնում է ոչ այլ ինչ, և ինչ ոչ խ: Այսպես, օրինակ՝ պրս. 𐭪𐭫𐭮 = չարխ (Մժթ. Տար. 155), արբ. 𐬯𐬀𐬎𐬌 = սապախ (ն. տ. 173), արբ. 𐬰𐬀𐬎𐬌 = շեխ (ն. տ. 158), արբ. xabār = խապար (ն. տ. 182), պրս. bixabar = բիխապար (Կ. Երզնկ. 210, 211), արբ. muxāfara = մուխափար (Մխ. Հեր. 52ա), արբ. buxār = պուխար (ն. տ. 27ա), պրս. is-phanāx = սպանախ (ն. տ. 28ա, 30ա) և այլն⁴⁵:

Մասնագրություն մեջ հանդիպում են որոշ բառաձևեր, որոնց մեջ ավանդական խ-ի փոխարեն Ղ է, ինչպես, օրինակ՝ սղայ (<սխայ), անգալ, սղայանք և այլն: Մակայն արանց մեջ զգվար քն խույ ս-ի կողքին խ-ն հնչյունափոխված լինելը Ղ-ի: Այսպիսի գրություններում պարզապես զործ ունենալ լծորդ հնչյուններն արտահայտող ստաբիլ գրության շփոթի հետ:

Այս շրջանում հանդիպում են նաև խ-ի փոխարեն հ-ով բառաձևեր: Ամենահին վկայությունն ունենք 912 թվականից՝ Մլրն թագուհու ավանտարանի սկզբնագիր հիշատակարանում, այսպես. «...իմ ձեռամբս և ձեռքս եմ շինեալ» (Գ. Հովհ. հձ. 109): Այնուհետև ունենք օրինակներ և հետագա դարերից, ինչպես՝ «...անհույզ զգովելին» (ն. տ. 612, 1198 թ.) «...հեղափոխ արասցէ» (ն. տ. 613, 1198 թ.), «...ևս կայր մեզ այլ զիրս զրելոյ հաղտետարակ... անէի գտետարակ հաղին և զրէի երես մի» (ԺԴ հձ. 23, 1304 թ. Վասպուրական) և այլն: Գրության այս ձևերը, բերելու մեր ժամանակակից որոշ բարբոսներում (օր. Արարատյան) հանդես եկող խ>հ հնչյունափոխության առաջին վկայություններն են, հատկապես հաղ, հաղտետարակ բառերում, սակայն բացառված չէ նաև, որ այդ օրինակների մի մասում պարզապես իր արտահայտությունը գտած լինի հ-ի և խ-ի գրության շփոթը՝ հատկապես այն բարբոսների (օր. Վասպուրականի) ազդեցությամբ, որոնց մեջ կատարված էր հ>խ հնչյունափոխությունը (տե՛ս ստորև):

63. Այս բաժնի սկզբում բերված շփականների շարքի վերջին ներկայացուցիչը է առողջ արտահայտված հնչյունն է, որը, և ինչպես օրինակներ նրա ժամանակակից հնչյունը, կողորդային մի պարզ շունչ էր, որ առաջանում էր թորերից զուրս մղվող օդի թույլ հոսանքի աղմուկից՝ առանց ձայնալարերի

մասնակցությամբ: Ժամանակակից հայ բարբոսներում այդ խույ հնչյունի կողքին սակա է նաև նրա ձայնից տարբերակը (օր. Կարեն բարբոսում), որը առաջինից տարբերվում է միայն նրանով, որ սրա արտաբերման ժամանակ մասնակցում են նաև ձայնալարերը: Անշուշտ, այս հնչյունը իր նախատիպը պիտի որ ունեցած լիներ միջին դարերում, բայց առայժմ մասնագրական մվայունքով հնարավոր չէ պարզել և հաստատել նրա գոյությունը քննարկվող շրջանում: Միայն կարելի է ենթադրել, որ յ>հ հնչյունափոխությամբ առաջացած հնչյունն է, որ միջին հայերենի որոշ տարբերակներում ունեցել է այդ ձայնից հազագի որակը:

Ինչ վերաբերում է հ-ին և նրանով արտահայտված հնչյունին, ապա այն միջին դարական հայերենում համապատասխանում էր նրա խույ տարբերակին, որը երևում է հատկապես այն օտար բառեր տառագրանության մեջ, որոնք ունեն հ. բառ որում այդ համապատասխանությունն սակա է բառում գրված բոլոր դիրքերում, այսպես, օրինակ՝ արբ. hab=խազ, պրս. hū = հու շարավալից արլուն, արբ. hunar=հունար, արբ. harāmi=հարամի, ֆր. har-nais=հառնեզ «կարասիք», արբ. hila = ճիլայ ժամբաստանություն, արբ. buhrān=բուրհան ճիլանգություն ճղնամամ, պրս. šahbaluth=շահբալուտ «արքայակաղն», պրս. khah=ruba=քաղնրայ, արբ. mahg=մագ «հարանայուսի սփռա», արբ. bahār=բահար «գարուն», պրս. gunākhār=գունահար «մեղավոր», պրս. juhar=ջոհար=ջուհար և այլն:

Սակայն դրական լեզվից զուրս, միջին հայերենի որոշ տարբերակներում հ-ի փոխարեն ունենք խ:

Վերը՝ խ հնչյունի քննության ժամանակ, նշվեց, որ մասնագրության մեջ հին խ-ի փոխարեն գրվում է հ (հաղ<խաղ): Այդ երևույթը համարելով խ-ի բարբոսային հնչյունափոխության մասնակի մի արտահայտություն, մենք միաժամանակ նման գրության ձևերը արդյունք էինք համարում այն բարբոսների ազդեցության, որոնց մեջ կատարվել էր հ>խ հնչյունափոխությունը: Եվ դա բնական է: Եթե սովյալ բարբոսում հին լեզվի բառակազմի հ-երը օրինաչափորեն փոխվել են խ-ի, բայց ավանդական ուղղագրությամբ գրանք պետք էր շարունակել գրել հ-ով, ապա գրանով զգվարանում էր այդ երկու տառերի ուղղագրության հարցը և, բնականաբար, առաջանում էր գրության շփոթ: Հենց այդ է պատճառը, որ գրիչները չկարողանալով կողմնորոշվել սովյալ բառի ուղղագրության մեջ՝ բառը մերթ ցուրտ են գրում խ հնչյուն (խազ) և մերթ՝ այդ հնչյունաբանական երևույթի հոգեբանական ազդեցությամբ՝ հակառակ տառագրանությամբ (հեղամույ): Այս զգվարության մասին անհեղձորեն խոստովանում է Քովմա Արքեպիսկոպոստությունը Աղթամարում ընդօրինակած Գանիկի գրիչը իր հիշատակարանում: Նա գրում է՝ «...ևս զարմեալ լիբես անկեալ աղաչեմ զբարի ընթեցողոց և անմեղազորութիւն խեղրեմ վասն սխալանոց զոցոս, և ինչ աւելի կամ պակաս դատիքի ի սմա, և ինչ կէտ, և ինչ տուն և ինչ ստոր և ինչ յայն ինչ բառ, ի ինչ կամ ի հոյ, զի գիտեալանքն քաջ գիտեմ, որ ի հին գրեանք այսպիսեանցս ոչինչ փոյթ է արարած, և ես անհմուտ զու սոցոս՝ զոր ինչ լսեալ էաք լիկեղեցական զոցո ի բառիցս յայսցանէ՝ զնայն գրեցաք, և զոր արտաբույ սոցոս էր՝ ոչ գիտելով թէ որպէս էր...» (ԺԴ հձ. 13, 1303 թ.):

Հ>խ հնչյունափոխությունն առավել հասուկ է եղել Վասպուրականի հայ խոսվածքներին: Դա ապացուցվում է ո՛չ միայն Գանիկի գրիչի վկայությամբ,

⁴⁵ Բերված օրինակները վկայում են նաև այլ սկզբնադարյունների մեջ:

որը դրոճել է Ազիամարում, այլև սկզբնազիր տվյալներով, որոնք գրված են Վասպուրականում կամ նրան հարող զավաններում: Բերենք մի շարք օրինակներ. «...զամենայն ազգատոխմքն իմ...» (ԺԳ հճ. 130, 1317 Բ. Արճնչի գավառ), «...որոյ անուն Շախրնշախ կոչի, ստացաւ զայս ի խալալ և յարգար վաստակոց իւրոց» (ն. տ. 281, 1336 Բ. գրիչ՝ Քումա Արհիշեցի), «...ի յարգար և ի խալալ վաստակոց իւրոց» (ն. տ. 170, 1321 Բ.), «...խալս և Վաստակ կոչե» (Գ. Հովս. հճ. 610, 1198 Բ.), «...զժախաճուն և զխոնատա վայրս» (ն. տ. 612, 1198 Բ.), «...նա՛ վերջին ստացողս խուն (<հուն) ներսէս ստացայ զանտարանս ... յիշատակ ինձ ... և խուն հոցղեղին» (ԺԵ հճ. 1, 125, 1411 Բ.), «...անուանակից սուրբ նախատակին» (ն. տ. 309, 1429 Բ.), «...զնախագետ՝ թոռն նորին» (ն. տ. 309, 1423 Բ.), «...միայն խոյակապ սուրբ խոյս է մնացել» (ն. տ. 326, 1425 Բ., Ազիամար), «...յիշեռչիբ ... և զնորայրն իւր զխուն Մարգարէն» (ԺԵ հճ. 11, 70, 1456 Բ., Բաղնշ), «Աստուած-ողորմի ստացէք Յովանէսին, որ նախատակեցաւ ի Շաշմուտի բերդն» (ն. տ. 102, 1458 Բ., Ազիամար), «...թէ մեծ է և թէ փոքր, թէ խարուստ է և թէ ազբառ» (ն. տ. 183, 1462 Բ., Կտուց անապատ) և այլն:

Ավելորդ ենք համարում օրինակներ բերել հետագա դարերից հասած ձեռագրերից, որոնց մեջ, ինչքան մտանում ենք մեր ժամանակներին, այնքան առատ են վկայությունները: Սակայն նորից պետք է շնչոտել, որ ես >խ> հնչյունափոխությունը հատուկ էր միայն Վասպուրականի և նրան հարող շրջանների հայերեն խոսվածքներին և ոչ տրպական միջին գրական հայերենի համար:

ՉԱՆՆՈՐԿՆԵՐ ՈՒ ՆՐԱՆՔ ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

64. Հայերենի լ, զ, մ, յ, ն, ո, ր, տ առերով արտահայտվող հնչյունները միայն պայմանականորեն՝ հետևելով դրանց ավանդական անվանմանը, կարելի է համարել ձայնորդներ, քանի որ դրանք ո՛չ միայն միջին հայերենի, այլև նրան նախորդած շրջանում իսկ արդեն վեր էին ածվել սովորական բաղաձայնների: Սրանցից զ-ն, ինչպես արդեն ասվել է, քննարկվող շրջանում փոխարկվել էր ձայնոզ շփական շ-ի և հին խ-ի հետ հանդես էր գալիս նույն շարքում որպես նրա ձայնոզ լծորդը: Ինչպես կտեսնենք ստորև, ձայնորդներից լ-ն և ռ-ն նույնպես ենթարկվել էին փոփոխության. դրանցից հատկապես վերջինը ոչ երկբարբառային դիրքում նույնացել էր Վ բաղաձայնի հետ և այլ-և մի առանձին հնչյուն չէր արտահայտում: Այդ շարքից միայն լ, մ, ն, ո, ր հնչյուններն էին, որ պահպանել էին իրենց հին արժեքները և որպես բաղաձայններ հպականներից ու շփականներից առանձնանում էին միայն նրանով, որ հանդես էին գալիս միանակ՝ առանց լծորդների:

65. Հայերենի լ-ի լ արժեքը միջին հայերենում որոշակիորեն երևում է հետևյալ փոխառյալ բառերում. արբ. ăilă=ալաք *սպարազանք*, պիտուլք-նեյ» (Անս. 47), ֆր. plaid=բլայքի *սպառազանք* (ն. տ. 19, 33), ֆր. privilege=բրվիլե (ն. տ. 67), ֆր. lige=լին (ն. տ. 9 և այլն), արբ. çalsaba=խալապ (ն. տ. 39), արբ. hila=հիլալ (ն. տ. 33), ֆր. bail=պալլ (ն. տ. 9), ֆր. chalonge=չալունջ (ն. տ. 19), ֆր. sol=սոլ (ն. տ. 29), ֆր. double=աուպլ (ն. տ. 83), արբ. iulân=իուլան (ն. տ. 11), ֆր.

faillir=ֆայլիլ *դատի մեջ պարտվել*» (ն. տ. 63), արբ. lablâb=լաբլաբ (Մխ. Հեթ. 60 Բ), արբ. jûlâb=նուլապ (ն. տ. 25Բ), արբ. maqlat=մակալաք *հճան*» (ն. տ. 11ա), արբ. nazla=նզլալ (ն. տ. 45ա, 46ա), արբ. balzâm=պլզամ (ն. տ. 10Բ, 11ա), արբ. sandal=սանտալ (ն. տ. 25ա), պրս. bulbul=բլբուլ (Կ. Երզնկ. 119, 120, 121, 131 և այլն), պրս. gulbašakhar=գուլբաշաքար (ն. տ. 144, 148), արբ. davlath=դավաթ (ն. տ. 211), արբ. qalb=զալվ (ն. տ. 196), արբ. qabûl=զաբուլ (ն. տ. 198), արբ. jumla=չուվալ (ն. տ. 185), արբ. Jallâd=չալաա (ն. տ. 185), պրս. pñûlâd=փուլաա (ն. տ. 185), իտ. contestabile=գուեգուստապլ (ՄՃբ. Տաբ. 200), լատ. legato=լիկաթ (ն. տ. 220), լիկաա (ԺԳ հճ. 35, 1305Բ.), արբ. mahlab=մահլապ (ՄՃբ. Դատ. 16), ֆր. Josselin=ձալսլին (Գ. Հոգս. հճ. 351, 1130 Բ.) և այլն:

Այս օրինակները որոշակիորեն ցույց են տալիս, որ հայերենի լ-ն ունի 1-ի արժեք. բայց այս հիմնական համապատասխանությունների կողքին կալին նաև մասնակի շեղումներ:

Բազմաթիվ փոխառյալ բառերի մեջ բացառություն է կազմում նախ՝ ֆր. marechal=մարշալաթ բառը, որտեղ լ-ի դիմաց առկա է խ: Այստեղ, անշուշտ, խ-ն զարգացել է զ-ից: Անառյանը այդ բառածեր համեմատում է ֆր. marechal բառի հետ: Հենվելով հին հայերենում գործող՝ Մեկիի հայտնագործած այն օրենքի վրա, ըստ որի՝ բաղաձայնից առաջ միշտ լինում է զ, և ոչ լ, և նկատի ունենալով Մեկիի բանավոր այն դիտողությունը, որ հին ֆրանսերենի ձև հնչյունափոխմանը օձայնավորի փոխվելիս՝ անցել է 37 աստիճանով, Անառյանը իրավացիորեն գտնում է, որ marechal բառածեր հայերենում լ-ից առաջ նախ պետք է ունեցած լիներ զ («մարշալաթ»), որից հետո միայն կարող էր հնչյունափոխվել խ-ի⁶⁹:

Սրանից անմիջապես կարելի է եզրակացնել, որ marechal բառի փոխառման ժամանակ ֆրանսերենում ձև-ը արդեն գտնվում էր 37-ի աստիճանի վրա, հետևաբար և, էթև հայերենում այն տառադարձվել է աղ-ով, այդ վերջինիս մեջ զ-ն ունի շ-ի արժեք: Նման օրինակներ են նաև Կարսի աշխատության մեջ բերվող Ըննադո, Ռրնադո <Renald, Պագոթն, Պագոտն <Balduin, Baldouin անունների տառադարձությունները (որոնց վկայակոչում է նաև Անառյանը), ուր նույնպես ձև-ը համապատասխանորեն արտահայտված է աղ կապակցության միջոցով: Հետևաբար, մարշալաթ բառում լ-ի փոխարեն խ-ի առկայությունը ավելի հավանական է գտնում Մեկիի բանավոր դիտողության մեկնարանոթյամբ, քան նույնի՝ վերը նշված օրենքի կիրառությամբ:

Անառյանը բերում է նաև արաբերենից փոխառված ٲٲٳ=quill սփականք բառի օրինակը, որի առաջին վկայությունը գտնում է Օրբելյանի մոտ՝ կոպլիալ ձևով⁷⁰: Նա իրավացիորեն այդ բառածեր ալիսի հին է համարում, քան Օրբելյանի ապրած ժամանակաշրջանը (մեռել է 1304 թ.), քանի որ բաղաձայնից հետո լ-ն արտահայտված է զ-ով (ըստ Անառյանի նկատած ոչ օրինաչափության, որ բաղաձայնից հետո էլ զրբում է զ, և ոչ լ, ինչպես՝ սասղ, աւիղ, կոնղ և այլն): Ինչպես կարելի է նկատել, կոպլ բառածեր ևս հայց մեջ մտել է զեռես այն շրջանում, երբ զ-ն չ էր դարձել, հակառակ զեպ-

⁶⁹ 2. Անառյան, Երբ լ գարձավ զ, նշված հանգուստ, էջ 34:

⁷⁰ Անդ:

բում ո՛չ միայն 1-ն կրտսողարձվեր լուով, ինչպես ունենք վերք բերված գունդուսապալ—contestabile, տալով և այլ նման բառերում, այլև զ(Յ)-ն պետք է տասաղարձվեր դ-ով, ինչպես ունենք հետագայում (երբ դ-ն արդեն չ էր)՝ դալով=qalib, դապուլ=qabal և այլն:

Մեր բարբառներում տարածված կողքանք, կողպիս, կողպէլ, կորբէս, գրղրագ, գրղրանք, գրմագ, դուրբալ, կոխպէս, գողբէլ, գրղբէլ և այլ նման ձևերը, որոնց վիպակոչում է Աճառյանը, ցույց են տալիս միայն, որ դրանք զարգացել են կողպ ձևի վրայից՝ դ-չ բնդհանուր հնչյունափոխության պայմաններում, մանավանդ էթն նկատի ունենանք նաև մեր արևելյան մի շարք բարբառներում այդ նույն բառի դուփուլ, (Ջանգեզուր, Ղարաբաղ) տարբերակները, որոնց մեջ հարազատորեն են արտահայտված օտարեզգլյան չ և 1 հնչյունները:

Օտարեզգլյան 1-ի տասաղարձման այս օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ VIII—IX դարերում, երբ պիտի որ կատարված լինեին արաբական առաջին փոխառությունները, դ-ն զեռևս չ-ի արժեք չէր ստացել: Այդ առավել ներսում է արբ. զվմ բառի կողպ կամ կողպ ձևերից մեր բարբառներում զարգացած տարբերակների օրինակներից, որոնք 1-ի փոխարեն դ ունեն միայն ըստ զիրքային արտահայտության: Նթև ընդունելու լինենք, որ բարբառներում այդ բառաձևի լայն տարածման համար պիտի պահանջվեր ոչ թի՛ մասնանկ, ազատ, թվում է, թե դ-ի ետնալիզվալին շփական բաղաձայն դասնալու սկզբնավորությունը պետք է տեղափոխել X դարի սկիզբը:

66. Բնզային բաղաձայններ արտահայտող մ և ն տառերը պահպանել էին իրենց հնչյունական հին արժեքները: Այդ որոշակիորեն երևում է մի կողմից փոխառալ բառերում, ուր ամենուրեք փոխատու լեզուների մ և ռ հնչյունները հայերենում համապատասխանորեն արտահայտված են մ և ն գրերով և, մյուս կողմից, համահղական բառաձևերի գրություն մեջ՝ շեղումների և ուղղագրական սխալների՝ բացակայությամբ:

Մ=տ համապատասխանությունն են նշում, օրինակ՝ արբ. zukhām = զուքամ (Մխ. Հեր. 31ա), արբ. maqlat = մակալաթ (ն. տ. 11ա), արբ. muxatara = մուխաթայ (ն. տ. 52ա), արբ. balʿam = պղպամ (ն. տ. 10բ), արբ. rasm = բասմ (ն. տ. 47ա), պրս. sarsam = սարսամ (ն. տ. 30ա), արբ. qumāš = կումաշ (Անս. 19), արբ. mazād = մազաս (ն. տ. 79), արբ. mahf = մահբ (ն. տ. 45), Ֆր. marc = մարկ (ն. տ. 29), պրս. bi-šumār = բեշմար (Կ. Երզնկ. 211), պրս. bimār = բիմար (ն. տ. 210), արբ. maʿlīs = մելիս (ն. տ. 143), արբ. murād = մուրաս (ն. տ. 191), արբ. lumia = շումալայ (ն. տ. 183), իտ. empereur = քմբուր (Մժբ. Տար. 225), լատ. comes = կոմս (ն. տ. 104), արբ. harāmi = հարամի (ն. տ. 122, Մժբ. Դատ. 31), արբ. mahlab = մահլալ (Մժբ. Դատ. 16), Ֆր. maistre = մայստա (Մժբ. Տար. 218), արբ. maydan = մայյամ (ն. տ. 51), պրս. mazgih = մզկիթ (ն. տ. 155), արբ. amānat = ամամաթ (ԺԳ ՏՃ. 295, 1337թ.) և այլն:

Հայերենի մ-ի հնչյունափոխությունն առհասարակ չի նկատվում, բացառությամբ բայական ժամանակների հոգնակի թվի առաջին զևմբի—մլ վերջավորության, որը միջին հայերենի տարբերակների մեծագույն մասում հնչյունափոխված է —ե՛լ-ի (աամֆ>աամե՛լ):

67. Օրինաչափ համապատասխանությունն գտնվում են ունի նաև օտարեզգլյան ու-ի և հայերենի և-ի միջև. այսպես՝ արբ. babunaj = պապունգին

(Մխ. Հեր. 28ա), արբ. sandal = սանալ (ն. տ. 25ա), արբ. buhrān = բուրհան (ն. տ. 8ա), արբ. hunar = հունար (ն. տ. 42բ), արբ. ʿunnāb = յունապ (ն. տ. 27բ), արբ. nauba = նուպա/նուպայ (ն. տ. 53), Ֆր. bassin = պացին (Անս. 45), Ֆր. chalonge = չալունջ (ն. տ. 19), Ֆր. canne = գան (ն. տ. 79), Ֆր. harnais = հառնեկ (ն. տ. 19), Ֆր. banier = պաներ «գլխարանի ծանուցում» (ն. տ. 43), արբ. naqd = նաղա (ն. տ. 19. Կ. Երզնկ. 173), պրս. gūnāhkhār = գունահար (Կ. Երզնկ. 189), պրս. dāstan = դաստան (ն. տ. 154), hanar = հանապ (Մժբ. Տար. 31), արբ. qantara = կանգաթայ (Մժբ. Դատ. 9), իտ. contestabile = գունդուսապալ (Մժբ. Տար. 200), Ֆր. princesse = քննես (ն. տ. 204), Ֆր. prince = քինն (ն. տ. 108), Ֆր. baron = պարոն (ն. տ. 163) և այլն⁶⁷:

ն-ի անկման մասին տե՛ս § 79:
68. Մետրոպոլիտան արտահայտված հնչյունը հայերենի գրի առնելու շրջանում բառի մեջ գրաված բոլոր գիրքերում էլ հանդես էր գալիս նույն չ կրտսածան հնչյունի արժեքով:

Միջին հայերենը թևե հետևում է հին ուղղագրությանը և այդ նույն գիրքերում շարունակում է պահել գրության հին ձևերը, բայց ինչպես կտեսնենք, այստեղ միայն բառանկից է, որ չ տառին տալիս է հին կրտսածանի արժեքը. բառասկիզբը հանդես է բերում յ>հ փոփոխություն, այն դեպքում, երբ բառավերջի գիրքում յ-ն պարզապես համար հնչյուն է:

Բուսասկզբում կատարված փոփոխությունը ենթադրվում է նախ նրանով, որ ինչպես ժամանակակից հայերենում, այնպես և նրա բարբառներում, այդ գիրքի յ-ին այժմ համապատասխանում է հ, ինչպես՝ յառակ = հառակ, յատակ = հատակ, յարութիւն = հարութիւն, յաւա = հավա, յիմար = հիմար, յիշել = հիշել և այլն: Այս երևույթը, որ այնքան օրինաչափ ու բնդհանրական է, չէր կարող իր արմատները չունենալ միջնադարում: Եվ իսկայան, սկզբնագրությունները նման փոփոխության մի շարք օրինակներ են տալիս:

Կատարված հնչյունափոխությունը նախ արձանագրվում է ըստ յ-ի արտասանական նոր գրության՝ հ-ի միջոցով: Այսպես, օրինակ՝ հայերեն ձևադրերի հիշատակարաններում ունենք. «...լորում ժամանակի ունէր գաթոս հայրապետութեան հայոց աէր Գրիգորիս մակնորոյրջեայ (<մակնորոյրջեայ) Անաթարզեցի» (ԺԳ ՏՃ. 6, 1302 թ., Գլածոր), «...այր մեծիմաստ և հորնահաննար (<չոզնահաննար) ...զեորնամեղ (<չոզնամեղ) գրիշտ» (ն. տ. 6, 7, 1302 թ., Գլածոր), «...ձեռար հոգնամեղ և թարմատար գրիշ» (ն. տ. 34, 1305 թ.), «...գրեցաւ սա հոգնամեղ և ստուանուն և փցուն և լետին գրիշ» (ն. տ. 69, 1310 թ.), «...և զեղեղեցիս բարանատակ (<բարայատակ) կործանեաց» (ԺԵ ՏՃ. 5, 1401 թ., Տաթև) և այլն: Բերված օրինակներում (մակնորոյրջեայ, չոզնահաննար, չոզնամեղ, (բարմ)ատատար բառերում բառասկզբի յ-ն ըստ հնչյունական իր նոր արժեքի արտահայտված է ն տառի միջոցով:

Նույն երևույթը արտահայտված է նաև հակառակ գրությամբ, երբ հ հնչյունն էլ գրանդրվում յ-ի միջոցով. այսպես, օրինակ՝ «Շոգոյն գայտանան պատարայն մի՛ Մարիամա և, վասն միաբանական յոզոյն, միել ի զալուստն

⁶⁷ Էջերը եղվում են միայն վերջիններս համար գործնելու համար. Քերտույ ձևերը կրկնվում են հիշյալ աշխատություններում, իսկ գրանցից շատերը վիպվում են նաև այլ սկզբնագրություններում:

Քր» (ԿՂ Սանահ. 112, ԺԳ դ.): Այս բնագրում նույն հոգի բառի հոգյուն թեքված ձևը արտահայտված է նաև յոզոյն գրչությամբ, ուր բառակցորի յ-ն ունի հ-ի արժեք: Նման օրինակ է միջնադարյան աղբյուրներում տարածված հալեց, հանց, հեհեց բառածևերի կողքին յլեց գրությունները: Ինչպես՝ «Ճայս ամի ջուրքն յլեց պահասեցան, որ բազում զետազայ ջաղացք խափանեցան» (ԺՆ ՏՃ. 1, 93, 1405 թ.): 1341 թ. գրված մի Ճաղընտիրի (Չեռ. 8030) մեջ հարսուտիւն բառը գրված է՝ «...յարսուտիւնն յաղբատուիւնն դանոնայ» (էջ 83բ) և այլն: ԻՆարին, գրության ինչպես այս, արնպես և վերք նշված հ-ով ձևերը շատ սակավ են: Եվ դա ինքնին հասկանալի է, բանի որ մի կողմից ուղղագրական կանոնները պահպանվում էին գրության մեջ, մյուս կողմից յ>հ քնդհանուր հնչյունափոխության պայմաններում՝ բառակցորի յ-ն առանց որևէ ուղղագրական բարեփոխության արտահայտում էր իր նոր արժեքը:

Այստեղ ուշագրավ է մի այսպիսի երևույթ նա: Հայտնի է, որ գրաբարում ի նախդիրը ձայնավորից առաջ փոխվում էր յ-ի: Միջին հայերենում այդ նույն դիրքում թեև պահպանվում էր յ գրությունը, բայց դրանից առաջ անպայմանորեն ավելանում էր մի ի: Այսպես, օրինակ՝ «...հրդմնցնէ զայն վկայքն զարդասն ի խաչն ու ի յանտարանն» (Անս. 57), «...դարդասն ի կահրա պատեհ է որ այնէ, որ զիր զինն ի յինք դարձնէ» (Ն. տ. 63) և այլն: Ի նախդիրի կրկնակի գործածության նման օրինակներ շատ հաճախ են հանդիպում միջինհայերենյան տեքստերում: Գրության այսպիսի ձևերը ստեղծվում են այն բանի պատճառով, որ բառակցորի յ-ի հ հնչյունափոխությանը միանցվում է նրա նախդրային ֆունկցիան, և նրա այդ զերթ ապահովելու նպատակով է, որ կրկին գրվում է ի:

Բառասկզբում յ-ի կրած փոփոխության փաստը հաստատվում է նաև այն փոխառյալ բառերի օրինակներով, որոնք բառակցքում ունենալով ՚յ, հայերենում համապատասխանաբար արտահայտված են ո՛չ թե յ-ով, այլ ն-ով, որը այս դիրքում արտահայտում էր կիսածայն ՚յ հնչյունը, ինչպես, օրինակ՝ հազույթ, նասաման, նար, նարաղ, հասիր, եղդաշ, նազիգար և այլն:

Ենթադրելի է նաև, որ բառակցորի յ-ի հնչյունափոխությանը առաջացած հ-ն միջին հայերենի տարբերակների մի մասում ունեցած լինի ձայնկալության երանգ, ինչպես այդ արձանագրվում է հայերենի ժամանակակից բարբառների մի մասում: Առայժմ դժվար է այդ ենթադրության օգտին ծանրակշիռ փաստարկներ բերել: Ենթադրելի է նրանով, որ այն բարբառներում, որոնց մեջ յ-ն ստացել էր ձայնեղ հ-ի արժեք, նույն դիրքում հակադրվում էր խուլ հ-ին, և այս խուլ տեսակետից գրության մեջ կարող էր արտահայտվել միայն յ-ի միջոցով:

Բառակցորի յ-ի անկման մասին տե՛ս § 82:

69. Բառամիջի դիրքերում յ-ն պահպանել էր իր հին արժեքը: Այդ հաստատվում է ոչ միայն հայերեն բառերի ուղղագրության մեջ յ-ի և հ-ի գրության շփոթի բացակայությամբ, այլև նրանով, որ փոխառյալ բառերի մեջ օտարլեզվյալն կիսածայն ՚յ-ն հայերենում հետևողականորեն դրագրվում էր յ-ի միջոցով: Մի քանի օրինակներ. ֆր. plaid=բլայք (Անս. 33), ֆր. bail=պայլ (Ն. տ. 9), ֆր. saisie=սայգայ (Ն. տ. 57), ֆր. douaire=առայք (Ն. տ. 21), ֆր. faillir=ֆայլիլ (Ն. տ. 63), արբ. rayis=բուայիս (Մժբ. Տար. 33), ֆր. maître=մայստր (Ն. տ. 199), արբ. maydan=մայլան (Ն. տ. 51) և այլն:

70. Հին հայերենում բառակցորի յ-ն հանդես էր գալիս ա և ո ձայնավորներից հետո: Միջին հայերենի շրջանում, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ փաստերը, այդ դիրքում յ-ն պահպանվել էր միայն միավանկ բառերի վերջում: Բազմավանկ բառերում թեև ավանդաբար այդ յ-ն գրվում էր, բայց այն համար առաջ էր և չէր արտասանվում: Այդ էր պատճառը, որ ինչպես վիժական արձանագրություններում, այնպես և տարբեր այլ սկզբնագիր ձևագրերում այդ յ-ն գրության մեջ շատ հաճախ չէր արտահայտվում:

Բառակցորի յ-ի անկման սկզբնավորումը և այդ երևույթի ավարտն ու քնդհանրացումը հայտնի լեզվի մեջ տեղի էր ունեցել մինչև միջին հայերենի ժամանակաշրջանը: Ինչպես ցույց է տվել պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը, այդ երևույթի գրավոր առաջին վկայությունները սկսվում են VI դարից՝ վիժական արձանագրությունների մեջ: Դրանք տապանաբարների վրա գրված հիշատակագրություններ են, որոնց մեջ սեռական հոլովով հանդես եկող անունների ա և ո հոլովիչներից հետո բայց է թողնված յ հնչյունը: Ահա այդ վաղ վկայությունների տեքստը. «Այս գիրս Գեղգա քահանայի է»։ «Այս է հանգիստ Դաթի Գթունեաց ան որդւ Վասակա քարէպա(շտ)ի»²²; Պրոֆ. Աբրահամյանը վկայախոչում է նաև Դովինի կաթողիկե եկեղեցու կղմինդրն ծածկի՝ VII դարի սկզբների մի արձանագրության մեջ ծառայ ձեռի փոխարեն ծառա գրությունը, որը վկայող արձանագրության լրիվ տեքստը հրատարակված է նաև «Հայերեն արձանագրությանը առարկաներ» ժողովածուի մեջ. այսպես՝ «Ես Յովաննես վարդապետ ծառա սրբոյ Գրիգորի յազաւթս յիշէցէր ի (տէ)ր»²³:

Հետագա դարերում այդ երևույթի գրական փաստերը ավելի հաճախանում են, թերևս պայմանավորված դրավոր աղբյուրների առատությամբ: Վերջ նշված, ինչպես և այլ սկզբնագիր փաստերի հիման վրա պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը եզրակացնում է. «...Արզնե IX դարում լրիվ կիրպարանք էր ստացել արտասանության մեջ բառակցորի յ հնչյունի անկման օրինքը, մասամբ արտացոլում գտնելով նաև գրության մեջ»²⁴: Այնպես որ միջին հայերենի շրջանում երկվանկ և բազմավանկ բառերի բառակցորի յ-ն սոսի համար հնչյուն էր և գրության մեջ այդ դիրքում նրա պահպանվելը ունեց միայն ուղղագրական նշանակություն:

XII—XIV դարերի մասնագրության մեջ բազմաթիվ են բառակցորի դիրքում այդ հնչյունի անկման փաստերը, որոնց մեկ առ մեկ վկայողները ավելորդ ենք համարում: Սակայն այս երևույթի օրինաչափ լինելը հաստատելու համար հարկ է հիշել միջին հայերենում մուտք գործած այն օտար բառերը, որոնք թեև փոխառու լեզվում բառակցքում ունեն միայն Յ, բայց հայերենում, այնուամենայնիվ, վերջից ստանում են յ: Այդպիսի առաջագործույթն են ցույց է տալիս, որ այդ յ-ն հնչյունական այժեք չունեք և գրվում էր միայն հին ուղղագրության պահպանման պահանջով: Այսպես, օրինակ՝ պար. thaza=բաժայ (Մժբ. Հեր. 50բ), արբ. qantara=կանգարայ (Մժբ. Դատ. 9), արբ.

²² Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության, 2002 ԳԱ Տեղեկագիր, 1957, № 4, էջ 80: Փաստերը բազմապես կ. Կաֆաջարյանի «Դովին բազաք» և նրա պեղումները՝ աշխատությունից: Արևրդ տաղանագիրը հրատարակված է նաև «Հայերեն արձանագրությանը առարկաներ» ժողովածուի մեջ (էջ 50):

²³ Անց. նաև՝ «Հայերեն արձանագրությանը առարկաներ», էջ 155:

²⁴ Ա. Աբրահամյան, Եզվ. աշխատությունը, էջ 82:

qarura = կարուրայ (Մխ. Հեր. 21ա), արբ. muxāfara = մուխաֆայ (Ն. տ. 52ա), արբ. nazla = նալայ (Ն. տ. 45ա), արբ. savda = սավայ (Ն. տ. 10բ), պրս. khah-ruha = բանրրայ (Ն. տ. 42բ), արբ. qal'a = կալ (Մմբ. Տար. 29), ֆր. chambrelan = շամբրլայ (Ն. տ. 211), արբ. hila = հիլայ (Ան. 33), ֆր. saisia = սայզայ (Ն. տ. 57), արբ. darba = տարպայ (Ն. տ. 25), արբ. jumla = ջումլայ (Կ. Երզնկ. 185) և այլն: Հատկանշական է, որ այս կարգի փոխառյալ բառերում հանդիպում են նաև առանց յ-ի ձևեր, ինչպես՝ արբ. jalaba = լալապա (Ան. 39), արբ. jala = շաֆա (Կ. Երզնկ. 211) և այլն:

Այսպիսով, կբի ամփոփելու լինենք յ հնչյունի մասին վերը ասածները, սպա պետք է ընդունել, որ միջին հայերենի շրջանում հին հայերենի յ կհաս-
ձայնը պահպանվել էր միայն բառամիջին: Բառակազմում այն հնչյունափոխ-
վել էր հ-ի, իսկ բառավերջում՝ ընկել:

71. Քննարկվող շրջանում հին հայերենից ավանդված Ե հնչյունի երկու՝ կոշտ և փափուկ տարբերակները շարունակում էին իրենց գոյությունը: Որ մեծությամբ այբուբենի ու և Ե տառերը այս շրջանում էլ ունեին ՚ի և Ե հնչյուն-
ների արձեքներ, հաստատվում է մի քանի հանգամանքներով: Նախ, այդ տա-
ներով արտահայտված հնչյունների հնչյունային արժեքը գրանցվում է առու:
արու, լուս: լուր, կուհ: կրիկ, վառ: վար, վառել: վարել և այլ նման գոյացի-
րում, որոնց մեջ իմաստի տարբերակում կատարվում է ո: Ե հակադրությունում:
Մյուս կողմից օտար բառերի առաջադասումը ևս ջույց է ապիս այդ երկու
հնչյունների տարբերակված գործածությունը քննարկվող շրջանում: Արաբե-
րենից, ֆրանսերենից, իտալերենից, պարսկերենից և ֆուրբերենից փոխառած
բառերում այդ լեզուների բառամիջին և բառավերջի Ե-ի դիմաց հայերենը հիմ-
նականում գնում է ր. ինչպես, օրինակ, ֆր. otreier = աղբիլ (Ան. 21, Մմբ.
Տար. 107), ֆր. privilege = բովկե (Ան. 67), արբ. mahr = մահր (Ն. տ. 45),
ֆր. marc = մարկ (Ն. տ. 29), պրս. çarak = շարակ (Ն. տ. 83), ֆր. banier =
պաներ (Ն. տ. 43), արբ. şadr = սաար (Ն. տ. 45), արբ. darba = տարպայ (Ն.
տ. 25), ֆր. douaire = տուայր (Ն. տ. 21), թրք. yarıçıl = արդուլի (ԺԳ 545,
24, 1304 թ.), արբ. buhrān = բուրնան (Մխ. Հեր. 10բ), արբ. qarura = կա-
րուրայ (Ն. տ. 21ա), արբ. qurs = կուրս (Ն. տ. 45ա), արբ. hunar = հուհար
(Ն. տ. 42բ), արբ. muxāfara = մուխաֆայ (Ն. տ. 52ա), արբ. bızarqatun =
պղրկաուն (Ն. տ. 44ա), արբ. buxār = պուխար (Ն. տ. 27ա), պրս. sarsām =
սարսամ (Ն. տ. 30ա), արբ. tabāšir = ապաշիր (Ն. տ. 41ա), պրս. khah-
ruha = բանրրայ (Ն. տ. 41ա), իտ. empereur = Եմբրուր (Մմբ. Տար. 225),
արբ. xabar = լապար (Ն. տ. 182), պրս. çarx = շարխ (Ն. տ. 155), ֆր.
baron = պարոն (Ն. տ. 162), արբ. burj = պուրն (Ն. տ. 220), պրս. sarhang =
սրահանգ (Ն. տ. 150), ֆր. frère = ֆրեբ (Ն. տ. 178), պրս. bahar = բահար
(Կ. Երզնկ. 117), արբ. başar = բասար (Ն. տ. 132), պրս. bi-xabar = բի-
լապար (Ն. տ. 211), պրս. bi-şumār = բեշմար (Ն. տ. 211), պրս. bīdār =
բեաար (Ն. տ. 198), պրս. bimār = բիմար (Ն. տ. 210), պրս. guibaşakhar =
գուլարշաքար (Ն. տ. 148), պրս. gunāhkhār = գունահքար (Ն. տ. 189), արբ.
thadbir = բաապիր (Ն. տ. 203), լատիբ (Մխ. Հեր. 24բ), արբ. murād =
մուրաա (Կ. Երզնկ. 168), արբ. mu[rab] = մուրապ (Ն. տ. 157), արբ. javr =
ջավր (Ն. տ. 211), արբ.-պրս. juhar = շոհար (Ն. տ. 208), արբ. qan[ara] =
կանգարայ (Մմբ. Դատ. 9), ֆր. prince = բրինն (Մանր. մանկ. 77), ֆր.
stre = սիր (Մմբ. Տար. 200) և այլն:

Մրանց հակառակ հունարենից կատարված փոխառություններում այդ
լեզվի օ-ի դիմաց հայերենը ունի կոշտ ո, որով պետք է կարծել, թե հունա-
րենում այդ հնչյունը վերը նշված լեզուների Ե-ի համեմատությամբ ավելի
բրթաուն արտասանություն ուներ, այսպես, օրինակ՝ ἀφύρσις = ափիսիսի-
նա «աննօրջա» (Մխ. Հեր. 51բ), ἰσοπεδοί = լոտոխա սծախված ապրանքի
գինք» (Ան. 83), πρῶξι = պրոլիս «օժիտ» (Մմբ. Տար. 52), Արաբերենի ուժգին
օ-ի դիմաց, որը արաբերենում գրոգրված մեջ արտահայտվում է ֆառադով,
հայերենը օրինաչափորեն ունի ո, ինչպես՝ durra] = տուայն (Մխ. Հեր. 23ա):
Օրինաչափ է նաև ֆրանսերենից փոխառված harnais = հառնեկ բառում Ե-ն
համապատասխանությունը, քանի որ այն հայերենում գնվում է և անգալի-
նից առաջ: Միայն ֆր. maître = մայստ (Մմբ. Տար. 198, 218), ֆր. cham-
bre]an = շամբրլայ (Ն. տ. 211) բառերում է (զույցը գտնվեն և ուրիշները), որ
Ե-ի դիմաց ունենք ո: Մրանք թերևս իրենց դիրքային առանձնահատկությամբ
է, որ առաջադրվել են այսպես:

72. Բառակազմում միջին հայերենը Ե չի ընդունում, ուստի և օտար այն
բառերը, որոնք բառակազմում ունեցել են Ե, հայերենում առաջադրվել են
ս-ով, որի արտասանության ժամանակ սկզբից եղել է նաև մի թույլ Ե, որը
հաճախ գրություն մեջ չի արտահայտվել, այսպես, օրինակ՝ արբ. rumb = ոտպ
(Մխ. Հեր. 26բ), արբ. rasm = ոսամ (Ն. տ. 49ա), արբ. rayis = բուայիս (Մմբ.
Տար. 33) և այլն: Այս նույն բաներով է, որ Աբխազից բառում առաջին վան-
կի կորստով՝ Ե-ն մնալով բառակազմին, փոխվել է ս-ի՝ Ռաապիս // Որսա-
պիս (վկայությունները տե՛ս § 12):

73. Միջնադարյան սկզբնադրյուններում հանդիպում են նաև ս>Ե փո-
խանցման դեպքեր, օրինակ՝ «...պատասխան Գերգայ արևեն» (ԿԳ Հարք.
165, ԺԳ Գ.), «...իսմ բվերն արևեն, և յնա իմ՝ ինձ և իմ բվերն արևեն» (Ն. տ.
175, 1189 թ.), «...արողը շնուին փախչին ի յիւրմէն» (Գրիգ. 45), «...արող-
չեալ դանային ի տունս իրենանց. փոխանակ արողալիքան՝ մահացան»
(Ն. տ. 47), «...անփոյթ արնէ» (Գ. Հոյս. 54, 376, 1246 թ.), «...դոյտին գուր-
լայն մարացայ» (ԺԳ 545, 38, 1305 թ.) և այլն:

Համեմատաբար ավելի օակավազակ են Ե>Ն փոփոխության դեպքերը:
Այսպես ունենք, օրինակ, ձայնավորների միջև՝ հուրեն>հուռեն, — Այս իմ դիր
է հուռենա» (ԳՆՎ. III, Վալոց ձոր, 119, XIII դ. վերջը), ետրեմաց անմանու-
թյամբ՝ շուրշառ>շուրշառ. ինչպես՝ «...տվար զմեր պահէլն ի կարոց դան...
Ա շարէլի ի կաթողիկէս և շուրշառ» (ԳՆՎ. I, Անի, 40, 1293 թ.), «...դիմ սակի
ապլենանի գոնծէն տվաք» (ԳՆՎ. III, Վալոց ձոր, 56, 1318 թ.). վերջին օրի-
նակում Ե-ն ո է գարձել մինչև գրափոխությունը, երբ ձայնավորների սքմամբ
Ե-ն ընկել է անմիջապես ն-ից առաջ (ապարանան>ապրենան>ապլենան):

Մրանք բոլորն էլ բանավոր լեզվի առանձին տարբերակներում կատար-
ված փոփոխություններ են, երբեմն նաև անհատական լեզվի առանձնահատ-
կություններ, որոնք դրե՛լ-փորագրողների և արտագրողների կողմից մուծվել
են գրավոր լեզվի մեջ:

74. Առնել բայի վերը նշված արնէլ ձևի կողքին արձանագրվում է նաև
նրա այլնէլ տարբերակը, ինչպես՝ «...վերաբերութիւն այրնէլ» (Մխ. Հեր. 26բ),
«...անուրջն սկիզբն ի ճռանցն այրնէս» (Ն. տ. 33ա), «...կարող ենք ճար
այրնէլ՝ ապիկիբ արհանելով» (Ն. տ. 60) և այլն, որը անցման օղակ է նույն

բայի այնքան ձևի համար: Վերջինս տարածված է հատկապես կրիկյան հայերենում: Մի քանի օրինակներ. «...իր աղկի մարդոքն այնէ կնցցութիւն... այնէ զինչ սահմանն է» (Լեոն Գ-ի 1288 թ. արտոնագրում), «...ես լուսի հրամանք, որ տխրիկ այնն» (Անս. 49), «...իրենց պացխուն պարտին որ այննն» (ն. տ. 51), «...թէ այնէ ալրիկն տխրիկ ու թէ շաշնէ» (ն. տ. 55), «...հնազանդութիւն այնէ նպիտակութեան նպիտակութեան» (Սմբ. Գատ. 27), «...նա զինչ կամենայ կարէ այնն» (ն. տ. 31), «...պատարագ շարէ այնն» (ն. տ. 32) և այլն: Թերևս հենց այս այննի ձևից էլ դարգացել է անէլ բարբառային տարբերակը, ինչպես՝ «Ձով դու սիրով նստար անես, Անանց կրակով գանձնիկն ալրես» (Հով. Թիկ. 126), «Բայց ինչ անեն, ճարակ չկայ» (ն. տ. 127), «Չարկամն զայն չէր աներ, զինչ որ զուն կանն» (ն. տ. 151) և այլն: Չնայած որ համոզմունք է նաև սրանից զարգացած մի այլ տարբերակ՝ այննի // աննի > էննի.—«Աստէնս շնն, զիս ամօթով, Անդէն բաժին կեր զհեննու» (Հով. Թիկ. 138) և այլն, իսկ ավելի ուշ՝ նաև քննի:

75. Միջին հայերենում զբարբառի ձայնորդներից ւ-ն ու-երկբարբառային դիրքում, այն է՝ ձայնավորից առաջ, ձայնավորների միջև և բառավերջում, իր արտասանությամբ ու հնչյունական արժեքով համընկնում էր շրթնատամնային վ բաղաձայնի հետ: Այդ համապատասխանությունը գոյություն ունեն զոնա նախամիջին հայերենյան շրջանում և ընդհանուր էր հայերենի բոլոր տարբերակների համար: Այն իր զբաղմը արտահայտությունն է ստանում հենց առաջին սկզբնաղբի արդյունքներում: Առաջին զբաղմը վկայությունները հանդիպում են վիճակի արձանագրություններում, որտեղ ըստ ւ-ի հնչյունական արժեքի, այն դրսևորվում է վ-ի միջոցով: Այսպես, օրինակ, Արուսի 869 թ. մի արձանագրության մեջ Քրդապագ բառի փոխարեն գրված է Քրքավալ (Վիմ. Տար. 3, Այբ. Այբ. 144, Եսհիթ. 61): X դարից ունենք՝ «...երես Աշտո յԱվանկ զբաղացն» (Վիմ. Տար. 9, 981 թ., Այբ. Այբ. 146), «...ես Գաւլիբ Վարզա որդի... ԳՎալիբի զայգի... վան Գալիբի հոգույն» (Վիմ. Տար. 10, 992 թ., նույնը նաև Այբ. Շիր.): Թեև այս օրինակները շուտեւ իրենց լուսանկարները, որոնց միջոցով կարելի լիներ հաստատ համոզվել զրանց համատարբության նկատմամբ, բայց կասկածելու հիմքեր էլ չկան, քանի որ նույն երևույթը արձանագրվում է նաև նույն ժամանակների ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես, օրինակ, 966 թ. մի հիշատակարանում ունենք. «...շնորհիվ ամենակալին աստուծոյ կատարեցալ ավետարանն» (Գ. Հովս. հ. 4. 1021):

Այսպիսով, միջին հայերենի շրջանում ու-երկբարբառային դիրքում հանդես եկող ւ-ն արդեն ունեն շրթնատամնային ձայնեղ շփական Վ-ի արժեք, թեև այստեղ նա, ուղղագրական այլ կանոնների պահպանման հետ միասին, ավանդաբար շարունակվում էր ւ գրությունը: Այնուամենայնիվ, այս ժամանակներում բաղաձայնիվ են ուղղագրական վրիպումները և ւ-ի փոխարեն վ-ով գրությունները: Միայն մի օրինակ պարունակում ենք 1271 թ. զրանագրից. «...մենք չէաք ի հավնել... հայնց հավնեցալ... լինի հաստատուն յավիտան... մեծահարկի ձիավորացն»:

Մի շարք բառերում ավանդական կամ ուղղագրությամբ ընդունված ւ-ի փոխարեն ունենք ֆ. ինչպես՝ ինչի // ինչիլ // ինչիլ > ինչիլի.—«...ինչիլի յայս արեղն» (Պար. Կոստանդինի զաննագրում), նար > նաֆր.—«...և կապեաց լինք նաֆր Գ շիչ և կապեաց թողթ ի ծայր բումբին» (Սմբ. Տար. 52), «...հրամայեաց նաֆրի բորբոբելի զասլյան» (ն. տ. 95), շնորհաւոր > շնոֆոր.—«...որոյ անուն

իշխան Շնոֆոր յորբորբի» (ԺԴ հ. 29, 1304 թ.), «...և բորբոյ սորին՝ Շնոֆոր տիկնա» (ն. տ. 429, 1357 թ.), «...շնոֆոր տեսնու» (Կ. Սրգելի. 143) և այլն: Անուշտ, այս բառերում ւ > ֆ հնչյունափոխությունը կարող է բացատրվել միայն այն դեպքում, եթե ընդունելու լինենք, որ ւ-ն ունեցել է Վ-ի արժեք, որից հետո միայն, ձայնեղությունը կորցնելով, դարձել է խուլ շփական ֆ:

Այսպիսով, հին հայերենի ձայնորդներից մի քանիսի մեջ կատարված որսական փոփոխությունների հետևանքով՝ միջին հայերենում նրանց շարքը սահմանափակվում էր 1, m, y, n, l, r հնչյուններով, որոնք համապատասխանաբար արտահայտվում էին 1, մ, յ (բառամիջում ու միավանկ բառերի վերջում. իսկ բառասկզբում՝ ն), ն, ո, r գրերով:

ՉԵՑՈՒՆԻՎՈՒՆԵՎՈՒՆ ԱՅԼ ԵՐԿՎՈՒՄՆԵՐԻ

76. Բացի պատմական հնչյունափոխության այն երևույթներից, որոնք նկարագրվել են վերը հղական, շփական ու ձայնորդ հնչյունների փոփոխություններին նվիրված բաժիններում, միջին հայերենի շրջանում հին հայերենից ավանդված որոշ բառերի կազմում կատարվել էին և այլ կարգի փոփոխություններ, որոնք արտահայտվում էին հնչյունների անկմամբ կամ հավելվածմամբ, հնչյունների ամփոփմամբ ու զրափոխությամբ, անունափոխությամբ և տարբերություններով:

Ի տարբերություն մինչև այժմ նկարագրված հնչյունափոխական երևույթների, որոնք օրինաչափորեն ընդգրկում էին ավելի հնչյունի համանման բոլոր դիրքերը և այս իսկ տեսակետից ստանում էին հնչյունական օրենքի արժեք, հնչյունների անկման, հավելման, զրափոխության և այլ կարգի փոփոխությունները բնորոշվում են նրանով, որ զրանք հիմնականում կատարվում էին առանձին բառերի ու բառախմբերի սահմաններում և հետևողական, բացառություններ չընդունող հնչյունական օրենքի արժեք չէին ստանում: Ինչպես կանանք ստորև, զրանցից ամեն մեկը՝ առանձին-առանձին վերցրած, որպես ընդհանուր երևույթ իր մեջ երեսն է բերում տարբեր հնչյունների մասնակի փոփոխություններ:

ՉԵՑՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՄԸ

77. Վերը՝ բաղաձայնների քննության ընթացքում (տե՛ս § 70), արդեն նշվել է, որ բառավերջի կիսաձայն յ-ն միջին հայերենում ընկել էր, և եթե այն գրության մեջ զոնա պահպանվում էր, ապա միայն ըստ սովորության ու հին ուղղագրական կանոնների հետևողական: Քննարկվող շրջանում այն փաստորեն համը հնչյունի արժեք ուներ: Բառավերջի ա-ից և ո-ից հետո յ-ի անկումը ամենաընդհանրական օրինաչափություն էր, որ հանդես էր գալիս միջին հայերենի բոլոր զրանումներում:

Բառական միավորներում հնչյունների անկման երևույթը, իհարկե, չէր սահմանափակվում միայն վերը նշվածով Այստեղ նաև զբաղմը արդյունքները բավարար նյութ են տալիս նրա այն հիմնական դրսևորումների վերա-

բերյալ, որոնք ծավալվելով՝ հեռագայում լայն տարածում ստացան մեր ժամանակակից բարբառներում:

Մատենադարանի մեջ գրանք իրենց վիպությունների հաճախականությամբ և բառական միավորների բնորոշման ծավալով համաշափ չեն և վայրից վայր տարբերություններ են ստլիս: Այնուամենայնիվ, զբանջից մի քանից իրենց սկիզբն են առնում զեռև միջին հայերենին նախորդած շրջանում՝ վիպվելով առաջին իսկ սկզբնադարյուններում:

78. Համեմատարար տարածված էրևոյթ է Ե-ի անկումը, որը տեղի է ունենում բառաձևում, կր Կրան անմիջապես նախորդում կամ հաջորդում է մի այլ բաղաձայն հնչյուն:

ա) Արզնի իսկ X դարի վիմական արձանագրություններում վիպություններ ունեն ջաղազ բառի հնչյունափոխված ջաղազ ժողովրդական բառաձևի վերաբերյալ (տե՛ս Վիմ, Տար. 8, 966 ք., 9, 981 ք. և այլն): Պետք է ենթադրել, որ այս բառում Ե-ի կորուստը կատարվել է ավելի վաղ, քան նրա առաջին վիպություններն են, քանի որ միջին հայերենի ժամանակաշրջանում այն արդեն բավական լայն տարածում ունի, հանդես է գալիս բառարարություններում և արձանագրում է տարբեր վայրերում գրված աղբյուրներում: Այսպես, օրինակ՝ «...երբ պիտենայ իր ջաղազն իր է» (Գ. Հովս. հճ. 250, 1067 ք.), «...ակն մի ջաղազ...ջաղազանոյն ծառայութիւնն» (ԳՏՎ. I, Անի, 58, XII դ.), «...կէս ակն ջաղազ... Գլխորին ջաղազ» (ն. տ. 63, 1215 ք.), «Քողի գաղազանոյս ամենոյ զգամզին» (ն. տ. 28, XIV դ.), «...զերիու ակնի ջաղազն յԱռաք.» (ԳՏՎ. III, Վայոց ձոր, 246, 1279—90 քք.), «չոր հաննի ի դետոյ ջրելոյ կամ ջաղազն» (Սմբ. Գատ. 16), «...գնեցի զՀոմերո ջաղազ» (ԳՏՎ. II, Սյունիք, 41, 1397 ք.), «Յայն ամի ջուրն լինեց պակասեցան, որ բազում գետաղազ ջաղազ ի յափանեցան» (ՓԵ հճ. I, 53, 1405 ք. Անդեանապատ), «...գնեցի գաղազն Շամօլին» (ն. տ. 475, 1437 ք., Արճնշ), «...իրենք ջաղազ էն անձինն, և որպէս որ ջաղազն վերին քարն ուժով է...» (Ամիրգ. Ուս. բժշկ. ի), «...գաղազպան Աղուպն իշնցէր» (ՓԵ հճ. II, 140, 1460 ք. Արձիկ), «...գՄկրտիչ ջաղազպանն» (ն. տ. 303, 1470 ք. Աղթամար), «...շինեցի գաղազն... յետոյ նորոգեցի գաղազն», (ԿՂ Սանահ. 145, 1520 ք.) և այլն:

բ) Արձան, արձանի, արձել, արձնալ բառաձևերին զուգահեռ սկզբնադարյուններում արձանագրվում են նաև Ե-ի անկմամբ՝ արձան, արձնիլ, արձել (այժմել), արձնալ ձևերը. ինչպես՝ «...արձնալ մարկ մի արձաթ» (Անս. 29), «Քող ամէ քանի ու այժմէ» (ն. տ. II), «Մէկ կայ, որ հազար ամէ, հազար կայ, որ մէկ մի շաժէ, Այն մէկն որ հազար ամէ, մոտ յանդեանի փող մի շաժէ» (Հով. Երզնկ. 154), «...գիտունն ի յանդիտաց մէջն ծառայ է շարայար, որ նման խամ ապիկու յաժան ձգեն անգին ջոհար» (Գոս. Երզնկ. 201), «...Քէ խաղողի շիվ լնուս՝ դամէնն ամէ» (Վտտ. 68), «Ամբիկ ևս դու այգոր» (Ֆր. 360), «...պազ մի յերեւոյ ամէ դերդեկան» (Հով. Քլի. 156) և այլն: Նույն բառաձևերը հանդիպում են նաև այլ ձևապարներում և հատկապես միջնադարյան ժողովրդական տաղերի, երգերի ու արձակի տեքստերում:

գ) Նույն փոփոխությունը հանդես է բերում նաև կր բառը, որի դիմաց որոշ աղբյուրներում ունենք եփ, կր գրությունները. օրինակ՝ «...և վանց վանկերներն, որ եփ կու գան՝ նա գիբենց սնորկներն կու բանան» (Առն Գ-ի 1288 ք. արտոնագրում), «...զգարբնի փուրն, որ կր ի յինքն բաշէ զրնիկ տար

ալն» (Մխ. Հեր. IIբ), «...ոչխարն եփ գառն կամ ուլ բերէ» (Սմբ. Գատ. 13), «...եփ զուզի և կարգի» (ն. տ. 21 և այլն), «Եփ զայս լու զրկածն» (Անս. 59), «...ու եփ կրթալ՝ ի հեռն տանի» (ՓԵ հճ. I, 211, 1418 ք.), այսպես նաև Ամիրգովլաթի «Ուսումն բժշկութեան» հեղինակային բնագրում բարձրաթիվ օրինակներով. ինչպես՝ «...եփ մարդն հիանդ լինի» (էջ 15), «...եփ զգի-նին շափաւոր խմէ» (ն. տ. խզ) և այլն: Այսպես նաև նրա մյուս՝ հրատարակված աշխատություններում: Այս բառաձևը, առհասարակ, ավելի հաճախ է հանդիպում ուշ շրջանի բնօրինակություններով հասած ձևապարներում:

դ) Ծնորհալար բառը մատենադարանի մեջ հանդես է գալիս այլ և այլ հնչյունափոխված ձևերով, այդ թվում նաև Ե-ի կորստով. ինչպես՝ «...աստուած շնհատը անէ» (ՓԵ հճ. I, 392, 1420 ք. Սյունավանք), «...աստուած շնհատը արացէ» (ն. տ. 179, 1415 ք.) և այլն: Ավելի տարածված է այս բառի անձնական գործածությունը՝ և՛ արական և՛ իրական առումներով. ինչպես՝ «...ես Ծնհատը Տփսեցի» (ԿՂ Հաղթ. 168, 1253 ք.), «...բորոշս սորին՝ Ծնփոր տիկնս» (ՓԵ հճ. 429, 1357 ք. Կաֆա), «...յիշատակ հարն Քումա-լի և մորն Ծնհորի» (ՓԵ հճ. I, 398, 1430 ք. Խոտրվածանք), «...հարն իր Ծնփոր պարունին» (ն. տ. 493, 1438 ք.), «...մօր իմն Ծնհովին» (ն. տ. 15, 1401 ք.), Ծնհուր (ն. տ. 44, 1404 ք.), Ծնհուր (ն. տ. 45, 1404 ք. Տոյ գյուղ), Ծնփոր-խարուն (ն. տ. 345, 1425 ք.), Ծնփոր պարուն (ն. տ. 65, 1406 ք.) և այլն:

ե) Միջին հայերենի շրջանում հին Բաշել-ի դիմաց համեմատաբար կայուն բառաձև է Բաշելը, թեև որոշ ձևապարներ, այնուամենայնիվ, հետևում են հին ուղղագրությանը: Մի քանի օրինակներ Բաշել բառի կիրառությամբ. «...ի յերկար Բաշել» (Մխ. Հեր. 26ա), «...կողմն թուլանայ և ի վայր Բաշել» (ն. տ. 38ա), «Բաշել տուր» (ն. տ. 47ա և այլն), Բաշելն թրաշրջալ» (Անս. 67), «...նա զէջ սպաննաղ սպաշխարութիւն Բաշէ» (Սմբ. Գատ. 32), «...ձորան ըզպահուցն կու Բաշէ» (Ներս. Ենորհ. ԲՁ 572), «...պայն ամէն շարաբանքն Յիսուս էր Բաշէ» (Ֆր. 245), «...Բաշելն գրեռն մէկ մէկի» (ն. տ. 249), «...վարսերգ ոսկի թելով Բաշած» (Հով. Քլի. 158), «...հարմարուն ի յին Բաշէ... գիճութիւնն ի յինքն Բաշէ» (Ամիրգ. Ուս. բժշկ. իգ. իզ), «...գամէն կոտորել և ի սուր Բաշէ» (ՓԵ հճ. II, 169, 1462 ք. Տփսիս), «...ղահմաթ կու Բաշէ» (ՓԵ հճ. I, 407, 1413 ք. Էրէզ անապատ) և այլն:

զ) Բանավոր-խոսակցական լիզվի որոշ տարբերակներում Ե-ն ընկել էր նաև դուս>դուս բառում. ինչպես՝ «...ի դուս ձգես ոչ» (ՓԵ հճ. I, 638, 1419 ք. Հերմոնի վանք), «...ի դուս էին Եկել» (ՓԵ հճ. II, 169, 1462 ք. Տփսիս), «...ի դուսն զնն զպնու» (Ամիրգ. Ուս. բժշկ. ձթ), «...ի դուսն պէտ աննն» (ն. տ. 4, նաև իթ, խե և այլն):

է) Միջին հայերենի զերգ «ինչպես, որպես» (հնչյունափոխված զի-արդ-ից) բառը Ե-ի կորստով հանդես է գալիս նաև գլղ // զլա ձևերով. ինչպես՝ «Շըթուկ մի կայր գետ ըզֆրեր» (Ներս. Ենորհ. ԲՁ 565), «...ի շուրջ կու գայ գետ փերեղիկ» (ն. տ. 565), «...իրեն ճովին գետ հրեշտակ» (ն. տ. 566), «...գնղ ըզորդ ու հաւատարիմ մարդ» (Անս. 33 և այլն), «...գնղ մարդասպան ձգեն զինքն ևս դատեն» (Սմբ. Գատ. 21 և այլն), «...լորժամ երակն զլա մուշմ ժաժի» (Ամիրգ. Ուս. բժշկ. կզ) և այլն:

ը) Որոշ բառերում Ե-ի անկումը արձանագրվում է միայն կրիկյան սկզբնադարյուններում, այն էլ ոչ բոլորում: Այսպես, օրինակ՝ հրաման, հրա-

մայիլ, հրաժեմբ բառերի դիմաց համանք, համել, հաւեմբ ձեւերը առավելապես հանգիւցում են «Անտիք Անտիքայ» թարգմանական աշխատութեան մեջ, ինչպես տեւեմբ՝ «...մնաց ի պարտեմի համանքն» (Անտ. 33, 49, 53 և այլն), «...կու համէ ընդ զարպատն» (Ն. տ. 43), «...կարէ ուննալ և համել իր ամէն ընչիցն» (Ն. տ. 51), «առանց պարտեմի համանց» (Ն. տ. 13), «աճհամանք է եկել ճորտն» (Ն. տ. 13), «...և հաւեմբ, որ պարտն զճորտն հրախիթ» (Ն. տ. 9), «...եղև խնամութիւն ընդ ինք և ընդ բերորտն պատուն համանք» (Մանր ժմեկ. II, 64, XIII գ. Կրիկիթա) և այլն: Այս նույն բառածեւերը հանգիւցում են նաև Մմբատի Դատաստանագրքի այն ձեւագրում, որը զրվել է Կարտի հրատարակութեան հիմքում:

Ք) Մասնակի բնույթ ունի Ե-ի անկումը հետևյալ բառերում. «...իրենց պիտի ընդ նկնէլ ի պորճն» (Պար. Կոտանդինի 1271 թ. դաշնագրում), «...ևա սպկիկ (<սպրկիկ) կորոյս զիր իբառունքն» (Անտ. 67, այս բառածեւի մասին տես § 94, դ), «...յորժամ երակն գետ մոյթմ ժափ» (Ամիրգ. Ուս. բժշկ. կդ), «...դիքն պիտի բունել է, որ ի տեղացն չի ժափ» (Ն. տ. 1), «...ի տանէ Աշակունեաց» (ԿՂ Մանհ. 97, ԺԱ դ.), «...ի տոճնէ Պալճաունի, յազէ Աշակունեաց» (Ն. տ. 147, 1067 թ.):

Ճ) Բ-ն ընկել էր նաև հանապահ բառում: Այս բառը Ե-ի անկմամբ և միջնադանի ա-ի սղմամբ նախ դարձել է ճանպահ, ինչպես և վկայվում է՝ «Ապա թէ ուրիք որ ի ճանպահ հարամիր ի վերայն ընկնին» (Մմբ. Դատ. 31), այնուհետև բառափոխի հ-ի անկմամբ, իսկ որոշ վայրերում նաև շրթնային պ-ի անմատնութեամբ՝ և՛, ապա պ-ի ձայնեղացմամբ ու շնչեղ-խաղցմամբ ստացվել են ճանպա, ճանբա, ճամբա, ճամփա գրչադրական տարբեր ձեւերը և այդ հիմքի վրա նաև՝ ճամփաղ, այսպես, օրինակ՝ «Ճամփաղ ընդ յայնժամ տանմ, որ զճամփի հատն զիտենա» (Հով. Երզնկ. 144), «...Անուն զիրենց բայթն ի ճանբլն» (Պար. Կոտանդ. 1271 թ. դաշն.), «...ի խռչկէն ի դոս կու վայրէ, որ ի բերին ճանփէն և ի թէլ ի դուրս ելանէ» (Ամիրգ. Ուս. բժշկ. իկ) և այլն: Հետագա դարերում ճամփա բառածեւը ավելի է ընդհանրանում ու ստանում լայն գործածություն:

Գ) Հնչյունի անկման երևույթը ընդգրկել էր նաև Ե ձայնորդը: Այստեղ հատկապես արձանագրվում է գրքարի բաղաձայն+Ե վերջավորութեամբ բառերի բառափոխի Ե-ի կորուստը: Հավանական է, որ այն միջին հայերենի առաջին կտապում դեռևս խիստ օրինաչափ չէր, որի պատճառով էլ սկզբնաղբերում սակավ են զրանց վկայությունները: Ենթադրելի է նաև, որ այս երևույթը նախ սկսվում է հայերենի արձանագրում տարբերակներում և հետո միայն տարածվում արևելյան բարբառների մի մասում: Արևելյան բարբառների մյուս մասում, հավանաբար, այդ փոփոխությունը տեղի չի ունենում, ինչպես և ունենք նրանց ժամանակակից կտապում:

ա) Լեզվական որոշ հուշարձաններում, հատկապես Մմբատի «Դատաստանագրում», նույնի թարգմանութեամբ՝ «Անտիք Անտիքայ» երկում, Կոտ. Երզնկացու տաղերի ընդօրինակություններում առավել կամ պակաս հետևողականությամբ կիրառվում է ինքն զերանվան ինք ձեւը. օրինակներ՝ «Երթան առ ինք... ստեղծուն զինք... չկարէ զինք այլ որ նեղել... չի ճանչել ի չինք իբր ջուս... սանն ընդ ինք» (Անտ. 25 և այլն, նույն ինք ձեւը նաև Մմբ. Դատ. 9, 17, 19, 20, 21, 22 և այլն, Կոտ. Երզնկ. 117, 119, 126, 132, 133, 151 և այլն):

Այս օրինաչափությունը պետք է որ ընդգրկած լիներ Ե-նով վերջացող և

այլ բառեր, բայց ավանդական ուղղագրությանը հետևելու պատճառով հնչյունափոխված ձեւերը միշտ չէ, որ գրի են առնվել: Այնուամենայնիվ, թեև ոչ հետևողականորեն, բայց և այնպես նման օրինակներ արձանագրվում են, և ինչքան ձեռագրերը ավելի ետին դարերի ընդօրինակություններ են, այնքան ավելի հասնաք են վկայությունները: Այսպես, օրինակ՝ Մյա. Հերացու «Ջերմանց միթիթարութեան» ամենավաղ ընդօրինակութեամբ հասած ձեւագրում հետևողականորեն գրվում է ընժմ (փի. չերմն), նույնիսկ հոգնակի կազմության մեջ Ե-ն չի վերականգնվում, ինչպես այդ սովորական է այլ միավանկ բառերի հոգնակի կազմության մեջ: Այս թեքես նշանակում է, որ այս բառի առանց Ե-ի ձեւը սովորական և ընդունված կազմություն էր, և Ե-ի կորուստը նրանում ավելի վաղ էր կատարվել, քան նրա առաջին վկայությունն է: Միայն մի օրինակ այս բառածեւի համար. «Չիքի ի հետն այլ ցեղ ընժմ ի բորրուսային շերմեղանց» (Մյա. Հեր. 46բ):

Այս նույն դիրքում Ե-ի անկումը արձանագրվում է տարբեր սկզբնաղբերությունում հանգիւցող տարբեր բառերում. այսպես, օրինակ՝ «Գիրս մնա, ձնու գնա» (ԺԴ հձՆ. 130, 1317 թ.), «...կենդանաբար սող համբուրեմ» (Չեռ. 8030, 7ա, 1341 թ.), «Չկա հրաման յարինաց, որ կարէ ի կարգաւորաց եկեղեցոյ ընդ թերահուստ կամ ընդ այլազգի մարդոշ խնամութիւն այնել՝ ոչ տնայալ հարս և ոչ առլ» (Մմբ. Դատ. 30), «...դի սեւարինի սերմէ է և տեղի լինի նախատանաց» (Ն. տ. 25), «...ատար սերմի ծնունդ» (Ն. տ. 8), «...Գիր ձնու ի մէջ թիկանցն» (Գրիգ. 77), «Չերիվարդ որ ձն բերիք և հեծար անվախ...» (Խաչ. Կեչ. 171), «Արդ համբուրեմ զզձեզ սովիս» (ԺԴ հձՆ. 308, 1338 թ. Մի. Անեցի), «Ստանամանկա զոգն է կայել ու կու փռէ կզակ՝ առամ» (Ֆր. 253), «...զերդ զաղբձած սերմ եմ գերիս» (Ն. տ. 264), «...զերդ մարդարիտ ի բուղ ունիս» (Ն. տ. 272), «...մատս մանկազով կտրել ի» (ԺԵ հձՆ. II, 359, 1474 թ. Վայոց ձոր), «...ձնու թուլացավ ու կազմարան վեր ընկա» (Ն. տ. 360, 1474 թ. Վայոց ձոր), «...ձնու կու դողար» (ԺԵ հձՆ. I, 229, 1419 թ. Գեղարքունի, 245, 1420 թ., ԺԵ հձՆ. II, 192, 1463 թ. և այլն), «...մարդկան կպպես բես ու շալակ» (Հով. Թղչ. 193) և այլն:

Մրանց վրա կարելի է ավելացնել և այնպիսի օրինակներ, որոնց մեջ Ե-ն ակնհայտորեն որոշյալ հոգ է. ինչպես՝ «...ցուր չուրն հատանի և կարն մնայ» (Մյա. Հեր. 48ա), «Եզն այլ ժառուրեմ շչարաք, զի զիր հնկան տվել է» (Մմբ. Դատ. 13), «...կարաղ է թագաւորն... առլ զինն և զգաշուն» (Ն. տ. 8) և այլն:

Այս դիրքում և-ի անկման ամենահին վկայությունը թեքես Անիի արձանագրություններում հանգիւցող հետևյալ օրինակում է. «...տուր արմով և ժառովը պողաբերովը» (ԴՏՎ. I, 48, 1036 թ.):

Ամիրգովլաթի հեղինակային ձեւագրում հանգիւցում են այսպիսի օրինակներ՝ «...կերակուրն զարպայ և սիւն» (ժը), «...յորժամ երակն գետ մոյթմ ժափ» (կդ, հթ, ձը), վայրի դաղձ (ժը), «...ժԲ մատ է յերկանքն» (իը), «...բաղցր խնձոր և քաղցր նուս» (դը) և այլն: Նույն երևույթը առկա է Ամիրգովլաթի հրատարակված աշխատություններում. այսպես, օրինակ՝ «Անտի մն անցնես» (Ամիրգ. Օր. բժշկ. 210), «...Առ չէ՛՛ կրմանի և դաղձ» (Ն. տ. 116), «...կար կերած լինի» (Ն. տ. 65), «...Որոյ պակշն սղ լինի» (Ն. տ. 226), «...և ի վերայ թաժա կար լուսն» (Ամիրգ. Անդ. անպ. 178), «Ե ի վերայ սղի ձուլ ուտն» (Ն. տ. 31) և այլն:

բ) Որոշ ազդեցություններում ե-ի անկում նկատելի է նաև բառամիջի դիրքում: Այսպես, օրինակ՝ վայոց ձորի միմեական արձանագրություններում կանգնել բայը շատ հաճախ վկայում է կանգնել // կանկել ձևերով՝ երկրորդ ե-ի կորուստով. այս ձևերի հասարականությունը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ դրանք սովորական և բնորոշելի բառաձևեր էին այդ վայրի հայերենի համար: Մի երկու օրինակ. «...ես Ալամս կանկեցի դիսալս» (ԳՏՎ. III, 46, 1200 թ.), «...կանկեցալ դիսալս» (ն. ա. 45, 1283 թ.), «...ես Յովանէս ու Բարէթրս կանկեցալ խալս» (ն. ա. 50, 1284 թ.) և այլն:

Միջին հայերենի շրջանում տարածված բառաձևեր են մտնել և մտնուլ՝ առաջացած հին մտանել բայից, միջնավանկի ա-ի սղմմամբ և որոշ տարբերակներում՝ շորորովյան փոփոխությամբ: Մակայն այս բայը հանդիպում է նաև մտել տարբերակով, որ փաստորեն կազմված է առանց ամանցի. այսպես, օրինակ՝ «...տայ... գայլ ամէն ազդ հազոյցք, զոր ձիւտրին պիտի որ ի կռիւ մտէ» (Անս. 31), «...ի յտկորն մտէ և նասուր անէ» (Գրեգ. 45), «...յիբբ այս խալթածս ի շող ջուրն մտէ, նայ հեշտէ» (ն. ա. 50), «...որուսարն ի գլուխն ելնէ և յուզուլ մտէ» (ն. ա. 55) և այլն:

Մակայն ինչպես այս վերջին, այնպես և վայոց ձորում բառամիջի ե-ի անկման դեպքերը միայն առանձին բարբառներում կատարված փոփոխություններ են, որոնք լայն տարածում չեն ստացել:

80. Ընկնող հնչյուններից է նաև ե-ն: Նրա անկումը բառակազմում արձանագրում է հաւատալ, հայնց⁵⁵. Ենձան բառերում: Սրանցից առաջինը համեմատաբար ավելի լայն տարածում ունի և թվում է, թե հատուկ էր հատկապես Արմատյան բարբառներին, իսկ վերջինը՝ արևելյան բարբառներին. օրինակներ՝ «Աստու որ չէ նա խիստ խեռ» (Ներս. Շնորհ. ԲԶ 579), «Փարպան պատեհ է որ առի տարպան ավտայ իր» (Անս. 25), «...Երզմանն շպիտի աւտայ» (ն. ա. 73), «Փարեհ, ախանց դիր բանիս, Աստայ և դու ինձ լսէ» (Խաչ. 4ԿԷ. 174), «Այն մարդն որ աւտայ սորա... Չաւտամ թէ նա խելք ունի, աւտ որ խիստ յիմար է» (Հով. Երզնկ. 151), «...թէ դիս պէտմէա թողուս, Չաւտամ թէ այլ դիս տեսնուս» (Կոս. Երզնկ. 162), «Քայց այնց (<հայնց) ջանա, որ բնիկ շնովցնես գտեղին» (Մխ. Լեր. 24բ), «Յամարեցոյ և այնց տուր» (ն. ա. 39բ), «...տուի ...յկկողո՞ր՝ զեմանաղուռն (<զնձանաղուռն), ի վեղէ՛ դպարոնին զնած բաժինն» (ԳՏՎ. III, վայոց ձոր, 246, 1273—90 թթ.), «...էտու զիտ այդին, որ ի զեղին առաջի՛ բնձանատնով» (ԿՂ. Սանահ. 158, 1289 թ.), «...տվի վախմ Սամձերու Բ էզի իր բնձ(ան)ովն, զՏաւաւերու էզին իր բնձանովն ... 4ուշայ ձորի Բ ջալպան, իզին բնձանովն, Փարյաուկի իզին բնձանովն» (ն. ա. 136—37, Ժն դ.) և այլն:

Բառամիջում ես ե-ի կորուստը վկայում է սակավաթիվ բառերում. ինչպես՝ «...չատ ի պալ (<պահ) լինի կացել» (Մխ. Լեր. 38բ), «...օրն պալ էր՝ շորեքշարթին» (Հով. Թլկ. 210, 211), «...Սուրբ Սարգսի պասին (<պահ) աջի ծոմ կնան» (Ժն հձհ. II, 360, 1474 թ. վայոց ձոր), «Քիտացիր

որ այս բիթն մարդուն երեսացն շնորհն (<շնորհքն) է և առանց բիթ խկի մարդուն երես շնորհ շունի» (Ամիրգ. Ուս. բժշկ. 14), «...կերակուր բիլ ուտէ և պալ շատ բռնէ» (ն. ա. 8) և այլն:

Անձանաչելիորեն ձևափոխված է քանց բառաձևը, որը քանց որ կապակցությամբ հանդես է գալիս շաղկապական կիրառությամբ՝ սհնց որ, թն որ՝ իմաստներով: Այս բառաձևը պիտի որ առաջացած լինի քէ հանց (<հայնց) որ հարազրական կիրառությունից՝ է և հ հնչյունների անկմամբ, բանի որ և՛ ձևով, և՛ իմաստով անմիջապես անվում է նրա հետ. օրինակներ՝ «Քողզում զբեզ ի բաց, քանց որ ինձ նենզես» (Հով. Թլկ. 145), «Չարիսի զեղած նետով սիրտը խոցեր ես, Պագով սիրտը յափէ, քանց որ հավան ես» (ն. ա. 146):

Ճանապարհ և շնորհատը բառերի մասին տե՛ս § 78, Ժ, գ:

81. Միջին հայերենի այն տարբերակները, որոնք շափ բար նախապես օգտագործել են շափք ձևով, հետագայում դրա մեջ կորցրել են փ-ն. ձևափոխված շափ բառաձևն էլ ընկած է նրանով կազմվող նոր բառերի հիմքում: Օրինակներ՝ «...իբ կիսոյն շափ խնորի ջուր...» (Մխ. Լեր. 42ա), «...որչալ կարէ, զքուն լինել ջանալ» (ն. ա. 44ա), «...հասասար լինի և միաշափ» (ն. ա. 52բ), «...այնչալ իմ հերնի էզոյն, որ ի կանչին» (ԿՂ. Սանահ. 166, 1291 թ.), «...սպա թող հանչար համբերէ» (Անս. 33), «հանչալ իշխանութիւն» (ն. ա. 53), «...այնէ ի շափ մի իրք» (ն. ա.), «...այնչալ պտուղաբեր լինին» (վաս. 47), «...Կիր ի կարան շափ մի» (ն. ա. 100), «...խենկայն ափշափ մի ի տակոինս տնկին ընս» (ն. ա. 21), «...որպէս է զաւնն նիթերուն» (Ամիրգ. Ուս. բժշկ. 8), «...սև շիտ ելնէ սիտան մի շափ» (ն. ա. 5թ) և այլն: Ավելորդ ենք համարում օրինակներ բերել ավելի ուշ ժամանակներից հասած աղբյուրներից, որոնց մեջ ավելի առատ են վկայությունները:

82. Բառակազմի յ-ն, ինչպես արգեն սովել է, միջին հայերենի տարբերակների մեծազույն մասում հնչյունափոխվել էր ե-ի: Հավանական է, որ անցումնային այդ պրոցեսում հայերենի որոշ բարբառներ, եթե ոչ բոլոր բառերում, ապա զոնն զրանց մի մասում, կորցնում էին բառակազմի յ-ն: Այս ձևով է, որ ունենք՝ «...այն ծառոյն տէրն պէտ անոն նմա գաւտակն (<չաւտակ) բրէ և ջուր տայ» (Մխ. Լեր. 36ա), «...յանիեայ կոտորեցին մինչև լցաւ արեամբ ստակ սաճարի» (Սմբ. Տար. 21), «...տո զիբըն, որ խզայ և ձկ ի ջուրն, թէ առակի, նայ բարակցաւ է, և թէ ի վերայ ջրին գայ, նայ չէ բարակցաւ» (Գրեգ. 115), «Գնաս դու անողո՞րմ ի հուրն՝ յաճազին ի զուրն անտակ» (Յր. 369), «Այդ անտակ ծովուդ նձան» (Հովհ. Թլկ. 159), «...արինն ամլ (<չամէ) և յուշ վաթի» (Գրեգ. 168), «...նարան ավին ինձ զայլուն(թ) // <չայունութիւն) ե տար» (ԳՏՎ. III, վայոց ձոր, 82, XIV գ. I կես): Ինչպես նաև Յակոբ անձանական Ակոր ձևով. օրինակներ՝ «...զԱկոր այրեղայն սրբակոն» (Ժն հձհ. I, 174, 1415 թ. Մեծոփայ վանք), «...ես զհայրեղարս իմ զԱկոր» (ն. ա. 489, 1438 թ. Վարդապետան՝ Վաստանում), «...իշատակ ինձ... և եղբար իմ Ալան-Բէկին և Ակորին» (ն. ա. 541, 1442 թ.), «...զեղարբն իմ զՄարգարէն և զԱկոր միայակեացն» (Ժն հձհ. III, 27, 1482 թ.) և այլն: Այսպես նաև Յովաննէս անձանական Յոճանէս, Յովանէս, Յոճան և այլ տարբերակների կողքին բազմաթիվ վկայություններով արձանագրում են Ահանէս, Ովանէս ձևերը, ինչպես՝ «...եղբարք իմ՝ զՄխիթար և զՈվանէս» (Գ. Հովս. հձ. 508, 1185 թ. Սաղմոսաւանք), «...զՈվանէս Միջնադրեցի» (ն. ա. 721, 1204 թ. Մուշ), «...ի հոգևոր

⁵⁵ Հայնց-բ ընդ ծագում է հին հայերենի յայնց դերանվանական ձևից, բայց միջին հայերենում այն չի գիտակցվում նրա կապը յայնց-ի հետ, և այդ է պատճառը, որ այն ամենուրեք գրվում է բառակազմի ե-ով՝ հայնց, հանց, ցնց: Նույնիսկ այս ժամանակներում հազմապատկեր են հանդիպող լինց ձևի մեջ էլ յ-ն քնիպում էր որպես ե: Ուստի և կարծում ենք, որ այդ ե-ն է, որ քնկել է, և ոչ թե յ-ն:

տեաննէն աէր Ռեաննիսէ Տայոց կաթողիկոսէ» (ն. տ. 817, 1221 Թ.), «...ձե-
նասր Ովաննէս արչի» (ԺԳ ՏՃ, 158, 1319 Թ. Վասպուրական), Ովաննէս (ԺԵ
ՏՃ. 1, 7, 1401 Թ. Ոստան) և այլն:

Ամիրզոյլաթի վերջ նշված հեղինակային ձեռագրում յիսուն Թվականը և
նրանից բազադրված ձևերը ունեն խոսն, խոսնվէկն, խոսնվերիւտ, խոսնվի-
րէ, խոսնելչոտ, խոսնեհնկ, խոսնվեց, խոսնելքն, խոսնելտար արտահայտու-
թյունները:

Միջնադարյան տաղերգուների մոտ յօճէ բառածեի դիմաց ընդունված
բառեր են՝ ունե, ունէ, բնվի և այլն, որոնց մեջ նույնպես յ-ն ընկած է: Մի
քանի օրինակներ՝ «Աչեր ունէր Թամրեզուանի, Բնվիկն ըզխելքս կու տանի»
(Հով. Երզնկ. 164), «Տեսայ աչեր զէս ըզժովեր, Ունե քան զամպ ու
զտարիայ» (Հով. Քիչ. 122), «Աչեր ունիք զէս ըզժովեր, Ունե ունիք քան
Թուխ ամպեր» (ն. տ. 142), «Աչերն է ծով, ունէն Թուխ ամպ» (ն. տ. 148),
«Ունեղ կամարակապ ի վեր քաշեր կս» (ն. տ. 152. նույն ձևով նաև էջ 154,
157, 162, 189), այսպես նաև այլ հեղինակների մոտ:

83. Միջին հայերենի առանձին բարբառներում ր-ն ընկել էր գործիականի
ամբ վերջավորության մեջ, ինչպես, օրինակ՝ «...սպանախ եշի կարամ»
(Մխ. Հեր. 30ա), «...զայս զամէնս կարամ ի բանի պատէլ» (ն. տ. 48ա),
«...բակլայի ջուր եշի կաթամ» (ն. տ. 51ա), «...վիպիին վիպին, որ լել է
ուսն, և ունի խրամն ընդ ձեռոս զելոցքն» (Անս. 27), «...մէկն որ հաստատէ
զհիւայքն իր անձամ» (ն. տ. 33), «...խոսանախ, որ իր անձամն կեցցումն
այնէ ընդզմէր» (ն. տ. 57) և այլն: Այս բառածեները, անշուշտ, առաջացել են
կարամբ, անձամբ, ձեռամբ ձևերից, ուստի և որպես հոլովական վերջավորու-
թյան մեջ կատարված փոփոխություն, օրինաչափ է եղել սովյալ լեզվական մի-
ջավայրում: Բերես այս հնչյունափոխության ազդեցությամբ է ընկել ր-ն նաև
ծծումբ>ծծում բառում, ինչպես ունենք Հերացու վաղ ընդօրինակությամբ
հասած ձեռագրում՝ «...լուանուին ծծմի ջրով» (Զեռ. 416, 12բ):

84. Աղբընդարյուններում արձանագրվում են բաղաձայնների անկման
նաև այլ մասնակի դեպքեր, ինչպես, օրինակ՝ մ-ի անկում Սմբատ>Սիբատ
անձանվան մեջ. «...շինեցար զեկեղեցիս փրկութեան Սիբատս (ն. Գուրգե-
նա» (ԿՂ Հաղր. 142, 991 Թ.), ինչպես նաև արմա>ամբբա>պարա բառում
(օրինակը տե՛ս § 94, բ):

Զ-ի անկում շուր>շուտ // ժուտ բառում, ինչպես՝ «...ի շուտ կու գայ քան
զգրահայ» (Հով. Քիչ. 160), «...ի ժուտ գայոյ և ի բազանիս մասնեղոյ պատ-
րաստ կենայ» (Մխ. Հեր. 25բ), «...ջնոզու որ փոխէ և կամ զխելքն ի ժուտ
ածէ» (Ամիրջ. Ուս. Ժժչ. Ժգ) և այլն: Առհասարակ այս երկու ձևերը հայա-
սարապետ հանդիպում են ետին դարերի ձեռագրերի մեջ, երբ զրանց ընդօր-
նակությունների ժամանակ գրչները նախընտրում են իրենց բարբառին հա-
րադատ ձևը:

Գ-ի անկում արձանագրվում է Արտաազգ>Արտաազ անձանվան մեջ.
«...ես Մաթո, Թոն Մմպատա եւ որդի Արտաազա» (ԿՂ Հաղր. 163, ԺԳ դ.),
«ես Մաթո, որդի Արտաազա արհնեցի զեկեղեցիքս» (ԿՂ Սնանհ. 145, ԺԳ դ.):
Արձանագրությունները գրված են տարբեր վայրերում, բայց պատկանում են
նույն տնային, ուստի և Արտաազ բառածը այս վայրի համար սովորական է:

Ս-ի անկում ունենք հետևյալ օրինակում. «...ացին թէ Հասան-Բկի կոթ-
ւեցա... Սուրբ Սարգիս պատին աջի ծամ կենամ» (ԺԵ ՏՃ. II, 360, 1474 Թ.

Վայոց ձոր): Այստեղ վկայվող ացին, աջի բառածեները հնչյունափոխվել են
նախավոր աացին, աացի ձևերից, նախ միջնավանկի ա-ի սղմամբ, որ շատ
սովորական էր նույն ժամանակահատվածում (ս...ստա եւ նորա, դինչ աացին ու վկայեցին վանց իր»
Անս. 29), ապա և ընկել է ա-ն:

Մասայութին>մասութին, հրամայել>համի բառերը, որոնք առավել
հասուկ են կիրիկյան հայերենին և բազմաթիվ վկայություններով արձանա-
գրվում են Սմբատի «Դատաստանագրքի» և «Անսիզ Անտիոքայ» թարգմանա-
կան աշխատության մեջ, ունեն այ իր հնչյունների կորուստ, օրինակ՝ «...վանս զի
ամէն կեկեցեցական հայնց է հաստատած ի յիս պարանքն ի սուրբ եկեղեցոյն
ժառոտրենէ՛ն՝ զէջ հեծելվոր, որ թրով իր այն զիթոշակն» (Սմբ. Գատ. 21),
«...այլ վայր անէ զիթ ժառոտրենէն» (Անս. 13), «...կարճ համի որ կովին»
(ն. տ. 33), «Եթե ուրդի որ որ մի սայլած լինի զինչ ու լինի, ի լնի ապրանք,
թէ ժառոտրենով և թէ անժառոտրին, և կամենայ դատաստել...» (ն. տ. 23) և
այլն:

Արձանագրվում է նաև հարկադրականի պիտի եղանակիչ փոփոխություն՝
առաջին վանկի կորստով, որպես առանձին բարբառներում կատարված երե-
վույթ. ինչպես՝ «Ծաղկեալ ես, սերն ունիս, Ցայտից այլ շուտով տի Թափիս»
(Խաչ. Կել. 156), «Եւ զեռես ի տարակուսի եմք, ոչ զիտելով թէ յառաջիկայս
զինչ ծնանի մեզ և կամ թէ որպէ՛ս տի զերծանիմք յայսպիսի դառն նեղու-
թեանցս» (ԺԵ ՏՃ. I, 195, 1417 Թ. Գանձասար), «...ի դառն և ի նեղ ծամա-
նակի, որ շարտեմք, թէ ի՛նչ տի լինի հայոց ազգիս: ...Ասա՛ն, ու հաջար
սա՛ն, հշմարիտ, որ այս տի լինի» (ԺԵ ՏՃ. II, 382, 1475 Կտուց անապատ),
«...զգիտեմք ինչ տի լինի հայոց ազգիս ի գայոց միջիս» (ն. տ. 386, 1475 Թ.
Բազեցն անապատ) և այլն:

Հ Ա Պ Ց Ա Ի Ե Կ Ե Ի Բ Ա Մ Փ Ո Փ Ո Մ

85. Հնչյունների ամփոփումը որպես հնչյունափոխական երևույթ կա-
տարվում է այնպիսի բառերում, որոնք իրենց կազմում ունեն իրար հաջորդող
նման վանկեր: Այդպիսի բառերի արտասանության ժամանակ կրկնվող հըն-
չյունախմբերը ամփոփվում են մի վանկում, որով և սովյալ բառի վանկերի
քանակը մեկով կրճատվում է, և բառը ստանում է նոր կրկնաբանութիւն: Ամփոփ-
մամբ առաջացած նման բառածեներ շատ կան ժամանակակից հայերենում:
Հիշենք թեկուզ գրական հայերենի տե՛նի բայի արել և արած զերբայական ձե-
վերը, որոնք համեմատաբար ավելի հին պատկերացումներ են և առաջացել են
հին հայերենի տե՛նի բայի արահալ և արարած բայածեների ամփոփմամբ,
մի երևույթ, որի առաջին վկայություններին հանդիպում ենք միջին հայերենի
շրջանում:

Վերն արդեն ասվել է, որ հին առե՛լ «անել» բայը միջին հայերենի տար-
բերակներում հանդես էր գալիս այլ և այլ հնչյունափոխված ձևերով՝ արե՛լ,
այրե՛լ, այլե՛լ, անե՛լ, էնե՛լ, բնե՛լ: Սակայն շնայած այս փոփոխություններին,
սրանք բոլորն էլ անցյալի հիմքից կազմված ձևերում հանդես էին բերում
վանկերի ամփոփման նույն օրինակաբանությունը: Ըստ որում, ամփոփումը կա-
տարվում էր անցյալ զերբայի, հարակախարի, անցյալ կատարյալի և հրամա-
յականի ձևերում: Բերենք մի շարք օրինակներ՝ «...ոչ քուտ է և ոչ ծեծել և չ

իր քաշանք այրել («Արարեալ») (Անտ. 61), «...տեսար որ ուժ էր արած («Արարած») անիրաւ զաղմաճից» (Պճվ. I, Անի, 22, 1276 թ.), «...ձեզ արել եմ շատ շարիս» (ՓԳ ՏՃՏ. 309, 1338 թ.), «...եղարքն ինձ քէն ին արել, ի հետս խառնիս ոչ» (ՓԵ ՏՃՏ. I, 658, 1419 թ. Վարցոց ձոր), «...շատ հայրութիւն արեւ մեզ» (ՓԵ ՏՃՏ. II, 339, 1472 թ. Կտուց), «Այդ անատակ ծովոյց նման, որ զիս բեզ արի» («Արարեր») զարար» (Հով. Քլի. 159), «Տէր, զայս իրէ արի» (Ն. տ. 211), «Ներկաթլ օղեր արի» («Արարի»), Իր ոտքի կոճերն անցուցին» (Ն. տ. 206), «...արի՛ն շա՛ ու զնն» (Պր. 248), «Ես Յովանէս, որ զԹուովն ինձ որդիգիր երի... ինձ հոգւոյ որդի եմ երել» (ՓԵ ՏՃՏ. II, 36, 1453 թ.), «...զազա երին ե ի: հոգի սպանեցին» (Ն. տ. 321, 1471 թ.), «...իմ տէր, թողութիւն արէ՛ք («Արարէր») (Հով. Քլի. 209) և այլն:

Հնչունների ամփոփման այս նույն երևույթը արձանագրվում է և այլ բառերում, որոնք, սակայն, որպես առանձին բարբառներում կատարված փոփոխություններ, հետագայում գրական լեզվի մեջ չմտան և մասշտաբի իրեն բարբառային իրողությունները Հասկանչական է նաև, որ ստորև բերվող բառաձևերի մեծագույն մասը հանդիպում է Ամիրզովյաթի երկերում, որի լեզուն առավել ժողովրդական ու խոսակցականին մոտ լինելու ավայաներ ունի: Օրինակներ բերում ենք նաև Ամիրզովյաթի հրատարակված աշխատություններից, նկատի ունենալով, որ դրանց մեջ հանդիպող բառաձևերի հավաստիությունը հաստատվում է նրա հեղինակային բնագրի օրինակներով: Այսպես, ուրեմն, հնչունների ամփոփման այլ օրինակներ:

Անուխի>անուխ.—«Ան մեղր մկ լիտր և քացախ ս լիտր և լից զերկուքն այլ ի քարէ աման և ետցու և կապ մն անուխ ի լիք ձգէ, որ անուխին ունի ի մեղրն և ի քացախն երնէ, և հան զանուխն ձգէ» (Ամիրզ. Ու. բժշկ. 5), «Եւ թէ բեզ պիտանայ, որ գտնուս զաշխիդն, կամ զանխտն, կամ զանուխն՝ դու տես ի վերայ այրի» (Ամիրզ. Օգ. բժշկ. 7), «Եւ թէ զինքն ի շուրն եփես և բամես, և անուխ խառնես, և ի վերայ աղի ձուկ ուտես, զհիմնի յաղեցն հանէ» (Ամիրզ. Անգ. անպ. 31):

Արքանալ>արգնալ.—«...և բուն լինալն և արգնալն այլ ըղեղն է» (Ամիրզ. Ու. բժշկ. իր):

Գրակակար>զգակար.—«...յիշեցէր... զզգակարի որդին՝ զՅովանէսն» (ՓԵ ՏՃՏ. II, 144, 1460 թ. Աղթամար):

Գեղեփալ>ղեփալ.—«Տէր աստուած ողորմի պարոն Թամար ղեփալին և Ալեքսանդրէ թգորին» (ՓԵ ՏՃՏ. II, 171, 1462 թ.): Գեղեփալ—լրաց. «Յագուհի»:

Իեհաց>իբաց.—«...իմ ճորտեր իբաց ուժ լինան այրել» (Անտ. 27), «...թէ որ հետ իբաց ենս ձգէ՛ նա անցնի և մարդոց զիպի ու մեռնի» (Ամր. Գաս. 33): Ամփոփումը կատարվել է և>ի հնչունափոխությունից հետո, երբ առաջին երկու վանկերը նույնացել են (*իիբաց):

Կայնանալ>լանանալ>լանալ.—«Եւ այն չեղերն, որ մէջն փուճ է և եփ մթնէ՛ կու լանալ և լուսուն ենզ լինի» (Ամիրզ. Ու. բժշկ. լա):

Խաղաղեցուցանել>խաղեցնել «հանգստացնել».—«Շնխաղողի շուր և գտնալովի շուր սուր օձէ և խմել, որ զյանս խաղեցնէ» (Ամիրզ. Օգ. բժշկ. 125), «...եւ թէ կանաց կաթն թրջես և յականչն կաթեցնես, զյանս խաղեցնէ» (Ամիրզ. Անգ. անպ. 28):

Խաղաղի>խաղի «հանգստանալ, հանգարտվել».—«...եւ զբաննին հուսն»

արն ծծէ և արով և քացիով, և մազմատայ արա և զզուխն լիտիլ, որ ցան լաղի» (Ամիրզ. Օգ. բժշկ. 245):

Հոտոտալ>հոտալ «հոտոտել, հոտ քաշել».—«...հոտայ թթով» (Ամիրզ. Ու. բժշկ. լր), «...անուշահոտ տան հոտալ» (Ամիրզ. Օգ. բժշկ. 63):

Հոտոտիլ>հոտալիլ.—«...և դոտը զեղերն, և դանուշ հոտալիլ հոտայ, որ է մուշքն և զայիան» (Ամիրզ. Օգ. բժշկ. 242):

Մանանել>մանել.—«Եւ ուտէ մանելս և շիպ և աղ» (Ամիրզ. Օգ. բժշկ. 160), «Եւ այն իրքն, որ զպոլլոսմն պակեցնել՝ օգտէ, որ է սիսուն շուրն և ծծածս մանելսն» (Ն. տ. 282):

Մուսկակար>մուկար.—«...մուկերեւ և զտակերերն զինքն (=շրեշր) ի զործ կու արկանեն» (Ամիրզ. Անգ. անպ. 226):

Շաղաղել>շաղել.—«...զնոր կարմիր վարդն ծծես և շրով շաղես և տաս» (Ամիրզ. Ու. բժշկ. ծթ), «...մեղրով շաղ և պահէ 2 ամիս» (Ն. տ. 59), «Եւ թէ զտան այրես, մոխիր այնես, և քացիով շաղես, և ի վերայ ճառահարն զնես՝ օգտէ» (Ամիրզ. Անգ. անպ. 43): Օգ. բժշկության մեջ զուգահեռաբար նաև շաղվի ձևով, ինչպես՝ «Ջամլն ծծէ և մաղէ և հազրի շրով շաղէ և կամ ուտի տերևի շրով շաղվէ և դիր ի ճակատն» (Լջ 115):

Սպանանել>սպանել.—«...նայ ի ժմուն սպանէ զմարգն» (Ամիրզ. Ու. բժշկ. ին):

Փարաբել>փարել.—«...և զուխն ուտի տերևով և փրփրեմով փարէ և օձէ վարդշուր» (Ամիրզ. Օգ. բժշկ. 115), «Ջրամբակն ի մկին ծար փարեն պինտ և թաթխեն զինքն ի սուսանին ձէթն» (Ն. տ. 225):

Արարել>(օրօրել)>արել.—«...և մարն կու պիտի որ զնորայ կաթն քիչ քիչ սույ և կամաց արէ և աղէկ խառնի զուրցէ... որժամ կաթն տաս տղին, նաև կամաց արէ, որպէս որ մարդն շատ ուտէ և խմէ՝ չէ աղէկ աշխատին, նույնպէս և կաթնային տղան այլ, որժամ կաթն տան, չէ պատէ՛, որ պինդ արեն, որ զնն շանէ» (Ամիրզ. Ու. բժշկ. ծէ):

Արարաց(օրօրաց)>օրաց.—«Մրտիկ դու հրասան արա, որ թապուս օրաց 2ինէ նայ» (Հով. Երզնկ. 157), «...և ի տղին րոզգե՞ս սև հուտնի կախն, որ աշին զսևութիւն յակեցնէ» (Ամիրզ. Ու. բժշկ. ծէ):

Անշուշտ, հատկապես Ամիրզովյաթից բերված օրինակները շեն սպասվում միայն վիշախոլովածներով, դրանք, որպես նրա լեզվին հատուկ բառաձևեր, կրկնվում են շատ հաճախ:

Հ Ն Յ Ո Ւ Ե Ն Ե Ր Ի Հ Ա Վ Ե Լ Ո Ւ Մ

86. Միջին հայերենում հնչունի հավելում ունեցող բառերը հիմնականում բարբառային զույգություններ լինելով, իրենց մեծագույն մասով հետագայում էլ մնացին որպես այդպիսի: Դրանցից մի քանիսը, ավելի լայն տարածում ստանալով, արժեքավորվեցին որպես գրական լեզվի բառաձևեր և հարստեղեցին մինչև մեր օրերը:

Այդպիսի փոփոխություն ունեցող բառերից հատկապես պետք է հիշել մեկ

⁸⁶ Այս բառը ձևագրում զրված է հենց այսպես: Անշուշտ բառակերպ ու-ն այստեղ ունի ու-ի արժեք:

դերանվան մեք է ձեր, որի վիայութունները սկսում են միջին հայերենի հենց սկզբնական շրջանում: Այսպես, օրինակ, Պարոն Կոստանդինի 1271 թվականի գաշնագրում հետևողականորեն կիրառված է այդ բառաձևը. «...մեքն ու ամէնայմէ՞մ Մայրոսն Ոսրիթուն Այամնացն Յրնր Իանն ...մեքն չէար ի հավնել ...էկար մէքն ու վերոյանվանել Մայրոսն ի վերոյանվանել տեղին ...ու հայն հազնեցար մեքն ու Մայրոսն ... ի յայն սեղոյն տեղն որ շինել էին, որ մեքն չէար ի հավնել...» (Ղ. Նովն. Հետ. նախ. օսմ. 253): Այս դերանունը մեքն ձևով յայն կիրառությունն է ստանում կիլիկյան հայերենում, այսպես միջին դարից դրանով հայերենում. այսպես, օրինակ՝ «...մեքն կու անունը ի մեր վերայ, որ մեքն ժառայնը զեղեզ» (Անտ. 53), «Պարոնայր, մեքն եկել ենք ձեր անդն զէջ բողոր ու ճշմարիտ դարպասու ... ու սար ենք, որ զինչ ցեղ զուր համէր ու պատե՞՞ տեսոյք՝ մեքն կեցցենք» (ն. տ. 59), «Ձեր խօսքը մեզ զեղ եղան, ձեր տեսովք ենք մեքն խնդացել, Հազար երևել այս աուրս, որ մէկ տեղ ենք մեքն ժողովել» (Նով. Երզնկ. 147), «Աշխարհու է կանաչ մարգեր, մեքն ի մէջն ենք կարտ ձագեր» (ն. տ. 158), «...մեքն զինքն փոքր և բիշ շինեցար, որ կարգացողն շուտ հասկնայ» (Ամիրդ. Ուս. բժշկ. ժթ), «...մեքն կու բուններ և կու լիմանանք» (ն. տ. 4), «...զջաղցրական Աղուպն յիշեցէր...» որ զՅանարի գզթորն կու աէր (<աւայր), որ մեքն կու գրէար» (Ժն. հճճ. II, 140, 1460 թ. Արծին) և այլն:

Սակայն ենթադրելի է նաև, որ միջին հայերենի ոչ բոլոր տարբերակներում էր, որ մեքն դերանվան մեջ ավելացել էր ն-ն: Մեր այս ենթադրությունը հիմնվում է այն փաստի վրա, որ մեր ժամանակակից բարբառների մի մասում այդ հավելումը տեղի չի ունեցել և այժմ գրանցում արձանագրվում է առանց ն-ի ձևը:

Ն-ի հավելում անկա է նաև արտասուք<արտասունք // արցունք բառում. այսպես, օրինակ՝ «Ձի կայ, որ լինի յայս ցաւ դժար և յուղի, և բշտանալ աշխն, և պղղիլ, և շատ արտասունք» (Գրիգ. 79), «...և լինի, որ հետև արտասունք էլի է կարմրել» (ն. տ. 80), «արտասունք նորա» (Ձևո. 8030, 71ա, 1341 թ.), «...որժամ բրտինքն զէտ աշխ արցունք աղի լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. հզ) և այլն:

Նույն ուղային հնչյունը ավելանում է նաև հետևյալ բառերում. կանաչ>կանանչ.— «Գոյնն լինի մրգոյն՝ բնդ կանանչ և բնդ սև ի մէջ» (Գրիգ. 44), «...փոխեն զմարմինն ի կերպէլ ի կերպ՝ կամ կարմրոյն, կամ ի սև զոյն, կամ ի կանանչ» (ն. տ. 47), «Կանանչ մնայ զնշգարին» (Նով. Երզնկ. 121), «Տարեկ ելուկ նման կանանչ ուրիկ ես» (ն. տ. 150), «Գու ես կանանչ աղբիւր, ի ծով նրմանս» (ն. տ. 152) և այլն. ճանաչել>ճանանչել.— «...այս նեղերս ի մաղձերուն գունէն ճանանչեն» (Գրիգ. 42), «...գիւր տէրն շխանանչէլ» (ն. տ. 45), «...ճանանչես զինքն ի ցաւոյն, որ ի ստամոքրերանն լինի» (ն. տ. 112), և այլն. Կանուր>կամուրնը (ն-ն ավելացել է գրափոխությունից՝ հետո).— «...ինչուրիկ կամուրնը» (ԳՏՎ. I, Անի, 63, 1215 թ.) և այլն, շիւանիլ>շիւանիլի.— «...նրազ որ շիւանիլ» (Ձևո. 8030, 80բ, 1341 թ.) և այլն:

Ինչպես կարելի է նկատել, ն-ի հավելումը կատարվում է հոգականներից առջև նման բառաձևեր ավելի առատ են հետագա դարերի ձևագրերում (ականը>անկանը, բաշալ>բանշալ, մեծ>մեճ, բիր>բիրք և այլն)—որպես բարբառային իրողությունների թափանցում գրավոր լեզվի մեջ:

Որոշ ձևագրերում ն-ի հավելում ունի դու դերանունը. այսպես՝ «եւ յերր հայիս այս ուղից, զուն տեսնու զայն տեղն» (Գրիգ. 33), «Գուն բնդ պետարայ» (ն. տ. 46), «Տուր զուն ինձի խրատ՝ զու խիտա խիկար ես» (Նով. Թղի. 147), «Չարկամն զայդ շէր աներ, զինչ որ զուն կանես» (ն. տ. 151) և այլն:

87. Մեր ժամանակակից բարբառներում տարածված երևույթ է նր հնչյունների միջև դ-ի հավելումը: Միջին հայերենի բարբառներում այս հնչյունափոխությանը ենթարկված բառերը կա արձանագրվում են գրավոր աղբյուրներում. այսպես՝ «...թաժա և մանուր ձուկն նշի ձիթով տապկած» (Մխ. Հեր. 21բ), «...մանուր ձուկն թաժա» (ն. տ. 20ա), «...պանդրի ջուրն, որ է շուտ» (ն. տ. 44բ), «...մի բուսանց ծանգ մատենը դոկարս» (Ձևո. 8030, 3բ), ճնդաղաղական երկարագրովիամբ (ն. տ. 7ա), զայսպիսի ծանգը (ն. տ. 91բ), ձուկը զնէ... ձուկը զիր (ն. տ. 91բ, 100բ), զմանուրն ու զմեքեն (Ձևո. 3029, 198, 1376 թ.), «մանուր է գիրս» (Ժն. հճճ. I, 151, 1413 թ. Մոկաց երկիր), «գուրին և ալք ծանգանայ» (Ամիրդ. Ուս. բժշկ. խզ, նույն բառաձևը նաև խ, ծղ և այլն), «ծանցը բնովին լինի» (ն. տ. 4կ, կզ), «...նորայ հայն մանուր և յատիֆ կու պիտի» (ժ. կբ, կզ և այլն), «...զտար հայն որ ի բուճուրէն էլի, մի ուտել ... և խորվում, որ ի բուճուրէն էլի» (ն. տ. ծե) և այլն:

Մր հնչյունների մեջ մտնում է բ. ինչպես՝ արմալ>արբալ (բ-ն ավելացել է գրափոխությունից հետո).— «...ուսուլ, մեղը, արբալ, սև շամիշ» (Գրիգ. 35), «...ուտելուն լինի որպէս միս և արբալ և զինի և թուլ» (Ամիրդ. Ուս. բժշկ. կզ), բուճուրէլ>բմբուրէլ.— «...բմբուրէլ ջուր, և նոան սքնկայն ի բանի պահէլ» (Մխ. Հեր. 32ա):

Մր հնչյունների մեջ ավելանում է տ. ինչպես՝ Խուրովիլ>Խուտուրովիլ.— «եւ Գոնցէլ, ամուսին Վարհամայ, որոյ Շահուներց, զուտար Խուտուրովիլ՝ յազգէ Տարաթնանց» (ԳՏՎ. III, Վայոց ձոր, 56, 1346 թ.):

Միջին հայերենի որոշ տարբերակներում տալ և գալ բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի ետ, եկն հետևանքով այդ բառաձևերը դարձել են երկվանի՝ երեւ, երեկ (վերջինում ն-ի անկումը), ինչպես, օրինակ՝ «...տեսէր որ իմ ֆուլան լիճ ճորտ երեկ առջև ֆուլան լճերոյ, որ են այս անուն, ու երեւ ի յիս ի սայլուրին զիր ապրանքն, ու ես շուրի» (Անտ. 11), «...զղեկանն ի տէրն երեւ սերնֆիլին ... ամ թէ երեւ զկամաշն ի տէրն ու թէ շեւտ՝ ինք զիտ» (ն. տ. 83), «ՊՄ թուին սաստիկ և թանձր մարախ երեկ ի Շամբէն ի վեր՝ զնդին և Գթեան» (Ժն. հճճ. I, 3, 1401 թ.), «եւ զմեծ մտքիթն քակել երեւ» (ն. տ. 3, 1401 թ.), «...նայ հայն պատասխան երեւ» (Նով. Թղի. 206), «Օձուն մայրն ի գուր երեկ, զիս յաժնց» (ն. տ. 155), «Ե տար է ի կտոր երեկ ու բարով նա բարկոժեցաւ» (Նով. Երզնկ. 156), «...զվանքս մեզ էրեւ» (ԳՏՎ. I, Անի, 64, 1310 թ.) և այլն:

ՆԱԶՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՆԻՄԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԿԱՆՈՒՄ

88. Միջին հայերենի առանձին տարբերակներում կատարված առնձանությունն և տարնձանության երևույթները բացահայտվում են միայն այն ժամանակ, երբ գրանք չեն համեկնում բաղաձայնների մեջ կատարված տեղաշար-

ժերի հետ և ակնհայտորեն երևան են բերում այդ երևույթներին հատուկ դիրքային փոփոխություններ:

Սկզբնաղբյուրներում ավելի առատ փաստերով վկայվում են անմանությունը կատարված փոփոխությունները: Այստեղ առկա են դիրքային երկու իրավիճակներ: Մի դեպքում փոխադրող հնչյունները գտնվում են անմիջապես կողք-կողքի և զրանց անմիջական հարևանությունից էլ առաջանում է հնչյունափոխությունը: Արտասանության պրոցեսում հնչյուններից մեկի այս կամ այն հատկանիշը անցնում է հարևան հնչյունին, որով և վերջինս այդ հատկանիշով նմանվում է առաջինին:

89. Ինչպես արդեն ասվել է, միջին հայերենի շրջանում հին հայերենի ձայնորդ դ-ն ունի ետնադեզվային ձայնեղ շփական չ-ի արժեք: Այս հնչյունը, երբ բառի մեջ անմիջապես գտնվում էր խուլ հնչյունի հարևանության մեջ, կորցնում էր իր ձայնեղությունը և վերածվում խուլ հնչյունի, որը և գրության մեջ շատ հաճախ արտահայտվում էր խ-ի միջոցով: Այսպես, օրինակ՝ «...թէ հայնց լինի, որ մէկն ու մէկն ի խամերոյն թուխթ ուննայ, նա թխթով գտվի. ապա թուղ տեսնուն, որ թուխթն վատահ լինի ու չղորդ» (Անտ. 39), «...թուխթ գրվի» (ն. տ. 47), «...դայս թուխթն հասկնայք» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.), «...գթուխթս դրեցար... ավար գմեր թուխթս» (ն. տ.), «...բաժանեն թուխթ բերեր» (Լեոն Գ-ի 1288 թ. արտոն.), «...ով որ սրով և դանակով մերձենա ի սուրբ պիրս և հասանէ ի թխթէս» (ԺԵ հճ. I, 114, 1410 թ.), «...դայս Թ թխթիկն նա դրանց ի վանս նառարաստայ» (ն. տ. 145, 1413 թ. թուխթ ձևով ձանդերում է և այլ շատ ուրիշ սկզբնաղբյուրներում), «...չխթայիս ...չխթայից» (Գ. Լովս. հճ., 61, 1306 թ.), «...անխթիս հետորի» (ԺԲ հճ. 136, 1317 թ. Գլանոր), «...կապեայ է ի շխթայս» (ն. տ. 144, 1418 թ. Բերկրի), «...որպէս ասկան (Հառան) հետոր» (Գրիգ. 43), «...իր խայթածի հետն զերթ ասկան հետ լինի... իր ցան է որպէս ասկան խոթած» (ն. տ. 49), «...ամեն մարդոյ խայթ ու կատակ» (Լով. Քղի. 193) և այլն:

Ղ-խ փոփոխությունից հետո, որոշ բառերում, խ-ի ազդեցությամբ՝ նրան հաջորդած ք-ն շնչեղարկվում է, ինչպես, օրինակ՝ «...թխոյս շարարութիւն ... թուխտս առաջին խոտտովանութեան» (Գ. Լովս. հճ. 37, 45, 1170 թ.), «...թխտով որոշի» (Մծր. Գատ. 25), «...թանարս հում է ու թուխտս հին» (ԺԵ հճ. II, 235, 1465 թ. վան), «...գթուխտս կոկեաց» (ն. տ. 215, 1464 թ. Լայոց թատ), «...չի կարէ յախտել զշարկամս» (Ամիրգ. Ոս. բժշկ. 5է), «...հերձողութիւնն կու յախտէ դրնութիւնն» (ն. տ. է) և այլն:

Ղ-ն խ-ի փոխվում նաև ձայնեղ հոլականի հարևանությամբ: Այստեղ ենթադրելի է, որ այդ փոփոխությունը տեղի է ունենել նախ ձայնեղների տարմանությունից, որի հետևանքով Ղ-ն զրկվել է ձայնեղությունից, ապա և նրանից առաջացած խուլ խ-ի ազդեցությամբ ձայնեղարկվել է ձայնեղ հոլականը: Ավելի վաղ վկայություններում գրության արտահայտված է զրանցից միայն մեկի խաղումը, բայց բանի որ եղած օրինակներում մի դեպքում արտահայտված է Ղ-ի, մի այլ դեպքում՝ հոլականի խաղում, պետք է ենթադրել, որ արդեն իսկ այս վկայությունների շրջանում Ղ+հոլական կապակցության երկու եզրերում էլ առկա էր խուլի արտասանություն: Օրինակներ. «...մեր Աստարկա որդիքս՝ Լասան ու Խոցաղեղ, մեր ախարս որդարս մեր սրտի յամարութք գմեր հայրենի հոյն ի իուլարարին ավար ի սք Ստեփանոս» (Գհվ. III, Վայոց ձոր, 37, 1292 թ.), «...զեոարարտոյր զեոարոյս որդիքս իմ» (ԺԵ հճ. I, 50, 1405 թ.

երևան), «Ապա թէ առի այրկանն տղայն աղչիկնք լինին՝ և հետի այրկանն կորիճ լինի, նա որձն ժառանգէ» (Անտ. 37), «...և յայտանցն արմանցնք այս է, որ թէ կարիճ աղայ լինի, նայ յայ դի՛նու արգանզն լինի, և թէ աղչիկ լինի, ի ձախն լինի» (Ամիրգ. Ոս. բժշկ. ժղ), «...և թէ հով և նասր լինի՝ տղան աղչիկ լինի» (ն. տ. մէ), «...թէ կնկան ձախ ծիծն թոշմած լինի, նայ գուշակէ որ աղչիկ ձգէ կնկին» (ն. տ. 1ղ) և այլն: Բայց ավելի ուշ՝ երկու եզրերի խուլությունն էլ արտահայտված է գրության արժեքով, ինչպես, օրինակ՝ «...բածինք ի դոսն սովինք Հախպատա սք նշ» (ԿՂ Լազր. 142, 1655 թ.), «...վախմ տվի դուան Հախպատայ սք նշ-ին» (ն. տ. 224, 1655 թ.), «Աւախս կոկո հախպատցի... Ծակորս տվի ի դոսն Հախպատայ» (ն. տ. 225, 1655 թ.) և այլն:

Խուլ հնչյունի անմանությունը է, որ մի բանի բառերում վ(լ)-ի փոխարեն որոշ սկզբնաղբյուրներ ունեն ֆ. օրինակ՝ «...դինց ցեղ ինչֆի (<ինչվի>) յայս արէն առլ» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.), նախ >նաֆթ և այլն (օրինակները տես § 75):

Շնչեղ խուլի ազդեցությամբ ք-ն շնչեղանում է փակ բառում, ինչպես, օրինակ՝ «...ի հողն յուշ կու փքի» (Ամիրգ. Օգ. բժշկ. 28), «...ժանկատով պատրուզ դենս, որ պիրած միան ուտ և որբէ» (ն. տ. 238), «...մեղրով շազվէ և դր ի փրածի վրան» (ն. տ. 247), «...գաղսային սկերուն միան փքցնէ» (ն. տ. 256) և այլն: Նույն ձևով նաև Անդրեաս անդէտ-ի այն ձևագրում, որ գրվել է Բամադայանի հրատարակության հիմքում, ինչպես այդ վկայում է հրատարակիչը²⁷:

Ս-ից առաջ արձանագրվում է կ-ի շնչեղացում, ինչպես նաև հակառակ երևույթը՝ Գ-ի շնչեղարկում, որոնք, համանական է, տարբեր բարբառների օրինաչափություններն են. օրինակ՝ «...ժերքն բնութեամբն վատում են և իրենաց հայդականքն և փոփոխական դորութիւնք պատեսայ է» (Գրիգ. 39), «...իրէնց պիտի ընդ նեկտէ ի պուրնն, թէ իրէնց պիտի ընդ դրացէ խէջ պրհին» (Պար. Կոստ. 1271 թ. դաշն.):

Խուլի շնչեղացում ունի նաև վառար >վաքար բառը, որ արձանագրվում է 989 թ. մի հիշատակարանում (Գ. Լովս. հճ. 159): Այդ բառի նման արտասանություն ունենք և ժամանակակից հայերենում:

90. Անմանությունը բաղաձայնների փոփոխություն կատարվում է ոչ միայն իրար կողք-կողքի գտնվող հնչյունների փոխազդեցությամբ՝ Շատ հաճախ փոխազդող հնչյունները միջարկվում են այլ, երբեմն մեկից ավելի, հնչյուններով: Այստեղ ևս դիտվում են նույն կարգի փոփոխությունները՝ միայն այն տարբերությամբ, որ եթե անմիջապես իրար հարևանությամբ հանդես կեղող հնչյունների փոփոխությունը կատարվում էր միայն խուլության, շնչեղ խուլության սահմաններում, ապա այս դեպքում անմանության պրոցեսում որոշակի դեր ունեն ձայնեղ հնչյունները, որոնք իրենք են ազդում խուլերի վրա և նրանց զարձնում ձայնեղ: Այժմ օրինակներ՝ իրենց վկայություններով:

Հին հայերենի շուրջ բառը միջին հայերենի որոշ տարբերակներում գ-ի անկմամբ հանդես է գալիս շուտ և ժուռ ձևերով. վերջինում շ > ժ փոփոխությունը կատարվել է շ-ի ազդեցությամբ, երբ այն զուտ չէր ընկել: Ժուռ բառակերպ վկայվում է տարբեր սկզբնաղբյուրներում, ինչպես՝ «...ժուռ գալոյ և բաղա-

²⁷ Տե՛ս Ամիրտովյանի Անտիպոյոյ Անդրեաս անվան կամ բառարան բժշկական նիթոց... վրենա, 1926, էջ ԺԲ.

նիս մտանկոյ պատրաստ կենայ» (Մխ. Հեր. 25ր), «...ի ծուռ կու դաս զօրն անդադար» (Հով. Երզնկ. 159), «...գիւնիւք ի ծուռ ամէ» (Ամիրգ. Ուս. բժշկ. 49) և այլն:

Եւ մի փոփոխութիւն ունեն և այլ բառեր, Այսպես, օրինակ՝ ետրեթաց լրիվ առնմանութիւն վկայում են շարժիլ>ժամիլ (Բ-ի անկմամբ), ինչպես՝ «...լորժամ երակն զետ մոչիմ ժամի» (Ամիրգ. Ուս. բժշկ. 49), «...ի տեղացն չի ժամի» (ն. տ. 1) և այլն, ինչպես նաև նույն բայի պատճառական ձևում՝ «...անուշ անուշ խօսփի կամկար խօսի՝ յորժամ կաթն ծծէ կամ ժամցնէ» (Ամիրգ. Օգ. բժշկ. 66) և այլն: Նույնը նաև աշխոյժ>աժխոյժ բառում, ինչպես՝ «...աղայնմ գտարք ընթերցողոյ և աժխոյժ մտատրտոյ» (Ժն ՀճՏ. 1, 187, 1416 թ.) և այլն: Այս կարգի ամենահին վկայութիւնը թերևս բաշխել>բաժնիլ բառում վկայվող փոփոխութիւնն է, որտեղ առաջընթաց թերի անմասնութիւնը, այսինքն՝ բառասկզբի ձայնեղի ազդեցութիւնը, շ-ն ձայնեղացնել է: Ահա այդ օրինակը՝ «...բաժխնէն ախմարաց զուսումն» (Գ. Հովս. Հճ. 154, 988 թ.):

Ամիրգովլաթի աշխատութիւններում առավել կամ պակաս հետեղականութիւնը օգտագործվում է ջրաղաց բառի ջաղաջ ձևը (Բ-ի անկմամբ), որտեղ առաջընթաց անմասնութիւնը ց-ն լրիվ նմանվել է ջ-ին. այսպես, օրինակ՝ «...իրենք ջաղաջ էն անձինն, և որպէս որ ջաղաջն վերի բարն ուժով է, նոյնպէս և այլ վերի ակտանին ուժով է բան զվարինն» (Ամիրգ. Ուս. բժշկ. 1), «Զխօսողին զղեղն ջաղաջ փոշիով խառնես շաղգես և սխտան շար տաս, որ սաւէ» (Ամիրգ. Օգ. բժշկ. 240), «եւ թէ ջաղաջ փոշին գինով եղցնես» (Ամիրգ. Անգ. անպ. 37) և այլն:

Ետրեթաց թերի անմասնութիւնը աստիճան>աշտիճան բառում Գ-ի ազդեցութիւնը ս ստականը դարձել է շշական շ, բանի որ ներգործող հնչույնը ես իր մեջ ունի շշականի տարր. այսպես՝ սեւ՝ Տիրարն, ծառայ Քրիստոսի, շիւնեցի հայալ ընչուր իմով զաշտիճաներս մեծափառ սրբոյ կաթողիկէիս» (ԳՏՎ. 1, Անի, 34, 1213 թ.), «...եպիսկոպոսութեան աշտիճանի» (Գ. Հովս. Հճ. 645, 1209 թ.), «...արժանաւոր այնմ աշտիճանի» (ն. տ. 945, 1241 թ.), «...գառաջ-նորդական ունին աշտիճան» (ն. տ. 961, 1244 թ.), «...լուծին յաշտիճանացն» (Մմբ. Տար. 33), «...էր սա աշտիճանաւ սենեակալ Հայոց» (ն. տ. 222), «...ստեղալ զաշտիճան արհեստիսկոպոսութեան» (ԺԴ ՀճՏ. 183, 1323 թ.) և այլն³⁹:

Առաջընթաց անմասնութիւնը, շնչող խօսիլ ազդեցութիւնը խօլ տ-ն շնչողացել է ցալտիլ>ցարել, ցերիլ բառում, ինչպես՝ «...եւ այն տեղն, որ արեգակն չի ցարլ՝ խկի բոյս և անասուն և կենդանի չի լինի» (Ամիրգ. Օգ. բժշկ. 21), «...լորժամ արեն ցարլ՝ տուր» (ն. տ. 61), «Գրում ի, մտուկ ցերեց ի վերայ լուսանցին» (Ժն ՀճՏ. 1, 358, 1474 թ. Վայոց ձոր) և այլն:

³⁹ Չանտեղագրի հայոց աշխատութեան հրատարակիչ Վ. Հակոբյանը իր համահայր բնագրի ձեռագրերից մեկի (N 131, որչ. ժամ. 1098 թ., վայրը՝ Կիլիկիա) ուղղագրութեան մասին արած դիտարկումների շարքում նշում է նաև, որ «Մի երկու բառ՝ աստիճան, ուրղուն գործածված են հնարուն արտասանութիւնը, օրինակ՝ աշտիճան, արիւն» (Չանտեղագրի հայոց, հ. Ա, էջ LX): Մեզ հայանք չէ, թէ ինչ նոր աստիճանութիւնը է նա աշտիճան ձևը աստիճան-ից ավելի հին ձևարում, երբ Հ. Անտայանի «Արմատայան բառարանում» հիմնաւոր համարվում է աստիճան-ը, իսկ մյուսը՝ նրա ձևափոխութիւնը:

Այլ բառի սեռական-արական աշից ձևում շ-ի ազդեցութեամբ հոլովական վերջավորութեան ց-ն լրիվ առնմանվել է: Այս բառաձևը վկայում է հատկապես Ամիրգովլաթի լեզվում, ինչպես՝ «...աշիչն զսեռութիւնն յակցնէ» (Ամիրգ. Ուս. բժշկ. 41), «...ի ծոճրկէն ասկիկես աննկն օգով աշիչն և զլիտուն» (Ամիրգ. Օգ. բժշկ. 64), «...վարդի ձէթ և հակկթի զեղնոց յիբար խառնել և ի վերայ աշիչն գիր» (ն. տ. 181), «եւ աշիչն և զլիտուն երակին կանգնի, և շատ արցունք գայ աշիչն մարդուն» (ն. տ. 195) և այլն:

Առաջընթաց անմասնութիւնը որդյունք է նաև՝ «...բլմբատ հայոց ասպարապետս յիշեչիք» (Գ. Հովս. Հճ. 951, 1244 թ.) օրինակում բնորոշված բառաձևի ու>չ փոփոխութիւնը, որ կատարվել է շ-ի ազդեցութեամբ:

Այս բոլորով, իհարկեւ, շն սպառվում այն դեպքերը և օրինակները, որոնք ցրված են մեր միջնադարյան ձեռագրերում ու սկզբնագիր այլ աղբյուրներում: Սակայն կարծում ենք, որ այսբանն էլ լրիվ պատկերացում է տալիս վերը նկարագրված հնչյունափոխական երևույթի մասին:

ՀԱՅՏՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԿԻՏՈՒՄ

91. Միջին հայերենի սկզբնաղբյուրներում հանդիպող հնչյունների բարդացման երևույթը որոշ բաներում միանգամայն օրինաչափ ու պատճառաբանված կարելի է համարել, քանի որ տվյալ դեպքում հին բառաձևի համեմատ նորում հանդես եկող բարդ հնչյունը փոխարինում է իրար կից այնպիսի երկու հնչյունների, որոնք փաստորեն այդ բարդ հնչյունի բաղադրիչներն են և հնչողութեամբ կարող են վերածվել մի բարդ հնչյունի: Այստեղ այս երևույթը արձանագրվում է հատկապես իրար կողք-կողքի հանդես եկող խօլ պայթական ու շփական հնչյունների ոլորտում: Այսպես, օրինակ՝ պատասխան բառի բառամիջի ա-ի սղումից հետո ստեղծված պատասխան բառաձևում աւ հնչյունները մի արտաբերմամբ վերածվել են ց-ի՝ պացխուն (ա>ու հնչյունափոխութեամբ), ինչպես՝ «...նա խկի շայնէ մարդոյ պացխուն» (Անս. 37), «...բերես զքո սիգեղն և զինչ այլ սլտք ունիս, որ իր պացխուն այնես» (ն. տ. 43. այս աշխատութեան մեջ հետեղականորեն՝ պացխուն): Այսպես նաև արատսուլ>արտսուլ (ն-ի հավելմամբ)>արցուն բառում. օրինակներ՝ «...լայիցն արեան արցունէ հանէ» (Կոստ. Երզնկ. 132), «Արցունէն սապտն լինի, սեռութիւնն սպիտականայ» (Հով. Երզնկ. 149), «...լայից արցունէ աղի լինի» (Ամիրգ. Ուս. բժշկ. 59) և այլն: Նույն հիմունքով կրտսեր. վարսուն բառերում սա, քս հնչյունակապակցությունները փոխվել են ց-ի, ինչպես՝ «...կրցեր կորայն իւր» (Մանր ժմնկ. II, 49, XIII դ.), «...ի թուարանութեան Հայկազկան տոմարի Պ-կորդի վացունեւորդի»⁴⁰ կորորդի» (Ժն ՀճՏ. 1, 163, 1414 թ. Վայոց ձոր): Թշուառ բառի քշ հնչյունների միասնական արտասանութեամբ ստացվել է շուառ ձևը. «...շուառ քան զամենեօրին» (Գ. Հովս. Հճ. 517, 1187 թ. Հռոմ-մտօր վայր), «...զուառս գրիչ՝ զՄիխիթարի Անեցի» (ն. տ. 675, ԺԳ դ. սկիզբը) և այլն:

Անշուշտ, այս փոփոխութիւնները հատուկ էին միայն միջին հայերենի առանձին տարրերակների:

⁴⁰ Այստեղ հնչյունափոխությունից հետո ա-ն պահպանվել է թերևս հաջորդ ժանկում լինելու պատճառով:

92. Վերը նշվածների համեմատ՝ մի քանի բառերում բարդ հնչյունը հանդես է գալիս միայն շփականի փոխարեն: Պարզ է, որ այս հնչյունափոխությունն իր բնույթով միանգամայն տարբերվում է առաջինից: Եթե այնտեղ միանգամայն արամարանական է բարդ հնչյունի առաջացումը իր համապատասխան բազադրիչներից, ապա այստեղ այդ հիմքը վերանում է Այստեղ բարդ հնչյունը հանդես է գալիս այն շփականի փոխարեն, որը կարող է լինել նրա բազադրիչներից մեկը: Այսպես է, օրինակ՝ Բանց բառը: Հայտնի է, որ այն առաջացել է գրաբարի Բան նախարություն և զ նախորդի կապակցությունից: Հավանական է, որ զ-ն նախապես խլացել է և ապա փոխվել ց-ի: Պարզ հնչյունից բարդին անցնելուն ամենայն հավանականությամբ նպաստել են նման այլ կազմությունները: Մի քանի օրինակներ. «...Բանց զամարչէ՛Բն այլ իրբ շտան ... իրաւոնբ շտան Բանց սամորչէ՛քն ի պրթէն» (Լեւո 9-ի 1288 թ. արտուն.), «...շտան Բանց ի հարկոն մէկ» (ն. տ.), «...Բանց կարեն հանել ու տանել խաղկով բնոց ամեն մարդոց գետներ» (Սմբ. Դատ. 16), «եւ ոչ կարէ կպիսկոպոսն իւր կպիսկոպոսութեան ժառանգ դնել, Բանց զայն որ բնտրութեանն Աստուծոյ եւ հայրապետին եւ ամենայն ժողովրդեանն արժանի այնեն» (ն. տ. 24) և այլն:

Վանց, որ առաջացել է վասն բառակնից՝ գրափոխությամբ (տե՛ս § 94, և) և այնուհետև բառավերջի ս-ն փոխել ց-ի: Ինչպես այս, այնպես և վերը նշված Բանց-ը, այդ փոփոխությունը կատարել են հայնց (հանց, ճկնց), քանց (<Մէ հայնց) բառերի նմանակությամբ: Վանց-ը բավական տարածված նախադրություն է, օրինակ՝ «...չինէլ էին զերէնց տունն վանց իրեն բայծուն» (Պար. Կոստ. 1271 թ. դաշե.), «եւ վանց վանկրեներոյն, որ եփ կու գան՝ նա զիրենց սնդակին կու բանան» (Լեւո 9-ի 1288 թ. արտուն.) և այլն (այլ օրինակներ տե՛ս § 94, և):

Պատին, որ առաջացել է պատիմ բառից՝ >ծ(չ) փոփոխությամբ, ինչպես՝ «եւ ով որ սուս աւեր կանկնի կամ ծախկոյ կամ խորնոյ կամ պակասութիւն ենելոյ՝ զպատինն ի սուրբ Աստուածածնէն առնու» (ԺԺ հճհ. II, 67, 1456 թ. Բասեն), «...խաշահանողացն առցէ և զպատինն Յուզայի» (ն. տ. 449, 1480 թ.):

Զ-ի փոխարեն ն ունեն մարգել>մարանել, մարգպան>մարծպան բառերը, երկուսն էլ Ե-ից հետո, ինչպես՝ «...զմարմինն յուշիկ յուշիկ աճուելով մարծէ» (Մխ. 2ևր. 33ա), «Ես Քուրգս, Հաստն, Համազասփ(պ), Սարգիս, որդիք Սքո՛բատա, որոք Համազպա մարծպանի» (ԿՂ Մանահ. 106, 1199 թ.): Պետք է կարծել, որ այս վերջին երեք բառերում շփականի փոխարեն պայթաշփականները բարբառային հին գոյացություններ են:

Վերը նշված բոլոր ձևերն էլ (բացի վերջինից) կենդանի են այժմ հայերենի ժամանակակից բարբառներում:

93. Այստեղ հարկ է նշել մի երևույթ ևս, որը թեև չի աննշում հնչյունների վերը նկարագրված բարդաման հետ, բայց ուշագրավ է այնքանով, որ արձանագրվելով մեր ժամանակակից բարբառներում, վկայվում է նաև հին ձևադրերում: Դա տևական կամ ուժգին մ-ի արտասանությունն է ամէն բառում (նաև դերանվանական առումով), որը արտահայտվում է նաև գրություն մեջ՝ կրկնադի մ-ով. այսպես, օրինակ՝ «...Ողորմես Քրիստափորի հոգուց եւ կնոջ Այգոցին, ամմէն» (Գ. Հովս. հճ. 378, 1161 թ.), «...ի իշատակ իւր և ծնողաց և եղբորց, ամմէն» (ն. տ. 1004, 1249 թ.), «...ամմէն զբէն ի ձեզ պիտի հանէք» (ԺԳ հճհ. 275, 1335 թ.) և այլն:

94. Դրափոխությունը ավելի բառի կազմի մեջ մտնող հնչյունների ընդունված հաջորդականության խախտումն է, երբ բառի արտասանության ընթացքում հնչյուններից մեկը արտաբերվում է ժամանակից ավելի շուտ՝ փոխելով իր տեղը հնչյունական շղթայում: Առաջանալով գրատեղագրական հոգի վրա և հատուկ լինելով միայն կենդանի-խոսակցական լեզուներին, այս երևույթը գործում է միայն առանձին բառերում ու բառակներում:

Հայերենին առավելապես հատուկ է բազադայների գրափոխությունը:

Միջին հայերենի սկզբնադրույթներում արձանագրվող գրափոխված բառակները թեև հիմնականում երևան են բերում այն հիմնական դեպքերը, որոնք մեզ հայտնի են մեր ժամանակակից բարբառներից, բայց դրանք պատմության համար հետաքրքիր են ոչ միայն նրանով, որ այդ փոփոխությունների առաջին վկայություններն են, այլև նրանով, որ միջին հայերեն լինելով կենդանի խոսակցական լեզու, բացահայտում է այդ երևույթի կենսականությունը:

Այստեղ որոշ գրափոխված բառակներ ունեն բավական լայն տարածում և արձանագրվում են ավելի շուտ սկզբնադրույթներում: Այդ հանգամանքը կարող է ենթադրել տալ, թե դրանք ավելի վաղ կատարված ձևափոխություններ էին, որ ունեն այդքան ընդհանրական բնույթ: Որոշ ձևեր, թեև վկայվում են սակավ օրինակներով (կապված ավելի բառի գործածության ոլորտի սահմանափակության հետ), բայց, դատելով մեր ժամանակակից բարբառներում դրանց տարածվածության և զրական լեզուներում նրանց կիրառության փաստից, պետք է կարծել, որ այն ժամանակ էլ ունեին գործածության լայն ոլորտ: Առանձին գրափոխված բառակներ ակնհայտորեն ունեն այսպիսի վկայումք, երբեմն նույնիսկ անհատական լեզվում կատարված փոփոխության բնույթ, բայց այս բոլորը, այնուամենայնիվ, հետաքրքիր են այնքանով, որ գրափոխության երևույթը բացահայտում են անհատականից մինչև ընդհանուրը: Այժմ կոնկրետ օրինակներ.

ա) Դատարկ բառի Ե հնչյունը ա-ից առաջ ընկնելով՝ առաջացրել է դարտակ գրափոխված ձևը. սրանից ունենք նաև դատարկիլ>դարտակիլ, դարտկիլ, դարտակնալ: Սրանք լայն տարածում ունեն և արձանագրվում են տարբեր գրավոր հուշարձաններում, այսպես, օրինակ՝ «...դարտակ նա չէ ուսփիկ բնկեր» (Ներս. Շնորհ. ԲՁ 567), «...եւ փորն փարփուտ և դարտակ երևեայ» (Մխ. 2ևր. 38ա), «...դարտկի ճրագուն զիճուլիսն» (ն. տ. 45ա), «...եւ ի յալլ ամենէն դարտակ էնէ» (Անտ. 55), «...դարտակ գրատե՛ն կէս սոլ՝ առնուին» (ԳՎ. I, Անի, 22, 1276 թ.), «...յեքր եղարնք դարտկի՛ն, նայ բարչեն ի իբղէն, և յեքր լեբոց դարտկի՛ն, նայ բարչէ ի յայն երակացն, որ անտանին մասարիսայ, և յեքր մասարիսան դարտակնայ, նայ բարչէ ի բարակ աղեացն, և յեքր բարակ աղիքն դարտկի, նայ բարչէ ի ստամորացն, և յեքր ստամորն դարտկի...» (Գրեգ. 129), «...դարտակ ստամորն» (ն. տ. 54), «Այն ճևղն, որ զպտուղն ունի, քան զդարտակն ի ցած կու կենայ» (Հով. Նրզնկ. 154) և այլն:

բ) Կամուրջ բառում Ե-ի գրափոխությունը ստացվել է կարմունջ (չ-ից առաջ մ-ի հավելմամբ) բառակեր. օրինակներ՝ «...ինչուրփի կարմունջն» (ԳՎ. I, Անի, 63, 1215 թ.), «...Կարմունջն կապով ես սպիկի» (Հով. Քլի. 160), «...Հաստատ ւ ամուր պահէ զկարմունցն ... Թուրքաց հեծկն սուսց եկան, Ղլարմունցն ասին ու կանգնեցան» (ն. տ. 202) և այլն:

դ) Կուսնայ բառում, այն բանից հետո, երբ ու-ն ա-ից ստաց հնչյունա-
փոխվել էր վ-ի (վանայ), միջին հայերենի որոշ տարրերակներում կատարվել
է լվ>վլ դրափոխություն. օրինակ՝ «...հայա վանայ» (ԺԵ հճԸ, I, 117,
1410 թ.), «...ի պղզ շուր վլացվի» (Ամիրզ. Ու. բժշկ. խճ) և այլն:

դ) Միջին հայերենին հատուկ սպրիկի, սպրիկի բառերը ստաջացել են
սուրբ «մարտ» բառից՝ ածանցմամբ ու դրափոխությամբ: Նախ կազմվել է
իկ ածանցյալ ձևը՝ սուրբ +իկ = սպրիկ, ինչպես և կա վկայված՝ «Գու աաս ընց
կինն, որ առնու լվացած սրպիկ և սպրիտակ կտաւի և շալկէ» (Գրիգ. 167),
այգա այդ ածանցյալը ձևին նորից ավելացել է իկ ածանցը, ինչպես՝ «...բէ
որ շոր թուզ շատ ուտէ և ընկոյզ, և մարմինն շլլինի սպրիկիկ, նայ շատ ոչիւ և
անիծ ընծայի» (Գրիգ. 39. տե՛ս նաև 167-ի սողատակը): Սրպիկի ձևից էլ
առաջացել է դրափոխված սպրիկի, սպրիուկ. ինչպես՝ «...շիմանայ դիրքն
սպրիկիկ» (Գրիգ. 72B ձեռագիր), «...վայրի բոշ մի կայր բարձուկ Առաջահոտ
ու սպրիուկ» (Ներս. Շնորհ. ԲՁ 570), «Բայց թէ այդին կամենաս լինի սպրիկի
գետին ու կակուղ՝ նա ի պակասն երեք մշակ պիտի որ փորէ» (Վստ. 9),
«...կոխողքն (խաղողին) սպրիկի պիտին յամենայն ախտից» (ն. տ. 85) և
այլն:

ե) Միջին հայերենի վանց կապը ստաջացել է գրաբարի վանց նախադրու-
թյունից՝ սն>ն գրափոխությամբ, ս>ց հնչյունափոխությամբ: Այսպես, օրի-
նակ՝ «նի թէ վկայն լիճ շլինի, նա վանս այնոր շմնայ, յիշվէ վկայութիւնն ի
վերայ (ճին» (Անս. 29), բայց ավելի հաճախակի են ս>ց փոփոխությամբ ձև-
վերջը (նույնիսկ նույն աղբյուրում), ինչպես՝ «Բայց վանց այնոր, որ անհա-
մանք է ելել ճորտն, նա թող հայնց այնէ, որ այս ժէ աուրս ընց ներսէ դառ-
նայ» (Անս. 13), «նի այս վանց այնոր է, որ աղա է լել ի մէջն» (ն. տ. 37),
«նի երզնու ի խաչն և յաւետարանն՝ որ օտու են նորս, դինչ աքցին ու վկայն-
քն վանց իր, և երթայ յիր բանն» (ն. տ. 29), «...շինել էին պիտէց առնն
վանց իրենց բայժուն» (Պար. Կոստանդ. 1271 թ. դաշնագ.), «նի վանց վա-
ճոկներդն» (ն. տ.), «Սիրաս է ի սուզ մտեալ վանց քո կարօտուն» (Խաչ. ԿԷ,
136), «Սուրբ եփրեմ զայն այնչափ ճառերն, որ սասց, Վանց սիրոյն Աստուծոյ
բզմեղ խրատէր» (Յր. 247. Յրիկի Գրիվանում վասն ձեռի դիմաց ձեռագրերը
հաճախ դնում են վանց) և այլն:

Այստեղ դնում ենք նաև այլ դրափոխված բառեր իրենց վկայություննե-
րով:

զ) Խտուր>սխտուր.—«...տաք կերակուրն, որ է հին ընկուզն, և սոխն,
սխտուր և պղպնդն» (Գրիգ. 52, 66 և այլն), «...սխտուր և սոխ և տաք զեղեր
լինի ի մէջն» (Ամիրզ. Ու. բժշկ. ծգ) և այլն:

է) Փետուր>քեպուր, քեփուր.—«Մէկիկ հատուկ մի կայր փորրիկ, ւ ի
զուտին ունէր սեուկ քեպրիկ» (Ներս. Շնորհ. ԲՁ 560), «Թեւաթի կտուր քե-
փուրին» (Հոզ. Քլի. 212) և այլն:

ը) Ամուս>ամբուս>ամբրուս (դրափոխությունից հետո մե հնչյունների
միջև բ-ի հակվումամբ).—«...սուպ, մեղր, ամբրուս, սե շամիչ» (Գրիգ. 35),
«...ամբրուս և զինի և թուզ» (Ամիրզ. Ու. բժշկ. կզ.) նաև մ-ի անկմամբ՝ ապ-
բուս՝ «...նուսն այլ երաց հազար ախույն, Ապբուսն ի ծառն կախուցաւ» (Հոզ.
Քլի. 167) և այլն:

թ) Վանբամ>Վարբամ.—«նս աթապակ Վարբամ ... հրամանաւ աթարակ
Վարբամա» (ԳՆՎ. I, Անի, 44, 1342 թ.), «նս Գուգա, մայր Վարբամա ևս

Քրդին» (ԿՂ Սան. 132, 1240 թ.), «...ի Վարբամա որդեացն զնեցի» (ԿՂ
Հազր. 174, 1220 թ.) և այլն:

ժ) Բանալի>բալնիլ.—«...զոտն փակեցին և գրալնիլն առին» (ԺԳ հճԸ,
275, 1335 թ., Կիլիկիա):

ժա) Պանխաունի>Պախաունի.—«նս Արխարիփ Հայոց մարզպան...
յազգէ Պախաունի» (ԿՂ Սան. 97, ԺԱ դ. Ա կես), «...նս Շապուհիկս իշխանաց
իշխան, որդի Գարրանիլիին, ի սոհմէ Պախաունի» (ն. տ. 147, 1061 թ.),
մինչդեռ Անիի արձանագրություններում նույն ժամանակներում՝ Պանխաունի,
օրինակ՝ «...բրիստոսաւէր մարզպանին Ապղարիպա, որդո Գրիգորոս Պանխա-
ունո» (ԳՆՎ. I, Անի, 48, 1036 թ.):

ժբ) Ապարանբան>առպանբան.—«...զիմ ոսկի առպանբանի զոնծէն տվաք՝
զսր Սիոնի տակի հողն Վարդապետնեց սասար» (ԳՆՎ. III, Վայոց ձոր, 56,
1378 թ.):

ժգ) Արկղ>աղկր.—«...չիենա մեծ աղկրեւ ... ծեփեա գաղկրե ի ներ-
քուստ և դրոց» (Վստի. 132):

Հնչյունների դրափոխություն արձանագրվում է նաև փոխառյալ բառե-
րում. այսպես.

ժդ) Նաղշ(ած)>Նաշխած.—«...Նաշխած գեղերով» (Ձեռ. 8029, 232ա,
1376 թ.):

ժե) Գաղմա // տաղմա>ղամղա // տամղա.—«նս Մխիթար, որդի Գրիգոր
Խոյցիսին, որ Անոյ տաղմանի էի... թողի պաղպանոյս ամենոյ զղամղէն»
(ԳՆՎ. I, Անի, 28, XIV դ. սկիզբը). տամղա ձևով երեք անգամ Անիի 1280 թ.
մի արձանագրության մեջ (էջ 23) և այլն:

ժզ) Անդովլաք>անդովաք.—«Հասան Ալին՝ անդովաքն այն, եկեղեցի
չինեաց զՄակուայն» (ԺԵ հճԸ. II, 334, 1472 թ.):

ժլ) Բուրբան (արբ. buhran)>բուրբան.—«...և զիւր բուրբանն՝ ի նոյն
արն առնէ, և արձակի ի քսանուորս պահն» (Մխ. Հեթ. 10բ), մինչդեռ Գրի-
գորիսի մոտ առանց դրափոխության՝ «...զի ցան, որ լինի յամէն զուտն, նայ
կամ լինի բուրբանէ, կամ լինի հետ տարութեանն» (էջ 51):

Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, դրափոխության են-
թարկվում են առավելապես ձայնորդ հնչյունները:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ I

Միջին դարերում համալրված մետաղյան այրուբներ և նրա միավորների նկշյունական առժեքը միջին հայերենում

$w = a$
 $r = bh, b, p, ph$
 $q = gh, g, k, kh$
 $q = dh, d, t, th$
 $h = e, ye, ie$
 $q = z$
 $t = e$
 $g = a$
 $\theta = th$
 $d = z$
 $t = i$
 $l = l$
 $h = x$
 $\delta = c, j$
 $h = k, g$
 $\delta = h$
 $a = jh, j, c, \zeta$
 $q = \gamma$

$\acute{a} = \acute{c}, j$
 $\acute{d} = m$
 $l = y, h^s$
 $\acute{u} = n$
 $z = \xi$
 $n = o, vo, uo$
 $z = \acute{c}$
 $uy = p, b$
 $z = jh, j, \acute{c}, \zeta$
 $n = f$
 $u = s$
 $t = v$
 $m = t, d$
 $r = r$
 $g = \zeta$
 $\epsilon = v$
 $\theta = ph$
 $\rho = kh$
 $k = ev, yev$
 $o = o$
 $\phi = i$

* Բառակցի գիրքում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ II

Հին հայերենի նկշյունների փոփոխությունները միջին հայերենում¹

Չայնավորների փոփոխությունները

$w > a, \emptyset$
 $h > ye, ie, i$
 $t > e, a$

$t > e, a, \emptyset$
 $n > vo, uo, u, a$
 $nc > a, o, v, \emptyset$

Նրկբարբառների և ետբարբառների փոփոխությունները

$mw > o, u$
 $hw > u(\acute{u}), i$
 $hw > e, a$
 $hw > u(\acute{u})$

$hw > e$
 $hw > a, e (a)$
 $hw > ev, yo$
 $hw > e$

$hw > e$

Բաղաձայնների փոփոխությունները

$p > bh, p, ph$
 $q > gh, g, kh$
 $q > dh, t, th$
 $\delta > jh, c, \zeta$
 $z > jh, \acute{c}, \zeta$

$uy > b$
 $h > g$
 $m > d$
 $\delta > j$
 $\acute{a} > j$

$q > \gamma (> x)$
 $\epsilon > v$
 $\gamma > h$
 $\zeta > (x)$

¹ Քերական և միայն այն նկշյունները, որոնք իրենց հին արժեքներից բացի, միջին հայերենի առանձին տարրերակներում ենթարկվել են օրինակով փոփոխությունների:

Մ. Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Բ Ա Ռ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Միջին հայերենի բառապաշարի բնութիւնը նպատակ ունենք ներկայացնելու հայոց լեզվի զարգացման նույն փուլին ընդոշ բառաչին իրողութիւնները, հին շրջանի համեմատութեամբ բառապաշարային տարբերութիւններն ու փոփոխութիւնները՝ իրենց ներքին և արտաքին պայմանավորվածութեամբ:

Բառապաշարի բնութիւնը սկզբնապէս գրադվել են ականավոր գիտնականներ Ա. Այտրեճյանը, Ղ. Հովնանյանը, որոնք մի շարք արժեքավոր գիտողութիւններ են արել:

«Փննական բերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի» աշխատութեան մեջ Ա. Այտրեճյանը ուշադրութիւն է նվիրել այն հարցին, թե զասական մատենագիրներից հետո ընկած ժամանակաշրջանում հայերենի բառապաշարի մեջ ինչպիսի փոփոխութիւններ են տեղի ունեցել և երբ են սկսվել գրանք նա նկատել է, որ արդեն IX—X դարերի գրական հուշարձաններում երևան են եկել այնպիսի բառեր (փոխառյալ, նորակազմ, իմաստափոխված), որոնք ընդոշ են եղել լեզվի զարգացման միջին շրջանին: Այտրեճյանը բերում է այսպիսի օրինակներ՝ համիմաղ «գատախազ», խստակար «որդիներ, զավակներ, հաջորդներ», սևո, բնասևո կամ բնասաւ, խոռ, խուղ, նեպակ «հրամանագիր», շար «հարկ», բեկար «տուրք», մատակ «չուր հանելու տեղ», սևեբևս, շնորհատուր, արեւշատուրիւն «երկար կյանք», վաղն, հայրենատուր «կալվածատեր», ինչ «միեղե», ջրբափ «բրվեծ», ձնեմատուր «արվեստատուր» և այլն:

Փոխառյալ բառերի շուրջ կարևոր գիտողութիւններ ունի Ղևոնց Հովնանյանը: «Հետազոտութիւնք նախնեաց սամկօրէնին վրայ» մեծարժեք աշխատութեան մեջ նա բերել է տարբեր լեզուներից կիլիկյան հայերենին անցած մի շարք բառեր, բնեւ պրանց ներթափանցման պատճառները, որոշել արժեքն ու գիրը: Ղևոնց Հովնանյանը ճիշտ կերպով նշել է, թե օտար բառերի շարժանցանց հանախութիւնը միջին հայերեն գրականութեան մեջ անհետափոխի հետևանք է ժամանակի որոշ հանգամանքների. «Բանասիրական տեսակիտէ նախնով՝ մեծապէս անհաճու է շարժանցանց յամախութիւն օտար բառից ի սոյն պրութիւնս, եւ վերիվերոյ հայեցմամբ՝ ճաշակի պակասութեան կամ նորափոխութեան եեթ արդիւնք կը կարծուի: Բայց իրն ամէն պարագայիւրն որ նկատուի, կը տեսնուի թէ այնպէս չէ. այլ բնական հետեւութիւն է քաղաքական և օտարմտական վիճակի ազդին և հանգամանաց ժամանակին: Այսմ դերաւ կը Վամուգի սաննայն օր՝ երբ միտ դնէ թէ սահմանակցութիւն ալլալեզու ժողո-

¹ Յե՛ս Ա. Այտրեճյան, Փննական բերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, Վրեհեա, 1886, էջ 142:

վրջոց, քաղաքական յարաբերութիւն օտար ազգաց հետ, վերին իշխանութիւն օտարազգի աշխուժեան, ինչպիսի մեծ ազդեցութիւն կ'ունենա ազգի մի լեզուին վրայ, և թէ դարական տնտեսութիւն այս հանգամանաց՝ որչափ օտարամտութեանց պատճառս կու տայ:՝ նման հանգամանքներում հաճախ լեզվից լեզու անցնում են աշխարհի բառեր, որոնք ավելորդ են, որոնց հաստատուն համար- ժեքները առկա են փոխառու լեզվում, բայց երբեմն մղվում են ետին պլան: Ղ. Հովնանյանը բերում է այս կազմի փոխառութիւնների ֆրանսերենից՝ աք- ֆրենզի (հայ. արքեպիս, արքեպիս), շաստեկ (պատմեկ), մարիան (ամուսնութիւն), բէ (Քաղաք), սուպ (կրկին), սուլեկ (կրկին), հունարենից՝ տիպիկ (կտակ), նոմոս (օրէնք), նոմիկոս (օրէնսգէտ), յաղարիսա (հաշիւ), արաբե- րենից՝ խեմ (հակառակորդ), բըրշիաթ (կաշառ), հարմել (անիրաւի), շա- րեկ (թատրոց), ֆուլան (բառիկ):

Միջին հայերենի բառապաշարով զբաղվել է բանասեր Միղրտէ Պոստը- շանը: Իր աշխատասիրութեամբ լույս տեսած Կ. Երզնկացու տաղերի գրքուիկին (հրատ. Վենետիկ, 1905 թ.) նա կցել է մի բառարան, որտեղ բացատրել և ստու- զաբանել է երզնկացու գործածած փոխառյալ և բարբառային բազմաթիվ բա- ւեր: Այսպէս՝

Պարսկերէն. ազար «վիշտ, նեղութիւն, վշտացած», անդիշայ «միտք, մտատանջութիւն», բահար «գարուն», բէխապար «անտեղյակ», բէշմար «ան- իրիվ, անհաշիվ», բէսիֆաթ «ազնի», բիմար «հիվանդ», գանգալ «կատակ», ցանահար «անկազմ», կար սիրելի», գահր «թույն», գաս «սուկի», զերայ «որովհետեւ», զերազպար «վարովեր», շահ «չըհոր», սաղ «նվազարան», սարիաշ «քիւնով», փուստ «պողպատ», քուշատ «ուրախութիւն»:

Աւարերէն. ալանի «հայտնի», բասար «խելք, բանականութիւն», բէտար «զվարթ», դովաթ «ունեցիվածք, կարողութիւն», զանախ «կեդոտ», ֆատար «միջոց, հնար», ֆուրուշ «կույր, տխուր», խաշայ «ցնորք», հաճաթ «գործիք, պիտուրք», հարիֆ «բնիկ», զաֆիլ «անզգուշ», դուսա «վիշտ», շամիշաթ «բազմութիւն», շար «բնութիւն», շաֆա «տանջանք, զրկանք», շումլա «ծո- ղով», շոհարի «գոհարովաճառ», սուսա «ստութիւն» (արբ. setval), սէրին «պարկեշտ», սիպր «մեծութիւն», ֆիլ «հմայր», ֆրիաթ «բողոք»:

Բարբառային. ակնառ «որոգայթ», աղետալ «խզնալ», ասուն «շատախոս» (զոր. իմաստ է՝ «բանական»), գահնլ «մտաբակել», գրուրդ առնուլ «թունդ կշ- նել», գատիլ «հեռանալ, բաժանվել», գարնկ «խփել, կանգնեցնել, կատուցել, շինել», զղոր «հշմարիտ», զիհահար «ամոթահար», շինել (զրան) «դրել, շա- րագրել» և այլն:

Միջին հայերենի բառապաշարի հավաքման և դիտական ուսումնասիրու- թեան գործում անգնահատելի վաստակ ունի բազմաշնորհ հայագետ Նորայր Բյուզանդացին, որը, ցավոք, գեղես իր արժանի գնահատութիւնը շի գրեկ հայ լեզվաբանութեան պատմութեան մեջ: Ծարր Երկնի տակ, Ստոկհոլմում, հա- րազատ մարդկանցից հետու, անաստական և հոգեկան ծանր, նվաստացուցիչ պայմաններում նա ձեռնամուխ է եղել հայագիտական կարևորագույն խնդիր- ների լուծման՝ ստեղծելով բազմաթիվ մեծարժեք գործեր: Մահից հետո Երս

ձեռագրերը անխնամ թողնվել են նկուղում, և մի մասը հեղեղի մարակ է դար- ձել: Որոշ ձեռագրեր, բախտի բերումով միայն, փրկվել են, հանձնվել Փարիզի Կյուլպենկիյան գրապահոցին, որտեղից մի բանիսի մանրածագավենները ուղարկվել են հայրենի Մատենադարանին: Մանրածագավենների մեջ է, ի թիվս շատ արժեքավոր ձեռագրերի, միջին հայերենի բառարանի՝ բառարանի՝ «Բառագիրք ստորին հայերենի» (1884—1894 թթ.), որի միայն հինգ հատոր- ները կան (Ա.-ից Պ տառեր): Այս բառարանը, կարծում ենք, ավարտված է եղել և լրիվ. փաստն այն է, որ Նորայր Բյուզանդացին բառահոգովածներում հաճախ հղումներ է անում Ջ.-ով, Ա.-ով, Ք.-ով սկզբնական բառերին, այնինչ Պ տա- ուցի հետո բառարանն քնդհատվում է: Բառարանի վերջին հատորները, Ջ.-ից Ք տառերի քնդգրկմամբ, անտարակույս, կրկն են, թերևս հեղեղի ժամանակ:

Բառարանի բացատրական է: Կան նաև ստուգաբանական վերլուծութիւն- ներ: Այստեղ ամփոփված են գրաբարն անձանոթ արմատական, նորարկում, հին գրականութեամբ ավանդված, բայց իմաստափոխված, նոր շրջանում փո- խառնված բառերը, որոնք ներկայացված են բերորշ գրական օրինակներով. յուրաքանչյուր իմաստային նրբերանգն արտահայտելու համար բերված են համապատասխան նմուշներ:

Բառարանի արժեքը մեծ է ոչ միայն հեղինակի կատարած վիթխարի աշ- խատանքի շնորհիվ, այլև Վենետիկի, Վիննայի, Փարիզի հազվագյուտ ձե- ուղարկական գանձերի օգտագործմամբ, գանձեր, որոնցից շատերը հայերենի- րում չկան:

Միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրութեան գծով մեծ նրախարհ ունի զերմանացի նշանավոր հայագետ, կիրիկյան հայերենի հմուտ գիտակ Յոզեֆ Կարստը: Իր «Historische Grammatik des Kilkisch-Armenischen» աշխատութեան մեջ (հրատ. Ստրասբուրգ, 1901 թ.) նա գիտականորեն բացա- տրել է միջին հայերենյան մի շարք բառերի ծագումը: Բացի այդ, կազմել է մի քնդարձակ ստուգաբանական բառարան՝ «Wörterbuch des Mittelarmenischen»,⁵ ուր հավաքել է միջին հայերենի բնիկ և փոխառյալ բառերը, ենթա- կելով դրանք ծագումնաբանական բնութիւն: Բառարանում եղած ստուգաբա- նութիւնների մեծ մասը ճիշտ և անողնակի է:

Ինչպէս Յոզեֆ Կարստի, այնպէս էլ Նորայր Բյուզանդացու հիշյալ բառա- րանները կարևոր ներդրում են միջին հայերենագիտութեան աստղաբլուզում, ուստի թե՛ մեկի, թե՛ մյուսի հրատարակութեան գործը անհետուձգելի խնդիր պիտի համարուի:

Միջին հայերենյան բառերի ստուգաբանութեան բնագավառում իրենց նշա- նակալի դերն ունեն մեծանուն հայագետներ Հյուրշմանը⁶, Հրայր Աճառյանը⁷, Սեւփանոս Մալխասյանցը⁸: Մեր օրերում այս ուղղութեամբ աշխատում է բա- նասիրական գիտութիւնների թեկնածու, զոցնեա Բարկեն Չուգասրյանը, որը միջին հայերենում գործածական պարսկերեն, արաբերեն բառերի մի շարք ինքնուրույն ստուգաբանութիւններ ունի⁹:

⁵ Ձեռագիր միտնում պահում է Մաշտոցի անվան պետական Մատենադարանում:

⁶ Hübschmann, Die semitischen Lehnwörter im Altarmenischen, ZDMG, 1892, էջ 226—228; Hübschmann, Armenische Grammatik.

⁷ Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, է (Հովնդիված):

⁸ Սո. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. I, II, III, IV:

⁹ Տե՛ս Միլտիլ Նաղաշ, Երևան, 1965, էջ 244—256 (բառարան), Գր. Արքայազնի, 1963 (բառարան):

² Ղ. Հովնանեան, Հետազոտութիւն նախնեաց սովորելին վրայ, Վիեննա, 1837, էջ 266:

³ Անդ. էջ 271:

⁴ Հմ.Ս. Կոստանյանի ներկայի, Տաղեր, Վենետիկ, 1905, էջ 43-ից:

Այսպիսով, միջին հայերենի բառապաշարի հավաքման և ծագումնաբանական վերլուծության գծով հայալեզուների կողմից մեծ աշխատանք է կատարված, աշխատանք, որը հնարավորություն է բնձնում զիմելու հետագա բալլերի:

Մեր խնդիրը միջին հայերենի բառապաշարի ընդհանուր նկարագրությունն է, բառաշեքերի քննությունը, բառակազմական, իմաստաբանական բնորոշ իրողությունների վերլուծությունը, պատմական, հասարակական ու կրթական այն հանգամանքների պարզարանումը, որոնք նպաստել են բառապաշարի մեջ կատարված փոփոխություններին:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՍԱՇԵՐՏԵՐԸ

Միջին գրական լեզվի դերը հայերենի բառապաշարի պատմության մեջ հստակորեն պատկերացնելու համար կարելի է նրա բառապաշար տարբայուն շերտերի՝ բառաբանության ավանդման պատմական հաջորդականությունը:

1) գրաբարից ավանդված բառեր,

2) միջին հայերենով ավանդված բառեր:

Տվյալ բաժանմամբ պարզվում են մի կողմից բառապաշարային այն ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն գրաբարի և միջին հայերենի միջև, մյուս կողմից՝ այն նորությունները, որոնք բերում է միջին գրական լեզուն:

I. ԳՐԱԲԱՐԻՅ ԱՎԱՆԴԱՆ ԲԱՍԻՆԻ

Լեզուն մեծամասամբ ավայ լեզուն հենց նրանով, որ դարերի ընթացքում, որքան էլ փոփոխությունների ենթարկվի՝ բանական կամ որակական, պահպանում է իր բառապաշարի հիմնական կորիզը, հնչյունական համակարգի, քերականական կառուցվածքի բազմաթիվ բնորոշ գծերը: Այսպես է և գրաբարից միջին հայերեն անցումը: Միջին հայերենը թեև նոր որակ է գրաբարի համեմատությամբ, բայց և այնպես հայերեն է՝ թե՛ բառապաշարով, թե՛ հնչյունական համակարգով ու քերականությամբ:

Միջին գրական լեզուն գրաբարից ժառանգել է նրա բառապաշարի ամենակենսունակ տարրերը, երկու ճանապարհով՝

1) Բնական, այսինքն՝ ուսման և ուսյալ ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի միջոցով:

2) Արվեստական, այսինքն՝ գիտնականների՝ գրաբարից ունեցած գրական ազդեցության շնորհիվ:

Բնական ճանապարհով միջին գրական լեզվին անցել են բնիկ և փոխառյալ այնպիսի բառեր, որոնց մեծ մասը ընդհանուր է հայերենի բոլոր գրականության համար:

արեւ || արեգակ, լուսին, լուսահար, լուսնոտ, լոյս (լուս, *լիս), աստղ, ամպ, Լեկինք, կայծակ (կէծակ), կարկուտ, կարկտածեծ, ձիւն (ձուն, *ձին), բուք, բրախեղզ, անձրեւ (անձրով), անձրեւաբուր, հեղեղ, գետ, գետամէջ, գետառ, գետատար, առու, աղբիւր (ախպուր), աղբրակ, ակ (<ակն), հուն, ալի(ք), անգունդ, հող, հողագործ, հողածին, հողեղէն, Լեկիք, Երկրային, Երկրասէր, հով, հովնալ (<հովանալ), սար, բլուր, լեռ (լեռն<լեռոն), լեռնային, դաշտ, անտառ, անապատ և այլն:

Աստուած, սուրբ, սրբաճոգի, սրբաւեր, սրբազան, երդում(ն), ուխտ, կեկոզեցի, խաշ, դրախտ, հրաշք, վանք, վանական, երկց (երկջ, էրբց), միանական (մինայկեց), քարոզ, քարոզել, ծոմ, պաս, դոճ, զոճատուն, կախարհ, դեւ, դիւանաբար, դժոխք, գերեզման, գերեզմանոց, սատանայ, զուշակ, անէծք, անխեծել, միտուն (մեոսե), քնծայ (քնծա), օրճնել, պաշտել, աղօթել և այլն:

ալ(ք), ականջ, ունկ(ն), ոտեզ, բերան, լեզու, լինգ, բիմք, ատամ, երես, ճակատ, բունք, մօրուս (<մօրուք), կոկոզ, ուս, թեւ, արմունկ (<արմունկ), ափ, աշ, աշիկ, մատ(ն), մատնիք (<մատանի), մատնեճար (<մատանեճար), մատնեճրիկ (<մատանեճարիկ), եղունգ(ն), թիկ(ն), սիբա, լեբզ (<լեարզ), կող, մէջք, ծունկ, երանք // արանք, արգանգ, օտ (ոտն, օտք), օտնճար (օտնաճար), օտնկոխ, օտնաման, օտնաշափ, միս, մսակեր, օսկոր, օսկրածուծ, յօզ, մկան // մուկ(ն), զլուխ, շիկ // շիգ, երակ, մաշկ, մաշկել, արիւն (արուն, արոյն), բրտիք, թուք, արցունք (<արտասուք), միտ(ք), հօգի, հօգեկ (<հօգեակ) և այլն:

խիթ, խոլ (<խոլլ), խոց, վերք, կուր (կուր), մահ, մահճար (<մահճարար), զարման, ճար և այլն:

էրիկ (այլրիկ), կին, կնիկ, հայր (հար, հէր), մայր (մար, մէր), հօրա // հօրու, մօրու, աղբայր (աղբար, աղբեր) // եղբայր (եղբեր), թոռ (<թոռն), քոյր (քուր, *քիր), գաւակ, մանուկ, որդի, հարս(ն), հարսնացու, սկեսուք, սկեսար (<սկիսարայր), տալ, բնի, փնսայ, փնսացու, բնտանի, բնտանիք, գերգաստան, որբ, քնկեր, աղզ, տղայ, հարազատ, հարեան, դրացի, մամ, պագ, պատու, պոռնիկ, պոռնկորդի, տոճ, արու, մարդ, օտար և այլն:

արօր, բահ, բիր, եղան, թիակ, լուծ, սամի, գութան, խոփ, ման, ուրազ, մանգաղ և այլն:

կզի (ալզի), արտ, արօտ, արօտանեղ, պահէղ, պարտեղ, պարտիզպան, մարտ, քծու, քնիկ, բուսնիկ (<բուսանիկ), բրի, ճերկել, վարել, պեղել, քաղել, դիզել, պտուղ, միրգ, բերք, կիթի, կիթ, գալար, գդիշ (>գաղշ) և այլն:

բոյս, գարի, սիսեռ(ն), կաղին, հացի, թեղի, նոճի, թղենի, արմատ, ծառ, ծառուտ, բուն, սատ, օրթ, օրթատունկ, կիչու, թուփ, անբու, ցողուն, խաղող, ծիրան, զեղձ, արմու, ազոխ, աննուխ, կանեփ, կանկար, համասպրամ, շահասպրամ, մանուշակ (մանիշակ, մանեմշակ), վարդ, շուշան, շաղգամ, պղզպեղ, սոխ, վարունգ, անխոն, կիտրոն, ստեպղին, կաղամբ և այլն:

անասուն (անսուն), այծ (ած, էծ), գառ(ն), ուլ, ուլիկ, մարի, ոչխար, որոճ, խաշինք, խոճկոր, խոզ, խոզրած (խոզրած), եզ(ն), կով, մոզի, բնչուղ (<բնչուղ) ամեծ հորթ, մատակ, ցուլ, զոմէջ, բուսակ, ձի, ձիուտը, ձիապան, երմակ (<երմակ), շուն, կատու, էշ, աւանակ, չորի, չորեպան, գրաստ, ուղտ, ուղտապան, մեղու, աղբուկ, ձուկ(ն), ձկնորս, փուկ, կէտ, կրիս, կովորդիլոս, տառիխ, հաւ, հաւազ, թռչուն, սազ, բազ (բազա), բազ, կաթու, կաշազակ, սպրեկ (<սարեակ), տատրակ, սիրամարդ, արծիւ, ծիծեռ (<ծիծեռան), կառնիկ, ուրուր, ազոաւ, թիթեռ(ն), ճանճ, սարդ, տիզ, մրջին (մրճիմ), զօրտ, մուկ(ն), մուշկ, աննէտ, կուղպ, խլուրդ, ոզնի, կուզ, մոզես, օձ, իժ, քարք, վիշապ, կապիկ, եղնիկ, վաղոր, լուսան, վարազ, լուփազ, արշ, գայլ (գաւ, գէլ), բորենի, աղուն, աղեռ (<առուծ, առոյծ), փիղ և այլն:

բուտ, բուր, որոճալ, արածել, արօտ, արօտեղ (<արօտաեղի), զոմ, փարախ, կու(կույ), թրիք, հօտ, նախիր, նախորդ, հովիւ, էգ, ստերք, որձ և այլն:

կարթ, թակ (<թակն), ճախրակ (<ճախարակ), աղօրի, ջաղաց (<ջրաղաց), հերին (հերուն, հերոյն), դարբին, թիթեղ, գերմակ, տուտ, տաշել, հինել, հալել, ծեփել և այլն:

գիր, մատնան, երգ, երգել, դպիր, դպրանոց, դպրատուն, վրձին, նկար, նկարել, ծաղիկ, քանդակ, քանդակել, պատկեր, պատկերահան, աշկերտ (աշակերտ), վարժիկ (վարժիկ), տոմար, կարիկ (կարակի), կանոն, թմբուկ, նուագ, վին, տախի, քնար, զուսան, մեղեդի, թխարտն, սոսակ, առասպել և այլն:

գոյն (գուն), դեղին, ճերմակ, սև (<սեւ), սպիտակ (խապիտակ), սպիտեղել (<սպիտակել), կարմիր, շէկ, խարսեշ (խարսեաշ), գօրշ, կապոյտ, կանաչ (կանանչ):

գանձ, գրաւ, գրաւան (<գրաւական), ամել (<արժել), ամենայ (<արժենայ), դին, գնել, տոկոս, վարձ, վճար, վճարել, վաճառք, վաճարեան (<վաճառական), տոյժ, վնաս, համբրել (<համբրել, համարել), հասար (<հասարար) և այլն:

տուն, դուռ(ն), պատուհան (պատհան), անկիւն, արիւն, որմ(ն), պատ, ցիւ, բիւ, գեորն, դարպաս, կամար, կամարակապ (կամարկապ), բեմ (բեմք), մատուտ, կամուրջ (կարմուրջ), պարիսպ, պարսպել, տաճար և այլն:

անկողին, բարձ, վերմակ, սաւան, վարտիք, շապիկ, աստառ, բազպան, գրպան, զանկապան, սննապան, բեճեզ, կերպաս, բամբակ, բուրդ, դիպակ, խոյր, փիլոն, սքեմ, մուճակ, քսակ, պսակ, դինգ, մանեկ (մանեակ), թագ, յազնիլ (<ազանիլ), օձնել (օձանել, օձել) և այլն:

կաթ(ն), դալ, կորկոտ, ազանձ, կեր, կերակուր, ալիք (ալուր, ալոյր), խմոր, թան, մածուն, մեղր, շիր, ջուր, կարագ, ճարպ, սպուխտ, խորտիկ, նոշ, շաքար, պանիր (պանիր), պաշար, պարսիմա, օշարակ, եկանակ, եշխար, աման, կոնք, կուծ, պնակ, կաթաւ, կիթու, թաղուկ, կիթով, բոժակ, դաւաթ, զոյլ տրգալ (տգալ<տարգալ), հաւան, այրել (էրել), վառել, եռալ, եփել, լեւել (<լեւուլ), խանձել, լուսնայ // լուալ // լուանիլ, խաշել (<խարշել), քամել, քերել, մրուր, պղպշակ // պղճօճակ, վանդակ, ախտակ, պատույզ (պատուր), հրագ, մոմ, կրակ, բոց, հուր, տակառ և այլն:

մի // մին // մէկ, երկու, երեք (երեք), շորս (շորք), հինգ, ...հարուր (հարիր, հարիր), հազար, դանգ, դրամ, փող, գեկան (<գահեկան), աղջի (առաջին), վերջի (ներջի, վերջին), մղոն, լիտ, ամբողջ, ամեն (<ամենայն), աւելի (ավել, էվի), երկար // երկան (երկն, երկայն), շատ և այլն:

արծաթ, արծաթագործ, արճիճ, պղինձ, ոսկի, ոսկերիշ, ոսկեկար, ոսկեկար, ժանգ, ժանգապատ, ժանգիլ, ձիւթ, ձիւթիկ, կուպր, բիրքեզ, տպակի (ապիկի), կնարուկ, խունկ, ինկաման, ռետին, ռեանային, սնգոյր, սպունգ, նաթ, բար, վէմ, մարմար, յակիթ, զմրուխտ, աղամանդ:

ամ, տարի, դար, ժամ, ժամանակ, ամիս, ամառ(ն), գարուն, ձմեռ(ն), աշուն, օր, տիւ, առաւօտ, գիշեր, երեկոյ (իրիկուն), ցերեկ (ցորեկ), ուրբաթ, շաբաթ, կիրակի (իրիակի), րոպէ, տեղ (տեղի), մատ, հեռի, մէջ, վրայ (վերայ), առջև (առաջեւ) և այլն:

աւան, մարդ, շէն, սոսան, գեղ (գեղօղ, դիւղ), ագարակ, սահման, ճանպահ (<ճանփաչ, ճանապարհ) և այլն:

դատ, դատաստան, դատաւոր, իրաւունք, հասոյթք, պատիժ, պատժել, մահապարտ, մահճար (<մահճարար), արտըր, սպահարզան, հորման (հասար) և այլն:

ման), հրամայել (համել), հաւերք (հրաւերք), հրաիրել, վկայ, վկայել, վճիռ, օրէնք, ատեն (<ատեան), ատենագիտ, ծառուփիւն (ծառուփէն, ծառայութիւն), պայման (պոման // պոմն), պատճէն, պաշտպան, մուրհակ, բաժին, բաժնել (բաժանել):

արշաւ, աւար, ապուռ, ապուել, գրօշ, զինուոր, գօրք, քննամի, զերի, զերել, պատեհազմ, պատերազմել, վաշտ, զուռզ, սպարապետ, իշխան, արքայ, արքայորդի, արքայադուստր, արքաներայր, քաղաւոր (քաղուոր), քաղաւորել, սպարաւոր, սպարամբել և այլն:

զէնք, զրահ, նիզակ, պարս, վահան, սաղաւարտ, տէգ, նետ և այլն:
անուն, արթուն, արդար, աղքատ, ասել, հաւատալ (աւտալ, հաւտալ), ատել, անկնիլ (ընկնիլ, անկանիլ), բերել, բուրբ, բութ, բարակ, բարկնալ (բարկանալ), խոր, խորնալ (խորանալ // խորմնալ), գալ, երթալ, զնալ, զրտնուլ // զրտնել (զտանել), զործել, ժողովել (ժողովել), զազրել (զազարել), դառնալ, զնել, կնտուլ // կննել (կաննել), թողուլ // թողնել, հղիել (հղնել) // կննել (ըննել, բլլալ), այնել (անել, առնել), լինիլ (լնիլ // լիննալ // լնալ), զգալ, ընկնուլ (<ընկնուլ), թմբիլ, թռչել // թռնուլ, երեւնալ // երեւիլ, ուննալ (ուննալ // ունիլ), լաւ, լուռ, լիբր, կեղծ, խածնել (խածնել), ծաղր, ծիծաղ, ծածկել, ծնել, կատակ, կենդանի, կողմն, հարսնիք, հանդերձ, զգեստ (սգեստ), հասնել (հասանել) // հասնուլ, հաշել, նայել, հարկնել (հարկանել), հարցնել, (հարցանել), հեծնուլ, հին, հոտ, հում, ձրի, շօր, շորնալ (<շորանալ), ճանշել (ճանաշել), մանր, մեծ, մեղկ, մեղմ, մեռնիլ // մառնիլ, մնալ, մուրբ, մոռնալ (մոռանալ), մտնուլ // մտել // մտանել, մրսիլ (մսիլ), չարիլ, նստիլ, նոր, ողբ, ոգրալ, զորկ (<զորրկ), օղջ, օռնալ, օտել, օրանալ, պինդ, պլոյել, ջանալ, ջնջել, սիրել, սխալ, սուտ, ստանալ, տալ, տեսնուլ // տեսնել (տեսանել), ցելիլ (<ցելուլ), ցրել, սփռել, ցուցնել (ցուցանել), ցաթել (<ցալաթել), փորձել, փրկուլ (<փրկանիլ), փորք, փրփուր, բուն, օղուտ, անոշ, աշխատել (աշխատիլ), ապսպարել (ապսպրել), արագ, արժան, արկնել (արկանել), արձակ, աւեր, բնակիլ // բնակվիլ, գովել, դժար (դժուար), դարտակ (<դատարկ), լի, զօրութիւն, զգոյշ, թշուառ, թռչակ, կերպ, հաճիլ // հաճենալ, հանդարտ, հզօր, հնար, ճարակ, լիշտակ, լիշել, մուրալ, նշան, նպատ, շնորհ, շտապ, պացխուն (<պատասխան), պատիւ, պատուէր, պատրաստ, պարզ, պետք, սով, սուգ, վատ, շար, նեղ, նեղաւոր, վիճակ, վիշտ, վտաճ, վտանգ, տանջել, վերնալ (վերանալ), փառք, փառուոր, փոխիլ, քանդել, քաշել (քարշել, քեշել), շալակ, օրինակ, գուր, ծրար, փրկել և այլն:

այտ (աւ, էս), այդ (ատ, էտ), այն (ան, էն), այլ (ալ, էլ), սա, դա, նա, մի, դու, ինք (ինքն), մեք (մենք), եմ, զի, ինչ, զինչ, իր (իր, ուր, ոյր), թէ, եթ, ոչ (չ), մէն, միթէ, նա «ահա», ով, օր, մի (մ'), և (ու), ուր, ուրեմն, քան (քանձ, քանց):

անգամ, միշտ, յաւէտ, յանդիման, նման, պէս, վասն (վանց) և այլն:



Ավանդական բառերի հետ համախ մրցման մեջ են մտնում միջին հայերենի բարբառներում և խոսակցական տարբերակներում գործածական նրանց բնիկ կամ փոխառնալ նույնանիշները, որով զրական լեզվում ստաշ է դալիս նույնիմաստ բառերի կուտակում: Այսպէս՝

ուղղել // բղղողել.

Սմբ. Գառ. «Բուն յառաջ հրամայեալ է սուրբն Սահակ՝ որ յամեն տարի հայրապետն ժողովք այնն ի մայրաքաղաքն, և ուղղեն զհաստոյն և զկեղեցոյն կարգած բաներն և հանեն զմտան: Եւ կախկոպոստն զհետ այնոր ամէն մէկ ի չիք վիճակեալ քաղաքն և ի թիմն փնդոլ և բղղող և փրիսկոպոստն յամէն ժամ ամէն մէկ զիր վիճակն» (ՂԷ, 225):

շարժիլ // ժածցընել.

Վրզ. Այգ. «Պիտըր ինձ հանց մարդ մի, որ զար զան զմակն ժածցընէր. որ ես տեսանիլ, թէ ինչ կար ի ներքեւ: ...Բազում աւուրս մտայվարժեցաւ, քաղաքիք և հնար գտաւ և ասաց, թէ ո՛ր գտնում մարդ մի, որ գայ զայս զմակս շարժէ. որ ես յիմանամ, թէ ի ներքեւ ինչ կույ» (ՇԱԳ, 348):

հարբենալ // խումբել.

Սմբ. Գառ. «Ճաղազս որ հարբենան և խալաղոյս ու վնաս այնն—շարժալ օրէնքս որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատել, մէկ վասն արբեցութեանն, որ ինք մարդ էր, ու հանչար խմեց՝ որ խումբեց ու զայն վնասն արար, և այլ ի հետ՝ վասն վնասուն զոր գործեց» (ՂԷ, 213):

հննել // աղղիւնել.

2. Երզն. «Չայոց մեղք դու մի՛ քրննր, գրոյն յերակ մշտօք աղղիւնէ» (ՇԵ, 145):

հայիլ // մտիկ անել.

2. Երզն. «Նե՛ծոր ձգեց՝ մըտիկ շարի, մէկ մ՛ այլ ձգեց՝ ցածցա՛ւ առի» (ՇԵ, 164):
«Աւաղ մեղ հայիլ պիտի յայն արեւն որ լոյս կու ծագէ» (անդ, 157):

չըջիլ // ի շուշ գալ // ի ժու գալ.

Ն. Շնորհ. «Ճամէն շըջի ինքն ի բարբր, Ունի ծախու մազէ բըրձեր» (ԲԶ, 612):

2. Երզն. «Ե՛ կեր՛ւ ի խում ևս հետ մեղազ, ի ժու կու գաս զօրն անդադար» (ՇԵ, 159):

«Վերի վաներացն ի շուշ կուգայ, Ու խունկ ու մոմ կու խոտանայ» (անդ, 165):

4. Երզն. «Նուշ գամ ու հարցանեմ զբեզ» (ԿԵ, 162):
«Է՛ր զաֆիլ կաս յաշխարհիս՝ և անհոգ ի ժու գաս կամկար» (անդ, 194):

պպստամբել // մտել.

Սմբ. Գառ. «Վանս որ թէ կախկոպոս մտել ի հայրապետ: ...Չնոյն այնէ կախկոպոսն կեղեցեականի՛» որ պպստամբել յիբմէ» (ՂԷ, 210):

լսել // մտել // մտիկ զնել.

Յրիկ. «Հանդէս ունիմ բան մի վիճի, Թէ՛ գու լսես քո ծառայի» (ՇԱԳ, 1):
«Յորժամ որ ի յետ բակիս ու ձգես ի յաջք խորբ... Տաս ի վիզն՝ և ի վայր ձգես, չի մտես զու որ քաղաւոր» (անդ, 8):

4. Երզն. «Աղէկ մըտիկ դիւ ու ճանշէ (զրանս)» (ԿԵ, 195):
«Եւ զաֆիլ հանց հասանէ վերայ մարդուն՝ որ շկայ ճար... Ոչ կորայր սիրուն մըտէ, ոչ սիրիլի և կամ օտար» (անդ, 194):
«Չիմ զանգատս լըսեցէ՛ք, յիտն առէք բան մի խրատ» (անդ, 184):

խօսիլ // զրուց(ն) առլ.

4. Երզն. «Բլբուրն ասէ յիս խօսելով,

Քէ՛ դու վանց վո՛ւր ես խն եղել» (ԿՆ, 120):

«Մարդկան գասն երևի ի զրուցն առ» (անդ, 207):

հարկանել (հարկենել) // զարենել (զարկենել) // Էշտել.

Վրբ. Այգ. «Եւ բարկացաւ էրէցն եւ սկսաւ հարկանել զնա. եւ ասէ ցերեցն.

մի հարկանե՛ր զիս. թէ հանց կու հաստատաւ, որ անտարան է խօսք Քրիստոսի, ընդէ՛ր ոչ կատարեցեր, զոր կարգացեր» (ՀԱԳ, 341):

Մժբ. Դատ. «Եւ թէ յուացնին՝ վարդապետ գաշակերտ Էշտէ ու մեռնի, նա նոյն սպաննող է» (ՄԳ, 26):

Հեթում, Պամ. խր. «Եւ ի ժր արն մայրսոյն հաշիշի մի Էշտեց սեր Աստուարտին Ե զանկ զարկը» (ՄԺ, 11, 76):

4. Երզն. «Ունեղդ աղեղունը լարես՝

Գաղտակ նետերով զարնես» (ԿՆ, 159):

վնաս // վզեան (վզեն) // գէն.

Մժբ. Դատ. «Բայց թէ ամոռ չկենայ զրած՝ լուկ փրթուցած լինայ ու այնէ վնաս, նա աննոյն տերն վնարէ զվզենն եւ զգարպսուն հնկակն» (ՂԶ, 223):

Գիրք վատ. «Այլք որք զկարասն ուզեն սակոյ բանալ եւ յամէն վնասէ պահել յանուշն՝ նա թող աննուն ծովու ջուր կամ մորբուր, եւ լուանան աղէկ զկարասն» (ՂԶ, 104): «Եւ ոչ թէ այլ վզեանս միայն ի յամեցուցանելն է, այլ եւ ամենայն պատահարաց ներքեւ ի բաց է, կարկտիկ եւ այլոցն» (անդ):

Վրբ. Այգ. «Ի շահուն տեղն զեն բերես ՚աշխարհի առակ լինիս»

(ՀԱԳ, 347):

վնասար // վզեակարար.

Մժբ. Դատ. «Զի թէ պատկուս առանց զարպսու իշխէ հաշտիլ ընդ վնասարե՛ն՝ նա զող է ու տուգանք պարտի» (ՂԶ, 223):

Գիրք վատ. «Որձ մեղուն բնաւ յարտ չկանէ, ամէնն ի կոճակն հանգիստ կու կենան. եւ զինչ մարին կու գործէ՛ դայն կուտեն, եւ ամէնեւին վզեակարար են» (ՂԶ, 101):

սխալ (սղալ) // խալար (խալատ, դալատ, դալար).

Մժբ. Դատ. «Մեծ բան է բժշկութիւնն ի ստածումն մարդկան, եւ շատ սպանութենեք կու լինի ընդ խալատ... թէ կամաւ լինի սղալն եւ կամ վնաս սղման, նա զլտ մահապարտ զինք սպանենն» (ՂԶ, 214):

չող // շող // տոր.

Գիրք վատ. «Եւ են ոմանք որ այլ աղէկ անեն. ծեծնն զլամիչն եւ ի մուտան խտանեն, եւ բաղարջիկս անեն, եւ ի ներքս կոճակին զենն, ձմեռն ցրտոյն եւ ամառն խիստ շողոյն. զի ի ցրտոյն եւ ի տորոյն վախէ եւ չեւանէ ի դուրս մեղուն» (ՂԶ, 101):

Մի. Հեր. «Ապա թէ դարձեալ այն ծառոյն տերն պէտ անէ նմա... ի խիստ ցրտոյ եւ ի խիստ շողոյ պահէ զձան, լինի որ յանկարծ այն ծառն դարձեալ յիւր բնական բնութիւն դառնայ» (ՄԶ, 37): «Որ ի շրին շողոյն եւ ի տարութենէն մարմինն շողանայ շոյս եւ քրտնի» (անդ, 133):

վատ // մեղում.

Մաղ. Ար. «Բակ Փնտուխտարն էր մօրուօր եւ ունէր մէջում ձի... Սղուրն իջեալ ի տանիկ ձիոյն՝ ետ ի Փնտուխտարն, եւ ինքն ելաւ ի վատ ձին» (ՂԶ, 245):

հնարալցեա // յայար.

Վրբ. Այգ. «Կայր աղուէս մի խիստ յայար» (ՀԱԳ, 345): «Եւ էր նայ վնասալար շար եւ հնարալցեա» (անդ):

ուժով // ճարով (ջորով) // կահեայութեամբ.

Մժբ. Անս. «Եւ զայ մէկ մի այլ՝ աննու զինք ուժով եւ կահեայութեամբ, առանց դարպսուն, նա զայ զրրիածն ու զատարտն ի դարպսուն» (ՂԶ, 197):

Ն. Քուշ. «Երէկ ցորեկով բարով տանէին մէկ ետք մի ճարով.

ըզնա ճարով է տարած կամ խարած է զինք դրամով» (ՀԱԳ, 147):

ընդ որ (ընդար, դար) // յար.

Ն. Քուշ. «Սոցիկս է ծոցիդ սովոր, այլ ընդ ո՛ւր երթայ, մէկ ասա՛»

(ՀԱԳ, 136):

«Ատով խոցեցիր դու զիս, եւ զարիպ եմ, երթամ ի ընդո՛ւր»

(անդ, 138):

«Այս աստնվորիս վերայ, դու մատնի, ես ակն ի վերայ.

Դու որ պաղ աղբիւր մի կայ, դու կանաչ, ես ցօղն ի վերայ»

(անդ, 145):

«Իմ ետք բարձրագոյն լուսին, յո՛ւր կ'երթաս զիշերդ անհուն»

(անդ, 141):

վասն (վանց) // համար.

Մժբ. Անս. «Եւ թէ այրն ու կինն տղայ ունան, եւ զիրենց ինչքն կամ հայրենեստանն՝ վասն իրիք կարեաց ծախել լինան եւ մտխել... նա քանի հայրն ու մայրն կենդանի կենայ, նա որդիքն չկարեն բնաւ ինչ ազգ չալուել այնն յայն մտխածն» (ՂԶ, 193): «Եւ թէ տղայ կենայ տիկնոջն, նա պիտի որ ուննայ տիկինն զմէկայլ կէտն զապրեացն վանց տղային» (անդ): «Եւ այս վանց այնոր է, որ տղայ է լի ի մէջն» (անդ, 194):

4. Երզն. «Ես վանց քո սիրոյդ համար

եւ եւ մէկ եղեալ խումար» (ԿՆ, 159):

«Վասն իմ սրտիս սիրուն համար՝

Մէջ անգիտաց հարք եմ ընդել» (անդ, 122):

2. Թլկ. «Դու ստեղծեք զկինն ի կողէն

Վասն Ազամայ սիրոյն համար» (ՀԱԳ, 83):

«Սիրուն չգիմացաւ նախահայրն Ազամ.

Վանց սիրու ելաւ Եղեմ դրախտէն հան» (անդ, 89):

բնա // խկի.

Մժբ. Դատ. «Շրամայէ օրէնքս որ վարդապետ բնա վարձ շանու վասն զրոց, կամ այլ գիտութեան եկեղեցոյ ուսմանց խկի չէ պատե՛՛ վարձ աննուլ եւ սպառ ուցնել» (ՂԶ, 216):

բժիշկ // հաբիմ (հէֆիմ).

Մաղ. Ար. «Զի գնացին անհաւատ ջհուտ մի բժիշկ գտան, եւ բերին տոտուին» (ՂԶ, 243): «Այլ իրբեւ զիտաց անօրէն Խուլն թէ այնչափ խեղճս զործեաց եւ ոչինչ օգտեցաւ, ...հրամայեաց բերել զջհուտ հէֆիմն, եւ խրեան առաջի հեղքել զփորն եւ բնկենուլ շանց» (անդ):

Մժբ. Անս. «Եւ զայ բժիշկն աեսնու, եւ ասէ այն երբմամբ՝ որ սցառ ունի» (ՂԶ, 194):

Վրբ. Այգ. «Անցաւ թող ուտեմ եւ չիւրմէն. ինձ խիստ աղէկ է. զի մեր հաբիմներն ասացեր են, թէ այնպիսի դմակն ամենայն ցաւ, որ ի փորն եւ յաղիսն լինի... զեղն այս է» (ՀԱԳ, 347):

առողջանալ // յաջենալ.

Վրդ. Այգ. «Ջրուն առեր, որ խմէ, որ առողջանայ» (ՂԸ, 305):

Ախրապ. «Եւ դայն գրենք որ Գրիգոր Վահրամայ որդին իրն արար ևւ այնով յաջեցաւ» (ՂԸ, 415):

կտակ // տխրիկ // անգարձ.

Սմբ. Գատ. «Վասն տխրիկեոյ ճաստատուն ինեւոյ:—եթէ կամի որ գիտել զճաստատուն կտակն, նա այս է» (ՂԸ, 218):

Սմբդր. 1230 թ. Յախաց Քար. «Յանուն Աստուծոյ, ևս Մարտիրոս զիմ Նղեզեաց հայրենի հողն ... ի Յախացքարի սուրբ Յովհաննէս տօփ. իմ հայրենեաց անգարձ էր» (ՂԱԱԿ, 155):

Արձգր. 1218 թ. Անի. «Կաման Աստուծոյ ևս Շանուշս կենակից եաշերեսին անդարձով եաշերեսին շինեցի դուրջս յիշատակ մեզ» (ՂԱԵ, 43):

օրէնէ // անսխիզ // նմաս.

Սմբ. Գատ. «Կու հրամայէ օրէնքս որ ձգեն զինք ի դուրք յեկեղեցույն» (ՂԸ, 215): «Եւ թէպէտ նմաստով է զանգրանիկն կացուցանել յաթոռ ինքնակալութեան, բայց վասն օգտութեան աշխարհաց իրաւունք է, որ աղկի տեսնու հայրն իր ամէն գաւառքն և գաւառագետացն տեսովն և ս. եկեղեցովն, որ յոր հանին յորդոց թագաւորին... նա դայն կացուցանեն յաթոռ թագաւորութեան հօրն» (ՍԳ, 16):

Սմբ. Անս. «Եւ թէ այրիկն ուղենայ որ տխրիկ այնէ, ...նա ունի անսխիզովն համանք որ կարէ այնել, ապա ի վերայ իր բաժնիքն» (ՂԸ, 196):

հրաման—հրամայել (համան—համել) // հուրմ—հուրմ այնել.

Արտունագիր Անս 5-րդ թագաւորի. «Ի թագաւորական բարձր հրամանաց. վաճառականքն բերին առ մեզ զայն համաճէն՝ որ մեր ի Քրիստոս հանուցեալ հայրն է պարզեւել իրենց. ու կու համենէ բեզ որ զիրենք ի վրայ այն համանացն է տար պահել, որ մեր հայրն է պարզեւել իրենց» (ՂԸ, 261):

Վրդ. Այգ. «Ես ե. կին ունիմ և յիմ հուրմնէ կոյ պահեմ զամէն» (ՂԱԳ, 333):

«Եւ թագաւորն հուրմ արտ՝ թէ Ձինչ յիմ իշխանութիւնս ալիք կայ, դամէնն բակեցէր» (ՂԸ, 283):

կապիկ // ապուզէն // մէմուն (մայմուն).

Վրդ. Այգ. «Կապիկն բաժնուելէն ետեւ զվազրք տեսաւ» (ՂԸ, 303):

«Ասի յառակից՝ թէ Ապուզէն արար թագաւորութիւն վաթսուն տարի» (անգ, 305): «Եւ ապուզէն հաստաց նմա վասն երախտեաց զոր արարեալ էր ընդ նմա. առէ կրիսյն. Գիտացիր, կորայր իմ սիրելի կապիկ, զի կին իմ հիւանդ է, և ասացին բժիշկըն՝ թէ վկապիկի սիրան և զերիկամունսն եփեսցեն, ու զդրան առէր որ խմէ, որ առողջանայ» (անգ): «Ի ճանապարհս ձի վերայ շրճոր մի կայր ցամաք, և ի յայն շրճոր կայր մէմուն մի ևս վազր մի ևս օձ մի» (անգ, 280): «Ձգեաց պարան, և ելաւ մայմունն և յետ նորք վազրն ևս ապա օձն» (անգ):

շրքունի // պոռուկ (պոռուկ).

Մկ. Նաղաշ. «Միշտ զպոռուկն ծովուէ,

Ձմարդիկ կու ձգէ ի բարն ի վայր» (ՂԱԳ, 83):

«Երքունեղ շող է յուսեղէն,

Պոռուկն է ի վայր թափի ճուհար» (անգ, 82):

Ինչպես տեսնում ենք, միջին գրական լեզուն հին հայերենից ժառանգած

բազմաթիվ բառերի զուգադրում է նորանոր համարձեցներ՝ առանց նախորդներին զուրս մղելու գործածութիւնից: Ավանդական այդ բառերի՝ իրականական լեզվում կենդանի լինելու մասին վիստում են նրանցից շատերի հնչյունափոխված արտահայտութիւնները, համանք (<հրաման), համել (<հրամայել), սղալ (<սխալ), հարկեւ (<հարկանել), վնասարար (<վնասարար), վանց (<վանս) և այլն:

Նույնանիշներն այս տեսիլ զուգադրումները շարունակվում են միջին գրական լեզվի զարգացման ամբողջ ընթացքում՝ վերջ ի վերջո հնունգելով բառային համարձեցների կիրառման հաստատուն նորմավորման: Սա ամենից առաջ արդյունք է ժամանակի հասարակական և քաղաքական հանգամանքների, որոնք գրական լեզվի մշակման պրոցեսի միասնականացման համար բարեպատեհ չէին:

ԳՐԱԲԱՐԻ ԱՉՆԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջին գրական լեզուն, իհարկե, զբարարից չի ժառանգել նրա ամբողջ բառապաշարը. բավական թվով բառեր ու ոճեր կամ իտպառ դուրս են մղվել գործածութիւնից, կամ կիրառվում են հին գրական լեզվի ազդեցութեամբ: Միջին գրականում անգործածական են զբարարյան անպիսի բառեր ու ոճեր, ինչպիսի՝ անգրէն, ս՝, զի՞, յո՞ սուր», է՞ր ազազաւ, յոր սակս, ի հէճուկս, զուզնաբեայ, փութանակի, վազվազակի, ձրձիտ «հափշտակող», շաղիղ «լիշ», երախան «սեղան», բազմական «սեղան նստող», էլուշ «արգելք», աշխարան «սգանաղի», աշխարել «սղալ», շոշնի «նեղիկ», շամբշն «մոլորակներ», ցականել «կարիք զգալ», նքողել «ցամաքել», դազաշնի «ցնդարանել», դալ «զագարել», զալակել «ճարել», մարթիլ «փորոզանալ», կեալ «սպրել», կալ յակաստանի «սպառնով լինել», գոգել «ասել», ամալ «լցնել», տիք «տարիք», նու «հարս», ակն ի խոնարք «համեստ», առ ականել «երեսանց», ամել զմիմեամբք «ընտանեցնել», ի վերայ հասանել «հասկանալ», ի բերանս լինել «պայպանձվել», զան բմզել «ծնծ ուտել», կզլիք ամել «զոռոզանալ», ելանել ընդ սուր «ինքնասպան լինել», ի թիւ արկանել «հաստակի վերածել», կական բաժնայ «զոռոզուց», հարկանել զանձն «արտմել», ընդ ոտն հարկանել «տարի տակ անել», ընդ մտաւ ամել «միտքը դնել», ի մտաց անկանել «խնայարկվել», յանդ կանել «խրանել հասնել», ի հնարս մտանել «հնար փնտրել» և այլն:

Այս բառերի փոխարեն միջին գրականում գործածվում են ո՛ր համարձեցները՝ թե՛ հին հայերենից պահպանվող, թե՛ միջին հայերենյան. այսպես՝

անդրէն → այլվայր (այլվի, այլվայ), կրկին, նուր, ի նուր, նուրէն, դարձեալ, տալլ, ի եոյն պանն, ի եոյն պանուն, մկլ ետփ, ի հօե, հունկայ (հոնկայ, հոնկայ)

n → n՝վ
զի՞ → է՞ր (յէ՞ր), բնդէ՞ր
է՞ր ազազաւ → է՞ր (յէ՞ր)
է՞ր սակս → է՞ր (յէ՞ր)
ի հէճուկս → նկու (չգու)

դուրձարեայ → դուն, դուն ինչ, դոնե, բշիկ մի, պզակի մի, մրխալ մի, Ենու մի

վազվապակի → շոյտ, շուտով, շտապ, շտապով, կանուխ, քվգ, քեզով, փուրով

ձրձիտ → առան, առգակ, բալանոզ (բալնոզ)

շաղիղ → նաշ, լեշ, դիակ

երախան → սեղան, խուն (խոն, խան)

աշխարհի → սզալ, ողբալ, ֆիզան այնել

շոշել → նեղիլ (նեղվիլ), ի սիւտ Էլնուլ (Էլնել)

շամբշել → շնալ, պոռնկիլ

ցահանել → սնկիլ

հքթղել → աղվրնալ

դագաշել → խենուլ, բեղ այլ խոսիլ, բեղալ ասել

դուլ → դաղարիլ (դաղրիլ)

դալակել → ճարել, ճար այնել, բնուպրել

կեալ → ապրել

ամալ → լցնել, լնուլ, վաթել

նու → հարս(ն)

ի վերայ հասանել → հասկնալ

ելանել ընդ սուր → անբեզման լինիլ

ի թիւ արկանել → համբրել (համբրել), հաշվել

լու ասնել → իմացնել, իմաց այնել

լանդ ելանել → լմննալ, կատարիլ

լանդ հանել → լմնել, լմնցնել, ի հուն հանել և այլն:

Միջին գրական լեզվի զարգացման ամբողջ ընթացքում զարարք չէր դարձրիլ գրական լեզու լինելուց, չէր կորցրել գրական լեզվի իր իրավունքները, և շատ հեղինակներ, մասնավորապես բուն Հայաստանում, իրենց երկերը գրում էին զարարով: Գրարարը շարունակում էր մեծ հարգ վայելել իր մշակվածութան, կատարյալ պերճութան համար: Հատկապես բարձր ոճի ստեղծագործությունները՝ հոգևոր տաղերը, բանաստեղծությունները, ճառերը և այլն, գրվում էին զարարով: Այստեղից էլ մե՛րթ ուժեղ, մե՛րթ ազնիվ թույլ արտահայտված այն ազդեցությունը, որ ուներ հին գրական լեզուն նոր մշակվող միջին հայերենի վրա:

Միջին գրական լեզվի բառապաշարում զարարի ազդեցությունն արտահայտվում էր հին գրական լեզվին հատուկ այնպիսի բառերի ու ոճերի օգտագործմամբ, որոնք խոսակցական միջին հայերենում արդեն գործածական չէին. այս դեպքում միջին հայերենին բնորոշ բառերը փոխարինվում էին զուտ զարարյան համարժեքներով.

հօս (հոս), այստեղ → աստ

հօն (հոն), ի հօն,

հունկայ, հօնկայ,

ունկայ, այնտեղ → անդ

լետ, ի լետ, հետ,

ի հետ, լետայ, լետել → զկնի

ի զատ, հեօփ → ի բաց

մօտ, ի մօտ, ի

խէշն, բովն, կուշտըն → առ, մեծն հետ, ի հետ, խէշ → բեղ, հանդերձ

կույմ(ն), դէհ (գեհ), դի → կոյս

շատ, անթիւ → բազում

լման, ի լման → լրիւ

թրշել, թացել, դիշցնել → բանալ

լլարկել, ուղարկել, ո-

ղորկել, դրկել, որողկել,

ըղարկել → առաքիլ

ձայնել (ձէնել), կանչել → կոչել, աղաղակել

լսել, մտել, մտիկ դնել → անտալ

կարենալ → մարբել

դիմել, սարել → վտուլ և այլն:

Գրարարից եկող այս կարգի բառերը, որոնք միջին հայերենում լուկ գրական կիրառություն ունեն և բնորոշ չեն նրա խոսակցական տարբերակներին, կարելի է դիտել իրրե փոխառություններ հին գրական լեզվից:

ԻՄԱՍՏԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ

Գրարարից ավանդված բազմաթիվ բառեր միջին գրական լեզվում հանդես են գալիս նոր իմաստներով:

Իմաստափոխության ուղիները տարբեր են, իսկ ակունքը հասկացությունների միջև եղած որևէ առնչությունն է:

Կան բառեր, որոնք նոր իմաստավորում են սացել իրենց կիրառւյալ ոլորտներն քնդարձակելու համապարհով: Այսպես՝

Տեկիլ—գրք. «հողի մեջ տունի դնել», միջ. հյ., նակ՝

«բնադրել»:

«Եւ երբ մեղու կամենաս անկել, գու լամէն կոճակ թագ մի դիր, նա այն զամէն մեղուքն ժողով պահէ» (ՂՃ, 100):

Արածել—գրք. «արածեցնել», միջ. հյ., նակ՝ «կերակրել» (կենդանուն).

«Եւ դժագն (մեղուի) այսպես արածես, դիր ի տաշտ գինի և մեղր, խառնեա ընդ իրեար յառաջնին, և լաւահոտ ճիւղք հանդերձ ծաղկովն ի վերայ շարեա» (ՂՃ, 100—101):

Գանել—գրք. «ծեծել», միջ. հյ.՝ «վնասել, վիրավորել»:

«Պատրաստ կաց ի բերին, որ չըշտես և շգանես գտունին» (Գիրք վստ., 65):

Գան—գրք. «ծեծ, հարված», միջ. հյ.՝ «վնասվածք, վիրք»:

«Վանս պախրէի, որ կաղա... լուս դիճղական տար ջրով, և դիս զգանն, և ապա հին տար մարդոյ զողով լուս...» (Գիրք վստ., տե՛ս նՅՄՂ):

«Օգտէ այն գաներուն, որ ի յաղիբան լինի» (Ամիրտ., տե՛ս նՅՄՂ):

Դագան—գրք. «կատաղի», միջ. հյ., նակ՝ «սաստիկ, թունդ»:

«Ի գագան աղջուր. դնես (զմատղաշ գոյմն)» (Գիրք վստ., 173):

«Տե՛ս որ քացախն գագան չլինի» (անդ, 188):

Քաշ—գրք. «խիզախ, լավ», միջ. հյ., նակ՝ «թունդ»:

«Առ գարեալիս, և տուգտ և հագրի ունդ միաշաք, աղա մանար, և սղիտակ և Գաջ քացխով շաղղէ» (ՂՃ, 148):

Պարկիչո—գրք. «Ժողովուրդ, շահավոր, սղջախոհ, համեստ», միջ. հյ., նակ՝ «սահավո».

«Հետ այնոր կերակուր բնին և պարկիչո կերակրի, զերջ հուտ ձագ որ պարկիչո համեմտով կհիտ լինի» (ՄՇ, 11):

«Եւ այլ կու լինի՝ որ ի վայր լուծանի մաղան, և շատ քրտնի, զի պարկիչո է նիսին որ է մաղան» (անդ, 91):

Ճարտար—գրք. «արվեստագոր, հնարագետ, հմուտ, վարպետ, բերթող», միջ. հյ., նակ՝ «շափ», «զգուշորեն, հարցուրթյամբ».

«Եւ կրք երանեն մեղուքն ի կոճակէն յարօտ և զատարկի կոճակն՝ զու ճարտար սրբէ զհոճակն ի ցեցէ և ի սարդիտատայնէ և յաղբէ և համէն աղտէ, և ճարտար դարձեալ ի տեղն դիր» (ՂԶ, 103):

«Եւ այն որ ճարտար շարժի՝ լու է, զու զայն ուն բաղեա» (Գիրք վատ., տե՛ս նԲՄԶ):

«Ճարտար հասուցանէ զթուզն» (Գիրք վատ., 38):

«Այս կեանքս գուր է և խուար,

Եւ ի ձեռնէդ յապտէր շուճիս,

Գարան ալլուն և կա թաքելի,

Ճարտար բայլէ որ լըմբրոնիս» (ՀԱԳ, 17):

Իշխան—գրք. «իշխան», միջ. հյ., նակ՝ «կարնոր, պիտավոր».

«Եւս առաւել պատճառ այս լինի՝ որպէս սուզն և հօզն և մտավարժութիւն, ահն և երկիզն, ցանկութիւնն և զիպն... և որ սոցին նման են, որ շորացնեն և տարացնեն զմարմինն զերջ յերկարօրեայ շերմերն ... և տար հիւանդութեներն, որ իշխան յանգամանս լինին» (ՄՇ, 35):

«Որ լընծաի ախոց ի յանդամն մին իշխան անդամոցն» (անդ, 95):

Խոր—գրք. «խորունկ», «փոս, վիճ, անդունդ, խորք», միջ. հյ., նակ՝ «որոճայն».

«Եւ սասց, թէ ամէն անձս ծանդրացեալ է և խորս կոյ խոստէ ի զիմաց զմակին» (ՀԱԳ, 347):

Պեղծ (<պիղծ)—գրք. «անսուրբ, գորշ, զաղիք, աղանդի», միջ. հյ., նակ՝ «վատ», «զնաս».

«Եւ յորժամ հիւանդն ի բուն կենայ, և աչքն ի բաց կենայ, որ շէր իր սովորութիւն ի յատուցութեան ժամն հայնց լինի՝ նա և այս պեղծ նշան է» (ՂԶ, 145):

«Եւ զեւ կարէ լինել որ հայնց մեծ հարկ հանդիպի բժշկին՝ որ սղալէ ու լկարէ գալ ստ հիւանդն, կամ որ վասն աղէկի զեղ տալ՝ նա պեղծ բերէ» (ՂԶ, 214):

Փխար (ժողոր)—գրք. «խառնածայն ազդողի, ազմուկ, շփութութիւն», միջ. հյ., նակ՝ «փոթորիկ, աշխոժութիւն», «բոտով».

«Եւ եղև սաստիկ ժղուր ծովու և կարեցան իւ բերդնաւ» (ՄՓ, II, 75):

«Է՛ր կու կենաս հետս փխար» (Ստ. եւզ., 219, տե՛ս նԲՄԶ):

Փիւր—գրք. «գիրք, կարգ», միջ. հյ., նակ՝ «անգամ».

«Յամէն տաճիկ բաղար երկու հարար իող տարեաց և հրամայեաց զնել տաճիկ խողարածս, և յամէն շարաթ փիւր մի՝ սաղոնով լուանայ, և զատ ի յարօտայն՝ ամէն վաղ և երկիւր աւղ նուշ և ամպրաւ խողիցն ուտելոյ» (Մաղ. Ար., տե՛ս նԲՄԶ):

Տիւ—գրք. «տանք, տեսիլք», «տեսութիւն», միջ. հյ., նակ՝ «կարծիք», «հալանութիւն».

«Եւ թէպէտ ու նմանաւոր է որ զանդամնիկ կացուցանեն յաթոս ինքնա-կայութեանն, բայց վասն սղուտութեան աշխարհաց՝ իրաւունք է որ աղէկ տեսնու հայնց՝ իր ամէն գաւառօր և գաւառապետացն տեսովն և սուրբ եկեղեցոյն տեսովն, որ յոր հաճին յորդինն և զհաննան որ բարի բարուք լինի և սատուածատէր և երկիղով և բուստակն, նա զայն կացուցանեն յաթոս ինքնակայութեան հօրն, որ հովուէ զեղբարքն և զերկիրն» (ՂԶ, 220):

Բարակ—գրք. «տուրք», միջ. հյ., նակ՝ «մանրամասն».

«Նա կու հրամայէ թէ աղէկ բարակ հետարբիք պիտի լինել, անընգմանն ազգերն են» (ՂԶ, 210):

Գնալ—գրք. «հեռանալ, անցնել», միջ. հյ., նակ՝ «պակասել».

«Ենփեա, որ նրէք լիտն գնալ» (Գիրք վատ., 112):

Գոյանալ—գրք. «գոյություն առնել», միջ. հյ., նակ՝ «աճել».

«Բայց թէ ի վատթար կաթէն ի լուծ փոխ որ գտայն՝ նա գոյանալ և զիրանայ և ապրի նույնպէս և զտունկն» (Գիրք վատ., 60):

Զափել—գրք. «շափել», միջ. հյ., նակ՝ «ցննել».

«Եւ յետ այնոր զեղկ չուր ի վերայ մարմնոյն շափէ, և ապա սուանով ծածկէ, և ի զուրս գայ, և պտակելով հանգչի» (ՄՇ, 11):

Խանգրել (<խանգարել)—գրք. «խանգարել, ամբրել», միջ. հյ., «հարձակման ենթարկել, սպառնալիկ».

«Թագաւորն Երօզադիմի Պաղտին խանգրեց զՄարցիք, որ եղև Զ-երորդ խանգրումն ի տեղին, որ կոչի Մարձօաֆար» (ՄՓ, II, 57):

Նենգել—գրք. «զավել, խարել, տակ, խարդախել, զրկել, անիրավել», միջ. հյ., նակ՝ «զնասել». զարարում բարս կիրատութիւնը սահմանափակվում է մարդկանց փոխհարաբերութիւնների շրջանակում, իսկ միջին հայերենում «զնասել» իմաստով գործ է գալիս այդ շրջանակից օր.

«Կու հրամայէ օրէնքս, որ կրք ձագերով բոյն դանվի, ու զմայր ի վերայ... նա մի՛ նենգել մօրն» (ՄԳ, 78):

Զուգիլ—գրք. «ըծակցել, զուգավորել, զոգել, շաղկապել, հարմարել», միջ. հյ., «սարքել, պատրաստել, դարձնել».

«Մըճիս զուգիլ և մեծ ժողով,

Բըլբուրի գան դասըս-դասով» (ԿԵ, 122):

«Գու զհօրն չուր զուգիլ» (անդ, 193):

«Քարղն զիս և տանին, շարքով խոտնեն այն հարբմինն,

Ու զուգեն կուպաշարար, ևս զեղ լինիմ սրտացային» (անդ, 144):

«Հրամանն յԱստուծոյ լինի, ևս զուգեմ բոլրեզ թագաւոր» (ՀԱԳ, 9):

«Եւ կրք չուր ի զուգիլ լինիս՝ այս նշանով զուգիլ» (ՂԶ, 416):

«Եւ սպա զուգիլ գայս, և զիր ի վերայ ճակատին» (անդ, 148):

Հալիլ (<հալածիմ)—գրք. «հետապնդիկ, վանվել, հեռացվել, մերժվել», միջ. հյ., նակ՝ «շարժարկել» (աշխատանքի մեջ):

«Եւ ևս ուժգին տենչմամբ և բարձրմ աշխատութեամբ գտի զսա և նալծն-յալ ի փոխելն» (Մժր. Անս., Առաջը.):

Պնդիլ—գրք. «պնդացնել, հաստատել, ամբացնել, կապել, կաշկանդել, նշնել, սեղմել», միջ. հյ., նակ՝ «բանտարկել», «պահանջել».

«Բայց ի վերայ ամենայնի գատատարաց ստուգելոյն է գատաստանն, պնդելն և թողուն» (ՄԳ, 78): Գործածված է «բանտարկել» իմաստով:

«Նա կու պնդէ օրէնքս՝ որ կրք ի վանքն իշնուն, նա թէ կին կենայ ի հետ՝

չկնն ի շուրջ դայ ի վանքն, հապա հարկոր ի ծածուկ կենան» (ՂԶ, 221): Գործածված է «պահանջել» իմաստով:

Կնցցնել (<կնցցոցանել>)—գրբ. «կյանք տալ, ապրեցնել, փրկել, առողջացնել, պահել», միջ. հյ., նաև՝ «հաստատել, ապացուցել»:
«Աս պար եմ որ կնցցնեմ անսխալն երկրես որ իրա կու ասն» (ՂԶ, 198):
Մեծել (<մեծարել>)—գրբ. «հարգել, պատվել, գովել, փառավորել», միջ. հյ., նաև՝ «թուլլատրել»:

«Քող աղէկ դիտանն որ կու համբերն, զի շկայ ամենկին հրամանք որ իրջ ի յայլ իրիցու ծիխ մահ՝ երթայ, քանկ թէ տեղոյն երէցն մեծուէ» (ՂԶ, 221):

Իբք—գրբ. «խրոզութիւն», «գործ», միջ. հյ., նաև՝ «որնէ»:

«Ապա թէ բժիշկն ասէ, որ չի ձանչել ի չինք իբք ցաւ եւ ոչ տկարութիւն, նա ապա բերնն յառաջ այն յիճ ճորտերն զխաշն եւ զանտարանն, եւ ասնն ընդ ինք» (ՂԶ, 194):

«Ապա թէ տեսնուն որ ցաւ չունայ, ու ասնն որ յիրենց ամէն ձանչելն իբք ցաւ չունի, նա զարգան հրատիրէ զինք երբորդ անզամ» (անդ):

Մի շարք բառերի իմաստափոխությունը պայմանավորված է նրանց փոխարեական կիրառությամբ:

Քիմիային վերաբերող բառեր՝ մատան (մատան) «մետաղ, հանքաքար» <ma'dan, զայն «պղնձաքար» <zāj, հատառ (հուղուղ, հուռու, հոջող, հոտառ) «երկաթ» <hađid, huđad, huđud, զինքարակ «մանգան» <zanjār, կայանակ <qala'ī, խալխաղար (խալխաղար) «երկաթօքսիդ» <qulqūfār, զուճան «սպասիկ» <zuǰāj, զճննի (զճննի, զուճան) «սպասիկներ, հեղուկ սպասիկ» <zuǰāja, պիլոր «բուրբուկ» <billūr, զիպաղ «սնդիկ» <zibaq, ցագրուն «բորակ» <na'run, կալի <qalā, քիպիք «ծծումք» <kubrit, kabrit, սնկապին «փորձաքար» <sumbādaǰ, ալքիմիա <alkīmya և այլն:

Այս բառերից արդի գրականում պահպանվել են՝ կալի, կայան, պիլոմիա: Գրական այլ փոխառություններ՝ ազատ «հասարակածի հատված» <ʿaql «կապ, պսակ, մանյակ», աղաղ «քունն» <idāda, կորբ «արամազիթ» — այս բառը կապ. հ. Աճառյանը կապում է թրք. götürü բառի հետ (Արմ. Բառ.), իսկ Յ. Կարսյանը ստուգաբանում է արբ. qulr բառից (WM), որ ավելի նախնական է. յաշլալ «բուսարան» <ʿaššāb, բալիֆնի «հանճարել, հորինել» <tašavvūr, բալբրդ «գրված կամ գրելի թուղթ» <taxiit, պրառ «շնչազիր» <bardī, մախլաբ «տեղագրություն մաս, զուխ, բաժին, նոգված» <maqālat «նոգված», սանբաբ «արվեստի ստեղծագործություն» <šan'at, կաֆա (կափա) հանդավոր բանաստեղծություն <qāfiya, պարուբայ «ծողլվածու, հավաքածու» <berāt:

Արդի գրականում այս բառերից զործածական է կաֆա բառը:

* *

Միջին հայերեն գրականությունը արարերենից վկայում է շուրջ հինգ

հարյուր ժողովրդական բնույթի փոխառություններ, որոնք ժամանակին եղել են ավելի լայն զործածական, քան գրական փոխառությունները, հանդես են եկել բառակազմական տարբեր ձևերով, և գրանց մի մասը այսօր էլ կենսունակ է մեր բարբառներում:

Եթե գրական փոխառությունների ներթափանցման համար ժողովուրդների կուլտուրական շփումը արդեն բավարար հիմք է, իսկ նրանց համակցությունը լոկ սծանդակ նշանակություն ունի, ապա բանավոր փոխառությունների անհրաժեշտ պայմանը ժողովուրդների համակցությունն է, սերտ, առօրյա հարաբերությունները: Թե՛ գրական, թե՛ ժողովրդական փոխառությունների հարցում կարևորությունից զուրկ չէ նաև զերիշխանության հանգամանքը, բայց սա ևս ավելի նախն է ժողովրդական փոխառությունների կապակցությունը: Մոլորաբար բնության ենթարկված ժողովուրդը հարմարվում է տիրոջին, ենթարկվում նրա լեզվական մշտմանը:

Ժողովրդական փոխառությունների հանգամանքները պարզելու համար պիտի հաշվի առնել որոշ պատմական իրողություններ:

Մինչև արարերենի կողմից Հայաստանը նվաճելը հայ ժողովուրդն արարների հետ առնչվում էր երկրից հարավ ընկած սահմանախի շրջաններում, ուր բնակություն էին հաստատել բաղամիջով արար ցեղեր: Իսկ երբ Հայաստանը նվաճվեց արարերենից, խալիֆայության համար ստանանակարգ խնդիր դարձավ երկիրը արար ռազմական ցեղերով բնակեցնելը: Հատկապես 774—775 թվականների հայկական ապստամբություններից հետո արարներն սկսեցին զանգվածորեն գաղթել Հայաստան. այդպիսի նշյալներից ցեղը տիրեց Գասպանին, սուլայմ ցեղը գրավեց Բաղեշից մինչև Կարին ընկած շրջանները, կալիֆները հաստատվեցին Վանա լճի շրջակա զավառներում, օսթմանիկները՝ Ասբրանում և այլն:

Արար պատմիչ Յակուբի վկայությամբ՝ 786—809 թվականներին ընթացում էր երկիրը «զպակու» նպատակով, այնքան արար ցեղեր բերվեցին «Արմինիա», որ ոչ ոք չէր հանդգնի շարժվել²:

851 թվականին Հայաստան արշավեց Բուզան՝ իր հետ բերելով արար նոր դաղթականություն: Այս առթիվ պատմիչ Թովմա Արծրունին գրում է՝ «...բուկրսան այնուհետև աներկիղ համարականութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգն տանկաց, որ եկալ էին դհև նորա քնտանեօ իւրեանց և ձեռնամուխ եղին բաժանել զերկիրն յինքեանս. և արկան էին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւզս»³:

Արար դաղթականությունը Հայաստանում գրավելով հողային ընդարձակ տարածություններ՝ հիմնեց մի շարք ամիրայություններ, որոնք խալիֆայության թուլացումից հետո էլ երկար ժամանակ պահպանում էին իրենց գոյությունը:

IX դարի երկրորդ կեսից սկսած ուժեղացած հայկական նախարարությունները պայքար էին մղում Հայաստանում բուն գրած արաբական ամիրայությունների դեմ, որոնք խոչընդոտում էին երկրի միավորմանը: Բազմաթույնների հզորացած իշխանությունը կարողացավ իրեն ենթարկել մի քանի ամիր

² Տե՛ս՝ Մ. Տեր-Մուսեղյան, Արարական ամիրայությունները Բաղբառուկաց Հայաստանում, 1965, էջ 62:

³ Թովմա Արծրունի, 1852, էջ 170:

բայտությունների՝ Մանագիկերտի կայսիկներին, Բերկրի ութմանիկներին, Կարին բազաբի, Հեր և Սայմաստ գավառների ամիրաններին:

Արարական ամիրայությունների մասին հիշատակությունները հասնում են մինչև XI դարը, որից հետո լուսն են: Մասնագետ-պատմաբանների կնիքադրուբյամբ՝ այդ շրջանից նրանք սկսել են խոսնվել Հայաստան ներթափանցած սելջուկների, բրբերի հետ:

Հայերենի բառապաշարի քննության համար կարևոր հանգամանք է, որ հայ ժողովուրդը բուն իր երկրում արարական տիրապետության շրջանում, ինչպես և դրանից հետո որոշ ժամանակ, աչքեր է արար ցեղերի հարևանությունը: Գա չէր կարող անհետանք լինել: Կարծում ենք, որ ժողովրդական խոսակցական հայերենը, հատկապես VIII դարի վերջերից, երբ արար ցեղերի բնակեցումը Հայաստանում մեծ շափերի էր հասել, թերևս մինչև IX դարի վերջերը կամ X դարը՝ արարերենից անմիջաբար փոխառություններ էր կատարում: Գրա հետքերը որոշակիորեն պահպանվել են մեր մի շարք բարբառներում:

Քննենք մի քանի օրինակ՝

Ընդակ «ապրանք, ինչք» <արբ. ուզ (հոգն. առաջ): Հանդիպում է հնուտի, Մշո, Վանի, Կարինի, Ակն և այլ բարբառներում: Բաղմիցս վկայված է միջին հայերենում (Անիզգր., էջ 85, Զար. Սարկ., Բ, էջ 30, Ֆրիկ, Բան., էջ 125 և այլն):

Մագրա (մզրա, մրզրա) «արտորայք, շրջակա մշակելի հողեր» <արբ. mazra: Պահպանված է Շատախի, Մոկաց, Ուլմի բարբառներում: Շատախի բարբառում կա այսպիսի արտահայտություն՝ «Մըղըրժժով կեղ»՝ սա նշանակում է այնպիսի դուռ, որի տները ցրված են միմյանցից հեռու՝ շրջապատված իրենց արտերով: Շատախում կան մի շարք գյուղատնտեսներ մզրա բառով, այսպես՝ Պապոնց մզրա, Բաղչկանց մզրա, Շինա մզրա, Քոսնց մզրա: Միջին հայերենում այս բառը վկայված է 1243 թ., 1291 թ. արձանագրություններում, օր. «Ջգեղն Մեծոփ իւր մզրայիւն» (Վիմ. տար., էջ 133):

Ոնմ «վախ» <արբ. w ahm: Բայցանցած՝ ոնմիլ, ոնմոիլ «սաստիկ վախենալ, սոսկալ»՝ պահպանվել է Ախուրյախի բարբառում:

Ոխլ, ոխի, վախմ «սրբապատկան, վանքին կտակված մի բան», «վան-յապատկան հող, կալվածք» <vaqf: Բաղմիցս վկայված է միջին հայերեն հիշատակարաններում ու արձանագրություններում: Պահպանվել է Շատախի բարբառում՝ տխլի, Մոկաց բարբառում՝ վուխլի ձևերով, որոնց մեջ բառավերջի ին-ն անհամարձակ անհնչ է. բառի իմաստն է՝ «անձնունմիսի, սըր-բապատկան»:

Փղուլ, մխուլ, մշղուլ «գրադուներ», «ղվարճանք», «ղրտանք» <արբ. šuyl, mašyūl «սալատանք, գրադուներ, զվարճանք»՝ Միջին հայերենում վկայված է Գր. Տաթ., էջ 36 (մխուլ ձևով), Մի. Հեր., 124 (մղլի՝ իբրև բույ), Վաստակց Գրբում, էջ 32 (մշղլի) և այլն: Այլապես, Մշո, հնուտի, նոր Բա-յազետի, Վանի բարբառներում մղլել նշանակում է «գրազվել, խոսելով ժամանակ անցկացնել»՝ հնուտի բարբառում մխուլ նշանակում է «ղրույց»՝ Մշո բարբառում մխուտն՝ «այնտեղ, ուր հավաքվում են խոսելով ժամանակ անցկացնելու»։ Շատախի բարբառում ոնենք մտուլ անել (<mašqud ձևից), որ նշանակում է «գրադիլել, ժամանակ վատնել»:

Խալխա «մաքուր, ազատ, զերծ» <արբ. xalās, xālis: Միջին հայերենում

վկայված է Կ. Երզնկացու, Հ. Երզնկացու բանաստեղծություններում՝ Վանի բարբառն ունի խալխ, որ նշանակում է «մաքուր»՝ օր. «խալխ արծաթ»՝ նույն բառը բայցանց հանդիպում է Ֆրիկի մոտ՝ «փրկել» իմաստով. «Մի՛թէ կարեք զիս խալխի և ե ի տանջանայն զիս պատել»։ Հովհ. Երզնկացին ունի «ազատվել» իմաստով. «Գո՛հ եմ Աստույ ըրարուն, որ ի բո տեսոյդ խըլլայ»։ Սասունի, Շատախի, Վանի, նոր նախիջևանի բարբառներում խըլլելու բայը շատ գործածական է «ազատվել, պրծնել, վերջանալ» իմաստներով: Օր. Շատախի բարբառում՝ հրմէն խըլլաով ըրողը վերացավ:

Հարաբ «կարոտ» <արբ. hasrāt: Վկայված է Կ. Երզնկացու, Ֆրիկի, Հ. Երզնկացու երկերում: Շատախի բարբառում պահպանվել է խարաբ ձևով. «Ժանգոտա մախաթ, վա՛ղ բի խարոթ» (= ժանգոտ մախաթ, ո՛ղ է բեղ կարոտ): Բառակցորհ հ>խ համապատասխանությունը ցույց է տալիս, որ փոխառությունը Շատախում բավականին հին է, որովհետև փոքրական շրջանում արքն հ>խ օրենքը չէր գործում: Օրինակ թրք. havar >բարբ. հավար («Հավար տարէր՝ տէր էր կրնգ՛ան»):

Հարի «գեղուհի», «կին» <արբ. hūrtiyya: Շատախի բարբառում պահպանվել է արբխարի բարբառային մեջ, որ կազմված է տև հուրի բառերից և նշանակում է «տերաբրակին»։ Այս բառում ու ունենք հ>խ համապատասխանություն: Ոչ շրջանում բարբառը հուրի բառը երկրորդ անգամ փոխառել է փոքրերենից՝ անվոփոխ պահելով հ-ն. հուրի փւրի:

Արբ. աշար (աճապ) < ašāb «զարմանալի» բառից Մշո, Սասունի, Կարնո, Շատախի, Վանի բարբառները կազմել են աշրաես, որ նշանակում է «զարմանալի տեղով, տարեղ, աշխուհակ»:

Բարկել, բարկ (տալ), բարկի <արբ. tark «թողում», taraka «թողնել»։ Պահպանվել է Ալաշկերտի, Մոկաց, Մշո, Սասունի, Կարնո, Ակնա, Խարաբուրի և այլ բարբառներում:

Միբա, միբաբ, միբա «ծառանդություն» <արբ. mirāb: Գործածել է Ֆրիկը՝ միբաբ ձևով. «Ոչ ի հօրէ անկալ միբաբ, ոչ Աստուծոյ տուած նորայ» (Բան., էջ 126): Հանդիպում է Վանի (միբա), Պոլսի (միբա) բարբառներում: Բառակցորհ թիս տարբերությունը պայմանավորված է արբ. մ հնչյունի յուրահատուկ արտասանությամբ: Հենց արարերենում, նայած խոսվածքին, մ-ն կարող է կամ բ, կամ ս արտասանվել:

Բարբուր <արբ. ābut, t'ābut «զերեզման» բառը Մոկսի և Շատախի բարբառները պահպանել են զգազազ իմաստով: Շատախի հնագույն ծխական մի սգո երգի մեջ ասվում է՝

Հայրո՛ր, մէկ ձի օրորէր՝,

Թի յես մեռայ՝ ձի խորրէր՝,

Բարբուր Հնաղըստ կապրէր՝,

Յարոչ տընէն ձի ընցուցէր՝:

Մի «հույս» բառը, որ ակազ. Հ. Անադյանը ստուգարանում է արբ. նույն-իմաստ amal բառից, պահպանվել է Զարարաղի բարբառում. մէ՛լալ կաց՝ հույսով մնա: Այս բառը միջին հայերենում վկայում են Առաքել Մլունցի «Աղանդիբը», Նազար Հովնաթանը. ինչպես՝ «Միլով եմ, զալում զալում, սի-բայց զինով եմ, զալում» (ՀԱԳ, 243):

Ռուպ, բուպ, ուրբ «գոշար» <արբ. ruḍb:

Միջին հայերենի բժշկարաններում բազմիցս վկայված այս բառը պահպանել են Վանի, Շատախի, Ողմի, Մոխի, Խոյի, Ախալքալաքի բարբառները: Ահադ, Շ. Անտոյանը արարական տիրապետության շրջանի մասին գրում է. «Չունենալով որևէ գրվածք այս շրջանի ժողովրդական լեզվով, մենք իսկապես չգիտենք, թե հասարակ ժողովրդի լեզուն որչափով ազդվել էր արարեններից»⁴:

Մենք փորձեցինք ցույց տալ, որ արարենների հետքերը հայ բարբառների մեջ պահպանվել են մինչև մեր օրերը: Արդ, եթե ազգեցույթյունը կարող է այսբան հարատևել՝ ինչո՞ւ չհավատալ, որ XIII դարում՝ միջին դարական լեզվի մշակման շրջանում, այն ավելի խոր արմատներ է ունեցել խոսակցական հայերենում: Երբ միջին հայերենը գրական լեզվի ճանաչում ստացավ, ինչպես Կիրիկիայի, Միջագետքի ու Սիրիայի, այնպես էլ բուն Հայաստանի հեղինակների երկերում երևացին ժողովրդական բնույթի արարական փոխառություններ: Միջագետքում ու Սիրիայում՝ սկսած VII դարից մինչև հիմա, հայերն ապրում են արարենների հետ կողք-կողքի: Կիրիկյան Հայաստանը սահմանային հարանոթյուն ուներ Գամասկոսի ու Հալեպի արաբ սուլթանությունների հետ, իսկ 1375 թվականից ընկավ եգիպտոսի արարենների լծի տակ: Զարմանալի չէ, որ այս կողմերի հայ հեղինակների երկերում կան բանավոր ճանապարհով անցած արարական փոխառություններ: Օրինակ՝ Վարդան Այգեկցու՝ առակներում.

«Մենք հիլարով ենք դիսօսքն ի նոցանէ ուսէր և դիարելն» (ՀԱԳ, 350):

«Եղբարքն հիլարեցին զնա, և ոչ թէ զայն կերան» (անդ, 349):

Արբ. իլիալ «ենեզույթյուն», հյ. հիլարով՝ «ենեզույթյամբ», հիլարել՝ «ենեզել, վնասել, ամբաստանել»:

«Ամ տուր մեղ քանի մի բարով խապրիկ» (անդ): Արբ. xabar «ուր, տեղեկություն»:

«Առացեր են իմաստունքն, թե Գ իրք հայֆ է. ի կուրին եղև ճրագն հաֆ է. խելօք մարզն մօտ յանդէտն հայֆ է. թէ զճրագն ի յարեզակն վառեն, հաֆ է» (անդ): Հայֆ, հաֆ<արբ. halif «սափաստ»:

«Ով զամմար չէ քաշէ, նա շահ չի գտնուր» (անդ, 347): Արբ. zahm at «զովարություն, անհարմարություն, նեղություն»:

«Այր ոմն վաճառական հայալ կին ունէր և հարամ կին» (անդ, 344):

Արբ. halal «մարուր, ազնիվ, անարատ». արբ. haram «անազնիվ, անմարուր, պիղծ»:

«Ի փուշն ի փողն փակաւ և ի մեռանելոյ ճարով աղատեցաւ» (անդ, 335):

Արբ. jayr «բռնություն, ուժ». հյ. ճարով (չորով) «ուժով, բռնությամբ, հաղիվ, մի կերպ»:

«Խիտ բարձր ձայնիւ ճնշեաց մասն՝ ր կանչելով» (անդ): Արբ. madad «օգնություն, ա՛խ»:

«Փառապիւր և հնար գտաւ և ասաց» (անդ, 348): Արբ. tedbir «միջոց»:

«Ե՛հան ի վիճի տակէն շատ մալ և տարաւ ի տուն իւր» (անդ, 333): Արբ.

mal «եղ»: Բերված նախադասության մեջ գործածված է «հարստություն, զանձ» իմաստով:

«Ես ի սկզբանէ մազործ էի. և արդ ո՞ւր արար զիս պայքար»: Արբ. baytar «պայքար»:

«Եւ ունէր շատ ոսկի և արծաթ և շատ զեղորայք և ազարակ և շատ մլխե» (անդ, 335): Արբ. malk «հարստություն»:

Կիրիկիո Սմբատ Սպարապետի «Պատաստանագրքում».

«Եւ թագավորն է, որ կարէ զհկան շինել և բաղար և բերդ և մեծ զետոց կանդարալ և հոգետուն ի մեծ ճամփնի և ի կապնի երկրին» (ՄԳ, 16): Արբ. qanjar «կամուրջ»: Այս բառը մինչև օրս պահպանված է Հաճնի (զանդալօ), Ջեյթունի (զէնդէրէ), Բուլանիի (զանդարա) բարբառներում:

«Եթէ որ զմարդոյ անասուն տեսնու ի շվան փաթըթած կամ ուրեք փակած կամ կոտրած, նա զէտ իր անձին է պատահէ սրտացաւել և խալսել զինք» (անդ, 77, 78):

Կիրիկիո Հեթում Պատմիչի «Ժամանակագրության» մեջ.

«Լեւո տէրն Հայոց կալաւ զՊէմունտ բրինձն Անտաբոյ և զնտանեաց ի Սոոյ կլայն» (ՄԺ, II, 60): Արբ. qal'a «բերդ, ամրոց»:

«Եւ եղև սաստիկ ժողր ծովու և կորեցան և կորսնվան քրիստոնեայքն և իւրեանց ըզգակն» (ՄԺ, II, 75):

Այս բնույթի փոխառություններ կան և բուն Հայաստանի միջին հայերենով գրող հեղինակների՝ Ֆրիկի, Կ. Երզնկացու, Շ. Երզնկացու, Վարդան Արևելեցու, Խ. Կեչառեցու երկերում, XII, XIII, XIV դարերի Բջինի, Անիի, Շիրակի արձանագրություններում, հիշատակարաններում:

Մի քանի օրինակ Կոստանդին Երզնկացուց.

«Քո սէրդ իմ սրտիս զերդ հուր,

Քո տեսդ աչերուս իմ նուր» (ԿԵ, 158):

Արբ. nur «լույս»:

«Քո սիրտդ ի յաշխարհիս

ի հասարքէն է հուր վառել» (անդ, 177):

«Այսօր եմ հուժմով իշխան» (անդ, 154):

Արբ. hukm «հրաման»:

«Ես եմ առանց սրլէն

ու մերկ եմ յանդիման կանգնել» (անդ, 183):

Արբ. silah «զենք»:

«Դու յանապ քաղցր ու յառիֆ ես խօսելով»:

Արբ. «ajalib «զարմանալի». lajil «հուր»:

«Զերդ ըզլուսին սուրք բուր,

Շուրջ երեսին մազերն ոլոր» (անդ, 163):

Արբ. surat «կերպարանք, ձև, երես»:

«Մտուպ բլրուլնի շատ կան,

Խօսին ի սիրու շատ բան» (անդ, 157):

Արբ. mutrib «երգիչ»:

«Ես վանց քո սիրույ համար

ինև եմ և եղնալ խումար,

Զկրա քո տեսդ է զամար» (անդ, 159):

⁴ Շ. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 173:

⁵ Այգեկցին մեզ էլ է հուր (Գոլիկ) զամատում, ապրել ու ստեղծագործել է Ան Անեկի Այգեկ վանքում (XIII դար):

Արբ. xumār «խենթ, դիմ, զինուժ», qamar «չուսին»:
«Լուսին օտարթով լուս ես,
Պատեւս ու թամամ կենես» (անդ):
Արբ. badr «չխալուսին». հյ. պարտել՝ «բոլորել»:
«Լեզուովն բազր շարար
ու սրբտովն է զերզ բզրպատ» (անդ, 185):
Արբ. jallād «դահճ»:
«Որ չըլիեիս հաբ աստեհիս,
Որ շարել զօրն բզրեզ մագատ» (անդ, 186):
Արբ. haqir «անարգ». mazād «սաճուրդ»:
«Բայց զամբ ի բեզ չէ՞ հարիֆ,
է Կոստանդին, ունկայ ի դատ»:
Արբ. qahr «բռնություն». harif «սրնկեր»:
«Ձայս բանքս ի Կոստանդեայ
զպպով արա, որ բեզ տրւի» (անդ, 198):
Արբ. qabūl «բնդունում, համաձայնություն». հյ. զպպով անկ, զպպով
այնկ (տոնկ) «բնդունել, համաձայնվել»:
«Դարձիր ու յա նայել
ու դիտ խելոբ քատպիր ու ճար,
Որ շննաս ի մէջ ծոփուն» (անդ, 203):
Հովհաննես Երզնկացուց.
Միրն մանկութեան անունն ու Երեմի մանկան շունենաս» (ՀԵ, 144):
Արբ. nāsī «վստահություն, հավատ»:
«Ծրնել ես ւ յաշխարհս եկել, տուր խպար, թե ուտի՞ կու գաս» (անդ,
144):
«Միխլա մ՝ աւելի շարար, այլ կրչոց զամէներն շափով» (անդ, 149):
Արբ. miñqāl (փոքր շափ է):
«Ով որ օտարին վառ ասէ, նա ինքն դարիպ լինենայ,
Երթայ ի յօտար երկիր, զդարիպին դատրն գիաննայ» (անդ, 154):
Արբ. ʔarib «օտարական». qadī «ուժ, մեծություն, վիճակ, արժեք»:
«Բանիկ մի դալար արի, որ զօձու ձագըն սիրեցի» (անդ, 155):
Արբ. ʔalāʔ «սխալ, հանցանք, մեղք»:
«Հովհաննէսին մայրն է, տրդայ,
հագեր վալայ վրբան ճուլայ» (անդ, 165):
Արբ. jubba «կարճ վերարկու»:
«Հայ իմ մարիկ, ես բեզ ծառայ,
Ջկաթդ որ կերայ, հալալ արայ» (անդ, 166):
«Այսօր ձեռնեց իմ հայր դատին,
Թ՛ է՞ր կու սիրես հայուն որդին»:
Արբ. qāʔī «զգոտավոր»:
«Ջերթ զուսկի է խալաս, որ այլ չերի» (անդ, 185):
Արբ. xalās «մաքուր». ʔaib «արատ, թերություն, սխալ, պակասու-
թյուն»:
Յրիկից.
«Եւ զինչ այլ առ նա լինի, ամենկին այն չերի» (ՅԲ, 238):
Արբ. ʔaib «թերություն»:

«Ոչ զավլ՝ ւ ոչ երդում ունիս» (անդ, 218):
Արբ. qav! «զայման»:
«Ջամէնն է հաշով զուգեր
Անզալատ Աստուած դատար» (անդ, 223):
Արբ. ʔalāʔ «մեղք, սխալ, հանցանք». հյ. անզալատ՝ «անմեղ, հանցա-
զերծ, անսխալական, անարատ»:
«Ժողովեցի շատ մի բարի,
Ըզզակ արի զնա թաթարի» (անդ, 25):
Արբ. rīzq (հոգն. arzāq) «ունեցվածք, սպասանք, ավար»:
«Գնաց մանկութեան հասարք
ու երեկ ինձ հոգ անհուն» (անդ, 40):
«Անապ ամ յէ՞ր կու դատիս,
Աշխարհիս երակ զու Ֆրիկ» (անդ, 113):
Արբ. ʔajab «արդար»:
«Ամ երբ հանց լնկեր քո բախտն ու քալինն»:
Արբ. ʔāly «երջանկության աստղ»:
«Թէ լինէր ինձ զօլտար և խելք ի բարին»:
Արբ. dawlat «բարիք, հարստություն, ունեցվածք»:
«Ձալաբ, թէ բեզ Բաֆր ասեմ,
Նայ ասեն, թէ մարզն մուր» (անդ, 217):
Արբ. falak «ճակատագիր». kufr «հայհոյանք»:
«Է՞ր ես հազել զու ճախճ
ու նստել զինչ մէկ ի նուին» (անդ, 128):
Արբ. nasiʔ «հյուսկեն»:
«Թէ խելք ու բասար ունիս» (անդ, 86):
Արբ. bašar «տեսողություն», «բանականություն»:
Ընդգծված փոխառությունները ստորյա գործածության բառեր են, որոնք
ժողովուրդների կրկարատես շփման պայմաններում միայն, բանավոր ձևով
լեզվից լեզու անցնելով, կարող էին այսպես մրցման մեջ մտնել հարազատ
լեզվի շատ ու շատ բառերի հետ:
Կա մի հանդամանք, որը մտածել է տալիս, թե միջին հայերենի արա-
բական փոխառությունները բուն Հայաստանում անմիջաբար արաբերենից
չեն, այլ թեևս ներթափանցել են հարևան պարսկերենի միջնորդությամբ:
Ակազ. Հ. Աճառյանն այդպես էլ կարծում է՝ Ո՞րն է այդ հանգամանքը. արա-
բական փոխառությունները Հայաստանում վերանում է IX դարի վերերրին, և
այդ փոխառությունների ամբողջ ընթացքում հայ մատենագիրների կրկերում
արաբերեն բառեր կա՞մ չկան, կա՞մ հանդիպում են հատ ու կենտ. արաբա-
կան փոխառությունները երևան են դալիս ավելի ուշ՝ այն ժամանակ, երբ Հա-
յաստանում արաբական ազդեցություն չկար (հիմնականում XII դարից):
Նայ. ինչո՞ւ արաբերենի փոխառությունները չբնական հայ մատենագրության
մեջ արաբական փոխառություններ թիչ կան: Որովհետեւ ժամանակի միակ
զրական լեզուն՝ գրաբարը, կտրվելով ժողովրդական լեզվի ակունքներից՝ մեա-
ցել էր հին օրինաչափությունների շրջանակներում: Գրաբարագիր հեղինակնե-
րը սրբուրյամբ պանելով լեզվի հին օրենքներ, պանպանում էին նաև հնուց

* Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 183, 186.

ավանդված մայրենի բառապաշարը: Ուրեմն բնական պետք է դիտել, որ այս շրջանի գրական երկերում արաբերեն փոխառությունները հազվագյուտ են:

Մյուս հոգմից՝ շնոր կասկածում, որ հայերենին արաբերեն բառեր անցել են նաև պարսկերենի միջոցով, բայց մի՞թե մինչև XII դարը պարսիկները մեզ հարևան չէին. չէ՞ որ արդեն VII դարից նրանք ենթարկված էին արաբական ազդեցության: Ինչու՞ VII—XII դարերում պարսկերենի միջոցով արաբերեն բառեր չէին ներթափանցում մեր գրավոր լեզվի մեջ: Ուրեմն այստեղ ուրիշ պատճառ կա՞՞ հին և միակ գրական լեզուն՝ որ խոսափում էր նոր ու անտեղի փոխառություններից:

Չպետք է անտեսել մի կարևոր հանգամանք ևս. բուն Հայաստանի հեղինակների երկերում հանդիպում են այնպիսի արաբական փոխառություններ, որոնք հնչյունական արտահայտությամբ ուղղակի համընկնում են արաբական բառաձևերին, իսկ գրանց կողքին համախառնակ են պարսկական հին կամ նոր տարրերակները: Բերենք մի քանի օրինակ.

Հովհ. Երզնկացին ունի՝

«Փաղն ջոհար և՞րր ձանչե, զօրն ի բուն զազրն կու փորէ» (ՇԵ, 143):

Արք. Յախար: Վկայված է նաև Ստ. Օրբելյանի կողմից՝ շահար ձևով (Պատմ., էջ 185, 298): Այս բառը արաբները փոխ են առել պարսկերենից (<պրս. gōhar, բառակցորի ց-ն տառադարձելով յ-ի: Միջին հայերենի ջոհար ձևը համապատասխանում է արաբականին: Սրա կողքին դեռ դասական շրջանից ունենք նաև զոհար:

Կոստ. Երզնկացին ունի՝

«Ով կնոջ սուրբ և բարու ինք հանդիպի,

նա իր բան է պարծանաց թաղափոխ» (ԿԵ, 219):

Արք. Թալ «Քազ» <պրս. tag: Գասական շրջանից ունենք նաև իրանյանին համապատասխանող քազ, որ բերված նախադասության մեջ առկա է քազաուր բառով:

Ֆրիկ.

«Թէ բուրջն ու թալհհն աղէկ՝

Յասուսժոյ է բեզ հրամայած,

Ջինը յաշխարհս մարդ որ կայ՝

Ջերդ մըշակ են բեզ կանգնած» (ՖՔ, 226):

Հյուրըմանն այս բառը կապում է արք. Եսայի հետ, որը ևս իրանական ծագում ունի. <burg «աշտարակ»: Ֆրիկի բանաստեղծության մեջ հավանորեն զործածված է «բարձրություն» կամ «աստիճան» իմաստով: Գասական հայերենում նույն բառը ունենք բուրջն ձևով:

Տիմոն (դահուս, տահուս) բառը, որ նշանակում է «կարավազ», վկայված է Հ. Երզնկացու, Գր. Մազիստրոսի երկերում: Սագում է արք. Նիհիյ բառից, որի պարսկերեն բառաձևն է՝ tihū:

Լազուարդ, լաժուարդ, լաջվարդ. վկայված է Գր. Տաթևացու, Մխ. Հերացու և այլոց կողմից: Սագումով պարսկական է՝ lažvard: Հնդկերենում զարձել է lajvard, որն անցել է արաբերենին. այստեղ հնդկականի կողքին կա նաև lazvard: Հայերենում հանդիպում է թե՛ լաժվարդ, թե՛ լաջվարդ: Առաջին ձևը պարսկերենից է, վերջին երկուսը՝ արաբերենից (թե՛ն Հ. Անադյան, Արմատական բառարան, համապատասխան բառի տակ):

Ճուղնիկ «գինվոր» բառը փոխառյալ է արաբական jundī ձևից, որը

ակազ. Թճուդյանը կապում է պրս. jund, պհլ. sunđ բառերի հետ: Գեռ գասական շրջանից ունենք նաև զուդ, որ համապատասխանում է իրանյան ձևին:

Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ հայերենի կապը արաբերենի հետ բուն Հայաստանում, ինչպես Կիլիկիայում, Միջրկայում, որոշ ժամանակ եղել է անմիջական:

Որտեղից և ինչպե՞ս XII դարում ժողովրդական բնույթի արաբական փոխառությունները մտան միջին գրական լեզվի մեջ: Անշուշտ՝ ժամանակի խոսակցական հայերենից: Չպետք է մոռանալ, որ միջին գրական հայերենը մշակվել է խոսակցական լեզվի հետ սերտ կապի պայմաններում: Միջին գրական հայերենի մեջ չի կարելի շտեմել ժամանակի խոսակցական լեզվի պարզ դրոշմը: Հենց տարբեր բարբառների ազդեցությամբ էլ մեծ մասամբ պայմանավորված է միջին գրական լեզվի ոչ միատարր բնույթը: Թեպետ միջին գրական հայերենի մեջ չի կարելի տեսնել ժամանակի խոսակցական լեզվի պարզ դրոշմը, բայց այն բառապաշարը, որ երկարատև համակեցության պայմաններում անցել էր խոսակցական հայերենին, XII դարում դեռ պահպանվում էր, և նրա կենդանի խոսքի հիման վրա սկսեց մշակվել միջին գրական լեզուն, այնտեղ առատորեն մուտք գործեցին ժողովրդի մեջ պահպանված արաբերեն բառերը:

Այսպիսով՝

1. VIII դարի կեսերից հայ ժողովուրդն իր բուն երկրում ապրել է արաբ ցեղերի հարևանությամբ, ըստ որում երկու դար (VIII և IX դդ.) կրել է արաբական բունափրոթյան ծանր րոտ. այդ պայմաններում արաբերենից շատ բառեր են անցել ժամանակի խոսակցական հայերենին, որոնք միջին գրական լեզվի ձևավորման շրջանում դեռևս կենսունակ են եղել:

2. Գրական միջին հայերենի ժողովրդական բնույթի արաբական փոխառությունների աղբյուրը եղել է խոսակցական միջին հայերենը:

Ժողովրդական բնույթի արաբական փոխառությունները արտացոլում են կյանքի տարբեր կողմերը, միաժամանակ դրանք կենդանի վկայում են այն հարաբերությունների մասին, որոնք երբևէ գոյություն են ունեցել հայ ժողովրդի և արաբ զավթիչների միջև:

Ժողովրդական փոխառությունները, ըստ իմաստային-կիրառական ոլորտների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

1. Պետական կյանք և պաշտոնավարություն արտահայտող բառեր. — ամիրալ (ամիր) «բեշան. տեր». <արք. amīr, էմիր հերաման, կարգադրություն. <արք. emr, խալիֆայ (խալիֆայ)՝ ամիրապետ», <xalīfa, ըսալիս (ըսալիս, ոսլիս)՝ զգլխավոր, կառավարիչ», <ra'īs (<արք. ra's «զարխ»), մեխր բեշխան», <malik, նալիպ օզդական», <nā-ib «փոխանորդ, օգնական», սուլան (սուլթան)՝ <sultan, վազիր (վեզիր, ոգիր)՝ <vezīr, նուրմ հերաման» <bukm, զահր (խահր, կահրայ)՝ փոխանություն, ուժ, բանություն», <qahr, qahrā, մանչուր հերաման», <man-šar, լաղապ ստիաղոս, պատվանուն», <laqab, ըսուր բանություն, շահադրոտմ, անիրավություն», <javr, jevr, հեշուպ (հեշուպ)՝ թխազավորական սենեկապետ», <hājib, զապի օղաշնագիր, մուհապ», <tabvīl, ալամ (ալամ)՝ զգրոշ», <alam, ոսլ զգրոշակ», <raya, միրի պետական գանձարան», <mīrī, մուխթասիպ քուստիկան, հարկահավաք», <muhtasib (<hasab «հաշիվ»),

սամսար «հարկահավաք, միջնորդ»։ <samsār, մտնեալի «թաղափորական հրամանները հրապարակող, կանչող, հարանող»։ <munādi (mu նախածանցով nādā «կանչելու բառից»), ջարսա (ճէլլատ, չէլլէղ) «քահին»։ <jallād, ըրըշֆաթ «հաշտութիւն»։ <rašvat, rišvat, rušvat «պարգև, աշխատավարձ, կաշտութիւն»։

2. Իրավունք և դատ — դախիբայ «տրեմք»։ <jarīq «ուղի, ճամբան», «տրեմք», դատի «դատարան»։ <qādi, սուլայ «պահանջ»։ <jalab, jalab, ջազայ «պատիժ, սուղանք», «վարձատրութիւն, պարգև»։ <jazā, jezā, ջաֆա «անարդարութիւն»։ <jalā, դաւի «տրեմք, վեճ»։ <da'vā, խամ «թշնամութիւն»։ <xasīm, խիամ «դատի մեջ հակառակորդ»։ <xasīm, xasīm, դալամ «ճանցանք, մեղք, սխալ»։ <yalat, տաղալ «պայտարդան»։ <jalāq «արձակել»։

3. Հարկեր — սպար (հարկի մի տեսակ է) <ubūr, դաման <jamān, խորան «լիտահարկ»։ xarāj, հազը (հարկի մի տեսակ է) <bazira, մրտ «տուրք»։ <murūr, ուշար «տասնորդ»։ <ušr, ուսամ (հարկի մի տեսակ է) <rasm:

4. Պատերազմ — զմիշի «պողոպան սուր»։ <dimišq, մուղէ «տուսեր»։ <ma'ra, սեճ «զինք»։ <silāh, ճուշան (ճոշ) «զրահ»։ <jaushan, մանճն «պատերազմական մեքենա»։ <manjanīq, շիրայ «տանջելու զործիք»։ <šaxr (անսուղի), ճունդիկ «զինվոր»։ <jundi, պրա «yundi («gund»), համլայ «հարձակում»։ <hamla, խսար (հիսար, սիսար, սղար) «պաշարում»։ <hisār «պաշարակ», դադա «երկիմ»։ <jazā «հարձակելու», jazvat «հարձակում»։ դազայ «տղես»։ <qaza, դալայ «զինվորականութիւն»։ <qalī:

5. Վաճառք և գործարք — դուքան «խանութ»։ <dukkān, քազազ «վաճառող»։ <bazzāz, տէֆ (անել) «տապրանքը վաճառել, քելը»։ <da'f «քելի, վաճառել», խարն «ծախս» <harj, նադա «կանխիկ դրամ»։ <naqd, ջամ «զրուց»։ <jam'c, ջուճլայ «ամբողջ դումար»։ <jumla, խաս «վաճառվածք»։ <qist, բոխմոն «զրուց»։ <femon, մազա «տանուրդ»։ <ma-zād, ամանաթ «ավանդ»։ <amānat, կապալ «վաշխ»։ <qabāla, դալլ (դալ) «համաձայնութիւն»։ <qavil, շարթ «պայման, պայմանագիր»։ <šarl, խաֆիր «երաշխիւոր», «երաշխիւորութիւն»։ <xalīf «պահակ, պատասխանատու, կրօնապետ», խամտակ «պարտավորանք»։ <tammasuk (mask «կառչել, բռնել» արմատից), սպրայ «ամանի քաշք»։ <'abra, միդան «կշեք»։ <mi-zān, առիլ «կշիռ»։ <ādīl «հավասար, արդար, կշիռ», մէն (քաշ է)։ <mann, ուուլ (րուլ) «քառորդ շափք»։ <rub', միխայ (փոքր շափ է)։ <miθqāl, պիքիա (շափ է) <vaqīya, խանթար (զանթար, կանթար, խանթար) «ցինաներ»։ <qanṭar «պրա: ginjār, հուն. πενήταριον, լատ. centenarium), ոտիլ «լիտ»։ <ratīl:

6. Պշտանքի առարկաներ — սղիլ «տուտակ»։ <'aqīq, զրակ «մարգարիտ»։ <dur «մարգարիտ» և հր. ալ (անի), համանի «սխալմաստանցիկ, մուլ կարմիր ակ»։ <yamani, հաշմ «քառալիտ»։ <yašm («հուն. ἴασπις»), ջոհար «զոհար»։ <jauhar, սիպան «սև օսթ»։ <saba], թարի «տղանցիկ կրեաները»։ <արբ. larq, larāq «շերտ» (ըստ Յ. Կարստի):

7. Հագուստի գործիքներ — իրադէ «վերարկու»։ <rida' «հազուստ, վերարկու», ճուլայ «վարձ վերարկու»։ <jubba, դուլայ «արարական լայն ֆա-

րաշա»։ <durra'a, գունար «գորտ»։ <zunnār, արէզ «շորի բանվածք»։ <īrāz (īarz «ձև, կերպ»):

8. Կարեւոր գործիքներ — աղլա <āllas, հարիր «մետաքս»։ <barīr, նասիճ «հյուսված»։ <nasīj, քիճան «քամբակի կտոր»։ <kattān (ktun) «վուշ», կազ «կերպուց»։ <qazz:

9. Արհեստներ — հաշամ «սափրիչ»։ <hajjām, ճոն «կաշեկործ», <juna, հաստա (հոուլ) «երկաթագործ», haddād, խապազ «հացագործ»։ <xabbāz, նաճար «հյուսն»։ <rajjār, պարսար <baytar, տապալ 1. «կաշեկործ», 2. «զարգանց»։ <dabbāz (նույն իմաստերով), քասալ «մազագործ»։ <qas-šāb, լպուտ «զգրար»։ <libāi:

10. Գործիքներ — ըրզայ «տղակ»։ <rassa, մղակ «չրան փակ», <mi'jāq, պարզունակ «զոպանակ, սողնակ»։ Կարսար այս բառը կապում է արբ. <barzīn, արամ. barzīna բաների հետ. ենթադրում է, որ սղզում այն ունեցել է *պարզիմակ ձեք, այս ժողովրդական ստուգարանով ըրզործի է պարզունակ. մամար «զամ»։ <mismār, նոքայ «տալր»։ <nuqta (արբ. բարբաններով nokta), նկատ «ծակիչ, զարգարիչ»։ <naqqāt, մկար (մակար, մքար) «միս ձեռնիլու տախտակ»։ <miksār, սասիր «տապար»։ <šāiūr, մկրատ <miqrād «կարող, խուզող», ապրախիլ «մաղնիս» կազմված է արբ. ապր ibra «տանգ» և հայերեն խիլ «խուզ» բաղադրիչներով. կիթաղմանով՝ «տանգ խուզ»։

11. Կրօնական բառեր — զերի «զմանք»։ <deray (dair), զերէն «զմանական»։ <derayin, զերիմակ «ուխտազնացութիւն»։ զիկա «խալմակն կիկիկի կամ սրբանդի»։ <zāviya, զինճա (զինճա) «մանճնակական կրօնավոր, ճննավոր»։ <zahīd «մոժկալ, ճննավոր, կրօնավոր» (zuhd «մոժկալութիւն»), ըստուլ «մանճնակական սաքայլ»։ <rasul, քնիշա «տաճար»։ <kanisat, ճնիխայ «մզկիթ»։ <jami', հաճի «ուխտազնաց»։ <hāji, հէճ «ուխտազնացութիւն»։ <hajj, մանտար «muqdisi, մէզար «սրբի զերեզման»։ <māzār, թուղայ «մանճնակական աղթք»։ <du'ā, սուլայ (սաղաթաթ) «մողթանք»։ <šalā(t), šalavāt «տղթք, մաղթանք, բնձա», ուքուն «սուրբ քար»։ <rukn, մամքար (մանքար) «մզկիթի բնձ»։ <minbar «ամբիսն, բնձ», մեհրայ «մզկիթի խորան»։ <mihrāb, մուղրի «խուլմ ճոզերական»։ <muqri, մուլմանակ «մանճնակական»։ <muslimān, շիկ «խուլմ վանահար»։ <šēx, իպիս (իպլիթ, իպլիս) «զի, սասանա»։ <iblis, նալթ «ճոզովք»։ <na'lat, սունաթ «թլլատու»։ <sunnat, ոխվ (սիֆ, վախմ, ոխմ) «վաճառպատական»։ <vaqī, vaquf:

12. Բնութիւններ — փիլար (ֆալար) «երկինք»։ <talak «երկինք, սաղ, ճակատագիր», քալար «երկնքի պարունակ»։ <kalak, շամ «տրեճ»։ <šams, նուր «լուս»։ <nūr, դամար «լուսին»։ <qamar, պատր (պէտիլ) «լիտուսին»։ <badr, bedr, սեճ «քամի»։ <rib, հուլայ «ոչ, կրանակ»։ <havā', այն «տալր»։ <'ain, խիմա «կլիմա», «երկրամաս»։ <iqlim (հուն. klima), թիլ «քլուր»։ <til (հոգն. tilal), մաղարայ «քարանձավ»։ <ma'yāra, պահր «ծով»։ <baḥr, սեհայ (սեհլ, սէհլ) «ծովափ»։ <sābil:

13. Կենդանիներ — Վալրի' «պուղնու (պուղէն) «կապիկ»։ <abūzinān), խնուղ (խնուղ) «քրջուն»։ <qunduz, թիթաս «կիկարկու»։ <timsāh, խալիզոն «խիտունք»։ <balazūn, սարսան «խեցեղանի»։ <sara-ḡān, ֆար «մակ»։ <fā'r, fā'ra(t):

Ընտանի՝ հայրան ամասունք»։ <haiṽan, դուար քրեհասար անասունք»։ <dāvṽab, մայ Եկզ, արշուտ»։ <mal, մարքար քրասունք»։ <markab, պաքարայ Կրվի»։ <baqara, շամայ Եուզ»։ <jamal, շնիրայ Եծի»։ <janība, փահյ Եարու ձի»։ <iahl, բուձայթ Եարմավազուն ձի»։ <kumait:

Թռչունների՝ դանուն (տանուն, տհուն) Եկաքավ»։ <iḥūj, teyhūj, զուսէն (տուսէն, տուսյն) Եսայլամք»։ <durāj, կուար Եագուսվ»։ <γurāb, լուկուս Եարծիվ»։ <uqāb, սսիս Եանդդ»։ <saqr, պղզղղ Եթուրիսակ»։ <babṽa:

14. Ուտեղեղեն և խմիչքները. — զահրէ Եմիկք»։ <ḍaxira, բուսլղ (ուսլղ) Երրիկ»։ <aruz, (հր, որիկ), զիլիպան Եարգանք»։ <zilibiṽa (Ըստ Յ. Կարսու), զիրպան <zirbāj-zira-ba Եամանի կերակուր, մուսակակ Եհայի արգանակ»։ <mudaqqaq, հայարի Եարե խաշի»։ <havāri, հարիրայ Եայլուրայիլուս»։ <harira, հերիսայ <harisa, մուզավարայ Եհանաշեղենով կերակուր»։ <muzavvara, հայլիմայ Եքազր Եայուր»։ <hulam, նուղ Եչոր մրդիղեն, արանդիք»։ <nuql, թրննուպին, թրննպին Եմանանա»։ <tarānjubin (պրս. tarāngūbin), մարապայ <murabba, նասաֆ Եշաքարի թանձրուք»։ <naḥif, ֆանիս Եշաքար»։ <fanīḥ, նասպի (շաքարի մի տեսակն է)»։ <nabat, սպիտա Եթանձրոցրած զոշար»։ <‘aqīda, բուսլղ Եզոշար»։ <rubb, նուլայ Եզովայուցիչ խմիչք, մրգանլուխ»։ <jullāb (պրս. gulāb), շարայ Եկիված մրգանլուխ»։ <šarāb, շարաթ Եքազր բովակիչք»։ <šarbat, տիրս Եզոշար»։ <dibs, ֆուխա (փուկայ) Եգարեչուր»։ <luqā, խանուէ Եարնու»։ <qahva:

15. Հաստատուելու Ենենի և շինուելու Ենենի. — ալաթ Երաշնիք, Եամպան»։ <ālat, ամարաթ Ենդեհուսուն, ձրի պանչուք»։ <imārat, սապաս Երեհան»։ <rabāi, զուկակ (տրիսախ, սուխախ) Եփողոց»։ <zuqāq, կանգարայ Եկամուրք»։ <qanjāra, հուհրս Եխուց, Եխորշ»։ <buṽra, բար Եզուս»։ <bāb, աթուն Ենոց»։ <atūn:

19. Արհակ, զրուելուն, հաստականիչ արտահայտող բառեր, փարս Եկենս»։ <fard, արզ Եկատելի, տեսանելի»։ <arhaz, այեսան (այան) Եհասակ»։ <a’yan Եերևացող, նկատելի, թամամ Ելրիվ, ամբողջ»։ <tamām, լալիղ (լալի) Եհամպաստանան»։ <laylq, սաֆի Եանխան, անպակ»։ <safī, խուլս Ետարուր»։ <xalās, xālīš, համամ Ետարուր»։ <ḥammām, խաս Երեսիր»։ <xasš, խալպի Եկեղծ»։ <qaib, խարայ Եքալքալված»։ <xarāb, պասլի Եփչանակ»։ <baḥāl Եփուս, անդորմածելի, անպետք»։ հաքր Եանարք»։ <haqīr, սպլան Եհիմար»։ <ablah, մաղպուն Եխարված»։ <maṽ- būn, զաֆիլ Եանդես»։ <ṽafil, էլում Եզիտուն»։ <ulum, խիխար Եխելուք, խասասուն»։ <hiqār, միզան (միզայն) Եարամաղրություն, Եխանուրդ»։ <mizāj, հայ Եփեհակ»։ <ḥal, հայրան Եզարմացած, շիթիված, մոլորված»։ <haiṽan, մաղլայ Եկախված, զուխիթնի»։ <mu’allaq, մասխարայ Եծիժաղիլի»։ <masxara, խումար Եխենթ»։ <qḥnīq»։ <xumār (xamr Եխմիչք), մաղին Եկես-վես»։ <maṽ Եխիչք, Եփես-վես», հարաքաթ Եխաստուրություն, աշխուժություն, շարժում»։ <harakat, քու Եկիլիչ, արող»։ <kavī, լատիֆ Ենորք»։ <laḥīf, քաթիլի Եթանձր, խիտ»։ <kaḥīf, լալիճ Եկազուն, Եմանդիլի»։ <lazīj, սակիչ Եհայլված»։ <sāyile Եհոսող»։ <sa’īl Ենդուկ»։ <զապուն Եխեղն, նիհար»։ <zabūn Եքարակ»։ մլղուն Եանիծված»։ <maḥ’um, մուխարար Եփանդավար»։ <muxāṽara, մէլում (մաշում) Եշարարատիկ,

վաս»։ <maš’um, մէթին Եգարշահոս»։ <mintin, զրֆր Եհասած»։ <zaḥir, մողան (մոսում) Եշտապես»։ <mutadm, մղուլ Եզրգանք»։ <šūṽ Եաշխասունք, զրաղունք»։ մուհուր Եփարձակ»։ <ma’jūr, սուուն-բանուն Եթուկ, փոքրիկ»։ <ṽajūj-bājuj (mājuj), բարաթ Երավարար»։ <bābat, էմինութին (էմինութին) Եանլանդուկություն»։ <emin Եանվասնդ, խալվաթ (խալի, կալի, խալվեթ) Եմիխակ, լուս, տաննին»։ <xalvat, խաղ (զարդ) Եուսլված»։ <γaraq (րրր. γaraq), խար (զարդ, կար) Եզրուրելուն»։ <qadr, խարիկ (զարիկ) Ետարական»։ <γarīb, կարի (կար, էսիր) Եգերի»։ <asīr, լանայ (լարայ) Եգարմանլուր»։ <ajāib, խեր Եզուս, բարիք»։ <xayr, ձիչ Եփայլ»։ <ḥilā, սմ Եփայլ»։ <vaḥm, կրակ, կրակալություն, պէլայ Եփորձաթելուն»։ <ḥālā, թուար Եմուսունք, մաղրուրդ»։ <toiakkur, սակաս Եխեղված, խեղանլում»։ <saqat, սակիչ Ենդեղն, ձանձրանալ»։ <saqm, սարաթ Եանասպարանք»։ <sarī’ Եարդ, շտայ, սիտաթ Եպատրաստություն»։ <siyāsāt, ֆլեհիլ Եաննի»։ <ḥalāh Եան», ումր Ետարիք»։ <‘umr, մէլ Եհուս»։ <amal:

17. Բնագորուելուն և վարկեցողություն արտահայտող բառեր. — ալիկ (ալկ, լալկ) Եարաս, թիւրություն, ամոթ»։ <‘aib, զաղայ Եխարեք»։ <zaṽal, թաղարիություն Ետարություն»։ <taxsī, հիլայ (հիլլայ) Ենեղանություն, ամբաստանություն»։ <ḥila, սաղլէ Եիզուցող»։ <ḥabaz Եպատկանդ, մլննա Ետարուցող»։ <mulhid, նիլրացող Եերաստանու»։ <nakar, inkār, շաթրութին Եհարկություն»։ <šajir, քաթրիլ Ելլասանդ, անհավատ, անխեղճ»։ <kaḥir, սէքին Ենկ, հանդիս»։ <sākin, ֆուլուլ (ֆուսուլ, ֆուսուլ) Եհանդուղն, ինքնալիտան, հետաքրքրակիր»։ <ḥudūl, քիլոլ Եմեծածտություն»։ <kiḥr, քիլոլ Եհարալանք»։ <kaḥir, պի Եփարնի»։ <barri Եփարնի, վալիլ, զաշտային (barr Եզամաք, barriya Եմարդանդից հետո, քաղաքից դուրս)», անթրլլաթ <արր. muruvvat Եմեծանդություն, Եարիություն»։ հլ. ան- նախամանցով Եփարողի, անարի», անշաղաք <արր. šaiḥat Եխիղն», ան- նախամանցով Եանխիղն», էմալ Եանփութություն»։ <‘iḥmāl, լէշրաթ Եմարդամտություն, հարաքրություն, խեղություն»։ <‘israt, նսեֆ Ելասանություն»։ <nāsif, շաղվաթ Եսիրալիություն»։ <šawq Եսիր, կարուս, šawqiyat Եսիրալիություն, ոփս Ենալասալություն, կրկուն»։ <vaḥa, սաղրի Եթանքիլի, պանկի»։ <satr, sitr, սապայ Եպասանու»։ <sabab, սապր (սապր) Եհարություն»։ <šabir, փաս Եխասում»։ <va’ad, va’ade, քալիմայ Եխոսք»։ <kālime, սախթ (ոսխթ, վասիէթ) Եպատգամ»։ <wašiyat, սակթ (լակթ) Եսուրություն, բարք»։ <‘ādai, ‘adej, հիթիթ Եզուրություն, հեռաստանություն»։ <ḥilīyat, սէմ Եծես»։ <rasim, rusum, զէլթի (զէքաթ, զէքաթ) Եողորմություն, բարեբարություն»։ <zekāt, զալայ Եքնքություն, սիրալիություն»։ <dalāl, բուկիլ Եխաղապանակ, հանգստանակ, բալականանակ»։ <riḥāq Եհանդիս», թաղլեթ Եսուրություն»։ <tabī’at, թաքար (թէքար) Եկրիսություն, փորձ»։ <takrār Եկրկնիլ, փորձել», թարիլ (թարիլ, թարիլ) <tark Եսողում»։ <taraka Եթող- նել», իխրար Եհաստատում»։ <iqar, խիթիլայ Եզուսագործում»։ <isty’ma’l, լուիֆ (լուիֆի) Եսիրալիություն, քնքություն, բարեգործություն»։ <luḥf Եսիրալիլ», Եքնքություն (laḥīf Ետարք)», խաթր (հար) Եհիլում, մաս- գրություն»։ <xāḥy, խաղուլ (զաղուլ, կարի) Եհամալանություն, ընդու- նում»։ <qabūl, խախաթ (խասալաթ) Ետանձնատակություն, բնալիություն,

ընտելուն, հատկություն»։ <xassiyat «հատկություն», միանելի «պարտավորում»։ <minnat^c, լիզելի «հանձնալք»։ <lezzet «համ, հանուլք», մարտա քիդ, անհնչանք, ցանկություն»։ <mutad «ցանկալի», «իդ» (կազմվել է im նախածանցով՝ arada «ուզենալ» բառից)։

Ժողովրդական փոխառությունները բանավոր լեզվում լայնորեն գործածվելու պատճառով սովորական են դարձել միջին հայերենի համար և հաճախ, ենթակիցվելով նրա բառակազմական օրենքներին, հանդես են գալիս զանազան բաղադրություններում. օրինակ՝

Ամիրա—ամիրայություն, ամիրայետ, ամիրայետություն.

Ղալատ (խալատ)—ղալատել (խալատել), խալտիլ, խալտանք, անղալատ.

Քեպուր—քուպրել (քուպրել), քուպրիլ (քուպրիլ), քուպրաթ «խորհրդատու», քեպուրի զենե «հենարան զենե» (բուլբի).

Քարկ—քարկիլ, քորկ տալ, քորկել, քարկիլ տալ.

Քարբար «կրկնություն»—Քարբար այնել, քարբար նստել.

Ժղուլ—ժղլիլ, ժղանք, ժղտուն.

Ղալզ (խալզ, խալզի)—խալզի զուգել «կեղծել».

Հիլայ (հիլայ) «նկարություն»—հիլայթ «ամբաստանություն», հիլայ անել, հիլայել.

Ալամ «գորշ»—խալամ «խալվատ».

Հուրմ «հրաման»—հուրմարար «իշխան», հուրմ այնել «հրամայել».

Մեխթ—մեքիլ (մլիկ) «ճորտացնել».

Խոսթ (հիսթ)—խոսթիլ (հիսթիլ, սիսթիլ, սիսթիլ) «պաշարել».

Սեհ «զենք»—սեհիլ, սեհտուն «զինանք».

Ջազա (ճազա) «պատիժ»—ճազել, ջազա այնել.

Շէր «երգ»—շերասաց «երգասաց».

Աչիպ (աչպ, էպ)—աչպով, աչպոր.

Խէր «բարիք»—բարով խեբով.

Խուճար «խենթ, զինով»—խուճարություն (խուճարություն), խուճրիմ (խուճրիմ).

Հարթ «անարգ»—հարթել, հարթ անել (այնել).

Մազպուն «խարված»—մազպուն լինիլ.

Կահրայ (ղահր, խահր) «բանություն, ուժ»—կահրություն, կահրահան «առանց անհրաժեշտության».

Մունևտիլ—մունևտիլ.

Շարթ «պայման»—շարթ անել «պայմանավորվել».

Աջապ (աճապ) «զարմանալի»—աճապարար (աճպարար).

Ջենես «մահմ. կրոնավոր»—զենեսթորով «խառնածորով».

Եխթիար «զոլություն»—էխթիար անել «հեղել».

Քազսիթ «փոքր, ստոր»—քազսիթություն.

Քուճար «մտաանջ»—քուճարիլ (քուճարիլ) «մտաանջվել».

Լայնդ—լայնդոր.

Խալատ—խալտել, խալտիլ.

Խալար—խալարիլ, խալարիլ անել.

Ղաղ (խաղ) «սուլում»—ղաղ լինիլ «սուղվել, խեղդվել».

Համլայ «հարձակում»—համլայ կապել «հարձակվել, հարձակում գործել».

Շաթթ «զարպետ, հարպիկ, խարբրատ»—շաթթություն «խարբրայություն»։ Մէշում (մաշում) «շարարատիկ, վատ, վատթար»—մէշումիս «զոբախություն», մէշում լինիլ «վատանալ»։

Շաղավաթ «սեր, կարոտ»—շաղավաթ այնել.

Խապուլ «համաձայնություն»—խապուլ անել (զապուլ բնել) «ընդունել, համաձայնվել»։

Տէվրան «շրջան»—տերան առնել «շուռ գալ, դառնալ»։

Նեխթ «սառչ, ընդդեմ»—նեխթ քաշել «սառչ բերել»։

Ջրֆր (զուֆր) «փրփուր»—զրֆրթրֆիլ «փրփրաթափվել», զրֆրթրաղիլ «փրփուր վերցնել»։

Հալալ—հալալություն, հալալ այնել (անել, առնել) և այլն։

Ժողովրդական փոխառությունները բանավոր լեզվի մեջ շարունակվել են միջին հայերենի պարզաման ամբողջ ընթացքում։ Այդ երևում է տարբեր ժամանակների զբաղմունքի հուշարձանների մեջ։ Այսպես.

XII դար, Անուս Շահնալի

«Ձեա ըղշահէն հանց սուր երթայ,

Համլայ կապել զատարկ դառնայ» (ԲԶ, 610)։

Արբ. hamla «հարձակում»։

«Ես ի՛նչ կարգամ զիրմէն թեղ ճառ,

Խեղթն ծով է ու խիլար» (անդ)։

Արբ. hiqar «խմատուն»։

«Երբ մի կայ ու ինքն է չըրբեր...»

Դատարկ նա չէ ապփիլ ընկեր» (անդ)։

Արբ. rafiq «բարեկամ, ընկեր մարդ»։

«Կաթողիկոսն էր անդալատ,

Տիր միճակէն որ չէր ի գատ»։

չalal «սխալ, մեղք»։

XIII դար, Ամրատ Ապարապետ

«Եթէ որ առտուր կամ փոխ այնէ ընդ սրէֆիլի, ու խալապայ կամ խարեութիւն լինի ի մէջն, եւ կենայ զրած ի սերեֆիլին տֆարուն փոխն ու պոմանն, ու սերեֆիլին ճանչած ու վկայած ըրորդ մարդ լինի, փորձած հալալ, նա ի դարպասն երդնու սերեֆիլին ի խալն եւ յաւետարանն, որ իր գրածն որ կայ իր տֆարուն նա ըրորդ է, նա առան իր, ու առնուն զիրաւունքն։ Ապա թէ խալմն ունայ երկու աղէկ վկայ որ ինքն որ խալապայն կենայ ու լինի ի վերայ, որ վկայեն ըրորդ, նա խալմն է իրաւունքն, եւ ոչ սերեֆիլին» (ՂՀՀ, 199)։

Արբ. şarâfi «սերեֆիլ (սերեֆիլ) «օտղանավոր, զբամափոխ»։ çalaba > խալապայ (խալապայ) «շփոթություն», daftar > տֆարա օտուր, մատյան»։

Խուլ «աղնիկ»։ xasm/xasim > խալ «զատի մեջ հակառակորդ»։ «Եւ թէ որ ի մազան գրաստ ծախել կամ զնէ, նա այնուհետ զնօղին բախ է» (անդ)։

Արբ. mazâd «աճուրդ»։

«Եւ այն է սալալն եւ իրաւունքն այնոցիկ՝ որ լսեն ի դարպասն, որ յիննց վերայ եննն դատարտերն եւ հիլայնաց խօսք առնն, եւ իրենք լսեն, ու

բնութիւն, հասկութիւն»։ <xāşşiyat «հասկութիւն», միւսնէթ «պարտավորում»։ <minnat՝, լէզէթ «հաճութեամբ»։ <lezzet «համ, հաճութեամբ, մաքրատ «իղծ, անհաճութեամբ, ցանկութիւն»։ <marād «ցանկալի», «իղծ» (կապովիլ է imā նախածանցով՝ arada «ուղեւայ») բառից)։

ժողովրդական փոխառութիւնները բանավոր լեզվում լայնորեն զործածվելու պատճառով սովորական են դարձել միջին հայերենի համար և հաճախ, ենթակվելով նրա բառակազմական օրինքներին, հանդես են գալիս զանազան բազմաբնութիւններում, օրինակ՝

Ամիրա—ամիրայութիւն, ամիրայեան, ամիրայեանութիւն.

Ղալատ (խալատ)—ղալատի (խալատել), խալտիլ, խալտանք, անզալատ.

Քեապիր—Քոպրել (Քոպրել), Քոպրիլ (Քոպրիլի), Քոպրար «խորհրդատու», Քեապիր դնել «հենարան դնել» (բույսի).

Քարկ—Քարկել, Քարկ աւլ, Քարկել, Քարկիկ աւլ.

Քարբար «կրկնութիւն»—Քարբար այննիլ, Քարբար նտել.

ժղուլ—ժղլիլ, ժղլանք, ժղլտուն.

Ղալպ (խալպ, խալպի)—խալպի զուգել «կեղծել».

Հիլայ (հիլլայ) «եննդութիւն»—հիլայք «ամբաստանութիւն», հիլայ այննիլ,

հիլայիլ.

Ալամ սղոռչ—խաշայամ «խաշվան».

Հուրմ «հրաման»—հուրմարար «իշխան», հուրմ այննիլ «հրամայել».

Մելիթ—մելիթ (միլիթ) «ճորատացի».

Խար (հիար)—խարել (հիարել, սիարել, սղարել) «պաշարել».

Մլնհ «գինք»—սլնհիլ, սլնհտուն «գինանոց».

Ջաղա (ճաղա) «պատիժ»—ճղայնիլ, ջաղա այննիլ.

Շէր «երգ»—շէրասաց «երգասաց».

Այիպ (այպ, էպ)—այպով, այպովոր.

Խէր «բարիք»—բարով խերով.

Խումար «խենթ, զինով»—խումարութիւն (խումրութիւն), խումրիմ (խումրեմ).

Հարք «անարգ»—հարքել, հարք այննիլ (այննիլ)։

Մաղպուն «խարված»—մաղպուն լինիլ.

Կահրայ (ղահր, խահր) «բռնութիւն, ուժ»—կահրայութիւն, կախարհան «սոսանց անհրաժեշտութեան».

Մունեակիլ—մունեակիլ.

Շարթ «պայման»—շարթ այննիլ «պայմանավորվել».

Աշայ (աճայ) «ղարմանալի»—աճայարար (աճպարար).

Ջեհետ «մահ»։ կրոնավոր»—Ջեհետաժողով «խառնաժողով».

Նխիթար «զգուշութիւն»—Նխիթար այննիլ «հակել».

Քաղսիր «փոքր, ստոր»—Քաղսիրութիւն.

Քուարար «մտառանջ»—Քուարարիլ (Քուարարիլ) «մտառանջվել».

Լայնդ—լայնդիլ.

Խալաս—խալասել, խալասիլ.

Խալար—խալարիկ, խալարիկ այննիլ.

Ղարդ (խարդ) «սուղում»—ղարդ լինիլ «սուղվել, խնդրվել».

Համլայ «հարձակում»—համլայ կապել «հարձակվել, հարձակում գործել».

Շաթր «վարպետ, ճարտիկ, խարբեր»—շաթրութիւն «խարբերութիւն»։ Մէշում (մաշում) «շարքաբաստիկ, վատ, վատար»—մէշումութիւն «զժրախտութիւն», մէշում լինիլ «վատասնել»։

Շաղվաթ «սեր, կարոտ»—շաղվաթ այննիլ.

Խալպ «համաձայնութիւն»—խալպ այննիլ (ղալպ այննիլ) «բնդունել, համաձայնվել»։

Տէլրան «շրջան»—տէրան առնել «շուտ գալ, դառնալ»։

Ննտիր «սառչ, ընդդէմ»—ննտիր քաշել «սառչ բերել»։

Ջըֆըր (զոֆըր) «փրփուր»—զըֆըրբըֆիլ «փրփրաթափվել», զըֆըրբաղիլ «փրփուրք վերցնել»։

Հալլայ—Հալլայութիւն, հալլայ այննիլ (աննիլ, առնել) և ալլնիլ.

ժողովրդական փոխառութիւնները բանավոր լեզվի մեջ շարունակվել են միջին հայերենի զարգացման ամբողջ ընթացքում։ Այդ երևում է տարբեր ժամանակների զրաժոր հուշարձանների մեջ։ Այսպէս.

XII դար, Ներսես Շնորհալի

«Ջեա ըղշահէն հանց սոր երթայ,

Համլայ կապէ դատարի դառնայ» (RQ, 610)։

Արր. իռմա «հարձակում»։

«Ես ի՞նչ կարգամ զիրմէն քեզ ճառ,

Խելքն ծոզ է ու խիկար» (անդ)։

Արր. ինճար «իմաստուն»։

«Իրք մի կայ ու ինքն է ջրբերի...»

Դատարի նա չէ ռափկի ընկեր» (անդ)։

Արր. բալիզ «բարեկամ, ընկեր մարդ»։

«Կաթողիկոսն էր անզպատ,

Տիր վիճակէն որ չէր ի դատ»։

չոնալ սխալ, մեղք»։

XIII դար, Սմբատ Սպարապետ

«Եթէ որ առտուր կամ փոխ այնէ ընդ սէրէֆիլ, ու խալպայ կամ խարնութիւն լինի ի մէջն, եւ կենայ զրած ի սերէֆիլին աֆթարն փոխն ու պոմանն, ու սերէֆիլին ճանչած ու վկայած ըրդոր մարդ լինի, փորձած ճալպ, նա ի զարդասն երզնու սերէֆիլին ի խոյն եւ յաւետարանն, որ իր գրածն որ կայ իր աֆթարն՝ նա ըրդոր է, նա առտն իր, ու առտուն զիրաւունքն։ Ապա թէ խիստ ունեայ երկու աղէկ վկայ որ ինքն որ խալպայն կենայ ու լինի ի վերայ, որ վկայն ըրդոր, նա խամին է իրաւունքն, եւ ոչ սերէֆիլին» (ՂՀՀ, 199)։

Արր. şarāñ «սերէֆիլ (սերէֆիլ) «սեղանավոր, զրամափոխ»։ çalaba > խալպայ (չալպայ) «չփոխութիւն»։ daftar > աֆթար «տետր, մատյան»։ baial «սաղնիլ»։ xasm/xasim > խամ «զատի մեջ հակառակորդ»։

«Եւ թէ որ ի մագառն զրատ ծախէ կամ զնէ, նա այնուհետեւ զնօղի բախտ է» (անդ)։

Արր. mazzād «սառնորդ»։

«Եւ այս է սալպայն եւ իրաւունքն այնոցիկ՝ որ լսեն ի դարդասն, որ լինեն վերայ երեսն զատարներն եւ ճիլայնաց խօսք ասեն, եւ իրենք լսեն, ու

Հիննն ի յտան ու զիմախօսութիւն այնեն» (անդ, 197):

Արբ. hi]a «եննզոթյուն, ամբաստանութուն»:

«Եւ թէ կնիկն մեռնի յառաջ քան զայրիկն, եւ տղայ չկենայ, նա դարձցնէ զինչ հետ կնկանն իբր առել լինայ, թէ նազտ եւ թէ այլ ցեղ կումար, զամէնն» (անդ, 193):

Արբ. naqđ>նազտ «կանխիկ դրամ». qumāš >կումար (կումար) «1. ընտիր կերպաս. 2. շարժական գույք»:

XV դար, Միջին Նազաչ

«Մալի նասրաք մի՛ լինիր, մեծութիւնն բեզ չի պիտի» (ՀԱԳ, 67):

Արբ. mal «1. անասուն, եզ. 2. ունեցվածք». hasrāt «կարոտ»:

«Հայր զենէ՛հար, հասիր մէտը, հոգիս բախուավ» (անդ, 69):

Արբ. māđad>մէտէթ (մազաթ) «օգնութուն»:

«Յով որ քաղցրիկ նայես և նազար առնես,

Այլ նասրաք չի մնար, ով տեսնէ զբեզ» (անդ, 75):

Արբ. nađar «հայացք»:

«Նազաչն ասաց թէ զարիպին կհանքն է հարամ» (անդ, 80):

Արբ. ʒarib «օտարական, սանդղախտ»:

«Աչք անյատակ ծովուղ նման

Գերես ի մէջն զարղ արար» (անդ, 81):

Արբ. ʒarāq (բարբառային՝ ʒarāq) «տուլում», որից՝ զարղ առնել «տուլ-վիլ»:

XVI դար, նամակեա Քուչակ

«Գիշեր ու ցորեկ կուլամ. աճափ իմ եարն կու լւէ՞» (ՀԱԳ, 140):

Արբ. a]ab «արդար»:

«Իր օնքն էր զավով քաշած, իր բերանն շարքով ի լի» (անդ, 144):

Արբ. qalam «գրիչ»:

«Իմ սիրտս երկու զուտ ունի՛ մէկ զազա, մէկն ալանք» (անդ, 152):

Արբ. ʒalan «հայանի»:

«Տեսայ իմ հոգուս հոգին զարգարած ու բաղնկուայ.

ես ալ ի զէմիկն կայ՝ նեզ սողայ ու խիստ զալազաչ» (անդ, 150):

Արբ. zuqāq>սոզախ (սօխախ, սուխախ, զուկակ) «փողոց». ʒalaba «շփոթութուն»:

«Գնո ի մուրած չէի հասել, նայ առին զան վարդն ի ձեռացս» (անդ, 147):

Արբ. mūrād «իղձ»:

«Ձեռ նուրով է տարած կամ խարած է կիբնի զրամով» (անդ):

Արբ. ʒavt «քանութուն»:

XVII դար, նազաչ Հովնաբաթ

«Ձլինի ինձ մոռանաս, բարկես» (ՀԱԳ, 235):

Արբ. tark «թողում». ʒj. բարկել «թողնել»:

«Ապա է՛ք ինձ շարիր խապար» (անդ, 236):

Արբ. xabar «լուր»:

«Հայի՛՛ֆ որ թշնամոյն շուտ կու հուստաս» (անդ, 251):

Արբ. ha]i «սփսոս»:

«Հավէն զնա սրպէս ըզհուր» (անդ, 264):

Արբ. havāʿ «օզ, եղանակ»:

«Ատէ՛ք սուրաբիս նման քաշէ» (անդ, 242):

«Ձեռնէս վեր բնկավ զլավմըն» (անդ, 236):

Միջին հայերենով գրող տարբեր հեղինակներ լեզվում ժողովրդական բնույթի արարական փոխառութիւնները միեւնոյն համախոսվածը հանդես չեն գալիս: Կան հեղինակներ, որոնք առհասարակ բիշ են դիմում օտար բաների. օրինակ, Առաքել Բաղիշեցին, Խաչատուր Կեչառեցին. հեղինակներ էլ կան, որոնք սիրում են առատորեն օգտագործել բանավոր լեզվում գործածական փոխառյալ բառերը՝ զրանով եւ ձգտելով հարստացնել մտայնութիւնը: Ժողովրդի կենդանի խօսքին, այդպես են վարվում Յրիկը, Կոստ. Երզնկացին, Մկ. Նազաչը, Հովհ. Թլկուրացեցին, Գր. Աղթամարցին, Ն. Քուչակը և ուրիշներ: Այս հեղինակների լեզվում օտար բառերի կիրառութիւնն այդպիսով ստանում է յուրահաստակ իմաստավորում, որի շնորհիվ չի զգացվում խորթ մտախոտների խեղդիչ ձնշում մայրենի բառապաշարի հարուստ անդամաւանում:

Օտար բառերը բանաստեղծական խօսքի մեջ հաճախ հանդես են գալիս հայերեն ավանդական բառերի կոչքին որպէս նրանց հոմանիշներ կամ նույնանիշներ: Բերենք մի քանի օրինակ.

«Քո սէրդ իմ սրտիս զերդ հուր,

Քո տեսզ աշերուս իմ նուր,

Իմ դիմացս կենուս զերդ հուր,

Խղձեա՛ քո զերուս, իմ լոյս» (ԿԵ, 158—159):

Արարեքնն նուր «լույս» և հայերենն լոյս բառերը նույնանիշներ են:

«Ձերդ ըզլուտին սուրաք բոլոր

Շուրջ երեսին մազերն ոլոր» (անդ, 163):

Արարեքնն սուրաք «գեմք» և հայերենն երես բառերը հոմանիշներ են:

«Այսօր եմ հուժմով իշխան,

Հաւասար սիրելեացդ որ կան,

Հրաման ունիմ և ֆարման,

Վարդին երևան թող զան» (ՀԱԳ, 55):

Արարեքնն հուժմ, հին հայերենն հրաման (<պահելովբերնից), նոր պարսկերեն ֆարման բառերը նույնանիշներ են:

«Հազար հետ ամանաք ու երդում տամ քեզ,

Ձոր ինչ հետ ինձ արիր, այլ մարդոյ չանես» (անդ, 75):

Արարեքնն ամանաք բառն այստեղ նշանակում է «հավաստիացում», որ գաղտնում է հայերեն երդում բառին հոմանիշ:

«Կարօտ կարօտովդ էի, հասարակդ ի ժուտ կուգայի» (անդ, 139):

Հայերեն կարօտ բառին իբրև նույնանիշ բերված է արբ. հասարաք բառը:

«Յով որ քաղցրիկ նայես և նազար առնես,

Այլ նասրաթ չի մնար, ով տեսնէ զբեզ» (անդ, 75):

Հայերեն նայել բառին իբրև հոմանիշ զրված է արբ. նազար «հայացք» բառով կազմված՝ նազար առնել «հայացք ձգել»:

Այսպիսով, ժողովրդական փոխառութիւնները միջնադարի մեր հայ բանաստեղծներին չեն մղել մայրենի բառապաշարը մոռացութեան տալուն, այլ ծառայել են որպէս մի օժանդակ միջոց՝ բանաստեղծական խոսքը ժողովրդական լեզվի արտահայտչական երանգներով օժանելու համար:

Քննված բառերից ժամանակակից մի շարք բարբառներ պահել են բա-
վական թվով բառեր. դրան անշուշտ որոշ շափով նպաստել է հարեան լեզու-
ների՝ արարերենից ունեցած մեծ ազդեցությունը (պարսկերենի, թուրքերենի):
Բայց աշխարհարար երկու գրական տարբերակները՝ արևելահայ և արևմտա-
հայ, իրենց մշակման ու կատարելագործման ընթացքում, աստիճանաբար
հրաժարվել են այս փոխառությունների մեծազույն մասից՝ կրկին կյանքի կո-
չելով ժողովրդի հիշողության մեջ պատմական հանգամանքների բերումով
մշուշապատված մայրենի բառապաշարը:

Այսօրվա մեր գրական լեզվում արարական փոխառությունների թիվը
(գրական, թե խոսակցական ճանապարհով մտած) մոտավորապես երեք և կես
տասնյակ է. ալքիմիա, աճպ(արար), ամիր, ալլախ (կտորք), ասուպ, բակլա,
թաս, լորի, խիկար, խսիր, կալի, կաֆա, կապուլ, կավաս, կլայնի, կոլոս,
կոզպիկ), հար, հաշիշ, հերբաս, հինա, մկիթ, մկրատ, մուսիա, մունեթիկ,
նարինջ, նոպա, շամամ, շին, շիպ, պայտար, պատնջան, օնճան, անդուկ,
սղիկ(ե), սուլթան:

ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲԱՅԵՐ

Միջին գրական լեզուն վկայում է դասական հայերենին անժամոք շուրջ
600 իրանական բառեր՝ մեծ մասամբ նոր պարսկերենից եկող, ինչպես և
պահլավերեն, զենդերեն հնագույն բառածներ, որ գրաբար մատենագրությամբ
չեն ավանդվել երբեմն պատահականորեն, երբեմն բարբառային և ոչ ընտիր
ղեմվելով:

Միջին գրական լեզվի շնորհիվ նրա բարբառներից առաջին անգամ գրա-
կան ասպարեզ են մտել պահլավերեն, զենդերեն այնպիսի բառեր, ինչպես՝

Ազոխն «սղեվականություն».<պհլ. azāti:

Այս բառը նոր պարսկերենում ստացել է āzāti ձևը՝ բառավերջի հի-
անկումով: Հայերեն բառածեր համընկնում է պահլավականին:

Ահոկ «մոլություն, հանցանք».<պհլ. āhōk, որից կազմվել են նաև՝ անո-
կել «վնասել», անահոկ «անվնաս», անհուլքին «մոլություն, վնաս»: նոր
պարսկերենն ունի āhō ձևով:

Անդան «վիրտ, մտասանդություն, ցավ».<պհլ. andōh, որից կազմվել են՝
անդանիլ «անհանգստանալ, սաստիկ վախենալ», անդոհական «սարսափելի»,
անանդան «անհոգ, անցավ»:

Բաշխենկ «վախել».<զնդ. baoxšna «վախել»:

Դասական հայերենը նույն արմատից կազմել է մի այլ բառած՝ բմբոշխ-
ենկ «խնամել»:

Դուսակ «քարձ».<պհլ. *kōsāk (նոր պարսկերեն՝ kōsa):

Դրսակ «կոր հաց».<պհլ. girtāk (նոր պարսկերեն՝ girda):

Դարինենիկ «կինամոն».<պհլ. dar-i-čēnik (նոր պարսկերեն՝ dar-i-
čini):

Դեմ «կողմ».<պհլ. dēh (նպր. dih «զույգ»):

Դեմկան «կուսակալ».<պհլ. dēhkān (նպր. dihkān):

Խոշակ «դատարկ հասկ».<պհլ. xōšāk (նպր. xōša):

Խոստակ «ավատ».<պհլ. xvāstāk (նպր. xvāsta):

Խոստակղար «ավատառու».<պհլ. xvāstakdār:

Կակիթրակ «նեղխառու մի խոտաբույս».<պհլ. kākšīrak (նպր. kākšīra):

Կառգլան «արհեստագին».<պհլ. *karug-pat:

Համշիրակ «կաթնակից, սննդակից».<պհլ. hamšīrak (նպր. hamšīra):

Հարակաշ «վարուցանքի ընկեր».<պհլ. hadakaš:

Հեշմակ «զենդերենում կա aešma):

Հուռակ «բազե».<պհլ. čurak (նպր. čurra):

Մուճակ «կոշիկ».<պհլ. mōčāk, որից կազմվել է մուճակկար (մուճ-
կար) «կոշակար» (նպր. mōza):

Նշաստակ «ցորենի օւլա».<պհլ. nišastak (նպր. nišasta, որը միջին
հայերենում ստաց է բերել զուգահեռ նիշաստա ձևը):

Շատիկ «երջանկություն, հանույք».<պհլ. šādik/šatik (նպր. šādi):

Պիսակ «քոր».<պհլ. pēsāk «քորոտ»:

Ջոկ «անջատ, խումբ».<պհլ. jōk (նպր. jōx):

Ջուխ «զույգ».<պհլ. juxt (նպր. juft):

Վզենի (վան) «տուգանք. վարձք. վնաս».<զնդ. vīzāna, որից՝ վզենակ,
վզենիկ «վնասվել, տուգանվել»:

Վատահի «վարույք».<պհլ. vistāxv:

Տապահակ «մոխի մի խորտիկ».<պհլ. tabāhak (նպր. tabāha):

Տարազուկ «կենդանակերպ կշեռք».<պհլ. tarāzūk (նպր. tarāzu):

Փաթիրակ «փորձանք».<պհլ. patyārak, որից կազմվել են՝ փաթերակի
«փորձանքի դալ», փաթանք «փորձություն»: նոր պարսկերենն ունի patyāra
ձևով:

Այս կարգի բառերը, որ ամենահնագույն ժամանակներից եղել են հայե-
րենի բառապաշարի մեջ, իսկ դա հաստատվում է նրանց ծագմամբ, կարելի է
համարել միջին հայերենյան այն հիմունքով, որ գրական լեզվում գործած-
վելու իրավունք նրանք ստացել են միջին հայերենի շնորհիվ՝ պահպանված լի-
նելով նրա բարբառներում:

Մի քանի խոսք պարսկերեն բառերի ներթափանցման հանգամանքների
մասին:

Պարսկերեն բառեր հանդիպում են ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ
Կիլիկիայի միջին գրական տարբերակներում, բայց որում՝ մեծ մասամբ ժողո-
վրդական փոխառություններ, որ մեր լեզվին անցած պիտի լինեն բանավոր
կերպով: Բուն Հայաստանը, ինչպես դիտենք, Պարսկաստանի հետ սահմանա-
լին հարևանություն կապված էր հնագույն ժամանակներից ի վեր, և սա եր-
կու ժողովուրդների, նրանց լեզուների մշտական շփման հիմնական առիթն էր,
իսկ Կիլիկիան հեռու էր Պարսկաստանից և անմիջական շփում չուներ նրա
հետ, ուրեմն ի՛նչ ձանապարհով էին պարսկերեն բառեր ներթափանցում այն-
տեղ: Հետևյալ հնարավորությունները կային.

1. Կիլիկիայի հայությունը տարբերակ բազմաանում էր բուն Հայաստա-
նից եկող բնակչության, որոնք, իհարկե, նախկին բնակավայրերում չէին
թողնում իրենց բառապաշարը:

2. Կիլիկիան առևտրական կարևորագույն օջախ էր, ուր մուտք ունեին
առևտրով զբաղվող տարբեր ազգերի բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ
թվում՝ պարսիկներ:

3. Կիլիկիայի թագավորները, իշխանները, մտավորականները արարա-
կան, սելջուկյան, մոնղոլական տերությունների հետ հարաբերությունների մեջ
մտնելիս շփվում էին նաև նրանց պարսիկ պաշտոնյաների հետ, որոնք կարե-

վոր զեր էին կատարում այդ տերությունների բազմաթիվ, սնունդական, մտավորական կյանքում:

Այս հանգամանքները, ինչպես և մշակութային կապերը, առիթ էին ստեղծում պարսկերեն բառերի կիրառման ներթափանցելուն:

Պարսկերեն փոխառությունները, բայց իմաստային-կիրառական ոլորտների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

Գունցիս (գունցի, գունցի) — համայնք. <ֆր. commun, que mun (բյուր. κοινότητα):
Գունց — գրառակ. քաղաքակերպ աման. ամանաւանդ. բակ. <ֆր. cour):
Գունցի — սարք. <ֆր. courtes):

Գունցի (գունցի) — 1. ամանք. 2. ամանաւանդաւանդակ. <ֆր. temple (սարք. Յ. կարտի):
Գունցի — կարգապետ գրառակ. <ֆր. toupet (սարք. Ն. Բյուրիւր):
Գունցի — մի տեսակ ամանաւանդ. <ֆր. tournoi):
Գունցի — գրամ է. <ֆր. tournois (ֆր. tournois):
Գունցի (գրառակ) — գրառակ. <ֆր. traitor):
Գրավար — իտալիկներ. <ֆր. traverse):

Ըւլ — քաղաք. <ֆր. rei (իտալ. 're')):
Ըւիլարալ — խարտա. <ֆր. ribald, իտալ. ribaldo (ֆր. ribaud):
Ըւրպիս — ստիլիկ. <ֆր. sterlit (իտալ. sterling):

Լիլիան — գրաստ. <ֆր. lige (բյուր. λίγιος):

Լին—ժամայ. Իշխան. ննթակա. <Ֆր. lige;
Անլին—անննթակա;
Լնարին—ժամայութուն;
Լիվր—գրամ է. մեկ ֆրանկ <Ֆր. livre:

Կալոսի—ձիու զագը. <Ֆր. galop;
Կալոփցնի (կալոփցնի, կալոսփցնի) —
ձիուն վազցնի;
Կարդայն—մի անկող ջերմ. <Ֆր. quaraine
(իտալ. quartan, իսպ. cuartana, սոպր.
Յ. հարստի);
Կարդինալ—cardinal;
Կլափ—ջրային թռչուն է. ֆր. grèbe:

Հանապ—մեծ և լայն գազաթ. <Ֆր. hanap;
Հանեկ—սարք. շարժական զույգ. <Ֆր.
harnais;
Հասաստ—նիզակազոր. ֆր. hastal (լատ.
hasta ընդհանր):

ձնիձ—երկնջ. <genisse:

Մայտոս—խորհրդական. <Ֆր. maistre;
Մարզիկ—իշխանական մի աստիճան. <Ֆր.
marchis;
Մարզիկութիւն;
Մարզիկութիւն;
Մարաշախոս—գործավոր. մարշալ. <Ֆր.
marechall;
Մարիան—ամուսնութուն. <Ֆր. mariage;
Մարկ—արծաթե զրամ է. <Ֆր. marc;
Մորտ—ամանի ձեփ. <Ֆր. mortier;

Նոյի—մենդյան զերեւ. <Ֆր. noël;
Նուստոս—ուրվական. <Ֆր. lutin;

Ոսրիքալ (օսրիքալ, օսրիքալ, ուսրիքալ)
—գործատա. <Ֆր. hospital, լատ. hospita-
tal;
Ունեայ (ունց)—կշիռ է. փոքր շափ. պըս-
ուց. Ֆր. once;
Ոփուստ (փքրանի, սփքրան) —զոն. զոնո-
զու. թյուն. մասուց. Ֆր. ofrende;

Պակ—գարդ է. ֆր. bague;
Պալ—իշխան. Ֆր. bail;
Պալլուրին—իշխանութուն;
Պաներ—մի լիցիայի սպա. շափուչ. <Ֆր.
banier;
Պատրոն—իշխանական աստիճան է. <Ֆր.
patron պատրոնի պաշտպան. պետո
(սոպր. Ն. Քյուզանզադու);
Պարոն—իշխան. բարոն. <Ֆր. baron;
Պարոնութիւն—իշխանութուն;
Պարոնեալ—պարոն գրաստի;

Պարոնորդի—պարոնի որդի;
Պարոնիկ—երեսասարգ պարոն;
Պարոնկայա—սկեւորայ;
Պարոնեալ—սկեւորայ;
Պարոնեալ—հորատայ. պողպար;
Ման.—հա և պալոն տանուաներ իմաս-
տով. որ ծագում է լատ. patronus (բարր.
patonus) Եւանուաներ բառից (Յ. հար-
ստի ստուգաբանութիւն):
Պայն Էկանը. շրջանի տաշա. ֆր. bas-
sine;
Պալն (պորն)—սանձան. <Ֆր. borne;
Պալլեր (պոլլեր)—ազգայ մասուցող. <Ֆր.
bouteiller;
Պանեա—ան՛ս Բուրնէս;

Ջարխար—զորի զուլ. <Ֆր. chapistre;
Ջարոն (Ջարոն)—վեղար. <Ֆր. chaperon
(իտալ. ciapperone);
Ջալունց—զանգաս. <chalonge;
Ջարնցի—զանգասովի;
Ջալունց պնի—բողոքի, բողոք նշանի;
Ջամբ (Ջամբ)—անշաղ. արքունի զիմանու-
տուն. <chambre; Տե՛ս և Քամբու;
Ջամայ (Ջամբայ, Ջամբայն, Ջամպայն)—
անեկապետ. զիմանապետ. <chamblain,
chambellan;
Ջանոն—կրճատի. <ֆր. chanoine;
Ջանցի (Ջանցի) —կանցի. —chancelier;
Ջանցիութիւն (Ջանցիութիւն)—կանց-
իքութիւն;
Ջաստե—պատմիչ. <Ֆր. chastier;
Ջաստե—պղծակ. <Ֆր. chasticl;
Ջարմ—կախարհար. <Ֆր. charme (լատ.
charme);

Ռին—հարուստ. <Ֆր. riche;

Սոյգայ (սոյգայ, սոյգին)—բունդարձու. <
<Ֆր. saisie, saizine;
Սոյգի—բունդարձու;
Սիլին—կիզկեցանակ երգի մի ջուջու. <
Ֆր. sequenz (լատ. sequentia, իտալ.
sequenza);
Սպուստ—խոց ձիու ծնկան վրա. հարստը
կապում է Ֆր. esparfain բառի նետ;
Սրոս—այտուց. <Ֆր. suros;
Սոյ—զրամ. <Ֆր. sol;
Տամ—իշխանուհի. <Ֆր. dame;
Տելֆին—զելֆին. <Ֆր. delphin;
Տուայր—օժիտ. <Ֆր. douaire;
Տուգաստ—զրամ է. <ducal;
Տուկ—զուլ. <duc;
Տուլլ—կրկն. <double;

Սիկիլ—արցիկ. պաշտպան. <defen-
dre;

Սիլ—պատ. կերծ. <Ֆր. quite;
Փուսանուր—հրամանատար. <Ֆր. com-
mandeur;

Սիլի—արտանէլ. <otrière;
Սման (սմայն)—պարագորութիւն. պար-
աստիք. <Ֆր. hommage, hommaige
(միջ. լատ. homagium, իտալ. omaggio);
Սն—երկարութիւն շափ է. <Ֆր. aune և է.

արժունի. Չ. շափի նուագ. յն միագործ
լատ. ulna);
Սիլիան—ան՛ս Սիլիան;

Տայլի—պատը կրցնել. <Ֆր. failier;
Տալի (Ֆէլլը, Կալը)—բախտ. որոն՝ լորի. <
Ֆր. save (կասալոնշան բարբառով),
fève (հյուսիսային ֆր.), have (կասկե-
նի);
Տարլին—ձիու բաւ. <larcin;
Տարլն—հացնի. <Ֆր. frenc;
Տիլի—խաչակիր զինվոր. <Ֆր. frère;

ԱՍՈՐԻՆԻՆ ԲԱՌԻՆԻ ՑԱՆԿ

Անեկ—շար ոգի. <harnägä;

Բան—կից <bahil (պէլ. bāxt, միջ. պրս.
balx, որից՝ բաղի);
Բուսին—հրազի պարտույց. <busina;
Բուտ—կիզկեցանակ վերստնաւ. <bud;

Գլու—կապիկ. <glös;
Գուն—պարեկ. աչքի. զրախ. <ginü
(կիւր. gan, արբ. janna);
Գուն—բազմիքի ավազան. գըմն շղույլ.
Ջրաման;

Ջուզայ—արծաթ զրամ է. <zūzä;

Կանթայ—ուսիկ. թռչան. <qasaj;
Կարայ (կարայ)—մայ. <arbilä;
Կարիձ—ալլուրի մի նաչ. <xawšā;
Կիլայ (իլայ)—զարդ. նուրը զգեստ. <xil'ä;
Կիլայի—զրեւտ նվերիւրով պատմիչ;
Կուց—xusšü, արբ. xušš պատասխարան;

Մարի (ժարուր, ժարոյր)—աչքի սև զեց.
ստոր. ֆաթիձ (աչք. fātar);
Մարիլի—բույս է;
Մարո (ժարիլի, ժարիլի, ժարիլի)—բույս.
ֆաթիձ:

Կալայ—զուլ. <qölē;
Կալկայ (կալկայ)—հանրատուն. <qä-
pelä (<հուս. kapeleia);
Կալկուսի—արեւի. <[
Կասկարայ—1. մի խորովիլու վանդակակ
զործիք. Չ. կաթնայի կոտանի. <kaskä-
rā;
Կուլայ—ջրուն. <kalbā;

Հագար—խնձորի մեծութիւն մի պատ. <
xazrā;

Ղաշայ—տերտեր. <qasā, qasīsā (Քրք.
khesis);

Մախար—մեծ անց. ներքուն. խթան. <ma-
xalā;
Մաշար—պոչի բերան. <masārā նորք՝
mašār;
Մաշարայ—թարթու, բարեկամով. <mašār;
Մար—տեր. <marā;
Մարիլայ—կրք. <maršār;

Նաժաւայ (կան) — նվիրյալ. կուսակրոն.
կույս. <našāyā;

Նաժար (ցի) (Նաժար (ցի), Նաժար (ցի)) —
քրիստոնյա. <našāyā;

Նէլ (շէլ) —պոչմեջ. ազգր. բույլ. <saqa;
Նիլար—խենթ. <šajār;

Սանր (սանր) —լուսին. <šahrā;
Սարիլ (սարիլ, սարիլի)—ամբար. պա-
հետ. <šarbinā;

Սիլա—բուրժու. <šidā, šaidā;
Սիլը—կշարար. <šing;

Սնիկ—կարէր. պահանջ. կարտու. թյուն. <
šaneq, šaniqā;
Սնիկ—կարէր ունեալ. քաղցիչ;
Ի սնիկ լինել—կարէր մեծ լինել. կարէր
ունեալ;
Սնուրիլ—կարտու. թյուն;

Փուրկայ (փուրկայ) —հյուրատուն. պան-
զու. <pušā;

Փալիլ—անասունի ստանդո. <kallā;
Փաւշ (բոշ)—արու ալի. <kewšā Եւրոպրո;

(Ան)սխոր—անդրն: անգարձ, կրք. sekher,
Փեն—գին: դրեղման, փռս.<gala (հունա-
բնիկ միջոցով՝ gē):
Պեղեղ—անիվ.<galgal:
Գարսւմ—հարսով.<dārōm:
Եմակ (էմակ)—ար.<emāq, 'emeq:
Քալպիար—աշտարակ.<kalpiyōt:

Քամուլ—ծագրիկ է.<ammuz:
Քեման—հյուսիս.<emān:
Քարայ—սոգորու թյուն. հաշակ. <torāh
(արք. lawr):
Քարկ—օրենքեկերի դիրք.<torā:
Հագնի—դափնի. կրք. *egen (անցել է հու-
նարենի միջոցով՝ ἄγνίζ):
Սարկի—բնաբր (խաղող)<šōreq (հու. šō-
rēk):

Առալայ (արտալայ)—անգարի աղբրի փա-
փուկ միս.<artala:
Բալախ—փշախոտ.<balaxi:
Բալոյ—փոքրիկ ձի.<balō:
Գմիր—ուձեղ. զորեղ.<gmiri:
Գուլայ—սրբոս.<gul:
Դեպփալ (զրթփալ)—Քաղուհի, մայր թա-
ղուհի. <քարթիվ՝ dedophal (<deda
«մայր» և uphal «թաղուհի, պարտու-
հի»):
Դեղկալու (դեմեկալու)—վրաց աղնվական.<
didebull «իշխան»:
Դեկլ—իշխանական տիպոս.<ibell:
Էրիարալ—զորապետի.<erl «զորք. բազ-
մաթյուն» և thavi «զյուսի» (սազր. Ղ.
Ալիշանի):
Թոկ—չվան.<thok:
Փակիլ—դրեն շվան անցկացնել:
Փոշ—սացաղիլ.<thōš:
Լազուս—կրիտացորեն.<լազ. lazud:
Խալ—դրձ.<xazi:
Խաղիլ—զմել:
Խաղի (խաղիթ, դաղիլ)—արխաղաղի.<ղ.
qaziv:
Խառ—զարգ. Նախշ.<xati:
Խասեկ }
Խասուտիկ } —նախշուն:
Խասուտալ }
Խարի—կղ.<քարթիվ՝ xari (սազր. Ն. Բյու-
զանգացու):

Խիզան—դանդուխտ.<ղ. xizan:
Խորալ—ցորեն.<xorbali:
Խորսմ—հնամաձ խոտի մի խուրձ, մի դիրիկ.
<ղ. xorōmi:
Միս—արարողություն.<cesi (հու. միջոց):
Միս—էլի:
Միկնուպար—դիվանագրիք.<meignobari:
Մինամդար—վանահայր.<cinamj'var:
Մոլա' (մա')—ա՛յ ազաւ.<ղ. cull «ազաւ,
մանչ»:
Կաղի—ազաւ.<kaçi:
Կուձուռի—կրթացուկ. <xuceri (սազր. Յ.
Կարսուի):
Կրուլ—անեծք.<ղ. kruli:
Կոտոշ—կղզյուք.<ղ. kotoš (նոյս. ga-
dāš):
Հենեալ—չիենացի.<ղ. čene-uli (čin-uli):
Ճիլ—սեղ.<čil:
Մամրալար—պաշտոնյաւ. <mamath-mtha-
vari:
Մամփուլ (մամփուլի, մամփուլ, մամփալ,
մամփաղի)—արքա. նահապետ. իշխան.
<ղ. mamphali:
Մանդիկ—խուրձիկ. պայուսակ. <mandiki:
Մաշիկ—կոշիկ.<mašia:
Չիլ—կեղևանք.<čēša:
Փոցիս—Հանգրիկ, արմուխ, կոանդիլ.<
phocxi:
Փոցիսի (փոցիլի):
Քալա (քա')—ա՛յ աղբիկ.<khall:
Քշիկ (քշիկի)—սասանիլ.<khışpeba:
Քուի (քուք, քարայր)—խոտոշ. որջ. քարան-
ձավ.<khvabi:

ԲԱՅԸ ԵՎ ՆՐԱ

ԽՈՆԱՐ ՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Պրական հայերենն իր պատմական զարգացման ընթացքում ունեցել է երեք հիմնական դրսևորումներ՝ գրարար, միջին հայերեն և աշխարհարար: Պրարարն իր ամբողջության մեջ մանրազնին բնաված է, իսկ աշխարհարարն իր գրական երկու հաստիքներով ահա արդեն 100 տարուց ի վեր հանգամանորեն բնվում է, առավելագույն՝ արևելահայ գրականը սովետական շրջանում: Սակայն հայ բանասիրությունն անարդար է դռնվել միջին հայերենի հանդեպ՝ հատկապես նրա քերականական կառուցվածքն ուսումնասիրելու իմաստով: Անցյալ դարի հայ լեզվաբաններն այնչափ հարցերի բնության ժամանակ հընթացս իրենց շարադրանքի խոսել են միջին հայերենի մասին, վկայակոչել միջին հայերենի քերականական կառուցվածքին, մասնավորապես բային և նրա խոնարհման համակարգին վերաբերող լեզվական փաստեր, սակայն միջին հայերենն ամբողջությամբ չեն ուսումնասիրել: Բացառություն են կազմում գերմանացի հայագետ Յ. Կարստի՝ միջին հայերենին նվիրված ուսումնասիրությանները, մասնավորապես «Historische grammatik des Kilikisch-Armenischen» (Մտրասբուրգ, 1901) արժեքավոր աշխատությունը:

Մեծավաստակ հայագետ Ա. Այտընյանն իր «Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի» (Վիեննա, 1866) խիստ արժեքավոր ուսումնասիրության «նախաշավիղում» «ոսմիտրեն» ընդհանուր հասկացության տակ հարյուրավոր օրինակներով մեջ է բերել գրարարին ժամանակակից և նրա հետ դրաստեած, սակայն գրարարի խոնարհման համակարգին «անհարազատ» ձևեր, որոնք բնական կերպով կազմավորեցին միջին հայերենի խոնարհման համակարգը:

Մխիթարյան միաբան Ղ. Հովնանյանը մեծ սիրով ձեռնարկել էր միջին հայերենի ուսումնասիրությանը, սակայն վերահաս մահը խանգարեց իր ավարտին հասցնելու սկսած գործը, և նրա «Հետազոտությունք նախնայաց ոսմիտրենի վրա» (Վիեննա, 1897) արժեքավոր աշխատությունը զժբախտաբար մնաց որպես միջինհայերենյան գրվածքների մի ծաղկաբաղ՝ տեղ-տեղ արված արժեքավոր բառական, քերականական դիտողություններով:

Սովետահայ լեզվաբաններից միջին հայերենի քերականության, մասնավորապես բայի և նրա խոնարհման համակարգի մասին խոսել են վաղամիտիկ լեզվաբան պրոֆ. Ս. Ղազարյանն իր «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (Երևան, 1954) աշխատության և պրոֆ. Գ. Զահուկյանն իր «Հայոց լեզվի զարգացման փուլերը» (Երևան, 1965) ուրվագծային նկարագրության մեջ: Պրոֆ. Ա. Աբրահամյանն իր «Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953) աշխատության մեջ առավել մանրամասնորեն բնեցել է միջին հայերենի գերբայները: Իսկ մեծանուն հայագետ

պրոֆ. Աճառյանը ինչպես «Հայոց լեզվի պատմության» (մասն II, Երևան, 1951), այնպես էլ «Լիակատար քերականության հայոց լեզվի» համեմատությունը 562 լեզուների» (հատոր IV Ա, Երևան, 1959, հ. IV Բ, Երևան, 1961) աշխատությունների մեջ ապիս է միջին հայերենի բայի և նրա խոնարհման համակարգի խիստ ամփոփ նկարագրությունը, սակայն, դժբախտաբար, ինքն անձամբ չի հետազոտել, այլ, իր խոստովանությամբ, բացառապես օգտագործել է գերմանացի հայագետ Կարստի աշխատությունները: Ահա ինչու մեծանուն հայագետի ուսումնասիրությունների այդ հատվածները Աճառյանի խորությունն ու ստույգությունը չունեն: Այս բոլորը ցույց են տալիս, որ ի նորս և ամբողջովին պետք էր ուսումնասիրել միջին հայերենի բայն ու նրա խոնարհման համակարգը:

Սույն աշխատության մեջ բայն ու նրա խոնարհման համակարգը առանձին-առանձին քննված են XI—XIV դդ.՝ միջին հայերենի այսպես կոչված «կիրիկյան գրասական» շրջանում, ինչպես նաև XV—XVII դդ., երբ միջին հայերենի համակարգի մեջ բարբառային ներթափանցումները շատանում են, մի բան, որ աշխատանքում հստակորեն երևում է:

Մեր կարծիքով, անցյալի հայ լեզվաբանության՝ միջին հայերենի հետազոտությունից խուսափելու հիմնական պատճառն այն է, որ մեր լեզվի այդ փուլը չի ներկայանում այն դասական ամբողջացվածություններով ու կուրսիվայամբ, որ ունեն գրաբարը, և ոչ էլ այն պարզությամբ ու դուրահաղորդությամբ, որ ունեցավ կազմավորված աշխարհաբարը: Առաջին հայացքից միջին հայերենը, կարծես, լեզվական իրողությունների որպես մի խոնակություն է ներկայանում, սակայն փաստերի մեջ խորամուխ լինելիս կարելի է նկատել, որ միջին հայերենը, ինչքան էլ անցումային մի օղակ լինի, իր հերթին ունի իր քերականական համակարգը, թեև դրան կից որպես հնարանություն օգտագործվում են գրաբարի քերականական համակարգի շատ իրողություններ: Առավել ընդհանուր ասած՝ միջին հայերենն ավելի աշխարհաբար է, քան գրաբար, թեև վերջինիս մեջ եղած լեզվական-քերականական երկրորդական երևույթների նոր դեհադատությամբ ու համատարած կիրառությամբ: Կազմավորված միջին հայերենին առանձնահատուկ խոնարհման համակարգին հետևելով՝ մենք աշխատել ենք ներկայացնել մեր լեզվի այդ փուլում գրաբարի համեմատությամբ կատարված փոփոխությունները և հասկանալ այն նորը, որը միջին հայերենի խոնարհման համակարգն է դիմագծում՝ ապրելով այն գրաբարից, ինչպես նաև աշխարհաբարից:

Մենք միջին հայերենի բայն ու նրա խոնարհման համակարգն ամբողջությամբ, սպասելի կերպով ուսումնասիրած լինելու հավակնությամբ չունենք, սույն ուսումնասիրությունը «Անդրկենթ» համեստ խորագրեր կրող հատորի մի մասն է կազմում, և մեր նպատակն է եզրև առավել ընդհանուր գծերով ներկայացնել մեր լեզվի այդ շրջանի խոնարհման համակարգը՝ շխորանալով նաև գուտ անսական բնույթ կրող հարցերի մեջ:

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ XII—XIV ԳԳ.

Գ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Բ

ա) Միջին հայերենում պահպանված են գրաբարյան բոլոր շորս՝ լծորդությունները՝ իրենց պարզ և անանցավոր ձևերով. ինչպես՝

Ե խոնարհման պարզ բայեր՝ զնել (ՄԳԳ, էջ 12), քազել «թաղաղել» (ն. ա. էջ 16), գրել (ն. ա. էջ 16), շարբել «կիցրցնել, խմցնել» (ն. ա. էջ 30) և այլն:

Ընդհանուր առմամբ ե խոնարհման պարզ բայերը այլ լծորդությունների չեն փոխանցվում, թեև Ֆրիկն ունի սիրենալ, լսենալ, լիչենալ (ԳԻՎ, էջ 299, 300, 359) ձևերը, սակայն դրանք ավելի շուտ հանդիպում են նպատակով և արված:

Քէլ ավելի բարդ վիճակ են ներկայացնում և խոնարհման անանցավոր բայերը. այստեղ գտնում ենք գրաբարյան գտանել (ԿԵԲ, էջ 196, 26Բ, էջ 149, ՄՀՋՄ, էջ 37), Էլանել (Գրգա. Քնն. էջ 20, 77), ցուցանել (Գրգա. Քնն. էջ 22, ՄՀՋՄ, էջ 37), տեսնել, հարկանել, լուծանել և այլ բայաձևեր, սակայն միջին հայերենի համար առավել բնորոշն են անանցի՝ ա ձայնավորի սղուժով հանդես գալն է, ինչպես՝ սպաննել, նաև՝ սպանել (ՄԳԳ, էջ 10, 17, 25), խոծնել (Գրգա. Քնն. էջ 46), Էլնել, անցնել, հարցնել և այլն:

Հետաքրքրական է նշել, որ այս խոնարհման 4 բայեր՝ գտանել, իչանել, մտանել, տեսնել միջին հայերենում բայական փոխանցման են ենթարկվել և հանդես են գալիս ու խոնարհման անանցավոր բայերի խոնարհմամբ: Այսպես՝ գտնուլ (ՖրԳ, էջ 355, 453, ԿԵԲ, էջ 197, ՎԱԱ, էջ 45, ՄԳԳ, էջ 27), իչնուլ (ՎԱԱ, էջ 242, Գրգա. Քնն. էջ 28, 83, ՂՀնԹ, էջ 152, 306, 317 և այլն), մտնուլ (ՖրԳ, էջ 288, 442), տեսնուլ (ՖրԳ, էջ 249, 303, 368, ՎԱԱ, էջ 27, 93, 113, Գրգա. Քնն. էջ 59) և այլն:

«Հայկական բառարանին» այս ձևերը բոլորովին անծանոթ են: Հետաքրքրական է նկատել, որ այս նույն բայափոխանցումը կատարվել է նաև հայերենի մի շարք բարբառներում, առավելապես՝ արևմտահայ բարբառներում:

Որ հայերենը բայական փոխանցումներով հարուստ է, այդ ոչ մի կասկածի ենթակա չէ. շափազանցություն չէր լինի, կարծում ենք, եթե ասեինք, որ գրաբարում ամեն մի լծորդություն կարող էր վերածվել ամեն մի այլ պարզ կամ անանցավոր լծորդության. ավելին. կան բայեր, որոնք հանդես են գալիս

¹ Գրաբարի և խոնարհման զույգ բայը կա անորոշ գերբայական գործածված է միջին հայերենում՝ «...Անձատա մարդն տեսակ զինքն, կարծե յաղթող զու...» (ՎԱԱ, էջ 242):

գրաբարում մի քանի պարզ և ածանցավոր լծորդություններով, ինչպես՝ խլրամ, խլրակ, խլրանամ, խլրոհմ (ԱռձԲ, էջ 379), ծորամ, ծորանամ, ծորինամ, ծորեմ, ծորիմ (ն. ա. էջ 411), քրտնամ, քրտնիմ, քրտանեմ, քրտանիմ, քրտնում (ն. ա. էջ 840—841) և այլն:

բ) Հայտնի է, որ դասական գրաբարում ի խոնարհման և՛ պարզ, և՛ ածանցավոր բայերն անորոշ գերբայում ունեն —ի վերջավորություն, գրաբարի քերականներից ոմանք նույնիսկ ի խոնարհում ասելով հասկանում են ն խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորաձև դրսևորումը: Բայց հենց V դարում, նախասահյան շրջանում ի խոնարհման բայերը հանդիպում են —ի վերջավորությամբ, ինչպես՝ խոնարհիլ (ՄեՊ2, 3 էջ): Միջին հայերենը ձգտել է ի խոնարհման բայերն արտահայտել —ի լծորդությամբ, ինչպես՝ աշխատիլ (Գրգս. Քնն. էջ 3), նախանձիլ (ԿեՔ, էջ 200), կամիլ (ՎԱԱ, էջ 160), մեհիլ (ՀեՔ, էջ 265), ապրիլ, նստիլ, խօսիլ (Գրգս. Քնն. էջ 57, 59, 71) և այլն: Մեկ-մեկ հանդիպում են նաև —ի վերջավորությամբ ձևեր. հայելի (Գրգս. Քնն. էջ 55, 85), նստելի (ՍԳԳ, էջ 16, Գրգս. Քնն. էջ 105), տանելի (ՍԳԳ, էջ 17) և այլն: Թվում է, թե միջին հայերենը պիտի կարողանար կարգավորել այս երեք վույթը, նաև լայն շարժողացրեց, բանի որ միջին հայերենում —ի վերջավորություն էր ունենում նաև ն խոնարհման բայերի կրավորակերպը, ինչպես՝ կհուակիլի (ՖրԴ, էջ 496), կախիլ (ՎԱԱ, էջ 239), շարժիլ (Գրգս. Քնն. էջ 15), օրհնիլ (ՎԱԱ, էջ 210) և այլն:

Այսպես նաև ածանցավորները. մի կողմից՝ ուսնիլ, մեռնիլ, բուսնիլ, անկանիլ, մյուս կողմից՝ փլշիլ, փախշիլ, հանգշիլ: Հաճախ երկվորյունը նկատելի է նույն հեղինակի երկում, այսպես՝ Սմբատ Գունդախատվի «Գառնասանազարում» ունենք հանգշիլ (էջ 52), հանգշիլ (էջ 6, 30):

Ինչևհետք, միջին հայերենով գրող հեղինակները փորձել են կարգավորել բայական սեռի ու խոնարհման կերպի գրաբարից ժառանգված խոնարհությունները, սակայն պատմական հանդամանքների պատճառով այդ իր ավարտին չի հասել:

Այստեղ պետք է խոսել —ի վերջավորությամբ կրավորական բայերի մասին, որոնք ունեն —ուիլ, —վիլ և —իլ վերջավորությունները: Գրաբարում, ինչպես հայտնի է, բայը շուներ կրավորականի գրանորման մի յուրահատուկ բնօրհանուր ձև է ի կրավորակերպ խոնարհումը, նույնիսկ ոչ լիովին, կիրառելի էր միայն ն խոնարհման բայերի համար, ուստի հենց V դարից սկսած ստեղծվել են նորահնար ձևեր: Միջին հայերենի շրջանում կրավորականը գրանորման հատուկ ձև է ստանում: Արշա է, գրողները հաճախ օգտագործում են նաև գրաբարյան կրավորակերպ ձևեր, սակայն իշխողը նորն է —ուիլ կրավորականն, անշուշտ, իր սկիզբն է անուն՝ հին հայերենի դարձնում, յօրինում, շինում արտահանում եղած ու(սմ) մասնիկ-վերջավորությունից: Թվում է, թե սա միայն հնարավոր ու արժան է, որ հետագայում առավել ևս պարզություն մտցրեց բայի խոնարհման համակարգում: Միջին հայերենով գրող հեղինակի լեզվամտածողությունը գրաբարյան ձևերը հորազատ չէին, այլ պարզապես սովորութի ուժով էին օգտագործվում, ալլապես ինչ՞ով բացատրել այս երեք վույթը, որ գրաբարի՝ կրավորական իմաստի բայաձևերն ունենում են —վիլ վերջավորություն, ինչպես՝ «Եկեղեցին վկայել, որ աղէկ մարդ լինի, նա ընդունվի» (ՍԳԳ, էջ 23), կամ՝ «Եթէ եկեղեցականք լինին, նա նույնպէս ըստ կարգի դատվին» (ն. ա. էջ 47): Այս նախադասություններում ունենք ընդունիմ

կրավորական (տե՛ս ԱռձԲ. էջ 309) և դատիմ հասարակ սեռի (ԱռձԲ. էջ 235) բայերը, մինչդեռ նրանք չեն դիտակցվում կրավորական սեռի իմաստով, ուստի հեղինակը հասկանալի դարձնելու համար ավելացնում է ու(ս) կրավորականի մասնիկ:

Այսպես և լցուի (Գրգս. Քնն. էջ 29, 60, 7), բաժնվի (ՍԳԳ, էջ 50), փարքվի (ՍԳԳ, էջ 13) և այլն:

Առանձին դեպքերում կրավորական սեռի բայն ունենում է —ուի վերջավորություն, ինչպես՝ բաժնվիլ (ՍԳԳ, էջ 50, 51), պսակուիլ (ՍԳԳ, էջ 56), ինչպես՝ «...խոսացել լինայ թէ պսակվին՞ ընդ թեզ» (ՍԳԳ, էջ 52), թեև երկուստեղ ցած ունի՝ «նա նարն է, որ պսակվի»: Գրաբարյան մի շարք կրավորակերպ շեղք բայեր միջին հայերենում օգտագործվում են —ի վերջավորությամբ՝ հոտիլ «հոտել», փոխիլ «փոխվել», հաղորդիլ «հաղորդվել»:

գ) Ա խոնարհման ածանցավոր բայերն անորոշ գերբայում հանդես են գալիս և՛ —անալ գրաբարաձև վերջավորությամբ՝ ուրախանալ, պարտառանալ (Գրգս. Քնն. էջ 15), չարանալ, սևանալ (ՄՀԼՄ, էջ 38), և՛ —նալ վերջավորությամբ, ինչպես՝ շատնալ (Գրգս. Քնն. էջ 6, 23), ողջնալ (ՍԳԳ, էջ 80), խոչորանալ (Գրգս. Քնն. էջ 12), մեծնալ (ն. ա. էջ 30) և այլն:

—Են ածանց ունեցող բայերում ձայնավորի սղումը սովորական չէ, ինչպես՝ երեկնալ (ՄՀԼՄ, էջ 66), մեռննալ (ՍԳԳ, էջ 9, 28), զիտնալ (ն. ա. էջ 21):

դ) Միջին հայերենում օգտագործվում են ու խոնարհման և՛ պարզ, և՛ ածանցավոր բայեր, ինչպես, ածանցավորներից՝ կախուլ (ՖրԴ, էջ 251), զգեռուլ, ՖրԴ, էջ 440), շեռնուլ (ՎԱԱ, էջ 154), առնուլ (Գրգս. Քնն. էջ 3, 107, ՍԳԳ, էջ 10) և այլն:

Այս խոնարհման պարզ բայեր՝ «նու չուր հաննի ի դիտոյ շրիտոյ...»

չկարէ որ արգելուք» (ՍԳԳ, էջ 20);
«Ոչ նմանին այս չեւորերս ի իբրար՝ ի սկսնույն և բողոզ...» (Գրգս. Քնն. էջ 20);
«նու ևս այլ արիւն ոչ հեղում (ՎԱԱ, էջ 64);
«նու գինին յերակին ուժն յանելու...» (ՂԶՆԴ, Ա գիրք, էջ 144):

Մենք դիտումք վերք բերեցինք այսբան շատ օրինակներ, բանի որ գերմանացի հայագետ Կարտան իր «Historische grammatik des Kilikisch-Armenischen» աշխատություն մեջ այն կարծիքն է հայտնել, որ իբր «չորրորդ լծորդության առաջին տեսակը (ուժ) ջնջվի է, մնում է միայն երկրորդ տեսակը —եում» (տե՛ս Ն. Աճառյան, ՀՊՊ, մասն Բ, էջ 248):

Պատճառական բայերը հավասարապես հանդես են գալիս և՛ գրաբարյան —ուցանել վերջավորությամբ, և՛ —ցնել տարբերակով, ինչպես՝ դարձուցանել (ՄՀԼՄ, էջ 53), սկառացուցանել (ն. ա.), սատակեցուցանել (ՎԱԱ, էջ 5), կորուսանել (Գրգս. Քնն. էջ 57), մյուս կողմից՝ անուցնել (ՍԳԳ, էջ 44), ուսցնել (ն. ա. էջ 10, 26, 44), ապրեցնել (ն. ա. 49) և այլն:

Նկատելի է, որ պատճառականի նորակազմ կամ միջինհայերենյան տարբերակված ձևերում ունենք —ցնել վերջավորությունը, ինչպես՝ յանցցնել

² Բոլոր դեպքերում աշխատել ենք հարազատորեն պահպանել հեղինակների ուղղագրությունն ու կետագրությունը, ուղղել ենք միայն արտասոց սխալները:

(ՄԳԳ, էջ 31), բանցնել (ն. տ. էջ 37), մտնեցնել (Գրգու. Քնն. էջ 74), շոյցնել (ն. տ. էջ 11), կեցցնել (ՄԳԳ, էջ 34) և այլն:

Այստեղ ևս նույնը պիտի ասենք, ինչ վերևում. սովորայթի՝ ուժով միայն պատճառական բայերն ունենում են —ուպնել վերջավորությունը. այդ են վկայում նաև միայն միջին հայերեն լեզվին հատուկ պատճառական մի շարք բայեր, ինչպես՝ աննեցնել (ՄԳԳ, էջ 43), գմարքեցնել (ն. տ. էջ 43), խոցցնել (ն. տ. էջ 12), հաւենեցցնել (ն. տ. էջ 47), վկայեցցնել (ն. տ. էջ 21) և այլն:

ԱՆՈՐՈՇ ԿԵՐՔԱՅ

Անորոշ գերբայը, ինչպես գրաբարում, ենթարկվում է և հոլովման. բացառականում ունի ոչ վերջավորություն, ինչպես՝ «Մեկաց ըզուսգն ի հաս պահենք, որ դադարենք անդ ի լալոյ» (ՅրԻ, էջ 310), «է՛ր պարպպա դու ի լալոյ» (ՀեՄ, էջ 172), «ի շնչելոյ», «ի հագալոյ» և այլն:

Գերբայիս սեռական-բացառականը հանդիպում է նաև ու վերջավորությամբ, ինչպես՝ «Պատմութիւն և նախագիտութիւն վասն հինգօրեայ և վեցօրեայ շերմերոյն, որ բնական սավառլոյն բորբուխն լինի» (ՄՀՁՄ, էջ 129):

Մեր լեզվի այս շրջանում — ում վերջավորությամբ անկատար գերբայի, ինչպես նաև այդ գերբայով կազմված ներկա և անկատար ժամանակների շերմ հանդիպում: Վաղուց ի վեր հայագիտությանը հայտնի են հետևյալ օրինակները.

ա) XII դարի հայ բժշկապետ Մխիթար Հերացու «Ջերմանց միքիթարութիւն» (Վենետիկ, 1832) աշխատության մեջ. «Ապա թէ հիւանդին թպտիրն մաշում լինի, կերակուր չոր չէ պատհ՛հ, նա ընծային այլ ցեղ նիւթ...» (էջ 61):

Արսեն Այսրեյանը — ում վերջավորությամբ «գալառական նոր գերբայներուն վրայ» խոսելիս այս վկայությունը դեհաստում է որպես — ում վերջավորությամբ անկատար գերբայի նախածն (ՔՔ, էջ 104):

բ) Վարդան Արեւելցու (13-րդ դարի պատմիչ) «Պատմութիւն տիեզերական» (Մոսկվա, 1861) աշխատության մեջ. «Ասացի թէ. «Ջիւնչ քրիստոնեայ կայ և արբայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն քեզ հետ լաւ են և քեզ աղօթք են անում» (էջ 207):

³ Բանասիրական գիտությունների զոհուր Ալ. Մարգարյանն իր «Հայերենի հարազր բայերը արժեքավոր աշխատության մեջ գտնում է, որ մեզում արարերենից փոխառված բառ է՝ սարազատ, շարաբաստիկ, շարապուշակ, որ զործածական է նաև պարսկերենում ու ֆուլթերենում: Բասր այդ նախադասությունը պիտի է հասկանալ հետևյալ կերպ. «Ապա թէ հիւանդին (հիվանդի համար) «թպտիր» (հիվանդության դարմանութեամբ) շարաղես լինի» (էջ 471):

Ավելացնենք, որ այս բացատրությունը հշտում է և հետևյալ փաստով. «Եսկ Փետրոսյանն իր ծորոսը եւ ունէր մկում (= վաս) ձի և Աղուն էր սպայ և ձին ազգի, որը իմացան թէ հաստակ կամի Տաթարե և գերկուսն ըմբռնել, Աղունը իցելու ի ասնիկ ձիայի՝ եւ ի Փետրոսյանն, և իրեն կուս ի վաս ձի» (ՂՆԻԹ, էջ 245):

⁴ Ա. Արեղյանը հետևյալ կերպ է դեհաստում այս փաստը. «Դա ցույց է տալիս, որ արեւելյան բարբարոսների մեջ XIII դարից սույն արդեն այդ ձևը հանրեցված պիտի լիներ իրեն սահմ. ներկայի մի բազալըն մաս, որպիսիք ստանկում են՝ ձևը զտեսար ստանում են: Եթե շլասնել են, ստանկում են՝ ձևերը գն կարող էին զսպգիլ իրեն մի գարծված, ստանում են՝ ձևն այլևս գարծված չէ, այլ լուի խոնարհման մի բազալընը ձև. որովհետև դա այլևս չի կարող պայքով իրեն անորոշ գերբայի ներդրական ձևն բաշտմ» (ՀՏ, էջ 314): Ա. Մարգարյանը վերահիշյալ աշխատության մեջ գտնում է, որ լեզվական այդ փաստը մեզ ավանդված է 1559 թ. Անապոզից (Ք 1770), մինչդեռ նախորդ դարերի ձևագրերում չկա: Մյուս կողմից՝ ՔՆ 1518 (1501 թ.),

Վերջերս հայագիտության մեջ բերվում է նաև նորահայտ հետևյալ օրինակը. «Գրում են, մուկն ցեխեց ի վերայ լուսանցին» (Տե կարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց է. Խաչիկյան, Երևան, 1956 թ., էջ 358): Ավանդված է Ջարեսու գրչից (1474 թ. Վալոց ձոր):

Վերին օրինակները շնե կարող հիմք ծառայել պեղելու, որ — ում վերջավորությամբ անկատար գերբայ ու նրանով կազմված ժամանակներ են եղել այս շրջանի միջին հայերեն մատենագրության մեջ:

ԱՊԱՍԻ ԿԵՐՔԱՅ

Շատ հարուստ գրեկորումներ ունի միջին հայերենում ապառնի գերբայը. նախ՝ ինչպես գրաբարում, միջին հայերենում ևս ապառնի գերբայը գրեկորվում է մեծ մասամբ — ոց վերջավորությամբ. այս վերջավորությամբ ապառնի գերբայից կազմվում են միայն բազալընայ ժամանակներ, ինչպես՝ «Մեքիկ էկիրք յաշխարհս և մերկ զեալոց եմ վաշխարհէս» (ՎԱԱ, էջ 283):

«...Յարն ահագին սակոց է ընդ մեզ աստուած...» (ն. տ. էջ 102):
«Նոյն մարմնովդ ևս դու գալոց,
Որ Քո խաչողքն լինին ատակ» (ՅրԻ, էջ 420):

Ի խոնարհման բայերում ապառնի գերբայի ի խոնարհիչը փոխվում է կ-ի, ինչպես՝ «...Ով որ աստանայի բարտոյն և ուխտին հաստատյ, բաժին նորս վում է մեծ մասամբ — ոց վերջավորությամբ տարբերակը միջին հայերենում շատ սակավ կիրառություն ունի. կդած օրինակներից են (ստորագիտական վերջավորի կիրառությամբ).

Ապառնի գերբայի — ի վերջավորությամբ տարբերակը միջին հայերենում շատ սակավ կիրառություն ունի. կդած օրինակներից են (ստորագիտական վերջավորի կիրառությամբ).
«Նա է պատուած յամէն տեղի,
Ցամեն մարդոյ է զովիլի» (ՅրԻ, էջ 238):
«Այս ի յումմէ՛ է դիտելի:
Կամ ի յումմէ՛ հաճաչելի» (ՅրԻ, էջ 250):

«Արդ՝ հարցանելի է, թէ աստղին վաճառելովս .ն. յ.Բ. դրամ ծախեցաւ» (ՎԱԱ, էջ 272):

Շատ ավելի հետաքրքրական են ապառնի գերբայի — ոյ, ինչպես նաև նրա հնչյունափոխված — ու տարբերակի կիրառությունները: Ամբողջ գրաբար մատենագրության մեջ հետազոտողները միայն մի բանի օրինակներ են գտել, որտեղ ապառնի գերբայն արտահայտված լինի — ոյ վերջավորությամբ: Պրոֆեսոր Ա. Աբրահամյանն իր «Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953) աշխատության մեջ այդ բոլորը ի մի է բերել (տե՛ս էջ 148—150): Ահա առավել հայտնի օրինակներից մեկը. «...Ջի՛նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խոսելոյ՝» (Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, VI, գլ. 8):

1478 (1657 թ.), 4584 (ժէ Գ.) ձևագրերում ակորթ են անունս—ի փոխարեն սենեք ակորթ և, չստնումս ձևը, Երազացություն. «ձևագրային հիշյալ տվյալների ու անհամապատասխանություններից ցույց են տալիս, որ իրական հիմք չկա ակորթ են անունս ձևը XIII դարի լեզվական փաստ դիտելու կամ իրեն այդպիսին հանաչելու համար» (էջ 472):

² Արսեն Այսրեյանը «Բնական քերականության մեջ դրում է. «Նույն էր շատ անգամ հին դարաբանի ալ ոճը. Տաղ ինձ հաց ստեղծ և հաղործ զգնելոյ» (անց, էջ 102):

Ապառնի դերբայի այս կազմությունը շատ լայն կիրառություն ստացավ միջին հայերենում: Նախ՝ այստեղ նորությունն այն է, որ -ոյ վերջավորությունը գերբայի ունի մի տեսակ ածական-որոշչի կիրառություն, ինչպես՝ «...եւ թէ անբժշկելի լինի գարկն և ուսելոյ անասուն լինի, նա դզինն տայ» (ՍԳԳ, էջ 80):

«Մտալելոյ ժամն գնաց՝ զերդ զերեկի գարն որ շունի» (ՅԲԳ, էջ 169):

«Չազն անհամ ո՛վ է տեսել, թե լինի նա պիտանացու,

Ոչ արբի պարտէզ ձգել, 'ւ ոչ է քար ինքրն շինելոյ» (ՀԲԲ, էջ 149): Այսպես նաև՝ «ձնելոյ ատուր» (ՅԲԳ, էջ 308), «հանգելոյ տեղիք» (ՍԳԳ, էջ 31), «արժելոյ, ստածելոյ վերք» (ն. տ. էջ 48) և այլն:

Անցումը -ոյ վերջավորությամբ ձևից -ու-ի, պատկերավոր ասած, մեկ բայը էր միայն: Հայտնի է, որ գրաբարյան -ոյ վերջավորությունը պատմական հնչյունափոխությամբ դարձել է -ու: Արդ, ապառնի դերբայի բոլոր ձևերի մեջ այս է իշխում միջին հայերենում: -ոյ վերջավորությունը գրաբարում բազմաձայնից առաջ արտասանվում էր -ու, գրաբարյան անոյշ, այժ, շոտ, բոյք և այլ բաներ, ինչպես նշում է պրոֆ. Մ. Արեղյանը, աշխարհաբար գրականին են անցնել անուշ, ուժ, շուտ, բուք (մատ) գրությունը՝:

-Ու վերջավորությամբ ապառնի դերբայը միջին հայերենում հանդես է գալիս՝

ա) Պարագայական կիրառությամբ. ինչպես՝ «Գըլուին է զեր, ոտքն փափուկ, անդամքն աղէկ է խորվիլու:

«...եխառ փոշիման ի վայր մընոց, պաշար շունէր հնա տանելու:

...ՅԲԳ՛ի, զարթիթ ի խոր բրնոյզ՝ նարազ արա բեզ զրեալալ» (ՅԲԳ, էջ 209—310):

բ) Որոշչի կիրառությամբ. ինչպես՝ «Եւ զայդ ի զողալուն ասենէ սկիզբն արա...» (ՄՀՋՄ, էջ 101):

գ) Առաջնակարգի որպես ժամանակակից դերբայ ապառնի բաղադրյալ ժամանակում. ինչպես՝ «Երբ որ չկտոց մեռնելու էս, բեզ ճար արա, ի՛նչ կու նայիս» (ՅԲԳ, էջ 267):

«Ժանգոտ պղղինձ ենք հաւասար, ներքե հողին ենք փրտելու» (անդ, էջ 310):

«Նա դու ասա, թէ՛ մի՛ ցալիք, հիւանդս աս լուեալու է» (ՎԱԱ, էջ 295):
էջ 295):

դ) Ժամանակակից-դերբայական ձևերից պետք է տարբերել ապառնի դերբայի ներքոհիշյալ դերբայ-ստորդելիական վերադիր կիրառությունը. «Աբխ(ա)ն գնաց առ գոմէշն և առ լուսաւորս երկնից, թէ՛ լեռուք ինձ խնամի, դի գետուր իմ կարգելու է» (ՎԱԱ, էջ 25):

«Շոնյալս պատելու է այն մարդն, որ զրնկերն զովէ» (անդ, էջ 248):

ԱՆՅՅԱԿ ԳԵՐԲՈՍ

Խոսել միջին հայերենում անցյալ դերբայի կիրառության մասին նշանակում է կրկնել այն բոլորը, ինչ հայտնի է գրաբարի անցյալ դերբայի կիրառության մասին, մի բան, որ մեր նպատակը չէ, քանի որ մեզ հետաքրքրում

են առավելագույն միջին հայերենի խոնարհման համակարգին առանձնահատուկ բայական իրողությունները: Միջին հայերենով գրող բոլոր հեղինակները՝ պատմագիր, բանաստեղծ թե՛ բժիշկ, իրենց ստեղծագործություններում օգտագործում են գրաբարի անցյալ դերբայի բոլոր կիրառությունները, որ մանրամասնորեն մշակված են պրոֆ. Ա. Աբրահամյանի վերաբերյալ աշխատության մեջ: Վաղակատարի նոր ձևերի հետ կողք-կողքի օգտագործվում են անցյալ դերբայով և նմ օժանդակ բայով կազմվող ձևերը. ինչպես՝ «Եւ մարդ, որ իս սարգիթինն ի խոշորութենէն է պատճառն, որ լսկցեալ է ի թթու ջուր... և իս մարմինն բանձրագեալ է և արգիլեալ զբուխարն և նշանն այս է, որ մորթն մարմնոյն պղեալ լինի...» (Գրգո, Փնն, էջ 13):

Ինչպես գրաբարում, այստեղ նա անցյալ դերբայական լինիմ բայի հարադիր խոնարհմամբ արտահայտում է կրավորականության գաղափար. ինչպես՝ «Եւ այն հում պաղաղում ի շատ թուխմայէ լինի հաւաքեալ ի ստամոքն և ի փորքն, զի զօրութիւնն բնկղմալ լինի» (ՄՀՋՄ, էջ 33) և այլն:

Հասկանալի է, որ մեզ առավելագույն հետաքրքրում են գրաբարյան կիրառությունների համեմատությամբ առաջացած փոփոխությունները:

ա) Միջին հայերենում չենք հանդիպում նմ բայի ստորագրական ձևերով կազմված բաղադրյալ ապառնի ժամանակի, այսինքն՝ չկան մեռեալ իցէ, ժողովեալ իցեմք և այլ ձևեր:

բ) Միջին հայերենում չենք հանդիպում տեսել է իմ, լուեալ էր քա և առավելագույն բնբնցեալ իցէ նորա ձևերի, ինչքան էլ որ խոսքի շարադրանքը գրաբարյան լինի:

գ) Միջին հայերենում չեն հանդիպում անցյալ դերբայի բայական հալեկարության ոճական կիրառությամբ, մի բան, որ գրաբարում խիտ տարածված էր. ինչպես՝ «Ժակ իրրկ կարի բոնագատեցաւ... և շտապեալ տաղանպեցաւ» (Փ. Բուզանդ, IV, ԺԶ), «Վարտ Եղեալ կուսին» (Նդիշե, I յեղ.) և այլն:

դ) Միջին հայերենում չենք հանդիպում անցյալ դերբայի դիմավոր իմաստով կիրառությանը, մի բան, որ հատուկ էր գրաբարին, ինչպես՝ «Մա ի մէջ սկայիցն քաշ է երեկի լեալ» (Նորենացի, I, Ժ):

Հետաքրքրական է այս տեսակետից մեջ բերել մի փաստ, որ նկատել է Ղևոնդ Հովհաննյան իր «Հետազոտությունք նախնայց ոսմկորենի վրա» աշխատության մեջ. Հայոց Գագիկ թագավորի և մետրոպոլիտ Մարկոսի հայտնի միջադեպի շարադրանքում իրար ժամանակակից երեք հայ պատմիչներ միևնույն նախագատության բայաձևը տարբեր ձևով են գրում. այսպես՝ «Եւ իրրկ բնդ պինս մտին, ասէ թագաւորն. Լուեալ է իմ թէ ունիս զու շուն ազնիս» (Կիրակոս Գանձակեցի), «Յայնժամ սկսաւ ասել Գագիկ ցկիտ Մարկոս՝ և թէ լուեալ եմ եթէ քո շուն զօրաւոր կայ» (Մատթէոս Ուտհայեցի): «Երբու ճաշնցին և ուրախացան ի դիմի, ասէ Գագիկ զՄարկոս. լսել եմ թե մեծ շուն ունիս և կամիմ տեսնուլ զնա» (Սմբատ Գունդատապալ) (ՂՀնԹ, Գիրք Ա, էջ 18—19):

Կիրակոս Գանձակեցի և Մատթէոս Ուտհայեցի պատմիչները ստեղծագործել են գրաբար, և բայաձևը գրաբարյան է, մինչդեռ Սմբատ Գունդատապալը՝ աշխարհաբար:

ՎԱՂԱՎԱՏԱՐ ԳԵՐԲՈՍ

Միջին հայերենում վաղակատար դերբայը գտնում ենք և՛ -ել, և՛ -ելք վերջավորություններով: -ել վերջավորությունն, անկասկած, առաջացել է գրա-

* Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 116:

բարի անցյալ գերբոյի -ևալ վերջավորութեանից, հայերենի համար շատ ան-
վորական ևս> և հնչյունափոխութեամբ, ինչ որ գտնում ենք պրևա-գրեց, ցո-
րեան-ցորեն, ապա և բարբառային՝ լեարդ-լերդ, սարեակ-սարեկ և բազմաթիվ
այլ բառերում (մե՛ս Մ. Արեղ. ՀԻՏ, էջ 119): Մեկ անգամ որ առաջացել էր -ել
դերբայական մասնիկը, լը՛ր ձայնորդների հնչյունափոխութեամբ (մի բան, որ
հայերենին հատուկ է) առաջացել է նաև վաղակատարի -եւ վերջավորու-
թյունը:

Քն առաջինը ո՛ր հեղինակը գրաբարի անցյալ դերբայն օգտագործեց -ել
վերջավորութեամբ, դժվար է պարզել, միայն թե կարելի է ասել, որ XII դա-
րում վաղակատար դերբայն իր -ել և -եւ վերջավորութեաններով, ինչպես
ասում են, բաղաբացիական իրավունք էր ստացել, այնքանով, որ լեզվի հար-
ցերում պահպանողական ներսես Ենորհայի բանաստեղծն իր առակներում օգ-
տագործում է վաղակատար ձևերը այնքան անգամ, ինչքան որ խոսքի համար
անհատկեղտ է եղել. ահա այդ օրինակները.

-ել վերջավորութեամբ. «Ե յկատում բանն է նրմանել,

Հերն վայելուչ և զուրկ եկել...» (Բանք շափաւ, Վենետիկ, 1830, էջ 574):

«Հանց զեղեցիկ հա իմաստուն
Որ չէ տեսել էն ցեղ գիտուն...» (ն. տ. էջ 581):

-ևւ վերջավորութեամբ. «Երբ մի կայ ու ինքն է ջրրեր,
Հանց դիմեիում մարդ չէ տեսել» (ն. տ. էջ 567):

Այս շրջանի մյուս գրողների ստեղծագործություններում մենք հանդիպում
ենք վաղակատար դերբայի ամենալայն կիրառության: Յրեկն իր «Տաղ հոգե-
շահ» բանաստեղծությունը (145 տող) հանգավորում է վաղակատարի -ել վեր-
ջավորութեամբ, ինչպես՝

«Մի՛րս իմ, ընդէ՛ր ևս խրոզվել,

Ա՛չք իմ, ընդէ՛ր ևս խաւարել.

Խե՛լք իմ, ընդէ՛ր ևս հապաղել.

Մի՛տք իմ, ընդէ՛ր ևս շիւարել» (ն. տ. էջ 405):

Այսպես և Կոստանդին Երզնկացին իր «Բան գարնան օրինակաւ խորհուրդ
ի Քրիստոս (մի՛ մարմին հասկանայք զրանս, այլ հոգևոր)» բանաստեղծու-
թյան բառատուրի վերջին տողը, ինչպես՝ «...Ձի արեգակն է մեզ ծագել...»:

«...Հանց որ փրոնի զեղեցկացել...» (Բանաս., էջ 117):

«...Ամէնն են բարութեամբ լրցել...»

«...Հատար զերկիր են արբուցել...» (էջ 118) և այլն:

Մյուս կողմից՝ -ևւ վերջավորութեամբ է հանգավորում Հովհաննես Երզն-
կացին իր «Տաղ Աղամայ» բանաստեղծության 53—72 տողերը.

«Ե յերկնատրաց դասուց

Մագայել զերեսն էր շքեր

Ի յերկնից անգուեզս իբեր

Ի ի լուսոյն խաւար մնացեր,

ՁԱզամ ի գրախտն հաներ

Ի յանանոց երկիրն է ձրգեր...» (Բանաս., էջ 226—227):

Վերը բերվածներից հիշտ չէր լինի այն եզրակացությունը հանել, որ
այս կամ այն հեղինակը նախաօգտավորյուն է տալիս -ել կամ -ևւ վերջավո-
րութեամբ գերբայական ձևերին: Իրականում, նույն հեղինակը, ինչպես Ն.
Շնորհալույց բերված օրինակով տեսանք, օգտագործում է երկու ձևերն էլ: Ավել-
ին, հաճախ այդ երկու վերջավորություններով կիրառություններ գտնում ենք
միևնույն նախաօգտավորյուն մեջ. ինչպես՝ «Գրաճէնն ասէ, թէ այս ջերմասն
պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին տագնապեր է և տալցեր է, և իր
տարութենէն զայս ջերմս յերեսան է բերել» (ՄՀՁՄ, էջ 27):

Կամ թե չէ հեղինակը նույն բայը օգտագործում է երկու ձևերով էլ, ինչ-
պես՝ «Յուցանէ առակ, թէ շատք լան և ապայշուեն, որ ձեռնայմուտ ի գործ
և յարուեստ ինչ, զոր չեն ուսել...» (ՎԱԱ, II, էջ 57): «Յուցանէ առակս, թէ
ամենայն մարդ զիս արուեստն թողու, որ սովորեւ է և ուսէր, նայ թողու զայն
և երթալ զայն անէ, որ չէ ուսեր և ոչ գիտէ... ամէն մարդ պիտի որ դիւր՝ որ
ուսէր զան անէ» (ն. տ. էջ 132):

Այսպես և՛ «Վարդ, որ գերեւորտ շես բացել» (ԿԵԲ, էջ 119):

«Մեզ ալ սիրող աչիք բացեր (ես)» (ն. տ. էջ 132):

Վաղակատարում երկու վերջավորություն են ունենում նաև պատճառա-
կան և կրավորական բայերը, ինչպես՝ կուռուսլ է (ՄԳԳ, էջ 60), քալացուցել են
(ն. տ. էջ 30), լցուսլ է (Գրգու. Քնն. էջ 51), բայց և՛ ուսուցեր է (ՎԱԱ, II,
էջ 14):

Բացի եմ օժանդակ բայի հետ վաղակատար ժամանակներ կազմելուց,
վաղակատար դերբայը լինիմ և կամ բաշերի հետ կազմում է երկրորդական
բաղադրյալ ժամանակներ: Սա, անկասկած, կազմվել է գրաբարյան բաղադր-
յալ ժամանակների նմանողությամբ. ինչպես՝ «Ես թէ որդիքն մեռել լինին թա-
ղատուրին...» (ՄԳԳ, էջ 16):

Այս տեսակետից ուշագրավ են հետևյալ նախաօգտությունները. «...Ձերդ
որ հրանդն ի յառաջն կերակրեալ լինի տաք և շորային կերակուր, նոյնպէս և
ըմպելիքն տաք և շորային լինի խմել, և շատ հոգս լինի տալել կամ տրեու-
թիւն, կամ դատել լինի շատ...» (ՄՀՁՄ, էջ 91): «Ես երակին վատուծութեան
պատճառն այն է, որ մարմնոյն զօրութիւնն հատել և կուրել լինի» (ն. տ.
էջ 39):

«Ոմանք ընդ...»

յաշակողմեան զասին բազմի.

Ոմանք չեն արժանի

Ի յիր տեսոյն, կան հալածել» (ԿԵԲ, էջ 179):

Վերին օրինակներից երևում է, որ լինիմ բայի բաղադրությամբ կազմված
ժամանակներում վաղակատարն արտահայտում է հարակատարի իմաստ,
աշխարհարար լեզվամտածողությամբ այլ կերպ չի էլ կարելի հասկանալ: Այս
տեսակետից բոլորովին պատահական չէ, որ արդի հայերենում վաղակատար
դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակներ չեն կազմվում:

Վերևում ասացինք, որ վաղակատար դերբայի այս կիրառությունները
գրաբարի հետեղություններն են: Այդ նույն պատճառով է, որ, կարծում ենք, մի-
ջին հայերենում վաղակատարն ունի ավական-օրոշի կիրառություն, մի բան,
որ հատուկ չէ ո՛չ արևելահայ, ո՛չ արևմտահայ գրական լեզուներին և ո՛չ էլ

բարբառներին: Ահա այդ կիրառությունները. «Եւ այլ կու հրամայէ օրէնքս, որ թէ մարդ ուժ անէ տառապել մարդոյ... նա դարպասն վճարել տալ...» (ՄԳԳ, էջ 71): Այս նույն կիրառությունն ունենք «Պատաստանագրքի» օրենքների ցանկում՝ «Վասն որ տառապել մարդոյ ուժ անէ...» (էջ 13): «Տառապել մարդոյ գիրք, որ բշիկ զեղօք մեծ բան ալնէ...» (ՂԸՆԹ, Ա գիրք, էջ 132): Հեղինակը բաղել է հնարույն բժշկարաններից:

Գծարխտարար այլ փաստեր չունենք, բայց տարբեր Հեղինակների տարբեր լուսավեպարությանը գործերում հանդես եկած այս ձևերը չէին կարող գրչա-գրական սխալներ լինել:

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԳՆՐՔԱՅ

Արդի հայագիտության մեջ հարակատար գերբայը վաղակատարից գատորոշվում է կատարված գործողության հետևանքային կամ հարատևման երանգ արտահայտելու առանձնահատկությամբ: Հարակատար գերբայի մեջ այդ առանձնահատկությունն են շեշտել պրոֆ. պրոֆ. Գ. Սևակն ու Ա. Աբրահամյանը: Ահա նրանց բնորոշումները. «Հարակատար գերբայը նույնպես ցույց է տալիս կատարված գործողություն, ինչպես և վաղակատարը, սակայն այն հիմնական տարբերությամբ, որ միաժամանակ արտահայտում է այդ ավարտված գործողության երանգները իբրև մեյալուն, հարատևող արդյունք» (բնագծումը մերն է—ՍԱ):

«Հարակատար գերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված գործողության կամ եզրնությունն ընդհանուր զագրափար՝ որչա հետևանքով, իբրև գործողի կամ եզրի ակական կամ ժամանակավոր հատկանիշ» (բնագծումը մերն է—ՍԱ):

Ընդհանրապես հայերենում հարակատար գերբայը կազմվում է գերբայական -ած և -ուկ մասնիկների միջոցով: -Ուկ վերջավորությունը հարակատար գերբայը հայերենում սահմանափակ կիրառություն ունի, այն առավելապես օգտագործվում է Մշո, Վանի, Մոկաց և մի շարք այլ բարբառներում ու խոսվածքներում, մասամբ և արևմտահայերենում՝ ավելի շուտ խոսքին բարբառային երանգավորում տալու միտումով:

Հարակատար գերբայի -ած վերջավորությամբ տարբերակը հայերենի բոլոր գրականություններում էլ՝ ընդհանուր խոսակցական, գրական լեզու թե բարբառներ, — այս բոլորի մեջ էլ ամենաշատ կիրառություն ունի: Բացառություն չի կազմում և գրաբարը. բավական է ծանոթանալ պրոֆ. Աբրահամյանի բերած փաստերին (տե՛ս վերոհիշյալ աշխատության 204—215 էջերը) հանդիվելու համար, որ գրաբարում ևս հարակատար գերբայը թե՛ իբրև գոյական, ածական ու մակարայ և թե՛ իբրև բաղադրյալ ժամանակի կազմի մեջ մտնող գերբայ (տե՛ս էջ 218) լայն կիրառություն ունի: Ուրիշ հարց է, թե ինչու՞, աշխուսա՞նանք իմ, հարակատար գերբայը գրաբարում բայական-բերականական հատկանիշով չի դիտակցվում, այլ արժեքավորվում է որպես գոյական, ածական, մասամբ և մակարայ:

¹ Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 298:

² Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի գերբայները և երանգ ձևարանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 193:

Այս իմաստով միջին հայերենում հարակատար գերբայը բերականական իմաստով ամբողջացած երևույթ է. նա հանդես է գալիս որպես գոյական, ածական և առավելապես՝ որպես ժամանակակերտ գերբայ:

Հայագիտության մեջ դիտված երևույթ է, որ հարակատար գերբայը ներգործական սեռի բայերի զեպրում արտահայտում է կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպային դրսևորման: Միջին հայերենի փաստերը առավել բան հաստատում են այդ տեսակետը: Այս շրջանի՝ միջին հայերենով ստեղծագործած հեղինակների մեր ձեռքի տակ եղած գործերում հարակատար գերբայի (հատկապես ածականական և գերբայական կիրառությամբ) ներգործական սեռի կիրառությունն չենք նկատել: Բացառություն են կազմում, թերևս, Հովհաննես Երզնկացու մոտ հանդիպող հետևյալ կիրառությունները.

«Ամենայն իրք, որ ինքն աշօք չէ տեսած,

Հայաստով հեռատրն ի ձեռն է եկած.

Յաստուծոյ սուրբքն ամէն հաստան են զոված,

Յաշարհէս հաստով յերկինքն են ելած» (ՀԵԹ, էջ 197):

Այս բառատողի մեջ չէ տեսած և զոված են հարակատար բայաձևերը թվում է, թե ներգործական սեռի են, թեև այդ որոշակիորեն չի կարելի պնդել: Գեո շինք խոսում այն մասին, որ կարող էին խոսքի հանգամանքի անհրաժեշտության հանգավորման արդյունք լինել: Մինչդեռ հարակատար գերբայի կրավորական իմաստով կիրառության հարյուրավոր օրինակներ ունենք:

Ներսես Ենորհալու առակներում հանդիպող ներգործական սեռի բայերի հարակատարները առանց բացառության կրավորական իմաստ են արտահայտում, ինչպես՝

«Եկեղեցին բարձր էր և լայն,

Անսին շինած էր (—շինված էր) անգերան» (էջ 570):

«Գրած է (—գրված է) ի գիրն ակտաբեր» (էջ 579):

«Է սրբած (—սրված է) զես հայելի» (էջ 582):

«Ի յարգանգէ մօրն անդբասի,

Սրբած էր (—մաքրված էր) Հօրն անդիլին» (էջ 569):

Ապա և՛ «Գայր նրկանակ մի գեղապանծ,

Աշխարհաշէն փրտան եփած,

Ի յեփողէն խրմէ խոռած (—խոռված՝ ծակված),

Եւ ի նմանէ դարձեալ լրցած (—լրցված)» (էջ 570):

Միջին հայերենում լայն տարածում ունի հարակատար գերբայի գոյականական կիրառությունը, որ երբեմն հանդիպում է Գ գոյականակերտ մասնիկով. այսպես՝ «Ամենայն որ զվկրածն (—մկրավածին) մկրտէ, նա կրօսն զկարգն, և որ ձեռնադրածն (—ձեռնադրվածին) ձեռնադրէ, նա նոյն է...» (ՄԳԳ, էջ 22): «Եւ ինքն զերդ քնացածն երևնայ, չունենայ իմացութիւն վասն ցատց մարմնոյն...» (Գրգս. Քնն. էջ 62): «Ջրազացք և այսպիսի շինուածք ազատ է» (ՄԳԳ, էջ 18): «Բայց պարտ է ամէն դատաւորաց գիտենալ, որ աշխարհիս ամէն վայելված էրազի նման է և անցատուր» (ն. տ. էջ 19): «Գլանայն լինին ի յառաջն, վասնզի ողնայնաբին զօրութն խլին, նայ կղանայ...» (Գրգս. Քնն. էջ 76—77): «ԶՔրիստոսի արեամբ զհաճու (—զեմվածն-րիս), եպիսկոպոսքն կու ծախեն» (ՅրԳ, էջ 276) և այլն:

Հարակատար դերբայով անականի կիրառությունն ունեն ինչպես նեղոր, այնպես էլ ներգործական սեռի բայերը. վերջիններք այս դեպքում են կրավորական իմաստով են օգտագործվում: Օրինակներ շեղոր սեռի բայերով. «Եւ թէ այս իբր արինս միջակ լինի և նօսք, նայ իւր ուրիցն ի մորթին լինի...» (Գրգու. Քնն. էջ 29): «Եւ յառաջ քան դամենն յիշենք զկատարած շանցն զխօսածանն» (ն. տ. էջ 45), «նա դու ծառ ևս ծաղկած, որ ևս բերի՜ պտուղ բարի: Մարաւած մարդ ու Բաղզած, ի բնդ ի մօտ ով հանդիպի...» (ԿՅԲ, 207): «Անենքն ևն զըրախա ծաղկած...» (ՀԵԲ, էջ 148):

Ներգործական սեռի բայերով՝ «Իսկ այն ցան, որ լինի ի խայն կեղևն, որ ի բերած (=բերված) յեղջիւրի նման է» (Գրգու. Քնն. էջ 80): «Թէ ի յաշխարհն շատ կենաւ, զինչ ժողոված (=ժողովված) հավարձով» ջուրն որ հոտիս» ((ՅրԳ, էջ 270): «[Մահն] անողորմ բաժանել զնոր պահակած (=պահված) հարսն ու փեսայ» (ն. տ. էջ 294): «Շիշ մի հայած (=հայված) ոսկի ի գետինն ի վայր վաթեցի» (ԿՅԲ, էջ 155): «Ձինչ գործած (=գործված) մեղք կայր յաշխարհն, զամէն զրտու Ստեղծողն առ իս» (ՅրԳ, էջ 265):

Միջին հայերենում հարակատար դերբայն առավելագույն հանդես է գալիս հարակատար զիջավոր և բաղադրյալ ժամանակների կազմության մեջ:

Գերակշռում են, անշուշտ, եմ օժանդակ բայի հետ կազմված ժամանակները: Այս դեպքում, ինչպես վերևում նշել ենք, ներգործական սեռի բայերը արտահայտում են կրավորական սեռի իմաստ, որտեղ վ ածանցը չի արտահայտվում: Այս խնդրի մեջ խորամուխ լինելիս կարելի է ասել նույնիսկ, որ վ ածանցի կիրառությունն ավելորդ է, բանի որ հարակատար դերբայի բուն իսկ առանձնահատկությունը՝ գործողության հետևանքի, ժամանակավոր կամ տեղական հատկանիշի դադար արտահայտելը, ավելորդ է գործնում է վ ածանցի կիրառությունը հարակատար դերբայում, որովհետև վ-ն այդ նույն իմաստները պիտի հաղորդեր դերբայածինը:

Հարակատար ներկայի և հարակատար անցյալի օրինակներ շեղոր սեռի բայերով. «Ոչ ևս՛ մեռած է՝ ոչ կենդանի» (ՅրԳ, էջ 541): «Երբ որ հովիւրն ևն մուրած բզգրուեալ հաւաս ս'նց ժողովեն» (ն. տ. էջ 276): «Մէկ էլ ի նոցա միջին էր մեռած է՝ անկած ի տեղին» (ՀԵԲ, էջ 156): «Մտաքըն ժողովիս ի վեր փըշեն, թէ կան դուար ու շեն մքսած» (ԿՅԲ, էջ 150): «Ես, Մմբատ անարժան... բազում աշխատեօք աշխատեցայ ի գտասասանապիրս... վասն զի այլալեւրպա՛ծ էր և հեռացած ի հին հայ բառն ի նորոյս հանց, որ խսի շէին ի հասկընայ» (ՍԳԳ, էջ 15), «Եւ այն մասն որ չէ բարբա՛ծ, արքն էլ զցուրտն» (ՄՀՁՄ, էջ 88) և այլն:

Օրինակներ ներգործական սեռի (կրավորականի իմաստով) բայերով.

- «Այն մարդն, որ Գալի՛հ ունի, յուրմէ իսկի չէ ձե՛ծած» (ՅրԳ, էջ 385);
- «Բայց պարտ է արթնուն կենալ՝ վերտաւ է ամէն պատրաստած»;
- «Արհնեալ յամենայն շընչոյ նա գոված [է]» (ն. տ. էջ 389);
- «Վասն սրբոց տաքելոցն, Որ ի բնն էն ձեռնադրած» (ն. տ. էջ 320);
- «Եւ նայ սասց, թէ իմ հորթոյն յեղուն հաւած էր» (ՎԱԱ, II, էջ 11);
- «Եւ կհկապ զդոսոյն և էր բարձած յոյժ» (ՎԱԱ, II, էջ 26);
- «Ով զիտութին ունի անբա՛ւ ի մարդկանէ ինքն էլ գոված» (ԿՅԲ, էջ 204):

«Յաշխարհիս այլ գեղեցիկ իրք չէ տեսած,
Ձինչ լինի առնն հընազանդ մէկ հրամանաց» (ԿՅԲ, էջ 219):

«Վասն այտոր է՛ սր շերման կարգին շարսն առ բազում դաս մարդկան ծածկած է» (ՄՀՁՄ, էջ 132): «Գաւառաց հարկն, որ սահմանովն որ սահմանած է, առնուն պարտնայքն» (ՍԳԳ, էջ 18):

Վերևի օրինակներում հարակատար ժամանակով օգտագործված բոլոր ներգործական սեռի բայերը կրավորական իմաստ ունեն. նրանցից մի մասում արտահայտված է ներգործող խնդրի՝ չլքումն չէ ձե՛ծած», «ի շնչոյ գոված», «ի մարդկանէ գոված», «ի Բե՛ն ևն ձեռնադրած», իսկ մյուսներում, թեև ներգործող խնդիրն արտահայտված չէ, բայց ենթադրելի է: Այսպես՝ «Եղբուն հատած էր», «հարկն սահմանած է» (ն'ւմ կողմից), «իբր չէ տեսած» (ն'ւմ կողմից) և այլն: Գուցե կարելի էր ենթադրել, որ սրանք ներգործական սեռի գաղափար են արտահայտում, այդ դեպքում կատանանք անիմաստ նախադասություններ, ինչպես՝ «Եղբուն՝ ինքը կորել էր», «հարկը՝ ինքը սահմանել էր» և այլն:

Հարակատար դերբայով կազմվում են նաև բաղադրյալ ժամանակներ լինիմ, կամ և ունիմ բայերի հարադրությամբ, ինչպես՝ «Իսկ թանին փոխան գարեջուր տուր, յոր եկիւմ լինի կենդանի խաշեփար, որ ի մանր և ի մեծ հանկերոյն սրբած լինի, և լուսցած լինի աղէկ բաղլըր չըրով և ջնչխած լինի» (ՄՀՁՄ, էջ 43): «Եւ իւրեանց դատանտն շատ է կամ լինի գարկած կամ կարած, կամ բախած, կամ զօթվածոցն խախտեալ...» (Գրգու. Քնն. էջ 28):

Կամ բայի հարադրությամբ, ինչպես ներգործական, այնպես էլ շեղոր սեռի բայերի հետ. «Ի Սահակայն կայր մորթին գրած» (ՍԳԳ, էջ 44): «Եւ թէ սպաննողն է լիլ պատճառ, նա զէտ սպաննող զինքն գատեն, զէտ որ գրած կայ ի շատ տեղ» (ն. տ. էջ 69): «Ձի փառլան ի ներքս ի մարմինն աղբիւմ կան, որ շինանեն ի դուրսն...» (ՄՀՁՄ, էջ 13): «Ես եմ աման հողէ՛ ՚ յիս լրցած կայ խաղինայ» (ԿՅԲ, էջ 188):

Անիմ բայի հարադրությամբ բաղադրյալ ժամանակներ առավելագույն հանդիպում են Մխիթար Հեթումցու «Ձերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ. «Յործած ի կրին քարն ջուր հասանի, նա զիւր տարութիւնն՝ որ ի ներքէլ պահած ունէր, ի զորս հանէ» (անդ. էջ 39):

ՆՆՔԱՆՈՒՅՏԱԿԱՆ ԿԵՐՔՆԵՐ

Պրոֆ. Ա. Արրահամյանն իր «Հայերենի դերբայներ և նրանց ձևարանական նշանակությունը» աշխատության մեջ պատմականորեն քննելով ենթակայական դերբայի էությունն ու արտահայտած իմաստները, ի տարբերություն նախկին սահմանումների, առաջի է այս դերբայի՝ իր բնորոշումով՝ հնական «ձոտովոր» սահմանումը. «Ենթակայական դերբայը ցույց է տալիս գործող կամ եղող, լինելու կամ գործողության կատարման համար ունակ լինելու բաղկան գաղափար՝ առանց առաերկայանալու» (էջ 228, բնագումար հեղինակին է):

Ենթակայական դերբայը դարբար լեզվում հանդես է գալիս -ոզ կամ -ոզ և -իչ վերջավորություններով: -Իչ վերջավորությամբ ձևի համարվում է աղբյուր հին: -Իչ վերջավորությամբ ենթակայական դերբայի նոր կազմություններ միջին հայերենում չեն հանդիպում, եղածները դարբարից սուղակիորեն

⁹ Արտն Արրահամյանն իր «Բնական քերականության մեջ արևմտահայ գրականում -իչ ձևակազմի կազմվող ենթակայական դերբայների մասին հրում է. «Թան աշխարհարար բայերն է ոչ մեկը կրնա իչ ասելու, ինչպես են՝ զոգի, ուզի, բնի, փնտակ կեն» (անդ. էջ 101):

անցած ձևեր են: Մինչդեռ ող-օղ վերջավորություններով ենթակայական գերբայինները միջին հայերենում շատ ավելի լայն կիրառություն ունեն, քան գրաբարում: Ենթակայական գերբայով հանգավորվող բանաստեղծական խոսքի եմուշներ կան միջին հայերենում, ինչպես՝

«Պահոց պանդ շեմ, այլ կերող,
Որոց, այրեաց եմ ես զբերող,
Ընդ խնդպողս եմ ես լացող» (ՉԵԲ, էջ 175):
«Թէ տղայ էր մտօք, կաթինը սիրող,
Ես լինիմ ձեզ ծնող՝ կաթն արբուցանող,
Թէ իմաստուն էր՝ մտօք հօրս ու կարող,
Հաստատուն կերակրող լինիմ ձեզ պատուող» (Ն. Մ. էջ 185—186)
և այլն:

Հայագիտության մեջ վեճ է եղել այն մասին, թե ենթակայական գերբայի որ վերջավորությունն է ավելի հին ու բնորոշ՝ -օղ, թե -օղ: Միջին հայերենի համար այդպիսի հարցադրումը սեղին չէ. բավական է նայել հենց վերին օրինակին, որտեղ նույն տեղում ունենք կ՝ օղ, կ՝ -օղ վերջավորությունները, այն է՝

«Ես լինիմ ձեզ ծնող՝ կաթն արբուցանող»:

Այսպես էլ Ֆրիկի մոտ. «Զարին առեցող կղէր, որ շիբիք բաժին գեհե-նոյն (Գիվան, էջ 490), բայց կ՝ «Գու ես բաշխաղ ամեն բարեաց» (Ն. Մ. էջ 421), կամ՝

«Մէկն է արգար, ՚ւ առաքինի,
Պանաղ, նրզնող, լաւ, պիտանի» (Ն. Մ. էջ 548):

Օրինակներ մյուս հեղինակներից՝ զեօղ (ՎԱԱ, էջ 272), Բարշօղ (Ն. Մ. էջ 171), ծեօղ (Ն. Մ. էջ 15), բայց կ՝ զարեցողսն, զարեցող (Ն. Մ. էջ 15), ուսցնող (ՄԳԳ, էջ 45), բառմեցնող (ՄՀՋՄ, էջ 37), պարեկնացնող (Ն. Մ. էջ 100), ցամախեցնող (Գրգս. Քնն. էջ 36) և այլն, և այլն:

Այսպիսով, կիրառական իմաստով այս երկու մասնիկները իրարից տարբերություն չունեն, առավելագույն ա՛>օ, ազա և օ>օ պատմական հնչյունափոխությամբ բոլորովին նույնացել են:

Ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենում ենթակայական գերբայ կազմվում է ամեն մի բայից:

—Ող և -օղ վերջավորությունները ավելանում են ներկայի և անցյալի հիմքերի վրա. հետևողականորեն ներկայի հիմքի վրա են ավելանում ե, ի, ու խոնարհման (պարզ թե ածանցավոր), ինչպես նաև պատճառական բայերում, ինչպես՝ բաշխաղ (ՖրԳ, էջ 421), խարղ (ՉԵԲ, էջ 186), զեօղ (ՎԱԱ, II, էջ 272), գտնողին (ՄԳԳ, էջ 20), սպանող (Ն. Մ. էջ 26), առնող (Ն. Մ. էջ 44), ցամախեցնող (Գրգս. Քնն. էջ 36), ուսցնող (ՄԳԳ, էջ 45) և այլն: Սակավ բացառություններին պետք է նշել Ֆրիկի մոտ հանդիպող ամեցող (էջ 49), Հեցառություններից պետք է նշել Ֆրիկի մոտ հանդիպող ամեցող (էջ 49), Հեցառություններից (էջ 4) ձևերը, որոնք կազմված են անցյալի հիմքից: Սրանց հակառակ հետևողականորեն անցյալի հիմքի վրա ավելանալով է կազմվում ա խոնարհման բաղերի ենթակայականը, ինչպես՝ խնդպող (ՉԵԲ, էջ 175), ցանկացող (Ն. Մ. էջ 185), (զ)բացող (ՄՀՋՄ, էջ 75):

Միջին հայերենում ևս ենթակայական գերբայը բայի խոնարհման համակարգի մեջ էր մտնում, այլ եմ, լինիմ և այլ օժանդակ բայերի հետ կազմում է, այսպես կոչված, սպորտեցիալ ժամանակներ, ինչպես՝

«Որք մանկունք էք, տղայք, ուսման ցանկացող,
Եղբւոյմ Աստուծոյ ու մարդկան սիրող,
Յուսացէք դուք յԱստուած, որ բարեացն է առող...» (ՉԵԲ, էջ 185):

Վերին օրինակներում սիրող և առող ենթակայական գերբայները ստորոգյալական վերադրի արժեքով են, առաջինը՝ Եղբւոյմ սիրող՝ «սիրեցեք» պորտեցիալ հրամայականի իմաստով է, իսկ երկրորդը՝ առող է՝ «առախ է» պորտեցիալ ներկա ժամանակի իմաստով:

ՃԵՏԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ

Այժմ հայագիտության մեջ ընդունված տեսակետ կա, որ ժխտական գերբայը հատուկ է ոչ միայն արեևհայոց գրականին, այլև, գրաբարը բացառած, հայերենի բոլոր գրականներին, առավելագույնս, կը հյուսիս բարբառներին: Պրոֆ. Ա. Աբրահամյանը, մանրամասնորեն ուսումնասիրելով ժխտական գերբայի գրականները հայոց լեզվի մեջ ամբողջությամբ, ի տարբերություն ժխտական գերբային արված նախկին սահմանումների¹⁰, ավելի է հետևյալ առավել համապարփակ ու միշտ սահմանումը. «Ժխտական գերբայը ցույց է տալիս մի գործողության կամ եղելության գաղափար, որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով՝ (ընդգծումը հեղինակինն է)»¹¹:

Արդ, ինչպե՛ս է ձևավորվում ժխտական գերբայը և ի՛նչ արտահայտություններ ունի միջին հայերենում: Ժխտական գերբայը ձևավորվում է անորոշ գերբայից և չ ժխտական մասնիկով կազմված օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերից. ինչպես, օրինակ՝ «...Ձի երբ ի սրբոյն ի սահմանէն չեն ի պատկաղի (—էն պատկառում), նա ի մեռայ սրպէ՛ս» (ՄԳԳ, էջ 27): «Եւ չեն ի հասկանալի (—չեն հասկանում) մըտօք ճանչել բան ծածկարար» (ԿԵԲ, էջ 201): «Ձեր ի գիտել (—չէր իմանում), թէ մերիկի խատառակ էր, և յուրացեալ հմուտ ի քաղաքն» (ՎԱԱ, II, էջ 51):

«Է՛ր շե ի լալ (—լաց շե լինում), ՚ւ լչե ի] ապաշխարել,
Եւ գրո անշափ մեղքն լչե ի] Բաւե]» (ՖրԳ, էջ 409):

Վերին օրինակներում, ինչպես կարելի է հասկանալ մտքից, չեն ի պատկաղի, չեն ի հասկանալ, չէր ի գիտել, շե ի լալ և այլ արտաձևերը սահմանականի ներկա և անցյալ անկատար ժխտական ձևեր են, արտահայտված ի նախորդով և անորոշ գերբայով: Իսկ ի՛նչ կազմավորում է սա: Ինչպես ծալյանի է, հայ լեզվամտածողությամբ ներկա ժամանակի գործողության մեջ լինելու (ներգոյականի) գաղափար է արտահայտում և, ինչպես ցույց է տալիս պրոֆ. Ա. Չարիբյանն իր «Լեզվական մտածողության տարասեռականները հայերենում» հոդվածում (ՀՄՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատոր II, Երևան, 1947), այս լեզվամտածողությունը հատուկ է հայերենի

¹⁰ Արդի բնորոշամբ ժխտական գերբայը կազմում է միայն պայմանականի ապոտոս և անցյալ ապոտոս ժխտական ձևերը (կտրեմ-չեմ սիրի, կտրեկե-չի սիրի):

¹¹ Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի գերբայերը և նրանց նկարագրական էջանակությունը, Երևան, 1953, էջ 261:

բայր հատվածներին ու դրոսորուներին: Միջին հայերենում կան փաստեր, որ այս կազմութունները նույնիսկ միայն ժխտական ձևերին հասուկ չեն եղել: աչպես՝ Մխիթար Հերացի բժշկագետի «Զերմանց մխիթարութիւն» աշխատութեան մեջ գտնում են ի նախգիրքում և անորոշ դերբայով ներկա ժամանակի կազմութեան հաստատական հետևյալ օրինակները. «Եւ երբ հրանդուրթին եփի, երակ առ, զի մաղծն ի յաշիլի լինի» (էջ 119): «Նասիթի ցիրականն և գառանձին գործն է ի ասել, զոր անուանեն յատուկ» (ն. տ. էջ 133): Իսկ Վարդան Այգեկցու առակներում ունենք հետևյալ առավել հստակ օրինակը. «Երբև եհաս առաջի կայտն, առ աղունն ի միտս իւր, դառնում և տեսնում զիսէլ-փան, թէ ի գալ է» (ՎԱԱ, II, էջ 38):

Մեծամաստակ հայագետ Արսեն Այտընյանը, ինչպես վկայված է «Քննական քերականութիւն» աշխատութեան մեջ, նման օրինակներ է նկատել Հովհան Մամիկոնյան պատմիչի մոտ. «Տոյնք են ի գալ, Յայրել էր ի տալ» (Նախաշաղիղ, էջ 126), մի բան, որ, իր բարեբով սասած՝ «այդի բացասական բայերուն կազմութեանն համար կարևոր է» (ն. տ. էջ 126):

Վերևի ձևերը նույնպես ներգոյականի կազմութուններ են. զբարբորում ներգոյականի գաղափարն արտահայտվում էր նույնիսկ արականի կամ հայցականի վրա ի նախդիր ավելացնելով: Այստեղ ի նախդիրն ավելացած է հայցական ձևի վրա, բանի որ զբարբորում անորոշ դերբայը ենթարկվում է ու արտաքին թեքման, որի ներգոյականի իմաստը միայն հայցականի վրա ի նախդիր ավելացնելով է կազմվում:

Ժխտական դերբայը, սակայն, միջին հայերենում միանգամ արտահայտություն չունի. ինչպես որ ուշադիր կենդանի զուրա ենք դրել դերբայի կիրառությունները, փաստերը մեզ թույլ են տալիս հետևյալ շորս տեսակների մեջ խմբավորել դերբայի դրսևորումները.

ա) Ի նախգիրքում և անորոշ դերբայով.

բ) Ի նախգիրքում և անորոշ դերբայի ի ձայնորդի բ-ի հնչյունափոխված ձևով.

գ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով (առանց ի նախդիրի):

դ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի ի ձայնորդի բ-ի հնչյունափոխված ձևով (առանց ի նախդիրի):

Նկատի ունենալով, որ 2-րդ և 4-րդ տեսակներում 1>բ հնչյունափոխությունը բերականական արժեք չի ներկայացնում, կարելի էր նաև երկու մեծ խմբերի բաժանել. Օրինակներ՝

ա) Ի նախգիրքում և անորոշ դերբայով (սահմանական ներկա և պայմանական ապաստի ժամանակներով). «Զի ամենեկին օրէնքս չէ ի տալ (=թույլ չի տալիս), որ բիճն երէց լինի, այլ՝ որպէս վերադրեցաք՝ երբ յազիկ ազգէ լինի» (ՄԳԳ, էջ 33):

«...[Որ] այրիկն լինայ պիղծ, հայնց որ, այնոր բանի չէ ի կարել (=չկարողանա, հնարավոր չլինի) ի հուն իջնել... և չկարէ ապրեցնել զիմնն, նա կու հրամայէ օրէնքս, որ բաժնեն» (ն. տ. էջ 49):

«Այս անուանեցին զայս չերմս ի յայն տեղին՝ որ չէ ի յերևել, (=չի երևում) և պակաս է, զի այս անունս ընտ գայն գորն, և գայն տեղին, որ չէ ի յերևեալ» (ՄԶՁՄ, էջ 110):

«Եւ երբ տեսանէ բժիշկն, որ այս պատահմունքս ի հրանդութեան սկիզբն

են, և չեն ի պակասել (=չեն պակասում) և ոչ ի յանկալն (=չեն անկանում), ապա զհունայ՝ որ հրանդութիւնն զես ի յատաշին ժամանակն է և ի սկիզբն» (ն. տ. էջ 137):

«Քաղաքս և հայրապետք զԱռաւմտս կրկին բարկացնեն.

Երբ յիրար չեն ի հաշտիլ (=չեն հաշտվում), զԱռաւմտս սրտ՝ զհայրապետքս» (ՓԳԳ, էջ 278):

«Զար հանապաղ զու կաս ի թուն՝ չես ի ասել (=չես ասում) թաք կայ գալոյ» (ն. տ. էջ 307):

«...Զմասնէհարն մտն կու անու, քարն, ջուրն կամ փուշն չեն ի անուլ (=չեն անում)» (ՎԱԱ, II, էջ 306):

«ԶՏուտ մի ի հորն էր անկել և էր որն շարաթ և եկեալ քրիստոնեայ մի, թե բերեմ շուան և հանեմ զբեղ ի հորուս. և ասաց, թէ չեմ ի կամիլ (=չեմ ուզում), զի շարաթ էր» (ն. տ. էջ 310): «...Եւ թագաւորն բոկ էրեկ և ասաց, թէ չես ի խօսիլ (=չես խօսի), ես զիս կու սպանեմ» (ն. տ. էջ 315): «Անի առակաց, թէ զային ձագն բունեցին... և ասեմ՝ ասայ շեշ. նա առէ. ես կու երթամ, զի՞ տեսցաւ, այլ չեմ ի հասնիլ (=չեմ հասնի)» (ն. տ. էջ 321):

Օրինակներ անցյալ անկատարով.

«Ես, Սմբատ... բազում աշխատանքս աշխատեցայ ի դատաստանագիրս...

վասն զի աշխարհայած էր և հետագած ի հին հայ բառն և նորոշս հայնց, որ խելի չէին ի հասկնալ (=չէին հասկանում)» (ՄԳԳ, էջ 15):

«...Քայց թէ բնդ ծուլութենէ շինեալ գնողն զբերն և ի ծալն կենայ աւերն, նա գնողին է. զի է՛ր չէր ի հայել (=չէր նայում) գումաշն» (ն. տ. էջ 63):

«Ազգանն զտաւ կոշա մի թարխնայ... և կամէր ճաշակել և էր այդոցն. և յայնժամ արձակ չէր ի հաշակել (=չէր ուտում)» (ՎԱԱ, II, էջ 30):

«Եւ յորժամ կերթային, որ հաց հանէին, զուան չէր ի բացվիլ (=չէր բացվում)» (ն. տ. էջ 304):

«Սուրբ հայր մի ի դժոխոցն ահէն ոչ ի յազօթբ... չէր ի հանգլիլ (=չէր հանգստանում)» (ն. տ. էջ 305):

Ինչպես կարելի է տեսնել վերևի օրինակներում, ե, ա, ու խոնարհման բայերն անորոշ-ժխտական դերբայում ունեն՝ 1) ել (չես ի ասել, չէր ի ճաշակել, չէ ի կարել), 2) ալ (չէ ի տալ, չէ ի յերեւում, չէին ի հասկնալ), 3) ուլ (չեն ի անուլ) վերջավորութիւններ: Մինչդեռ ի խոնարհման բայերն ունեն կ՝ իլ (չեմ ի կամիլ, չէր ի հանգլիլ, չես ի խօսիլ), և՛ ել վերջավորութիւններ՝ չէր ի հայել, չէր ի յերևել: Մյուս կողմից՝ և խոնարհման բայերը կրավորական իմաստով օգտագործվելիս ենթարկվում են ի խոնարհման և ունենում են կրավորական վ՝ օժանց. չէր ի բացվիլ:

Վերևի օրինակներում չէ ի կարել, չեմ ի հասնիլ զրված են պայմանականի ժխտականի իմաստով: Հայտնի է, որ արևմտահայ գրականում և ընդհանրապես Կը ճյուղի բարբառներում սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակներն օգտագործվում են նաև որպէս պայմանական եղանակի ժամանակներ: Ասենք, այս երևույթը միջին հայերենին կամ արևմտահայերենին միայն հասուկ չէ: Ինչպես վկայում է Ա. Այտընյանը՝ «Մատենագրութեան սկիզբները՝ բուն բնաբ գրոց մեջ (ընդգծումը մերն է—ՍԱ) բառական յահարեալ ո՞՞ է՛ ել առաքեմ զբեզ, զեմմ. եկ երբամբ շրջիմ. թող անիծանէ. Ասե՛մ զի իջցէ (քահ՛նք որ իջնայ)» (ՔՔ, էջ 74): Ահա և մի օրինակ Եղիշեցի. «Յորժամ արգելուս և փակիս զամենեանս ի հետաքր օտարութեան, կատարին (=կկատարվեն) խորհուրդ կամաց քոց» (Եղիշե, I լեզանակ):

Պատճառը հայտնի է: Պրոֆ. Հ. Աճառյանը հստակորեն է ձևակերպել, «Պարբերը թեև ստորագասականի ներկա ժամանակը ունի, բայց ստորագասականի անցյալ անկատարի (իմա՝ անցյալի սպասող—ՍԱ) համար սահմաններն ձև չունեն, և այդ սպասող լրացնում էր՝ նրա փոխարեն գործածելով սահմանականի անկատարը: Սահմանականի անկատարը իբրև ստորագասական գործածելու այս ձևը ազդեց նաև ներկայի վրա և շուտով սկսեցին սահմանական ներկան էլ գործածել իբրև ստորագասական ներկա (Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 4, Ա մաս, էջ 386)»:

բ) Ի նախդիրով և անորոշ դերբայի և ձայնորդի Ե-ի հնչյունափոխված ձևով:

«Են գան մարդին ի վերայ և բռնեն. զի ի ծան շեն ի կարե» (=չեն կարողանում) էջ 319) (ՎԱԱ, էջ 319):

«Շուն եմ առ դուրս քո բազան»
 Չեմ ի հայցեր (=չեմ հայցում) բզանց մանկանց» (ՖրՊ, էջ 487):

«Ես չեմ ի տար (=չեմ տալիս) հանց պատասխան,
 Դու հանց անսիրտ լինչի՞ եղար» (Ն. տ. էջ 476):

«Ես չեմ ի տար (=չեմ տալիս) հայտնի մի
 ոչ հանց մի իր հոգուն համար» (Ն. տ. էջ 480):

գ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով (առանց ի նախդիր հանգու գալու):

«Չի տալ (=թույլ չի տալիս) հրաման օրվերս, որ ծառայ ի մարդոյ ժառանգութիւն անեն» (ՍԳԳ, էջ 33):

«Բէ որ կարգաւոր արեղայ... միս ուտէ... պարտ է դատել... չկայ հրամանք, որ ուտէ. և տես զայլազգիսն որ շեն ուտել (=չեն ուտում)» (Ն. տ. էջ 37—38):

«Որդունքն շեն ինձ ողորմիլ (=չեն խղճա) թող թէ հազար երդումքն տամ» (ՖրՊ, էջ 253):

«Մինչ ամէ դմահն ու մաւա է և անողորմ գրաւորն գայ...
 Չի տալ (=չի տալիս), թէ պարտական է կամ ազրատ և կամ տրդայ,
 Չի խղճալ (=չի խղճա) օտարական, թող թէ հազար դառն կու լայ,
 Չի բռնել (=չի բռնի) թագաւոր, իշխան, ոչ զայնոսիկ որ կու մուրայ
 ...Մահըն կուգայ յանկարծակի, այլ չի թողուլ (=չի թողնի) որ նա շրնշայ» (Ն. տ. էջ 297):

«Օձի նման է մեղքն, որ ի ծակն սուր կու մտանէ, և դուրս շեն կարել (=չեն կարողանում) բարշէլ (ՎԱԱ, էջ 119):

«Են ատը միում աւէ եզն մի առ միտ եզն, թէ ի՞նչ տունեմ. զի անխնայ կու լծին զիս ամէն որ և շեն ողորմիլ (=չեն խղճում)» (Ն. տ. էջ 160): «Աւէ այրն, ո՞վ գայն զիմ իշուկս կորուսել եմ և չեմ գտնուլ» (=չեմ գտնում) (Ն. տ. էջ 238):

¹² Ապացույցի համար բերենք զբարբայր մի բանի օրինակ.
 «Բայց թէ գիտի (=իմանալի) թէ յայտն հետ կայցէ յուրան իմում... մեծարանք արևակի (=կարմակի) զնա խաղաղութեամբ չիբ աշխարհն» (Փ. Բուզանդ, IV, 97):
 «Ես զմիսն եթէ սիրտ ուրուք անեայ (=սիրտեր) և ուտե (=ուտեմ)՝ ոչ վնասե (=չեմ վնասի)» (Նզդի, I, 66):
 «Չի արեւափ կուտանայ ի վերայ, որ և տեղի չգտանելն՝ որ չեղ ելանելն (=եկնելն, զուր գայն)» (Հովհ. Մամիկոնյան):

«Են վէմն չեմ շարժիլ (=չեմ շարժվում)» (Ն. տ. էջ 171):
 «Են առ ազուսն. թէ դայ սիրուն ունէր կամ ականչ, չի լսեց զքո գոռայն և գերծառ ի ձեռաց քոց, նայ չեմ կրկին լեսու դառնալ» (=չեմ վերագոռնալ)» (Ն. տ. էջ 6):

դ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի և ձայնորդի Ե-ի հնչյունափոխված ձևով:

«Ֆրբի՛կ, լունիս խելք իմատի, է՛ր շես լրսեր (=չես լսում) դու խրատի» (ՖրՊ, էջ 290):

«Հազար ցեղ թապիր կածեմ թէ (բայ)ներուս եկնիմ ի հուն,
 Ժամ ժամ ի դէպ կապ կուգա, չի բնկնիլ (=չի բնկնում) իմ շուրն ի յառուն» (Ն. տ. էջ 342):

«է՛ր շես երբար (=չես գնում) ի միտք ի վար,
 է՛յ, գերեվար մարդ ու արխամար» (Ն. տ. էջ 478):

«Ես այս են բանք նորա, որ թէ գմորթ նորա ի հուր արկանեն, նա չի այրի» (=չի այրվում, չի այրվի)» (ՎԱԱ, II, էջ 101):

«Յոցանէ առակս, թէ հին թշնամին նոր օրբելի չէ (?!) լինի» (=չի լինի)» (Ն. տ. էջ 228):

«Թշուն բնութիւն և սահմանք է, որ ի դիժար տեղ անկանի և կամ ի շաղխ խրի, այլ ան տեղովն չի գնար (=չի գնալ)» (Ն. տ. էջ 156):

«Եմ սիրտ վատին մի՛ լսեր ու շարին տեղ իսկի մի՛ տար.
 Յայս աստրնոսիս վերայ վառն իսկի մարդոյ չի մնար» (ՀԵԲ, էջ 156),
 «Եմ՝ Յովաննէս... Չես ուրաւար զքո աստուած,
 Ու շես լսեր դու մեկ խօսաց» (Ն. տ. էջ 170):

«Երիտա խղճուկ եմ ու անխոյս.
 ...Չերկիր եզերն հանփուս» (ԿԵԲ, էջ 162):

«Չի թէ մարդ զգտնին ի կշեղն շրնէ, գանձ չի գտնուր (=չի գտնի)» (ՂԶԵԲ, 2-րդ մաս, էջ 327):

Մենք հատուկ նպատակով այսբան շատ օրինակներ բերեցինք ժխտական դերբայի այս կիրառության համար՝ աշխատելով տալ բաշխմանի դրսևորումները այս շրջանի հեղինակների գործերում:

Առաջին իսկ հայացքից կարելի է տեսնել, որ սերտ ազդեցություն կա միջին հայերենի այս վերջին ձևերի և արևմտահայ գրականի սահմանականի ներկա, անցյալ անկատար և պայմանականի ժխտական ձևերի կազմության մեջ: Արտեն Այաբնյանն իր «Քրնական քերականություն» մեջ արևմտահայ գրական լեզվի ե, ի, ա (պարզ և անանցյալ) խոնարհման բայերի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների խոնարհման հետևյալ տախտակն է տալիս.

Ներգործական		Բ լծորդ	
Ա լծորդ		Բ լծորդ	
Չեմ (չի՞) լսեր	Չեմ (չի՞) լսեր	Չեմ սորվիր	Չի սորվեր
Չես (չի՞ր) լսեր	Չես (չի՞ր) լսեր	Չես սորվիր	Չի սորվիր
Չի (չէր) լսեր	Չի (չէր) լսեր	Չի սորվիր	Չի սորվիր
Չենք (չէինք) լսեր	Չենք (չէինք) լսեր	Չենք սորվիր	Չիսք սորվեր

¹³ Նույն առակի մեկ ուրիշ տարբերակում բաշխման օրինակներ չի գտնույլ ձևով (Ն. տ. էջ 7):

Չէք (չէիք) յսեր	Չէք սորվիր	Չէք սորվեր
Չեն (չէին) յսեր	Չեն սորվիր	Չէին սորվեր
Գ լծորդ		Գ լծորդ
Չեմ (չէի) կարգար	Չեմ (չէի) մոռնար	
Չես (չէիր) կարգար	Չես (չէիր) մոռնար	
Չի (չէր) կարգար	Չի (չէր) մոռնար	
Չենք (չէինք) կարգար	Չենք (չէինք) մոռնար	
Չէք (չէիք) կարգար	Չէք (չէիք) մոռնար	
Չեն (չէին) կարգար	Չեն (չէին) մոռնար (անդ էջ 83) ¹⁴	

Ահա և Առատուրների բերականության սահմանումը. «բացասական բայերուն սահմանական ներկան ու անկատարը կը կազմուին եմ բային բացասականովը (չեմ, չէի), և ամեն միկ բայի բացասական ձևովը:

Բայերուն բացասական ձևը կը կազմուի աներեւոյթին վերջի լ գիրը Ե-ի փոխելով. ՍԻՐԻՆ, չեմ սիրեր, չես սիրեր, չի սիրեր (փոխանակ՝ չէ սիրեր): ԽՈՍԻՆ, չեմ խօսիւր, չես խօսիւր, չի խօսիւր, ԿԱՐԳԱՆ, չեմ կարգար, չի կարգար¹⁵:

Արեւմտահայ գրականի ձևերը ամբողջութեամբ համընկնում են միջին հայերենի ձևերին: Նույնիսկ ի խոնարհման բայերի անցյալ անկատարի ժխտականի ի> և հնչյունափոխութեամբ՝ չը փոխելու: Ինչպէս տեսնում ենք, երկու բերականներն էլ ու խոնարհման բայերի օրինակներ չեն բերել: Գո հասականացի է. բանի որ արեւմտահայ գրականում՝ «Այ վերջացող բայերէն միայն բողոյ և գրօնույլ բայերն են որ ամբողջուպէս կը խոնարհուին... և երկուքն ալ իրարմէլ տարբեր ձևեր ունին կատարչայի և երամայականի մէջ»,—բացատրոված է Առատուրների բերականության մեջ (ն. տ. էջ 163):

Արդ, այս բոլոր շորս ձևերից ո՞րն է ավելի շատ օգտագործվում: Բերված օրինակներից կարելի է տեսնել, որ ավելի շատ օգտագործվում են 1-ին, 3-րդ և չորրորդ տեսակները: Մյուս կողմից՝ զժվար է առել, թե ժամանակագրական կարգով ո՞րն է սկզբնականը, բանի որ նույն հեղինակն օգտագործում է 2-րդ, 3-րդ և նույնիսկ բոլոր 4 ձևերն էլ. այսպէս, օրինակ, Վարդան Այգեկցու առակներում գտնում ենք՝ չեմ ի կամիլ (էջ 310), չես ի գալ (էջ 312)—1-ին տեսակ. չեն ի կարեր (էջ 319)—2-րդ տեսակ. չես վախիլ (էջ 217), չեմ գրտնուլ (էջ 238)—3-րդ տեսակ. չես հաստար (էջ 12), չի այրիւր (էջ 101)—4-րդ տեսակ: Նույնը և Ֆրիկի մոտ. չեն ի հաշիլ (էջ 278), չես ի սակ (էջ 307), չես ի լալ (էջ 409)—1-ին տեսակ. չեմ ի դիտեր (էջ 252), չեմ ի տար (էջ 476), չեմ ի հայցեր (էջ 48)—2-րդ տեսակ. չեմ իմանալ (էջ 296), չի բողալ (էջ 297), չեմ էլենի (էջ 242)—3-րդ տեսակ. չես առեր (էջ 375), չես լսեր (էջ 290), չի բնկեր (էջ 342)—4-րդ տեսակ:

Մակայն ակնբոյսի է մի բան. ձգտումը 4-րդ ձևն է՝ օժանդակ բայով և անորոշ գերբայի լ>ը հնչյունափոխութեամբ, մի բան, որ, ինչպէս վերևում

ցույց տվեցինք, արեւմտահայ գրականում բնորոշուր և միակ տիրապետող ձևն է:

Այս շրջանի գրականության մեջ արդի հայերենի պայմանականի ժխտական ձևերը հիշեցնող բայաձևեր չեն հանդիպում, ձևերի տակ եղած փաստաբան միայն նրբորդ զեմքով ձևեր ունենք, որ բնականորեն պետք է այդպիսի վերջավորութիւններ ունենային:

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Միջին հայերենն ունի 5 եղանակ. սահմանական, հրամայական, բղձական, պայմանական և հարկադրական: Մենք նպատակ չունենք այստեղ բայի եղանակների տեսական քննութիւն անել, բանի որ արդի հայերենի բայի և խոնարհման տեսութեանը նվիրված աշխատութիւններում (Չ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսութիւն, Երևան, 1953. Ն. Անադայան, Հիակատար բերականություն հայոց լեզվի համեմատութեամբ 562 լեզուների, 5. 4, Ա գիրք, Երևան, 1959, Բ գիրք, Երևան, 1961, Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962 և այլն) այդ հարցը բազմազանորեն քննված է, մանավանդ որ այդ երևութիւնների հիմքը նույն «աշխարհարար» լեզվամտածողութիւնն է:

Գրաբարի համեմատութեամբ մենք միջին հայերենում ունենք 3 նոր եղանակներ. բղձական, պայմանական և հարկադրական՝ իրենց լեզվական, ձևախմբատարի առանձնահատուկ արտահայտութիւններով: Մյուս կողմից՝ անգործական է դարձել գրաբարի ստորագրական եղանակը, թեև այս շրջանում ստորագրականի I և II ապառնիքների կիրառութեանը տեղ-տեղ հանդիպում ենք: Այդ մասին իր տեղում կտեսնենք:

Այժմ քննութեան ենթարկենք եղանակները առանձին-առանձին:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Միջին հայերենում սահմանական եղանակն ունի 9 ժամանակ. ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալ ապառնի, վաղակատար, անցյալ վաղակատար, հարակատար, անցյալ հարակատար և անցյալ կատարչայ: Գրաբարի համեմատութեամբ այստեղ ունենք 6 նոր ժամանակներ, համապատասխանաբար կազմված ապառնի, վաղակատար և հարակատար գերբայներից՝ եմ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար բայաձևերի ավելացումով:

Սահմանական ենեղա և անցյալ անկատար ժամանակներ.—Միջին հայերենում սահմանական եղանակի ներկան ու անցյալ անկատարը, որպէս օրենք, կազմվում են գրաբարյան ներկայի ձևերի վրա կու ավելացնելով. ինչպէս՝ «Եւ աւէ առիծն. նենկաժոտ աղուտս. եկ ի վայր. և սասց. ոչ գամ. վասն զի զհնա մտնոցն կուտեսանեմ և զէն ոչ. վասն զի զամենայն կու ստակեցուցանել առիծն» (ՎԱԱ, II, էջ 5):

«Թու ես քաղաք Չինումաշին,

Մարդիկ ի բեզ յուշ կու մրճունն» (ՉԵԲ, էջ 135):

«Մեռալ Սունայ և մնաց .Բ. որդի և արտ մի իրեանց հայրենի և յամէն տարի կու ցունէին և ի կայնի կէս կու առնէին և՛ տուն մի է[ր] իրեանց միջնակով՝ զկէսն ի մէկի զիհն կու լնուին... երբ կու առնէին, նայ փոքր եղբայրն

¹⁴ Այստեղյանը նույնպէս ընդգծում է ժխտան գերբայ: Ահա երա գերողութիւնը. «Ետտ համայնայ սխալ է՝ չը տեսնուի. չէր գործը. չէի լսեր. չէին կատարեր. չէին կատարեր. փոխանակ րտեւո՝ չը տեսնուի կը—որ հասցը կեամ է բացասական ձևը չեմանալու (բողոքումը մեր է—ՍԱ) և անկատարի չես չփոխելն (ՔՓ, էջ 86):

¹⁵ Չապլի Ն. Առատուր, Գործնական քննակննութիւն արդի աշխարհարարի, Բ գիրք, Գ. Պոլիս, 1915, էջ 175.

թի մի .Բ.ս ի իր բաժնէն կու առնուր, ի մեծ կորօրն ի դի՛նն կու լնուր...» (ՎԱԱ, II, էջ 304):

«Կարի տեսա ես շատ կարուան,
Որ կու ինչայր ի նարասան» (ՆՇԲԶ, էջ 576):

Ինչպես որ բարբառների ճշուրդային պատկանելիությունը որոշող հիմնականում սահմանական ներկայի ու անջայլի անկատարի կազմությունն է, այնպես էլ գրաբարն ու միջին հայերենը սահմանազատող այս զարմանալիք կու մասնիկն է, որ Արսեն Այաթնյանի ճշգրիտ բնութագրումով «արդի լեզուին զլնուար կերպարանափոխ ընողն եղած է» (ՔՔ, էջ 75—բնագծումը մերն է—ՍԱ): Գրաբար լեզվով գրված օվիկրանածավալ գրականության մեջ թե՛ հին ժամանակներում և թե՛ ընդհուպ մինչև մեր օրերը չի կարելի գտնել կու մաս-ժամանակներում և թե՛ ընդհուպ մինչև մեր օրերը չի կարելի գտնել կու մաս-ժամանակներում ոչ մի բայաձև, մինչդեռ միջին հայերենով գրող ոչ մի հնդի-նակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած ներսես Շնորհալուց մինչև Ֆրիկ, նրզնկացիները և հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները:

Արդ՝ բնականաբար հարց է ծագում, թե ինչպե՛ս, ե՛րբ և ինչո՞ւ ստեղծվեց այս մասնիկը: Այս բոլոր հարցերին էլ Արսեն Այաթնյանը պատասխանել է իրեն հատուկ գիտական մանրակրկիտությամբ և խորաթափանցությամբ: Ճիշտ է, հայագետները հետազոտում են բնության են սակ այս հարցը, սուղ են բաշել նոր պիտական ենթադրություններ, սակայն ցարդ ամենագիտական ու ամենահամոզիչը, մեր կարծիքով, մտնում է Այաթնյանի տեսակետը¹⁶, որը և ընկած է մեր շարագրանքի հիմքում: Վերևում ասացիք, որ դեռևս V դարում նույնիսկ «բուն քնտիր գրոց մեջ»¹⁷, գրաբարի ներկա և անջայլ անկատար ժամանակները գործածվում էին միաժամանակ ստորագրասկան և կանոնակիր ստանդարտները: Հետագա դարերում գրաբարի ստորագրասկանի I և II պարսիկների գործածությունից դուրս գալու հետևանքով խառնակություն և անորոշություն առաջացավ լեզվի մեջ նույն բայաձևի մեջ (սիրեմ-սիրում եմ, սիրեմ, կսիրեմ, պիտի սիրեմ, սիրելի-սիրում էի, սիրելի, կսիրեի, պիտի սիրեի) էնպես իրարից տարբեր եղանակների ձևերի նույնանալու պատճառով: Մինչդեռ լեզվի զարգացմամբ բնականորեն հատուկ է պարզեցումը: Անհրաժեշտությամբ առաջ բերեց նոր մասնիկ՝ կու, որ, գրվելով ստորագրասկան դարձած ներկա և անկատար բայաձևերի վրա, սահմանազուտեց սահմանականի ներկա և անջայլ անկատար ժամանակները ստորագրասկանից: Կու մասնիկը մեր գրավոր աղբյուրներում առաջին անգամ երևում է XII դարում¹⁸, «ասակայն անտարակոյս է որ նոյն ասան յանկարծ շրտասա, ինչպէս որ հարկաւորութիւն ալ յանկարծ չէր զդացուած» (ՔՔ, էջ 75—76):

Այնուհետև Արսեն Այաթնյանը, բնելով այն հարցը, թե ի՛նչ բառ է այս մասնիկը, առաջ է բաշում այն տեսակետը, թե «Նոց կու մասնիկը՝ կայ ու

բառերուն բազադրութիւնն է, եւ թէ ամփոփմամբ բուտած է կ'ու նայի՝ փոխանակ կայ ու նայի —կու ոտն՝ փխկ, կայ և ոտն... որ յետոյ ընդհանոր ձև մ'եղած է մնացած դէմքերուն ալ. կու լսնն՝ փխկ. կա՛ն ու լսնն, կու տեսնն, փխկ. կայր ու տեսնէր և այլն (ն. տ. էջ 76—77)»¹⁹: Կու մասնիկը հետագայում ու ձայնավորի հնչյունափոխությամբ ավել է կը, կի, իսկ նոր ժամանակներում՝ կի, կի:

Կու մասնիկի կազմության վերաբերյալ վերևում արված բացատրությունը միանգամայն ճշգրտում է հայ բարբառների բնեկումն փաստերով: Մեր «Կենսաբանի բարբառը»²⁰ աշխատության մեջ (այսպես կոչված, Երևան, 1961) ցույց ենք տվել, որ սահմանականի գա գիւլն, գա գիւլ, գա գիւլ, գա գիւլնէ... ձևերում գա եղանակիչը երրորդ դիմի եղակի կայ>գա բայաձևն է, որ համարանության օրենքով տարածվել է մյուս դիմերի վրա՝ դասնալով եղանակիչ: Ապացույց՝ ներկա ժամանակի ժխտական կազմությունը:

Ներկա

չի բամ գիւլն	չի բանք գիւլնք
չի բաս գիւլն	չի բաք գիւլնք
չի բա գիւլն	չի բաք գիւլնք

Գծվոր չէ համոզվել, որ շի՛ամ, շի՛բա, շի՛բա առաջացել են չ+կամ, չ+կաս, չ+կայ ձևերից՝ չի ազդեցությամբ կ>լ հնչյունափոխությամբ: Մյուս կողմից՝ բարբառումս ըղձական բայաձևեր են՝ դիրլմ, բլբլմ, մանցունէմ և այլն: Իսկ պայմանականի բայաձևերը՝ զը (<կը) գիւլն, գի բլբլմ, զը մանցունէմ:

Արդարամիտ լինելու համար ասենք, որ մեծ հայագետը իր ժամանակին եկատել է այս՝ գրելով. «Գուցէ ասով այն երեսույթն ալ կարենայ մեկնուիլ՝ որ դասական լեզուաց մէջ կը լսուի՝ Տեսնէ կայ, նայի կայ, խոսայ կայ» (ՔՔ, էջ 77): Այս բացատրությունը, սակայն, չի ներդաշնակվում իր աշխատության 98-րդ էջում հայտնած այն կարծիքին, որ, իբր, թուրքերենի յօր (>կօր) շարունակական մասնիկը ուրիշ գազատականում եղել է կուլէ կա: Եթէ մեծ հայագետը կա մասնիկի ետագա կիրառությունը շարունակականի գրեկտրում է դիտում, կարիքի է դուցե համաձայնել, բայց թուրքական ժագման հետ՝ երբք:

Հարցն այսպես է հասկացել նաև պրոֆ. Հ. Անառյանը: Ահա նրա դատողությունները ինչոր առարկա գործած հարցի վերաբերյալ. «Դրականացան հաստատելու համար, թե կու ծագում է կալ բայից՝ մեզ իբրև լավագույն աղաբացույց ծառայում է Կենսաբանի բարբառի բացասականի կազմությունը: Այստեղ մենք ունենք՝

¹⁶ Կու մասնիկի ծագման մասին հայ և օտար հայագետներ արաստակույ են հետևյալ կարծիքները.

ա) Հ. Պետրոսյան—կամ բառից՝ ա-ի սլմամբ և մ>ու փոփոխությամբ (ՃՃՄ. անոն-անոն).

բ) Մ. Արշալյան—նախան կոյ մասնիկից, մի անկախ բառ, որ նշանակել է «անա».

գ) Գ. Ղափանցյան—լազերեն «կույնապալուսես ԿՕ մասնիկից.

դ) Ա. Մուրվալյան—բարձրլեզական ՕՔՈՆ «պիտա» մասնիկից.

Ըստ Ա. Մարգարյանի կարծիքի, կու-ն առաջացել է կամիմ բայի կամի (եղակի III դեմք) բառանկից՝ կ-ին հավելված ու հնչյունով, որ ավելացված է արտասանական բարեհնչյունության ապահովման համար:

¹⁸ Աշխատությունը որպես թվկենականի գիտնապիտ է գրված. ավարտված է 1956 թ., պաշտպանված՝ 1958 թ.:

չկամ կարգամ «չեմ կարգում»
չկար գրելի «չէի գրում»
չկաս գրելի «չէիր գրում»

(Աղբյուրներ, Պատմ. հայ Կես., Բ, 1664):

Կասկած չկա, որ այս բոլորի մեջ չկամ, չկաս, չկար²¹ զանազան խոնարհյալ ձևեր են կալ «կենալ» բայի, որից ածանցված է նաև կայ ու՝ կու (ԷՔՂ, Երևան, 1959, հ. 4, Ա, էջ 397—398):

Այժմ տեսնենք, թե կու մասնիկը ինչ շափով է ինչպիսի՝ փոփոխություններով է հանդես գալիս միջին հայերենում: Բոլոր հեղինակներն էլ թե՛ բաղաձայնով և թե՛ ձայնավորով սկզբող բայաձևերից առաջ դնում են կու. այսպես՝ «...Յափիկն ուներ տաճկի խնկիկ Ու ի շուրջ կուզայ զեռ փերեղիկ» (ՆՇՔԶ, էջ 565): «Ղեռ կու կանչէ զեռ բզզեհճեռ» (ն. տ. էջ 570): «Գարին ի փորըն կու աճէ» (ն. տ. էջ 571): «Ամեն ազգ և երկիր իրենց հաշվովն և ժամովն տօն կու աճեն... և մէկ և ընդ որ կու երբան տօնքն...» (ՍԳԳ, էջ 30): «Կու հրամայէ ս. Սահակ թէ աղէտ և պեղծ մարդիկ բաժին կու ձգեն... և կու ասեն, թե այլ և այլ են ազգաց և բրիտանոնէից եկեղեցիք» (ն. տ. էջ 29): «Թէ որ զայս միութիւնս կու փակեն ու կու այլայլեն... նա ազգա զմեզ գրիստոնէքս ի մեր Տօրեն և ի մօրեն կու փակեն, զի երբ յիրացմէ կու փակեն, նա ու նոցանէ կու փակին...» (ն. տ. էջ 29—30):

«Մենք կանք և սեսանենք զվնասող բարն՝ որ է խանդամանդ, որ խաւարթով զերկանք կու Գաշ» (ՄՂՁՄ, էջ 120):

«Եւ երբ իմանաս, որ օր բան զօր երակն կասկարանայ...» (ն. տ. էջ 34): «Քուտնին զանկատէին մօրերուն և ասէին, թե խոզերուն անխնայ կու տան, թէ կերէք. և մեք սովմամա՛հ կու լինիմք» (ՎԱԱ, էջ 22):

«Աբրահամ հիւրընկալ և աստուածատէր,
Վասն սիրոյ զԻսահակ մատաղ կու գեներ» (ՖրԳ, էջ 244):
«Վասն այնոր զայն արար, որ խեսա կու սիւր» (ն. տ. էջ 245):
«Ոսկայն եղաւ այնչափ տարի, որ տուն ու տեղ զեռ կու փակի» (ն. տ. էջ 289):

«Եւ թվենայ բժշկին, երբ զերակն բունէ, թէ կու փոխփոխի տեղոջէ ի տեղ» (Գրգա. Քնն. էջ 4):

«Եւ խայտառին նշանն այս է, որ թվի մարդոյն, թէ մրջմն կու երբայ ի վերայ այն մարմնոյն և կամ փուչ կու ճասնի ի մարմինն» (ն. տ. էջ 72):

«Ես Կոստանդին, որ զբրեցի,
կու փափագիմ ի յայն լուսոյն...» (ԿԵԲ, էջ 130):
«Խիստ խղճուկ եմ ու անյուս,
կու ծրփամ ի մէջ ծովու» (ն. տ. էջ 162):

Ունենէ նույնիսկ պիտիմ բայի ներկան կու-ով. ինչպես՝
«Թաղատարին այն կու պիտի, որ իւր ծառայն ոչ սրղալի» (ՖրԳ, էջ 290):
«Երկու ցէղ սէր կայ ի հաս, զայս աղտուր զիտնալ կու պիտի» (ն. տ. էջ 491):

Վերին օրինակներում կարելի է տեսնել, որ կու մասնիկ են ունենում անկանոն խոնարհման կու լինիմք, կու երբայ, կուտան, ինչպես նաև գրաբարա-

նէ կրափորակների կազմությունն ունեցող բայերը՝ կու փոփոխի, կու փակի: Իսկ այս փաստը վկայում է այն մասին, որ միջին հայերենի լեզվամասնագիտությունից անբաժան է կու մասնիկը:

Ստորև մենք բերելու ենք նաև օրինակներ կու մասնիկի հնչյունափոխված ձևերով, բայց հենց այստեղ ասենք, որ կու մասնիկը բնորոշանոր է բոլոր գրողների համար. ավելին. ո՛չ ներսես Շնորհալու, ո՛չ Մերստ Գունդրատայի, ո՛չ Գրիգորիսի և ո՛չ էլ Կոստանդին Երզնկացու մոտ կու մասնիկի հնչյունափոխության գեղարվեստի շնորհիվ:

Միջին հայերենով գրած առանձին հեղինակների մոտ մենք հանդիպում ենք կու մասնիկի կ հնչյունափոխության. եղած օրինակներում կ մասնիկը հանդես է գալիս միշտ ձայնավորից առաջ²²: Օրինակներ.

«Յորժամ բորբոսն ի ներքս ի յերակն լինի ի յարեն՝ ի յար և ի օտր և այլոցող չեմանն, հումայի մուհրիդայ կասեն» (ՄՂՁՄ, էջ 4):

«...Քներն ի ներս երթայ, և փորն փարփուտ և զատարկ կերևայ» (ն. տ. էջ 59):

«Յուցանէ առակս, թէ շատ մարդիկ կապիրն ի հետ մեղաց» (ՎԱԱ, էջ 11):
«Եւ ես զիրկ անէի զուսանկին շուրն՝ բանէի և ի վար կիւնայի ի տունն և բան մի կաւի, որ ինչ զեղեցիկ դումաշ կայր ի տանն, նա ամենն ինձ կերևար...» (ն. տ. էջ 298):

Այսպես նաև՝ կասես (ՖրԳ, էջ 270), կերբայ (ՇԵԲ, էջ 147, 158), կուզ (ն. տ. էջ 150), կասեն (ն. տ. էջ 163) և այլն²³:

Պետք է ենթադրել, որ կու մասնիկի ու ձայնավորն սկզբում սղվել է ու ձայնավորով սկզբող բայաձևերից առաջ կից վանկերի նույնաստիան անբարեհնչյունության պատճառով՝ կու ուղեմ—կուղեմ, կու ուտեմ—կուտեմ և այլն, իսկ հետագայում երևույթը տարածվել է բնորոշանրային ձայնավորով սկզբող բոլոր բառերի վրա: Արդի արևելահայ գրականում, ինչպես հայտնի է, կ մասնիկը զրգում է նաև բաղաձայնների վրա (անուկ, կիսպամ): Մյուս կողմից՝ այս փաստերը մեզ թույլ են տալիս ասելու, որ կու>կը հնչյունափոխությունը ավելի ուշ շրջանի երևույթ է և, հասկանալի պատճառով, միջին հայերենի լեզվամասնագիտության զարգացմանը զանազան ուղի չէր հարույ ալյրան շուտ փոփոխության ենթարկվել:

Ուշագրություն արժանի է, որ Վարդան Ալզնկեցու առանկերում կու-ի փոխարեն ունենք կոյ²⁴ մասնիկը, ինչպես. «Այս բանի տարի կայ, որ կոյ վարեմ

²¹ Բաղաձայնից առաջ կը ձևով ունենք զործածված Ֆրիկի մոտ՝ «Առանկ հաստուտեցաւ լարք ի հոգիս ու կը խրկեմ»: Տօղաանկում, սակայն, ունենք «կու խրկեմ» տարբերակը (ԳԻՎան, 257):

²² Նույն այս բանաստեղծն էր բերականության մեջ հավատում է կու մասնիկի բնորոշանրային կերտությունը՝ գրելով. «...Են անտեր զի յանկուն ի ստայ կու՝ որդու կոփեմ, ես է. թէ-պէտ այց կու յաշոր (իմա՝ զանիկ, ամսիկ—ՍԱ), սակայն լուս զերկայի տեղին, և յայտնի գլուխը գծամանակն, գրեմ, զրեւ, զրէ. կու գրեմ, կու գրեւ, կու գրէ... Սղալ առններն զերևայ ժամանակն, և զկարկանութիւն ի վերայ երկց զիմաց ծանոցանենս (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր 2380, էջ 190ա):

²³ Հուշագրայ այն բանի, որ կու մասնիկն առաջանել է կոյ նախանից, Մ. Արեղյանը վկայելով է ավանդույթների մեջ երևացող կոյ հոտեն, կոյ տուն, կոյ վարեմ (ՂՏՏ, էջ 326—327) անբարձր Ա. Արեղյանը օրինակով կարող ենք համոզվել, որ կու ոչ թե նախան է, այլ, ինչպես վերին օրինակներում ցույց է տրվում, ու>ոյ հնչյունական բնորոշանր երևույթի մեկ առանձին արտահայտություն, Ինչպես որամտորեն նկատում է Ա. Մաշտոցյանն իր «Հայերենի հարազատ բայերը աշխատության մեջ» «եվ որովհետև ժառանգը մնացել է սերուն, ոչ մեզը՝ ժառանգից»:

²⁴ Ճիշտ է, որ Աղբյուրայանի «Պատմություն հայ Կեսարիո» երկհատոր աշխատությունը արժեքավոր է, սակայն, գերախոսաբար, բոլորակ հնչյունական երևույթները հարթեցված են, հարմարեցված գրականին:

և կոյ վաստակիմ, զհասն զու կոյտես և զարգն ինձի կոյ կեցրնես» (ՎԱԱ, էջ 155): «Առաքեալն կոյ հրամայէ, թէ լաւ է բնակիլ յանշարտար քան ընդ կեռն անդամի» (ն. տ. էջ 135): «Քաղաքն արն լսեց, թէ թագաւորին փեսայն թշուկիմն կոյ առնէ և զնա հանէ» (ն. տ. էջ 135):

Այսպես նաև՝ կոյ հանես (էջ 131), կոյ ուտեն (էջ 151), կոյ զար (էջ 196) և այլն: Համոզվելու համար, որ կոյ մասնիկը նույն կու-ն է, կարելի էր ու>ոյ հնչյունափոխութեան օրինակ բերել հենց իրենից՝ հեղինակից՝ «...և իննէ զինչ որ ողլէ...» (էջ 135) «մայմունքն կոյղլէ» (էջ 196):

Սխալ կլինէր կարծել, թէ միջին հայերենում սահմանականի ներկան ու անկատարը ձևափոխում են բացառապես կու մասնիկով: Առանց բացատրութեան, բոլոր հեղինակներն էլ առանց վերապահութեան օգտագործում են զրարարյան ներկայի ձևեր: Ավելին, եթէ հաշվելու լինենք, կտեսնենք, որ հաճախ զրարարյան ձևերը մի բանի տեղում շատ են, քան կու մասնիկով ձևերը: Սրմբատ Գոնգատապիլի «Գատատաննագրքում» և Մ. Հերացու «Ջերմանց միխթաբութիմն» աշխատութեան մեջ, օրինակ, այդ հարարերութիւնը 1-ի զմեաց 20 է՝ հօգուտ զրարարյան ձևերի: Այստեղ, հասկնալի է, էտիանը տոկոսային հարարերութիւնը չէ, այլ երևույթը. մէկը նորածին է, մյուսը՝ հնացած: Նորը պիտի հաղթէր, դրա լավագոյն վերափոխումն են կը ճշուղի 30-ից ավելի բարբառները, արմատահայ գրական լեզուն, մինչդեռ զրարարականից կազմութեամբ միայն մեկ բարբառ ունենք (տոտրջուր): Հաճախ կարելի է հանգիպել մի այսպիսի երևույթի. նույն նախադասութեան մեջ իրար կողք-կողքի օգտագործված են և՛ մեկը, և՛ մյուսը: Ահա օրինակ՝ «...Աչքն խորանայ, և աւաջ զուրն պարտի, և ի յաչքն ճգուտ լինի, և կոյզն բուլանան, և ի վայր Բաշվի. զերդ մարդոյ որ կհայ և ի բուն կամի լինել... և ճակտին կաշին բաշի, և քներն ի ներս կրթայ, և փորն փորփուտ և զատարկ կերեկայ» (ՄՀՁՄ, էջ 39): «Եւ զայս ամենայն թշնամութիւնս ի մեր մէջս ի ձերդ այդ շներդ և մարդիք կու առնեն, որ տարին ի բուն ձեզ մարքեն և կրեն և ձեր բուրթն կարեն և ձեր գտներեն խորովեն» (ՎԱԱ, II, էջ 244):

Երկրորդութեան երևույթը նկատուի է ոչ միայն այս պարագայում, այլև ընդհանրապես: Ասենք, միջին հայերեն լեզուն էլ, իր ամբողջութեան մեջ վերջերքած, ունի լեզվա-բերականական ձևերի բազմազանութիւններ, որոնք, իհարկէ, լեզվի զարգացման ընթացքում պետք է կայունանային, նոր երևույթները պիտի ընդհանրանային, հները պիտի զիջեին ու մոռացվեին, սակայն Կիլիկիայի հայ պետականութեան խորտակման հետևանքով միջին հայերեն գրական լեզվի զարգացումը ևս իր բնական ևս արամարանական վարժանքի շնորհիվ:

Համափոխումն այս բոլորի, կարծում ենք, ավելորդ չէր լինի բոլոր շուրս խոնարհումների բալետով (նեղուս և անցյալ անկատար ժամանակներով) խոնարհման մի տախտակ առ ստորեւ.

ն եր կ ա		անցյալ անկատար	
կու ծախեմ	կու ծախեմք (նակ-ենք)	կու ծախելի	կու ծախէաք
կու ծախես	կու ծախէք	կու ծախէիր	կու ծախէիք
կու ծախէ	կու ծախես	կու ծախէր	կու ծախէին

այդ հասկանալի է, որ կու//կ-ի համար կոյը նախադր ձև հանազիլ երբք չի կաջող» (էջ 372):

կու խօսիմ	կու խօսիմք (նակ-ինք)	կու խօսելի	կու խօսէաք
կու խօսես	կու խօսիք	կու խօսէիր	կու խօսէիք
կու խօսի	կու խօսին	կու խօսէր	կու խօսէին
կու խաղամ	կու խաղամք (նակ-անք)	կու խաղալի	կու խաղայաք
կու խաղաս	կու խաղաք	կու խաղալիր	կու խաղալիք
կու խաղալ	կու խաղան	կու խաղալր	կու խաղալին
կու թողամ	կու թողամք (նակ-ունք)	կու թողուի	կու թողուաք
կու թողաս	կու թողաք	կու թողուիր	կու թողուիք
կու թողու	կու թողան	կու թողուր	կու թողուին

Ապառնի և անցյալ ապառնի ժամանակներ.—Ապառնի գերբայի քննութեան բաժնում մենք ցույց տվեցինք այս գերբայն իր գրականութեամբով (—ոց, —ի, —ոյ, —ու), որ և բաղադրյալ ժամանակների կազմութեամբ ամենից հարուստն է միջին հայերենում: Քանի որ այս բաժնում քննութեան ենք ենթարկում սահմանական եղանակի ժամանակները, ուստի մեզ առավելագուստ հետաքրքրում են ապառնի գերբայի —ոյ և —ու վերջավորութեամբ ձևերը, որոնց վրա են օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ձևերի ավելացումով ստանում ենք ապառնի և անցյալ ապառնի ժամանակները, ինչպես՝

«Եւ զինչ որ հիանդին տալու է՝ աստեն տա» (ՂԵԹ, Բ գիրք, էջ 349):
 «Գաղտուկ նայիս աշուերդ ի դուրս, թէ յո՞ր տեղիք ևմ գնալոյ» (ՅրԹ, էջ 308):

Աշխարհոս չէ բեզ մրնալոյ» (ՆԵԲ, էջ 172):
 «Հոգով ի գոխն ես գրեալոյ» (ն. տ. էջ 235):

Վարդան Այգեկցու հետեւյալ նախադասութեան մեջ ապառնի գերբայը տնկնք և՛ —ոյ, և՛ —ու վերջավորութիւններով. «Յորժամ ...ևս երեւմ թեզ հիւանդին դիտոն զիհն, նա զու սաս, թէ մի՞ ցավիք. հիւանդոս սո լաւեալու է. և լինի այնպէս, թէ լինիմ ոտից զիհն, զու սաս, թէ մեռնալոյ է» (ՎԱԱ, II, էջ 295):

Այս երկու ձևերից գերազանցող —ու վերջավորութեամբ ապառնի գերբայն է: Ապառնի գերբայը կազմվում է անորոշ գերբայից՝ համապատասխան վերջավորութիւնների ավելացումով, ինչպես՝ ասել-ասելոց, գնալ-գնալոց, առնել-առնելոց, ծառայել-ծառայելոց, շինել-շինելոց, մնալ-մնալոց, գնալ-գնալու, տալ-տալու, փակել-փակելու:

Ամանցավոր բայերի դեպքում ապառնի գերբայը հանդես է գալիս անորոշ հնչյունափոխված ձևով՝ մեռնալիմ-մեռնելի-մեռնելու, լուանալ-լուանալու և այլն:

Այս նկատառումով, կարծում ենք, ճիշտ կլինէր ընդունել պրոֆ. էդ. Աղայանի այն տեսակետը, թէ ապառնի գերբայը կազմվում է ո՛չ թէ ներկայի հիմքից, այլ անորոշի, այն է՝ գերբայական բաշահմբից (տե՛ս «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում» հոդվածը (Պատմա-բանասիրական հանդես, 1963 թ., № 3):

Ահա և շուրս խոնարհումների բայերի ապառնի ժամանակի պատկերը.

ապառնի

ճախելու եմ ճախելու եմք
ճախելու ես ճախելու էք
ճախելու են ճախելու են

ծախելու էի ծախելու էաք
ծախելու էիր ծախելու էիք
ծախելու էր ծախելու էին

խօսելու եմ խօսելու եմք
խօսելու ես խօսելու էք
խօսելու է խօսելու են

խօսելու էի խօսելու էաք
խօսելու էիր խօսելու էիք
խօսելու էր խօսելու էին

խաղալու եմ խաղալու եմք (նաև՝ ենք)
խաղալու ես խաղալու էք
խաղալու է խաղալու են

խաղալու էի խաղալու էաք
խաղալու էիր խաղալու էիք
խաղալու էր խաղալու էին

թողելու եմ թողելու եմք (նաև՝ ենք)
թողելու ես թողելու էք
թողելու է թողելու են

թողելու էի թողելու էաք
թողելու էիր թողելու էիք
թողելու էր թողելու էին

Վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակներ.— Ի տարբերություն ապառնի և հարակատար զերբայների, վաղակատարը լուկ ժամանակակերպ զերբայ է. վաղակատարը (ներկա և անցյալ) ձևավորվում է -ել կամ -եր վերջավորություն ունեցող բայաձևի վրա եմ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատարի ավելացումով: Այս զեպրում տարբեր խոնարհումների բայեր տարբեր հիմքերից են կազմվում:

Ե և ի խոնարհման պարզ բայեր. «Ես ստաձե գամէն մէկ իւր բժշկութեամբն, որպէս յիշել եմ, և յիշել կամիմ ի գիրբս ուրիշ ուրիշ» (ՄՀՋՄ, էջ 31): «Ես այս շերմս շատ դայ, որ ի յիւր երակն ժողովել է խարտէշ մաղձն...» (Գրգս. Քնն. էջ 26): «Ահայ նմա, թէ տուր զիմ եզն, որ զողացեր ես, աղչափ ժամանակ ի տան բում պաներ ես» (ՎԱԱ, էջ 12), «Յուցանէ առակս, թէ ամենայն մարզ զիւր արուեստն թողու, որ սովորե է...» (ՎԱԱ, էջ 132): «Աղան երստեր էր փէնճէրէն Ափն երեսին էր, խիստ կուլար» (ՀՅԲ, էջ 167):

Ինչպես տեսնում ենք, և և ի խոնարհման պարզ բայերի վաղակատար կազմվում է I հիմքից: Բացառություն է կազմում սակ բայը, որ անցյալ զերբայում ունի ասացել ձևը, ինչպես՝ «Զի Մոգսէս է ասացել, թե Երզվիր երդամար...» (ՍԳԳ, էջ 72): «Յորժամ նոյ ի տապանն էր, ասացել են, թէ տապանն ծակեցաւ» (ՎԱԱ, էջ 316):

Ե խոնարհման անանցավոր. «Ես ետես, զի ճրազու մկանն Ելեր էր ի փուռն ի դուրս» (ՎԱԱ, էջ 26):

«Մեծ գոհութիւն, հարիւր հազար,

Մեզ աւետիք է նոր հասել» (ԿՅԲ, էջ 117):

Ի խոնարհման անանցավոր. «Ես յիւրմէս շատ մարդ է մեռել» (Գրգս. Քնն. էջ 50):

«...Զի ամէն պիտի, որ զինչ որ ուսէր (է) զան անէ» (ՎԱԱ, էջ 132): Մճել ես ՚ա աշխարհն Եկել, տուր խապար, թե ուստի՝ կու գաս» (ՀՅԲ, էջ 144):

Ա խոնարհման. «Պարտ է ամենեւին մարդոյ որ զբժկական արուեստս ի հոգս է առել...» (ՄՀՋՄ, էջ 1): «Երբ արիւնն խանձել լինի և այրել, նա յառաջ հիւանդն արեան շերտ է կալել...» (ն. օր. էջ 115):

Խնուլ բայում, ինչպես զրարարում, հանդես է գալիս արմատական ց-ն,

ինչպես՝ «Ես ի քո զիմաց փահել ես զու զականջդ ու սիհդ խըցել» (ԿՅԲ, էջ 177):

Ա խոնարհման պարզ բայեր. «...Ես զոր գտնուի յայս զործս, նա այն ի յիւր սրտին խեղճն է մնացել» (ՍԳԳ, էջ 38): «Ենք խօսքդ մեզ զեղ եղալ, ձեր տեսողք ենք մենք խընդացել» (ՀՅԲ, էջ 147):

«Զինչ կարդացել ես ու լրսել,
Զայն չկամիս իսկի լրսել» (ՖրԳ, էջ 406):

Ա խոնարհման անանցավոր բայեր. «...Այս շերմանս պատճառն այս է՝ որ ի շատ գտնուուն հողին տաղանպեր է և տալցեր է» (ՄՀՋՄ, էջ 27):

«Նա զհողիդ յափտեան

անյիշելի ես մտացել.

...Ոմանք սըրաթըրիչ

Թնօք չերկինս են վերացել» (ԿՅԲ, էջ 177—178):

Պատճառական բայեր. «Զի զայս ի նիկիայի սահմանն ամբացուցել են և կապել...» (ՍԳԳ, էջ 38):

«Յերբ՛ի, հերիք ես զու խօսել,

Զամէն մարդ ես ձանձրացուցել» (ՖրԳ, էջ 409):

«Ոմանք շոր՝ անպիտան

են մահարեր փուշ բուսուցել» (ԿՅԲ, էջ 178):

Վերևում բերված օրինակներում կարելի է տեսնել, որ օժանդակ բայը, բայ նպատակահարմարության, հաճախ զրկվում է զերբայից առաջ՝ առավելագույն բանաստեղծական խոսքի մեջ. է մնացել, են բուսուցել, են վերացել և այլն: Մյուս կողմից՝ բայերի կուտակման զեպրում օժանդակ բայը չի կրկնվում, ինչպես՝ ամբացուցել են և կապել, կարդացել ես ու լսել, ծնել ես, Եկել և այլն: Ահա և վերևի մեր շորս բայերի վաղակատարը.

Վաղակատար		անցյալ վաղակատար	
ճախել եմ	ճախել եմք (նաև՝ -ենք)	ճախել էի	ճախել էաք
ճախել ես	ճախել էք	ճախել էիր	ճախել էիք
ճախել է	ճախել են	ճախել էր	ճախել էին
խօսել եմ	խօսել եմք	խօսել էի	խօսել էաք
խօսել ես	խօսել էք	խօսել էիր	խօսել էիք
խօսել է	խօսել են	խօսել էր	խօսել էին
խաղացել եմ	խաղացել եմք	խաղացել էի	խաղացել էաք
խաղացել ես	խաղացել էք	խաղացել էիր	խաղացել էիք
խաղացել է	խաղացել են	խաղացել էր	խաղացել էին
թողել եմ	թողել եմք	թողել էի	թողել էաք
թողել ես	թողել էք	թողել էիր	թողել էիք
թողել է	թողել են	թողել էր	թողել էին

Հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ.— Այս ժամանակների հարցը արդի հայադիտություն մեջ խիստ վիճելի է դարձել: Պրոֆ. Եղ. Աղալյանն իր «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում»

(Պատմա-բանասիրական հանդես, 1963 թ. № 3) հոդվածի մեջ, ինչպես նաև «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Երևան, 1968 թ.) աշխատության մեջ չի բնութագրում հարակատար ժամանակները բոլոր սեպերի բայերի համար: Ահա նրա եզրակացությունը. «Մենք հարակատար դերբայը դիտում ենք որպես առարկայի վիճակ արտահայտող դերբայ կատարելով, ավարտված կերպով իմաստով և հնած է, կտրված է, կտրված է և նման կապակցությունները բայի երանակային ձևեր են» համարում: Այս եզրակացությունը նա հանգել է արդի հայերենի խոնարհման համակարգի կառուցվածքային վերլուծությանը.

Պրոֆ. Աղաջանն իր եզրակացությունը չի բնութագրում հայերենի բոլոր դրսևորումների վրա և ոչ էլ արևելահայ գրական լեզվի պատմության բոլոր փուլերի վրա: Ինչպես արևմտահայ գրական լեզուն, այնպես էլ միջին հայերենը այս տեսակետից առանձնահատկություններ ունեն. միջին հայերենում կան հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ, որոնք կազմվում են հարակատար դերբայի և եմ օժանդակ բայի միջոցով: Բավական է բերել հարակատար դերբայի և եմ օժանդակ բայի հացն ուտել, նայ չե կաողած» (ՄՀՋՄ, էջ 88): «Քիչ այն օտար շունն դայն հացն ուտել, նայ չե կաողած» (Գրգս. Քնն. էջ 46): «Տաշխարհիս ա՛յլ գեղեցիկ իրք չե տեսած», Զինչ լինի տունն հնազանդ մեկ հրամանաց» (ԿեՔ, էջ 219): «Առաջին, թէ զնամբ՝ բնդ միսս զուռն մտանեմք, որ զլուս չե կախած» (ՎԱԱ, II, էջ 246):

Մեր բերած բոլոր օրինակներում (և ոչ միայն նրանցում)՝ ա) հարակատարի ժխտական ձևերում օժանդակ բայը զրված է դերբայից առաջ, բ) եզակի երբորդ զնմքի օժանդակ բայն ունի չե ձևը: Իսկ սրանք երկու հիմնական կառուցվածքային փաստարկներ են, որոնք հիմք են տալիս պրոֆ. էդ. Աղաջանին շեղումներ առդի հայերենում հարակատար ժամանակների գոյությունը:

Միջին հայերենում հարակատար ժամանակները չեն նույնանում և արևմտահայ գրականի հարակատար ձևերի հետ. ինչպես ցույց ենք տվել հարակատար դերբայի քննության բաժնում, միջին հայերենում ներգործական սեռի բայերից հարակատար ժամանակներ չեն կազմվում, իսկ արևմտահայ գրականում, բնդակտուակն, հարակատար դերբայը և բայաձևերը գործածվում են ներգործական նշանակությամբ: Ավելին, արևմտահայ գրականում հարակատար և անցյալ հարակատար ժամանակները, առավելագույն ներգործական սեռի բայերի դեպքում, օգտագործվում են վաղակատարի և անցյալ վաղակատարի փոխարեն, ինչպես՝ «Սա տունին մուտք... ծխախոտի մեծաբանակ մթերք մը կար պարտաստ, ինչպես որ իրենց իմացուցած կին կանխավ» (ԳՉՆ, Երևան, 1941 թ. էջ 17): «...Մեջքի զաշույնը, որուն երկաթը Պոլսեն կլամ զճամ է, Գամասկոսի դյուրաթիկը երկաթ, վեռվեռող նրանգներով, երբն զուր տեղը փայլատակած չե» (ն. տ. էջ 18):

Միջին հայերենում առավելագույն հանդուգում են և, ի և ա խոնարհումներով հարակատար ժամանակներ, իսկ ա խոնարհմամբ և պատճառական կերպի հարակատարի ձևեր չեն հանդիպում:

Օրինակներ հարակատար ժամանակներով. նախ՝ և խոնարհման բայերով. «...Այս շերման տերն...ի յաւազանն թող լլամէ շատ, զի զհնութեններն աղգիլած են ի ներքս ի մարմինն» (ՄՀՋՄ, էջ 13), «ի մարմինն մարդոյ բնական

չորս զհնութին կայ, և են նորա կարգած մեկ հետ մէկի» (ն. տ. էջ 26): «...Զերդ լօկնայ մարդն ջրով, որ խառնած է լինիք ապր իրք» (Գրգս. Քնն. էջ 11): «Եւ զուրցի պատճառն լինի, որ զարկած է ի վերայ ոգնայաշարին ի յլուզն...» (ն. տ. էջ 77):

Ե խոնարհման բայերով. «Այն շերմն՝ որ ի դուրս ի յերակացն լինի, նույլ տնի, զի մայճն է բորոսած և մեկալլ ցեղն ցնեքրսէ յերական լինի, զի պալ-դամն է բորոսած» (ՄՀՋՄ, էջ 109): «Եւ յորժամ ճմուռ ներս պատահի մարդոյն ի յորժամ և է, նայ զինչ կերպ որ է մարդն՝ այնպես կենայ՝ թէ ի նստակ»²⁵ է՝ չկարէ պառկել, և թէ նստած է՝ չկարէ յոտն երկել» (Գրգս. Քնն. էջ 59):

«Տէ՛ր, ցօղե՛ս յիս ցօղ կենաց.

Կամ ձարաի՛ ՚ի եմ քառանգ» (ԿԵՔ, էջ 152):

«Զունիք մարդ կենդանի, հոգով մնած եմ հաւատար» (ԿԵՔ, էջ 202):

«Երկուս ընդ իրար կուին, մէկ ի մէկ խակի չի նմանի,

Մեկ է ի նոցա միջին և մնած է՝ անկած ի տեղին» (ՇԵՔ, էջ 156):

Ա խոնարհման բայերով. «...Այլակերպած էր և հեռացած ի հին հայ բանին...» (ՄԳԳ, էջ 15): «...Եւ եկեալ լուստն և էր բարձած յոյժ» (ՎԱԱ, II, էջ 26):

Սահմանակների բաղադրյալ ժամանակների պատկերը ամբողջական դարձնելու նպատակով ստորև դնում ենք մեր շորս բայերի հարակատար (ներկա) և անցյալ հարակատար ձևերը.

Հարակատար (ներկա)		անցյալ հարակատար	
ձախած եմ	ձախած եմք	ձախած էի	ձախած էաք
ձախած ես	ձախած էք	ձախած էիր	ձախած էիք
ձախած է	ձախած են	ձախած էր	ձախած էին
խօսած եմ	խօսած եմք	խօսած էի	խօսած էաք
խօսած ես	խօսած էք	խօսած էիր	խօսած էիք
խօսած է	խօսած են	խօսած էր	խօսած էին
խաղացած եմ	խաղացած եմք	խաղացած էի	խաղացած էաք
խաղացած ես	խաղացած էք	խաղացած էիր	խաղացած էիք
խաղացած է	խաղացած են	խաղացած էր	խաղացած էին
(թողած եմ)	(թողած եմք ²⁶)	(թողած էի)	(թողած էաք)
(թողած ես)	(թողած էք)	(թողած էիր)	(թողած էիք)
(թողած է)	(թողած են)	(թողած էր)	(թողած էին)

Անցյալ կատարյալ.— Այս ժամանակն իր արտահայտած իմաստով նույնն է, ինչ որ գրաբարում և աշխարհաբարում: Սակայն սարբեր խոնարհման բայեր գրաբարի հանդեպ զգալի առանձնահատկություններ են դրսևորում, ահա ինչու նպատակահարմար է շարադրել լուրաբանչյուր խոնարհում առանձին-առանձին:

Ե խոնարհման պարզ բայեր.— Անցյալ կատարյալում հիմնականում պահպանում են գրաբարյան վերջավորությունները. շեղումներ նկատելի են եզակի

²⁵ -ույ վերջավորությամբ հարակատար դերբայի հազվադեպ կիրառություններից մեկն է:

²⁶ Ա խոնարհման ձևերը դնում ենք խոնարհման առիտակն ամբողջացրելու նպատակով:

թիւում, III դեմքում: Եղակի III դեմքում գրաբարյան –ևց վերջավորութեան հետ գտնում ենք նաև –ևց հնչյունափոխոված վերջավորութիւնը, ինչպես՝ «...Ձխոզին ուկին փորձեցի, և դասլ որ օգտեց ի հիւանդութեան ի վերջին» (ՄՀՁՄ, էջ 121): «...Քլ ի նոյն տարին, որ զենց զիբ դինին ամբողջ պահէ, նա լեւլ է բարի» (ՍԳԳ, էջ 63): «Կու հրամայէ օրէնքս, որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատուի. մէկ մասն արբեցողութեան, որ ինքն մարդ էր ու հայնչար լամեց, որ խումբեցաւ» (ն. տ. էջ 69): «Սատանան զիս խարեց» (ՎԱԱ, էջ 203):

Այնուամենայնիվ գերակշռում են –ևց վերջավորութեամբ ձևերը, ինչպես՝ հրամայեաց (ՍԳԳ, էջ 29), կարգեաց (ն. տ. էջ 29), անարգեաց (ն. տ. էջ 44), վառեաց (ՄՀՁՄ, էջ 12), սնունեաց (ն. տ. էջ 36) և այլն, և այլն:

Շատ անգամ միևնույն նախադասութեան մեջ գտնում ենք երկու ձևերն էլ, ինչպես՝ «...Հայնչար լամեց, որ խումբեցաւ... վասն վնասուն, զոր զօրձեաց» (ՍԳԳ, էջ 69):

Այսպիսով, և խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալ ժամանակում գրաբարյան ներգործակերպ՝ վերջավորութիւնների համեմատ ունեն հետևյալ պատկերը.

-ի	-ի	-աք	-աք
-եր –իր	-եր, -իր	-էք, -իք	-էք, -իք
—(կաց)	—(կաց) (-կց)	-ին	-ին

Հոգնակի առջին դեմքում միշտ ունենք –ալ, ինչպես՝ գրեցալ (ՍԳԳ, էջ 22, 24, 28 և այլն), վերագրեցալ (ն. տ. էջ 33), կարգեցալ (ն. տ. էջ 57), յիշեցալ (ՄՀՁՄ, էջ 15, 103) և այլն:

Ասել, գիտել, կարել բայերը (մարել, մերկել շին հանդիպել), ինչպես գրաբարում, անցյալ կատարյալի հիմքում ունեն –աց՝ բաղադրիչը, ինչպես՝ ասացալ (ՄՀՁՄ, էջ 3), ասացալ (ն. տ. էջ 112), ասացին (Գրգու. Քնն. էջ 10): Ընկեր նաև ասի ձևով՝ «Յր մի շատի, թէ Տէր մեղայ» (ՀՅԲ, էջ 170), գիտեաց (ՍԳԳ, էջ 74), կարցալ (ն. տ. էջ 81), շխարացի (ն. տ. էջ 24) և այլն: Մյուս կողմից՝ անել, բերել, ինչպես գրաբարում, ունեն արմատական հիմք, ինչպես՝ ամին (ՍԳԳ, էջ 29), երեւ (ՀՅԲ, էջ 194):

Ե խոնարհման ներգործական սեռի բայերը, ըստ անհրաժեշտութեան, խոնարհւում են նաև կրավորակերպ, ինչպես գրաբարում, ունենալով –ալ, –ար, –աւ, –ալ, –ալ, –ալ, –ան վերջավորութիւններ, ինչպես՝ խառնեցալ (–խառնելեցին, ՍԳԳ, էջ 34), փոխեցալ (–փոխելեց, փոխադրելեց, ն. տ. էջ 37), գրեցալ (= գրվեց, ն. տ. էջ 48, 49, 58, 69 և այլն), հատեցալ (–հավաքվեց, ՄՀՁՄ, էջ 12), ասացալ (= ասվեց, ն. տ. էջ 112), գրեցալ (= գրվեց, ՀՅԲ, էջ 192) և այլն, և այլն:

Ե խոնարհման անանցավոր բայերը.— Միջին հայերենում ևս այս բայերն ունեն արմատական հիմք, սակայն գրաբարի համեմատութեամբ այստեղ կերպի վերջավորութիւններն իրենց արժեքը կորցրել են: Մինչդեռ գրաբարում –ալ, –ար, –աւ, –ալ, –ալ, –ան վերջավորութիւնները գրվում են և խոնարհման ներգործական սեռի բայերի վրա (կրավորական դարձնելու նպատակով), միջին հայերենում գրվում են և՛ ներգործական սեռի (ներգործակերպ խոնարհ-

մամբ), և՛ շեղոր սեռի բայերի վրա. այսպես, օրինակ՝ «Երբ տեսայ, որ կու կախել, գայրոց իրբ այլ առի դերիս» (ՅԲԲ, էջ 265): «Նս երկու դաշա տեսայ ապակ (ՆԵԲԶ, էջ 573):

«Գանակ առ դմորթն շրջէ, թէ չէ՛ կալ միսն ի բանն» (ն. տ. էջ 571):

«Ապա թէ տեսանէ զչերմանն ժամանակն՝ որ անցաւ...» (ՄՀՁՄ, էջ 139): «Գոի խիստ աղէկ հարմ մի և իմաստուն և հարցայ, թէ մեր թագաւորն ի խիստ է նեղած» (ՎԱԱ, էջ 115): Այսպես նաև՝ կլալ (ՍԳԳ, էջ 76, ՀՅԲ, էջ 155, ԿՅԲ, էջ 124, 162), հասալ (ՄՀՁՄ, էջ 139), իջալ (Գրգու. Քնն. էջ 7, ՅԲԲ, էջ 269, 352) և այլն, և այլն:

Վերին նախադասութիւններում մենք ունենք տեսայ, հարցայ կատարյալի ձևերը, որոնք ունեն ուղիղ խնդիր լրացում: Մյուս կողմից՝ շեղոր սեռի կլալ, անցալ, հասալ, իջալ բայերն ունեն գրաբարյան կրավորած վերջավորութիւններ:

Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ միջին հայերենով գրված աշխատութիւններում և խոնարհման ներգործական սեռի անանցավոր բայերի գրաբարածն կրավորականի ոչ մի կիրառութիւն չի հանդիպում, այլ կրավորականը կազմվում է ու՝ վ անանցով, ինչպես՝ սպանվալ (ՍԳԳ, էջ 69):

Վերևում շարադրվածից շատ քիչ է եղրակացնել, որ և խոնարհման անանցավոր բայերում –ի, –եր... վերջավորութիւններով անցյալ կատարյալի կազմութիւններ չկան միջին հայերենում: Ո՛չ կան և նման կազմութիւններ, ինչպես՝ գտի, տեսի (ՍԳԳ, էջ 38), տեսին (ՄՀՁՄ, էջ 7), արկի (ՀՅԲ, էջ 179), իջի (ն. տ. էջ 249) և այլն, սակայն գերակառոգը –ալ, –ար, –աւ... վերջավորութիւններով ձևերն են: Նկատել է նաև, որ և է վաղկային անցումները ևս կորցրել են իրենց կիրառութեան տրամաբանական հիմքը. է վանկային անցումը գրվում է նաև բաղաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝ էլգարկ (ՍԳԳ, էջ 74), կհաս (ԿՅԲ, էջ 226), կտանդ (ՅԲԲ, էջ 398) և այլն:

Այսպիսով, միջին հայերենում և խոնարհման անանցավոր բայերը չնչել են կերպային վերջավորութիւնները. և՛ ներգործական սեռի (ներգործականերպ), և՛ շեղոր սեռի բայերը ստանում են –ալ, –ար, –աւ... վերջավորութիւններ:

Կարծում ենք, ավելորդ չէր լինի այս երևույթն արձանագրել խոնարհման մի փոքրիկ ամստակով.

գտանել (ներգործական սեռի, ներգործակերպ խոնարհում), հասանել (շեղոր սեռի).

գտայ	գտար	հասայ	հասար
գտար	գտարք	հասար	հասարք
գտաւ	գտան	հասաւ	հասան

Միջին հայերենում սկիզբ առած այս երևույթը հետագայում ամբողջացավ ու արեւպետոզ դարձավ: Այժմ գրական լեզվի երկու հատվածներում էլ բաղաձայնական այս կազմութիւնն է իշխում:

Ի խոնարհման պարզ բայեր.— Գրաբարի համեմատութեամբ առանձնատկութիւններն չեն դրսևորում. և՛ պարզ, և՛ անանցավոր բայերն ունեն կրավորակերպ վերջավորութիւններ (–ալ, –ար, –աւ...), ընդ որում պարզ

²⁷ Հանդիպում է նաև կանոնադր ձևով՝ –ևց վերջավորութեամբ. չն. պատկերաց մկանց և անաց» (ՎԱԱ, էջ 64):

բայերն ունեն ցոյախան-բաղադրչալ հիմք²⁹, իսկ ամանցավորները՝ արմատա-կան հիմք:

Օրինակներ՝ «Յուստիանոս հայրն կամեցալ լիւր աւորքն...» (ՄԳԳ, էջ 39): «Բազ աննուլ պիտի, թէ ի՞նչ ցեղ էր յուղարկին, ի՞նքն յոմարեցալ ի դնան, թէ ի կահրա յուղարկուեցաւ» (ն. ա. էջ 73): «Բակ այն նշաննին՝ իր հետ շնորհան հանդիպեցաւ...» (ՄՀՁՄ, էջ 114): Այսպէս նաև՝ համարեցալ (ՄԳԳ, էջ 30), խամբեցալ (ն. ա. էջ 69), շամարնակեցալ (ն. ա. էջ 27), լրբեցալ (ն. ա. էջ 20), բորբոսեցալ (ՄՀՁՄ, էջ 63, 88), համարեցան (ն. ա. էջ 110), ուղղեցալ (ն. ա. էջ 132) և այլն:

Ի խոնարհման ամանցավոր բայեր. «Ապա պատե՛հ տեսար գրել, թէ ուտի բնկալ սահմանս (տիպոսն) այս» (ՄԳԳ, էջ 35): «ՄԵբ բուսալ զերթ ծաղիկ յերես ի հողոյն» (ՀեԲ, էջ 183):

«Ա՛յ, այս բանն է հիանալի
...Թէ մէկ Ազամ և յնայէ
Քանի՛ ազգեր ծրնան յերկրի» (ՖրԳ, էջ 530):

Խոնարհման բնոյճանուր պատկերք.

պարզ բայ		ամանցավոր բայ	
կամեցալ	կամեցաք	բուսալ	բուսաք
կամեցար	կամեցայք	բուսար	բուսայք
կամեցաւ	կամեցան	բուսաւ	բուսան

Ա խոնարհման թե՛ պարզ և թե՛ ամանցավոր բայերն անցյալ կատարչա-յում ունեն բազադրչալ-ցոյախան հիմք: Պարզ բայերը գրաբարի նման ունեն -ի, -եր, --աք, -էք (-իք), -ին վերջավորութիւններ. ինչպէս՝ «...Ձիւնն ու աշ-խարհական պարտնալք հոգացին» (ՄԳԳ, էջ 34): «...Ձիւն աստուած դուանեցիր և հավատացիր» (ՎԱԱ, էջ 146):

Գիտելի է, որ այս խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորա-կերպ վերջավորութիւններով ձևեր միջին հայերենում չեն հանդիպում, մինչ-դեռ գրաբարում կրավորական սեռի բայ ստանալու միակ հնարավոր եղանակն է դա:

Ա խոնարհման ամանցավոր բայերն ունեն կրավորակերպ վերջավորու-թիւններ. բայահիմքերը հանդես են գալիս միջին հայերենի հնչյունափոխա-կան բնոյճանուր օրենքին համապատասխան. ինչպէս՝ «Ահա երբ ուժգորեցին պարսիք ի վերայ շալոց, նա տանելին գերեցին ի հեծել և այնկից ի վեր քոլցաւ» (ՄԳԳ, էջ 34): «...Վաստիք մաղձն շաղցաւ ի յայս անդամս, և իջաւ ի թրքն, և արար թորալցաւ» (Փրգս. Քնն. էջ 7): «Աւացի... թէ ինձ համար է այս խորովան և զիս մոռցան» (ՎԱԱ, էջ 191):

«Խնձոր ձղեց մըտիկ շարի,
Մէկ մ'այլ ձղեց ցածցալ 'ս առի» (ՀեԲ, էջ 154):

Որպէս հեղինակային լեզվի առանձնահատկութիւն պետք է գիտել այն երևույթը, որ այս խոնարհման բայերի, ինչպէս և բնոյճանապետ եզակի III դեմքի՝ ալ վերջավորութիւնը՝ Վարդան Այդեկցոյ մտա գտնում ենք օ հնչյու-նափոխված ձևով, ինչպէս՝ «...Պատահեց նմա շունն և նայ դարձօ արունայ-»

²⁹ Ետեկ բայն ունի նա արմատական հիմքը, ինչպէս՝ «Նետայ» (ՀեԲ, էջ 155):

թաթախ և լայով եմոտ ի խոցն. փակեաց պրտն. զըջաց և անկօ առաջի սրբութեանց աստուծոյ» (ՎԱԱ, էջ 10): Հնչյունափոխական այս երևույթն իր արտահայտութիւնն է դեռ նաև դառնոր (էջ 12), մեղգոր (էջ 22) և այլ բա-ռերում: ՄԵբ կարծիքով, սա սխալ գրութեան հետևանք չէ, այլ միջին հայե-րենում կատարված ալ երկրաբարտի օ-ի հնչյունափոխվելու (կարտա-Հարտ, զատի-Հատի) տարածումը ալ հնչյունակազմակերպման վրա:

Խոնարհման պատկերք հետևյալն է.

պարզ բայ		ամանցավոր բայ	
հոգացի	հոգացաք	մոռցալ	մոռցաք
հոգացիր (-իր)	հոգացէք (-իք)	մոռցար	մոռցայք
հոգաց	հոգացին	մոռցաւ	մոռցան

Ա խոնարհման բայերում ևս պարզ բայերի կրավորակերպ վերացված է. կրավորականութիւնն արտահայտվում է վ մասնիկով, ինչպէս՝ բողլալ (=թողլվեց, ՄԳԳ, էջ 39, 49 և այլն):

Պարզ բայերն ունեն գրաբարյան վերջավորութիւններ, ինչպէս՝ «...Մար-մինն և դարին... զոր վասն մէր ենեղ...» (ՄԳԳ, էջ 30): «...Քնալ զարե՛ ամուս-նանայ ոչ այն, որ երող է ոչ այն, որ թողվաւ» (ն. ա. էջ 39):

Ա խոնարհման ամանցավոր բայերը ևս գրաբարյան համակարգն ունեն, ինչպէս՝ «...նչ յորժամ զնաւ, պատեցաւ զմտով լծվարին...» (ՎԱԱ, II, էջ 154):

Անոպ բայը, ինչպէս գրաբարում, ունի ներգործակերպ վերջավորութիւն-ներ. ինչպէս՝

«Թէ պահես զիմ պատուիրանն, որ առե՛ր յինէն
Ի գրտաթէն փոխեմ յերկինս՝ ի դաս լուսեղէն» (ՀեԲ, էջ 209):

«Գիտենայ բժիշկն՝ որ հիանդութիւնն ի շորթորդ և ի պակասելոյ ժամա-նակն հասաւ, և ի պակասելն էաւ» (ՄՀՁՄ, էջ 138): «Ապա անուանեցին զայս ժամանակս ի պակասն. զի իր զործոյն առին և զիր անուն» (ն. ա. էջ 135):

Ընդհանրապէս պետք է նկատել, որ այս խոնարհմամբ բիշ բայեր են պահպանված, իսկ այդ բիշն էլ մասնենագրութեան մեջ սակավ է արտահայտ-վում:

Ի թույլ բազադրիչ ունեցող բայերում բազադրիչը խախտված է. կան զեղ-բեր, երբ հանդես է գալիս, ինչպէս՝ հանգեալ (հանգիմ-հանգի)՝ Փրգս. Քնն. էջ 106), քաղցալ (թաղցիմ-թաղցի)՝ ՀեԲ, էջ 210), զարբալ (ՖրԳ, էջ 489), Բաղցալ (ՎԱԱ, II, էջ 91), Բաղցան (ն. ա. էջ 131), կարեան (կարեչիմ-կորի)՝ ն. ա. էջ 124 և այլն): Ավելի շատ են այն զեղբերը, երբ ի թույլ բա-զադրիչը հանդես չի գալիս. ինչպէս՝ «...Նհար ժանաբն զինձն և զերկուս բա-մին կորեան և զարիքն ի վայր թափեցաւ և փխխալ (ՎԱԱ, էջ 4): «...Ի ժամ կոխելոյն զհնձանն դանակ մի կարաւ ի մէջ խաղողին» (ն. ա. էջ 203) և այլն:

Պատճառական բայեր. Անցյալ կատարչալում կրավորակերպ կազմու-թյամբ չեն հանդիպում: ներգործակերպ խոնարհումը նման է գրաբարին. բա-յահիմքի վրա դրվում են -ի, -եր (-իր), --ալ, -էլ (-իլ), -ին վերջավորու-թիւնները, ինչպէս՝ «Եւ հավեցոյց զամենն ի բանս, զոր արար... քան զա-մէնն ի վեր նստացին» (ՄԳԳ, էջ 40): «Կարտաք գազաւ հոգիդ 'ս այդ հողեղէն

²⁹ Այս զեմքում -ոյց վերջավորութեան փոխարեն հանդիպում է նաև -ուց, ինչպէս՝ պատկե-ցոց (ՎԱԱ, էջ 164), կակեցոց (ն. ա. էջ 301) և այլն:

մարմնոյ համար» (ՆԵՐ, էջ 159): «Նազար ձի վազան բերի, վազցուցի և այլ ոչ հասուցի» (Ն. տ. էջ 156):

«Նա իր բարբառն աճեղ զարհուրեցոյց զիս, որ զարթայ» (ԿԵՐ, էջ 159): «Յաչիցս աղբերացն շուրն քաշեցի, զինչ որ պնուցի, Ջիմ լիբոս զինչ զճաց կե-
բայ, ա՛յ, եղբարք, ինչ որ բուսուցի. նրկու լոյսն ի մի դարձաւ զիշերին, ինչուր
հասուցի» (ՅՐԳ, էջ 365):

Պատճառական բայերի անցյալ կատարչաւի խոնարհման պատկերը հե-
տևյալն է.

վազցուցի	վազցուցար
վազցուցիր (-իր)	վազցուցիր (-էք)
վազցոյց (-ուց)	վազցուցին

Այսպիսով, միջին հայերենում անցյալ կատարչալ ժամանակում գրեթե վերացել է կրավորակերպ (կրավորական սեռի) խոնարհումը: Կրավորակերպ խոնարհում էին ունենում և խոնարհման ածանցավոր, ա, ու խոնարհման պարզ և՛ պատճառական կերպի բայերը: Այս խոնարհումներում կրավորա-
կան սեռն արտահայտվում է կրավորական վ ածանցով:

Գեոե և խոնարհման պարզ բայեր կրավորական են դառնում ի խո-
նարհման ենթարկվելով: Սակայն հաճախ կրավորակերպ խոնարհվող բայը
ևս ստանում է կրավորական ածանց, ինչպես՝ ձեռնեցաւ (ՍԳԳ, էջ 54),
պսակուցաւ (Ն. տ. էջ 56), սպանվաւ (Ն. տ. էջ 69), յաղաղկուցաւ (Ն. տ.
էջ 73) և այլն:

ՀՐԱՎՈՐԱԿԱՆ ԵՎԱՆՍ

Հրամայականը միջին հայերենում արտահայտվում է երկու ձևով՝ բուն հրամայականով և ժխտական կամ արգելական հրամայականով: Հորդորական հրամայական միջին հայերենում չի հանդիպում, քանի որ գրաբարի II ապստանի ժամանակը, որի հոգնակի II դեմքից էր կազմվում հորդորական հրամայականը, չի օգտագործվում: Ասեմք, գրաբարում ևս հորդորական հրամայականն ստավիպական սեռական արժեք ունի, ահա ինչու գրաբարի շատ բերականներ այդ ձևը չեն բնդունում կամ համարում են ստորադասականի տարբերակված ձև:

Ի խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականում հանդես է գալիս անցյալի հիմքը՝ շեշտի տակ ց հնչյունի անկումով. ինչպես՝

- «Ենդրեա՛ և զի՛տ ըզկորուսեալս,
- Օգնեա՛, կանգնեա՛ ըզգլորեալս» (ՆԵՐ, էջ 181):
- «...Ըզուրք շոգին մեղ առաքեա՛,
- Մխիբաբեա՛ դմեղ հասարակ» (ՅՐԳ, էջ 420):

«Եւ բժկեա՛ գայտոցն և ղիւունդն իր բժշուրեամբն, զոր գրած է իր դուռն» (ՄԶՋՄ, էջ 23):
Այսպես նաև՝ գիտեա՛ (ՄԶՋՄ, էջ 34), հիշեա՛ (ՆԵՐ, էջ 173), Բաւեա՛ (Ն. տ. էջ 176) և այլն:

Բայց միջին հայերենի համար սա՛ չէ օրինաչափականը, այլ հրամայա-
կան եզակիի նա>է հնչյունափոխված վերջավորութիւնը՝ ձևերի օգտագործու-
մը, մի բան, որ հետագայում տիրապետող դարձավ արեւմտահայ գրականում

և բարբառներում, Օրինակներ. «Ապա սա բաղաւյի ալոր և շուշան ծաղկի տակ... գայս ամէն աղա և մաղէ՛ և ընդ մարմինն շփէ՛ յուշիկ յուշիկ» (ՄԶՋՄ, էջ 14): «Ապա ա՛ն ափսիմուն եօթն դրամ, և ի ներս ի մըտպոյին քնէլ, խառ-
նէ՛, ևւ ապա անո՛ւ՛ դամէնն, և պարզէ՛...» (Ն. տ. էջ 126):

«...Ջմառն օրըն դու յիշէ՛».

Զխըրատս ի արտիղ արնկէ՛, սա յամեն շարէ գրեղ պահէ՛» (ՆԵՐ, էջ 146):

«Փոյթ արձակէ՛ զնա ի կապէլ,

...Դանակ ա՛ն զմորթըն շրշէ՛» (ՇՔՁ, էջ 571):

Այսպես նաև՝ հաշվէ՛ (ՍԳԳ, էջ 58), վհաւէ՛ (Ն. տ. էջ 60), ծախէ՛ (Ն. տ. էջ 66), խառնէ՛ (ՄԶՋՄ, էջ 8), ձեփէ՛ (Ն. տ. էջ 9), ապաշխարէ՛ (ՅՐԳ, էջ 290), ազատէ՛ (ՎԱԱ, II, էջ 134) և այլն:

Հանել բայի հրամայականի եզակին ունի նա՛ն ձևը. ինչպես՝ «Եւ ի վերայ շար նախանձուն [մէկն] սասց թագաւորին. հա՛ն զիմ մէկ աշքն» (ՎԱԱ, II, էջ 260): «...Եւ ըստ հիւանդին ուժոյն արեւն հա՛ն (ՄԶՋՄ, էջ 121):

Եւ խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը կազմվում է բա-
յահիմքի վրա՝ էվ վերջավորութիւնով. ինչպես՝ «Ջամէն աղզի արուեստիւր պատուեցէ՛ք, բայց զգարբինն, զհիւսն և զբարգրոծն՝ աւելի» (ՍԳԳ, էջ 19): «Առաքեալքն... շուտոցին թէ վասն նախանձուն և ստեղծութեամբ պատուեցէ՛ք... զմիութիւնն» (Ն. տ. էջ 30): «Մանկաբէ, երբ ի հաց նըտոբբ, ձեռնեցէ՛ք աղբատը ձեզ ընկեր» (ՆԵՐ, էջ 158):

Ի խոնարհման ներգործական սեռի պարզ բայերի կրավորակերպ ձևերի չենք հանդիպում:

Ի խոնարհման ածանցավոր բայերի եզակի հրամայականում հանդես է գալիս արմատական հիմքը՝ շեշտով, իսկ հոգնակիում ավելանում է ՝ էվ վեր-
ջավորութեանը. ինչպես՝ «Թէ՛ հրէց... մարդ յղարկէ թէ՛ զնա ի յինայ բանն... կամ հետ մարդոյ հետ հա՛ս» (ՍԳԳ, էջ 26): «Ապա քամէ՛ և ա՛րհ ի ներքս կամ հետ մարդոյ հետ հա՛ս» (ՍԳԳ, էջ 52): «Ջմառը նստավար դու տե՛ս, որ ստան գրամ թարգմեալն» (Ն. տ. էջ 150): «Եւ նայ առեալ զթիւտան և զնաց քարձեր է զանձ շահար» (ՆԵՐ, էջ 150): «Եւ նայ առեալ զթիւտան և զնաց քարձեր է ի մէջ թիւտին ալսպես... հաւտէ՛ք զզուպս թիւտին բերդին» (ՎԱԱ, II, էջ 141): «...Կապեցէ՛ք՝ սա՛ւ՛ զղոցս ոտն ու զձեռն և արկէ՛ք ի հորն անշէջ» (Ն. տ. էջ 261):

Հարկանել բայի հրամայականում արմատական կ բաղաձայնն ընկնում է. «Ջայս ամէնս յիբար խառնէ՛, հա՛ր՞ աղէկ, և ի վերայ զխոյն զի՛ր» (ՄԶՋՄ, էջ 17):

Յուցանել բայը սպասվող ցո՛յց ձևի զիմաց ունի ցուցո՛ւ. «Ենկ ևս օտար լերկիր, մէկ ցուցո՛ւ. թէ՛ ի՛նչ կու կենաս» (ՆԵՐ, 144):
Ինչպես և խոնարհման պարզ բայերում, այստեղ ևս ներգործական սեռի բայերի կրավորակերպ (կրավորական սեռի իմաստով) խոնարհված բայաձևե-
րի չենք հանդիպում: Ավելին. և՛ ներգործական, և՛ չորս սեռի բայերը հանդես են գալիս նաև կրավորակերպ վերջավորութիւններով. ինչպես՝ «...Եւ այրն ետես զսատանայ և ասաց, թէ՛ հասի՛ր յազնութիւն» (ՎԱԱ, II, էջ 185):

«Ջամէնն ձրզէ՛, ՛ւ ազաա մընայ
...Գոխ՛ր տեղի՛ ՛ւ սաս՛ մեղայ» (ՅՐԳ, էջ 327—328):
Ի խոնարհման բայերի հրամայականի կազմութեանը նման է գրաբարին. ինչպես՝

³⁰ Հնարավոր է ենթադրել, որ հարել, հարել բայերի հրամայականն է

«Գիտես մարմին եմ կենդանի,
Զեմք աղառամ քարանձախ.
Նայես'ց և տե'ս, Տէ'ք մեր բարի» (ՅրԳ, էջ 543):
«Հայես'ց յանշէշ, հարն և անանց,
Յիշես' գրո մեզքն ու յաց» (ԸԵԲ, էջ 173):

«Ե զայս և ֆոսանկաց կեկեզցականացն տե'ս ու ոսի'ր, որ ջանուն (կա-
նոն) անուանեն (ՍԳԿ, էջ 21—22):

Պարզ բայերի -եա'ց վերջավորությունը շատ անգամ հնչյունափոխու-
թյամբ է հանդես գալիս. ինչպես՝ «Եւ յորժամ ասաց աղուվէն զգալն, թէ
ճայես' յաշս իմ...» (ՎԱԱ, II, էջ 98—99): Կամ՝ «Եւ նայ աղաշէր զհրշուսանի
և պաղատէր, թէ ողորմես' յ զհոգիս մի' աններ» (Ն. տ. էջ 177): Ունենք
նաև ես>ե հնչյունափոխված ձևով մեկ օրինակ. «...նայ ասաց, թէ վազն ալ
արեկ բանե'ց³¹ և առ գ. Գ. ատր վարձն և զնայ» (Ն. տ. էջ 147): Ճիշտ է,
«Առձեռն» բառարանը չունի բանել (բանիմ) բայը, բայց այս ուսմական բառը
պետք է գնար ի խոնարհման պարզ բայերի տակ:

Ա խոնարհման պարզ բայերում, ինչպես գրաբարում, շեշտի տակ անց-
յալի հիմքից բաղադրիչն բնկնում է. ինչպես՝ «...Զայս ամէնս աղա' և մարդէ'»
(ՄՀՋՄ, էջ 14): «Ապա թէ ամառն լինի և օդն տաք, զմարմինն հով ջրով աղէկ
լտա'»³² (Ն. տ. էջ 17):

«Այն մարդն որ աւառայ սորա, կամ աստէն իր տուն կու շինէ,
Զատամ թէ նա խելք ունի, աւառ' որ խիտ յիմար է» (ԸԵԲ, էջ 151):
Զոգնակիում անցյալի հիմքի վրա ավելանում է -և' վերջավորությունը:
Անտեսլովոր բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալի հիմքի
վրա -իր վերջավորության ավելացումով, ինչպես՝ «Ո'վ մարդ... բարձացի'ր
հօգով... և շերմացի'ր հրով սիրոյ նորա» (ՎԱԱ, II, էջ 80): «Քափէ զգինիդ և
լըշացի'ր և իմացի'ր³³ զար տանջիոյ» (ՅրԳ, էջ 307):

Հոգնակիում գրաբարյան -այլ, -արու՛մ կրավորակերպ վերջավորություն-
ների փոխարեն գտնում ենք -և' վերջավորությունը, ինչպես՝ «...Զամէնս այդ
ձևովդ իմացէ'ք. ու թող ի ձեր քսակդ շմանէ ի յայն հարամ իրացն» (ՍԳԿ,
էջ 45):

Իմանալ բայը եզակի հրամայականում ունի նաև իմա' ձևը. ինչպես՝
«Զայս իմա' որ երբ ծառ յորժամ կտրի... այն ծառն վատթարի, և թառամի
տերնն» (ՄՀՋՄ, էջ 37):

Դասնալ բայում ունենք ց>ն հնչյունափոխություն՝ դարձի'ր (ԸԵԲ, էջ
165), մինչդեռ բառնալ բայում պահպանվում է շհնչյունափոխված ձև՝ «Այլոց
այնչափ բուցի'ր, Որբան քեզ նս բեռն գրրել» (ԿԵԲ, էջ 176):
Թանալ բայի հրամայականը գտնում ենք քա'ց ձևով (ՄՀՋՄ, էջ 34, 70):
Այսպիսով, ա խոնարհման բայերում ևս կրավորակերպ խոնարհման չենք
հանդիպում: Ավելին. ածանցավոր բայերի հոգնակիի -այլ, -արու՛մ կրավորա-
կերպ վերջավորությունների փոխարեն ունենք ներգործակերպ -և' վերջավոր-
ություն:

³¹ Տողառակի ծանոթագրության մեջ տարբերակներից մեկում անենք բանի:
³² Կարծում ենք, որ սրտ անորոշ դիրքայր ասմական լուսով ձևն է:
³³ Իմացի'ր ձև ունենք եսև այլ հեղինակների մոտ, ինչպես՝ ՄՀՋՄ, էջ 4, Գրգո. Քնն. էջ 83
և այլն:

Ու խոնարհման բայերի հրամայականի օգտագործման հետևյալ դեպքերն
ենք նկատել. ա'ն (ՄՀՋՄ, էջ 9), կա'լ (ՄՀՋՄ, էջ 83), լի'ց (Ն. տ. էջ 147, 148
և այլն): Ու խոնարհման լեսոյ բայը հրամայականում ունի և խոնարհման
պարզ բայերի վերջավորություն՝ -և. «Ա'ն քահրիպար, և յատպէ... և լեսա'
խիտս մանոր» (ՄՀՋՄ, էջ 150):

Ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի միայն եզակի դեմքով կիրառության
դեպքերի ենք հանդիպել. ինչպես գրաբարում, ունեն -իր վերջավորություն.

«Զարքի'ր և դիտացի'ր, որ մեզ գարուն կամի յայտել» (ԿԵԲ, էջ 178):
«Մի' վճիր և մի' անկանիր ի մէջ վիճուցաց. այլ իմաստութեամբ վախի'ր
ի դիտաց» (ՎԱԱ, II, էջ 85—86):

Հետաքրքրական է պատճառական բայերի հրամայականի կազմությունը.
Եզակիում զուգահեռ ձևով հանդես են գալիս գրաբարյան -ա' (հայտնի է, որ
գրաբարում սուր շեշտի հետևանքով -ոյց ածանցի յ և ց հնչյունները զուրս են
ընկնում) վերջավորությամբ ձևեր, ինչպես՝ «Յր ի սիրտ է կել' անուազա՛ց'
և ուրախաց' և որ հոգս ունի' փարատէ' զհոգան և անեղացա՛ց' և որ վարեալ
է և երկիւղ ունի' ամեհէ' և աներկիւղացա՛ց'...» (ՄՀՋՄ, էջ 15):

«Վաստակէ' և անեցո', որ վրձարէ գտուողն...» (ԿԵԲ, էջ 151):
«...եւ ասաց նմայ... թէ ինձ մեկ ընկեր այլ կայ ի վիմին տակն. զնայ
գարս' (յ) զնա» (ՎԱԱ, II, էջ 131):

Մյուս կողմից՝ -ա'ը վերջավորությամբ նոր ձևեր, ինչպես՝ «Եւ հետ այնոր
զինութիւն կաղզացո'ր թմրհնով և սքնճուպիւնով Ակա թէ բնութիւնն
խիտ կակուղ լինի... զատմորսն զօրացո'ր նոան ջրով» (ՄՀՋՄ, էջ 25):
«...եւ այլ պզգզատունի կոթ և զարի յուցան զամախցո'ր և ապա կերցո'ր»
(Ն. տ. էջ 41): «Ապա թէ վատում է հրանդն շատ քրտնելոյ, զհիւանդն ի հով
տուն նստեցո'ր և տո'ր սփռել ի տունն վարզ» (Ն. տ. էջ 97) և այլն:

Այսպիսով, միջին հայերենում հրամայական ձևերում ներգործական սեռի
բայերը կրավորակերպ խոնարհում (կրավորական սեռի իմաստ ստատահայտե-
լու համար) չեն ունենում, նույնիսկ ա խոնարհման բայերի կրավորակերպ
-ա'յլ, -արու՛մ վերջավորությունները փոխարինված են -և' վերջավորու-
թյամբ: Ե խոնարհման պարզ բայերում գրաբարյան ձևերին զուգահեռ օգտա-
գործվում են -է' վերջավորությամբ ձևեր³⁴, որոնք տիրապետող միակ ձևը
զանաչառ ձգտում ունեն: Պատճառական բայերում հանդես են գալիս նոր
ձևեր՝ -ա'ը վերջավորությամբ (ցամախցո'ր, կաղզացո'ր, կերցո'ր և այլն):

ԳՐԱԲԱՐԻ ՍՏՈՐԻԱԿԱՆԱԿԱՆ ԵՎԱՆԱԿ

Միջին հայերենը, ինչպես և ամեն մի ժողովրդի լեզվական նոր գրակե-
րում կամ որակ, չինական պարիսպներով անջատված չէ նախորդ շրջանի
լեզվական իրողություններից: Մեր բնության ընթացքում տեսանք, թե շեշտ-
ված, որակական տարբերություններով հանդերձ, միջին հայերենը ինչքան
աղերսակցություններ, ընդհանրություններ և նույնացումներ ունի գրաբարի
հետ: Միջին հայերենում քառ պատահէ' օգտագործվում են նաև գրաբարի

³⁴ Այս ձևն, անշուշտ, եղել է և նախորդ շրջանի գրաբար մատենագրության մեջ. ինչպես՝
«Ե զու զորոց ժողով' և հրամայէ' յերննս տանել» (Սեբեոս, Ժ9):

ստորագասականի I և II ապստոսի ժամանակները: Գրեթե է, սակայն, որ գրանք ավելի շուտ աշխատության կամ խոսքի բնօրինակը գրաբար շարադրանքի դեպքում են օգտագործվում: Այս շրջանի մատենագիրներն, անշուշտ, գրաբար էին կրթություն ստանում և իրենց սանդղագործություններում պատմական կամ դավանարանական, կրոնական-էկեղեցական հարցերի մասին խոսելիս սովորելի ուժով ունին տալիս էին գրաբարյան լեզվական երանգ, այսպես նաև՝ երբ ավետարանից կամ կրոնական այլ գրքից պատմողաբար խոսք էին մեջ բերում: Վերևի մեր առածները ապացուցելու համար Սմբատ Գունդոսապլի «Պատաստանագրքից» կարելի է բերել հետևյալ հատվածները. «Եւ ոչ յիշնց զՔրիստոսի հրամանն, զոր հրամայեաց ս. առաքելոյն Պետրոսի, թէ զուս կէմ, և ի վերայ այդր վիմի շինցից զէկեղեցի իմ» (էջ 29): «Եւ թէ ոչ՝ որ վասն ոչինչ ազգ սղայանաց կամ ծուլութեամբ յամենցին, նա զարին նոցա և զկորուստ երկրին ի ձեռաց նոցա խնդրեցից՝ առ տէր» (ն. տ.): «Որ հակառակ էկեղեցի շինէ կամ քահանայութեան զործ այնէ բնորդէմ, անհնազանդութեամբ, հարցէ զնա օձն և սպանցէ» (ն. տ. էջ 42):

Նույն բանը նկատում ենք Հովհաննես Երզնկացու մոտ. արարչագործության և Քրիստոսի ծննդյան մասին խոսելիս ուժ գրանում է գրաբար, ստավել շատ են օգտագործվում ստորագասականի ձևեր.

«Մնանի տղայարար մանուկ կուսածին,
Ձի և մեղ շնորհեսցլ, ծնունդ հողէծին.
...ի երկրի շրջեցաւ բաննն հայրածին,
Ձի բարձցլ զգիւշ մեղաց մեր պատուհասին.
Մրկբաւէր Յովհաննէս բղաւորն ի շրթին,
Ձի շրջով մաւրեսցին մերքն աղամային,
...Ձի մեղ դարձուցլ լիւր սէրն առաջին» (Բանաստեղծություններ, էջ 194):

Եվ վերջապես մի օրինակ էլ Կոստանդին Երզնկացուց.

«Ասաց աստուած. Արասցաւ մարդ՝
ի պատկերի մերում նրման,
Ձի իշխեսցէ արարածոց,
ամենեցուն կացցէ իշխան» (Բանաստեղծություններ, էջ 221):

Օրինակներ շատ են, սակայն մենք նպատակ չունենք հեղինակների լեզվի ոճական առանձնատարությունները բնական Մեղ հետաքրքրող երևույթի լեզվական կողմն է: Մեր առածը, անշուշտ, բացարձակ ճշգրտությամբ չպետք է ընդունել: Միջին հայերենով գրող հեղինակները շատ անգամ ստորագասականի ձևերն օգտագործում են «անհարկի», երբ խոսքային-ոճական հանգամանքներ չկան: Այդ տեսակետից ուշադրով է վարդան Այգեկցին, որի առակներում առավել հաճախ են հանդիպում ստորագասականի ձևերը: Եվ ընդհանրապես, այս շրջանի հեղինակների մեջ Այգեկցու լեզուն ընդհանուր տպավորությամբ ավելի շատ է գրաբարյան: Գրանում կարելի է դուրսբերել համոզվելու Ահա նրա ժողովածուի առաջին առակից մի հատված. «Քաղաւոր մի, որ տիրէր ամենայնի, արքա երկու ազգարանս զեկեղեցիկս և կարգեաց զարս. Ք. դաս յապարանս իւր, զի կա[ց]ցեն ի հրամանս թագաւորին. և ոմանք ի զարաց թագաւորին հպարտացան և անկան ի փառաց. և ի միւս ապարանսն

պահապանս կացուց զի պանեցին, և եկեալ զարաց իշխանս առ միւս ապարանից պահապան և խարեաց և հնան զնայ յապարանիցն» (էջ 1):

Սա, կարելի է ասել, բիշ բանով կամ գրեթե ոչինչով չի տարբերվում V դարի զասական գրաբար մատենագրության լեզվից:

Ժիշա է, միջին հայերենում գրաբարի ստորագասականի ձևերն օգտագործվում են, սակայն լեզվի այդ շրջանն ունի ստորագասականի գրեթե ման ի՛ր ձևերը: Այստեղ պատկերը նույնն է, ինչ որ սահմանական ներկայի դեպքում. օգտագործման բուն իսկ փաստը կամ հաճախականությունը կարեւոր չէ. էականն այն է, որ կա նոր, որ գրավում է ներ տեղը և ձգտում է ընդհանուր ու բացարձակ դառնալու:

Միջին հայերենի համար բնորոշ ստորագասականի նոր արտահայտություններ են՝ բղձական, պայմանական և հարկադրական եղանակներով, որ ստորն բնակու ենք:

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Այս եղանակն ունի 2 ժամանակ՝ ապստոսի և անցյալ ապստոսի: Իմաստով համապատասխանում է արդի հայերենի բղձական եղանակին: Բղձական եղանակի կազմության համար օգտագործվում են գրաբարյան սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները: Միջին հայերենում սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմության մասին խոսելիս ասացինք, որ գրաբար լեզուն ստորագասականի անցյալ ապստոսի համար ձևեր չունեն, այսինքն՝ գրաբարում խոսելու էի³⁵, խոսելի, կխոսելի, պիտի խոսելի ժամանակներն արտահայտող առանձին բայածին չկար, այլ օգտագործվում էր անցյալ անկատար ժամանակը՝ ըստ ցանկության այս իմաստներից մեկնու՝ մեկն արտահայտելու համար: Ինչպես որ անցյալ անկատարն արտահայտում էր ստորագասականի անցյալ ապստոսի զազափար, համարանության օրենքով ներկան էլ արտահայտեց ստորագասականի ապստոսի զազափար: Եվ իբրք, ստորն կտեսնենք, որ միջին հայերենում բղձական եղանակը այդ բազմաձևվությունը որոշ չափով պահպանել է:

Այսպես՝ բղձական եղանակի բայածինները նույնանում են սահմանականի ներկա և անցյալ անկատար բայածինների հետ:

Օրինակներ ստորագասական ապստոսի ժամանակով.
«Եւ եկեալ բժշկապետացն և ասնն բնդ առիծն, թէ քո ցաւոյդ այլ զեղ չկայ, քան որ զիշուն ախանջն կարեն և զօրբոն ճանեն և տան, որ ոտես և սղեկնաս» (ՎԱՅ, II, էջ 6—7):

«Արի՛ք թ ծովափն իջնուն՝ ու ձկներ բրնենէ վարբմով.
Առնուն՝ և ի տուն տանինէ, խորովցէ զինբն կրակով» (2ԵԲ, 155):
«Երաւ մի բեզ ապ կամիւմ, զուգիւմ օղ քան զոսիխ խալաս,
Սիրես ՚ւ ի յականջդ ածես, թէ զու քո զկեանքդ կամենաս» (ն.տ. էջ 145):

«Մանուշակն էր ժողովել
հասար զամէն զժողկնին,
Թէ՛ Լիէ՛ք մեք միբանս

³⁵ Գրաբարի II ապստոսի ժամանակը հաճախ օգտագործվում է այս ժամանակի իմաստով.

երբանք կարենք զվարդենին,
 Որ շղա վարդն կարմիր
 և գեղեցիկ տերև սփռին,
 Այս ի նորա պայծառ տեսնեմ
 Որդիք մարդկան ի մեզ շնային» (ԿՆԲ, էջ 138):

Օրինակներ ստորագասականի անցյալ ասպանի ժամանակով.

«Թէ լինէր, որ զքեզ տեսն[է]ի առ յիս գալով,
 եւ խընդութեամբ ի դէմ գայի քեզ սիրով.
 Ի յերկրի երես դրն[է]ի քեզ կոխելով
 Աւ գհոզիս անդ հանէի յօժար կամով» (ԿՆԲ, էջ 167):
 «Պիտեր մեզ նաւապետ
 մարդ կենդանի՝ զերզ նոյ արդար,
 Որ մեզ տապան դարձէր,
 Մազուս լինէր եղբ ու վճար
 Կամ նման Աբրահամու
 ...մարդ մի լինար,
 Որ յիւր ի ծնընդենէն
 մէկ մ'աստուծոյ հանջանար» (ն. տ. էջ 201—202):

Ըրձական եղանակի բայաձևերը հաճախ հանդես են գալիս քող եղանակի-բառով: Այս դեպքում խոսքն ստանում է նաև թելադրանքի բնույթ: Գործածական է *Ա, առավելագուս III դեմքի համար: Ինչպես՝ «Ձէ իրաւունք, որ թագաւորն անպասակ սիրողով կենայ... քող օրինաւոր ամուսնանայ» (ՄԳԳ, էջ 17): «Թագաւորն ի խէշ հայրապետի քող շնտի, զի չէ հրաման» (ն. տ.):*

«...Քող մաշիմ ի յայս հոգս և խիտ հանամ» (ՅՐԳ, էջ 444):
 «Որք որ լըսեն այս ողբերայտ, թող ըզմեզայ սուգըն պահեն»

(ն. տ. էջ 274):

«Վասն այնոր ի յետ բանամ
 զիմ սրախս մէշն, որ է գեղին,
 Ով որ տեսնու զիմ սիրտս ի բաց՝
 քող գայ լըսէ զիմ գանդրանին» (ԿՆԲ, էջ 144):

Քող եղանակիով ստորագասականի (ըրձականի իմաստով) կիրառութիւններ ունենք նաև գրաբարում, ինչպես՝ «Ուրտ եմ, ուրտ եմ, և զարբայի զմեզս բառնամ. զիր ի վերայ իմ զմեզս արբայի, քող բառեամ» (Փ. Բուզանդ, ՄԻ, 7): Եւ կամ՝ «...«եւ զվեց գտաւորն հարկն՝ զոր առեալ են, և զբաղաբին մուտան՝ զոր կերեալ են շորերարիր գահեկան, զայդ ամենայն քող բերեն... (ՅՈՎ, Մամկոնեան):

Ըրձական բայաձևերը հանդես են գալիս նաև որ, քէ, երբ, երբ և այլ շաղկապներով ու եղանակավորող բառերով: Այս դեպքում գործողութեան եղանակի գրական համար նշանակութիւն ունի նաև եղանակիչ բառի ու ըրձական բայաձևի շարահարապետական կապը: Նման արտահայտութիւններով ըրձական բայաձևերն առավելագուս օգտագործվում են ստորագասական նախադասու-

«...Ողորմութեանդ քո ևս մնամ,

Որ տաս Գու ինձ համբերութիւն, որ սատանին գերի չլլնամ»

(ՅՐԳ, էջ 254):

«Ասէ մարդն, շունիմ ես աստ նշան կուտըն. ապայ թէ զաս, որ կապիմ զքեզ, որ ոչ փայլոյս և ես գնամ առնում զնշան կուտըն և զամ առ քեզ» (ՎԱԱ, էջ 115): «Ապա եթէ առնու վարդի ձէթ, ձիւնով կամ պաղով հովացնել, և ի վերայ գլխուն զնէ, նոյնպէս և զկուրծան իւրովն օծանել: Եվ ջուր զոր խմէ հով իրդ խմէ. ապա թէ ի բազանիսն եղկ ջրով աւազան մտէ և շուս կպնէ, խիստ օգտակար է»³⁶ (ՄՀԶՄ, էջ 9):

Մինչև հիմա բերված բոլոր օրինակներում ըրձականի բայաձևերը ճիշտ ու ճիշտ համընկնում են արդի հայերենի ըրձականի հետ: Մինչդեռ միջին հայերենում, ինչպես վերևում ասացինք, ըրձականը որոշ շափով պահպանել է գրաբարյան բազմիմաստութիւնը: Միջին հայերենում կան օրինակներ, որոնց մեջ ըրձական բայաձևերն արտահայտում են պայմանականի զազափար. ինչպես՝ «եւ երեսալ հրեշտակին ասաց. թէ տանիմ զքեզ ի դրախտն, դու նամբերես՝ս (=կհամբերես)». և ասաց, թէ՛ ե՛րբ լինի (=կլինի) այդ» (ՎԱԱ, II, էջ 170): «եւ ասէ շաղացպան. Ջոր հրեշտակն ասաց՝ ես ոչ արարի. և այժմ զայս և զառնէ զիս, և մեռանիմ մեղօք, և ամօթով լինիմ» (ՂԶՆԹ, էջ 284): «Թէ դու լըսես այս խորատիս, անանց լուսնի շուս հաստեիս (=կհաստես)» (ՅՐԳ, էջ 270): «եւ նա ասէ. դուք էք ծիծաղելու արժանի, զի դա հեզաւ երկիր. թէ արբեալ էի, նա ինքն զիս հեղէր (=կթափէր) երկիր» (ՎԱԱ, II, էջ 258): «...եւ ասէ ցնա. ո՛վ որգեակ, եթէ այդպէս պարկեշտ կեցեալ էիր դու յառաջագոյն, այժմ ի վերայ բարձի մեծագնոյ նստէիր (=կնստէիր) և բաղով ախորժ կերակուրս և խորտիկս ոտէիր (=կուտէիր) և անուշ համ զինի ըմպէիր (=կըմպէիր)» (ն. տ. էջ 267):

Թվում է, որ զուգահեռ կարելի էր անցկացնել գրաբարյան հետևյալ կիրառութիւնների հետ. «Արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել. տո՛ր ի բաց. ապա թէ ոչ, կռոյժով (=կկռվենք) մեծաւ պատերազմաւ» (Փ. Բուզանդ, V, ԱԲ): «Ջջու միս ոտեկ՝ դարձան է մարմնոյ, բայց եթէ զարիւնն որ ըմպիցէ՛ աւտակի (=կմեռնի)» (Եղեղիկ, I, ԺԵ): «Վարապի՛ որ զաղանազոյն է քան զամենայն զաղանա՛ ոտի միսն և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եթէ ոտէր որ՝ չվնասէ» (=չէր մնասի կամ չէր վնասվի):

ՊՐԱՅԻՆԱԿԱՆ ԿՈՒ ԵՆԹԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Պայմանական եղանակն ունի երկու ժամանակ՝ ասպանի և անցյալ ասպանի: Այս եղանակն իր արտահայտում իմաստով նույնատես է արդի հայերենի պայմանականի հետ: Պայմանական եղանակը կազմվում է գրաբարյան ներկա (ըրձական) բայաձևերի վրա կու մասնիկի ալվկացումով: Կազմութեան տեսակետից բոլորովին չի տարբերվում միջին հայերենի ներկայից.

³⁶ Ֆրասերեն լեզվում ըրձականի (mode subjunctive) գաղափարի զրուցումն անբաժանելի է որ (QUE) կառուցիչից: Այս կառուցիչի բայաձևերը խոսքահամար անհատական են:

նախադասութիւնից զօրս շի կարելի որոշել սահմանականի ներկան և անցյալ անկատարը միջին հայերենի պայմանականի արտահայտից և անցյալ ապառ- նիից, այլ միայն խոսքի, նախադասութեան մեջ: Այս նույնացումն է պատճա- րը, որ արեմտահայ բերականները պայմանական եղանակ առանձին չեն ընդունում⁵⁷:

Գիտենք, որ արեւելահայ գրականի բերականները ևս երկար ժամանակ չէին կարողանում որոշել այս բայածների արտահայտած իմաստն ու տեղը խոնարհման տախտակում: Պրոֆ. Մ. Արեղյանը միայն 1906 թ. կր-ով կարգը ված ապառնիի ձևերը առանձնացնում է սահմանական եղանակի ձևերից և նրա անցյալի ձևերի հետ միասին դնում է մի ընդհանուր եղանակի տակ՝ այն անվանելով ենթադրական եղանակ (Հ. Բարսեղյան, ԱՀԲԽՏ, էջ 233):

Այս դեպքում բայածների բազմաեղանակայնութեան նույն երևույթն ունենք, ինչ որ գրաբարում, մի բան, որ վերում տեսանք:

Կու եղանակիչը զրկում է ինչպես բաղաձայնով, այնպես էլ ձայնավորով սկսվող բայերից առաջ. ինչպես՝ «...Ասցին, թէ մեր ի գողութիւն կու եր- քանք կամ արեկ ի հետ մեզ ու թէ շես ի գալ, մեր կու պահեննք (=կսպա- րենք) զքեզ» (ՎԱԱ, II, էջ 312): «Եկն երկջն... էառ զաւետարանն և կարգաց զայն փոխն, որ ասէ, թէ՛ օտար էի ի ժողովեցը զիս, մերկ էի և զգեցուցէր զիս... լսեաց զայն աղբատն և ուրախացաւ... ահա փութով կու կատարի (=կկատարի) կամք իմ» (Ն. տ. էջ 264): «Ասէ այրն. ո՛վ կիմ դու, եթէ ասեմ, մեկուց կու մեռնիս (=կմեռնեմ)» (Ն. տ. էջ 161):

«...Պէն միսխորման մտլա զրզի.

Զիրար սրբենք խօջ կու լինի (=կլինի)» (ՀԵԲ, էջ 165):

«Արն որ հաստ ու կարճ լինի, նայ յետոյ լէբան կու բացուի. (=կբաց- ւի)» (ՅրԳ, էջ 491):

Ինչպես սահմանականի կու եղանակիչը, պայմանականի եղանակիչն էլ գտնում ենք հնչյունափոխված ձևով (կ. կոյ), ինչպես՝ «Ել զեն և ասաց ընդ յայրն, թէ՛ յորժամ դաս և առնուս զգուտար թագաւորին, ևս երթամ և մտանեմ այլ թագաւորի գուտար, և դու անդ մի՛ գար, թէ չէ յայնմանէ կիլանեմ (=կեւ- նեմ) և ի բեղ կոյ մտանեմ (=կմտնեմ)» (ՎԱԱ, II, էջ 134): «Եւ ասաց հորը- տակն, թէ՛ մի՛ խաւսի ի մէջ գրախտին թէ չէ՛ կոյ ճաննն (=կջաննն) զբեղ ի գրախտէն» (ՎԱԱ, II, էջ 169): «Այս ցաւուս թէզով ճար արա թէ չէ սքթայ կանէ (=կանի)» (ՄՀՁՄ, էջ 8):

ՀԵՐԱՊԵՐՈՒԹԻՒՆ ԵՎԱՆՔԻ

Արդի հայ բերականագիտութեան մեջ ըզձական եղանակի ձևերի հետ պիտի եղանակիչ ունեցող բայածները խոնարհման աղյուսակում առանձնաց- վում են որպէս առանձին՝ հարկադրական եղանակի ձևեր: Արեւելահայ գրա- կանի բերականներից միայն պրոֆ. Մ. Արեղյանը իր «Աշխարհաբարի բերա- կանութեան» (1906 թ.) մեջ վերջնականապես լուծեց այս հարցը՝ և՛ ապառնիի, և՛ անցյալ ապառնիի ձևերը համարելով նոր՝ հարկադրական եղանակի ձևեր: Արեմտահայ բերականագիտութեան մեջ Արսեն Այտընյանն իր հռչակավոր «Քննական բերականութեան» մեջ այս ձևերը դեռևս չի արժեքավորում և խո-

նարհման տախտակի մեջ չի մտցնում, մինչդեռ Աստուրների բերականու- թեան մեջ այս բայածներն արժեքավորվում են, մտցված են սահմանական եղանակի մեջ՝ «բացարձակ ապառնի» և «սակատար ապառնի» անվանում- ներով:

Հարցն այն է, որ պիտի ձևը պիտիմ բայի սահմանական ներկայի եզակի III դեմքի ձևն է. ահա ինչու երկար ժամանակ այն դիտվել է որպէս սոսկ եղանակիչ, ինչպես զուցե, երևի, բերես և այլ բաներ: Իրագուս, միջին հայե- րեանում մենք ունենք պիտիմ բայի ներկայի և անկատարի շատ ու շատ կիրա- ութութուններ, ինչպես՝

«Ի ծովէ նա վերացի,

...Քաղցրիկ ցօղէ յոր տեղ պիտի (=հարկավոր է)» (ՆՃԲԶ, 562):

«Թէպէտ և է դասն ու լեզի,

Ամենեցուն մեզ նա պիտի» (Ն. տ. էջ 564):

«Վեր յարեւելս կայր քաղաք մի...»

Գերեօ յիւր մէջն պիտի» (Ն. տ. էջ 568):

Այսպես նաև անորոշ գերբայի ժոռ. «Պիտի հանց բանալ ի հոս, որ երեսն ի հոն շամաշէ» (ՅրԳ, էջ 485): «Աւագ մեզ ճայիլ պիտի յայն արեւ որ լոյս կու ծագէ» (ՀԵԲ, 157):

Գիտենք, որ պիտիմ բայն իր բուն իմաստով գրեթե մեր օրերում էլ գոր- ծածական է եղել: Հիշենք Թումանյանի հետեւյալ տողերը.

«Իմ երազը շատ էր շքեղ՝

Գրախա պիտեր քաղաք ու գեղ...»:

Սակայն լեզվի այս շքանում էլ կարելի է նկատել, որ պիտի ձևը դարձել է եղանակիչ բառ, որը ստորագասականի բայածներին տալիս է անհրաժեշտու- րեն կամ հարկադրաբար կատարվելիք գործողութեան գաղափար: Լավագույնս սպացույցը այն բանի, որ լեզվի այս շքանում պիտի բայածներ, մեր պահել իր բայական անկախ իմաստը՝ այն է, որ հանդիպում է հնչյունափոխված ձևերով. ինչպե՛ս՝ պիտ, աի, որոնց մասին ստորև կխոսենք:

Հարց է ծագում. ինչպե՛ս է առաջացել, եղանակիչի ինքնուրույն կիրառու- թիւն ստացել այս բառը: Ասացինք, որ պիտի բայածնն արտահայտում է «հարկավոր է» իմաստը, ուստի սրան պետք է հաջորդեր որ ստորագասական շաղկապով սկսվող ենթակա բնույթի երկրորդական նախադասութիւն (բայի եղանակային ձևով)⁵⁸, ինչպես՝ «Եւ ասեն իշուանքն ընդ քուսիկին, թէ՛ համ- բերեցէ՛ր, այն խօզերն, որ կուտեն, նա պիտի որ վճարեն զամէն, զինչ կերեալ են» (ՎԱԱ, II, էջ 22): «...Եւ խաղտակերես պիտի որ տանի զբեզ» (Ն. տ. էջ 177):

«Քի՛ արեւն յերբ այրի և բորբոսի և թունձրագոյն լինի, նայ պիտի որ յիւր կերպէն ի սև մազձն դառնայ. և թէ չունենայ խաւսնորջ այս մաղձերս ...նայ յիւրեանց ժամն ի յւրեանց շարն պիտի որ կենան» (Գրգս. Քնն. էջ 21):

Շարունակութեան արդէն պարզ է. հայերեանում, առավելագույնս ժողովրդ- րական լեզվի մեջ, սովորական բան է ստորագասական նախադասութիւնն-

⁵⁸ Արսեն Այտընյանն այս մասին գրում է. «Պիտի հին գիմաղուրդը, որ հիմա միայն ստորա- գասականով մեկուց կը բանէ ապառնի շինելու, հին սովորների մեջ սկսավ որ շաղկապով գոր- ժատուի. այսպես՝ պիտի որ լինի» (ՔՔ, էջ 97):

⁵⁷ Տե՛ս Ա. Այտընյան, Փերականութիւն, էջ 56—57. Չապել 2. Աստուտ, ԳՔ. էջ 130.

րում շաղկապներ չգործածելը: Այստեղ ես չի գործածվում որ ստորագասական շաղկապը, որի հետևանքով վերևի մեր ձևերը կդառնային պիտի (որ) դառնայ, պիտի (որ) կենան, պիտի (որ) տանէի ե այլն:

Սակայն այստեղ ուշադրավր պիտի բալանէի վերածվելն է եղանակիչի, ինչպես. «Ես ասաց զեն, թէ ես կերթամ ի յայս անուն թագաւորի դուստրն ե ի բերանոյ աղջկան պիտի ասամ, թէ զայս անուն մարդ բերէր, որ կենն ե երբ բերեն... ես պիտի փախչիմ» (ՎԱԱ, էջ 136): «Ճգնատրն ասաց, թէ՛ թագաւորն ե ի յոր կինն... ամէն մեկ-մէկ բան ըջորդ խօսին, նայ տղան պիտի լավնայ» (Ն. տ. էջ 308):

«Ձիմ գրուխս ու զարինըս վարձ պիտի տամ.

Որ տանի զիս յայն տեղն, որ ես կու ցանկամ» (ՅորԴ, էջ 443):

Բերված օրինակներում հարկադրականի բալաններում պիտի եղանակիչը «հարկավոր է» բալանի իմաստով թարգմանելիս միտքը ճիշտ էր ստացվի. այս բոլոր օրինակներում պիտի եղանակիչը բղձական բալաններն տալիս է հարկադրարար կամ անհրաժեշտորեն կատարվելիք գործողության զարգիվար:

Այս շրջանի հեղինակների երկերում պիտի եղանակիչը հանգիստ է հնչյունափոխված ձևերով էլ բոկ սա վկայում է, որ եղանակիչը բավականին հետադարձ ունի, քանի որ մաշվածության երևույթը չէր կարող շատ շուտ դարձնուվել: Մի անգամ երբ պիտիմ բայի եզակի III զեմք լինելու իմաստը թուլացրել էր, պիտի ձևը կորցնում է վերջադրության ի ձայնավորը, որը բայի գրաբարչան բնորոշումը ե՛ խոնարհիչն է, ե՛ զեմքի ու թվի ցուցիչը: Հայտնի է, որ պրոֆ. Ս. Արեղյանը բայ հասկացության մեջ գրան էր առաջնություն տալիս:

Այսպես... Հայն մեղաւոր մարդն, որ պիտ ապաշխարէ ե դառնայ ի մեղաց... նմայ առողջութիւն պիտի տայ, որ ապաշխարէ» (ՎԱԱ, II, էջ 175):

Այլիկի համարն են այն զեպերը, երբ պիտի եղանակիչը հանգես է դալիս աի մասով միայն. ինչպես՝ «Ա. գեկայն, որ ի պատուհան դրի, վերուցիք պահեցիր թէ ոչ, ե ասաց կին... այս մեկ գիշերս ինչ աի լինայ, վաղն պահն» (ՎԱԱ, II, էջ 186):

«Յորժամ յարութիւն լինի, փողն երկու ձայնի աի գուչ» (ՅորԴ, էջ 347):

«Բարձր ես նրստեր ի վերայ խալուց՝

Յետև աի դաս աղկից ի վար» (Ն. տ. էջ 479):

«...Ով աստէն հարտար կացել, նա «զեկայ՛ր» ձայնըն աի լրսէ» (ՀՆԲ, 152):

Հարկադրական եղանակի արտահայտության մի առանձնահատուկ ձև ունի միջին հայերենը. կամն բայի ներկայի խոնարհված ձևերի հետ (կամիմ, կամիր...) բայը անորոշ դերբայով օգտագործելիս արտահայտում է հարկադրականի զարգիվար: Ինչպես՝ «Ապա թէ զիտենայ բժիշկն՝ որ հիւանդութիւնն երկար կամի քաշել (=պիտի քաշել, պիտի տեղ), պատե՛հ է որ զկերակուրն հաստ աայ» (ՄՀՁՄ, էջ 137): «Եսկ յայս ի ժամանակս ի լման եփի հիւանդութիւնն... ե ի հոս ցուցանէ բնութիւնն՝ գոր ինչ լինի կամի (=պիտի լինի)» (Ն. տ. էջ 135):

«Որով շարով շափես՝

Նոյնտղբն բեզ կամին շափել (=պիտի շափեն):

Որով զոր դասիս՝

Նոյն դասաստան կամիս կրել (=պիտի կրես)»³⁹ (ԿԵԲ, 179):

Միջին հայերենի այս կիրառությունների նախաձևեր կանք գտնում ենք ե գրաբարում. «Այն ինչ արեգակն ընդ երկրի նախակ կամէ: Իրրն օրն հինգ-օրեայ շարաթոյց լուսեայ կամէ» (ՆՀԲ, հ. I, էջ 1042):

ԵՐԿՐՈՐԳԱՆԸ ԲԱԿԱՐԳԱՆ ԳԱՄԱՆԱՆՆԵՐ

Միջին հայերենում գրաբարի բազադրայ ժամանակները լայն կիրառություն ունեն. առավելագույն անցյալ ե ապառնի դերբայներով ե եմ՝ օժանդակ բայով կազմվող վաղակատար-հարակատար ներկա (հարակատար) ե վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար) ժամանակները. ինչպես՝ «Ես երակքն փոքր գան, զի առանձնական տարութիւնն զերակն փոքր շարժ լուով, զի խուլվեցեայ է կ վատուեայ է» (Գրգս, Քնն. էջ 15): «Եթէ տեսնուս, որ լսելիքն խափանեայ է մէկ ախանջին ե կամ երկուքին, ե հետ այսոր մէկ մի զգաւորանացն ե կամ շորս զգաւորանին տկարացեայ են. դուն գիտացի՛ր որ պատահումն յղեղն է» (Ն. տ. էջ 93):

Այս նույն կազմությունների ստորագասական եղանակի բազադրայ ապառնի ձևերը (անցյալ դերբայ+իցեմ, իցես, իցէ...) գրեթե չեն օգտագործվում: Պատճառը հասկանալի է. գրաբարում այս կազմությունները համապատասխանում են աշխարհարարի՝ հարակատար դերբայով ե լինել բայի բղձական, պայմանական ե հարկադրական ձևերով կազմված երկրորդական բազադրայ ժամանակներին (սիրեայ իցեմ=սիրած կամ սիրված լինեմ, կլինեմ, պիտի լինեմ), իսկ միջին հայերենում, ինչպես ստորև կտեսնենք, հարակատարով երկրորդական բազադրայ ժամանակների կազմությունը շատ է տարածված:

Հայտնի է, որ անցյալ դերբայով կազմված վերահիշյալ բազադրայ ժամանակները գրաբարում հանդես են գալիս նաև մի այլ կառուցվածքով: Գրանդից յուրաքանչյուրի եզակի թվի III զեմքին կցվում են անձնական դերանունները՝ սեռական հոլովով: Այս զեպերում զեմքը ե զեմքի թվով արտահայտվում են ոչ թե եմ բայի, այլ անձնական դերանվան միջոցով. ինչպես՝ սիրեայ է իմ, սիրեայ էր իմ, սիրեայ իցէ իմ (սե՛ս Ա. Ա. Արբաճայան, Գրաբարի ձևաւարկ, Երևան, 1958, էջ 231—232): Գրաբարի այս բազադրայ ձևերը այս շրջանի հեղինակների գործերում չեն հանդիպում: Հասուկենա կիրառությունները գրանում են վարդան Այգեկցու առակներում:

Միջին հայերենում լայն կիրառություն ունեն նաև ապառնի դերբայի —ոյ մասնիկով կազմված գրաբարի բազադրայ ժամանակները: Գիտելի է, սակայն, որ ներգործական սեռի բայերն այս զեպերում կազմութանի իմաստ չեն արտահայտում, մինչդեռ գրաբարում, օրինակ, սիրելոց եմ կարող է արտահայտել սիրելու եմ, սիրվելու եմ իմաստները: Ապառնի դերբայով բազադրար

³⁹ Այս երևույթն իր ժամանակին նկատել է Ա. Այսրեյանը՝ դրելով. «Ուրիշ ձև բազադրայ ապառնի մ'ալ ունենեմք. ԺԳ դարերը, մեզ քանի մը ետ լեզուց նման, ոչոպե՛ն՝ Եարժ կամի լինել (զեանաշարժ պիտի բլլայ). Հիւանդն սոսոյ մտանել կամի (պիտի մեակի)», ՏԵ՛ս ԺԲ, էջ 97: Գրոֆ. Հ. Անադյանն էլ գրում է. «Ապառնի համար միջին հայերենում առանձին ձև չկու. զործածվում է սանձանակների ներկան (կու նախաձայնիկով միացած) ե կամ կամիմ բայի հետ միացած ստորոշը» (ԸՁԼ, հ. IV, Ա դիրք, էջ 380):

յալ ժամանակների օրինակներ այդ դերբայի քննության բաժնում բերել ենք: Այստեղ ավելորդ չէր լինի երկու օրինակ ես բերել:

«Ես առաջակն զգացաւ դարբան, զոր առնելոց էր (=անելու էր) առ նոսա» (ՎԱԱ, II, էջ 303):

«Երբ հանց ցեղ էր լինելոց (=լինելու էր), է՞ր հանգիպայ ես այս շարիս» (ՆորՔ, էջ 266):

Այս դերբայով կազմված ստորոգյալական եղանակի բաղադրյալ աղառնիկ ձևեր (սիրելոց իցեմ, սիրելոց իցես...) միջին հայերենում չեն հանդիպում:

Ինչ վերաբերում է անցյալ դերբայից վերլուծական կառուցվածքով կազմված դիմադր ձևերին (սիրեալ լինիմ, սիրեալ եղէ, սիրեալ լինիցիմ և այլն), ապա նկատելի է, որ այս բաղադրյալ ժամանակների կիրառությունը նվազագույնի է հասել, առավելագույն հանդիպում են ներկա ժամանակի ձևեր, ինչպես՝ լինիմ լեալ (ՄԳՔ, էջ 17), լինի առեալ (ն. տ. էջ 24): Մյուս ժամանակներով ձևեր չեն հանդիպում, և բնդհանրապես այս կազմությունները փոխարինված են հարակատար դերբայով կազմված բաղադրյալ ձևերով:

Արդ, երկրորդական բաղադրյալ ժամանակների հ'նչ ձևեր են յուրահատուկ լեզվի այս շրջանին: Լեզվի այս շրջանին յուրահատուկ են հարակատար դերբայով և լինիմ կամ ունիմ և այլ օժանդակ բայերով կազմվող բաղադրյալ ժամանակներ. ինչպես. «Ես երբ խաղի չեքմն, ա՛րի ի վերայ գլխոյն եզի շուր, յոր եկամ լինի շոր մանուշակն և վարդ...» (ՄՀՋՄ, էջ 8): «Ես ապա տո՛ւր կերպուր խաշո՛յ՝ որ յուշոյ մո՛ղ լինի զուգամ» (ն. տ. էջ 10): «Եւ իւր պատճառն այն է՞ որ տարութիւնն արգելամ լինի(ն) ի ներքս ի մարմինն զերդ քամի և պահած լինի» (ն. տ. էջ 39):

Ինչպես այս, այնպես էլ հարակատար դերբայի քննության բաժնում բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ ներդրածական սեռի բայերն այս կիրառությամբ ես գրեթե ունեն կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպաչին արտահայտության: Այդպես չէ, սակայն, արդի հայերենում. «Ես իր դասը սովորած կլինի», «Ես այդ ներկայացումը տեսած կլինի» և նման կառուցվածքի նախադասություններ, որտեղ հարակատար դերբայով կազմված բաղադրյալ ժամանակ-ստորոգյալն ունի ուղիղ խնդիր (դասը, ներկայացումը) լրացում, միանգամայն օրինաչափական են արդի հայերենի համար:

Այնուամենայնիվ, միջին հայերենի այս ձևերի և արդի հայերենի (նաև արևմտահայ աշխարհագրորդի) հարակատար դերբայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակների միջև հիշու չէր լինի հավասարության նշան դնել, արդի հայերենում այս ձևով կազմվում և կիրառվում են գրեթե բոլոր ժամանակները, մինչդեռ միջին հայերենում առավելագույն զործ են անվում ներկա և անցյալ անկատար ժամանակները:

Հայտնի է, որ դարբայում անցյալ դերբայով բաղադրյալ ժամանակների կազմությանը մասնակցում են նաև կամ և ունիմ բայերը, ինչպես՝ զարմացեալ կայ, նշանակեալ ունիմ և այլն: Այսպես էլ միջին հայերենում՝ հարակատար դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակներ են կազմվում կամ և ունիմ բայերի հարադրությամբ, ինչպես՝ «Ես իբրև ժողովեցան երկիրն ամեն ի հանդէսն բազումը ժողովուրդը և կային նոսամ զլիբրաց» (ՎԱԱ, II, էջ 27), «Եւ այն եկեղեցույ դուռն երկու ծառ կայր բուսած (անդ, էջ 212):

«Ծառ մի ժողկեալ զեղեցիպալս և ի սրտոյով կայ զարգաւած»

(ԿԵՔ, էջ 151):

«...Հանց տես, թե հիմն ի վերայ քրոջ կայ անհաստատ իբր մի շինամ»

(ն. տ. էջ 204):

«Քո ընդերին հոր մի՛ փորել

Թէ չէ այն քեզ կայ պատուստամ» (ն. տ. էջ 205):

Ինչպես բերված օրինակներից կարելի է համոզվել, կամ բայը հարադրվում է ինչպես շեղոր, այնպես էլ ներդրածական սեռի բայերի հետ. վերջինները արտահայտում են կրավորական սեռի իմաստ:

Ունիմ բայը նույնպես հարակատար դերբայի հետ երկրորդական բաղադրյալ ժամանակներ է կազմում: Այս դեպքում ներդրածական սեռի բայերը պարտադիր կերպով կրավորականի իմաստ չեն արտահայտում, այլ՝ ներդրածական սեռի. ինչպես՝ «...Հասանէ իւր տարութիւնն ի շորբորդ զհնութիւնն՝ որ ընդ ամենայն մարմնոյն յօրուածն են, և դամենայն անդամս պինտ ունին բունամ» (ՄՀՋՄ, էջ 39): «Եսկ այս իբրեմն... շունին հնար և հար ամենին զորբուհույ, զի երկու դէմսն ժողոված ունին՝ զքնութեանն և զմարմնոյն» (ն. տ. էջ 92—93):

Վերևի նախադասություններում ունենք ներդրածական սեռի բայ-ստորոգյալներ՝ իրենց ուղիղ խնդիրներով ((դ)անդամս, զմմն): Հասկանալի է, որ կրավորական սեռն այս դեպքում պետք է հասունի գրեթե ունենալու: Եվ իբր, այս կառուցվածքի բայերում կրավորականի իմաստն արտահայտվում է վ կրավորական անանցի միջոցով. ինչպես՝ «Ջերդ լոկեայ մարդն ջրով, որ վ արանամ է ինքն ամբ իբր, և կամ ջուր, որ բնութենէ ունի զտարութիւն, որ պէս ծծմ[ը]ին ջուրն և կորին ջուրն, զի այս ջրերս, որ խառնված ունին ու սկզբանէ զօրութեամբ...» (Պրգու, Քնն. էջ 11): Այլն՝ «Եւ այն մտղան, որ դաշտ նեղս բերէ, նայ լինի ի հաստ պղզամէ և ի կոկ, և կամ յայն պղզամէն, որ խառնամ ունի ի սե մտղմէն...» (ն. տ. էջ 61):

Միջին հայերենում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են նաև վաղակատար դերբայի (-ել վերջավորությամբ) և լինիմ կամ բայերի հարադրությամբ, ինչպես՝ «...Եւ իւր սէրն շատ հոգս լինի քաշի և շատ սուղ, կամ յայս ցեղ չեքմերուն շատ ատուրք լինի յամել առ ինքն: Եւ այն որ յերկար և բազում դատել լինի, և այն որ պաք շատ լինի կացել... և այնոց որ շատ տաք զեղեր կերել լինին և խմել...» (ՄՀՋՄ, էջ 40): «Երայց աղէկ պիտի տեսնույ ու փնտոկի վկայք, որ ընդ վնասուն սուրն ի դարպաս սացել լինի և ի դարպասն կը քնացել ու սացցել, և թէ շինի զնացել և խրատ առել ու սասցել...» (ՄԳՔ, էջ 80):

Մյուս կողմից՝ «Եսկ անմիտն ի խաւարի

կայ քանճուցել⁴⁰ յերազ քրնով» (ԿԵՔ, էջ 171):

Ինչպես նշել ենք վաղակատար դերբայի քննության բաժնում, այս կազմություններում վաղակատար դերբայը դարբայի անցյալ դերբայի հնչյունափոխված ձևն է (-եալ>-ել), սրտահասկան չէ, որ վաղակատարի՝ միջին հայերենին հատուկ -եր վերջավորությամբ ձևից կազմված բաղադրյալ ժամանակներ չեն հանդիպում:

⁴⁰ Տողառակ ունի նաև՝ քանճուցեալ:

Միջին հայերենում ևս անկանոն բայերը՝ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում գրեթե բոլոր ատանձնահատկություններին համապատասխան, կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ կանոնական, դեմ, լսել, եանաչիլ, լստնել, լսացանել, մեղանչել և ապ բայերը, որոնց անցյալ կատարյալի հիմքը չի կազմվում այլ արմատից, այլ նույն բայից՝ յուրահատուկ հրեջյունական փոփոխությունների գրեթե բոլորում: Վերահիշյալ բայերից յանցանել չի օգտագործվում, այլ հանդես է գալիս հարադիր կիրառության: Սակավ կիրառություն ունեն լստնել և մեղանչել բայերը: Ծանոթ է լստնել բայը հանդիպում է անցյալ կատարյալ և հրամայական ձևերով, ինչպես՝ հարեալ (26Բ, էջ 156), լստնան (ՎԱԱ, II, էջ 293): Հրամայականում՝ արի՛ (ՎԱԱ, II, էջ 112, 26Բ, էջ 210), արի՛՛ (26Բ, էջ 155): Արի՛ և Ե՛կ բայաձևերի միացությունից ստացվել է արիեկ (ՎԱԱ, II, էջ 144), ապս և արե՛կ (ՖրՊ, էջ 284, ՎԱԱ, II, էջ 112) հրամայականի ձևը:

Մեղանչել բայն ունի վաղակատարի ձև՝ մեղանչել է (4ԿԲ, էջ 171), իսկ անցյալ կատարյալում դեռ իշխող են գրաբարյան ձևերը՝ մեղար (ՎԱԱ, II, էջ 82), մեղալ (26Բ, էջ 211):

Ճանաչել բայն անորոշում ունի նաև Նշյունափոխված ձևը: Ներկայի հիմքից կազմվող ձևերում հանդիպում են երկու ձևերն էլ՝ նանչնան (ՍԳԳ, էջ 21), նանաչն (ՄՀՋՄ, էջ 37): Անցյալ կատարյալում ունենք ծանեան (26Բ, էջ 237), սակայն միջին հայերենի համար ավելի բնորոշ է նանաչից (ՎԱԱ, II, էջ 123) ձևը:

Այս խմբի մնացած չորս բայերը միջին հայերենում լայն կիրառություն ունեն Անորոշ գրաբարյան օգնական Նշյունափոխված ձևերով է հանդես գալիս առնել բայը (անել, այնել, այրնել): Ներկա և անցյալ անկատար ժամանակներում, ինչպես մյուս բայերը, անկանոն բայերը հանդես են գալիս գրաբարած՝ դնել (ՍԳԳ, էջ 21), լսել (ն. տ. էջ 60), կամ կու մասնիկով՝ կու անել (ՍԳԳ, էջ 45), կու լսել (ՖրՊ, էջ 392), կու տայլ (ՎԱԱ, II, էջ 170), կոյ առնել (ն. տ. էջ 187) և այլն:

Ի տարբերություն գրաբարի՝ այս անկանոն բայերն ունեն վաղակատար և հարակատար գրաբարյան, որոնք կազմվում են անցյալի հիմքի վրա -ել, -եր և -ած վերջավորությունների ավելացումով: Այս գրաբարյան կազմված վաղակատար և հարակատար (ներկա և անցյալ) ժամանակները լայն կիրառություն ունեն միջին հայերենում, ինչպես՝ արել են (ՍԳԳ, էջ 30), դրել են (ն. տ. էջ 52), լսել էի (26Բ, էջ 281), լսել էր (ՎԱԱ, II, էջ 7) և այլն: Մյուս կողմից՝ դրած է (ՍԳԳ, էջ 33), շնս դրած (4ԿԲ, էջ 31), շեռ տած (ՖրՊ, էջ 423) և այլն:

Այս խմբի բայերի խոնարհման մեջ զգալի փոփոխություններ են կատարված հատկապես անցյալ կատարյալի և հրամայական (բուն) ձևերում: Երբ (ՎԱԱ, II, 119), արար (ՄՀՋՄ, էջ 81), եղ (ՍԳԳ, էջ 29), եղալ (ՄՀՋՄ, էջ 77) ձևերով, սակայն հրամայականում ընդհանուր են դարձել արե՛լ (ՍԳԳ, էջ 24, ՖրՊ, էջ 310) և դրե՛լ (ՎԱԱ, II, էջ 257, ՖրՊ, էջ 395) ձևերը:

Լսել բայի անցյալ կատարյալը կազմվում է կանոնավոր կերպով, ինչպես՝ լսեցի (26Բ, էջ 156), լսեցիր (4ԿԲ, էջ 133), լսեցին (ՍԳԳ, էջ 43, ՎԱԱ, II,

էջ 124) և այլն: Իսկ հրամայականում տարածված ձևեր են լսե՛լ (ՍԳԳ, էջ 50), լսա՛ս (ՖրՊ, էջ 316), լսեցե՛լ (ն. տ. էջ 395), լսե՛լ (ՎԱԱ, II, էջ 8):

Հանդիպում են նաև այս ժամանակների գրաբարյան ձևերը, ինչպես՝ լուայ (26Բ, էջ 210), լուարե՛ս (ն. տ. էջ 184):

Տալ բայի անցյալ կատարյալում հետևողականորեն ունենք սուի, սուիր, սուալ խոնարհման նոր ձևերը, ինչպես՝ սուի (ՖրՊ, էջ 270, 370, 26Բ, էջ 154), սուիր (ՖրՊ, էջ 286, ՎԱԱ, II, էջ 169), սուի՛ն (ՎԱԱ, II, էջ 204), սուալ (ՖրՊ, էջ 330, 26Բ, էջ 156):

Հոգնակի հրամայականում տարածված են է սուլե՛լ (ՖրՊ, էջ 379, ՎԱԱ, II, էջ 136):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դեռևս մեր լեզվի այս շրջանում խախտվել էր այս խմբի բայերի անցյալի հիմքից կազմվող ձևերի գրաբարյան օրինաչափությունը: Նկատելի է բայաձևերի վերջավորությունների կազմության պարզեցում՝ լսեցի, լսեցիր, լսեց՝ փոխանակ լուայ, լուար, լուա. սուի, սուիր, սուալ՝ փոխանակ ետու, ետուր, ես զժվար բմբոննի ձևերին: Լեզվի այս շրջանում սկզբում պարզեցման և միօրինակացման այս ձևումը հետագայում օրինաչափ դարձավ, որով և աշխարհագրորի շրջանում այս խմբի լսել, նանաչել, մեղանչել բայերը զգալիորեն անկանոն խոնարհման ենթարկվելուց և դարձան կանոնավոր խոնարհման բայեր:

Անկանոն խոնարհման բայերի երկրորդ խմբի մեջ մտնում են գալ, երբալ, բմպել, լինել, ունել, ուտել բայերը, որոնց անցյալի հիմքում հանդես է գալիս համանիշ մեկ այլ արմատ, որ միայն խմատային աղբյուրացություն ունի անորոշի ուղիղ ձևի հետ: Անցյալի հիմքից կազմվող ձևերում փաստորեն խոնարհվում է մի այլ բայ՝ իր օրինաչափություններով, ինչպես՝ գալ-ել, երբալ-չոգ, բմպել-արբ, լինել-եղ, ունել-կալ, ուտել-կիր:

Վերահիշյալ բայերից բմպել և ունել սակավ կիրառությանը են հանդիպում, բմպել բայն անցյալ կատարյալում հանդիպում է կանոնավոր բմպեսց (ՎԱԱ, II, էջ 125) ձևով, իսկ ենթակայականը, ինչպես գրաբարում՝ արբեսց (Գրգս. Քնն, էջ 24) ձևով:

Ունել անցյալ կատարյալում ունի կալալ (ՎԱԱ, II, էջ 58) ձևը: Ուշագրավ է, որ այս բայը ներկայում կու եղանակիչ չի ունենում, այլ հանդես է գալիս գրաբարած, ինչպես՝ ունին (ՍԳԳ, էջ 40), ունի (ՖրՊ, էջ 475) և այլն:

Այս խմբի բայերից միջին հայերենում առավել գործածական են գալ, երբալ, լինել, ուտել: Ներկայի հիմքից կազմվող ձևերում գրաբարի համեմատությամբ ատանձնահատկություններ չեն դրսևորում: Բոլորն էլ ներկա և անցյալ անկատար ժամանակում միջին հայերենի խոնարհման համակարգին համապատասխան ունենում են կու (կոյ, կ) եղանակիչ, ինչպես՝ կուայ (ՆՇԲԶ, էջ 565, ՍԳԳ, էջ 24), կու գայր (ՆՇԲԶ, էջ 580), կոյ գայր (ՎԱԱ, էջ 173), կու երբան (ՍԳԳ, էջ 30), կու լինիմ (ՎԱԱ, էջ 22), կու ուտեմ (ՍԳԳ, էջ 31), կոյ ստեմ (ՎԱԱ, էջ 151, 193) և այլն:

Անցյալ կատարյալ ժամանակում լինել բայը ձգտում է ընդհանուր -այ, -ար, -ալ վերջավորությունների, ինչպես՝ եղար (ՎԱԱ, էջ 130), եղալ (ՍԳԳ, էջ 30-37), եղան (Գրգս. Քնն, էջ 10) և այլն:

Գալ բայի անցյալ կատարյալում ունի ե՛ գրաբարածն եկիր (26Բ, էջ 281, ՖրՊ, էջ 402) և՛ եկալ (26Բ, էջ 160) ձևերը:

Երբալ բայի անցյալ կատարյալում ունի չոգ հիմքը, ինչպես՝ չոգան (ՖրՊ, էջ 419):

Միջին հայերենի խոնարհման համակարգին համապատասխան զգլ, լինել և ուտել բայերի սնցյալի հիմքից կազմվում են վաղակատար և հարակատար ժամանակներ, ինչպես՝ եկել (ՆՇՐԶ, էջ 574), շեմ եկել (ՎԱԱ, էջ 136), եկած է (ՇԵԲ, էջ 197), չեւ եղեւ (ՖրԳ, էջ 397), կերել եմ (ՇԵԲ, էջ 326), կերեւ եմ (ՎԱԱ, էջ 44, 155) և այլն: Ուտել բայի ենթակայականը հանդիպում է կերող ձևով՝ Պահոց պահող շեմ, այլ կերող (ԿԵԲ, էջ 175):

Գալ բայը հոգնակի հրամայականում ունի եկլ'Բ (ՎԱԱ, էջ 265, ՄԳԴ, էջ 17) ձևը:

ՊԱԿԱՆԱԿՐ ՔԱՅԵՐ

Մեր լեզվի այս շրջանում գրեթե չեն օգտագործվում զոլ և զոզ պակասավոր բայերը, առաջինը փոխարինված է լինել բայով, իսկ երկրորդը, ինչպես հայտնի է, զրարարում մեծ մասամբ II ապառնի ժամանակով էր օգտագործվում: Միջին հայերենը, ինչպես տեսանք, ունի այս ժամանակի կազմութայն իր ձևերը:

Եմ, կամ, պարտիմ բայերը ևս ապառնի ձևերով հանդես չեն գալիս, այլ միայն սահմանական ներկա և անցյալ ժամանակներով: Այսպիսով, զրարարի պակասավոր բայերը միջին հայերենում կարելի է ամփոփել խոնարհման հետևյալ տախտակով:

		եմ	
ներկա՝		անցյալ	անկատար՝
եմ եմք (ենք)		էի	էաք
ես էք		էիր	էիք
է են		էր	էին

կայ

Ներկա՝ կայ, կան
 Անցյալ անկատար՝ կայր (կար), կային

Պարտել (= պարտավոր լինել)

ներկա՝		անցյալ անկատար՝	
պարտիմ	պարտիմք	պարտէի	պարտէաք
պարտիս	պարտիք	պարտէիր	պարտէիք
պարտի	պարտին	պարտէր	պարտէին

ԺԻՏԱԿԱՆ ԽՈՆԱՐԻՄ

Միջին հայերենում բայի ժխտական կամ բացասական ձևերը հարուստ զրանորոմներ ունեն: Բայի բացասական ձևերը կազմվում են հաստատականի վրա ոչ, չի, չ՛, մի՛ բացասական մասնիկների ավելացումով: Այժմ տեսնենք, թե բայի տարբեր ժամանակները ժխտականի կազմութայն ի՛նչ ձևեր ունեն:

Ժխտական զերբայի քննութայն ժամանակ մենք խոսեցինք ներկա և անցյալ անկատար (ուտել և պայմանական ասպարնի և անցյալ ասպարնի) ժամանակների ժխտականի զերբայավոր կազմութայն մասին, սակայն վերոհիշյալ

ժամանակներն ունեն նաև ժխտականի այլ կազմություններ: Միջին հայերենում զրարարակերպ ներկայի ժխտականը կազմվում է՝

ա) Բայաձևի վրա չ ավելացնելով, ինչպես՝ «...եւ այս ցեղս դատածուն և գրծիութիւնն շրճորմի բնաւ» (ՄՀՋՄ, էջ 37), «եւ պատճառն այն լինի, որ ի պատեհի ժամն արին շրոզս ի յամէն և ի բազմանայն վառի և բորբոսի» (ն. տ. էջ 70), այսպես նաև՝ չհանք (ՄԳԴ, էջ 10), չհնազանդի (ն. տ. էջ 11), չմտնէ (ն. տ. էջ 40) և այլն: Բերված օրինակներում երևում է, որ չ մասնակն ավելանում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող բայաձևների վրա:

Որպես հեղինակային լեզվի առանձնահատկություն պետք է դիտել Գրիգորիսի մտա հանդիպող հետևյալ երևույթը. նման կազմությունների դեպքում թե՛ ձայնավորով և թե՛ բաղաձայնով սկսվող բառերից առաջ գտնում ենք յ հելլոսի հավելում, ինչպես՝ «Իսկ թէ հայիս և շարձկեայ յուսայմուտսն, նա շտգալ մին, այլ նոյն կուր կենայ» (էջ 85), «եւ մարդն շլիբուր իւ շունն կատգած է թէ ոչ, նայ այսպէս փորձէ» (ն. տ. էջ 46), այսպես նաև՝ յլինձայի (էջ 16), շկշտեայ (էջ 48), շխնդարալ (էջ 79) և այլն: Այս օրինակներում, բնտ երևույթին, ի>յ հելլոսափոխություն ունենք. յ-ն զրվում է (չի>չլ) թուլացած ի-ի փոխարեն:

բ) Միջին հայերենում զրարարակերպ ներկայի ժխտականը կազմվում է նաև չի մասնիկի ավելացումով. ինչպես՝ «եւ ի ստամորին ի վատուժութեւնէ... զհերակուրն հայել չի կարէ, և լինի որ արիւր զհերակուրն» (ՄՀՋՄ, էջ 25):

«Երանի, որ գայն անեղ օրրն չի մտնայ» (ԿԵԲ, էջ 205):

«Առչն աչերուս բայլես...»

Չի դառնա հեղ մի յիս հայես.

Չի գիտե՛ս քո պլպուլն եմ ես» (ԿԵԲ, էջ 160):

Մոզորարար չի ժխտականը զրվում է բաղաձայնով սկսվող բառերի վրա, բայց պատահում է նաև ձայնավորից առաջ. ինչպես՝ «...եւ չի բնդուեի դուսազանին գիճութիւնն» (ՄՀՋՄ, էջ 42):

Ժխտականի այս նույն կազմություններն ունեն նաև բղձականի ապառնին և անցյալ ապառնին: Այդ հասկանալի է, քանի որ զրարարի ներկա և անցյալ անկատար բայաձևերը միջին հայերենում ստորագասականի՝ բղձական ապառնիի և անցյալ ապառնիի, իմաստ են արտահայտում, ինչպես՝ «եւ իւր ստածունն այս է... յամենայն ցեղ տար կերակրող պատրաստ պահել, որ շվառի (-շվառի) բնական տարութիւնն և ի բաղանձաց պատրաստ կայ, որ շրբորոսի (-շրբորոսի) յաւելուածքն ի մորմինն» (ՄՀՋՄ, էջ 16): Ահա և ժխտական բղձականի մի օրինակ չի մասնիկի կազմութայն. «Բայց յորժամ խաղաղի լցրին, ապա ի բաղանիս մտո՛ և տե՛ս որ շոճանա զմարմինն ձիթով, ոչ չի լսցիլի զառտ շնչահանքն, միթին զորութեամբն չի բուենս. և երբ քրտնի, ապա ոճէ՛ զմարմինն խիբի ձիթով... բայց տե՛ս աղէկ որ չի վատուժի հրանդն» (ն. տ. էջ 10):

Թող եղանակավորող բառով կազմվող բղձական բայաձևերում ևս ժխտականն արտահայտվում է չ և չի մասնիկների ավելացումով, ինչպես՝ րող շեստի (ՄԳԴ, էջ 17), րող շիբնի (ն. տ. էջ 19), րող շուտի (ՄՀՋՄ, էջ 46), բայց և՛ րող չի յամէ (ն. տ. էջ 23), րող չի մտն (ն. տ. էջ 24) և այլն:

⁴¹ Ըստ Այսերյանի՝ «Ընտանական (լեզվով զրոզներու թով շատ ավելի հանար և չ, քան թի ոչ» (ՔՔ, էջ 87):

դ) Ի տարբերություն չ և չի մասնիկների, որոնք հավասարապես գրվում են թև՝ ներկա և թև՝ ստորադասական (բղձական) բաշաձևերի վրա, ոչ ժխտականք գրվում է միայն սահմանականի ներկայի և անցյալ անկատարի վրա, ինչպես՝ «(Յերբ) արինն չընծայի, նայ գոյն և գեղեցկութիւն ոչ ունենայ (=չի ունենում), և զոգն սպիտակ լինի» (Փրգո, Քնն. էջ 16): «Իսկ թէ ասարութիւնի շարանց լինի... երեսն լինի բաց կարմիր և շառագուն, և ջերմն մարմնոյն ոչ կալետ» (=չի գաւտում) կրակիծ» (ն. տ.):

«Իմաստունն ոչ երկրնչի.

Թէ հարկանեն զինքնն սրբով» (ԿԵԲ, էջ 172):

Արդ, հարց է առաջանում. այս բոլոր ձևերից ո՞րն է ավելի նախընտրելի միջին հայերենի համար: Այս հարցադրումն իսկ ճիշտ չէ. միջին հայերենում ստանց խորություն օգտագործվում են բոլոր ձևերն էլ ևաճախ նույն նախադասության մեջ կարելի է հանդիպել և՛ մեկ, և՛ մյուս ձևին, ինչպես՝ «Ամենայն խոց, որ ոչ չորսնայ, շղջանայ» (ՄՀՁՄ, էջ 53). «...Զօմանս զմարմինն ձիթով, որ չի խցիկի զոգոս շեշահանքն» (ն. տ. էջ 10). «...Կամ՝ Բձիս որ արևամբող զընեցիր, այլ շերկընչիմ՝ ոչ վախենամ» (ՖրԳ, էջ 255):

Այսպիսով, սահմանական եզանակի ներկան և անցյալ անկատար միջին հայերենում ունեն ժխտականի 7 դրսևորումներ՝ 4 դերբաշավոր և 3 մասնիկավոր: Ե՛նն վերջնենք, օրինակ, Բայլել բայր, ապա նրա սահմանականի ներկա և անկատար ժամանակները կունենան ժխտականի հետևելու ձևերը.

ներկա (անկատար)		անցյալ անկատար	
չեմ ի քալել	չեմք ի քալել	չէի ի քալել	չէաք ի քալել
չես ի քալլել	չէք ի քալլել	չէիր ի քալլել	չէիք ի քալլել
չէ ի քալլել	չեն ի քալլել	չէր ի քալլել	չէին ի քալլել
չեմ ի քալլեր	չեմք ի քալլեր	չէի ի քալլեր	չէաք ի քալլեր
չես ի քալլեր	չէք ի քալլեր	չէիր ի քալլեր	չէիք ի քալլեր
չէ ի քալլեր	չեն ի քալլեր	չէր ի քալլեր	չէին ի քալլեր
չեմ քալլել	չեմք քալլել	չէի քալլել	չէաք քալլել
չես քալլել	չէք քալլել	չէիր քալլել	չէիք քալլել
չի քալլել	չեն քալլել	չէր քալլել	չէին քալլել
չեմ քալլեր	չեմք քալլեր	չէի քալլեր	չէաք քալլեր
չես քալլեր	չէք քալլեր	չէիր քալլեր	չէիք քալլեր
չի քալլեր	չեն քալլեր	չէր քալլեր	չէին քալլեր
չքալլեմ	չքալլեմք	չքալլէի	չքալլեաք
չքալլես	չքալլէք	չքալլէիր	չքալլէիք
չքալլել	չքալլեն	չքալլէր	չքալլէին
չի քալլեմ	չի քալլեմք	չի քալլէի	չի քալլեաք
չի քալլես	չի քալլէք	չի քալլէիր	չի քալլէիք
չի քալլել	չի քալլեն	չի քալլէր	չի քալլէին
ոչ քալլեմ	ոչ քալլեմք	ոչ քալլէի	ոչ քալլեաք
ոչ քալլես	ոչ քալլէք	ոչ քալլէիր	ոչ քալլէիք
ոչ քալլել	ոչ քալլեն	ոչ քալլէր	ոչ քալլէին

Այսպիսով, վաղակատար և հարակատար բաղադրյալ ժամանակների ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի վրա չ մասնիկի ավելացումով:

Ի տարբերություն հաստատական ձևերի, ժխտականի ղեկըրում օժանդակ բայն անցում է դերբայից ստաշ, ինչպես՝

«Անշխարհս չէ բեզ մնալոյ
 Է՛ր պարապիս դու ի լալոյ» (ԿԵԲ, էջ 172):

«Մ՛յ պիղոթ, որ դու բժիշկ ես, դու գրեզ է՛ր չես բժշկիլ» (ՎԱԱ, II, էջ 296):
 «Ես սասն. բաւ լիցի, տիկին, միք չեմք ասել» (ն. տ. էջ 297):

«Թէ յառաջագոյն զայս զիտացել էին առաջինքն, նա չէին արել վասն այս ա՛հիս՝ քան մէկ անուն» (ՄԳԳ, էջ 30):

Նկատենք, որ վերոհիշյալ ձևերի ներկայի եզակի III ղեմքում օժանդակ բայը չի հնչումափոխվում, ինչպես՝ չէ հրամայել (ՄԳԳ, էջ 49), չէ յարկել (ՄՀՁՄ, էջ 111), չէ աշակերտել (ԿԵԲ, էջ 187), չէ տեսել (ՖրԳ, էջ 409), չէ ծնել (ն. տ. էջ 265) և այլն:

Ձի հնչումափոխված ձևով օրինակ ունի Հովհաննես Երզնկացին՝ «Է՛ր չի ասել... մեղայ» (էջ 230): Իսկ սողաատակում, այլ ձևագրերում ունի՝ չես ասել, և դա ավելի ճիշտ է, քանի որ հոգեմակը դիմում է խոսակցին: Մինչդեռ հայանի է, որ արդի հայերենում նման կազմություններում երրորդ ղեմքի է օժանդակ բայը փոխվում է ի-ի (չի սիրելու, չի սիրել):

Վաղակատար ներկա և անցյալ ժամանակների ժխտականը հանդիպում է նաև ոչ մասնիկով. այս ղեկըրում էս օժանդակ բայը գրվում է դերբայից ստաշ, ինչպես՝ «Եւ նորա ասեն. քան զբեզ ալ խաղբ մարդ այլ ոչ ենք տեսեր» (ՎԱԱ, II, էջ 50): «Այր մի զոզ բազում զօղութիւնս արար և եկեալ ի զղջումն. և ոչ էր քարկեր զզոգութիւն» (ն. տ. էջ 185):

«Ոչ եմ արկել ես փոզ ի զուշ,
 Ոչ եմ Բաղկի զմեղացն փուշ...» (ԿԵԲ, էջ 174):

Ի տարբերություն արդի հայերենի, հարակատար ժամանակների ժխտականի կազմությունն ղեկըրում օժանդակ բայը միշտ գրվում է դերբայից ստաշ, ինչպես՝ «Տեսեալ աղետուն առաջ. զարմացալ եմ ո՛ւմ ազոտա... թէ ինչ է պատճառն, որ հասանց թագաւոր չես զրամ» (ՎԱԱ, II, էջ 31): «Եւ այս հանաք էր զրամ ի կանոնքն, ու այլ առաջ չէր զնացած, զոր, թէ զնացած էր՝ նա պատահէ էր» (ՄԳԳ, էջ 38—39):

«Մտորն ժաղիկըս ի վեր փրչեն,
 Թէ կան զայար ու չեն մրսած» (ԿԵԲ, էջ 150):

Այս ղեկըրում էս ներկայի եզակի III ղեմքում է օժանդակ բայը չի հնչումափոխվում, ինչպես՝ չէ օրինում (ՄԳԳ, էջ 21), չէ ընդունում (ն. տ. էջ 33), չէ կախած (ՎԱԱ, II, էջ 246), չէ տեսած (ԿԵԲ, էջ 219) և այլն:

Շարունակելով մեր խոնարհման տախտակը, կարծում ենք, ավելորդ չէր լինի ստորև տալ Բայլել բայի ապամի, վաղակատար և հարակատար ժամանակների կազմությունները ժխտական խոնարհմամբ.

Ապամի		Անցյալ ապամի	
չեմ քալլելու	չեմք քալլելու	չէի քալլելու	չէաք քալլելու
չես քալլելու	չէք քալլելու	չէիր քալլելու	չէիք քալլելու
չի քալլելու	չեն քալլելու	չէր քալլելու	չէին քալլելու

Վարդակատար (Ներկա)		Անցյալ վարդակատար	
չեմ բայլել	չեմք բայլել	չէի բայլել	չէաք բայլել
չես բայլել	չէք բայլել	չէիր բայլել	չէիք բայլել
չէ բայլել	չեն բայլել	չէր բայլել	չէին բայլել

Վարդակատար (Ներկա)		Անցյալ վարդակատար	
ոչ եմ բայլել	ոչ եմք բայլել	ոչ էի բայլել	ոչ էաք բայլել
ոչ ես բայլել	ոչ էք բայլել	ոչ էիր բայլել	ոչ էիք բայլել
ոչ է բայլել	ոչ են բայլել	ոչ էր բայլել	ոչ էին բայլել

Հարակատար (Ներկա)		Անցյալ հարակատար	
չեմ բայլած	չեմք բայլած	չէի բայլած	չէաք բայլած
չես բայլած	չէք բայլած	չէիր բայլած	չէիք բայլած
չէ բայլած	չեն բայլած	չէր բայլած	չէին բայլած

Անցյալ կատարյալի ժխտականը կազմվում է գրական ձևի վրա զ մասնիկ ավելացնելով, ինչպես՝ «...Չուտոցին թէ վասն նախանձու և ատելութեամբ պատռեցէք...» (ՍԳԴ, էջ 230). «Թէ զիրար բշտեն ու սպանենն, նա թէ արծո-դին կամօք է, որ շատաց կամ շատեց...» (Ն. ա. էջ 82). «Հանց փորձելոյ ինձ տայ լեղի՜ ես զայն առի շամաշեցիք» (ՖրՊ, էջ 289). «Ասէ Քաղիանոս, եթէ՜ շոնստայ ես որ բնական սատայն ցնեքբալ երակացն բորրոսեցաւ...» (ՄՀՋՄ, էջ 63):

Վերևի օրինակներում կարելի է տեսնել, որ զ մասնիկը գրվում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկզբող բայերի վրա, մինչդեռ բաղա-ձայնով սկզբող բայաձևերը ունենում են նաև շի մասնիկ, ինչպես՝ «Ապուստա-րի՛ն աւէ... գոլորշիքն ամենայն մարմնոյն չեթմացեալ սրանան, վասն ան պատճառին՝ որ կերակուրն յուր ժամն շի հանդիպեցաւ (ՄՀՋՄ, էջ 26)». «Անկայ ի յովոյց ցընր ու զհոգոյ տուն շի շիեցիք» (ՖրՊ, էջ 362), այսպես նաև՝ շի դիրի (ՖրՊ, էջ 285), շի անսալ (ՎԱԱ, II, էջ 199), շի հասաւ (Ն. ա. էջ 93) և այլն:

Անցյալ կատարյալի ժխտականի կազմության երրորդ ձևն ստացվում է բայաձևից առաջ ոչ մասնիկի ավելացումով, ինչպես՝ «...Ընդէ՛ր ոչ կատարե-ցեր, զոր կարգացեր. ես օտար էի և ոչ ժողովեցեր, մերկ էի և ոչ զգեցուցեր, քաղցեալ էի և ոչ կերակրեցեր (ՎԱԱ, II, էջ 264): «...Ես սկսաւ ջուր արկանկ ի նմոյ, զի կարծեաց, թէ ջրոյ աման է. և ոչ լցաւ ջրով» (Ն. ա. էջ 95):

Ինչպես սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակների ժխտա-կանի մասնիկավոր ձևերը, անցյալ կատարյալի ժխտականի այս երեք ձևերն էլ հավասար կիրառություն ունեն մեր լեզվի այս շրջանում:

Այսպիսով, խոնարհվող բայի վրա անցյալ կատարյալում կունենա հե-տևյալ ձևերը.

Անցյալ կատարյալ	
չբայլեցի	չբայլեցար
չբայլեցեր (-իր)	չբայլեցիք
չբայլեաց	չբայլեցին

չի բայլեցի	չի բայլեցար
չի բայլեցեր (-իր)	չի բայլեցիք
չի բայլեաց	չի բայլեցին
ոչ բայլեցի	ոչ բայլեցար
ոչ բայլեցեր (-իր)	ոչ բայլեցիք
ոչ բայլեաց	ոչ բայլեցին

ԱՐՊԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Միջին հայերենում արգելական հրամայականը հարուստ գրոհորումներ անի: Նախ՝ զբարբարի հետեղութեամբ արգելական հրամայականը կազմվում է ավելյալ բայի սահմանական եղանակի ներկայի II զեմքից: Եղակի թվում բա-յի զեմային և վերջավորությունը փոխարինվում է ր-ով: Հոգնակիում ներկայի բայաձևը մնում է անփոփոխ: Այս բայաձևից առաջ գրվում է մի՛ արգելականը: Այսպիսով, բոլոր խոնարհումների արգելական հրամայականի բայաձևերը անեն հետևյալ վերջավորությունները.

ե խոնարհում՝	-եք, -էք
ի խոնարհում՝	-իր, -իք
ա խոնարհում՝	-ար, -արք
ու խոնարհում՝	-ուր, -ուք

Այս օրինակավորությունները տարածվում են ինչպես ածանցավոր, պատ-ճառական, այնպես էլ անկանոն բայերի վրա: Ստորև բերում ենք օրինակներ բոլոր 4 խոնարհումների բայերով.

- ե—«Չբանի գերիւս ծայրն ամուր մի՛ պահեր, «Հանց կըրակ մի՛ վառեր, որ յինքն դու այրիս» (ՖրՊ, էջ 249—250): «Ես զնաց առ կին և առց. ա՛յ կին, ես քեզ բան մի ասեմ և դու զան մարդոյ մի՛ ասեր» (ՎԱԱ, II, էջ 133): «Իսկ շորային ձիթերով մի՛ օծաներ զմարմինն» (ՄՀՋՄ, էջ 13): «Ջանցատը կեանքս զայս բնաւ մի սիրէք, Յաստուծոյ օրինացն բնաւ զձեզ մի՛ զտուէք» (ՀեԲ, էջ 198):

Հայտնի է, որ զբարբարում և խոնարհման ներգործական սեռի բայերը, ինչպես ներկա ժամանակում, արգելական հրամայականում եւ կարող են անենալ կրավորականի վերջավորություններ (-իր, -իք)՝ զոտնալով կրավո-րական սեռի: Ներկա ժամանակում կրավորականի այդ կազմությունը գործում է միջին հայերենում, սակայն հրամայական եղանակում՝ ոչ: Այս կազմու-թյամբ և խոնարհման արգելական կրավորականի ձև չենք գտնում այս շրջա-նում:

Ի—«...Այլազգին ասաց. մի՛ պտուերազմիր, համերկ՛, որ ես քեզ արի-նակ բան մի ասեմ» (ՎԱԱ, II էջ 168): «Յուցանէ առակս, թէ մի՛ հայիր ի մարդն, որ բարձր է քան զքեզ... մի՛ հայիր ի կարի արդարն և անյառ լինիր. այլ հայեաց ի մեծ մարդիկ և միթեարիր» (Ն. ա. էջ 195): «Յուցանէ առակս, թէ մի՛ վիճիր և մի՛ անկանիր ի մէջ վիճողաց...» (Ն. ա. էջ 85—86):

«Այլ և զբերանդ լրկամ է շատ մի՛ խօսիր, Չբարան և հերձուածող բանի մի՛ լինիր, Չստախոսն և զերզմնալանցքն մի՛ բնգունիր» (ՀեԲ, էջ 201):

Ա—«Են թէ հետ կերակրոյ կարես տալ՝ զինչ և իցէ կերակուրն, Երկու կամ երեք տարապուր. թէ շօքուէ, դու այլ մի՛ մնար հրահանին» (ՄՀՁՄ, էջ 150): «...Բայց դու զիմ երախտիքն մի՛ մոռանար, որ զիշեր ու ցեբեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կոչ օսեան քահանայն և ժողովուրդսն» (ՎԱԱ, II, էջ 151):

«Հայ իմ մարիկ մի՛ արխմարեար,
Չբոկայ նրման զէմ Աշխին...» (ՀԵԲ, էջ 167):
Մի՛ մարմին հասկանայլ դբանս...» (ԿԵԲ, էջ 117):

Վարդան Այգեկցու մտտ երբեմն, ըստ երևույթին հոգնակի՝ ձեռն ազգեցու-
թյամբ, եղակիում Ե վերջավորությունից առաջ գտնում ենք յ հնչյունի հավե-
լում, ինչպես՝ մի՛ գայր (էջ 27), մի՛ վայսեմայր (էջ 91):

Ա—«Թէ արինն յանեցել լինի, պարտ է երակ առնուլ... ապա թէ կար-
միր լինի և նոսր, առ ժամն կապէ զերակն, և մի՛ քողուր որ արինն հանէ՞»
(ՄՀՁՄ, էջ 124): «Եւ զրնութիւն լուծէ մրդանց ջրովն, և ամենեկն երակ մի՛
տնետ» (ն. տ. էջ 122):

Միջին հայերենում կա արգելական հրամայականի կազմութիւն յուրա-
հատուկ ձև. մի՛ արգելականը զնելով անորոշ դերբայի վրա, ստանում ենք մի
տեսակ մեղմական արգելական հրամայական, գրաբարի հորդորական հրամա-
յականը հիշեցնող իմաստով. օրինակ՝ «Մի՛ պատնառել այստար յէգոց, թէ չէ
մեղաբ ոտնակապիս» (ՖրԴ, էջ 268):

«Իմ սիրտ, վատին մի՛ լսեր, ու շարին իսկի տեղ մի՛ տալ» (ն. տ. էջ 357):
«Պարծի՛ր դու խոնարհեց,

Մի՛ բարկանալ ինձ ի սրբոտաց...» (ն. տ. 314):

«...Ու մի՛ դատաւած փառաց փոխել
...Չհրապարտութիւնն մի՛ սիրել» (ԿԵԲ, էջ 150):

«Մի՛ հաւատալ ամէն մարդոյ,

Թէ զիրենք ցուցնեն բեղ խիկար (ն. տ. էջ 199):

«...Սրգովի՛ր երգմամբ առ այնպիսին... բայց մեղ հրամայել է... թէ մի՛
Երզնուլ, բայց թէ երգնու և կատարել, նա թող ապաշխարէ և բավէ» (ՄԳԿ,
էջ 72):

Հասկանալի է, որ այս դեպքում հոգնակիի գրական հնարավորություն
չունի լեզուն: Ի խոնարհման բայերն այս դեպքում անորոշում ունեն —ի վեր-
ջավորություն, ինչպես՝

«Մի՛ փառաց դու ետեկի,
Մի՛ անգանիլ անեղր ի ծով» (ԿԵԲ, էջ 175):

«Մի՛ մուրիլ ու զբեզ խաբել,
Մի՛ ըզհոգիդ կորուսանել» (ՖրԴ, էջ 407):

Այսպես նաև՝ մի՛ խորհիլ (ՎԱԱ, II, էջ 25), մի՛ վիրավորիլ (ն. տ. էջ 308)
և այլն:

Ֆրիկի մտտ խօսիմ բայը հանգիստում է —և վերջավորությամբ, ինչպես՝

«Մի՛ սուտ խասել և զոր զրրկել» (էջ 407):

«Մի՛ բամբակն դու գայլ որ, մի՛ խասել դու դարն անելի» (էջ 493):

Արգելականի այսպիսի կազմություններում և խոնարհման ներդրական
սեռի բայերն ըստ անհրաժեշտության կրավորական սեռի կամ կրավորակերպ
չեզոքի իմաստ են արտահայտում անորոշում —ի վերջավորություն ունենա-
լով, ինչպես՝

«Կոստանդին՝ իմ խրատար
հաւան կացիր դու հեղափար,
Մի՛ ի(զուր) հոգօք մաշիլ՝ (=մի՛ մաշիլիր)
վասն անցաւոր կենաց համար» (ԿԵԲ, էջ 194):

Այս բոլոր ձևերից դուրս Մխիթար Հերացու «Ջերմանց միտիթարություն»
աշխատության մեջ գտնում ենք արգելական հրամայականի կազմության մի
յուրահատուկ ձև. մի՛ արգելականն ուղղակի ավելանում է գրաբարյան ներկա-
յի եղակի երկրորդ զնմի վրա՞, ինչպես՝ «Ապա թէ զարեջուրն բայցի ի ստա-
մոքսն մի՛ տաս զգարեջուրն: Ապա թէ ի յայդ զերմոջ վերաբերութիւն հանգի-
պի, մի՛ արգելես, մանաւանդ ի հրահանգութեան սիկորն» (ՁՄ, էջ 82): «Եւ իր
ստածումն ընդ յատուցն մի՛ շտապիս, և մի՛ լուծման զնդ տաս, այլ տուր մըր-
դաջուր և մանիշակի շարսպ...» (ն. տ. էջ 104): «Եւ այլ ուրի՛ր որ ի շուր օրն
հաղ մին անու զնուպայն, այլ դու մի մտիկ զնես իր նուպային, և մի՛ բնդու-
նիս, այլ զինքն ի յար նշանացն իմացիր, և մի՛ ի նուպայէն» (ն. տ. էջ 88):

Բերված օրինակներում կարելի է տեսնել, որ արգելական հրամայականի
վերոհիշյալ ձևերը իրենց արտահայտում իմաստով մտա են բզձականի ժըն-
տական ձևերին, բարբառների ազգեցուցությամբ արդի գրականի մեջ թափանցած
չմտնես, շտապի, շտապես, շիծաղակէ ձևերի արժեքով, ինչպես՝

«Ոտք շղեն՝ս էլ տունս,
Մբտեցի՛ր անունս» (Հ. Քումանյան, «Մարտ»):
«Իմ զերեմանին զոր շմտեմեմ...» (Վ. Տերյան):

Նվ իրօք, հեղինակի հետևյալ խօսքի մեջ այդ հատակորեն երևում է. «Ապա
թէ նիւթն շատ լինի և հաստ, որ զերգ պաղած լինի, մի՛ տաս սրբնշային... և
այլ պարտաս» որ հով բուր շտաս ի յայս հրահանգութիւնս...» (ՁՄ, էջ 83):
Գրաբարում ստորագրական եղանակի ձևերը կազմվում էին մի՛ արգելակա-
նով: Ուստի վերին այս ձևերն էլ ստորագրականին իմաստային մոտիկու-
թյուն ունենալու հետևանքով կազմվել են մի՛ արգելականով:

Ինչպես արդեն ասել ենք, բղձական ասպանին և անցյալ ասպանին կազ-
մվում են հոստատական բայաձևերի վրա չ կամ չի մասնիկներ ավելացնելով
(տե՛ս էջ 353), իսկ պայանանականի ժխտական ձևերը նույնն են, ինչ որ սահ-
մանական ներկայի գերբայովոր կազմությամբ ժխտական ձևերը:

խոնարհման տախտակը լրացնելու նպատակով սուրբն զնում ենք բղձա-
կան և պայանական եղանակների ժխտական խոնարհումը.

Ը դ ձ ա կ ան և դ ան ս կ

ասպանի		անցյալ ասպանի	
չբայլեմ	չբայլեմք	չբայլէի	չբայլէաք
չբայլես	չբայլէք	չբայլէիր	չբայլէիք
չբայլէ	չբայլեն	չբայլէիր	չբայլէին

⁴³ Խոսելով գրք. ներկա և անկատար ժամանակների՝ ստորագրականի իմաստով կրատու-
թյան մասին, Այստեղանք գրում է. «Այս ձևով հրամայական, և մանավանդ արգելական այ կար ն
չարուն մեջ, որ հետ խափանեցավ. Մի՛ լինիս զբեկու. մի՛ անգանէ բոտ Ոգ. Մինչ չի Ընեմալ
բջլ՝ մի՛ մեղաբիս. Մի՛ վանեմեմ: Կար նաև է գարուն բնառական լեզվին մեջ՝ Մի՛ պատիս.
Մի՛ որ սուտ աս և խոր զբեզ. Մի՛ շտապիս. ժՔ գայր (ՔՔ, էջ 74):

ապառնի		անցյալ ապառնի	
լի բային	չի բայեմք	չի բայլի	չի բայլեաք
չի բայլես	չի բայլէք	չի բայլիր	չի բայլէիք
չի բայլէ	չի բայլին	չի բայլէր	չի բայլէին

Պ ա յ մ ա ն ա կ ա ն և զ ա ն ա կ

ապառնի		անցյալ ապառնի	
չեմ ի բայլել	չեմք ի բայլել	չի ի բայլել	չեաք ի բայլել
չես ի բայլել	չէք ի բայլել	չիր ի բայլել	չիք ի բայլել
չէ ի բայլել	չեն ի բայլել	չէր ի բայլել	չէին ի բայլել
չեմ ի բայլեր	չեմք ի բայլեր	չի ի բայլեր	չեաք ի բայլեր
չես ի բայլեր	չէք ի բայլեր	չիր ի բայլեր	չիք ի բայլեր
չէ ի բայլեր	չեն ի բայլեր	չէր ի բայլեր	չէին ի բայլեր
չեմ բայլել	չեմք բայլել	չի բայլել	չեաք բայլել
չես բայլել	չէք բայլել	չիր բայլել	չիք բայլել
չի բայլել	չեն բայլել	չէր բայլել	չէին բայլել
չեմ բայլեր	չեմք բայլեր	չի բայլեր	չեաք բայլեր
չես բայլեր	չէք բայլեր	չիր բայլեր	չիք բայլեր
չի բայլեր	չեն բայլեր	չէր բայլեր	չէին բայլեր

Հարկադրականի ժխտականը կազմվում է հաստատական բայաձևերից առաջ ոչ մասնիկ ավելացնելով, ինչպես՝ «թէ մէկ ար պազաշտարեալ էիր, աստուած դքոյ մեղքն ոչ պիտի լիչլը» (ՎԱԱ, էջ 177): «Ապալ շես մահ[վ]ան իմոյ քնաւ զիս մտաւք ալ ոչ պիտի ձգեն» (ն. ա. էջ 191):

Քայլել բայի ժխտականը հարկադրականում կունենա հետևյալ ձևերը.

ապառնի		անցյալ ապառնի	
ոչ պիտի բայլէ	ոչ պիտի բայլեմք	ոչ պիտի բայլի	ոչ պիտի բայլեաք
ոչ պիտի բայլես	ոչ պիտի բայլէք	ոչ պիտի բայլիր	ոչ պիտի բայլէիք
ոչ պիտի բայլէմ	ոչ պիտի բայլեն	ոչ պիտի բայլէր	ոչ պիտի բայլէին

ԽՈՒՍԲԸՄԱՆ ՀԱՄԱՅՈՒՐԳԸ XV—XVII ԳԻ.

Գ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Մի ր լեզվի այս շրջանում ևս օգտագործվում են հայերենի բոլոր 4 խոնարհումները՝ իրենց պարզ և ածանցյալ տրամաբանություններով:

Ն խոնարհման պարզ բայերն անորոշ գերբայում ունեն -ել վերջավորություն, ինչպես՝ այրել (ԱԱԱԱ, էջ 46), եփել, մարսել (անդ, էջ 18), ավիրել (ՆՇԲ, էջ 164), կանչել, կախել (անդ, էջ 179) ևն:

Բարբառային տրամաբանություն պետք է համարել նաղաչ Հովնաթանի (XVII դ.) լեզվի մեջ հանդիպող կու եփիս («եկտով կու եփիս ծաանքին»—Բանաստեղծք, էջ 114), զբիճմ («Գրիքն՝ Կարապետ»—անդ, էջ 131), պանիլ («ես որ տեսիմ՝ կարիլ շեն խելքս պահիլ»—անդ, էջ 226) ձևերը: Առաջին երկուսը, «իշտ է, խոնարհված ձևով են հանդես գալիս, սակայն կնխորդելի է միայն -իլ վերջավորությամբ անորոշ գերբայ: Ն խոնարհման բայերը ի խոնարհման փոխանցելու միտումն առավել ևս հաստատվում է նույն հեղինակի մտա հանդիպող կու տեսիլմ («Ղալամ ունբերդ կու խաղալ, Կու տեսիմ՝ սիրտս կու դողալ»—անդ, էջ 36) բայաձևով, որ և ի ի ածանցյալը ներդրածական սեռի բայի եզակի բայափոխանցումն է այս շրջանում:

Անորոշ գերբայով հարադրվող ժխտական կազմություններում է խոնարհման ներդրածական սեռի բայերն ունենում են ն՝ -ել, և՝ -իլ վերջավորություններ, ինչպես՝ շես զրկել («Մէկ խապար շես զրկել»—անդ, էջ 42), շասել («Մէկն շասել, «Թարկն աւլք»—անդ, էջ 120), մյուս կողմից՝ շի ջոկիլ («Չի ջոկիլ միմեանց շաղգամ և գազար»—անդ, էջ 82), շես լսիլ («Կարգացողաց խօսք շես լսիլ»—անդ, էջ 137) ևն:

Այս երկվորյան լավագույն վկայությունն են միևնույն հեղինակի մտա հանդիպող հետևյալ գուգահեռ ձևերը՝ շի կարել (ՆՇԲ, էջ 82, 121)—շեմ կարիլ (անդ, էջ 29, 45), զի դիտել (անդ, էջ 91)—շի դիտիլ (անդ, էջ 98), շեն ճանաչել (անդ, էջ 118)—շեն ճանաչիլ (անդ, էջ 121): Այս երկվորյանը հաստուկ է նաև շեղքք սեռի բայերին, ինչպես՝ շես վախել (ՆՇԲ, էջ 42), բայց և՝ շածիլ «արժել» (անդ, էջ 111) ևն:

Ն խոնարհման ածանցյալը բայերն անորոշ գերբայում ունեն -ել վերջավորություն, ինչպես՝ արկանել (ԱԱԱԱ, էջ 54, 125), մտնել (անդ, էջ 192), ապա և խոնարհված ձևերից՝ կու սպաննել (անդ, էջ 343), տեսաննել (ՇԹՏ, էջ 220) ևն:

Այս շրջանում ևս է խոնարհման (ինչպես նաև ի խոնարհման) բայերի ան, -են ածանցների հնչյունափոխությունը կարգավորված չէ. ինչքան ձայ-

նախորդ սղումով, նույնքան էլ ձայնավորի անփոփոխ արտահայտությամբ ձև-վերի ենթ հանդիպում: Մեր այս խոսքը կարելի է փաստել հետևյալ զուգահեռ ձևերով՝ Էլնլ (ԱԱԱԱ, էջ 27)—Էլանն (անդ, էջ 258), կու բուսցնլ (անդ, էջ 349)—բուսուցանլ (անդ, էջ 358), կու սպաննլ (անդ, էջ 34)—սպանանլ (անդ, էջ 95) ևլն, ևլն:

Անորոշ զերբայով է խոնարհման անանցավոր բայի ժխտական կազմու-թյան օրինակներ բխել կան. չէր Էլնլ (ԱԱԱԱ, էջ 123), չլնլ (անդ, էջ 325), չի գանիլ («Չի գանիլ մէկ ևլն ու ևն»—անդ, էջ 118): Վերջին օրինակը ապա-ցույց է, որ -ել, -իլ կրկնակի վերջավորությունը անանցավոր բայերի զնչարմ կա սակա է:

Մեր լեզվի այս շրջանում է խոնարհման անանցավոր շորս բայերի՝ գաա-ննլ, իշաննլ, մաաննլ, տեսաննլ՝ փոխանցումը ու խոնարհման գրեթե ամբողջանում է. այդ են վկայում հեղինակների մաս հանդիպող հետևյալ փաստերը. ա) տեսնուլ (ԱԱԱԱ, էջ 123), չի տեսնուլ (ժխտական ներկա, անդ, էջ 164), ապա և խոնարհված ձևերով՝ տեսնում (ՀՔՏ, էջ 132, 134), տեսնու (ՆՁԲ, էջ 40), տեսնուլ (ՄՂ, էջ 81) ևլն. բ) իշնուլ (ԱԱԱԱ, էջ 265, 290, 344), կու իշնու (անդ, էջ 35), իշնուն (ՀՔՏ, էջ 160), իշնու (ՉԱՅ, էջ 8) ևլն. գ) կու մաանու (ԱԱԱԱ, էջ 41), մաանուլ (ՆՁԲ, էջ 205), մաանու (անդ, էջ 148), տի մաանու (ՀՔՏ, էջ 202), չի մաանուլ (ժխտական ներկա, ԱԱԱԱ, էջ 524) ևլն. դ) կու գանունլ (ԱԱԱԱ, էջ 127), գանն (ՄՂ, էջ 98, 102), գանու (ՆՁԲ, էջ 148), գանուլ (ԱԱԱԱ, էջ 83), չի գանուլ (ժխտական ներկա, անդ, էջ 19) ևլն, ևլն: Անորոշ դերբայի հարադրությամբ կազմվող ժխտական ձևերում արձան ունեն -ուլ վերջավորություն, ինչպես՝ չի գանուլ (ԱԱԱԱ, էջ 19), չի տեսնուլ (անդ, էջ 164): Ավելին. այս երևույթն այնքան կենսունակ է, որ սահմանվում է և խոնարհման անանցավոր երկու այլ բայերի վրա, ինչպես՝ Էլնում (ԱԱԱԱ, էջ 138, 259), կլնում (ՀՔՏ, էջ 138, 142), Էլնում (ՆՔԳ, էջ 43), կու Էլնլ (ԱԱԱԱ, էջ 38) ևլն. բ) հասնու (ՉԱՅ, էջ 100), չի հասնուլ (անդ, էջ 16) ևլն: Ե ը բայափոխանցման այս երևույթն ալիքի առաջ գնալով տարածվել է նաև ի խոնարհման մի բանի բայերի վրա, ինչպես՝ կու դպնու (զրբ. դիպիմ, ԱԱԱԱ, էջ 15, 282), դպնու (ՆՔԳ, էջ 45), բոնում (զրբ. բուլիմ, ՆՔԳ, էջ 5) ևլն:

Սակայն սխալ կլինեք կարծել, որ վերին բայերն իրենց ավանդական խոնարհման ձևերով այս շրջանում հանդես չեն գալիս: Վերին մեր հեղինակների գործերի մեջ մենք գտնում ենք նաև կու Էլնլ (ԱԱԱԱ, էջ 38), կլննա (ՆՁԲ, էջ 33), կու մանլ (ԱԱԱԱ, էջ 21) և այլ ձևեր: Այս կիրառությունների զնչարմ, անշուշտ, զրգապատճառը սովորույթի ուժն է:

Ե ը բայափոխանցման բարբառային երևույթ պետք է համարել տեսնաս (ՆՁԲ, էջ 37), չի մանալ (ԱԱԱԱ, էջ 426) ձևերը, որոնք ներկայիս արևմտահայ բարբառներում և դրականում կենսունակ ձևեր են:

Մեր լեզվի այս շրջանում է խոնարհման թե՛ պարզ և թե՛ անանցավոր բայերը անորոշ զերբայում ունեն -իլ վերջավորություն, մինչդեռ մեր լեզվի նախորդ շրջանում (XII—XIV դդ.) ի խոնարհման բայերն ունեն և՛ Էլ, և՛ -իլ վերջավորություններ:

Ստորև բերում ենք այս շրջանի (XV—XVII դդ.) հեղինակներից վերջրած օրինակներ՝ բացառաբար անորոշ դերբայի կիրառությամբ. հաթիլ (ԱԱԱԱ, էջ 216), բուրսիլ, հաթիլ, փաթիլ (անդ, էջ 355), ծիծաղիլ (ՆՁԲ, էջ 131), հալիլ

(անդ, էջ 29), բնակիլ (ՄՂ, էջ 131), ախրիլ (ՆՁԲ, էջ 175), հագնիլ (ԱԱԱԱ, էջ 67), մեռանիլ (ՄՂ, էջ 149, ՆՁԲ, էջ 112), բուսիլ (ԱԱԱԱ, էջ 247, 311), սեռնիլ (ՀՔՏ, էջ 137) ևլն:

Գրաբարում անցյալի հիբրում ի թույլ բաղադրիչով արտահայտվող ի խոնարհման բայերը նույնպես անորոշ զերբայում ունեն -իլ վերջավորություն, ինչպես՝ բուշիլ (ԱԱԱԱ, էջ 5), փախշիլ (ՆՁԲ, էջ 92) ևլն:

Ինչքան որ ուշադիր ենք կղել, -իլ վերջավորությամբ ի խոնարհման բալն-բի հետևյալ եզակի օրինակներն ենք արձանագրել՝ 1) մեռանիլ՝

«Պատրաստ եմ մեռանիլ վասն անուան նորին, Այնմ, որ երարձ ըզփուշ մեր պատուհանին» (ԳԱ, էջ 125).

2) լինել՝ «Եւ հանաշել ըզարն ու զրարի.

Նրման լինել ձեր աստ ածողի» (անդ, էջ 144).

3) ապրել՝ «Համբարձմանն չեն մրափիլ,

Գնան սարն ծաղիկ բաղիլ:

Կասեն. «Սն մազ չի սպրտակիլ,

Թախին մենք շատ պիտենք ապրել» (ՆՁԲ, էջ 102):

Վերևի երկու օրինակներում մեռանիլ, լինել ձևերը հանդես են գալիս զուտ գրաբար զրված ստեղծագործություններում (որի համար և խոսքը ամբողջու-թյամբ ենք մեջ բերել), ուստի նրանք գրաբար ձևեր են և գրաբարի համար թիշու: Երրորդ օրինակում ապրել զուտ խոսքային հանգամանքի բերումով՝ հանգավորելու համար է արված: Վերջպես ունենք տանելն խաբարիկ ձևը՝ հանգարիա Ազուլեցու «Յրապրովյան» մեջ (Երևան, 1938 թ.)՝ «Սորաչ շատ կենալն, շատ փող տանելն պատճառն՝ Էլ արուլեցի Մուսարիկի տղերքն էլա» (էջ 111), որը, կարծում ենք, տանելու > տանելուն ապառնու հնչյունափոխ-ված ձև է, գրեն նախադասության շարահյուսական բնույթումն ազդ է թելա-դրում է խոնարհման պատկանող ներգործական սեռի բայերը կրավորական դասնալիս անորոշ զերբայում բացասական -իլ վերջավորություն ունեն, այս-պես, օրինակ՝ այրիլ «այրվել» (ԱԱԱԱ, էջ 46, 159, ՆՔԳ, էջ 104), շարժիլ «շարժվել» (անդ, էջ 89), չաւերիլ «աղբերվել», վարիլ «զերվարվել» («Յաւերիլ չաւարքին ի սպասակործան, վարիլն ի գերութիւն աղգիս խղճական»—ՄՂ, էջ 145), փրկիլ «փրկվել» (ՄՆ, էջ 132), ագասիլ «ազատվել» (ՉԱՅ, էջ 163) ևլն:

Նորաստեղծ կրավորական շեղքը, կրավորական և շեղք սեռի բայերը նույնպես, առանց բացասության, անորոշում -իլ վերջավորություն են ունե-նում, ինչպես՝ եղբաիլ «հեղքհեղքիլ» (ԱԱԱԱ, էջ 588), վառուիլ «սակարա-նալ, թուլանալ» (անդ, էջ 21, 23), խառնիլ «խառնել (սրտի)» («զարտին խառնիլն ալ կտրէ»—անդ, էջ 112, «զարտին խառնիլն տանիլ»—անդ, էջ 271), շարժիլ «շարժվել» («զաղապիին զշարժիլն ամբացնէ»—անդ, էջ 334):

Հասկանալի է, որ կրավորականի նորակազմ -ու անանցավոր բայերն ան-որոշ դերբայում բացասական -ուիլ վերջավորություն ունեն, ինչպես՝ ուտուլի (ԱԱԱԱ, էջ 74), Բաշուիլ (անդ, էջ 88), խառնուիլ (անդ, էջ 123), բոնուիլ (անդ, էջ 194, 614), Բերուիլ (անդ, էջ 150) ևլն:

Անորոշ զերբայի հարադրությամբ կազմվող ժխտական ձևերում ի խո-նարհման բայերը մնում են անփոփոխ՝ միշտ ունեն -իլ վերջավորություն, ինչ-պես՝ չողորմիլ (ԱԱԱԱ, էջ 231), չի դատիլ (ՆՁԲ, էջ 86), չեն բանիլ (անդ, էջ 103), չի բուսնիլ (ԱԱԱԱ, էջ 372), չի անցանիլ (ամկ. անդ, էջ 23), չի գանուիլ «չի գանվում» (անդ, էջ 10) ևլն:

ի // ա բայտփոխանցման օրինակ ունենք անկանոս լինիմ—լինալ (ԱԱԱԱ, էջ 45) բայտ մեջ: Իսկ նազաշ Հովնաթանի մոտ հանդիպող կու տանեն (էջ 12), կու նստեն (էջ 13), ինչպես նաև Մկրտիչ Նազաշի՝ հայես (Քանասահղթթ., էջ 110) բայտակերը, ինչպես ձեռագրերի համեմատությունից պարզվում է, դուռ գրչագրական սխալներ են:

Այսպիսով, մեր լեզվի այս շրջանում ի խոնարհման բաշերի անորոշի ձևը վերջնականապես կայունանում է: Միջին հայերենն իր այս առանձնահատկությունը ժառանգեց արևմտահայ գրական լեզվին ու մի շարք բարբառների: Ա խոնարհման թե՛ պարզ և թե՛ անանցազոր բայերի անորոշ զերբայում ունենալ վերջավորություն. նկատելի է, որ անանցազոր ձևերում ձգտում կա—ան անանցի ու հնչյունն սղելու, օրինակ՝ մքնալ (ԱԱԱԱ, էջ 35, 118), բոցնալ (անդ, էջ 71), չի հովնալ (ՆՃՔ, էջ 46):

Անորոշով ժխտական կազմելու դեպքում նա ա խոնարհման բաշերը մնում են անփոփոխ, ինչպես՝ շես տալ (ՆՃՔ, էջ 37), շես իմանալ, շես բանալ, չի հովնալ (անդ, էջ 46) ևլն:

Ա // ու բայտփոխանցման եղակի օրինակը գտնում ենք ժողովրդական կեննալ // կենուլ ձևի մեջ.

«Երբ կին տեսնում, ցանկանամ զժոխոց դուռն մտանեամ...»

Երբամ յանպատ կենում, ոչ տեսնում, ոչ ցանկանամ» (ՆՔԳ, էջ 97):

Մեր լեզվի այս շրջանում նա օգտագործվում են ու խոնարհման թե՛ պարզ և թե՛ անանցազոր բաշեր, որոնք ինչպես հաստատական, այնպես էլ անորոշ զերբայից կազմվող փրատական ձևերում ունեն—ուլ վերջավորություն, ինչպես՝ բքեալ (ԱԱԱԱ, էջ 60, 78, 110), աղուլ (անդ, էջ 249), շես բողալ (ՆՃՔ, էջ 8), չի մտնալ (ԱԱԱԱ, էջ 524):

Պատճառական բաշերում հաղթել է ժողովրդական ձևը. ի տարբերություն նախորդ շրջանում հանդիպող պիարացուցանել, սատակցուցանել ձևերի, այստեղ գտնում ենք պակսեցնել (ԱԱԱԱ, 46), քանձուցնել (անդ, էջ 17), եղցնեն (անդ, էջ 28), քմեցնել (անդ, էջ 18), հովցնել (անդ, էջ 4) ձևեր, որոնց մեջ անցյալի հիմքից ց վերջավորությունը միաժամանակ կատարում է—ույց>—ուց պատճառական անանցի պարտականությունը, իսկ պատճառական բաշերի—անել վերջավորությունը հնչյունափոխվում է և ի խոնարհումների անանցազոր բաշերի մասին ասվածին համապատասխան:

Փրատական կազմության դեպքում պատճառական բաշերը մնում են անփոփոխ, ինչպես՝ չի հասցնել քչի հասցնում» (ԱԱԱԱ, էջ 381), չի ուսեցնել քչի կերցնում» (անդ, էջ 200), չի բշտեցնել (անդ, էջ 429), չի երեցնել (անդ, էջ 481), չի ծարեցնել (անդ, էջ 538) ևլն:

Այս շրջանի հեղինակների լեզվական առանձնահատկություններից մեկն էլ թուրքերենն և պարսկերենն լեզուների, լեզվական արտահայտությունների աստա կիրառումն է. հաճախ պատահում է, որ հեղինակը ստեղծագործության մեջ գունավորում տալու նպատակով, բառ նախադրության, զինում է թուրքերենին կամ պարսկերենին, այսպես՝ ՆՃՔ, էջ 142, 176, 247, ՄՂ, էջ 140, ՆՔԳ, էջ 109 ամբողջական առգեր, հտավաններ ունեն թուրքերեն լեզվով, իսկ Գրիգորյան Ազնավարցին 195—199 էջերում աստորին օգտագործում է պարսկերենը:

Այս շրջանում լայն կիրառություն ունեն թուրքերեն—արաբերեն բառերով է հայերենն առնել, տալ, լինիլ, մնալ և այլ օժանդակ բաշերի հարադրությամբ

կազմվող բայտակերը, ինչպես՝ բարմիչ արեց (ՆՃՔ, էջ 25), շարք արի (անդ, էջ 112), քալիմ շեն տանալ (անդ, էջ 83), հօժմ տալ (ՉԱՅ, էջ 71), մահում մրնամ (ՆՔԳ, էջ 70), հայրան մնալի (անդ, էջ 102), բարկն տվի (ՆՃՔ, էջ 120), գաբար տվեց (ՉԱՅ, էջ 144): Կան նաև հայացած ձևեր՝ չի բամամեն (ՆՃՔ, էջ 120), փոչիմանիլ (անդ, էջ 175):

Այս շրջանի մեր հեղինակները անհարկորեն են օգտագործում թուրքերենն ու պարսկերենը՝ վերացնելով գրական-գրավոր լեզվի և խոսակցականի միջև եղած տարբերությունը: Այս լեզվական ճաղատամուտությունը հետագայում ազատեց մեր լեզուն թյուրք-թաթարական ուժեղ նազվածքով, որի դեմ անհրաժեշտ եղավ անասնակ աարհներ պայքարել՝ մեծ հայազեւս. Այս շրջանի պատկերավոր արտահայտություններ՝ սունկափայտ հասած շափն փոխառյալ բառերը գուրս վտարելով մեր լեզվից և նրանց փոխարեն օգտագործելով մտացույթյան տրված հայերեն բառեր ու արտահայտություններ:

ԱՆՍԵՍՐ ԳՆՐԵՍ

Միջին հայերենի նախորդ շրջանում (XII—XIV դդ.) զերբայների կիրառության իրողությունները քննելիս ասել էինք, որ—ում վերջավորությամբ անկատար զերբայի գրատեղան միայն մեկ կասեակների օրինակ կա. և դա հասկանալի է, քանի որ XII—XIV դդ. միջին հայերենը առավելագույն կիրիկյան գրական հայերենով է ներկայացված: Սակայն նույնը չի կարելի ասել XV—XVII դդ. միջին հայերենի մասին, քանի որ XVII դ. կեսերից սկսած իբրև ժամանակակից և միևնույն բարբառի ներկայացուցիչ երկու հեղինակներ իրենց լեզվի մեջ լայնորեն օգտագործում են—ում՝ և—իս վերջավորությամբ անկատար զերբայի, ներքայական հոլովի բացմամբ ձևեր: Այդ հեղինակներն են՝ XVII դ. վերջի բանաստեղծ և նկարիչ Նազաշ Հովնաթանը (1661—1722)¹ և Զարբրիա Աղուլեցին (1630—1691): Այս վերապահությունից երևում է, որ մյուս հեղինակների մոտ—ում և—իս զերբայական վերջավորությունների շենը հանդիպում, քանի որ նրանք բոլորն էլ կիրիկյան բարբառի ներկայացուցիչ են և ապրել ու ստեղծագործել են այդ բարբառի ազդեցության սահմաններից ներս: Մինչդեռ նազաշ Հովնաթանը Ում հյուսիս բարբառի ներկայացուցիչ է և ապրել ու ստեղծագործել է Ում հյուսիս բարբառներով խոսող միջավայրում (Նոտթ, Աղուլիս, Քիֆիս, Երևան, էջմիածին):

Մենք նպատակ չունենք այստեղ մանրամասնորեն—ում մասնիկի պատմական բնույթի կատարելու, քանի որ դա հայագիտության ամենամեծված հարցերից մեկն է, այլ ավելի շուտ՝ արձանագրելու կիրառության դեպքերը: Ապացուցված իրողություն է², որ—ում վերջավորությամբ անկատար զերբայը

¹ Այս հեղինակների մոտ զերբայի ամ, ամ հնչյունափոխված ձևեր չեն հանդիպում:

² Նազաշ Հովնաթանը ձևել է Նոտթ գյուղապալազորում, Աղուլիսի մոտ, իր կրթություն ստացել է Աղուլիսում, որ և ձևադիր է ընդերքականի:

³ Ա. Մարգարյանի իր «Հայերենի հարստի բաշերը» աշխատության մեջ, Զանաթանորեն քննելով—ում մասնիկի ծագումը, գտնում է, որ e—ում—ով անկատար և նրանից կազմված ներկա ու անցյալի անկատար ժամանակները ծագումնաբանորեն կարող են կազմել անտոչի փայն մի հոլովաձևի հետ, որ է հենց նախորդ անգարը կամ անեւույր ներգայականը (էջ 482) և կամ՝ e—ում—ով անկատար ծագումնաբանական ոչ մի կապ չունի—ում—ով ներգայականի հետ և սերում է բացառապես աներևույթ ներգայականից (էջ 493): Իսկ ինչ անապարհում. աճան անցման Զանաթարհը՝ ի հուտուլ եմ>հուտուլ եմ, հասնում եմ, ի դուլ եմ>դուլ եմ>գնում եմ (էջ 485): Այսուհետև հեղինակը գրում է. «Ներքոք Վերջահնչյունը միև ձողովուրդ—խոսակցական

նույնական է ներգոյականի – ում վերջավորության հետ: Եվ իրոք, – ում վերջավորությանը կամ նրա փոփոխությանը կամ նրա հնչյունափոխված ձևերով անկատար ունեցող բարբառներում գտնում ենք նաև – ում վերջավորությանը ներգոյական հոլովի կազմություն: Նաղաշ Հովնաթանը նման շատ ձևեր է օգտագործել՝ «Մեղացուց կայ ոսկչ մազան, ապրանք ու մալ այ» (Բանաստեղծք, էջ 247): «Նուրիքիմ կեանք, արև՝ ի մէջ երկրում»:

Շատ կարօտ թողիր իմ տարբիք արմունս» (անգ, էջ 239):

«Նառումն աղով իրար ծակեն» (անգ, էջ 119): Այսպես նաև՝ մատնուզ (էջ 7), արմուն (էջ 22, 97), բուլումն (էջ 107), մէջիսումն (էջ 162) և բերում ենք և Զ. Աղուչեցու «Օրագրությունից» (երևան, 1938 թ.): Օրինակներ. «Այս երկրում կայ բրինձ կեխ» (էջ 24), «Միջին ողիւմն ոչ թէ մին օրի էր կոխիմ, այլ մինչի ի օր ազմուկ կէր բաղարումն» (անգ, էջ 32), «Ազամիրի բ տղէն որ մնաց, մեծն Շմատն է, որ այս դավաւարումս անունն գրած շատ տղ կայ» (անգ, էջ 92) կէ: Գեոնս Ա. Այտընյանն իր «Քննական բերականության» մեջ շատ ճիշտ կերպով բացատրել է, որ հայերենի բարբառների – ում վերջավորությանը ներգոյականը գրաբարում տրական հոլովում – ում վերջավորությունն ունեցող բառերի (առավելագույն թվականներ, դերանուններ և որոշ ածականներ)՝ ի նախորդով ներգոյականի գաղափարի կազմության ձևերի անմիջական շարունակությունն է: Տարակույս չկա, որ XVII դ. վերջում գրական արտահայտությունն գտած այս իրողությունը շատ հին երեսույթ է: Լեզուական երեւիւթները մեկ-երկու տարում չեն առաջանում: Եթէ մեր մատենագիրները զտարք լեզվի մաքրության հարցում նախանձախնդիր պահպանողականներ չլինեին, – ում մասնկիի հնագույն արտահայտությունների բազմաթիվ փաստահուններն այնքան մեր ձեռքի տակ, որովհետև անհնար էր, որ մատենագիրը ուսած լեզվով գրելիս իր խոսած մայրենի բարբառի իրողությունները այս կամ այն չափով շարտահայտեր իր աշխատանքության մեջ: Եւ իսկուպես, մեր պատմահայր Մ. Խորենացու (V դ.) «Հայոց պատմություն» աշխատության մեջ՝ «Եւ յաջմէլ չուրջ հոսանաց ի բարձրամանկում կուռ կայով ի տեղոջ ի վեր գերեսս ամբարձեալ՝ երեւցու նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բեկայ» (Խոր. I, ԺԱ) նախադասության մեջ բարձրամանկում բառի – ում վերջավորությունը այլ կերպ անհասկանալի կմնար, քանի որ բարձրամանկ բառը, ինչպես և – ում վերջավորությանը բոլոր բառերը, զտարարում ենթարկւում են ի–ա խոն հոլովման:

Վերևում ասացիք, որ ում ձևովում ներգոյական ունեցող բարբառներն ունեն նաև – ում վերջավորությանը անկատար դերբայ: Արդ, ի՞նչ կապ կա այս երկուսի միջև: Այսօր հայագիտության մեջ ընդունված տեսակետ կամ, որ ում ձևովում նախապես ավելացել է անորոշ դերբայաձևի վրա. դրա լայնացումն ապացույցը Հավարիկի բարբառի ընձեռած փաստերն են, որտեղ ում ձևովում ուղղակի ավելանում է անորոշ դերբայաձևի վրա, այսինքն՝ ասենք, արդի դրական հայերենի խաղում, գրում, կարգում՝ անկատար դերբայաձևերը Հավարի-

կում կարտահայտվեն խաղում, գրում, կարգում ձևերով: Հասկանալի է, որ գոյականների ներգոյականը նախորդում է բայերի ներգոյականի վերահնչյուլ ձևերին. գործողության և եղելության բնթայքի մեջ գտնվելու գաղափարն արտահայտելու անհրաժեշտությունը ստեղծել է իր լեզվական արտահայտությունը: Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ – ում վերջավորությանը անկատար դերբայից միայն սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակներ են կազմվում, քանի որ հայ լեզվամտածողությանը այս ժամանակները գործողության կամ եղելության մեջ լինելու գաղափար են արտահայտում:

Նաղաշ Հովնաթանի և իր հետնորդների՝ Նաղաշ Հակոբի, Ստեփանոս Ծոռոթեցու ստեղծագործություններում – ում վերջավորությանը անկատար դերբայով կազմված ներկա և անկատար ժամանակների օգտագործման բազմաթիվ ձևեր կան. հաճախ այն սպալմանությունն են ստանում, որ, կարծես, արեւելահայ գրականում այսօր զրգով թանաստեղծություն են կարգում.

«է՛ր և կարմիր երեօզ ծածկում,

Չարաւոզ վերազ հաւախում,
Նաղաշին սիրան ևս տապալում» (ՆՀԲ, էջ 48):

«Շատ վախա է, որ շես երևում,

Մէկ խապար ու զիր շես բերում,

Վառ կրակով սիրոս ևս երում,

Չեմ համբերում» (անգ, էջ 72):

«է՛ր շես կարում, է՛ր էս դարում,

Ով լսում է՝ քում, մում,

է՛ր շես վանքին ալգին բում,

Խոտն Բաղում, մասն ջրում» (անգ, էջ 148):

«Մասախի սիրոս հիանդացայ, ևս շեմ համբերում,

Չեր դուսին անց կու կեանում, էր շես երևում,

Քոյ բերանէն ինձ մէկ ուրտիս խաբար շես բերում,

Վառ կրակով դու իմ սրտիս մէջն ևս երում» (անգ, էջ 247):

Օրինակները համատարած են Զ. Աղուչեցու մոտ, ինչպես՝ «Գարցեալ, ևս յիտ մինն զալիս այ, ի թուման ուզում, մինն զառավիսանի զավի այ անում, մինն՝ դեղի, այս ամէնն սուտ դավի են անում» (Օրագր. էջ 102): «Յունիսի խանն Զուլու անապատն շինում էին» (անգ, էջ 47), «Երևանայ Սէֆիդուլի խանն բողնում չէր. թէ՛ Արասուցի խանի վարիսներն գայ, փողն ասան» (անգ, էջ 87) կէ: Ինչպես բերված օրինակներից երևում է, ում ձևովում բոլոր դեպքերում ավելանում է ոչ թե անորոշ դերբայի վրա, այլ բայաճիւրի վրա՝ երևում, բերում, համբերում, Բաղում, քոյ բերում, թե վերահնչյուլ հեղեղակները և ընդհանրապես Աղուչեցու բարբառը բայահնման են հոլովում, իրականում այստեղ մի սովորական հնչյունափոխություն է կատարվել, որ լեզվաբանության մեջ անվանում է մաշվածություն: Երկար ժամանակ կիրառելով՝ անորոշ դերբայի վերջավորություններն ընկել են: Այս

փոխ անունների վրա, որոնք միաժամանակ և բայահնման էին (հմտ. գրքում եմ «1. գործի մեջ եմ և 2. գործ եմ անում») սպա տեղադրելով տարածվել այլ ձևերի վրա» (տես Հայոց լեզվի գրագրաման փոփոքը, Երևան, 1964, էջ 48):

լեզվի մի մասում փոխարինվում է Ե–ով, սպա մի այլ մասում այն փոխարինվում է մ–ով... եմ «ժանգոկ բաշի ալգիցեցությանը... սկիզբ է տակ որոշ, այն է՝ –նով վերջավորվող, ինչպես՝ ելնուլ, մտնուլ, գտնուլ, ԵՆՏՆուլ, տեսնուլ, բողուլ // բողնուլ, գորնուլ բայաձևերից» (էջ 486):

Հնապարհություն է ներկայացնում և պրոֆ. Գ. Չախվադեի արտահայտած հետևյալ տեսակետը. «Անկատար ում վերջավորությունը կազմվում է ներգոյականի ում վերջավորության հետ: Սակայն զիջար է համաձայնվել այն կարծիքի հետ, թե անկատար անորոշի ներգոյականն է... Մեզ ավելի հավանական է թվում հետևյալ ենթադրությունը, ում–ը որով է սկզբնապես այն–ՅԵԵ

Շնչունափոխությունն իր զուգահեռներն ունի մեր լեզվի մեջ, վերջինքը թեկուզ Մեկուս բարբափ օրինակը, որտեղ հարանման Շնչունափոխությունն գտնում ենք բոլոր 4 խոնարհումներում, ինչպես՝ մընայ, ի՛րվա՛յ—մընաս, ի՛րվա՛ս, սըբլ—սըբլս ա զիլ «աղալ», ս՛լ՛բիլ «սբիբիլ», ի՛ր՛բիլ «սբիբիլ»—բլլ՛ս, սի՛ր՛ի՛ս, բի՛ր՛ի՛ս, մրտանիլ «մրտանալ» լի՛վանիլ լվանալ—մրորելս, լի՛վի՛նիս⁵:

Թաց այս Շնչունափոխությունը ինչ-որ բանի մասին մտածել տալիս է, մտովի կարելի է պատկերացնել, թի ինչքան երկարատև ժամանակ պետք է ընկած լինի ուղիղ-ուղիղում-ուղիղում, բերել-բերելում-բերում ձևերի Շնչունափոխության միջև:

Գիտությունը հայտնի է, որ Զուգայի բարբառը—ուն գերբայական մասնիկից բացի, անկատար գերբայը ձևավորում է —ման ձևությամբ, և իտալիցես, նաղաշ Հովնաթանի մի բանաստեղծության մեջ, որի վերնագիրն է «Զուգայ-յեցոց հայրենի պարզ լեզուն ալ, զոր կու պարծենան» (վերնագիրը ցույց է տալիս, որ ն. Հովնաթանը Զուգայի բարբառի հավանիտս ներկայացուցիչներն է ծագրում), հեղինակը —ման վերջավորությամբ անկատար գերբայը չուգայեցու ուղղակի խոսքի մեջ երկու անգամ օգտագործել է.

«Զուգայեցիք անք, կու պարծենք,
Մեր մեր լեզուն գրոց կարծենք,
...Պաշտոցիք դատ ճանաչման շեն,
Խոր անունը՝ հայր կու կանչեն.
Այժ ան ասում, իաշլի թա էժ,
Գրոց լեզուն իմաման շեն» (ՆՃԲ, էջ 197):

Այս օրինակները լույս են սփռում և մի ուրիշ հարցի վրա. սրտի. Աճառյանն իր «Քննություն նոր-Զուգայի բարբառի» (երևան, 1940 թ.) աշխատության մեջ գտնում է, թե —ման վերջավորությամբ ներգործական սեռի բայերից անկատար գերբայ կազմվելու դեպքում գերբայյաձևեր անպայման միայն կրավորական սեռի իմաստ կարող է աբաահայտել (անդ, էջ 251), մինչդեռ մեր վերևի բայերը հենց ներգործական սեռով են հանդես եկել և ունեն ուղիղ խոսքի (զատ ճանաչման շեն, լեզուն չիմաման շեն): Մենք չենք ուզում պնդել, որ նոր-Զուգայի բարբառն այսօր այս երևույթը պետք է պահած լինի, այլ պարզապես այն, որ զոնե մեկուկես դար առաջ —ման մասնիկով ներգործական սեռի բայերից նոր-Զուգայի բարբառը ներգործական սեռի իմաստով անկատար գերբայ կազմում և օգտագործում էր:

Նաղաշ Հովնաթանի մոտ հանդիպում ենք նաև —իս՛ մասնիկով անկատար գերբայյաձևին: Սա, անշուշտ, Ս Հյուդի բարբառների աղբյուրության հետևանք է, քանի որ, ինչպես վերևում տեսանք, Ազուլիսը Ում Հյուդի բարբառ է. Հե-

տաբրբրական է նշել, որ Զարբրիս Ազուլեցու «Օրագրություն» մեջ, բացի միավանկ բայերի տալիս, գալիս (լալիս ձևը չի հանդիպել) ձևերից՝ —իս վերջավորությամբ անկատար գերբայ չունենք: Նաղաշ Հովնաթանի մոտ —իս մասնիկով անկատար գերբայն օգտագործվում է՝

ա) Հիմնական գործողության հետ զուգահեռ կատարվող գործողությունն արտահայտելու իմաստով՝ պարագայական կիրառությամբ, ինչպես՝

«Մէնակ ու ծածուկ մնալիս՝
Սիրու սէրդ մոռանալիս
Գարդերս է՛ր շես իմանալիս՝
Գեղեցիկ երեսդ բանալիս» (ՄՆԲ, էջ 15);
«Լուր, է՛ր շես այգումն բանում
Ճախն կարում, փայլն տանում
Ձեր տեսեսանն բուրդ մանում,
Աման լանալիս քուլ հանում» (անդ, էջ 149);
«Նորահաս մանկունքն զինույ թաս տալիս,
Կարմիր գինի, արծաթի թաս շողողալիս,
Մէկն խաղ էր կանչում, մէկն՝ պար գալիս» (անդ, էջ 168):

—իս վերջավորությամբ անկատար գերբայի այս կիրառությունը հատուկ է Ում Հյուդի բարբառներին, որտեղից և, անտարակույս, անցել է արևելահայ դրական լեզվին:

բ) Առավել հետաբրբրական են նույն հեղինակի մոտ հանդիպող այն ձևվերք, երբ —իս վերջավորությամբ անկատար գերբայը օժանդակ բայի հետ կազմում է ներկա ժամանակ (ոչ երկրորդական, այլ գլխավոր բաղադրյալ): Ահա այդ օրինակները.

«Նոր ծաղկեցաւ ծառն, զարունն է՛հաս, է՛ր ես ինձնէ՛ հեռանալիս,
Նազանի բաղբրիկ էար, բարով դո՛ւ էլ գաս է՛ր ես ինձնէ՛ հեռանալիս» (անդ, էջ 15):

«Ձայնն կարած, բոճած գուն,
Եղով սանդղում է՛ քաջուն,
Կարգալիս են շարան-փարան» (անդ, էջ 119);
«Երբ որ տեսնում եմ՝ սիրտ[ս] է՛ զոգալիս,
Ո՛չ ինձ հետ խոսում ես, ոչ մէկ վարթ տալիս,
Մնացել եմ տխուր, լալով շուտ գալիս» (անդ, էջ 246):

Նման կազմությունները Ս Հյուդի բարբառներին են առանձնահատուկ, այդտեղ նույն զերն ու նշանակությունն ունեն, ինչ որ Ում Հյուդի բարբառներում ում ձևությամբ կազմված անկատար գերբայյաձևերը:

Ս. Սարգսյանցը ես, որ ուսումնասիրել է Ազուլիսի բարբառը, իր աշխատության մեջ (Ազուլեցոց բարբառը, Մտկվա, 1883 թ.) գտնում է —իս վերջավորությամբ գերբայով կազմվող ներկա ժամանակի մի շարք ձևեր (չի ցրել էլիս, մընալիս րն էլն): Այս գերբայով գրական հայերենում կազմվում են երկրորդական բաղադրյալ ժամանակների (զրեխս եմ լինում, զրեխս եղա էլն), մինչդեռ ո՛չ նաղաշ Հովնաթանի և ո՛չ էլ Զարբրիս Ազուլեցու մոտ նման կիրառությունների չենք հանդիպում:

⁵ է. Ազայան, Մեկուս բարբառը, Երևան, 1954, էջ 201—215:

⁶ —ման վերջավորությունը, բա երևույթին, ոչ թե փոխառյալ է պարսկերենից, այլ իր հերթին ում վերջածանցի ներդրական հոլովը՝ գործողության մեջ լինելու զազափար աբաահայտել կարողանալու միտումով արված: Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դրբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 89—103:

⁷ —իս մասնիկով անկատար գերբայյաձևեր նույնպես ներգործական զազափար է արտահայտում: Պետք է որ կազմված լինի —ի մասնիկ ունեցող գերբայյաձևի գրաբարյան հոգնակի հաշվական ձևից՝ ներդրականի զազափար արտահայտելու համար, ինչպես ունենք Փ. Բուզանդի մոտ՝ ի լալիս (այսօրվերի մեջ):

Միջին հայերենի այս շրջանում ապանի գերբայը ևս հարուստ դրսևորումներ ունի: Ապանի գերբայը հանդես է գալիս ինչպես անորոշ գերբայի անանցմամբ՝ -օց մասնիկով, այնպես էլ անորոշ գերբայի սեռականի ի, ո(յ) > ո վերջավորություններով:

Ապանի գերբայի -ի վերջավորությամբ ձևը սակաւ կիրառություն ունի. եղած օրինակներն են.

«Մարդն որ շատ անդէճ լինի, յաշխարհիս հոգսըն կու մաշի.

Հով ջուրն իր կրակ թվի, ի յահէն բանց մոճ կու հալի.

...Շարարն իր լեղի թվի և լեղին իւրան խմելի» (ՆՔԳ, էջ 90).

«Այս աստվորսիս վրայ երկու բան ողորմ ու լալի.

Մէկ որ սիրոյ տէր լինի, մէկ որ գայ զորոն ու տանի» (անգ, էջ 97):

Զարմանալի և ընդունիլի բաները մի բանի անգամ օգտագործում է Ամիր-դովլաթ Ամասիացին, սակայն Առձեռն բառարանը այս բաները որպես անտական է դնում:

Առավել հետաքրքրական է Զարարիս Ագուլեցու օգտագործած տեսնուլի ապանի գերբայաձևը. «Այս Շամառն զնաց Շամախի՝ նաջաֆղուլի խանին յետ հար տեսնուլի» (ԶԱՅ, էջ 123):

Ու խոնարհման ապանի գերբայի եզակի օրինակն է սա թե՛ հեղինակի և թե՛ ընդհանրապես այս շրջանի գրականության մեջ: Հայտնի է, որ գրաբայում ու խոնարհման բաղերն ապանի գերբայում որպես կանոն ու հնչյունը սղում են (թողուլ—թողցը, թողիլ. արդեւուլ—արգելոց, արգելիլ), իսկ միջին հայերենում, ինչպես ստորև կտեսնենք, ու խոնարհման բայերը ապանի դառնալիս ու խոնարհման փոխում են -ուլ: ինչպես՝ քննուլ—քննելուս (ԱԱԱԱ, էջ 28, 46, 81), առնուլ—առնելուս (անգ, էջ 133, 195, 366) ևն: Եթե մեր լեզվի այս շրջանում -ոց և -ի վերջավորությամբ ապանի գերբայների օգտագործումը հազվագյուտ երևույթ է, գրաբարարանություն, ապա -ոյ և -ու վերջավորությամբ ապանի գերբայի օգտագործումը համատարած երևույթ է:

-ոյ > - ո վերջավորությամբ ապանի գերբայը ունի մի բանի տարբերակված կիրառություններ.

ա) Գոյականների հետ (որոշիչ պաշտոնով). ինչպես՝

«Մի՛ թէ մեռանելոյ օրս մոտեցաւ,

Եւ հոգիս ի մարմնոյս բաժնիլ կամեցաւ» (ՄՆ, էջ 161):

«Յորժամ ես ի միտ ամեն զիմ եղարբն ու զիմ սիրելիքի,

Հոգիս բերանիս կսռնու, քալուիդ ճարակ մի շունի» (անգ, էջ 166):

* Հայտնի է, որ գրաբարում ապանի գերբայը երկու կերպ է դրսևորվում՝ անորոշ գերբայի վրա -ոց մասնիկի ազդեցությամբ և անորոշ գերբայի սեռականի ի վերջավորությամբ: Թեև գրաբարում անորոշ գերբայը երկրպեղ կիրառվում է ո Նույնիման (Նույնիման է միայն եզակի), սակայն գրաբար մասնագրություն մեջ մի շարք բայեր, ինչպես նաև հայերենի մի շարք բարբառներում, անորոշ գերբայը երկրպեղ կիրառվում են ի Նույնիման: Գոյականի սեռական Նույնի և անորոշ գերբայի սեռական Նույնի (ապանի գերբայ) նույնական դրսևորման հիմքը պատկանելության արտահայտման Նույնի (ապանի գերբայ) նույնական դրսևորման հիմքը պատկանելության արտահայտման է: մեկզկա ցոյականի սեռական Նույնի ցույց է առնի պատկանելություն, վերաբերում (Հայաստանի Կաթողիկոսի գործողությանը պատկանող աստիճան)՝ Բանդուլ տուն (այս մասին մատրաման տե՛ս Ա. Ա. Արամյան, Հայերենի գերբայները և երանց ձևաբանական նշանակությունը, էջ 154—156):

նման կիրառությամբ -ու վերջավորությամբ ապանին ավելի հաճախ է հանդես գալիս, ինչպես՝ լուսնալուս կերպի (ԱԱԱԱ, էջ 202), ողջանալու նշան (անգ, էջ 557), պատմելուն պատճառն (անգ, էջ 123), պագնելու տեղ («Յերեսդ է կարմիր զէտ վարք, պոռնկներդ է պագնելու տեղ» -ՆՔԳ, էջ 52) ևն: ր) Անկախ կիրառությամբ (պարագայական պաշտոնով), ինչպես՝

«Ո՛վ ողորմելի խեղճ կանանիք,

Մեծ պան կուգայ, ի՛նչ կանիք

...Նրկուշարթի՛ լուացք անելու,

Աման-լուայ, բուլ հանելու,

Սրբանքն ամէն դուրս տանելու» (ՆՁԲ, էջ 106):

«Ճար մի տեսէր մեղ ելնալու.

Գնանք թոյր ենք մեք գնալու.

Այլ ճար շունիք աստ կենալու.

Փոզ շի մնաց հացի տալու» (ՄՂ, էջ 144).

«Գիշերս ես ի դուրս ելայ թէ կար մի գտնեմ սիրելու.

Գրօղն ալ ի զէմս ելաւ, լուկ նազար արաւ տանելու.

Եկո՛ւ տանելուն ցուցնեմ, տանելու զշիւն զարնելու.

Ջարախն ալ սփին ունի, ո՛չ խմէ ո՛չ տայ խմելու» (ՆՔԳ, էջ 77):

Այս շրջանում, առաջին անգամը լինելով մեր մասնագրություն մեջ, հանդիպում ենք ու կրավորական մասնիկով ապանի գերբայների: Ամիրդովլաթի մատ ունեթ հեռուցալ շուրս օրինակները. «Եւ թէ բուֆառտան հուկիթով ի գործ արկանեն՝ ազաւ հագին և զոգին բանուլուն» (Անգիտաց անպետ, էջ 131). «Անպալ զանկիկին կախուլուն» (անգ, էջ 265). «Եւ իր հուտան ազալ զղեղուն իրբար քաշուլուն» (անգ, էջ 445). «Ջիկին կու պատեղորեցնէ, յորժամ կինն լուացուլուն ետև՝ մէկ մըն այլ անով լուանայ» (անգ, էջ 597):

Արդեն ասել ենք, որ անորոշ գերբայում կրավորականի նման կազմությունները -ուլի (-վիլ) վերջավորություն ունեն, իսկ սեռական ձևերում գտնում ենք ի > ն հնչյունափոխություն:

դ) Ստորոգելիական վերադրի կիրառությամբ. ինչպես՝ «Գրօզ, անհուստ Գրօզ, զես մանուկ եմ, շեմ տանելու» (ՆՔԳ, էջ 77). «Ով որ սիրոյ տէր մարդոյն մեղազրէ, ինքն է աախու(ն)» (անգ, էջ 94):

«Այն որ շուրացնելու է, շորացնեն. և այն որ այրելու է, այրեն»

(ԱԱԱԱ, էջ 24):

Մեր լեզվի այս շրջանում առավել շատ են ու վերջավորությամբ ապանի գերբայով սահմանական բաղադրյալ ժամանակների կիրառությունները, ինչպես՝ կիսելու ես, լսելու եմ (ՆՁԲ, էջ 217), մտնելու ես, անցանելու ես (ՄՆ, էջ 147), զնալու եմ (անգ, էջ 167) ևն: Այս մասին ավելի մանրամասն կխոսվի սահմանական եղանակի ժամանակների կազմության բաժնում:

Այս շրջանում, նախորդի համեմատությամբ, ակնառու կերպով պակասել են անցյալ գերբայի կիրառությունները. բավական է ասել, որ -ալ վերջավորությամբ անցյալ գերբայով է լինել բայով բաղադրյալ ժամանակի կիրառու-

թյան գրեթե չենք հանդիպում. նման կազմություններում անցյալ դերբայի -ել հնչյունափոխված ձևերն ունենք, որոնց մասին իր տեղում կխոսենք: Անցյալ դերբայով առատորեն բազազրջյալ ժամանակներն են կազմում Հովհաննես Քլկուրանցին, Գրիգորիս Աղթամարցին և Մարտիրոս Ղրիմեցին իրենց՝ գրաբարով գրած ստեղծագործությունների մեջ, սակայն նկատելի է մի առանձնահատկություն. գրաբարում նման կազմություններում նեգործական սեռի բաշեք—սերժամանակ արտահայտում են կրավորական սեռի իմաստ (սիրենալ էմ—սիրել, սիրվել էմ, սիրած, սիրված էմ), իսկ միջին հայերենում առավելագույն կրավորական իմաստով են կիրառվում: Մինչդեռ այս շրջանում կրավորականություն արտահայտելու հնարավորությունը մթաղնվում է, և հեղինակները ու՝ կրավորական ածանց են օգտագործում, ինչպես՝

«Ուրեք կանաչ է այգոյս,
Որթն քաղցեալ՝ է անկոյս» (ԳԱ, էջ 257):

Այս նույն կիրառությունն ունենք նաև Նազար Հովնաթանի մոտ.

«Մարդոյս կանքն վայրի ծաղկի նմանի,
Որ այսօր քաղցուեալ է, վաղիւն անցանի» (Բանաստեղծք, էջ 170):

—Կալ վերջավորությամբ անցյալ դերբայի մի քանի այլ կիրառություններն ունի Հ. Քլկուրանցին.

ա) Գերբայական անկախ կիրառությամբ.

«Եև Յովհաննէս Քուլգորբնցի,
Լցեալ մեզօր թշուառական,
Ենգրէ ի ձէնջ սրաի մտօր—
Հոգոյն ասել զտեր ողորմայն» (Տաղեր, էջ 167):

բ) Ածական-որոշիչ կիրառությամբ. ծաղկեալ ծառ (էջ 155), ապա և հընչյունափոխված ձևով՝ այրեցել սիրտ՝ «Քանի՛ զիմ այրեցել սիրտ արինես» (անգ, էջ 151):

գ) Հնչյունափոխված ձևով՝ գոյականական կիրառությամբ.

«Մահն հերիք է մեզ խրատ,
Որ կենդանի զօր չէ թողէր—
Ոչ թագաւոր և ոչ իշխան,
Թ'ունին հարիւր հազար բեծել,
Ոչ քահանայ չ'ոչ ձգնատր,
Ոչ մեծատուն չ'ոչ տառակի» (անգ, էջ 181):

Մյուս հեղինակների մոտ եմ բայով հարադրված անցյալ դերբայի բազազրջյալ ժամանակների կիրառությունը նույնպես խիստ օճանակալի է. Ամիրզովաթը «Անկոտաց անպէտի»՝ նախարանի կիսագրաբար շարադրանքի մեջ դեռ մի քանի օրինակներ ունի. ահա դրանք՝ նուագեալ էր. բնակեալ են (էջ 2), արհեսեալ է («Որ է արհեսեալ յարտանս. ամէն»—էջ 11), տպատեալ է (էջ 14): Սակայն բուն նյութի շարադրության ժամանակ, որպես գրա-

* Այլ գրություններում՝ քաղցուեալ:

բարարանություն, նման կազմությամբ մի երկու տեղ օգտագործում է միայն «որ ի վերոյ դրեալ է» արտահայտությունը (էջ 54, 519), այլ օրինակ չունենք: Մի քանի օրինակներ գտնում ենք Մկրտիչ Նազաշի մոտ՝ «տունեալ է» (այլ գրություններում՝ տրվել է, տրվել է, տուն է, էջ 108), անկեալ է (այլ օրինակում՝ բնկել է, էջ 112), մոռացեալ է («Մոռացեալ է զօր մահուան և ոչ յիշէ նա զդատատան»—էջ 117):

Վերին բոլոր կիրառությունները գտարյուն գրաբարանություններ են, մեծ մասակ արհեստական կիրառումներ, այդ առավել ևս զգալի է Ջաբարիս Ազուլեցու «Սրագրություն» մեջ՝ «...րոնդի մեր նախնի պապերն աստ են թահարալ» (էջ 130), «Թվին ոճոգ ...բակարն մինչևի կատարածն զիր ցաւազար... հնամի, զոյի տարի շէր տեսեալ. որ եմ տարեկան մարդն զարմանալ, թէ շնմ աշեսալ» (էջ 71): Սա գրաբար ուսած Ջաբարիսն է, մինչդեռ XVII դարի Ջաբարիս մարզու լեզվի մասին լրիվ գաղափար կարելի է կազմել իր իսկ լեզվի հետևյալ երկու նմուշներով. «Ջուր ամեցի աման, անսալ, որ արեգական գ յիսնն բնված, մին յիսնն քաց: Այսպէս մինչի կէս սհաթ մնաց, ապա բիշ բիշ քաղցեցալ» (էջ 67): «Միմոն ասու, թէ ես Սիմոնս Արատուլի խանին հօտն որ ալի, ոչնձ թուման տալու եմ խանին» (էջ 70): Գործածված բոլոր բայաձևերն էլ՝ շեղվում են գրաբարից:

Գրաբար լեզվով գրված ամեն մի գրվածքում բազազրջյալ ժամանակներով բայաձևեր առատորեն օգտագործվում են (օր. «Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զինի կամաց նորա, զիտաց և ծինը զանացեալ, եթէ բմբրեալ և զհոնեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն»—Ճղրէշ, IV լեզ.), Մինչդեռ մեր լեզվի այս շրջանում բազազրջյալ ժամանակները փոխարինվեցին նորակազմ և նոր իմաստավորում ստացած աշխարհագրորդի ձևերով, և հայերեն խոսքը բերականական կառուցվածքով, նստանավանդ ականջի համար, այլ կերպ է հնչում, այլ կերպ է ապավորվում:

ՎԱԿԱՆԱՍԱՐ ԳԵՐԲԱՏ

Վաղակատարը, ինչպես հայտնի է, առաջացել է գրաբար լեզվի անցյալ դերբայից՝ հայերենի համար շատ սովորական եա>ե (գրեալ>գրել) պատճական հնչյունափոխության հետևանքով: Ներկայումս, մեր գրական լեզվի 2 հատվածներում էլ վաղակատար դերբայը միայն մեկ կիրառություն ունի՝ եմ օժանդակ բայի հետ կազմում է սահմանական եղանակի վաղակատար (գրել եմ—գրեր եմ և անցյալ վաղակատար (գրել էի—գրեր էի) ժամանակները:

Վաղակատար դերբայը մեր լեզվի այս շրջանում առավել հարուստ դրսեփորումներ ունի: Միջին հայերենի նախորդ շրջանում մենք տվել ենք օրինակ, կոր վաղակատար դերբայաձևը անուկան-որոշիչ կիրառություն ունի: Այս շրջանում ևս ունենք օրինակ Հովհ. Քլկուրանցու մոտ.

«Նս եմ ափ մի հողէ, զուն հրեղին ես՝
Քանի՛ զիմ այրեցել սիրտս արյունես» (ՀՊՏ, էջ 151):

Հայտնի է, որ գրաբարի անցյալ դերբայաձևերով մի քանի գոյականներ ևս ածականներ են կիրառվում արդի գրական հայերենում (սառուցյալ, հեծյալ), սակայն զարմանալի է, որ դեռևս միջին հայերենում գրաբարի անցյալ դերբայով ձևերը հնչյունափոխված են հանդես գալիս, ինչպես՝

«Քէ ըսկի շրկայ սուր վարդապետ,
Մեզ սուր զբոս խրատ տուր,
Մահն հերթի է մեզ խրատ,
որ կենդանի գոր չէ թողլը»

Ոչ թագաւոր և ոչ իշխան,
Թոնիկ հարիր հազար հեծել,
Ոչ քահանայ լոջ ճգնաւոր,
Ոչ մեծատուն լոջ առուպել» (ՀԹՏ, էջ 181):

Հեծել, անշուշտ, հեծյալ բան է, իսկ տառույթ՝ առաւայալ: Այս կիրառութիւնները լազապուշն վկայում են, որ միջին հայերենում հնչյունափոխված՝ վաղակատարի ձևի տակ՝ մեր հեղինակները գրաբարի անցյալ գերբայն էին տեսնում: Աշխարհաբարում, ըստ երևույթին, մեռել (<մեռեալ) միակ բանն է, որի մէջ կատարված է այս հնչյունափոխությունը:

Այս շրջանում ևս հեղինակներն օգտագործում են վաղակատար գերբայի կ' է և' ր վերջավորութիւնն ունեցող ձևերը, ինչպես՝ հասկացուցիչ է, դայտնցուցիչ [է], մեկացուցիչ է (նՔԳ, էջ 69), ասե են, ստուգե են (ԱԱԱԱ, էջ 85), կուե է, հասե է (ՄՆ, էջ 170), արկցուցիչ ես (ՀԹՏ, էջ 150), հագե է (անդ, էջ 176) ևն. մյուս կողմից՝ շեմ շինել, դագարել եմ, ստուցել է, անհարակել եմ, շեմ լսել (ՄՆ, էջ 146), շէ մնացել, շին արձել, հնազանդել էր (ՀԹՏ, էջ 181), գուցել էր, գեւ էր, պտամել էր (ԱԱԱԱ, էջ 124) ևն: Հաճախ նույն նախադասութիւնն մեզ հանդիպում են և' մեկ, և' մյուս ձևերը, ինչպես՝ «...Հեղինացոց երկիրն այս կղզին և ի յայս ժամանակս՝ կղզի է եղել, և ծովն ծածկեր է գինք, և այն բլուրն կղզի է մնացել հիմայ» (ԱԱԱԱ, էջ 126):

«Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր, գիտացէ՛ք, հար եմ կուռուել,
Ա՛յ քարեր, ա՛յ թփեր, աճապ ի ձեզ չէ՛ կելի,
Ա՛յ քարէ կարմրելի, ի ձեզ չէ՛ անցել,
Ձիս ի քուն քողեր, էլեր, գնացեր» (նՔԳ, էջ 48):

Մի խոսքով, այս շրջանում զեռ վաղ է վաղակատար գերբայների այս երկու տարբերակների այնպիսի դատարողված կիրառությունն փնտրել, ինչպիսին գտնում ենք հիմա՝ մի կողմից արեւմտահայ գրական լեզվում և կը ճյուղի բարբառներում (ր վերջավորությամբ), մյուս կողմից՝ արեւելահայ գրականում և Ում ճյուղի բարբառներում (չ վերջավորությամբ):

Վերում մերք խոսքիցն օտմանական եղանակի ժամանակների մասին, սակայն միջին հայերենում վաղակատար գերբայով կազմվում են նաև երկրորդական բաղադրյալ ժամանակներ՝ լինել բայի հարադրությամբ. այս դեպքում միշտ հանդես է գալիս ի վերջավորությամբ վաղակատար գերբայ, ինչպես՝ ոտել լինի, խածել լինի (ԱԱԱԱ, էջ 26), ստել լինի, վատումել լինի (անդ, էջ 40), դեղնել լինի (անդ, էջ 315), կապուտել լինի (անդ, էջ 316), հովցել լինի (անդ, էջ 617) ևն: Ի վերջավորությամբ կիրառության եզակի օրինակներ կան. «Տոտ, որ օրքն է... ազալ այն աշիցն որ ջուր լինի իշեր» (ԱԱԱԱ, էջ 579): Սա, ըստ երևույթին, գրագրական սխալ է:

ՀԱՐԱՎԱՏԱՐ ԴԵՐՔԵՑ

Հիշեցնենք, որ միջին հայերենի նախորդ շրջանում ներգործական սեռի իմաստի արտահայտությամբ հարակատար գերբայով կազմված ժամանակներ

չկային: Ի տարբերություն նախորդ շրջանի, բնութիւնն ենթակա շրջանում, մի շարք հեղինակների մոտ ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակների կիրառության բազմաթիւ օրինակներ ենք գտնում, ինչպես՝

«Իմ սիրելին ինձ հմար, տես բանի՛ ցեղ վարդ է կաղած» (նՂԲ, էջ 24):

«Այսօր ...սիրտս ուրախութիւն կանէ,

Ձէրայ իմ սիրելունանէ

Շատ բարե ու զիր են բերած» (անդ, էջ 60):

«Գոհանամք դաստուծոյ, որ դայս ամէն ես է պարգևած» (անդ, էջ 181):

«Երէկ քեզի պէս էի, այսօր զիս այս հայն է ձգած» (նՔԳ, էջ 91):

«Ոչ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,

Չարկած է զիս շամփուրն բունած կրակին» (անդ, էջ 104):

Այս և Չ. Աղուչեցու մոտ. «Ըստամայրադ սանն այս է, որ Ըստամ-խանն տէրօ ամարաթ է շինած» (Օրագրութիւն, էջ 25), «Ժ տարի էր, որ սոբայս պարտք էր տված» (անդ, էջ 49):

Ներգործական սեռի կիրառություններն անտարբերի են նաև հետևյալ բարդ ստորագասական նախադասություններում.

«Ինձ գրած ես, թէ. «Տոլմաթան.

Կայլուրդ հենց է՛ քամած թան» (նՂԲ, էջ 115):

«Ըսած էիր, թէ փայ ախիս,

Մէկ անգամն բրխին տանիս» (անդ, էջ 143) ևն:

Վերի օրինակները ուշադիր կարգալիս կարելի է համոզվել, որ հարակատար ժամանակով գրված բայաձևերը ոչ թե կատարված գործողության հարատեման պազափար են արտահայտում, այլ ավելի շուտ վաղակատար իմաստով կիրառություններ են: Եվ ընդհանրապես ներգործական և շեղք սեռի բայերը հարակատարով օգտագործելու նախադասյամանք հենց բայիմաստի՝ հարատեման մնայուն հետևանք թողնելու իմաստի դրսևորումն է: Արդի արևմտահայ գրական լեզուն նույնպես, ի տարբերություն արեւելահայ գրականի, ներգործական սեռի բայերը վերի իմաստներով է կիրառում: Ինչպես որ արեւելահայ գրականը օգտագործում է վաղակատարի բայաձևեր, այնպես էլ արեւմտահայ գրականը նույն իմաստով օգտագործում է հարակատարի ձևեր:

Ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակների (նաև գերբայի) իրենց բուն իմաստով կիրառելն, անտարակույս, պահանջ առաջարկեց, որ կրավորական սեռով օգտագործվելու դեպքում բայաձևն ունենա կրավորականի մասնիկ: Եվ իրօք, ի տարբերություն նախորդ շրջանի, մենք գտնում ենք թէ՛ հարակատար գերբայի և թէ՛ հարակատար ժամանակների կրավորական ու մասնիկով գրուերված բազմաթիւ ձևեր: Նախ բերենք հարակատար գերբայի անականական կիրառության օրինակներ.

«Տնտաշի տարածան կու լինի այս խոսնում զեզս» (ԱԱԱԱ, էջ 13):

«...եւ թէ կերում ախոսին կաթեցնեն՝ ամբացնէ» (անդ, էջ 131):

«Նոր փոված վարդի նման ես,

Ափսոս, որ խիտ շատ նազ կանես» (նՂԲ, էջ 37):

«Ձարգարուել ևս զինչ գարնան բացած վարդ» (անդ, էջ 226):

Այսպես նաև՝ Բագուած ժողով (ԱԱԱԱ, էջ 507), Կոտած սար (անդ, էջ 46), Երված սիրտ (ՆՁԲ, էջ 241), խոցած սիրտ (անդ, էջ 63), ապա և դերբայական կիրառությունը՝ պատկած (ՆՁԲ, էջ 116), զարդարված (անդ, էջ 226) ևն:

Բայց դեռևս քիչ են կրավորական իմաստով հարակատար ժամանակի օգտագործման ձևերը. ա՜հ մեր նկատած մի բանի օրինակները. «...և իր ունի Բ բնութիւնն խառնուած է, որ մէկ մէկի հակառակ է» (ԱԱԱԱ, էջ 402): «Եւ Գս սակ թէ ինքն խառնուած է ի հակառակ բնութիւնն» (անդ, էջ 353): «Ասէ Պատէհին թէ սպանաւոն Բ ցեղ է. Ա՛ սև, և Ա՛ խառնուած է ի ալլ ցեղ գուններ» (անդ, էջ 67): Այս բայը եռույց հեղինակի մոտ կրավորական կիրառությունը գտնուած ենք երկրորդական բաղադրչալ ժամանակում. «Բայց թէ դարույթեամբ նման լինի հետ մէկ մէկի, և տարածան նման լինի հետ մէկ մէկի. սակից որ խառնուած լինի, մուշթատիլ բնութիւն բնձայի» (անդ, էջ 12): «Եւ այն մարդուն որ ի ստամոքն պեղծ խառնուած կենալ... թէ զչուրն խմեցնեն, շատ ազատէ» (անդ, էջ 184):

«Նոր գարուն է, ձեր բախումն Բագված է լալայ» (ՆՁԲ, էջ 228): Իսկ Զաքարիա Ազուլեցին կրավորական հարակատարի բազմաթիվ ձևեր ունի, ինչպես՝ «Այս Եմառնոն շատուց ցանկալի հոր վիրաբն շինելոյ, բանզի ին ժամանակաց հորն լցված էր, վերայ եկեղեցին, խախտված էր» (Օրագր., էջ 81): «...Զաքարէս... մեր հայրենի պունն վեր կալայ, նորն շինեմ, գերայ շատուց շինված էր» (անդ, էջ 90): «Որ մեր տներն ձեռք տվիք շինելու, Ալէրսան էլ ձեռք տվեց, ինքն էլ շինեց. զերայ Աղամիրն, Սարկաւար, որ է Ամիր, սրբայ Երայարք լին բաժանված» (անդ, էջ 91) ևն:

Այսպիսով, գեռնու XV—XVII դդ. ուղիղազմած ենք գտնում կրավորական սեռի բայերի հարակատարի կիրառություններ, որոնք անկախ բայաձևի մնալուն հետևանք թողնելու իմաստ արտահայտելու հարավորությունից, այսօր սովորական կիրառում ունեն մեր գրական լեզվի մեջ:

ՆՅՔԱԿԱՅԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ

Մեր լեզվի այս շրջանում ենթակայական գերբայը հանդես է գալիս միայն — ուղ վերջավորությամբ: — Իչ վերջավորությամբ ենթակայական գերբայը գրեթե չի հանդիպում. մեկ կիրառություն ունի Մարտիրոս Դրիմեցի բանաստեղծը և օգտագործում է որպես գրարարաբանություն՝ գրարար խոսքի մեջ.

«Օրհնեա՛ զանիծիչն քո,
Աշակերտեա՛ զու Յիսուսի» (ՄՂ, էջ 112):

— ուղ վերջավորությամբ ենթակայական գերբայը կազմվում է բոլոր բայերից, ինչպես. և խոնարհման բայեր՝ ստեղծող, նախող (ՀԹՏ, էջ 119), Գակող (անդ, էջ 148). և խոնարհման բայեր՝ կարդացող (ԳԱ, էջ 233), ունեցող (ԱԱԱԱ, էջ 302), բացող (անդ, էջ 62): Առավել շատ կիրառվում են պատահական բայերից կազմված ենթակայական գերբայներ, ինչպես՝ «Մուրթի, որ է բուպցնող... Մուխաշչին, որ է խոշուրացնող... Հազիմ, որ է մարսեցնող... Ազիզ, որ է սանեցնող... Մուհամմիր, որ է կարմրցնող» (ԱԱԱԱ, էջ 16). նաև՝ շուրացնող, սանեցնող, կայցնող (անդ, էջ 17), ունովցնող, բացցնող, բուսուցանող (անդ, էջ 18) ևն:

Այս շրջանում ևս և խոնարհման բայերի ենթակայական գերբայը կազմվում է անցյալի հիմքից, ինչպես՝ կարդացող, ունեցող ևն:

ենթակայական գերբայը ենթարկվում է ի հոլովման և հանդես է գալիս անկախ, որպես գոյական, ինչպես՝

«Ար՛ն՛կ, ար՛ն՛կ իմ խուլ սուրաթ,
Փառք ու պատիւ քո ստեղծողին,
եղեմական գրախտէն կուգաս,
Օրհնեալ անուն քո նախողին» (ՀԹՏ, էջ 119):
«Առեալ տարան գեամակն ի դուռն վարդին,
Հազրէ վարդին դիմաց կարդացող բերին» (ԳԱ, էջ 233):

Մտորոգելիական վերադրի կիրառությամբ ևս բազմաթիվ օրինակներ օժենք, ինչպես՝

«Ո՛վ մեծ հրգոյր քաջ կիպարիտ,
...Լըսող էիր վարդապետաց» (ՀԹՏ, էջ 197):
«Սքալ երկրիս աստղ լուսատու,
Կանգնող էիր լամէն ժամու» (անդ, էջ 198):

«Ապրիշում... և ինքն այրող և շուրացնող է» (ԱԱԱԱ, էջ 67): «Բայց Մինհահին տէրն սանր է թէ սպանող է» (անդ, էջ 34): Այսպես և՛ պարզապես է, բաշխող է, տուող է (անդ, էջ 1), յիսակող է (անդ, էջ 6) ևն:

Ինչպես արդեն ստել ենք, ենթակայական գերբայի այս եղանակալին կիրառությունները մի տեսակ սահմանական ներկայի գրեթե բոլորում են: Այս իմաստով պատահական չէ, որ Համենի բարբառում ենթակայական գերբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր:

ՓԵՏԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ

Խոսելով ժխտական գերբայի գրեթե բոլորումներին մասին, մենք ցույց տվինք, որ մեր լեզվի նախորդ շրջանում (XII—XIV դդ.) բոլոր հեղինակներն էլ անխորհրդ օգտագործում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար, ինչպես նաև պայմանականի սպառնի և անցյալ սպառնի ժամանակներում ժխտական կազմության 4 ձևերն էլ. դրանք են՝

- ա) Ի նախդիրով և անորոշ գերբայով (չէ ի սալ).
- բ) Ի նախդիրով և անորոշ գերբայի ր վերջավորությամբ (չեմ ի սար).
- գ) Օժանդակ բայով և անորոշ գերբայով (չի սալ).
- դ) Օժանդակ բայով և անորոշ գերբայից կազմված ժխտական ձևերում ի նախադիրի հանդես չգալը ինքնին արդեն վկայում էր այդ ձևերի բերականական կազմության իմաստի միացման մասին: Առաջին եղանակով ներկա ժամանակի ժխտականի կազմության քիչ օրինակ ունենք. «Եւ զգորն կու հրցեն, և զմէջն կու յիսակեն, և զերբիամ... և զճրագունն ի տեղն կու թողուն, շեն ի հանել» (ԱԱԱԱ, էջ 511):

«Թէ՛ դու կու սիրես սրտովդ, ինձ ասա՛, ես եմ կարտով,
Թէ՛ շն ի սիրել սրտով, սուրբ Մարգրիտ՝ Է Աստուած բեզ խոռով» (ՆՔԳ,
էջ 50):

Ի նախգիրով և անորոշ դերբայի Ե վերջավորությամբ ներկա ժամանակի կազմության ես բիշ օրինակ ունենք. «Ես այն տեղն որ այն կան կու լինէր՝ դու գրին, և պահպանք գրին, ես շնն ի ձրի ասու ի այն կաւն մարդու» (ԱԱԱԱ, էջ 127):

«Այբէն մինչև ի բէն գանկատ անեմ ես,
Բարև չէր շն ի ասու, սուտ խոռվեր ես» (ՇՔՏ, էջ 223):

Երկու օրինակ էլ ունենք պայմանականի կազմությամբ Քուշակի հայրեն- ների մեջ.

«Խօշ եար, արեուզ համար, որրով եմ, գիտ մի՛ լացներ,
Տղայ եմ, շնմ ի կենաւ, գիտ ի բո կրակդ մի՛ ձգեր» (Գիման, էջ 49):

«Ի՛նչ ասեն կամ ի՛նչ լինամ, շնմ աստար ու շնմ մտանար,
Հազար եար կուտան փոխան, շնմ անտար ու գրեզ շնմ ի ասու» (անգ,
էջ 65):

Սրանք էլ, ըստ երևույթին, նախորդ շրջանի հեղինակների լեզվական ազ- գեցության հետևանք են, քանի որ, ասենք, Ամիրգովլաթը վերևի 2 ձևերի կող- քին ժխտականի կազմության մյուս 2 եղանակներով հարչորավոր ձևեր է օգ- տագործում:

3-րդ ու 4-րդ ձևերը նույնպես հեղինակները նախասիրությանը են օգ- տագործում: Ամիրգովլաթը հավասարապես օգտագործում է երկու ձևերն էլ, ինչպես՝ շնափ գիտնալ (ԱԱ, էջ 2), շն կարել (անգ, էջ 5), շն առնուլ (անգ, էջ 123), շն կարել (անգ, էջ 192), շն այլել (անգ, էջ 320), շի բնծայել (անգ, էջ 137), շի նմանել (անգ, էջ 372) ևն: Մյուս կողմից՝ շի դիմանաւ (անգ, էջ 20), շի կլաներ (անգ, էջ 368), շն գիտեր (անգ, էջ 442), շի ուտուր (անգ, էջ 570), շի մտնաւ (անգ, էջ 414) ևն: Նազաշ Հովնաթանը, միշտ է, օգտա- ւործում է 2 ձևերն էլ, սակայն զգալի առավելությանը 3-րդ ձևին է նախա- պատվություն տալիս, թվային հարաբերությունը մտալորտային 1-ի դիմաց 6 է՝ հօգուտ 3-րդ ձևի: Ահա մի քանի օրինակներ.

«Երբ որ բարով հասնիմք շնորհազարդ գարուն,
Ես էլ շնմ համբերել, կելինեմ ասարայ» (Բանաստեղծություններ, էջ 42):

«Գու շն վախել շահէն, սուլիան ու խանէն,
Մէկ խաղար շն զրկել ի բո բերանէն» (անգ, էջ 42):

Ջաբարիա Ազուլեցին 4-րդ ձևի կիրառության մեկ զեպք իսկ չունի, մինչ- դեռ 3-րդ ձևով առանյակ օրինակներ ենք գտնում, ինչպես՝ շի երկի (Պաղար- էջ 16), շի նսանուլ (անգ, էջ 16), տալ շին (անգ, էջ 81), տալ շնմ (անգ, էջ 88), կարիլ շնեմ (անգ, էջ 102) ևն:

Ընդհանրապես, Քուշակը 3-րդ ձևը սակավ է օգտագործում (գործածու- րյան 4 զեպք ունի), իսկ Մարտիրոս Ղրիմեցու մոտ 3-րդ ձևը բուզորդին շի հանգիպում:

Մենք, անշուշտ, նպատակ չունենք ժխտական զերբայի կազմության այս

2 ձևերի կիրառության վիճակագրությունը տալու, այլ՝ արձանագրելու այն հշմարտությունը, որ ժխտականի կազմության 4-րդ ձևը ուսումնասիրվող դարաշրջանի վերջում ակնհայտորեն գրեկորվում է որպես Կր ճյուղի բարբառ- ներին հասուկ երևույթ: Եվ իբրև, այժմ թե՛ արևմտահայ գրական լեզուն և թե՛ Կր ճյուղի բարբառների մեծամասնությունը իրենց ներկան, անցյալ ան- կատարը, ուստի և պայմանականի ժխտականը այս ձևով են կազմում: Մյուս կողմից՝ արևելահայ գրականը և Աւմ ճյուղի բարբառները (որոշ իմաստով նաև Ս ճյուղի) պայմանականի ժխտականը կազմում են 3-րդ ձևով, այսինքն՝ անորոշ զերբայի հետ ժխտական ձևով եմ օժանդակ բայը խոնարհելով, որ- տեղից էլ՝ բառավերջի բաղաձայն հնչյունի մաշվածությամբ՝ առաջկազմ և 20-ական թվականներին դեհաֆոնետիկ ժխտական զերբայի նորակազմ ձև- վերը (շնմ կարգալ—շնմ կարգալ), որոնք այսօր միմիայն պայմանական եղա- նակի ժխտական ձևերն են կազմում):

Այժմ տեսնենք, թե անորոշ զերբայով (լ վերջավորությամբ) կազմված ժխտական զերբայը ինչ գրեկորումներ ունեց մեք լեզվի այս շրջանում:

Ե խոնարհման թե՛ պարզ և թե՛ անանցավոր բայերն ունեն —լ վերջավո- րություն, ինչպես՝ շնեմ ասել (ԱԱԱԱ, էջ 3), շի խափանել, շի ստպել (անգ, էջ 7), շնս վախել, շնս զրկել (ՆՇՔ, էջ 42), շն: Ելնել (ԱԱԱԱ, էջ 123), շի կլա- նել (անգ, էջ 368), շիլնել (անգ, էջ 325) ևն:

Որպես բարբառային առանձնահատկություն, նազաշ Հովնաթանի և Ջա- բարիա Ազուլեցու մոտ գուգահեարար գտնում ենք —լ վերջավորությամբ ձևեր, ինչպես շնս ասիլ (ՆՇՔ, էջ 22), շնս կարիլ (անգ, էջ 29, 45), շի գիտիլ (անգ, էջ 98), շի խմիլ (անգ, էջ 113), շի գտնիլ (անգ, էջ 83), կարիլ շի (ՋԱՍ, էջ 24), շնմ ուտիլ (ՆՇՔ, էջ 148):

«Տըզէտ խօհայ կայ, որ կերթայ բազար,
Ձի ջեկիլ միմեանց շազգամ և դազար» (ՆՇՔ, էջ 82):

«Ես կարգալ գիտիմ,
Ապայ ծանիլ շիմ,
Կարգայ, սովորիբ,
Ես խօ խափիլ շիմ» (անգ, էջ 131):

«Տիրացուն բանց ժողովորդն շատ,
Ձեն նանշիլ գրած գիրն» (անգ, էջ 121) ևն:

Սրանք, անշուշտ, բայերի ներգործական սեռի կիրառության զեպքում հանդես եկող ձևեր են: Այս ձևերը հետագայում իրենց արտահայտությունը գտան արևելահայ աշխարհագրագիտի մեջ, արտահայտվելով բոլոր հեղինակների մոտ: Այս ձևերից էլ առաջացավ արևելահայ գրականի ժխտական զերբայը, որը և խոնարհման բայերի համար ունի —ի վերջավորություն (շնմ զրիլ, շնս զրիլ, շի զրիլ—շնմ գրիլ, շնս գրիլ, շի գրիլ):

Սրանցից պետք է դանազանել և խոնարհման ներգործական սեռի բուշե- րի գրաբարակերպ կրավորականի անորոշ զերբայի —լ վերջավորությամբ ար- տահայտությունը, ինչպես՝ «Ես յորժամ եփես՝ այս երկու դարութիւնն ի մէկ մէկէ շի բաժնիլ և շի փոխիլ» (ԱԱԱԱ, էջ 10): «Ես ասէ Գս թէ լան մոմին այն է որ կարմրծեա լինի. և ասած է թէ շի մարսիլ և շի փոխիլ» (անգ, էջ 427): «Ես թէ սփուֆ տունս՝ ազտէ արուն թքնելուն ևս շուտ շի մարսիլ» անգ, էջ 403):

«Ես գիտէի, թէ մարդն չի մեռանք
նե աստնի կենացս չի բաժանի» (ՄՆ, էջ 159):

Ապա և՛ չի շարժիլ (ՄՆ, էջ 172), շատովի (անդ, էջ 188) և՛ն:
Պատճառական բայերը միշտ «ի վերջավորություն ունեն, ինչպե՛ս՝ չի
հասցնել (-չի հասցնում, ԱԱԱԱ, էջ 381), չի ուտեցնել (անդ, էջ 200), չի
բշտեցնել (անդ, էջ 429), չի երեցնել (անդ, էջ 481), չի ծաւեցնել (անդ, էջ
538) և՛ն:

Ի խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերն ունեն «ի վերջավոր-
ություն, ինչպե՛ս՝ չի բռնիլ (ԱԱԱԱ, էջ 111), չի նմանիլ (անդ, էջ 372), չեն
բանիլ (նՁԲ, էջ 103), չեն խոնարհիլ (անդ, էջ 120), չի անցանիլ (ԱԱԱԱ, էջ
23), չի բուսնիլ (անդ, էջ 125) և՛ն:

Ա կրավորական ածանցով կազմվող նորակերտ կրավորական բայերն
ունեն «-ովի վերջավորություն, ինչպե՛ս՝ «էլ չի նարվիլ գլխի գոտիկ» (նՁԲ, էջ
121), «Եւ այս ուժս որ հակառակ է, և ամենայն տեղ չի գրարնուի...»
(ԱԱԱԱ, էջ 10): «Եւ ինքն շատովի, և թէ ուտեն՝ իր զեղն փոխելն է» (անդ,
էջ 74): Ապա և՛ չի ձեռնիլ (անդ, էջ 168), չի գտնուիլ (անդ, էջ 366), չի գոր-
ծուիլ (անդ, էջ 514) և՛ն:

Ա և ու խոնարհումների թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերը համապա-
տասխանաբար ունեն «-ալ և «-ուլ վերջավորություններ, ինչպե՛ս՝ չես ատուլ
(նՁԳ, էջ 44), չի մնալ (նՁԲ, էջ 56), չի շորանալ (ԱԱԱԱ, էջ 69), չի ողջանալ
(անդ, էջ 131), չես իմանալ, չես բանալ, չի հովնալ (նՁԲ, էջ 46), չի բողոլ
(անդ, էջ 407), չեն առնուլ (անդ, էջ 123), չեն տեսնուլ (անդ, էջ 164) և՛ն:

Բոլոր դեպքերում չ ժխտական մասնիկն ավելանում է եւ՛ օժանդակ բայի
ներկա և անցյալ ակնառար ձևերի վրա. ներկա ժամանակի եզակի III դեմ-
բում է-ն հնչյունափոխվում է ի-ի (տե՛ս վերևի օրինակները): Այս դեպքում
թե՛ բաղաձայնով և թե՛ ձայնավորով սկզբող բայերում չ մասնիկն ուղղակի
կարող է դրվիլ բայաձևի (դերբայի) վրա, ինչպե՛ս՝

«Մէկն շասնի (=չի ատում), «Թորին տէր» (նՁԲ, էջ 120),
«Մարդ կայ, որ ինքն շանի (=չի անում) մեծութիւն» (անդ, էջ 84):

«Այն անասուն լաւ է, որ բնութիւնն մարդուն բնութեան մատիկ է. և ի
մտն հոտն կաթն կու չիմացուի, որպէս շունն և գայլն, և այն անասունք որ
միտն շատովի, և որ մարդն չիրմենց կու պժգայ» (ԱԱԱԱ, էջ 188). «Եւ ամե-
նայն ճոհարին ի այմասն մուտ չկարել այնել, և այմասն ամենուն մուտ
կայնէ» (անդ, էջ 37). ապա և՛ շայնել (ԱԱԱԱ, էջ 82), չկնել (անդ, էջ
325), շառնել (անդ, էջ 247) և՛ն:

Բոլոր դեպքերում օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ: Բարբառա-
լին երևույթ պետք է համարել Զարբարի Աղույնցու լեզուում ժխտական կազ-
մությունների հակառակ դասավորությունը, երբ օժանդակ բայը դրվում է
դերբայից հետո և ենթարկվում է բարբառին հատուկ հնչյունափոխության.
Ինչպե՛ս՝ «Ամորդամու մինչի թէսին ծովն երես այ, մեծ նով բարձած գնալ չէ
(=չի գնում)» (Օրարդ, էջ 15). «Այս պատճառովս խաներն սայ ձեռաց ասլ չին
(=չեն տային)» (անդ, էջ 81). «Ես Զարբարից գնամ, խանիցն դատուր ուզեմ,
թէ մեք կարիլ չենք (=չենք կարողանում) տէրս կենալ» (անդ, էջ 102): Ինչ
վերաբերում է անորոշ դերբայի ձայնորոշի՝ Բ հնչյունափոխված ձևով կազմը-

վող ժխտական ժամանակների վերջավորություններին, ապա պետք է ասել, որ
4 խոնարհման բայերը համապատասխանաբար ունենում են հետևյալ վերջա-
վորությունները. «-ր» չի կլաներ (ԱԱԱԱ, էջ 368), չի ասեր (նՁԲ, էջ 84), չի
խմեր (անդ, էջ 209). «-ր» չի նմաներ (ԱԱԱԱ, էջ 9), չես հայիք (ՉԲՏ, էջ
145), չես խախիք (ՄՂ, էջ 106). «-աւ» չի դիմանար (ԱԱԱԱ, էջ 20), չի գնար
(ՉԲՏ, էջ 132), չես կշտանար (նՁԲ, էջ 137). «-ար» չրողոր (ԱԱԱԱ, էջ 49), չի
բողոր (անդ, էջ 96), չի մտնուր (անդ, էջ 423), չիմ անուր (նՁԳ, էջ 65) և՛ն:

Ե խոնարհման ներգործական սեռի՝ գրաբարակերպ կրավորական ունե-
ցող, ինչպե՛ս նաև «-ովի վերջավորությամբ նորակերտ կրավորական բայերը
համապատասխանաբար ունեն «-իր և «-ուիր վերջավորություններ, ինչպե՛ս՝
«Ելաի՛մ, որ է կաշուկ. այն զեղն է որ բաշելով չի կորիք (=չի կորվում)»
(ԱԱԱԱ, էջ 15): «...Ասոր շարացն չի փոխիք (=չի փոխվում) ի սաքրայ»
(անդ, էջ 413): «Եւ այն որ նուզվանքն է՝ դանկով չի աշուիր» (անդ, էջ 414):
«Եւ զեղին պղինձն կու կտորի, տաք չի ձեռնուր» (անդ, էջ 564): «Եւ ինքն չի
ստիք» (անդ, էջ 570):

Առաջին 3 խոնարհումների ձևերը հիշա ու հիշա համապատասխանում են
արդի արևմտահայ գրական ձևերին: Արևմտահայերենի քերականները ու խո-
նարհում, որպես համակարգ, չեն բնորոշում: Գծաբառաբար անցյալ անկա-
տար ժամանակով ձևեր չեն հանդիպում. հետաքրքրական կլինեն իմանալ, թե
ի խոնարհման բայերն այս ժամանակում ինչպիսի դրուերում կունենային:

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Միջին հայերենի այս շրջանում բայի խոնարհման պատկերը նույնն է,
ինչ նախորդ շրջանում, այն է՝ ունենք 5 եղանակ՝ սահմանական, հրամայա-
կան, բղձական, պայմանական և հարկադրական: Սահմանական եղանակը
հանդես է գալիս 9 ժամանակներով, որոնք նույնանում են արդի գրական լեզվի
հետ, հրամայականը՝ հաստատական և ժխտական ձևերով, իսկ վերջին 3
եղանակները՝ ապառնի և անցյալ ապառնի ժամանակներով:

Գրաբարի ստորագասական եղանակը իր երկու ապառնիներով գրեթե
անգործածության է մատնված, մոռացված: Բազմական է ասել, որ Հովհաննես
Թլկուրանցի բանաստեղծը ստորագասականի գործածության միայն մեկ դեպք
ունի, այն էլ դրաբարյան բարացած արտահայտության մեջ.

«Ով արթէ զդայ սրբութեամբ,
Ոչ ճաշակէ գմահ՛ յախտեան.
Նա ի յիս բրնակեցէ
Եւ ևս ի նմա անդրաական» (Տաղեր, էջ 168):

Իսկ Ամիրզովյաթ Ամասիացի բժիշկը իր «Անդրատաց անպէտ» սովորա-
ծավալ աշխատության մեջ ստորագասականի կիրառության ոչ մի դեպք չունի:
Ինչ վերաբերում է այս շրջանի մյուս հեղինակներին, ապա նրանք ստորագա-
սականի ձևերն օտարալեզուներին օգտագործում են իրենց իրատական-բարոյական
բանաստեղծություններում, գրաբարյան բարացած արտահայտություններում
ու կրոնական-եկեղեցական բովանդակության մի մասի մեջ. մի խոսքով՝ օգ-
տագործում են որպես գրաբարբանություն. օր.

«Եկա՛ք ժողովորդը, երկրպագեցուք,
Ձի նայ է յոյս հաստացեցոց» (նՁԲ, էջ 124):

«Այս նշանաւ
Ստոր խաչիս,
Աղաչեցումք» (անդ, էջ 127):

«Կոչնական երբ գայցէ հոգուն ասեղման,
նա շի տա այլ համբեր մարդուն հրախրման
... Գոգնով վախիցէ յա՛հ հրշտակին» (ՄՆ, էջ 139):

Չպետք է մոռանալ, որ մեր կյանքի այս շրջանում ուսումնասութիւնը գրաբար լեզվով էր: Ավելին, շատ անգամ հեղինակները սովորութիւն ունեւորել էին իրենց ուսուցիչներին սպասարկելու համար անխառն գրաբարով էին գրում (մինչև իսկ Խ. Աբովյանը զերծ չմնաց այս բանից), սակայն, այնուամենայնիվ, գրաբարի ստորագրասական եղանակը իր բմբուսով կորցրել է այս շրջանում. Զարբրիա Աղայեցին, օրինակ, ստորագրասականի սխալ, աղավաղված ձևեր է օգտագործում, ինչպէս՝ «Ես... Զարբրիա... որ ուր որ գնամք, թէ զիսկ և եթէ քաղաք թէ մտանիցնմ, կամ թէ զատիկ արարիցնմ, կամ թէ նշանաւոր բան կամ թէ որ հանդիպիցէ գրիցնմ» (Օրագր. էջ 29): «Ես Զարբրիա... ուր և հանդիպիցէ, գատիկ կամ վարդավառ կամ սորբ խոշ կամ բարձրձիթ արարիցնմ կամ թէ ինչ զիսկ կամ քաղաք մտանիցնմ կամ թէ կաճեցնմ, գրեցնմ» (անդ, էջ 5-6): Վերջի երկու նախադասութիւններում արարիցնմ ձևը պետք է ուղղել՝ առնիցնմ (կամ՝ արարից), իսկ գրեցնմ՝ պետք է ուղղել՝ գրիցնմ (կամ՝ գրեցից): Այժմ տեսնենք, թե խոնարհումը նախորդ շրջանի հետ համեմատած՝ գրական մեծ ընդհանրութիւններ ու արբերութիւններ ունի:

ՍՄԵՐԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա և անցյալ անկատար ժամանակները մեծ մասամբ կազմվում են կու, կը, կ մասնիկներով, ինչպես՝ կու սիրէ (ՄՂ, էջ 87), կու բերէ (անդ, էջ 90), կու ենդէ (ԳԱ, էջ 133), կու բանամ (անդ, էջ 136), կու բուսի (ԱԱԱԱ, էջ 9), կու մեռի (անդ, էջ 19) կու լնուն (անդ, էջ 143) ևն: Կու մասնիկը գրվում է բաղաձայնով սկզբող բայաձևերից առաջ, սակայն կարող է գրվել նաև ձայնավորով սկզբող բայաձևերից առաջ, ինչպես՝ կու սուն (ՄՂ, էջ 90), կու այրի (ՄՆ, էջ 108), կու անկաւի (ԱԱԱԱ, էջ 19), կու արծէ (անդ, էջ 190), կու օրսար (անդ, էջ 345) ևն: Սակայն ձայնավորով սկզբող բայաձևերից առաջ ավելի շուտ գտնում ենք կ մասնիկը, ինչպես՝ կանես (ՆՃԲ, էջ 5), կելնես (անդ, էջ 33), կառնես (անդ, էջ 135), կուտէր, կաւէր (ՄՂ, էջ 114), կանուանէին, կասէին (ԱԱԱԱ, էջ 333), կուծովցնէ (անդ, էջ 53), կելնէ (ՆՔԳ, էջ 87), կաննմ (անդ, էջ 104) ևն:

Ձայնավորով սկզբող բայաձևից առաջ կու և կ մասնիկները անխառն կերպով ձայն օրինակ է հետևյալ նախադասութիւնը. «Մուսայլաւ, ինքն քաղցուն է (որ է մայ ի փութիթէ), որ կու ետցնեն, և գիրփութն կառնուն, և այնչաք կելնեն որ Բ բաժինն կու մնայ և Գ բաժինն կերբայ... և գարունն յիտակ է պայծառ կու առնէ, և պերթապուրն կու մարտէ» (ԱԱԱԱ, էջ 350):

Սակայն զեպրերում կ մասնիկը հանդես է գալիս բաղաձայնով սկզբող բայաձևերից առաջ, ինչպես՝ կապանէ (ԱԱԱԱ, էջ 275, 296, 405, 503 ևն), կզուրցէ (ՆՔԳ, էջ 92), կիւէր (անդ, էջ 65), կմնայ (ՉԱՕ, էջ 14) ևն: Բաղա-

ձայնով սկզբող բայաձևերից առաջ, եթէ կու չգրվի, ապա սովորաբար հանդես է գալիս կը մասնիկը, որ գրվում է անշատ, ինչպես՝ կը փոխի (ԱԱԱԱ, էջ 369), կը տանի (անդ, էջ 433), կը գտնի (անդ, էջ 454), կը բխայ (ՉՔՏ, էջ 217), կը քարգոծնէ (ՆՃԲ, էջ 197), կը դասնէ (անդ, էջ 198), կը դրգամ (ՆՔԳ, էջ 64) ևն:

Կու մասնիկը գրվում է ինչպես գրաբարածն կրավորական, այնպես էլ նորակազմ կրավորական բայաձևերի վրա, ինչպես՝ կու գտաի, կու բաժանի (=բաժանվում է—ԱԱԱԱ, էջ 10), մյուս կողմից՝ կու բացուի (անդ, էջ 5), կու լիշուի (անդ, էջ 24) ևն: Անկանոն բայերը նույնպես ներկա և անկատար ժամանակները կազմում են կու, կը, կ մասնիկներով, ինչպես՝ կու այնէ (ԱԱԱԱ, էջ 3), կու տունէ (անդ, էջ 61), կայնէր (անդ, էջ 122), կու դենն (անդ, էջ 22, 28), կու տան (ՄՆ, էջ 101), կու լիւնայ (ԱԱԱԱ, էջ 13), շուտ կուգաս (ՆՃԲ, էջ 195), կուտայ (ՉՔՏ, էջ 209) ևն: Ավելին, կու մասնիկով սահմանականի ներկա և անկատար կազմելու լեզվաբանագիտական այնքան ամուր է հեղինակների մոտ, որ պիտի մ գիտնմ բայաձևերի վրա էլ են դնում, ինչպես՝ կու պիտի (ԱԱԱԱ, էջ 4, 20, 21, 36, 180, 183 ևն, ՆՔԳ, էջ 78), կու պիտիս (ՆՃԲ, էջ 76), կու գիտէ (ՄՂ, էջ 115), կու գիտէ (ՆՔԳ, էջ 93): Գիտնմ բայաձևը, ինչպես պիտենք, նույնիսկ աշխարհաբար և մեր գրական լեզվի երկու հատվածներում անփոփոխ ձևով արտահայտում է ներկա ժամանակի իմաստ: Վերևում մենք նկարագրեցինք ներկա և անկատար ժամանակների կազմութիւնը ձգտումը մեր լեզվի այս շրջանում: Սակայն սխալված կլինեինք, եթէ կարծեինք, որ այս շրջանում գրաբարածն ներկայի գրականում չկա մեր լեզվի մեղք Բուրբ հեղինակների մոտ էլ անխառն մենք գտնում ենք գրաբարյան ներկա և անկատար ժամանակների գրանորոշման, ինչպես՝

«Մէշիս նսուն (=նսում են) սազով-գամով,
... Գիւի խմեն (=խմում են) սուկէ շամով» (ՆՃԲ, էջ 13):
«Աշուն նրման է ձերութենա,
Մերք մեռանն է՝ անցնին գնան» (ՉՔՏ, էջ 168):

Ապա և՛ լնուս (ՉՔՏ, էջ 127), բողոս (անդ, էջ 135), զովն (ՆՃԲ, էջ 11), ուսնին (անդ, էջ 79), պարձենա, սսեն (ՆՔԲ, էջ 44), խմաւ (անդ, էջ 76), տեսնէր (ՄՆ, էջ 10) ևն: Առաջիկ շատ են և խոնարհման ներգործական սեռի բայերի գրաբարածն կրավորականի ձևերը, որ իր տեղում կտեսնենք:

Ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ այս՝ հաճախ հույն նախադասութիւն մեք իբար կողք-կողքի հանդես են գալիս ներկայի կազմութիւնն երկու ձևերն էլ. օրինակ. «Ես թէ զիր չուրն ի բիթ կարեցնեն, գարունն կուր է թէ յամեն ար Ա գրամ տաս, սազով շարային, և թէ շատ ուտեն՝ զսերուն՝ կուր, և զաչուն մքնցնէ, և մոռաց բեր, և թէ քամես զդայարն՝ և երբամ իր չրէն խմես, կո՞ն ԵՊԱՆԱՆՆէ պաղեցնելովն. և օգով բշտին կսիծալուն. և իր չուրն սպաննող է. զարարիթնն ի լերդն կո՞ն շԱՍՅՆէ, և խելքն կԱՍՅՆն. և արուն կերբայ, որպէս հարբած կո՞ն լինն» (ԱԱԱԱ, էջ 115): «Ես զիր հասն օրորդին կԱՌՆն, և իրենց որսած մսին մէջն դենն, որ չի հոտի... և այս խոսա՞՞ զգողն յուրդուր, և զհաղն կո՞ն ԲԱՆԱՅ, և զխմածք բամեստանն կո՞ն ՅՐՈՒՒ, և զլերդին կուրածն կո՞ն ԲԱՆԱՅ, և սազով փայծղանն զՔՐն կու յիտակէ, և գարունն խաղայն կո՞ն ՏԱՆն, և բուսպունն՝ և հաղին՝ և արծուց՝ սազուէ» (անդ, էջ 98):

Նախորդ շրջանի համար գրաբարյան և նորակազմ աշխարհաբար ներկայի

կիրառութեան համախաղանութեան մասին խոսելիս ասել էինք, որ շատ անգամ գրաբարքան ձևերը տասնապատիկ անգամ ավելի շատ են օգտագործվում, քան նոր ձևերը: Այս շրջանում այդ նույն հարաբերությունը նորակազմ ձևերի օգտին է, այսինքն՝ կու մասնիկով ձևերը խոսքի մեջ առանձնակ անդամներ ավելի շատ են հանդիպում, քան գրաբարքան ձևերը: Ստորև բերված օրինակը մեր ասածի լավագույն ապացույցն է (կրկնակի ընդգծումները նորակազմ ձևերն են). «Եւ ցեղ մըն այլ կայ որ այնոր պախարի լաճշի ԿՈՒ ՊԱՆԵ, որ քաղցմանի՝ վայրի պախար (եռայան ինչէի). այս ցեղն ի լեռներուն ի գոգն ԿՈՒ ՄԻՆԻ, եւ ի մտեսանուն ի մէջն. եւ այսպէս տեղաբն ի շուրջ ԿՈՒ ՊԱՆԵ և ԿՈՒ ՔԱՆԿԻ. եւ ամենուն բնութիւնն մէկ ի մէկ ԿՈՒ ՆՄԱՆԻ, եւ այն եզն որ օրծ է՝ յորժամ հիանդանայ նա, յաճ ԿՈՒՏԷ և ԿՈՒ ՈՂՋԱՆԱՅ. եւ այն որ վայրի պախար՝ այն ԿՈՒ ԵՐԹԱՅ գրիթն ի յաճուն ծակն ԿՈՒ ՊՆԷ և շնչունը զաճն ի գոյրս ԿՈՒ ՔԱՆԷ, եւ ւաճն շուտ մի գոյրս ԿՈՒ ՊԱՆԵ, հանց որ խնդմանդ քարն զերկաթն ԿՈՒ ՔԱՆԷ և կաշի, եւ ւաճուն ազուն ԿՈՒՍՈՒՆԻ և ԿՈՒՏԷ, եւ ւաճն ԿՈՒ ՇԱՐԺԻ և ԿՈՒ ԹԱՊԱՏԻ, եւ ԿՈՒ ԶԱՆԱՅ որ խայթէ, եւ ԿՈՒՏԷ զինքն լման, հանց որ սրտիբիւնն եւ կսկիծն ի յաշն ԿԵՆԷ, եւ աշխցն արցունք ԿՈՒՒ ՎԱԹԻ, աշխցն արորբն ազա և ճիպո ԿՈՒ ՓՈՂՎԻ և ԿՈՒ ՊՆԿԱՅ ժամանակն այն ճիպոն, որպէս որ ի ահանքն ԿՈՒ ՄԻՆԻ աղտի պէս» (ԱԱԱԱ, էջ 38):

Անկատար գերբայի բնութեան բաժնում մենք արդէն ասել ենք, որ բնութեան ենթակա գրաբարքաների վերջում իրար հայրենակից 2 հեղինակներ սահմանական ներկա և անկատար ժամանակները կազմում են իրենց բարբառին հասուկ — ում վերջավորութեամբ: Արդ, սահմանականի ժամանակների կազմութեան մեջ կու մասնիկը ի՛նչ տեսակարար կշիռ ունէր այս շրջանում: Չիտեսելով մտաւ հեղինակների մտքն, պետք է ասել, որ նա՛յնաչ Լույնաթանը, և՛ Զաբարթա Ազուլեցին անխախտ կերպով օգտագործում են կու մասնիկով ներկայի և անկատարի ձևերը: Նշանակում է՝ այս մասնիկը ընդհանուր կիրառութեան ունի XV—XVII դդ. բոլոր հեղինակների մոտ: Ահա մի քանի լրացուցիչ օրինակ ևս.

«Քաղցր խօսքով կու ծիծաղիս, կու մեամ մայիլ,
Կարմիր երեսոց կու շողշողայ, շեմ կարիլ հայիլ» (նճԲ, էջ 45):
«Սով աշբերիդ մտիկ կանեմ՝ ձեռաց կու զնամ,
...Թէ որ գու էլ ինձ կու սիրես, ասէ՛, իմանեամ.

...ես որ պինդ հոգոց կու հաճեմ, է՛ր շեմ իմանայ» (ն. ա. էջ 46): «Պարցեայ ժէլգիդունի նավերն Կալիս կու բառեմ, Կալիս կու դադարկազնեմ. այլ տեղ չկայ» (ԶԱՍ, էջ 16): «Աստի շուրի Ամսրդամ խայաճան այ ջրով, որ սով կու զնայ, կուզայ» (անդ, էջ 15):

Պետք է խոստովանել, սակայն, որ կու մասնիկը (հնչունափոխված ձև-վերով հանդերձ) միայն ընդհանուր կիրառութեան ունէր բնութեան ենթակա շրջանում, սակայն ո՛ր բացարձակ, ինչպէս է այժմ արեւմտահայ գրական լեզվում և Կր ճյուղի բարբառներում: Այն ժամանակ հայ պետականութեան բացակայութեան և լեզվամշակման տարբարային բնույթը գրական ընդհանուր մեկ պարտադիր ձև չէին կարող ենթադրել, ասենք, աշխարհաբար գրական հայերենն ինքն էլ խանձարտրում էր ինչ վերական նյա բազմատեսակութիւնը շարունակվեց ընդհուպ մինչև XIX դարի կեսերը (Արեւելահայաստանում՝ ավելի ուշ էլ), երբ վերջնականապէս ձևավորվեցին և մշակվեցին մեր ժողովրդի

երկու հատվածների գրական լեզուները, և յուրաքանչյուրը իր ներսում ունեցավ միասնական, պարտադիր կիրառելի բերականական ձևեր:

Ապառնի և անցյալ պատնի ժամանակներ.— Ի տարրերութեան նախորդ շրջանի՝ ապառնի ժամանակը հանդես է գալիս ու վերջավորութեամբ գերբայով, ինչպէս՝

«Դու էդ ծաղկունքդ ո՛ւմ հետ ես կիսելու,
...նազաշ մնացած է ետիւր և գերի՝
Քէ պայծառ երեսոց ե՛րբ եմ տեսնելու» (նճԲ, էջ 216):

«Տխուր մնացել եմ, սիրտս՝ հարալու,
Մինչև ե՛րբ եմ սիրուտ ծարաւ մնալու,
Ես կու թողնեմ՝ երթամ, էլ չեմ յետ գալու,
Դադատանինն ո՛նց ես ինձ շուղար տալու» (անդ, էջ 246):

«...Նեղ է զուռն առենին, որ ես մտնելու,
Նշանաւ սուրբ խաշին ես անցանելու» (ՄՆ, էջ 147):
«Հաւասար զնալու եմ մենք, զի այն կեանքն է մեզ հայրենի» (անդ, էջ 167):

— ու վերջավորութեամբ ապառնի գերբայով կազմված երկրորդական բացարդայ ժամանակների կազմութեան մի երկու օրինակ ունենք այս շրջանում, ինչպէս՝ «Եւ թէ յայն տանն որ գտալայ բերելու լինի՝ կախէ, շուտ ծնի» (ԱԱԱԱ, էջ 355): «Պարցեայ, մին էլ մահանայ արին, թէ՛ այս շուրի աւրն գայ, փոզ զին բանբումն, մուշոզոզայ, տան, թէ՛ մեք այս շուրիս Ուրումէլի բանք ու, ծախիք ու, մեք ձեր փոզն յետ տալու լինի» (ԶԱՍ, էջ 131):

— ու վերջավորութեամբ ապառնի գերբայով ժամանակի կազմութեան երկու դեպք է միայն հանդիպում նազաշ Լույնաթան բանաստեղծի մոտ. .

«Երբ որ ինձ հետ մէլտան մտար,
Ես էլ չեմ ապոյ թեզ դադար» (Բանաստեղծութիւններ, էջ 112):
«Խապար ես դրկել քո բերանէն,
«Անէք, շատ մի՛ հեռանալ տանէն,
Մէկ օր գալոյ եմ քո բերանէն» (անդ, էջ 9):

Այս վերջինը տեսրակներից մեկում գտնում ենք և գալու եւմ ձևով: Պետք է խոստովանել, որ սահմանական եղանակի ապառնի ժամանակներով ձևեր միջին հայերենը թիչ է օգտագործում, անհրաժեշտութեան դեպքում ավելի շուտ հարկադրական ապառնի ձևեր է օգտագործում, սակայն ապառնի ժամանակի՝ տարբեր դեմքերով ու թվերով հանդես գալու (ինչպէս ցույց են տալիս վերին օրինակները) վկայում է, որ նա հաստատուն տեղ ունի միջին հայերենի բայի խոնարհման համակարգում:

Վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակներ.— Ինչպէս վաղակատար գերբայի բնութեան բաժնում նշել ենք, այս շրջանի հեղինակներն անխոսք օգտագործում են վաղակատարի ե՛ր, և՛ ր վերջավորութիւններով ձևեր, ինչպէս՝ «Սուրբ Կարապետն սիրել ես, նաչար խօսքով կողողել ես, Իբր շորս կողմն գովել ես» (նճԲ, էջ 147), բայց և՛

«Անմահ ու անզրոյ զհօգիս հաւեր ես
Դու ինձ սիրելի՛ ւ՛ ինձ բարեկամ ես

...Անիսր Է՝ անդանակ զարինս հեղիւր Ես
Գնաց իմաստութիւնս՝ զմիտքս տարեւ Ես» (2ԹՏ, էջ 151):

«Քար եմ բերեւ սարերոյս,

Փուշ եմ կրեւ ձորերոյս,

Պատ եմ բալտեւ ալգոյս» (ԳԱ, էջ 254):

Ի տարրերութիւն նախորդ շրջանի, XV—XVII դդ. հեղինակները մտն ցանում ենք վաղակատար ժամանակի ու կրավորականով կիրառութեան բազմաթիվ դեպքեր, ինչպես՝ «Մուֆաթթէ, որ է բացող. այն դեղն է որ զմատտան որ է բարակ ծակտիքն որ լցուել է և կալուել է, շարժէ զծակտիքն բանայ» (ԱԱԱԱ, էջ 16): «Բերն բուս մըն է որ իրար է փատուել որպէս լուվան, և հուսուել է» (անդ, էջ 599): «Գու զարգարվել Ես զատ ու զտարաֆոլ» (ՆՆԲ, էջ 25): «Մաշվիլ եմ, զալում, զալում» (անդ, էջ 9): «Բաղիլ զուռն է բացվել մէջ բո զարդասին» (անդ, էջ 203):

Պատճառը հասկանալի է. նախորդ շրջանի հեղինակները վաղակատարի կրավորականի լեզվամտածողութիւնն արտահայտում էին անցյալ դերբայով և լինիմ բայով կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակներով, մինչդեռ բնութիւնայն ենթակա շրջանում, ինչպէս վերևում տեսանք, նման կազմութիւններ չեն գործածվում: Մի մասնակի առանձնահատուկութիւն ևս. բարբառային տարրերի աշխուժացման հետեանքով վաղակատար դերբայի հետ զրվող օժանդակ բայը ենթարկվում է տարբեր հնչյունափոխութիւնների, ինչպէս՝ «Ձեր բախի մէջն բացվիլ ա սմբուկ» (ՆՆԲ, էջ 40): «Բնձ մէկ աղչալ ջուր ավիլ այ» (անդ, էջ 101): «Նս Զարգարիայ գնացել ի Լոպահան» (ԶԱՍ, էջ 168) ևն:

Հարակատար և անցյալ հուսկատար ժամանակներ. — Հարակատար դերբայի բնութիւնայն բաժնում նշեցինք, որ մեր լեզվի այս շրջանում եմ օժանդակ բայով սահմանականի հարակատար և անցյալ հարակատար ժամանակներ են կազմվում ինչպէս շեղոր ու կրավորական, այնպէս էլ ներգործական սեռի և պատճառական կերպի բայերից. օրինակ՝ պառկած եմ (2ԹՏ, էջ 179), բնկած Ես (ՆՆԲ, էջ 26), կարօտած էր (ԳԱ, էջ 134), անցուցած է (զիներն ի բան է անցուցած, էջ 151), անբաժ է («Շատ մարդոյ տուն է անբաժ» ՆՆԲ, էջ 60):

«Սովբաժ եմ զործել սալակ.

Չերա շատ եմ կտրած թալակ» (ՆՆԲ, էջ 146) ևն:

Այսպիսով, սահմանական եղանակի հարակատար ժամանակները կազմութեամբ միջին հայերենի այս շրջանն ավելի հարուստ գրեկորումներ ունի, բան արդի գրական հայերենը, բան որ այժմ գրական հայերենում ներգործական սեռի բայերը զիտավոր բաղադրյալ ժամանակներում հարակատար ժամանակով չեն օգտագործվում:

Հարակատար դերբայով կազմվում են նաև երկրորդական բաղադրյալ ժամանակներ, ընդ որում ոչ միայն լինիլ բայի հարադրութեամբ, ինչպէս՝ նկատ կու լինիլ (ԱԱԱԱ, էջ 41), քէ մեռած լինիլ (անդ, էջ 70), ճմած լինիլ (անդ, էջ 192), այլև մի բանի ա՛յլ բայերի հարադրութեամբ, ինչպէս՝ խառնուած կենայ (ԱԱԱԱ, էջ 184), պանած կա (2ԹՏ, էջ 178), գրած կայ (ԶԱՍ, էջ 92) ևն: Հետաքրքրական է հետևյալ փաստը. նույնիսկ երկրորդական բաղադրյալ ձևերում կրավորականի զարգացման գրեկորման համար անհրաժեշտութիւն է զգացվում դերբայը կրավորականի հետ, ինչպէս՝ գրված կայ (ԶԱՍ, էջ 11), խառնուած կենայ (ԱԱԱԱ, էջ 184):

386

Անցյալ կատարյալ. — Ե խոնարհման պարզ, ինչպէս նաև պատճառական կերպի բայերի եղակի II զեմբում տիրապետող իր վերջավորութիւնն է, ինչպէս՝

«Մնացիլ շարեաց զաւակ» (2ԹՏ, էջ 193):

«...Փորկցի բեղ զուր ու խոր,

Վանցիլ հանց հուր ու բոց» (անդ, էջ 194):

«Չսիրտս երեցիլ ու աղկեցիլ ու Բաշեցիլ յաշքրդ սուրմայ» (2ԹՏ, էջ 217):

«Չօգիս կորցրիլ, զալում,

Ինձ վրէշացրիլ, զալում» (ՆՆԲ, էջ 7):

Իր վերջավորութիւնը սակավ է հանդիպում, օգտագործվում է որպէս գրարարարանութիւն, ինչպէս՝ համբուրեցեր, սնուցեր, կանգնեցուցեր (ԳԱ, էջ 158), փորձեցեր (2ԹՏ, էջ 194) ևն:

Եղակի III զեմբում այս շրջանում ևս համասարակ օգտագործվում են և՛՝-նց, և՛՝-նաց վերջավորութիւնները, ինչպէս՝ Բաղեց (2ԹՏ, էջ 131), ձգեց (անդ, էջ 61), խմեց (ԱԱԱԱ, էջ 320), ուղեց, խայրեց (անդ, էջ 321), մյուս կողմից՝ մատնեաց, շարչարեաց (2ԹՏ, էջ 161), ճեղեաց (ՆՆԲ, էջ 36), յղեաց (ՄՂ, էջ 101) ևն:

Չօգնակի II զեմբում ամենուրեք՝ ա՛մ վերջավորութիւնն ունենք, ինչպէս՝ լիչեցա՛մ (ԱԱԱԱ, էջ 139), լսեցա՛մ (անդ, էջ 250), փորձեցա՛մ (անդ, էջ 429), կրեցա՛մ, գրեցա՛մ, կիսեցա՛մ, կարեցա՛մ (ՄՂ, էջ 115), ճեղեցա՛մ, գրեցա՛մ, շահեցա՛մ (ՆՆԲ, էջ 216) ևն:

Ասել բայը օգտագործվում է և՛՝ բաղադրյալ-ցոյական, ասաց (ՄՂ, էջ 111), և՛՝ արմատական՝ ասիւր (ՄՂ, էջ 95, 99), ասին (ՆՆԲ, էջ 88), ասաւ (ԶԱՍ, էջ 70, 100) ձևերով:

Բերել, ամէլ բայերը անցյալ կատարյալում արմատական հիմք ունեն, ինչպէս՝ երբեւ (2ԹՏ, էջ 191), բերիւր (ՆՆԲ, էջ 112), ամիւն (ՆՆԲ, էջ 92), էած (անդ, էջ 45, 61) ևն:

Հանել բայը հանդիպում է նաև կանոնավոր ձևով՝ ցոյական հիմքով, ինչպէս՝ «Հանցեցին զիս յիմ ալգոյս» (ԳԱ, էջ 280):

Ե խոնարհման անցյալով բայերում նոր ձևերը դեռևս չեն տիրապետում, այլ հինն ու նորը համասարակ օգտագործվում են, այսպէս՝ «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» (2ԹՏ, էջ 122), բայց և՛՝ «Փորձեցեր զմեզնն ու անսեր» (անդ, էջ 194). Ելան (2ԹՏ, էջ 164), հասան (անդ, էջ 167), իջայ (ՄՂ, էջ 103), բայց և՛՝ էջ (2ԹՏ, էջ 201), հեռա (ՆՆԲ, էջ 15), Լանց (ՄՂ, էջ 91) ևն:

Ինչպէս այս, այնպէս էլ այլ խոնարհման բայերի եղակի III զեմբում գտնում ենք ի նոր անակաւր, ինչպէս՝ իլաց (ՆՆԲ, էջ 57), իխած (անդ, էջ 56), իհան (ԱԱԱԱ, էջ 4), իսա (անդ, էջ 5), իղիւր (անդ, էջ 5) ևն:

Ի, ա և ո խոնարհման բայերն ունեն նույն գրեկորումները, ինչ որ նախորդ շրջանում:

Արժե հիշատակել մի բանի մասնակի երևույթներ. տրամիմ բայը սպասվող տրամեցաւ ձևի փոխարեն գտնում ենք տրամաւ ձևով՝ «Տրամաւ Լրէցն ի իւր մտք» (ՄՂ, էջ 101): Փողոյ սպասվող քաղ, կրող ձևերի փոխարեն ունի քաղաւ՝ «ամէնն թողաւ նրան» (ԶԱՍ, էջ 107): Արբեկայ բայը գտնում ենք արբայ ձևով. «Ի բուրմանէ հոտոյն արբայ» (ԳԱ, էջ 223), նույնիսկ ասել՝ ասաւ ձևով՝ «Ընտանալ բերած գիրն նշանց ավիւ, ասաւ լաւ» (ԶԱՍ, էջ 100): Վերևի ձևերն, անշուշտ, սխալ համարել չի կարելի, բան որ հայերենի

387

խոսվածքներում այսօր էլ այս ձևերը օրինալից են: Այս տեսակետից հետա-
քրքրական է, որ ժողովրդական կանգնիմ «կանգնել» բայը եւ ունի -ու վեր-
ջավորություն՝ «Կանգնա ի վերայ ստաց ե թուզիս ի յափին» (ԳԱ, էջ 233):

Գրարարյան ի թույլ բաղադրել ունեցող բայերի անցյալ կատարչյալում
բաղադրելը չի տրտահայտվում, ինչպես՝ փախար (ՄՂ, էջ 95), զարբա
(ԱԱԱԱ, էջ 321), քառ (անդ, էջ 5), կուա (ՉԱՅ, էջ 161) կնի Խ բաղադրելը
հանդիպում է գրաբար շարադրանքի կամ գրաբարյան արտահայտությունների
մեջ, ինչպես՝ «Ղոզեալ յինէն քաֆեա, թէ մեռանիմ ես» (ԳԱ, էջ 158):

Պատճառական բայերում, եզակի III զեմբում -ուց վերջավորությունը
տիրապետող է, ինչպես՝ ստուց (ԳԱ, էջ 138), խաղեցուց, նստուց (ԱԱԱԱ,
էջ 321), բանցուց (ՉԱՅ, էջ 124), Բուրացուց (անդ, էջ 140) կնի Սակավ
կիրառությունը հանդիպում են նաև -ոյց վերջավորությամբ ձևեր, ինչպես՝
զօրացոյց (ՀՔՏ, էջ 199), կացոյց (ՄՂ, էջ 101), ցանցոյց (ԳԱ, էջ 226):

Անցյալ կատարչյալ ժամանակի գրեսերունների մասին բերված փաստերը
ամփոփելով՝ կարելի է ասել, որ մեր լեզվի այս շրջանում զեռես շատ են բազ-
մազատությունները, գրաբար ու աշխարհարար զուգահեռ գրեսերունները: Այս
իմաստով բերականական մի «համայնագատկեր» է Ամիրզովաթ Ամասիացի
բժշկագետի աշխատության հետևյալ հատվածը, որ մեջ են բերում ամբողջ-
չությունը՝ ընդգծելով անցյալ կատարչյալով դրված բոլոր բայերը, իսկ գրա-
բար լեզվի համեմատությամբ կատարված փոփոխությունները ցցուն դարձնե-
լու համար, որտեղ պետք է, փակագծի մեջ տալիս ենք մեր հին լեզվում ըն-
դունված ձևեր. «Եւ բաղաբ մի կայ, որ այնոր՝ Մուլիան կասեն, Ա ծարդ մքն ի
այս պէշէս կէս մթիալ կերաւ, և յայն պահն պոնկենքն ուռնցաւ (-ուռնան
կամ ուռան), և աշուին ի տեղացն ի զոս ելաւ (-ել[[ին]], և բնկա (-անկա),
և ինք զինք չի գիտացաւ (-ոչ գիտաց), և զկէս զրամ ճատվարն առուեցին, և
ի կաթն խոռնեցին, որ խմեց (-խմեաց), և ի Ա ծամու յետու սկաւ փոխե-
ցեց ու ցեց զուն էր. և ի այն փոխելուն հոռնէ՝ այնոր որ ի ան բոլորքն էին,
աճխեցացան և աճկան, որպէս հարբած, և յետոյ՝ խելքն ի վրանին եկաւ
(-եկն), և աշուի կէս մթիալ ճատվար տորեցին և զինով խմցուցին (-խմե-
ցուցին), և աշուի փոխեց (-փոխեաց) խիստ. և յետոյ՝ բուն եկաւ (-եկն). և
յորթամ զարթաւ (-զարթեաւ) ի քնուն՝ շատ Բտնեցաւ. և կերակուր ուզեց
խալսեցաւ» (նամական բառեր—ՄԱ—ԱԱԱԱ, էջ 320—321):

Գրաբարի համեմատությամբ ի՛նչ կարգի փոփոխություններ են նկա-
տում վերին հատվածում.

ա) Կրավորակերպ -այ, -ար, -աւ վերջավորությունները կորցրել են իրենց
իմաստը, զրվում են ինչպես շեղոք (կլաւ, կկաւ), այնպես էլ ներգործական
սեռի պարզ բայի վրա (զիտացաւ).

բ) Խ թույլ բաղադրելով բայերն իրենց ըմբռնումը կորցրել են (ուռեցաւ,
զարթաւ).

գ) Գրաբարի բայաձևեր կրել է հնչյունական փոփոխություններ (փոխեց,
խմեց, խմցուցին, բնկաւ).

դ) Կարմվել են նոր բայաձևեր (ուզեց, խալսեցաւ):

Այս բոլորի հետ մեկտեղ վերոհիշյալ հատվածում կան ձևեր, որոնք նույ-
նանում են գրաբարի հետ (սկաւ, անկան, բրտնեցաւ, խոռնեցին, տորե-
ցին):

Մի խոսքով՝ մեր լեզվի այս շրջանում այսօրվա ըմբռնմամբ միօրինա-

կանացած, կոտ համակարգի վերածված խոնարհման համակարգ դժվար է
զտնել, այդ պիտի առաջանար ավելի ուշ՝ XIX դ. երկրորդ կեսին:

ՀՐԱՄԱՐՏՄԱՆ ԵՂԱՆԿ

Այս շրջանում եւ հորդորական հրամայականի կիրառության ոչ մի գեպեր
չենք հանդիպում: Բուն հրամայականի գրեսերունները, նախորդ շրջանի հա-
մեմատությունը, ունեն հետաքրքրական նորություններ: Այժմ տեսնենք ըստ
առանձին խոնարհումների:

Ե խոնարհման պարզ բայերի հրամայականի եզակիում տիրապետողը
-է վերջավորությամբ ձև է, ինչպես՝ խառնէ՛, առուէ՛, ծեփէ՛, ծեծէ՛, (ԱԱԱԱ,
էջ 152), ծեծէ՛, մաղէ՛, շաղէ՛ (անդ, էջ 27), խնամէ՛, ծածկէ՛, վառէ՛ (ԳԱ,
էջ 165), յիշէ՛, սարսափէ՛, զովէ՛ (ՄԵ, էջ 143), Բալէ՛ (ՆՔԳ, էջ 46), պատուէ՛,
աճիծէ՛, սիրէ՛ (անդ, էջ 84), սիրէ՛ (ՀՔՏ, էջ 123), ցուէ՛ (անդ, էջ 124), պատ-
ուսւէ՛ (անդ, էջ 92) կնի: Պատահում են նաև -եա՛ վերջավորությամբ ձևեր,
ինչպես՝ պահեա՛, առեա՛, խոստովանեա՛ (ՆՀՔ, էջ 92), պահեա՛, առաջնու-
ղեա՛ (ՄՂ, էջ 129), ակնարկեա՛, լուսաուրեա՛ (ԳԱ, էջ 103), սակայն այս ձե-
վերը կիրառում են միայն վերահիշյալ հեղինակները և այն էլ՝ գրաբար շա-
րադրանքի մեջ: Նախորդ ձևերի կենսունակությունը շեշտելու համար ասենք,
որ ո՛չ Ամիրզովաթը, ո՛չ Նահապետ Քուշալը, ո՛չ էլ Քիլիկոնցիները գրաբարան
հրամայականի կիրառության մեկ ձև իսկ չունեն, մյուս կողմից՝ ն՛ առաջ
Հովաթանը, կ՛ Գրիգորիս Աղթամարցիները միաժամանակ օգտագործում են հրա-
մայականի -է վերջավորությամբ ձևեր, ինչպես՝ երգէ՛, եղանակէ՛ (ԳԱ, էջ
132), պանէ՛, ճարէ՛, շարէ՛ (ՆՀՔ, էջ 90), Բաղէ՛, աղէ՛, մարէ՛ (անդ, էջ
149) կնի):

Ե խոնարհման պարզ բայերում որպէս հնչյունափոխական պարզ երե-
վույթի սկզբում լեզվական այս իրողությունը (պարեա՛> պարէ՛—եա>է) տա-
րածվել է նաև ի խոնարհման պարզ բայերի վրա, ինչպես՝

«Մէկ խոսէ՛, սիրտս հովանայ» (ՆՀՔ, էջ 69);
«Ա՛լ իմ զեղեցիկ պատկեր որ աչեքդ է ծով տերիտաս,
...Այդով զուն ինծի ճայէ՛ որ լինամ հետ քեզի հաւաս» (ՆՔԳ, էջ 77):

«Ե յորթամ ուզենաս որ ի բան տանիս՝ զր ոտացը իբրանքն ասծ այս
ձիթովս, և յանկողին մնաւ և պտուկէ՛» (ԱԱԱԱ, էջ 180):

Լեզվական այս իրողությունը հետագայում օրների ուժ ստացավ արև-
մուտահայ գրական լեզվում, որտեղ և է ի խոնարհման բայերի եզակի հրամա-
յականն ունի է վերջավորություն (լսէ՛, սարգէ՛—տե՛ս Ա. Աշտընյան, ՔՔ,
էջ 56—57):

Այսպիսով, այս շրջանում ի խոնարհման պարզ բայերի գրաբարան
-ևւց վերջավորությունը գրեթե չի օգտագործվում: Ինչպես որ ուշադիր ենք
եղել, գրաբար շարադրանքում հանդիպել ենք միայն 2 օրինակի.

«Հայեա՛ց պատկերս ի մանկութեան» (ՀՔՏ, էջ 202):
«Նայեա՛ց մէկ քնդ իս աշօրը մէտտան» (ԳԱ, էջ 208):

Քիլիկոնցու մոտ հանդիպում ենք նաև կամեց հնչյունափոխված ձևով
մեկ օրինակի. «Կամե՛ց դու ինձ հոգի, լ՛ ես կո կամիմ քեզ» (Տաղեր, էջ 145):
Սակայն այս շրջանում առավել հետաքրքրական են Ե խոնարհման թե՛
պարզ և թե՛ ածանցյալ բայերի հրամայականի -իւ վերջավորությամբ ձե-

վերը, ինչպես՝ «ե՛ մեր պաղտիցս ելի՛ր գրնա» (ԳԱ, էջ 130): «ե՛ւ իր հունտն գրած է ի վերայ սկիհն՝ ի պղնձն, գոխ՛ և կարգա՛» (ԱԱԱԱ, էջ 111) ևլն:

Նման վերջավորություններով գրեկորումներ ունեն նաև ի խոնարհման պարզ բայերը, ինչպես՝

«Գաղարեա՛ ի շարեաց, բարեաց հեռեխի՛ր,
Գոտն բաց զսրտիդ և խոստովանի՛ր (ՄՆ, էջ 137):

«Նայեաց միկ ընդ իս աշօբբդ մէտան,
Կամ բազդրիկ խօսի՛ր կամ տո՛ւր պատասխան» (ԳԱ, էջ 208):

«...Գրնա, շրջի՛ր, յայլ տեղ և զնա որոնէ՛» (անդ, էջ 229):
«ե՛կ, ինձ մօտ նստի՛ր, ինչ գանգատ ունե՛ս ինձ ասայ, կարմիր վարդի-
թէր» (ՆՂԲ, էջ 29):

–Իր վերջավորությունն, անշուշտ, զբարբի մյուս ածանցավոր բայերի եզակի հրամայականի ձևն է (Նմամ. զբարբի շիջի՛ր, զհնացի՛ր, զարբի՛ր և՛ վերի հետ), որ համարանություն և ընդհանրացման օրենքով տարածվել է և (պարզ և ածանցավոր) և ի խոնարհման պարզ բայերի վրա: Հայանի է, որ հրամայականի այս վերջավորությունը հետագայում տիրապետող դարձավ արևելահայ գրական լեզվի մեջ:

Ն խոնարհման ածանցավոր բայերը միաժամանակ ունեն զբարբարածն զրեկորումներ, ինչպես՝ տե՛ս (ՀԹՏ, էջ 191), զի՛տ (ԱԱԱԱ, էջ 381, 407), Ե՛լ (ԳԱ, էջ 254), ա՛րկ (ԳԱ, էջ 47, 121), հա՛ն (ԱԱԱԱ, էջ 121, 386) ևլն: Սրանց հոգնակին կազմվում է –կ՛ վերջավորության ավելացումով (շեշտի տակ), ինչպես՝ տեսէ՛ք (ՆՂ, էջ 25), պագէ՛ք (ՆՔԳ, էջ 101) ևլն:

Ն խոնարհման պարզ բայերում, ի տարբերություն նախորդ շրջանի, առավել շատ են օգտագործվում հոգնակի հրամայականի արմատական-հիմքային ձևերը (ոչ ցոյական), ինչպես՝

«Ասի. «Կանչէ՛ք զայ տէր Աբրահամըն,
Քան ուղարկողն զնա շիհանգածըն» (ՆՂԲ, էջ 153):

«Սնդանս լցեալ միրզ միզ և ծաղիկ, շիհի վեր բազկը,
Իշտաճով կերէր, սրտով խմեցէր, ուրախ ծիծաղէ՛ք» (անդ, էջ 160):
«Ածէր, խմէ՛ք կարմիր դիւնի, խմողն ուրախ լինի» (անդ, էջ 180):

«ես Զարբուս ասի. երբ որ կենում չէր, կիկը, թէ տուն, թէ այբի, թէ աջ-
հաս, թէ շոր թէ սղիհն, թէ արծաթ, ինչ որ կայ, բաժնեցէր, ձեր չիտն տա-
րէր, պանէ՛ք, կամ տգէ՛ք Գրիգորն պահի» (ԶԱՅ, էջ 117) ևլն:

Ինչպես տեսնում ենք, այս ձևերը առավելապես Ում ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների մոտ են հանդիպում: Մյուս հեղինակները հրամայականի հոգնակին ընդհանուր առմամբ ճիշտ են կիրառում, ինչպես՝ աճե-
ցէ՛ք, շրջեցէ՛ք (ՀԹՏ, էջ 163), գաշեցէ՛ք (ՄՂ, էջ 138), պանեցէ՛ք, յիջեցէ՛ք (ՆՔԳ, էջ 102) ևլն: Եվ իրօք, հրամայականի կազմության ոչ ցոյական ձևերը արդեն թափանցել են արդի գրական հայերենի մեջ: Մասնով, զբաղանու-
թյան մեջ, առավելապես բանավոր խոսքի մեջ ամենուրեք հանդիպում են, նույնիսկ աշխատում են զուրո մզել ցոյական հիմքով կազմված ճիշտ բայա-
ձևերը, այն աստիճանի, որ շատ հայագետներ կարծում են, որ պետք է ընդուն-
վեն որպես գրական ձևեր: Մեր կարծիքով, խոսքի անուսման պարագան (մեկ
վանկ զեղզվում է՝ պարեցե՛ք-պարե՛ք) այս դեպքում վճռական զեր է կատա-
րում:

390

Բերել, ածել, հանել բայերը ունեն արմատական (ոչ ցոյական) ձևեր, ինչ-
պես՝ հա՛ն (ՀԹՏ, էջ 124), բե՛ր (ՄՆ, էջ 104), ա՛ծ (ԱԱԱԱ, էջ 180), աճէ՛ք (ՆՂ,
էջ 180):

Ասել բայը եզակիում ունի սաս՛ (ՆՂԲ, էջ 29), իսկ հոգնակին գտնում ենք
ասէ՛ք (ՀԹՏ, էջ 204, ՆՔԳ, էջ 101) ձևով:

Ա խոնարհման բայերի հրամայականի գրեկորումներում փոփոխություն
չենք նկատում. ինչպես զբարբարում, կզակին հանդես է գալիս շեշտակիր անց-
յալի հիմքով (ց-ի անկումով). օրինակ՝ խաղա՛ (ՆՂԲ, էջ 73), խլեա՛ (ՆՔԳ,
էջ 60), կարգա՛ (ԱԱԱԱ, էջ 111) ևլն, իսկ հոգնակին՝ անցյալի բայահիմքի
վրա –է վերջավորությունն ավելացնելով. գեացէ՛ք (ՆՂԲ, էջ 25), սղրացէ՛ք
(ՄՆ, էջ 152), լացէ՛ք (անդ, էջ 152):

Ա խոնարհման ածանցավոր բայերի՝ զարծի՛ր (ՀԹՏ, էջ 178), խմացի՛ր,
ուրախացի՛ր (ՆՂԲ, էջ 38), յիմացէ՛ք հասկացէ՛ք (ԱԱԱԱ, էջ 24) ևլն:

Ու խոնարհման բայերի հրամայականի հետեւյալ օրինակներն ունենք՝
բո՛ղ (ԳԱ, էջ 212, ՄՆ, էջ 131), ա՛ն (ՆՔԳ, էջ 51), սո՛ւք (անդ, էջ 101):
Լնուլ բայը եզակի հրամայականում ունի լի՛ց (ԱԱԱԱ, էջ 121, 175, 346, ՄՆ,
էջ 102) ձևը:

Ինչպես նախորդ շրջանում, ի թույլ բաղադրելով բայերի միայն կզակի
ձևեր են հանդիպում, որոնք ունեն –ի՛ր վերջավորություն. զարբի՛ր (ՀԹՏ,
էջ 145), փախի՛ր (ՆՂԲ, էջ 89, 139), հանգի՛ր (ՀԹՏ, էջ 208):

Նախորդ շրջանի նման հրամայականն արտահայտվում է ինչպես զբա-
րբարան (զարբո՛ւ, ՄՆ, էջ 182, հանգո՛ւ ՆՂԲ, էջ 124, ապրեցո՛ւ ՆՔԳ, էջ 129),
այնպես էլ նորակազմ վերջավորություններով, ինչպես՝ իմացա՛ւր, առախա-
ցա՛ւր, խմացա՛ւր (ՆՂԲ, էջ 160):

Այս շրջանում, անշուշտ, տիրապետողը նոր վերջավորությամբ ձևերն են:
Ավելին. Ամիրզոյաթի մոտ –ուր վերջավորության ր հեշտունը արդեն մաշվել
ընկել է, ինչպես՝ «Ա՛ն զբուրն բողկին և ետցո՛ւ վարդի ձիթով, և յականքն կա-
րեցո՛ւ» (ԱԱ, էջ 108). «ե՛ւ որ կին որ գծար ծնանի, բիշ մի սրտը՛ւ և խմցո՛ւ
ճուլապով» (անդ, էջ 321). «ե՛ւ զբուրն ի վերեն կամաց ի վայր վաթէ, և յուրն
մնայ, և շորցո՛ւ, և ալուի յսէ՛ և ի բան տա՛ր» (անդ, էջ 202): Այսպես
և՛ ապիկցո՛ւ (անդ, էջ 139), ետցո՛ւ (անդ, էջ 207), կարեցո՛ւ (անդ, էջ
459) ևլն: Կարգանել բայի հրամայականն ունի կզո՛ւ ձևը՝ «Յ՛ծե՛՛ք և մազէ՛, և
սամի ջրով շազէ՛, և կզո՛ւ այն պատն որ կրով ձեփած լինի, որ շորնայ»
(ԱԱԱԱ, էջ 527):

ԸՂՄԱԿԱՆ ԵՂԱՆԱ

Գրաբարի ստորագասական եղանակի բայաձևերի անդրբաժնության
մասնավոր հետևանքով ըզձականի ձևերը առավել հաճախակի են հանդիպում
այս շրջանի հեղինակների գրվածքներում: Նույնիսկ Մարտիրոս Ղրիմեցին և
Գրիգորիս Աղթամարցին, որոնց խոսքը այս շրջանի սյուստագործում են ըզձա-
կանի բազմաթիվ ձևեր, զբանցով հանգավորում են իրենց բանաստեղծական
խոսքը, ինչպես՝

«Ե՛լք Երբանէ՛ այսին՛ զեանէն,
Նաւէ՛ք ծաղիկալ մէջ շարասխին,
Չույն հանենէ՛ք տանէ՛ կրակին,
Մեղէ՛ք անենէ՛ք, խմենէ՛ք զինին» (ՄՂ, էջ 139):

391

«Պուրզազ, դու հիմանց Բանդիս,
Քո շինուածքդ ամէն կործանի,
Անը ւ անտերունչ մնաս» (անդ, էջ 111):

«Քանզատ մ'առնեմ սիրով բեզ,
Թէ միտ դրնես ու լրեսս,
Զծառայս քո անտես շառնես,
Զխորհուրդ սրբախ յայտնեմ բեզ» (ԳԱ, էջ 155):

«Այգի՛, բնդ բեզ ասեմ, առը ինձ պատասխան,
Ընդ է՛ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,
...Քակի (=բանդի) քո ամուր պատգ, դառնաս արեբակ.
Չտեսնուող ու տերեղ ծառայրդ շիտակ,
Ամէն ոտրն խաղա ի բեզ համարձակ.
Վերնա բուս ու բանձար ամէն կանաչ տակ» (ԳԱ, էջ 225):

Այս շրջանի հեղինակների գրվածքներում ևս հանդիպում ենք բոլոր 4 խոնարհումների բայերի ըզձական եղանակի երկու ժամանակների հարյուրավոր կիրառությունների, ինչպես՝ «Եւ դայս գիրքս շինեցար և սուղեցար շատ բաւերով և պատմութիւններով. գի որք կարգան՝ հեշտութեամբ յիմանան» (ԱԱԱԱ, էջ 2):

«Եղբայրք, յորժամ բազմիք սեղան,
...Զնի շատ խմէ՛ք դառնաբ բոց,
[Եւ] սահմանէ՛ք կուի, անկոց,
Գլուխ ծակէ՛ք՝ արին ի ծոց,
Զնր ծնողաց սիրան շինէ՛ք խոց» (ՆՁԲ, էջ 188):

Ըզձականի անցյալ ազգանուն կիրառության լավ նմուշ է Քուչակի հեռեւեալ հայրենը, որ բերում ենք ամբողջությամբ.

«Ես ձագ ծիծեռնիկ պիտիլ, գորն ըզք տուն մտնուի,
Ան բարձր մօշտան շարտախց ևս ի հոն բուն մք շինիլ.
Ոնց որ մուքն մբանայր, ցածնայի ծոցց մտնուի.
Ոնց որ լուրն լուսանայր, բարձրանայի ի բունս մտնուի.
Ես ապրչմէ խուշախ, գորն զքո միջաց գիրկ ածէի,
Կամ բաղջրք նոսն գինի, գորն ըզքո փարջդ պիտիլ,
Ասեիք ու բերնիդ դրնիր, ցածնայի գունչդ պագնիլ,
Կամ ապրչմէ կոճակ, որ շինեցդ գիրկ ածէի» (Գիվան, էջ 73):

Օրինակները կարելի է տեսնույալտեղի, հարյուրապատկեր, Ըզձական եղանակն իր լրիվ իրավունքների մեջ է, խոսքի համար փնտրովի ու անխուսափելի զարձած բայածն: Այս շրջանում ևս ըզձական արտահայտվում է բող, քէ, որ շաղկապներով և եղանակավորող բառերով, ինչպես՝ բող մնաս (ՀՔՏ, էջ 153), բող եփէ, ուտէ ցանէ (անդ, էջ 73), բող Բաղեմ (ՆՁԲ, էջ 34), քէ պանես, քէ մնաս (ՀՔՏ, էջ 163), բող լուսան (ԱԱԱԱ, էջ 171), որ մտանես (ԳԱ, էջ 212) ևլն, ևլն:

Հետաքրքրական մեկ օրինակ ունի Մարտիրոս Ղրիմեցին, որն ըզձական բայածնն օգտագործում է թուրքերենի տէլի (=ասելով) եղանակավորող բառով (հանգավորելու նպատակով).

«Ելար փախար գաղտագորի,
Սահաթի փողն ուտեմ տէլի (Բանաստեղծք, էջ 95):

Ամիրզոլվաթ Ամասիացին ու Ն. Քուչակը ըզձական եղանակը հաճախ օգտագործում են նա (Նէ) եղանակավորող բառով, ինչպես՝ «Ես մէկ գեղի մի տար կու ասեմք, մեկնութիւնն այն է, որ յորժամ մարդ գինն ուտէ նա, իր բնական տաքութենն այլ անլի տաքութիւն երեցնէ մարդոյն ի անձն... Բայց այս գեղս մուտ այնէ, և անլի շարիէ, որ յիմացուի նա՝ ասեն թէ յառաջ աստիճանն է. գեղը՝ բտախտոտուն. և թէ գեղին ուժն մուտ այնէ, կա՛մ տաքութիւնով, կա՛մ հովութիւնով, բայց զնէ շառնէ նայ (=չգնատի), ասեն թէ երկու աստիճանն է» (ԱԱԱԱ, էջ 9): Ահա և մի երկու օրինակ Քուչակից.

«...Թէ ևս լամ նա հագ ունիմ, որ գիտեմ ինչ եմ կորուսել» (ՆՔԳ, էջ 50),
«Գաւիթ մարդարէն ասաց՝ թէ շարհամ ունիս նա սիրէ՛» (անդ, էջ 84):
«Ամենայն ծառ պտուղ կուտայ, թէ ուրին շի տայ նա՛՝ համ ի՛նչ» (անդ, էջ 55) ևլն:

Ըզձական եղանակի բայածներն օգտագործվում են նաև կրավորական մեկերով՝ ինչպես զրարար, այնպես էլ նոր, աշխարհարար կազմութեամբ, օրինակ՝ «Ընդ քո բնկերի, Ընդ համախոհի, Ընկեր նեստորի Ընկղմիլ (=ընկղմվեք) չերկրի, Ըղունկդ քափի (=թափվի), Ընքվիդ բուտախ» (=բոտոսվի—ՄՂ, էջ 118): «Եւ թէ ուտուի (=ուտվի)՝ աղեցն գնէ է» (ԱԱԱԱ, էջ 325): «Եւ յորժամ զհաճար ըլ թէնս տրորեն նա, պիտի որ այս մտխալայտախն հետէ և կամ ճղէն ի մէջն գանուի (=գտնվի—ԱԱԱԱ, էջ 372): «Եւ թէ ծաղկուք են, որպէս մանուշակն, և նոճէն, և զանպանն, և որ սոցին նման է, ան ասենն ժողովել կու պիտի՝ որ ման հասնի, և բազուի, և շի վարի և շի փովովի ի գունէն» (անդ, էջ 21): «Զդուրուիթին բեզ պրեցի. Որ շխարխիս (=չխարվես) հոսում պատուի» (ՄՂ, էջ 104) ևլն:

Սակայն նախորդ շրջանի համեմատությամբ ըզձական եղանակի կիրառության առավել կարեւոր առանձնահատկությունը ազգանի ժամանակում և խոնարհման չեղոր և ներգործական սեռի բայերի (ներգործական սեռի կիրառությամբ) եղակի III դեմքի—ի վերջավորությունն է: Ստորե բերում ենք տարբեր հեղինակների մոտ նկատված օրինակները. «Եւ թէ մեղրով խոսնես և ասա՝ ուզում սորթախն, և եարաղանին. և գլուխն կու թեկնացնէ, և շի թողոր որ շուտ հարբի մարդն» (ԱԱԱԱ, էջ 96): «Շահն մարդ գրկեց, այս Գորգին Միրզեն տարաւ Ըսպհան, բուրֆացի, անունն փոխի, գին Շահհանդայ խան» (ԶԱՍ, էջ 140): «Տէր Աստուած զմեզ ազատի այս պարտերբուս, այս շարշարանբուս» (անդ, էջ 163):

«Լաւ է՛ քո պարոն կենդան չի,
Քեզ տեսնողն ո՛նց ամաճի,
Փանի քո բսկեսուր տան չի՛
Ել այլանն,
Բեր սեղանն,
Քեզ հետ խմի, տաղեր կանչի
Յովնաթանն» (ՆՁԲ, էջ 39):

«Ով մոնթ կուլես Եանայ-Եանայ,
Հիմայ գայ, լսի՛ գարմանայ» (անդ, էջ 118):

«ժամհարն զնա, ժամ կանչի,
Ստեփանն գայ, հան շանչի,
Տէր Գրիգոր լաի, ղանչխանչի,
Եւ գաննայ, տրամի և մաշի» (անդ, էջ 142):

Պայմանական եղանակում այս նույնի գրություն ունենք Զաքարիա Աղու-
լեցու մոտ. «Քէ որ տէնու, խան ինքն, բէկ ինքն, զազի ինքն, ինազ կանի
(=կանի), բո թուամնով պրծանիլ չէ (=չի պրծնի)» (Յորագր. էջ 101):

Հետաքրքրական է, որ այս ձևերը հանդիպում են ո՛չ միայն Ում Տյուղի
նկրտալացոցիչ Հնդկականների մոտ, այլ նաև Ամիրզոյվյաթ Ամասիացի բժշկա-
պետի մոտ: Հայտնի է, որ արևելահայ գրական լեզվում եւ նման հնչյունա-
փոխված ձև ենք գտնում (գրեմ, գրես, գրի,— երգեմ, երգես, երգի): Գրական
լեզուն այս ձևը վերցրել է, անշուշտ, Ում Տյուղի բարբառներից, մասնավորա-
պես Արարատյան բարբառից, Պրոֆ. Ա. Ղարիբյանն իր «Հայ բարբառագի-
տություն» (Երևան, 1953 թ.) աշխատության մեջ գրում է. «Էղձական և պայ-
մանական եղանակները (իմա՝ Արարատյան բարբառի—ՍԱ) բուրբովին նման
են զրական լեզվին» (անդ, էջ 226): Ասենք, Ում Տյուղի մյուս բարբառներից ևս
նույն այս հնչյունափոխությունը գտնում ենք, ինչպես՝ Ղարաբաղի բարբառ-
կյրիմ, կյրիւ, կյրի (անդ, էջ 239). Աղուլիսի բարբառ. սիրեմ, սիրես, սիրի
(անդ, էջ 258) ևն: Արդ, ի՞նչ հնչյունափոխություն է սա եթև ե>ի՝ հայերենի
համար ոչ անսովոր հնչյունափոխության երևույթը չէ¹⁰, ապա մնում է ենթա-
դրել, որ ի կոսմոպոլիտական բայերի քղձականի համապատասխան ձևի ազդեցու-
թյամբ է կազմված (ասլիմ, ապրիս, աղրի): Կարելի է ենթադրել, որ այս
հնչյունափոխությունը կարող է ազդեսակցություն ունենալ Ե խոնարհման բա-
յերի ժխտական կազմության չեմ մանիլ (=չեմ մանի), չեմ բարկիլ (=չեմ
բարկի, չեմ թողնի), չեմ ուտիլ (=չեմ ուտի) ձևերի հետ:

Մեր լեզվի այս շրջանում ևս քղձական եղանակի բայաձևերն իրենց զրա-
բարյան սկզբնականների բազմիմաստությունը պահում են. պայմանական եղա-
նակի իմաստով կիրառության բազմաթիվ դեպքեր ունենք, ինչպես՝ «Գիշերն ի
յերազն տեսա թէ մարդ մի եկաւ ասաց, թէ՛ Յամէն ար վազմնուց տուն գրո
զողն Գ տարայ կուլ տուր, ողջանա (=կրուժվես), արա յայտն նա՛ ողջա-
ցաւ» (ԱԱԱԱ, էջ 465): «Եւ այս բաներն որ ճիլ տուող, և հարց և կարող որ
կու տաներ, յետե պատմեմ (=կուտմենք), թէ Աստուած կամենայ» (անդ,
էջ 8):

«Շուտով կանխի (=կհասնես) սիրու՛ք թէ դու անտուս ես» (ՀՔՏ, էջ 146):

«Մարուր և դուս ըմպանակիտ,

Ով սիրելի, երբ հանդիպիս,

...Հնգէն, վեցէն վեր շանցանիս,

Թէ չէ յետոյ լինիս ճառիս,

Շատ վատ ասես (=կասես) Մարտիրոսիս» (ՄՂ, էջ 135):

¹⁰ Ե՛մ, եւ (բայական իմաստով) բաների ե>ի հնչյունափոխության դեպքեր կան նազաչ
Հովնաթանի մոտ. «Գեղեցիկ պատկեր իւ, դու, իմ պատնիք» (Բանաստեղծ. էջ 18). «Սիրամարդ,
բնդէ՛ր արտում իս» (անդ, էջ 194). «Տապար չեմ՝ թէ բեզ ի՛նչ արե» (անդ, էջ 207): Նրույնը
խորթ չէ նաև այլ բարբառների համար, մասնավորապես՝ Քրիչիսի բարբառի համար. Ավերն,
վերն ձևերը ոչպէս թէ վերջինիս ազդեցությամբ անդ ունեցած լինեն:

«Աշխարհիս մի՛ հաւատար, զօրն ի բուն ղէմ սուտ կու խօսի,
...Խարէ, թէ՛ ուրախ պանեմ (=կուտնեմ) ու առնեմ (=կանեմ) զօրերդ
ի բարի,
Ի մէջն ի ծովուն տանի ու պահէ ի տարաբարսի» (ՄԵ, էջ 125) ևն:

ՊԵՏԳՐԱՆԿԱՆ ԵՂԱՆԿ

Այս եղանակի բայաձևերը, նախորդ շրջանի համեմատությամբ, կիրառա-
կան առանձնահատկություններ չունեն. կազմվում են քղձականի բայաձևերի
վրա կու մասնիկի ավելացումով: Քաղաձայնով սկզբող բայաձևերից առաջ
զրվում է կու: Չայնավորով սկզբող բայաձևերից առաջ սովորաբար զրվում է
կու, սակայն կու մասնիկը կ հնչյունափոխված ձևով կարող է զրվել բայա-
ձևին կից: Ստորև տալիս ենք պայմանական եղանակի կիրառության մի քանի
օրինակներ.

«Եիստ եմ ես քեզ հաւան, թանց որ դու ինձ ես,
Մտայ եմ քեզ անձամբ, որ դիս չի խոցես (ժխտական պայմանական—
ՍԱ):

Կամե՛ց դու ինձ հոգի՛ ւ ես կու կամիմ քեզ.

«Հոգի» ասայ. դու ինձ, ի՛ ես կու ասեմ քեզ» (ՀՔՏ, էջ 145):

«Չասելոյ բանն բո տանն շասես,

Ազուզ կու սովի՛ր՝ այլոց էլ կասես» (ՆՀԲ, էջ 90):

«Եմ ես՛ր... կամ առ դիս ծոցդ ի բուն, կամ տէսթուր տուր երթամ ի տուն.

— Ոչ կ[՛]անունս ի ծոցս ի բուն, ոչ տէսթուր տամ երթաս ի տուն»

(ՆՔԳ, էջ 53):

«Հարթիմ Զաքարէն գայ. թէ որ յետի գայ, մարդ կու գայ, կու բերէ, շատ
գարգիսար կուտան. ահա ձեզ գրեցի» (ՉԱ, էջ 98): «Այս պատճառէս առաջի
իշած Աստուածայգին էլ ինձ Զաքարիա մայալ է տալ, թէ՛ տանի, ախպարն
նման կու տայ խանի, բէկի, կու կուրէ» (անդ, էջ 161) ևն:

ՀԱՊԿՐԻՐԱԿԱՆ ԵՂԱՆԿ

Նախորդ շրջանի հետ համեմատած՝ պիտի եղանակիչով կազմված հոր-
կազրական եղանակի բայաձևերի կիրառությունն ավելի աշխուժանում և տի-
բայկետող է գտնում: Պիտի եղանակիչով հարկադրական բայաձևեր են օչ-
տազործում այս շրջանի բոլոր գրողները, ինչպես՝ «Այլ ցեղ մըն այլ պատմեմ
զգեղերուն զարութիւնն... և զեղեր կայ որ շատ պիտի եփի» (ԱԱԱԱ, էջ 20):
«Եւ ասեր է Գրոցս ժողովողն թէ այս խոտիս է. շափիայ աէ, և պ. պարթա-
րաւք աէ, և շատ անուանք ունի որ պիտի իշուի» (անդ, էջ 109): «Եւ տերեւն
որ եփած լինի՛ զնոսողան խափանէ, որ ի փողն պիտի իջնուր» (անդ, էջ 287):

«Թէ քոյ ընկերին դու շար կամենաս,

Չարն քեզ կուգայ, անճար կու մընաս,

Բեօհտան բաներէ պիտի նեղանաս

...Անցաւոր ընչից շինի գառնանաս,

Հոյ ես, և վերջէ պիտի հող դառնաս» (ՆՀԲ, էջ 89):

«Պրտուկն է բացեր վարդոյս,

Գարուն է հասեր այգոյս,

Պիտի տեսնում կեանք և լոյս» (ԳԱ, էջ 273):

Նահապետ Բուշակը, Մարտիրոս Ղրիմեցին և մանավանդ Մկրտիչ Նազար պիտի նշանակվին օգտագործում են աի հնչյունափոխված ձևով: Ինչպես՝

«Յորժամ չարութիւն լինի, փողն երեք ձայնի տի կոչէ:
Ով ասղէն բարի կացեր նա զԵկայք» ձայնն տի լաէ» (ՆՔԳ, էջ 85):
«Ճաւուր միում զնեց հաւ մի,
Մեկ տի բերէր խահվէլալթի» (ՄՂ, էջ 100):
«...Անուն քաղաքիդ որ կոչի Ահուշ:
Հաց ու կեր շունի, միայն չուրն է սուշ,
Վերջն տի մնա խարսպաւ և շեօշ» (անդ, էջ 110):
«Զինչ բարի գործեցիր, նայ գայն տի առնիս:
...Ո՛վ շահաւ յաստէնէս, որ դու տի շահիս:
...Ո՛վ հասաւ մուրափն, որ դու տի հասնիս» (ՄՆ, էջ 137):

Սակայն, այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ պիտի բառը դեռ օգտագործվում է զբարբար լեզվում ունեցած իր բայական արժեքով, ինչպես՝ պիտի հանել (ԱԱԱԱ, էջ 23), պիտի առնուլ, կտուլ (անդ, էջ 23), կարեցնել պիտի (անդ, էջ 118), մտնիլ պիտուր (ՆՔԳ, էջ 96) ևլն:

Ամիրզոյլաթ Ամասիացի բժշկագետի լեզվին առանձնահատուկ է պիտի բառով ստորագրական կառուցվածքի նախադասությունների կիրառությունը: Ինչպես՝ պիտի որ փորձեն (ԱԱ, էջ 4), պիտի որ պանես (անդ, էջ 24), պիտի որ փակի (անդ, էջ 29), պիտի որ եփէ (անդ, էջ 39), պիտի որ դենն (անդ, էջ 45), պիտի որ լինի (անդ, էջ 124), պիտի որ շերբայ (անդ, էջ 145), պիտի որ խառնես (անդ, էջ 316), պիտի որ ետցնես (անդ, էջ 335), պիտի որ խմուր (անդ, էջ 340) ևլն:

ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԲԱՇԽՐԵՅԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ա) Անցյալ զերբայի -եալ վերջավորությունը կազմվող երկրորդական բաղադրյալ ժամանակների կիրառությունը, ի տարբերություն նախորդ շրջանի, նվազագույնի է հասցված. նախ՝ անցյալ զերբայով և լինիմ բայի հարադրությունը կազմված ձևեր բուրբուրվին շեն հանդիպում, այլ նմ օժանդակ բայի հարադրությունը միայն մի բանի ձևեր ենք գտնում. ինչպես՝ նուազեալ էր, բնակեալ են (ԱԱԱԱ, էջ 2), աւրհնեալ է (անդ, էջ 11), տուեալ է (ՄՆ, էջ 108), անկեալ է (անդ, էջ 112), մտացեալ է (անդ, էջ 117), քաղեալ են (ԶԱՍ, էջ 130) ևլն:

Մեր լեզվի այս շրջանում անցյալ զերբայի այս կիրառությունը, թվում է, զուտ զբարբարանություն է, ինչպես՝ նազար Հովնաթանի հետևյալ բանաստեղծության մեջ.

«Շատ չի խմէր դինչ արբեցեալ
Աչերեղ արտասուք թացեալ
Թէ չէ կասեն մի յարուցեալ
Խիզուն կասեն. «է՛ր ես լացեալ»
Մանր մանկունք իմացեալ
Կասեն. «Այս մարդս է շիրացեալ»
...Զալում զնի կարմր[ա]ցեալ

Քանի՜ փող ես փշացուցեալ» (Բանաստեղծք, էջ 187):
Նման կազմություններում ներգործական սեռի բայերը, ինչպես զբարբարում, արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ (բ) նկատելի է, որ այս շրջանում -ոց մասնիկով ապառնի զերբայաձևի կիրառությունը գրեթե վերանում է Այս շրջանի նույնիսկ զբարբարանում զբարբարանում -ոց վերջավորությամբ ապառնի զերբայի շենք հանդիպում: Բանաստեղծություն է կազմում, ինչքան էլ դարմանալի լինի, նազար Հովնաթանը, որի մոտ կիրառության միայն երեք դեպք կա: Ահա այդ օրինակները.

«Ես կատու եմ, ոտքս արագ,
Մկանց ես խիստ եմ հակառակ,
Ահա ամենեղ հասարակ,
Զքեղ առնելոց եմ խայտառակ» (ՆՂԲ, էջ 97):

«Որպէս վանից շէթն խիտիր,
Նման նմա բարուրդ շիթիր,
Դատաստանին լինելոց են
Հաւերն բեղ վրէժիեղիր»

...Տէրն Քրիստոս գայ ի յաստան,
Զմեկ ժողովիլ յըշտեմարան,
Մեծ դատաստան լինելոց է,
Հողիդ՝ մանելոյ քաւարան» (անդ, էջ 139):

Առաջին բանաստեղծ ամբողջությամբ մի շարք ձևադրերում շենք գտնում, իսկ հաջորդ երկու բանաստեղծերում լինելոց (Լ) բայաձևի օգտագործումը, կարծում ենք, պայմանավորված է խոսքի բովանդակությամբ, կարծես հեղինակը զբարբարյան բարացած ձևեր բերած տեղավորած լինի կենդանի խոսքի մեջ: Այսպեսով, մեր լեզվի այս շրջանում -ոց վերջավորությունը ապառնի զերբայի օգտագործումը զուտ զբարբարանություն է: -ոց մասնիկով կազմվող ապառնի զերբայի փոխարեն երկրորդական բաղադրյալ ժամանակում հանդես է գալիս -ու վերջավորությամբ ապառնի զերբայ, որով կազմված երկրորդական բաղադրյալ ժամանակները համապատասխանում են արդի գրական հայերենի ձևերին: Ծիշտ է, օրինակները դեռևս քիչ են, բայց երևույթն արդեն կա: Ահա եղած օրինակները. «Ես թէ յայն ասենն որ զտղայն բերելու լինի՛ կախէ, շուտ մնի» (ԱԱԱԱ, էջ 555): «Մեր այս շուրիս Ուրուժէի բանաք ոչ, ծախիք ոչ, մեր ձեր փողն յետ տալու լինի[մ]» (ԶԱՍ, էջ 131): «Շմառուն բոթն թուռան սանազով խանին տալու կրնի(?)», տված կնի» (անդ, էջ 99):

Արդ, երկրորդական բաղադրյալ ի՛նչ ժամանակներ են օգտագործվում այս շրջանում: Նախ՝ նշենք, որ բացի Ամիրզոյլաթ Ամասիացի բժշկագետից՝ մեր մյուս հեղինակների մոտ հանդիպող երկրորդական բաղադրյալ ժամանակների կիրառությունը սահմանափակվում է վերևում բերված օրինակներով: Իսկ Ամիրզոյլաթն օգտագործում է բաղադրյալ ժամանակների հետևյալ ձևավոր. ա) անցյալ զերբայի -եալ վերջավորության -ել՝¹¹ հնչյունափոխված ձևով (բ) հարակատար զերբայի -ած վերջավորությամբ և լինի բայաձևի հարադրությամբ: Պատահական չէ, որ մենք ասում ենք՝ լինի բայաձևի հարադրու-

¹¹ -եր վերջավորությամբ զերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակի միայն մեկ օրինակ ունենք. «Ես ասող այն աչիցն որ շուր լինի իջեր» (= իշած է լինում լինի -ԱԱԱԱ, էջ 579):

Քյամբ, քանի որ կզած բոլոր օրինակներում (ներկա թե ըզձական ժամանակի կիրառությունը) միայն այս բազման ենք գտնում: Միջին հայերենի այս շրջանում կերպարական բազադրյալ ժամանակների կիրառությունները, ո՛չ գրարարում և ո՛չ էլ արդի գրական հայերենում ունեցած կշիռն ու բազմանությունները չունեն: Անցյալ դերբայի -ել հնչյունափոխված ձևով և լինի բայաձևով կազմված կերպարական բազադրյալ ժամանակները համապատասխանում են արդի գրականի հարակատար դերբայով կազմվող համապատասխան ձևերին, ինչպես՝ «Բայց ասք են թէ զեղերուն աղէկ ժամանակն այն է, որ հասել լինի» («հասած է լինում կամ հասած լինի»—ԱԱԱԱ, էջ 23): «Եւ զկարանկուպինն այսպէս ձանաչես... լան այն է որ չիտակ լինի... եւ ի աղէկ խոտի վերայ լինի բնկել» («բնկած լինի կամ բնկած է լինում») (անդ, էջ 24): «...Եւ թէ տղտով եւ հոտով ձիթով ի զարգութիսն վերայ դնես՝ որ եղէզ և կամ փուշ մտել լինի» («մտած է լինում կամ մտած լինի»), հանէ եւ ի դուրս քաշէ» (անդ, էջ 59): «Եւ այն մարդուն որ ոսկորն կտրել է՝ խմցնեն, յայն պահն բուսցնէ. եւ թէ ի տեղացն ելել լինի» («կած է լինում կամ կած է լինի») ի տեղն բերել, խիստ փորձած է» (անդ, էջ 172) ևն:

Վերին մեր բերած բոլոր օրինակներում բայերը շեղք սեռի են (հասնել, բնկնել, մտնել, ելնել), իսկ գա զույգ է տալիս, որ լինիմ բայի հարադրությունը կազմություններում պարտադիր կերպով կրավորականի իմաստի արտահայտություն չկա: Ավելին. նույնիսկ ներգործական սեռի բայերը նման կազմություններում կարող են արտահայտել ներգործական սեռի իմաստ, ինչպես՝ «Եւ թէ այն մարդուն որ մահացու դեղ առել լինի» («առած է լինում կամ առած լինի») ժր գալով ծանոթութենովն ասա որ խմէ» (ԱԱԱԱ, էջ 40): «Եւ լան այն է որ այն գայն ՈՍԿՈՐ կերել լինի» («կերած է լինում կամ կերած լինի»—անդ, էջ 152): «Եւ որ մահացու Գեղ լինի խմել» («խմած է լինում կամ խմած լինի»), որպէս գարբահ, եւ ծովու լայրստակ... ասոցն ամենուն թրեարն է» (անդ, էջ 189):

Գրաբարում, ինչպես հայտնի է, անցյալ դերբայով և լինիմ բայով կազմված բազադրությունները առավելագույն կիրառական են այն ժամանակաձևերի համար, որոնք կրավորակերպ (կրավորական սեռի զարմնեկու համար) գրեկորում չունեն: Բոլորովին պատահական չէ, որ նման կազմությունները առավելագույն կրավորական նշանակությունը անցյալ անկատար ժամանակում են հանդես գալիս, իսկ գրաբար լեզվում անցյալ անկատար բոլոր 4 խոնարհումներում ներգործակերպ և կրավորակերպ տարբերակված արտահայտություններ չունի: Մյուս կողմից՝ այս կազմությունները կիրառվում են այն բայերի հրամայականում, որոնք կրավորականի հարմար ձև չեն կարող ունենալ, ինչպես՝ արա՛, արարէ՛ք—արարեա՛լ լեր, արարեա՛լ լերուք, դի՛ր, դի՛ք—երեա՛լ լեր, երեա՛լ լերուք, առ՛ւր, առ՛ւր—առեա՛լ լեր, առեա՛լ լերուք ևն:

Ճիշտ է, զրաբարում եւ վերին կազմությունները պարտադիր կերպով կրավորականի իմաստ չեն արտահայտում, սակայն միջին հայերենում ներգործական սեռի բայերի հետ լինիմ բայի հարադրությունը կրավորական իմաստի գրեկորումն այն աստիճան թուլացած է, որ դերբայը զրկում է նորակազմ կրավորականի ձևով, ինչպես՝ «Արճի՛հ... եւ թէ նուր տախտակ այնն եւ կապն ի տեղն որ ջեղն Լաշուել լինի» («բաշված է լինում»), ազտէ՛ք (ԱԱԱԱ, էջ 70): «Եւ թէ ջրով կոխեն, եւ այն մարդուն որ զոզն բռնուել լինի» («բռնված

է լինում՝) աւագան առնես, բացուի՛ք» (անդ, էջ 152): «Զմինս որ ի լակուային տակն կեռուլ լինի» («կերված է լինում՝) բուսցնէ՛ք» (անդ, էջ 607) ևն:

Ճիշտ չէր լինի կարծել, որ նման կազմություններում ներգործական սեռի բայերը կրավորական իմաստ չեն կարող արտահայտել: Ամբողջովաթի մաս մենք գտնում ենք նաև այդպիսի կիրառություններ, ինչպես՝ «Եւ թէ պարբու արդար եղով խառնես, որոյ ձեռքն և ստքն եղել լինի» («ձեռքված է լինում՝ լինի»)՝ ածես, ալգտէ՛ք» (ԱԱ, էջ 39): «Եւ թէ ի բերանդ առնուս՝ զարբուին ի խոզիկ հանէ, որ փակել լինի» («փակված է լինում—անդ, էջ 81):

Վերին ձևերին հակառակ՝ հարակատար դերբայով կազմված կերպարական բազադրյալ ժամանակներում ներգործական սեռի բայերը միշտ արտահայտում են կրավորական իմաստ. ինչպես՝ «Մունաշշիֆ... այն զեղն է որ գիճուրինն որ ծողված լինի» («ծողված, հավաքված է լինում») ի կուրծքն... հանէ և յխտկէ և սրբէ» (ԱԱԱԱ, էջ 19): «Անխիտու, ինքն խոտ մըն է որ ...տերեմներուն ծայրն եղ Գաճ կու լինի» («հեղված է լինում»), եւ կամ բաժնած կու լինի» («բաժանված է լինում—անդ, էջ 41): «Ատարապտիգաւ. ինքն խոտ մըն է... նման է պապուռնաճի ծաղկին. եւ զագաթնին մէկ մէկէ գաաած կու լինի» («գառված է լինում—անդ, էջ 71): Այսպես նաև՝ «Անխոն խառնած լինի» (անդ, էջ 69), «Թէ լուացած լինի՝ սավառյ լուծէ» (անդ, էջ 186), «Կաթն որ եխած լինի» (անդ, էջ 189) ևն: Պատահական չէ, որ նման կազմություններում կրավորական սեռի հարակատար դերբայ շատ սակավ է հանդիպում, թեև մի երկու օրինակ ունենք՝ խառնուած լինի (ԱԱԱԱ, էջ 12), շաղուած լինի (անդ, էջ 126), կալուած լինի (անդ, էջ 321): Ունենք նաև խառնուած կեխայ (անդ, էջ 184):

Նման կազմություններում շեղք սեռի բայերը եւ քիչ են գործածական: Ահա եկատված օրինակները. «մէջն կած լինի» (ԱԱԱԱ, էջ 70), «մեռած լինի» (անդ, էջ 72):

ԱՆԿԱՆՈՆ ԵՎ ՊԱՆՈՒՄԱՎՈՐ ՔԱՅԵՐ

Անկանոն բայերն, անշուշտ, չէին կարող զերծ մնալ այս շրջանում խոնարհման մեջ կատարված փոփոխություններից: Նախ՝ զալ, տալ միավանկ բայերն ունենում են զալիս, տալիս անկատար դերբայի ձևեր, որոնցից էլ կազմվում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները, ինչպես՝ «Գ օրի ձուռն էր զալիս, քամի, բորան սաստիկ» (ԶԱԸ, էջ 134): «Սիմոնն գիր էր տալիս շուրի զ ամիս, որ փողն ժողովի» (անդ, էջ 70):

«Մարց կայ՝ մեղաց մէջ տալիս է լողի» (ՆԶԲ, 91) ևն:

Իսկ անկանոն խոնարհման այլ բայեր ունենում են—ուս վերջավորությունը անկատար դերբայ և նրանից կազմված ներկա և անկատար ժամանակներ, ինչպես՝ «Է տարի այ, որ կռի էին աճում» (ԶԱԸ, էջ 53):

«Ասացի՛ք՝ անունը շտամ, Ապա բան ես աճում խիստ իմ» (ՆԶԲ, էջ 111) ևն:

Նախորդ շրջանի համեմատությունը կատարված փոփոխություններն առավելագույն գրեկորում են անցյալ կատարյալ և հրամայական ձևերում: Այսպես՝ առնել և զնել բայերի անցյալ կատարյալում տարածված են աղի (ՆԶԲ, էջ 37, ՆԳՔ, էջ 58), աղի (ՄՆ, էջ 108), աղեց (ՆԶԲ, էջ 25) կամ առա

(ՆՔԳ, էջ 44, 60), դի'ր (ՆՔԳ, էջ 45), դի'լ (ՄՂ, էջ 115), դրին (ՀՔՏ, էջ 165), իսկ հրամայականում՝ արա' (ՀՔՏ, էջ 153, ԳԱ, էջ 13, ՆՔԳ, էջ 45), արե' (ՄՂ, էջ 115, ԳԱ, էջ 22), դի'ր (ԱԱԱԱ, էջ 121, 321, ՆՃԲ, էջ 218, ՆՔԳ, էջ 58), դրե' (ՄՆ, էջ 163) նոր ձևերը:

Լսել բայը արդեն գրեթե կանոնավոր է դարձել. անցյալ կատարչություն միշտ հանդիպում են լսեցի (ԱԱԱԱ, էջ 342), լսեց (ՄՂ, էջ 108, ՆՔԳ, էջ 57), լսեցին (ՄՆ, էջ 105), իսկ հրամայականում՝ լսե' (ՀՔՏ, էջ 183, ՆՔԳ, էջ 59, 92), լսեցե' (ԳԱ, էջ 279) ձևերը: Միայն Նազաշ Հովնաթանի մոտ, գրքար շարադրանքում, հանդիպում են լուայ («Յանկարծ լուայ անտեսաց ձայնս— էջ 128) և լու'ր (էջ 149) ձևերը:

Գալ բայի անցյալ կատարչություն առավել հաճախորդ է —ալ, —ար, —ալ մերջավորությունը ձևերը, ինչպես՝ Եկալ (ՀՔՏ, էջ 207, ՄՂ, էջ 115, ՆՔԳ, էջ 52), Եկան (ՄՆ, էջ 103, ՀՔՏ, էջ 165) ևն: Եզակի հրամայականում ունենք բարբառային նոր ձևեր՝ Եկա', Եկա'ր:

«Ես քո սիրուն շեմ դիմանար, հայալ արա, հանք մեռայ, Ան ի հետ ալլ դոսկի փեռատա, Է՛ կեա՛ փորէ ինձի թուրպայ» (ՀՔՏ, էջ 217): «Գրոզ, անհասա Գրոզ, դեռ մանուկ եմ, շեմ տանելու. Եկա'ւ՛ տանելուն ցուցնեմ, տանելու գլշին զարնելու» (ՆՔԳ, էջ 77):

Իրենի բայի անցյալ կատարչություն հավասարապես հանդիպում են և՛ գրաբարյան, և՛ —ալ, —ար, —ալ մերջավորություններով նոր ձևեր, ինչպես՝ Եկալ ՀՔՏ, էջ 219), ԳԱ, էջ 210), Եկար (ՀՔՏ, էջ 225), Եկա (ԱԱԱԱ, էջ 4, 25, ՀՔՏ, էջ 199, ԳԱ, էջ 134), Եկան (ՀՔՏ, էջ 164) ևն:

Եզակի հրամայականում միտմամանակ հանդիպում է Եկի'ր (ԱԱԱԱ, էջ 2, ՆՔԳ, էջ 84) ձևը:

Պակասավոր բայերից զոչ չի օգտագործվում, զու և պարտել ունեն հետևյալ եզակի կիրառությունները՝ «Այսպէս դիւ կամ խարար Աղամայ որդոց ոչ զոչ» (ԶԱԾ, էջ 98): «Նան պարտի' հանապաղ սեղան բազմիլ աստ, ուրախանալ» (ՆՃԲ, էջ 158): «Պարտիմ աշխատողացն սղորմի տալ մէկ բերանս (անդ, էջ 179):

Կայ բայը ներկայում հանդես է գալիս նաև II դիմերով. «Անասան կենօք կաւ մէջ աշխարհի» (ԳԱ, էջ 249): «Միշտ պատուիրէ, որ արթուն կաս» (ՆՃԲ, էջ 139):

Կայ բայի անցյալ անկատար ժամանակը Զ. Ազուլեցու մոտ հանդես է գալիս բարբառային՝ հնչյունափոխված ձևով. «Նախըրվանայ մինչև ի թարվեց որ շատ տեղ կեւ, որ խմելու բուր չկեւ» (Օրագր. էջ 62): «Շահի դալամում սորոյ նման զինաթով, խաղիեով խան շկեւ» (անդ, էջ 70):

Նազաշ Հովնաթանի և Զ. Ազուլեցու մոտ եմ օժանդակ բայն առավել շատ հնչյունափոխված ձևերով է հանդես գալիս Այսպես՝ «Մնացել ամ (=եմ) հէլրան ու մաթ» (Բանաստեղծք, էջ 19): «Մայ էլ ընկաւ... ասա, թէ՛ այն զիրն աղարկել ամ (=եմ) Ըսպահան» (Օրագր. էջ 100): «Գնդեցիկ պատկեր իս (=եմ), զու իմ պատկերի» (ՆՃԲ, էջ 18): «Այսպիս բաներս բեզ համար այ» (=է—անդ, էջ 20): «Ունբերց վրայ կապու հրեղն կամար այ» (անդ, էջ 42): «Թափխօր խաղին՝ հաց ան (=են) ատում» (անդ, էջ 197) ևն:

Մեր լեզվի այս շրջանում ևս բայի ժխտական ձևերը կազմվում են հաստատականի վրա ոչ, չի, չ, մի՛ բացասական մասնիկների ավելացումով: Այժմ անհնչող, թե բայի ժխտական ձևերը նախորդ շրջանի հետ համեմատած ի՛նչ ընդհանրություններ և մասնավոր տարբերություններ ունեն: Սահմանական եղանակի գրաբարածե՛լ ներկան և անցյալ անկատարը, ուտի և բղձակակի ապառնին և անցյալ ապառնին ժխտական են դառնում ոչ, չի և չ բացասական մասնիկների ավելացումով: Թվում է, թե այս երեքից առավել շատ հաճախորդ սկսվող բայաձևերից առաջ. ինչպես՝ «Տափէ՛, որ է դարձնող. այն դեղն է որ դմտտան չի բողու (=չի թողնում) որ քայլէ և երթայ ի ամենայն զաւրտածն» (ԱԱԱԱ, էջ 18): «Ես թէ յիրմէն դաւաթ շինեն և ի մէջն զինի խմեն զմարդն չի հարբեցնէ (=չի հարբեցնում) քանի որ մեծ դաւաթ լինի» (անդ, էջ 231): «Ես այն որ ի բուրն չի մխտի (=չի մխվում՝ խրվում) և չի նստի (=չի նստում) յատակն՝ չէ աղէկ» (անդ, էջ 390):

Ստորև բերված օրինակներում չի մասնիկը գրված է բղձական բայաձևերի վրա.

«Ղուչի չի տայ» (=չաք)՝ կտորէք սինն,
...Շատ չի խմէ (=չամեր) զինչ արբեցեալ» (ՆՃԲ, էջ 187):
«Ամար եմ քարիդ նման որ մործիկն ի յիս չի բանի (=չբանի).
Բարձր եմ թուխ ամպիդ նման որ ոչ ով ի յիս չի հասնի» (=չհասնի— ՆՔԳ, էջ 55):
«...Թէ երբ կարեմ տանել ի տուն
Մարդ չի տեսնէ (=չտեսնի) մութն ի մթին» (ՄՂ, էջ 106) ևն:

Չի մասնիկը ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ հազվադեպ է դրբվում. այս շրջանում եղած օրինակներն են՝ «Ես թէ զև կտոր արժե՛ն ի վերայ մսին ձգես որ կու եփի, չի եփի և հում մնայ» (ԱԱԱԱ, էջ 71): «Զբարիքն այսպէս ճանաչես և յիմանաս. որ պիղծ յիրք ի յինք չի խտունի (=չխտունի), որ շալիւր (=չավերի), և այլ իբօք Զի ԱՊԱԿԱՆԻ (=չապականի), և յիստակ են աղորու կնէլ ի տեղացն (անդ, էջ 24): «Այս Բանաշահս Ս տարի որը մնաց, պատճառ հայրենի տներն ու աղերքն, թէ այլոց ձեռք չի ընկնի» (=չընկնի» (ԶԱԾ, էջ 92): Վերքի բերված օրինակներից երևում է, որ չի, ինչպես նաև չ և ոչ մասնիկները գրվում են ինչպես գրաբարածե ներկա (ներգործական և կրավորական սեռի), այնպես էլ պատճառական ու նորակազմ կրավորական (չի մխտի) բայաձևերի վրա, այնպես որ գրաբարածե արտահայտություն առնելով այս զեպում հասկանում ենք ներկայի ոչ գերբայավոր կազմություն: Համեմատաբար նվազ կիրառություն ունի չ մասնիկը, որ գրվում է ներկայի և անցյալ անկատարի, ինչպես նաև բղձական ապառնու և անցյալ ապառնու թե՛ մասնավորով և թե՛ բազմաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝

«Ես ան հաւերուն էի որ դեպինն ի կուտ շուակի (=չէի ուտում),
Թռչի երկնօքն երթի թէ սիրոյս ակնատն շրնկնէի (=չընկնէի).

¹² Ներկա և անցյալ անկատար ժամանակների գերբայավոր ժխտական կազմությունների մասին աե՛ս սթխտական գերբայը բանի՛ք:

Անմասն ի ծովուն միջին էր լարած ու ես չդիտեի (=չգիտեի)»
(ՆՔԳ, էջ 61):

«Մովսէս մարգարէ շասնս (=չես ասում).
Ի ի Գալթայ իսկի շամաշնս (=չես ամաշում).
ԶԱրբաշամ հայրըն տանիս» (ՀԹՏ, էջ 176) էին:

Այս շրջանում սահմանական եղանակի դերբայավոր կազմութիւններ կան և անկատար ձևերի երևան գալու հետևանքով չ մասնիկը՝ որվելով կամ օժանդակ բայի ներկայ և անցյալ անկատար ձևերի վրա (ի տարբերութիւնս արդի գրականի՝ ժխտական մասնիկով օժանդակ բայը կարող է որվել և դերբայից հետո)՝ կազմում է ժխտական նոր ձևեր, ինչպես՝

«Մաստիկ սիրուս հիւանդացայ, ես չեմ հանվեաում,
Ձեր դուզն անց կու կենամ, է՛ր շնս երևում,
Քոյ բերանէն ինձ մէկ ուրախ խարար շնս բերում» (ՆՃԲ, էջ 247):
«Ենձ հետ խոսում շնս, սիրտս արին ես արած» (անդ, էջ 233):

Եզակի երրորդ դեմքում է օժանդակ բայը կարող է հնչյունափոխվել ի-ի կամ մնալ անփոփոխ, ինչպես՝

«Ծախէն բաց չէ բողում (=չի թողնում) լուսարարի» (ՆՃԲ, էջ 117):
«Գնա չէ կարում կանչել հաղի» (անդ, էջ 118):
«Տանաւորն խօսում չի (=չի խօսում), միտք արէք» (անդ, էջ 177):

Ի տարբերութիւնս չի և չ մասնիկների՝ ոչ ժխտական մասնիկը (ի դեպ, նշենք, որ այս մասնիկի կիրառութիւնը մշուսներին համեմատութիւնում շատ բիշ է) միշտ որվում է ներկայ և անկատար ձևերի վրա, ինչպես՝

«Ա՛յ, նազա՛շ, դու լսէ, զինչ որ բարոզնս,
Ի՛նչ շահ է բո սակոյ, երբ ոչ կատարես» (=չես կատարում—ՄՆ, էջ 127):
«Տեկեղեցին ոչ երևայ (=չի երևում).
Եւ զեկեայ հիւրսն ոչ խղճայ» (=չի խղճում—ՄՂ, էջ 97) էին:

Ըղձական եղանակի բայաձևերի հետ ոչ ժխտականի բարբառային կիրառութիւն (ոչ մասնիկը որվում է բայաձևից հետո) երկու դեպք գտնում ենք Զարբաիա Աղուեցու մոտ. «Մեր քանի բազրկան այսօր զոխտակ դուրս ելար, փախար, թէ բունն ոչ (=չբունեն), կամ թէ փող ուզեն» (Օրարք. էջ 47): «Զերայ Արարողուի խանի վարիսներն դայիլ չի կացան, թէ՛ դու Երևան Սէֆիդուլի խանի դուրսդում էս. բայրի բեզ բողում ոչ (=չթողնի), գաս Ըսպանն» (անդ, էջ 99):

Պայմանական եղանակի սպասնիկները կամ սակավ կիրառութիւնում կարող են ունենալ չ և չի ժխտական մասնիկները, ինչպես՝ «Եւ թէ զթմասհին զկաշին ի Ա գեղի մի բոլորն շուք ամեն, ես տանին ի այն գեղին մէջն տուն մի կայս այնն ես, ի այն դեղն իսկի կարկուտ շգայ (=չի գայ (ԱԱԱԱ, էջ 171):

«Եւ Յովհաննէս Թուրկոյանցի,
...Շան ի սրտէս սէր աշխարհիս՝
Տէրն շաւանի զկամբոյ ի կատար» (ՀԹՏ, էջ 133):

«Ասէ Բա, թէ իյնինն տարութիւն եւ հովութիւն այլ կայ... եւ այլ բժշկապետք ասեր են թէ հով է, եւ թէ հով չէր նա, իր քամուքսն սպաննող շէր լինի» (=չէր լինի) իր հովութենովն և պաղեցնելով» (ԱԱԱԱ, էջ 115):

«Երբ որ աղբատ իւր դէմն կընէ,
...Քէ դօրն ի բուն աղագակէ,
Նա չի տանի (=չի տանի) զձեան ի բէտան» (ՄՂ, էջ 87):

Ինչպես բերված, այնպես էլ մեր ձևերի տակ եղած մյուս բոլոր օրինակներում չի ժխտական մասնիկը որվում է III դեմքի վրա, և բայաձևերը համեմակնում են զարբարակերպ ներկային, այնպես որ վերին բայաձևերը չի կարելի նույնացնել արդի գրական հայերենի ժխտական դերբայի բայաձևերի հետ, որոնք ձևով ըղձական եղանակի եզակի III դեմքի հետ նույնանալով, անփոփոխ կերպով հանդես են գալիս մյուս դեմքերի համար կամ, ինչպես՝ շնս գրի, չէի գրի, չես գրի, չէիր գրի կլին:

Այսպիսով, մեր լեզվի այս շրջանում կամ արդի գրական հայերենի ժխտական դերբայը հիշեցնող մի միասնական, բնորոշ բայաձև չունենք: Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ I և II դեմքերի պայմանականի ժխտականը այս շրջանի հեղինակներն արտահայտում են ժխտականի դերբայավոր կազմութիւն ձևերով, այն է՝ առավել շատ անորոշ դերբայի հետ կամ օժանդակ բայը ժխտական ձևով խոնարհելով, իսկ սակավ դեպքերում՝ անորոշ դերբայի վերջավորութիւնս լ>ը հնչյունափոխված բայաձևի հետ կամ օժանդակ բայի ժխտական ձևերը խոնարհելով, ինչպես՝ «Եւ որ խմէ զինքն՝ զտարութիւնն իաղեցնէ շուտով. եւ թէ չէր, հով հոմարային շէր ապանչ» (=չէր օգնի—ԱԱԱԱ, էջ 115):

«Նոսն կարմիր ծաղկի նման ծամերդ հինած,
...Ձես սախի թէ նախաշ[ի]ն ուշն ու խելքն զնաց,
Ամա՛ն-ամա՛ն, շնմ մոռնալ (=չեմ մոռնալ) մինչև յափտեան»
(ՆՃԲ, էջ 22):

«...Երբ որ բարով հասնիմք շնորհազարդ գարուն,
Ես էլ չեմ համբերել (=չեմ համբերի), կինեմ աւարայ» (անդ, էջ 42):
«Աստուած սիրես, էլ չեմ կարիլ դիմանալ,
...Արիք հող կու դառնաս, այդպէս շնս մնալ» (=չես մնալ—անդ, էջ 219):

Որպես բարբառի առանձնահատկութիւն, օժանդակ բայը կարող է որվել դերբայաձևից հետո, ինչպես՝ «Թէ որ աշնու, խան ինքն, բէկ ինքն... ինող կանի, Բո թումանով պրճանիլ չէ» (=չի պրճնի—ԶԱՅ, էջ 101):

Ահա և մի քանի օրինակ անորոշ դերբայի հնչյունափոխված ձևից կազմված բայաձևով.

«Ամէն առաւօտ և լուս
Պայուցն ասել. «Ե՛լ այգուս,
Ձեմ կընէր (=չեմ կընի) ես այս յայգուս» (ԳԱ, էջ 258):
«Սատաղայ ես քեզ երթամ,
...Քեզ եմ պահիր արմազան,
Շաղար օրտու շնս տար (=չես տալ)՝ զայն» (ՄՆ, էջ 103):

¹³ Օրինակներից մեկում՝ Շաղար օրտու շնս խտար գալէ:

Սահմանական եզրանակի ապստոծի, վաղապատար և հորակատար ժամանակների ժխտականը նախորդ շրջանի համեմատությամբ ուշադրով առանձնահատկություններ չունի. կազմվում է դերբայականի վրա եմ օժանդակ բայի ժխտական ձևերի¹⁴ ավելացումով, ինչպես՝ շեմ ուղիւս (ՆՆԲ, էջ 241), շեմ գալու (ՄՆ, էջ 180), շեմ խմեր, շեմ կերեր (ԳԱ, էջ 255), շեմ սիրել, շեմ աւել (ՆԹԳ, էջ 73), շեմ առած (ՆՆԲ, էջ 119), չէ մեռած (ՄՂ, էջ 90) ևլն: Բոլոր դեպքերում ներկա ժամանակի եղակի III դեմքում բայական մնում է է, ինչպես՝ չէ հասել (ԱԱԱԱ, էջ 15), չէ տեսել (անդ, էջ 67), չէ բողբ (2ԹՏ, էջ 181), չէ աւեր (ՄՂ, էջ 90), չէ աւերել (ՆԹԳ, էջ 67), չէ գործած (ՆՆԲ, էջ 148), չէ գրած (ԱԱԱԱ, էջ 114) ևլն:

Արժե նշել հետևյալը. նազաշ 2-ովնախան բանաստեղծը և Չարբրա Ազուլեցին մեկ-մեկ վաղակատարում և մոնավանդ հարակատարում իրենց բարբառին հատուկ ժխտականի կազմություններ են օգտագործում, այն է՝ օժանդակ բայը դնում են դերբայից հետո, ինչպես՝ «Դարցեալ, աթոռակալն եկաւ, մին շունչն ի դիան հարկ է, որ ամէն հայ ի դիան կուտան էջմիածինն. այս դ սարի է, որ առէլ չէր» (=չէր առել—ՉԱՍ, էջ 86): «Այս պատճառէս դ տարի էր, որ իւր որդի Գրիգորն տէսած չէր» (անդ, էջ 77): «Ամենեկն մարմինն փտած չէր» (անդ, էջ 81):

««Պինդ ցէք տօլուի թասն,
...Բանի եկած չէ մեծ պասն» (ՆՆԲ, էջ 186):
«Նաս վախտ է, որ դու ինձ մօտ խմած շես փիւլայ» (անդ, էջ 228):

Անցյալ կատարյալ ժամանակի ժխտականը կազմվում է բայականների չ. չի մասնիկների կցելով, ինչպես նաև նրանցից առաջ ոչ մասնիկ ավելացնելով: Այս երեքից առավել շատ գործածական է չի մասնիկը, որ դրվում է բաղաձայնով սկզբող բայականներից առաջ, ինչպես՝ չի կերայ (ՆՆԲ, էջ 206), չի փտեցան (ԱԱԱԱ, էջ 435), չի մնաց (ՄՆ, էջ 128) ևլն: Սակավ դեպքերում չի մասնիկը դրվում է ձայնավորով սկզբող բայականից առաջ, ինչպես՝ չի ուղջացա (ԱԱԱԱ, էջ 465), չի աշողց (անդ, էջ 149):

Չ մասնիկը հովաստարպետ դրվում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկզբող բայականների վրա, ինչպես՝ չրացի (ՆՆԲ, էջ 112), չլիմացա (անդ, էջ 193), չկար, չկիր (ՆԹԳ, էջ 67), չսասց (2ԹՏ, էջ 227):

Ոչ ժխտականը նվազ կիրառություն ունի, առավելապես հատուկ է Մ. Ղրիմեցու լեզվին, ինչպես՝ ոչ աքրուցեր, ոչ եկեր (Բանաստեղծք, էջ 88), ոչ կարացի (անդ, էջ 102):

Չարբրա Ազուլեցին իր բարբառին հատուկ ձևով անցյալ կատարյալի ժխտականը մեծ մասամբ կազմում է ոչ մասնիկով, որն այս դեպքում դրվում է բայականից հետո, ինչպես՝ «...մինչի ես գնացի ոչ, ախնաաէս չէլայ, գրէցի ոչ» (Օրարք, էջ 6): «Դարցեցիք Մկրտում ուզին ոչ» (անդ, էջ 77): Այսպես նաև՝ բացին ոչ (անդ, էջ 83), բողբ ոչ (անդ, էջ 87), սասցի ոչ (անդ, էջ 88) ևլն:

¹⁴ Ոչ ժխտական մասնիկով կազմվող վաղակատարի ձևեր չեն հանդիպում:

Ճնշող մեծամասնությամբ հրամայականի ժխտական ձևերը կազմվում են ներկա ժամանակի II դեմքի (եղակրում ա-ն փոխվում է ր-ի՝ գրես-գրեր, աղաս-աղար ևլն) բայականների վրա մի՛ արգելականի ավելացումով: Ստորն բերում ենք օրինակներ բոս խոնարհումներին.

Ե խոնարհում—մի՛ հաներ (2ԹՏ, էջ 149), մի՛ սպանաներ (անդ, էջ 153), մի՛ լացներ (ՆԹԳ, էջ 49), մի՛ արձակեր (ԳԱ, էջ 223), մի՛ մեղադրել (ՆՆԲ, էջ 193), մի՛ արտնչել (ՄՂ, էջ 115) ևլն: Ինչպես նախորդ շրջանում, այս բայերի գրաբարյան կրավորական սեռի կիրառությունների չենք հանդիպում: Նազաշ 2-ովնախան ունի մի՛ Բաղիբ ձևը, սակայն ո՛չ թե կրավորական, այլ ներգործական իմաստով՝

«Մի՛ Բաղիբ իմ հողին, [ինձ մի՛ն] ճար արայ, է՛ր եմ ինձնէ հեռանալիս» (Բանաստեղծք, էջ 196):

Բացառություն են կազմում Մ. Նազաշի մոտ եղած հետևյալ երկու օրինակները. «Նազա՛շ, մի՛ խաբիր (=մի՛ խաբվիր) մեղօք, մի՛ դատիր անասնոյ նամա՛ն» (Բանաստեղծք, էջ 124): «Նորայ փոշման գնացին, և դուք այլ կերթաք, մի՛ խաբիք (=մի՛ խաբվեք—անդ, էջ 127):

Ի խոնարհում—մի՛ հետներ (ՄՂ, էջ 134), մի՛ հետևիք (անդ, էջ 140), մի՛ դատիր (ՆԹԳ, էջ 94) ևլն:

Ա խոնարհում—մի՛ հաստար, մի՛ զոպանար (2ԹՏ, էջ 193), մի՛ կենար (ՄՂ, էջ 136), մի՛ մոռնար (ՆԹԳ, էջ 86), մի՛ կենայք (ՆՆԲ, էջ 183), մի՛ հաստայք (ՄՂ, էջ 108), մի՛ զնայք (ԳԱ, էջ 225), մի՛ ձանձրանայք¹⁵ (ՄՆ, էջ 163) ևլն:

Ու խոնարհում—մի՛ բողուր (ՆՆԲ, էջ 205), մի՛ բողուր (ՄՂ, էջ 115), մի՛ բողուր (ԱԱԱԱ, էջ 432) ևլն:

Այս շրջանում ես անորոշ դերբայի վրա մի՛ արգելականի ավելացումով կազմվող հրամայականի կիրառության շատ դեպքեր ունենք, ինչպես՝ «Ի ջերմերուն յառաջ մի՛ ապլ» (ԱԱԱԱ, էջ 164): «Էլան ալն է որ շորացենն ես Բըրջենն՝ հապայ ուտեն. եւ Ժ հաս կհ՛ր, յաւելի մի՛ ստել» (անդ, էջ 120):

«Իմ վրայ դամ մի՛ բունկ, քո սերդ ինձ խելք ե՛րք է թողել» (ՆԹԳ, էջ 73): «Կ՛սանմ թէ՛ Սիրէ՛ դու դիս, մի՛ իմ սիրտուս եխկրցրենի» (անդ, էջ 75): «Ինձ կարօտ մի՛ բողուլ, նազու սիրականս» (ՆՆԲ, էջ 35): «Ա՛մ, բանի՛ ու բանի՛ սանմ թէ՛՝ «Աշխիթ ծարուր մի՛ լնուլ, Ու զայս իմ կարմրուկ արինս առ ձերմակ շիինքդ մի՛ առնուլ» (ՆԹԳ, էջ 67): «Ես զարիպ եմ, դիպշիլ մի՛ կրած օրախ» (ՆՆԲ, էջ 40):

Ինչպես տեսնում ենք, ի, ա, ու խոնարհման բայերը նման կազմություններում համապատասխանաբար ունենում են -իլ, -ալ, -ուլ վերջավորություններ, մինչդեռ և խոնարհման բայերը, առանց կերպային գրեկորման, կարող են ունենալ և -իլ վերջավորություն, ինչպես՝

¹⁵ Ինչպես տեսնում ենք, ա խոնարհման բայերը հոգնակիում հետևողականորեն ունենում են -այլ վերջավորությունը, այնպես որ Մկրտի նազաշի մօտ հանդիպող մի՛ մտացել («Ըզվնդ կու առաշնձ գիս մի՛ մտացէ՛ք, Բանաստեղծք, էջ 164) ձևը սխալ պետք է համարել (Թեև հետաքրքրական է որպես արդի հայերենի համանման երևույթի նախաձև), մասնավորապես որ մյուս օրինակներում ունենք՝ չի մտանալ ձևով:

«...Մենք Մելքունն ուզում չէնք, դու էլ ուզիլ մի՛» (ՉԱԹ, էջ 77):
«Քեզնէ խնդրիմ, որ մի անիլ (=մի՛ արա) ինձ աւարայ» (ՆԶԲ, էջ 37):
«Խոցում սիրտըս մի՛ Բանդիլ» (անդ, էջ 63):
«Աստուած սիրես, էլ մի՛ բռնիլ ծահանայ» (անդ, էջ 221):

«Մի՛ լար, մի՛ տրտում կենար, մի՛ հաշվիլ զորս քեզ տարի» (ՆՐԳ, էջ 60) ևլն:

Նազաշ Հոփնաթանի և Զաքարիա Աղուլեցու լեզվին հասուկ են մի՛ք ժխտականով հրամայականի կազմութիւններ, սակայն, ի տարբերութիւն արդի գրական հայերենում բարբառային աղբյուրայամբ գործածվող համապատասխան ձևերի (մի՛ք դրի, մի՛ք խոսի), բայածնն այս դեպքում միշտ գրվում է անորոշ դերբայով (արգելական բառաձևը կարող է գրվել դերբայից առաջ կամ հետո), ինչպէս՝ «Այլ չար չի մնաց. ասացի, թէ՛ այլ ումմեքէ ասիլ մի՛ք» (Օրագր. էջ 98): «Ասել ան՝ կէսն ձեզ, կէսն ավէք մեզ... այրել՝ մէք, զարուլ շարին» (անդ, էջ 131):

«Հանիլ մի՛ք շուտ վեր կենաք» (ՆԶԲ, էջ 108):
«Մէնակ մի՛ք ուտիլ. լաւ բաժանեցէք, հաւասար շարէք» (անդ, էջ 161):
«Թոյլ մի՛ք ավ, որ եղբայրութեան սէրն հովանայ» (անդ, էջ 184):

ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Վաղուց ի վեր հայագիտութեան մեջ ավանդույթ է գործել մակրայը, կապը, շաղկապն ու ձայնարկութիւնը անվանել շիբբովոյ խոսքի մասեր և գրանք «շիբբովոյ խոսքի մասեր» խորագրի տակ ուսումնասիրել: Այդպես վարվել ենք և մենք:

Յժն միջին հայերենի բառագիտութեան և ձևաբանական կառուցվածքի մասին այնուամենայնիվ ինչ-որ շափով խոսվել է, ապա շիբբովոյ խոսքի մասերի վերաբերյալ միայն առանձին փոքրիկ ցանկեր ու համապատասխան բաների հավաքածուներ են տալիս Կարսում՝ ու Ա. Այտընյանն² իրենց աշխատութիւնների մեջ: Իսկ պրոֆ. Հ. Աճառլանը գրանք է որ ամփոփել և տեղագրել է իր «Լիակատար քերականութեան հայոց լեզվի» համեմատութեամբ 562 լեզուների՝ աշխատութեան մեջ (տե՛ս հատոր V, Երևան, 1965 թ.): Չուզենալով կրքեր նսեմացնել հայագիտութեան մեծ կրախտավորների աշխատանքը՝ նշենք, որ Կարսը, օրինակ, իր վերոհիշյալ աշխատութեան միջին հայերենի ձայնարկութիւնների հատվածում, Աճառլանի խոստովանութեամբ՝ արդում է միայն երկու բառ՝ հայ «այո» և անա, անայ «ահապահիկ»: Բայց այս երկուսն էլ մակրայ են և զժրախտաբար և ոչ թե ձայնարկութիւն» (տե՛ս վերոհիշյալ աշխատութիւնը, էջ 405):

Այսօր հայ քերականութեան մեջ վնահատվում է և 10-րդ խոսքի մասը՝ «եզանակավորոյ բառեր» անվանումով: Առաջին անգամ լինելով՝ մեր աշխատութեան մեջ քննութեան են ենթարկված և միջին հայերենի եզանակավորոյ բառերը:

Լեզուներում «շիբբովոյ խոսքի մասեր» անվանման տակ մանուկ բառերն ընդհանրապես սակավ են փոփոխութիւնների ենթարկվում: Ավելին, որն է լեզվի կրած փոփոխութիւնների համար աստիճանացույց կարող են ծոռայել վերևի խոսքի մասերը, այնպես որ հետաքրքրական է իմանալ, թե այդ «ըզայում» խոսքի մասերն ի՛նչ փոփոխութիւններ են կրել միջին հայերենում:

Ինչպես ուսումնասիրութեան մեջ կարելի է նկատել, շիբբովոյ խոսքի մասերը միջին հայերենում երկու կարգի փոփոխութիւնների են ենթարկվել. 1) անգործածական դարձած զրաբայան համապատասխան ձևերի դիմաց աշխարհարար լեզվամտածողութեամբ կազմվել են նոր բառեր. 2) օտար լեզուներից, հատկապես պարսկերենից և թուրքերենից մեր լեզվի մեջ են թափանցել զանազան բառեր:

¹ J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen. Strassburg, 1901:

² Ա. Այտընյան, Քննական քերականութեան աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866:

Նկատի ունենալով, որ միջին հայրենի երկու շրջաններում շրջվող խոսքի մասերի կիրառությունները մեծ տարբերություններ չեն գրեւորում, մենք հրանք քննել ենք ամբողջ միջին հայրենում ընդհանրապես՝ տեղ-տեղ բոս հարկի նշելով առանձին հեղինակների լեզվա-ոճական առանձնահատկությունները:

Աշխատանքում ներկայացված են միջին հայրենի շրջանի առավել հայտնի գրական դեմքերի երկերի մեջ օգտագործված մակբայները, նախդիրներն ու կապերը, շարհապները, եղանակավորող բառերը և ձայնարկությունները: Անշուշտ, ամբողջ միջին հայրենում օգտագործված ավյալ խոսքի մասերին պատկանող այլևայլ բառեր կարող է գուրս մնացած լինեն մեր աշխատանքից: Մակայն պետք է նկատի ունենալ, որ սույնով հայագիտության մեջ շրջվող խոսքի մասերն առաջին անգամը լինելով ուսումնասիրվում են իրենց ամբողջության մեջ:

Մ Ա Կ Ք Ա Յ

Արդի հայ քերականագիտությունը նյութական իմաստ ունեցող և ընդհանրապես խոսքի մասերի որոշման հիմքում դնում է «բառերի ընդհանուր, խոսքի մասային իմաստը» (տե՛ս Մ. Գ. Արբաճաճյան, Չիքրվող խոսքի մասերը և նրանց բառակրան ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայրենում, Երևան, 1965, էջ 224): Այս մտացունցում սակարայի՝ որպես առանձին խոսքի մասի, ըմբռնումը հասակեցրեց: Մի կողմից մակբայները՝ հատկանիշի հատկանիշ ցույց ավող խոսքի մասային իմաստ ունեցող բառեր, առանձնացվեցին պարագայական կիրառություն ունեցող սակականներից և այլ խոսքի մասերի պատկանող բառերից, մյուս կողմից բուն մակբայներից տարբերակվեցին եղանակավորող բառերն այն հիմունքով, որ ի հակադրություն մակբայների՝ «եղանակավորող բառերը գուրի են նյութական իմաստից, օրնկտիվ որևէ հատկանիշ չեն ցույց տալիս, այլ արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը և նախադասության անդամ չեն լինում» (ն. տ. էջ 231):

Սույն աշխատանքում միջին հայրենի մակբայների քննությունը մենք կատարել ենք վերահիշյալ տեսական գրույթներից ելնելով: Մակայն, բուրբ ղեպերենում պետք է նկատի ունենալ, որ ընդհանրապես խոսքի մասերի և մասնավորապես շրջվող խոսքի մասերի միջև անանցանելի սահմանադրություններ չկան. նույն բառը, բոս իր արտահայտած իմաստի և ավյալ կիրառության, կարող է հանդես գալ մե՛րթ որպես մակբայ, մե՛րթ որպես կապ ու եղանակավորող բառ. օրինակ՝ «Անցարը լույս իմ որդի, Մեծ մխիթար իմ սրբախ, Կուսի կաթմամ սնուցի, եւ մօր զբթով զգլուկեցի: Փաղատրել լուսայի, Ըստ աւետանցն, որ առի, Արդ աւեսանեմ ի խալի, և մօրքս աղիքն խորովի» (ՀՅԲ, էջ 245): «Արդ, զրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ...» (ՄԳԳ, էջ 15): «Արդ, եղալարբս, սերմանեցէ՛ք ի սուրբ սրբախ գործս բարեաց...» (ԿԵՏ, էջ 152):

Վերելի երեք նախադասություններում ունենք արդ բառը, սակայն տարբեր խոսքիմասային իմաստով, առաջինում արդ բառը մակբայ է, քանի որ այժմ, երկու բառերի իմաստով է օգտագործված, ունի նյութական իմաստ, մինչդեռ

վերջին երկու նախադասություններում արդ բառը նյութական իմաստ չունի, ուստի եղանակավորող բառ է կամ պարբերությունների կապող շարհապ:

Այսպես և՛ հայտնի է, որ -(ա)պև մասնիկը մակբայակերտ անանց է, մինչդեռ հետևյալ օրինակում այդ մասնիկով կազմված բառը ոչ թե մակբայական, այլ եղանակավորող բառի կիրառություն ունի.

«Այլ և զրերանդ լրկամ և շատ մի՛ խօսիր,
Չբարան և հերձուածող բանի մի՛ լինիր
...Արմանապև զաշքղ և զականջքղ բո ամբայցո՛ս» (ՀՅԲ, էջ 201):

Օրինակները կարելի է շատացնել. կարծում ենք, որ բերվածներն էլ հերթ են մեր մտեցման հիմունքը բացահայտելու համար:

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՍՏ ԿՅՉՄԱՌՔՅԱՆ

Ըստ իրենց առաջացման հիմունքի, միջին հայրենում մակբայները բաժանվում են հետևյալ հինգ տեսակների. 1) պարզ կամ արմատական մակբայներ, 2) բարդ մակբայներ, 3) անանցավոր մակբայներ, 4) քերականական ձևերից առաջացած մակբայներ, 5) նկարագրական մակբայներ:

1) Պարզ մակբայներ.— Հասկանալի է, որ պարզ կամ արմատական բառերը մենք օգտագործում ենք որոշ պայմանականությամբ, քանի որ պարզ կամ արմատական կողմից մակբայների մեջ մտնում են անանցված և բարդված այնպիսի բառեր, որոնք միջին հայրենի (և ոչ միայն միջին հայրենի) լեզվամտածողությամբ որպես այդպիսիք չեն գիտակցվում: Մենք աշխատել ենք բոս այբբենական կարգի առավել լրիվ շարհով տալ այդ մակբայները՝ հավասարացած լինելով, որ հայագիտության ինչ-ինչ հարցերի լուսաբանման համար այդ անպայման օգտակար կլինի:

Պարզ մակբայների մեջ պետք է տարբերակել զորաբայան մակբայներ և նորակազմությունները: Միջին հայրենում կիրառված զորաբայի պարզ մակբայներից են արդ, այժմ, սատ, սյոխ, անդ, սատե՛ն(ս), անդէն(ս), անդր, աստի, անտի, սասանօր, անտանօր, բնա, բարով, դեռ, դարձեալ, երէկ, երբեմն, զկնի, զիա՛րդ, է՛ր, բնդէ՛ր, իսկոյն, կարի, կրկին, կանուխ, համակ, կեռի, հանապազ, հուսկ, մի՛, միապին, մէն, լկուց, յառաջ, յիւսի, յոյժ, յաւետ, յուղով, յանկարծ, յայժմիկ, յախտան, յուրազ, յարածամ, յանեալ, յար, յետոյ, նախ, շոյս (շուս), շուտով, սպառ, ստկպ, վաղվազակի, վալը, վեր, վաղն, վաղիւն, ուրէ, ուլ, ուստի ելն:

Պետք է նկատել, որ զորաբայան այս մակբայները միջին հայրենում զրած բուրբ հեղինակների կողմից հավասար շարհով չեն օգտագործված, կան մակբայներ, որ միայն մեկ հեղինակի մօտ եղակի կիրառություն ունեն, օրինակ՝ սասանօր, անտանօր մակբայները միայն մեկ անգամ կիրառված ենք գտնում Մարտիրոս Արիմեցու մոտ, որը բարբառային ընտիր նորաբանությունների հետ միապին ունի զասական հայրենի նորաբանություններ: Ահա այդ օրինակները.

* Արմատները բարացած ենք են լեզվի մի որոշ վայրկյանին և անանցներն են միայն կույն վայրկյանի կենդանի և շարժուն ձևերը... արմատ են այն բառերը, որոնք նույն լեզվի մեջ կարող են խոսողի կամքի համեմատ և ուղած ժամանակի գոմարովի և բարձրագույնովի, բայց չեն կարող հանելի և բաժանելի (ՀՅԶԵԲ, հ. էջ 3):

«Աստաեօր ի պատմել ճառս անկարանամ.
Անասեօր մերս անցանք առ տէր յիշեցան» (ՄՂԲ, էջ 149):

Այսպես նաև՝ ճախ (ՍԳԳ, էջ 29), աստի (ՄՀՋՄ, էջ 2), յաւա (ՄՂԲ, էջ 152), համակ (ՖրՔ, էջ 57), զիկի, ուտի (ԿԵՏ, էջ 223), զի՛արդ (ՀԵՔ, էջ 189, 190 և ԳԱՔ, էջ 114), կարի (ՀԵՔ, էջ 189 և ՆՇԲՁ, էջ 561–562) ևն: Մինչդեռ այլ մակրայնէր հաճախակի կիրառութիւն ունեն. գրանցից են՝ աստ (ՀԵՔ, էջ 151, 191, ԿԵՏ, էջ 210, ՆՇԲՁ, էջ 572, ՄՀՋՄ, էջ 10, 29, ՍԳԳ, էջ 30, ՖրՔ, էջ 34 ևն), անդ (ՀԵՔ, էջ 195, 229, 237, ԿԵՏ, էջ 167, 179, 210, 222, ՆՇԲՁ, էջ 564, ՖրՔ, էջ 84 ևն), այժմ (ԿԵՏ, էջ 179, 189, 224, ՄՀՋՄ, էջ 4, 37, ՍԳԳ, էջ 29, ԳԱՔ, էջ 106) ևն:

Աշխատութեան բնույթի պատճառով մենք շնոր կարող այստեղ դարար-
յան մակրայնէրի կիրառութեան հաճախականութիւնը բնեւէլ, այլ մենք կաշ-
խատանք ստորե ցուց տալ, թե նոր, «սամկական» բառերն որքան առավել
աշխույժ են, իսկ նրանց կիրառութիւնը՝ հաճախակի:

Միջին հայերենի նոր «պարզ» մակրայնէրն են. առէ, այլուայր, այլ-
վայր, այլուայր, ակից, անկից, այլվայ(յ), այլվի, ասորճուօր(ս), անգուման,
այլէ, ետ, բնգումն, բնգոր, լման, խուր, կամկար, կամաց, հոս, հոն, հիմա,
հիմի, հիմիկ, հայնց, հեա, ո՛նց, ոսկամ, վաղվիկն ևն: Սրանց վրա պետք է
ազիւցանել նաև էլ, էլ բառերի հարադրութեամբ կազմված մակրայնէրը՝ հեղ
մի, հող մի, պան մի, հիմի էլ, ապա նաև դանագան բայական հարադրու-
թիւններում հանգնե կող մակրայնէրը:

Վերևում բերված մակրայնէրը միջին հայերենին նույնքան հարազատ են,
որքան «սամկանագատէլ» կու մասնիկով կազմվող ներկա, անցյալ անկա-
տար ձևերը: Քննենք դրանցից մի քանիսը.

ա) Հայտնի է, որ գրաբար լեզուն ճարից, կրկին, վերտին իմաստներն
առավելապես արտահայտում էր անդրէն, դարձեալ մակրայնէրով, ինչպես՝
«Դարձեալ առարեանց այլ ծառայ բազումս, քան զառաջինն» (Մատթ.),
«Դառնայ առարեանց անդրէն ի Բարելովմ» (ՄեՊՁ, 1, ԺԱ) ևն: Մինչդեռ միջին
հայերենում, ինչպես վերևում կարելի է տեսնել, անդրէն բառի կիրառութեան
չենք հանդիպում, իսկ դարձեալ մակրայնէր միայն մի երկու հեղինակի մոտ է
հանդիպում հազվագույն կիրառութեամբ (ՀԵՔ, էջ 156, 178, ՄՀՋՄ, էջ 14, 37,
ՖրՔ, էջ 121, ՎԱԱ, էջ 154, 169): Անա բոլորը: Սակայն այլ է այլուվայր, այլ-
վայր, այլուայր, այլվա, այլվի (=նորից, կրկին) բառերի բախտը. այդ մակ-
րայնէր հնչյունափոխված ձևերով օգտագործված ենք դռնում միջին հայերենով
զրոյ գրեթէ բոլոր հեղինակների մոտ, այսպես, օրինակ՝ «Ապա բամ է արկ ի
ներք տասն դրամ Թարեկպին, և աճրէ, և այլուվայր (=վերտին) բամ է»
(ՄՀՋՄ, էջ 52): «Ապա թէ ի կաթէն տարութիւն լինի, դարեւոր տուր՝ որ չերմն
հանգաւորի, և այլուայր կաթն տուր» (ն. տ. էջ 56): «Ապա թէ չերմն այլուայր
դառնայ, դռնս ստածունդ ի բան պահէ» (ն. տ. էջ 71): «Եւ թէ որ գայ յեղ-
բայութիւն և փոշմանի, նա կարէ այլվա ամուլ գիր իբրն ու հնէն» (ՍԳԳ,
էջ 43): «Եւ թէ զչորն ծեծեն եւ ի յաշքն քաշեն՝ այլվա դառաչի ազուտան անէ»
(ԱԱԱԱ, էջ 76):

Առավել շատ տարածված է այլվի ձևը. ինչպես՝ «Ապա թէ այտով չի յա-
չողի այլվի (=վերտին) ի բազանիս մաէ» (ՄՀՋՄ, էջ 28): «Այսօր ճարակ ինչ
տանն, կըք մեղօրս եւ այլուի կորայ» (ՖրՔ, էջ 79):

«Մարդիկ զինչ գարնան ծաղիկ փթթին՝ ւ այլվի շորանան» (ՀԵՔ, էջ 160):
«Եկի հանց ետրի մառի, որ սիրած է՝ ւ այլվի թողած» (ՆՔԳ, էջ 71):
«Սոցոյ նշանց տրիւր, այլվի ծածկեցիր» (ՆՀՔ, էջ 35):
«Գէնայ բահա՛ր, այլվի բահար» (ՀԵՔ, էջ 157):

«Աւեր է գրոս շինողն թէ Ա տարեկան տղան մաւս ք մթխալ տէկ պար-
տէկ կերաւ... և այլուի քիչ մի մաւրն կաթովն այլուի խմցուցին, և այլուի
փոխեց...» (ԱԱԱԱ, էջ 126): Այսպես նաև՝ «...դառնայ այլվի» (ՄՀՋՄ, էջ 39),
«այլվի կփէ» (ն. տ. էջ 45), «այլուի դառնայ» (ՎԱԱ, էջ 8), «անկեալ էր այլվի»
(ն. տ. էջ 168): «այլվի դայ» (ՀՔՏ, էջ 152) ևն:

բ) Միջին հայերենն անհար է պատկերացնել առանց հոս, հոն (հօս, հօն)
մակրայնէրի: Հենց այստեղ ասենք, որ այս մակրայնէրը ճիշտ չէ որպես լոկ
արևմտահայ բառերի զնահանգ, ուրիշ հարց է, որ միջին հայերենի այս մակ-
րայնէրը միայն արևմտահայ բարբառներում և արևմտահայ գրական լեզվում
պահպանվեցին: Գուցէ այս հանգամանքը բանավոր հանդիսանար բուն միջին
հայերենում, ինչպես նաև միջին գրական հայերենի գոյութեան ժամանակա-
շրջանում զիմացված բարբառային տարբերութիւնների առկայութեան
հնչեկիցե, փաստ է, որ միջին հայերենով զրոյ գրեթէ բոլոր հեղինակները օգ-
տագործում են այս մակրայնէրը. ոմանք երբեմն ի նախդրով՝ ի հոս, ի հոն,
ամանք էլ առանց նախդրի՝ հոս (հօս), հոն (հօն): Այսպես, օրինակ՝ «...և
ի հոս ցուցանէ բնութիւն՝ զոր ինչ լինել կամի» (ՄՀՋՄ, էջ 135): «Ըզմէկն
անդէնիս գու տուր ու զմէկ այլն ի հոս բեղ ճարակ» (ՖրՔ, էջ 59): «Եթեամ չի
կենամ ի հոս, ուր երթամ հոն ալ չի կենամ» (ՆՔԳ, էջ 68): Ստոր բերվող օրի-
նակներում հոս մակրայնէր կիրառված է նաև առանց նախդրի. «...Հալալ ու հա-
րամ անեն՝ հոս թողու՛ն՝ ւ –ի հոն կու գրնան» (ՀԵՔ, էջ 157): «Մեղ իղճացէ՛ք՝
մի թողուք հոս» (ՄՂԲ, էջ 115): «Եւ հոս շատ կրկար և մեծ է տարել գրանա...»
(ՍԳԳ, էջ 28):

Նույն շափով և ազիլի տարածված է հոն բառը: Անա օրինակներ.

«Լաւ ի հոս աշխատիս և ի ՀՈՆ հանգչիս,

Լաւ ի հոս մեռանիս և ի ՀՈՆ ապրիս» (ՄՆՔ, էջ 145):

«Ուրախութեամբ նստին ի ՀՈՆ» (ԿԵՏ, էջ 121):

«Մարիսոջ եմ յայն սիրուն,

Ի է միտքս ի հոն՝ յուր ինք լինայ» (ն. տ. էջ 191): «...այլ դան յաւազ

կեկեցցին և ի հոն առնուն իրենց քահանայից գիտելութեամբ» (ՍԳԳ, էջ 25):

Ապա և՝ «Հոն աղօթէր զոչը օրն ի բուն» (ՆՇԲՁ, էջ 577):

«Հոն բո տերտերն կու ճորայ» (ՀՔՏ, էջ 227):

«Հինգ վեց ամիս հոն մնացիր» (ՄՂԲ, էջ 93):

«...եւ այն ծակն, որ մաղարայ է, ի հոն կեցողինն՝ դան կու շարեն... և

ինքն ի կղզու մի կու գայ, որ ի հոն բուս չկա» (ԱԱԱԱ, էջ 125) ևն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, հոս, հոն մակրայնէրը կարող են
հանդիսանալ և ի նախդրով, և՛ առանց նախդրի. շատ անգամ նույն նախա-
դասարան մեջ երկու տարբեր ձևերով. «Եթեամ չի կենամ ի հոս, ուր երթամ
հոն ալ չի կենամ» (ՆՔԳ, էջ 68): Կամ՝ «Հալալ ու հարամ անեն՝ հոս թողու՛ն
ւ–ի հոն կու գրնան» (ՀԵՔ, էջ 157):

⁵ Այլվի բառի իմաստի նշման լավ օրինակ է. բանաստեղծ իտալացի ուղեգրիչն է ազել
ճանրայի կրկնութեամբ. հայտնի է, որ զկես (ցեռ) թուրքերեն բառ է (այժմ էլ կենդանի), որ
նշանակում է քարից:

ի Բն նկատի ունենանք, որ, ըստ երևույթին, այս մակբայներն առաջացել են ի այս, ի այն ձևերից⁵, որտեղ ի նախդիրը բնականորեն պետք է դերանուններից կից գրվեր, ապա հասկանալի կլինի, որ ի հոս, ի հոսն ձևերում նախդիրը անհարկի կրկնվում է, մի երևույթ, որ հատուկ է ո՛չ միայն միջին Հայերենին, այլև նույնիսկ դասական գրաբարին:

դ) Միջին հայերենին ուրույն երանց է տալիս ոնց մակբայը: Անուշուա, սրա նախածնն է հայնց (հանց) (ԿՅՏ, էջ 193) բառը, որը լայն կիրառություն ունի միջին հայերենում, այն տարբերությամբ, որ հանց բառը միաժամանակ գրովում է զոյախանների վրա, ինչպես՝ հանց մահուան (ԿՅՏ, էջ 173), հանց հոգի (ՖրՔ, էջ 142), հանց տաճիկ (ն. տ. էջ 143) ևլն: Այստեղ ևս, կարծում ենք, պետք է կատարված լինի նույն հնչյունափոխությունը, ինչ այն-ի այն> հոս բառի մեջ: Չէ՞ որ միջին հայերենում այ-ա>ն, օ հնչյունափոխության զեպքեր կան՝ ինչպես՝ պայման>պոման, պայծառ>պոծառ:

Վերևում ասացինք, որ պատմականորեն ճիշտ չէ կարծել, թե հոս, հոսն արևմտահայ բառեր են: Այս նույն մտնեցմամբ ճիշտ չէր լինի կարծել, որ ո՛նց բառը արևելահայ գրականի և բարբառների սեփականությունն է, այլ մեր լեզվի զարգացման որոշ շրջանում առավել ընդհանուր կիրառությունը գտած բառ, ինչպես այդ ապացուցում են ստորև բերված օրինակները: Պետք է նկատել, սակայն, որ ո՛նց բառը չեն կիրառել միջին գրական հայերենով գրող մի շարք հեղինակներ: Այսպես՝ XII—XIV դդ. գրական միջին հայերենում ո՛նց մակբայը չեն կիրառել ո՛չ Ն. Շնորհալիս, ո՛չ Մ. Հեղաբեկ, ո՛չ Վ. Ալզնկյցի և ո՛չ էլ Ս. Գուսգուսապուր, Երզնկացիների մոտ սակաւ կիրառություն ունի, մինչդեռ Ֆրիքը լայն շարքով օգտագործում է: Նույնպես և՛ երկրորդ շրջանի հեղինակներից չեն կիրառել Մ. Նազարը, Ամիրզովլաթ Ամասիացին, Գ. Աղիսմաբեցին, Մ. Ղրիմեցին: Քիչ շարքով կիրառված ենք գտնում Քուրազի մոտ, մինչդեռ Հովհ. Թլկուրացին և Նազար Հովնաթանը ո՛նց բառի օգտագործումը կիրառություններ ունեն:

Հապացույց մեր ասածի բերենք օրինակներ.

«...Ձիչն ձուկն ի ջրէն հանած, նա այլ ո՛նց կենայ կենդանի» (ՀՅԲ, էջ 147):

«Ձայս շորս յիրար ո՛նց սաղեմ. ամէն մէկ յինքոն կու բաշէ» (ն. տ. էջ 161):

«Առանց նաւալարի՝ ւ առանց թևի ո՛նց ևս կացել» (ԿՅՏ, էջ 176):

«Մեր գոհանաբ յողորմածէն, թէ ի մեղատրքս ո՛նց կու գթայ» (ՖրՔ, էջ 50):

«Թէ ո՛նց խաբեց սատանայ...» (ՖրՔ, էջ 182) ևլն:

XV—XVII դդ. հեղինակներից, ինչպես ասացինք, օգտագործել են Հ. Թլկուրացին, Ն. Հովնաթանն ու քիչ շարքով՝ Քուրազը: Ահա օրինակներ՝

«Մրտիս ալ ո՛նց տամ համբեր յեր լեզուովդ ի յիս չի խօսիս» (ՆՔԳ, էջ 45):

«Ով զբեղ սիրէ ո՛նց մեռանի» (ՀՓՏ, էջ 135):

«Ո՛նց կարէ գովել զբեզ» (ն. տ. էջ 136):

«Բեզ ո՛նց մոռանամ, դալում,

ևս ո՛նց հետանամ, դալում» (ՆՇԲ, էջ 9):

«Բեզ ո՛նց թողնիմ, ո՛նց հետանամ, ո՛նց մոռանամ» (ն. տ. էջ 47):
«Նազու, ևս սիրտս ո՛նց բանդեմ» (ն. տ. էջ 38) ևլն:

դ) Գրաբարի առջ, այժմ և նույնիմաստ այլ բառերի դիմաց օգտագործված ենք գտնում (ի) հիմայ գրաբարին անծանոթ բառը, ինչպես նաև՝ նույն բառը հիմի (էլ), հիմիկ հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ «...նա ի հիմայ օրերս կու հրամայէ, որ վասն այսօր եպիսկոպոսն լիշխէ...» (ՍԳԳ, էջ 21), «նա գրած է հիմայ...» (ն. տ. էջ 34):

«Հօսկայ մերկ եմ ես հիմայ» (ՀՇԲ, էջ 229):
«Եւ հիմի պատե՛ է, որ ասեմ բանի մի բան վասն դեղերուն» (ԱԱԱԱ, էջ 24): «Հիմի ի՛նչ տես ենք» (ՎԱԱ, էջ 137):

«Հիմի գայ ծերութիւնն, որ ինք ըզմասն էր գուշակն» (ԿՅԲ, էջ 178):

«Եմ ես՛ր, բեզ վատ չեմ ասեր, դու հիմի է՛ր ես խոռվեր» (ՆՔԳ, էջ 69):

«Բաստիկ որ կրես յիմիկ, մեծամօթ և մերկ խալտառակ» (ՆՔԳ, էջ 57):

«Արի ու պրեղէ ըզմէջդ և գտիք հիմիկ թեզ ճարակ» (ն. տ. էջ 59):

«Հիմիկ ճարտար բժշկես դու...» (ՀՓՏ, էջ 193):

«Շատ դու ինձ ատեն հասեր, հիմիկ ինձ լէ՛ր ես խոռվել» (ՆՔԳ, էջ 96):

ևլն:

և) Գրաբարին անծանոթ, զուտ միջին հայերենին հատուկ է աղէկ բառը, որ առավելագույն մակբայական կիրառություն ունի: Բառս օգտագործված ենք գտնում Մ. Հեղաբեկ և Ա. Ամասիացի բժշկագիտականների, ինչպես նաև Կ. Երզնկացու մոտ: Ինչպես՝ «Ապա պարտ է բժշկաց բնեն և իմանալ աղէկ...» (ՄՀՁՄ, էջ 2): «Երբ բրտնի, ապա օժէ զմարմինն խիբի ծիթով և մարձէ աղէկ...» (ն. տ. էջ 10):

«Աղէկ մտիկ դիր ու ճանչէ...» (ԿՅՏ, էջ 195):

«Ան ատենն ժողովի կու պիտի, որ աղէկ հասել լինի ծաղիկն» (ԱԱԱԱ, էջ 21): «Ջբարինքն այսպէս ճանաչես և իմանաս, որ պիղծ լիրք էլինք չի խառնի... և աղէկ պահուի... և անվնաս տեղ գրուի, որ ի չինքն գեն շճանի ևս աղէկ մնայ» (ն. տ. էջ 24) ևլն:

դ) Կան նաև նոր մակբայներ, որոնք այս կամ այն հեղինակի մոտ են միայն հանդիպում. այսպես՝ Ամիրզովլաթ Ամասիացին հաճախ օգտագործում է լվամ (—ամբողջովին, լիովին) մակբայը, ինչպես՝ «Եւ օձն կու շարժի ևս կու թապլտի և կու ջանայ, որ խայթէ և կուտէ գինքն լվամ» (ԱԱ, էջ 38): «...Ան ատենն ժողովի կու պիտի, որ լվամ հասնի» (ն. տ. էջ 21):

է) Միջին հայերենում նոր բառեր են՝

1) հայնց, հանց, բեցկուն, հեցկուն, որ իմաստով համապատասխանում են այսպես, այդպես, այնպես բառերին: Հանց, հեցկուն բառերը միջին հայերենում ունեն նաև մակբայական կիրառություն, ինչպես՝ «...Այն բաժնեզորն հայնց կու անեն» (ՍԳԳ, էջ 30):

«Ով լինի իմաստեօն

ինք հակառակ՝ շար կամելով,

նա հանց տես, թէ լի Յուդայ» (ԿՅՏ, էջ 171):

«Յորժամ գինքն ի գետնէն հանեն՝ պիտի որ կարեն այսպէս. հանց կու պիտի, որ զկզմնարն աաբցենն» (ԱԱԱԱ, էջ 180):

«Եւ եթէ ուղենաս, որ գինքն հեցկուն ի գործ արկանես...» (ն. տ. էջ 81):

⁵ Այժմ արևմտահայ գրականում սակավ կիրառությամբ հանդիպում է նաև հող ձևը:

2) Գէնա, (= Բրբ. «նորից, կրկին») — «Գէնայ բահա՛ր, ալի բահար» (ՆՅԲ, էջ 157):

3) Քոսաւար (= Բրբ. «սեփամիտ, անհոգ») — «Կամ վանց այս սուտ կենցաղոյս բա՛նի կենսա զուն քրաւաբ» (ԿՅՏ, էջ 193):

4) Պարապար (= Բրբ. «համար») — «Հինգերորդն այն է, որ զեղին ուժն է հիանդութեան ուժն պարապար լինի» (ԱԱԱԱ, էջ 4):

Ածանցածոր ու այլ կազմութուններով փոխառված մակրայններից են՝ պէտուստ (ԿՅՏ, էջ 162), նահալս (ՆՇՔ, էջ 38), բէզուման (Ն. ա. էջ 76), ախա-տիւս (= «կատր-կատր» — ՇՔՏ, էջ 217), փառա-փառա (= Բրբ. «կատր-կատր» — ՆՇՔ, էջ 47), Եանայ-Եանայ (ՆՇՔ, էջ 118, 217) ևն:

2. Բարդ մակրայններ. — Միջին հայերենն անհամեմատ հարուստ է բարդ մակրայններով: Պետք է նկատել, որ այս մակրայններն առավել շատ նորակազմութուններ են, միայն մեր լեզվի այդ շրջանին յուրահատուկ մակրայններ: Բարդ մակրայնների մեջ ավելի այն են անհիսկական բարդութամբ կազմվածները, իսկ վերջիններին մեզ՝ նախդիրներով կապակցվող, ապա և որոշիչ-որոշչալ կապակցութամբ հանդես եկող մակրայնները:

Նախ խոսենք խոսքի մասերից բաղդված մակրայնների մասին: Սրանց մեջ ամենից շատը հենց մակրայնների բարդութամբ կազմվածներն են, ինչպես՝ սակաւ-սակաւ (ՄՇՋՄ, էջ 21, 27, 66, ՎԱԱ, էջ 124), երազ-երազ (ԳԱԲ, էջ 131), վեր-վեր (ՆՇՔ, էջ 120), մէն-մէն (ՆՔԳ, էջ 60, 70), սուկ-սուկ (ԳԱԲ, էջ 214), շուտ-շուտ (ՆՇՔ, էջ 109, ՄՇՋՄ, էջ 142, ԱԱԱԱ, էջ 15), արկուկ-արկուկ (ՆՅԲ, էջ 159), իրենիդեն (ՄՇՋՄ, էջ 69), ուշիկ-ուշիկ (ՄՇՋՄ, էջ 29), յուշիկ-յուշիկ (Ն. ա. էջ 14), տակտակ (ԱԱԱԱ, էջ 37, 145) ևն: Օրինակներ՝ «Ձմարտին մանուշակի ձիթով օձ է և նոնոֆարի, և ուշիկ-ուշիկ զմարտին մարտէ» (ՄՇՋՄ, էջ 29): «...Քան զսօսպապի ծայն էի, նա արկուկ-արկուկ բաղեցայ» (ՆՅԲ, էջ 159): «Եւ Ես՛ր, իսզճա՛ր քո կերտոյդ, քո զերտոյդ մէն-մէն կենարտոյ» (ՆՔԳ, էջ 60): «Եւ այն որ այժմայնի գէջ ցեղն է, և բորոտ, և սպիտակգուն, և տակտակ, մէկ մէկի վերայ» (ԱԱԱԱ, էջ 37) ևն:

Ածականների բարդութամբ կազմված մակրայններն առաջանում են միայն որակական ածականներից, ինչպես՝ բարկ-բարկ (ՅՔՐ, էջ 111, ՆՅԲ, էջ 225), իշ-իշ (ՄՇՋՄ, էջ 33, 43, 65, ՆՔԳ, էջ 64), պինդ-պինդ (ՆՇՔ, էջ 120), տափ-տափ (ԱԱԱԱ, էջ 132), նօսր-նօսր (ԱԱԱԱ, էջ 71), յերկան-յերկան (ԱԱԱԱ, էջ 97), փոքր-փոքր (ՎԱԱ, էջ 14), շար-շար (Ն. ա. էջ 18), ծակ-ծակ (Ն. ա. էջ 90) ևն:

Օրինակներ՝ «Ձօրն կերտեում ասնէք,

...նաև բարկ-բարկ ծիծաղէիք (ՅՔՐ, էջ 111),

«...Պինդ-պինդ կանչեմք. «Ձի ի տարնչեան» (ՆՇՔ, էջ 120) ևն:

Գոյականներով կազմված մակրայններ՝ ժամ-ժամ (ՄՇՋՄ, էջ 16, ՆՔԳ, էջ 102), կտոր-կտոր (ԱԱԱԱ, էջ 123), կում-կում (ՄՇՋՄ, էջ 44, 51), ծին-ծին (= «կետ-կետ» — ԱԱԱԱ, էջ 133), դաս-դաս (ՎԱԱ, էջ 43), երես-երես (Ն. ա. էջ 90), մաս-մաս (ՆՇՔ, էջ 111): Իսկ շարվարով («նստից շարվարով» — ՆՇՔ, էջ 210), յօրէօր (ՅՔՐ, էջ 87), տաշտար (ՅՔՐ, էջ 201) բառերը կազմված են առաջին գոյական բաղադրիչի հոլովված ձևով:

Թվականներով կազմված մակրայններ են՝ մէկ-մէկ (ՆՅԲ, էջ 158), մին-մին (ՄՇՋՄ, էջ 55):

Կան նաև բայահիմքերով կազմվածներ՝ վազ-վազ (ՆՇՔ, էջ 112), օլոր-օլոր (ՆՔԳ, էջ 68): Օրինակներ՝ «Առաքելից եզար դու վազ-վազ» (ՆՇՔ, էջ 112): «Կուպիկ է օլոր-օլոր, քո բերանդ է հիքր ու բոյսր» (ՆՔԳ, էջ 68):

Անհամեմատ շատ են արմատի կրկնութամբ և դրաբարյան սու, գ, բնդ, բառ, ի նախդիրներով բաղդված մակրայնները. այլընտայ (ՎԱԱ, էջ 131), միբսամիւռէ (ՄՇՋՄ, էջ 5, ՎԱԱ, էջ 137), օրստօրէ (Ն. ա. էջ 47, 65, ՅՔՐ, էջ 135), փախիփախ (ՆՅԲ, էջ 176), մանիման (ԿՅՏ, էջ 117), բացիրաց (ՆՇՔՊ, էջ 583), երեղեղ (ԱԱԱԱ, էջ 96), գատիգատ (ՄՇՋՄ, էջ 37), կարընդկար (ՆՇՔՊ, էջ 576), ինճըստիճն (ՄՇՋՄ, էջ 15), մէրեղմէր (ՄՇՋՄ, էջ 16, 48, 105), յետիյետ (ՎԱԱ, էջ 164), օրգաուր (ՅՔՐ, էջ 42), խիտախիտ (ՄՇՔ, էջ 133) ևն:

Օրինակներ՝ «Այժմ ցուցանեմ և ասեմ զնշաններն և գտածումն և զքերչկութիւնն զատ ի գատ, զամէն մէկ» (ՄՇՋՄ, էջ 37):

Ոչխար էի ի բուն փարախ,

Ի նա մտարած ևս փախիփախ» (ՆՅԲ, էջ 176):

«...Ու երթայր կալընդկար ի տուն» (ՆՇՔՊ, էջ 576) ևն:

Միջին հայերենում շատ են տարբեր բաղադրչներով և ի նախդիրով բարդված մակրայնները: Այստեղ, անշուշտ, առաջին հերթին պետք է խոսել (ի)վայր, (ի)վեր մակրայններով կազմված բարդութունների մասին, ինչպես՝ ձովնիվայր (ԿՅՏ, էջ 200), դարիվայր (ՆՇՔ, էջ 137), երեսնիվայր (ՆՇՔ, էջ 170, ՅՔՐ, էջ 26, ՆՔԳ, էջ 91, ԱԱԱԱ, էջ 116), երեսդիվեր (ՇՔՏ, էջ 170), ծաղիկնիվեր (ԿՅՏ, էջ 150), յետնուցնիվեր (ՎԱԱ, էջ 139) ևն. ապա նաև՝ (ի)բուն բաղադրչով բարդվածների մասին. օրցիրուն (ՆՇՔՊ, էջ 577), զօրցիրուն (ՅՔՐ, էջ 25, 205, 216, 229, ՇՔՏ, էջ 127, ՆՅԲ, էջ 143, 148), գիշերսիրուն (ՆՔԳ, էջ 54) ևն:

Օրինակներ՝ «Ձին զօրցիրուն մարզըն խորհի, Գիշերն ամէնըն խափանիս» (ՅՔՐ, էջ 25). «Այս ծովական գիշերսիրուն՝ ևս երկու շրջան մանեցի» (ՆՔԳ, էջ 54): «Անպատող ծառ ևս դարիվայր» (ՆՇՔ, էջ 137) ևն:

Կից նախդիրով զործածվող մակրայններից առավել հաճախ հանդիպում է նորակազմ զօրն (= «մարող օրը») բառը, ինչպես՝ «Ձօրն ևս ի իւր սէրն կենամ» (ԿՅՏ, էջ 163). «Ձօրն աղաչիլ պիտի զաստուած, որ գիտութեան հոգի մեզ տայ» (ՅՔՐ, էջ 47). Շատոց խոստանայ հանգիստ ու պահ՛կ զօրն երբմանի» (ՄՆԲ, էջ 125) ևն: Առ նախդիրով կազմված մակրայններից են՝ առուն (ՄՇՋՄ, էջ 2, ԳԱԲ, էջ 112), առամայն (ՄՔԳ, էջ 68, ՅՔՐ, էջ 76), առանին (ՄՔԳ, էջ 32): Կան նաև ի նախդիրով կազմված մակրայններ. իգուր, ի պակասն (= «անվազն»). «Յայս տեղս օրէնքս դժար սաստ է հրամայել: Կի գրել է, որ մեռի, կամ ի պակասն՝ դձեռն կտրեն» (ՄՔԳ, էջ 52): «...Որ դրամ ըջուն կամ դրամ հարկեն անխեղճ առ պարտութիւնն զձեռն կտրեն ի պակասն» (Ն. ա. էջ 64):

Որոշիչ-որոշչալ կցական բարդութամբ կազմված մակրայններից են՝ յայցժամ (ՆՅԲ, էջ 144, ԿՅՏ, էջ 122, ՄՔԳ, էջ 22), յուժամ (ՄՇՋՄ, էջ 10, 12, 22, ՄՆԲ, էջ 111, ՇՔՏ, էջ 155), այսօր, պարզերես (ՆՅԲ, էջ 152), ամօրերես (Ն. ա. էջ 231), ալլէ՛ (ի) մէկտեղ (= «միասին») նորակազմ, շատ կիրառութուն ունեցող բառը, ինչպես՝ «Մէկտեղ ետք, մէկտեղ նստաք, ան ժամանակն ո՛ւր է հիմայ» (ՇՔՏ, էջ 217): «...Շնչգուն սիրելի շարկամ մէկտեղ ս՛վ իսկի տեսել է» (ՆՅԲ, էջ 162): «Յուրտ է. արի մէկտեղ պտուկներ, Որ տարանանք, գինովանանք» (ՆՇՔ, էջ 38) ևն:

Ան ժխտական մասնիկով կազմված զրարարյան անդադար (ՆՅԲ, էջ 159, ԿՅՏ, էջ 121, 124, 192), անյազաղ (ՍԳԳ, էջ 61, ՎԱԱ, էջ 180), անբաց (ՆՅԲ, էջ 152) և այլ մակրայինների հետ ունենք նորակազմ անդուր (=անդադար) մակրայը. ինչպես՝ «Անդուր 'ւ անդադար կու առնէ ֆրբեաթ» (ԳԱՔ, էջ 194): «Փորոզ ծակվի, որբաս անդուր» (ՆՅԲ, էջ 140):

Այլևայլ կազմակերպություններով միացած՝ անիսկական բարդությամբ կազմված մակրայներ են նաև՝ անդևանդ (ՎԱԱ, էջ 153), խեռոխառ (ԿՅՏ, էջ 184), ցիբեցան (ՄՂԲ, էջ 145), ևս Գան գես (ՎԱԱ, էջ 108), զիշեր ու ցեւեկ (ԿՅՏ, էջ 159, ՎԱԱ, էջ 151), տիս և զիշեր (ԿՅԲ, էջ 173, 177), յաւուս միշա (ՆՅԲ, էջ 223), աղիզորմ (ն. տ. էջ 228), յետույտաղ (ԱԱԱԱ, էջ 13) ևն:

Իսկական բարդությամբ կազմված մակրայները բիշ են. զրարարյան միարան (ՄՆԲ, էջ 156), միատեղ (ՆՆՂ, էջ 51), բարձրաձայն (ՄՆԲ, էջ 102, ԳԱՔ, էջ 233) մակրայների հետ մեկտեղ ունենք իսկական բարդությամբ նորակազմությունների՝ կիսկատար (ՄՆԲ, էջ 158), խիլազեաց (ՆՅՏ, էջ 149), միատեղ (ՍԳԳ, էջ 81), միալար (ՖրԲ, էջ 179) ևն: Օրինակներ՝ «Բու թէ անցնել տայ ընդ բարն՝ միտակ վճարէ տէրն (ՍԳԳ, էջ 81): «Ենայ մասն յանկարծակի հասաս յետեկանց, Չինս թատպիր ունէի, կիսկատար մնաց» (ՄՆԲ, էջ 158): «Ենիլազեաց ի վայր մնացի» (ՆՅՏ, էջ 149): «Ո՛վ կարէ պատմել միալար» (ՖրԲ, էջ 179):

3. Ածանցավոր մակրայներ. — Հայերենն ընդհանրապես, ուստի և միջին հայերենը հարուստ է ածանցավոր մակրայներով: Հայտնի է, որ մակրայակերտ ածանցներն ըստ իրենց տեսակարար զոնի բաժանվում են երկու մասի. ա) բուն մակրայակերտ ածանցների՝ -(ա)բար, -(ա)լպէս, -օրէն, -(ա)գին. Բ) ածանցների, որոնցով լրացուցիչ կիրպով կազմվում են նաև մակրայներ (—ախի, —ովիմ, —ին ևն):

Ա. Բուն մակրայակերտ ածանցներ. — Այս մակրայակերտ ածանցներով կազմված մակրայների համեմատությունը ցույց է տալիս, որ միջին հայերենում -(ա)բար ածանցն ավելի կենսունակ է, քան մյուսները: Այսպես՝ միջին հայերենի երկու շրջանի 10 հեղինակի ստեղծագործությունների մեջ, մեր հաշվումներով, -(ա)բար մասնիկով կազմված են 30 մակրայներ՝ տոնանկարար (ՄՂԲ, էջ 91), անկարգաբար (ն. տ.), անբնամար («անբնամար բխումն» — ԳԱՔ, էջ 107), անհատարար (=անհատնում կերպով — ԳԱՔ, էջ 143), արիարար (ն. տ. էջ 125), աստուածարար (ԿՅՏ, էջ 226), բունարար (ՄՂԲ, էջ 154), գազանարար (ՄՂԲ, էջ 90), գազարար (ՍԳԳ, էջ 37, ԿՅՏ, էջ 200, ՎԱԱ, էջ 11), երկրորդարար (ՄՂԲ, էջ 91), գորեղարար⁶ (ՄՂԲ, էջ 154), թշնամարար (ԿՅՏ, էջ 193), թագարար (ԳԱՔ, էջ 234), խոհնամարար (ՄՂԲ, էջ 154), ծածկարար (ԿՅՏ, էջ 201, ՄՆԲ, էջ 139, ՎԱԱ, էջ 34, 126 ևն), ծառայարար (ԿՅՏ, էջ 226, 227), կարգաբար (=կարգով — ՄՆԲ, էջ 128), հեղարար (ԿՅՏ, էջ 194, ԳԱՔ, էջ 122), հանդարտարար (ՎԱԱ, էջ 117), համաստարար (ՍԳԳ, էջ 15), մալեգեմարար (ՆՅԲ, էջ 177), միարար (ՖրԲ, էջ 180), յանկարծարար (ՄՆԲ, էջ 139), նենգաբար (ՎԱԱ, էջ 12), ողորմարար (ԿՅՏ, էջ 119), սիրելարար (ՍԳԳ, էջ 24), վայրաբար (=ստոր ձևով — ՄՆԲ, էջ 131, ՎԱԱ, էջ 20), վիճարար (ՄՂԲ, էջ 154), տղայաբար (ՆՅԲ, էջ 194), բարունարար (ԳԱՔ, էջ 155, 162), քննադարար (ՄՂԲ, էջ 154): Օրինակներ՝

⁶ Ընդգծված մակրայները «Առնետուն» շխն:

«Ջգրեայ ընկալ խոնմարար,
Անցեալ աուրբբ բանք վիճարար.
Ջոր աուրկա ԲնՈՂԱՔԱՐ,
...Յես ալտորիկ ՋՐԵՂԱՔԱՐ,
Կայսրն իմբօք բազմահամար
...Քան գայս աւելն է բոնբար (ՄՂԲ, էջ 154—155):
«Փազանբար կաննէ սազաշ
...Թէ հարցանես Նուրպալ ի տար
Կամ ղոշանէլ անկարգաբար
Եւ թէ կրկնես երկրորդաբար
Ահնդ գոչէ, քան զգիւհա՛նար» (ՄՂԲ, էջ 91) ևն:

Նույն հեղինակների մոտ -(ա)լպէս մասնիկով ընդամենը 11 մակրայ ենք գտնում. անբնարդալպէս (ՎԱԱ, էջ 5), գեղեցկալպէս (ԿՅՏ, էջ 151, 201), դառնալպէս (ՎԱԱ, էջ 54, 125), ծառայալպէս (ԳԱՔ, էջ 178), հոգեպէս (ԿՅՏ, էջ 184), միալպէս (ՍԳԳ, էջ 52, ՎԱԱ, էջ 93), յայտնալպէս (ԿՅՏ, էջ 181, ՄՂԲ, էջ 94, ԱԱԱԱ, էջ 61), նմանալպէս (ՄՆՄՄ, էջ 11), վայելալպէս (ԿՅՏ, էջ 221), սիրալպէս (ՄՆԲ, էջ 121), փութալպէս (ՎԱԱ, էջ 62): «Առնետնի» հետ համեմատությունից պարզվեց, որ բոլոր այս 11 մակրայներն էլ զրարարից վկայված են: Այսպիսով, -(ա)լպէս ածանցով կազմված և ոչ մեկ նոր մակրայ չկա մեր վերոհիշյալ հեղինակների մոտ:

—Օրէն ածանցով կազմված մակրայներն ընդամենը հինգն են. արբայօրէն (ԳԱՔ, էջ 143, 144), գայլօրէն (ՄՂԲ, էջ 149), համօրէն (=ամբողջովին — ՍԳԳ, էջ 56), համբուսօրէն (ԳԱՔ, էջ 190), բարունօրէն (ՄՂԲ, էջ 153):

Ինչպես երևում է վերին ընդգծումներից, —օրէն ածանցով կազմված մակրայներից միայն երկուսը չեն վկայված զրարարից: Գրանք են՝ գայլօրէն, համբուսօրէն.

«...Կրճտեալ ատումամբ իբր զլար գազան
Գիշատել զ[գ]առիես գայլօրէն սպառնան» (ՄՂԲ, էջ 149):
«Ճանկամ տեսանել ըզբեզ իմ սլրասի փտապ լուսեղէն
Ի իսնցից երբոս տաղիս, գրեզ գովմի համբուսօրէն (ԳԱՔ, էջ 190):

—Ազին ածանցով ունենք ընդամենը 4 մակրայներ. արտասուագին (ՆՅԲ, էջ 228), որորմագին (ԿՅՏ, էջ 229, ՄՆԲ, էջ 151), աստկագին (ԳԱՔ, էջ 114) և տրամագին (ն. տ. էջ 118): Սրանք բոլորն էլ վկայված են նաև զրարարից:

Այսպիսով, —ալբար ածանցով կազմված մակրայները կրկնակի շափով ավելի են, քան մնացած երեք մակրայակերտ ածանցներով կազմվածները միասին վերցրած: Եթե սրա վրա ավելացնենք նաև այն հանգամանքը, որ այդ ածանցով կազմված մակրայներից ութը զրարարից չեն վկայված, հասկանալի կլինի, թե —ալբար մակրայակերտ ածանցն ինչքան ավելի կենդանի է, քան մյուս ածանցները:

Մի բացատրություն. բոլոր զնայբերում, երբ նշում ենք մակրայի՝ զրարարում վկայված լինելը, անշուշտ, չենք ուզում ասել, որ մեր հեղինակները այդ մակրայները որպես նախնայաց լեզվից ուսած բառեր են կիրառել, բայց, այնուամենայնիվ, մեզ համար առավել հետաքրքրություն են ներկայացնում նորակազմությունները, որոնք մասնիկների կենդանության լավ ապացույց են:

Ինչ վերաբերում է մեր մակերայնկերտ ածանցների իմաստային ազդե-
ակցությունը, ապա պետք է առև, որ -(ա)բար, -(ա)պլս, -օրէն ածանցները
արտահայտած իմաստով իրար մտա են. դրա լավագույն վկայությունը ինչ-
պես դրաբարում, այնպես էլ միջին հայերենում նույն բանի վրա վերահիշյալ
ածանցների ազնվացման փաստն է: Այսպես, միջին հայերենից կարելի էր նշել
հետևյալ զուգահեռները. ծառայարար-ծառայապլս, բարոնարար-բարոնօրէն
և այլն. մյուս կողմից՝ զրաբարի համեմատապես մակերայի դիմաց միջին հայերենի
համեմատօրէն նոր մակերայը կին:

Բ. Ինչպես վերում նշեցինք, միջին հայերենում ունենք նաև -ալի, -ովին
և -ին վերջավորություններով բիշ թվով մակերայներ: Գրանք են՝ -ալի-յան-
կարծակի (ԿԵՏ, էջ 146, 167, 228, 190, ՖրՔ, էջ 47, ՄՆՔ, էջ 158, ՀԹՏ, էջ
148, 162, ԱԱԱԱ, էջ 30) կին, ստանձնակի, փութանակի (ՆՀՔ, էջ 135), բոլոր
3-ն էլ վկայված դրաբարից. -ովին—գլխովին. «Տեսայ...զոմանս, որ գլխովին
կրեանս, ամենի վասն ազահոթեան» (ՄՆՔ, էջ 117). -ին—Այս վերջավորու-
թյամբ ունենք կրկին (ՖրՔ, էջ 122), վերստին (ՄԳԳ, էջ 42, ՀՆՔ, էջ 267, ՖրՔ,
էջ 161, 203 կին), ամեննին (ՄՀՂՄ, էջ 38, ՍԳԳ, էջ 24) և կշտին նոր բառը,
որ հանդիպում է Հովնաթանի մոտ. «Գինոյ կուծն կըշտին քրցեց» (ՆՀՔ, էջ
141): Ըստ երևույթին —որ ածանցով է կազմված նաև ողջուք մակերայը, որ
զորածոված ենք գտնում Ամիրդովլաթ բժշկապետի մոտ. «Անգլնի... թէ
ողջուք ճղքես և ի վերայ կարճահարին դնես, օգտէ» (ԱԱ, էջ 45):

4. Քերականական ձևերից կազմված մակերայներ.—Միջին հայերենում
գտնում ենք բացառական և զործիական, մասամբ էլ՝ հայցական հոլովներից
կազմված մակերայներ: Պատճառը պարզ է, գոյականի կամ այլ խոսքի մասի
հոլովված ձևից անցումը մակերայի կառուցում է նախադասության մեջ բառի
ունեցած շարահայտական կիրառությունը և բառաձևի քերականական կազ-
մությունը մթազնմամբ. այսպես՝ հայտնի է, որ սակավ մակերայը առաջացել է
զրաբարում՝ սակ (—լափ, օրէնք, կերպ) բառի զործիական հոլովի պարագա-
յական կիրառությունից: Եղևիկ Կողբացու «Եզձ աղանզոց» աշխատության
«...խկ Որմիզդ վասն նորա յս՞ր սակս առէր» (II, Ե) նախադասության մեջ,
թվում է, սակ բառն օգտագործված է որպես գոյական, մինչդեռ «Վարյիկ մի
ես, սակալիկ մի ես կալցիս ժոյժ» (Բուզանդ, ՊԷ, IV, ՄԵ) նախադասության մեջ
սակալիկ մի (զրբ. սակ+ալ) բառի մեջ մթազնմված են կ՝ սակ արմատը, կ՝ ալ
զրաբարյան եզակի զործիականի վերջավորությունը: Նույնպես և —ուստ վեր-
ջավորության բառերի մեջ՝ հետուստ, վերուստ, մթազնմված է նախազրաբար-
յան բացառականի —ուստ վերջավորությունը:

Այսպիսով, բացառական ու զործիական հոլովաձևերը կարող են վերած-
վել մակերայների, որովհետև հենց այդ հոլովաձևերով արտահայտված պա-
րագայական կիրառությամբ բառերն են ավելի ազնվապես լավ մակերայների
կիրառության հետ: Այս տեսակետից հետաքրքրական է, որ արդի հայերենում
ներգոյական հոլովից կազմվեցին բուրբովին նոր մակերայներ՝ հերկալում(ս),
հեռավ, հեռազայում, հիմնակալում, մինչդեռ սեռական հոլովից և ոչ մեկ
մակերայ չառաջացավ, քանի որ սեռական հոլովը նախադասության մեջ ստու-
յողային հետ չի հարաբերում, պարագայական կիրառություն չունի:

Միջին հայերենում ինչպես հայցական, այնպես էլ բացառական ու զոր-
ծիական հոլովաձևերից կազմվող մակերայների մեջ կան շատ նորակազմու-
թյուններ, որոնց կողքին օգտագործվում են նաև զրաբարյան կազմույթուն-

ներ: Բացառական հոլովաձևով ունենք (աշխատել ենք առավել չափով նոր
կազմությունները տալ). յերեսաց (=առ երես—ԿԵՏ, էջ 193), հետին (ՄՀՂՄ,
էջ 41), յետևյալ (ն. ա. էջ 42), յանօրուց (ն. ա. էջ 84, 86, ԱԱԱԱ, էջ 32, 88),
անապեց (ն. ա. էջ 160, 108), ի վերուստ (ՄՆՔ, էջ 116), վաղին (ՄՆՔ, էջ
148), հիմնէ (ԱԱԱԱ, էջ 94), հետուստ (ԳԱՔ, էջ 234), առաւուսուց (ՆՀՔ, էջ 18,
19, 24), աստուստ (ՄՂՔ, էջ 150), յետևոց (ԱԱԱԱ, էջ 60, ՎԱԱ, էջ 184),
վաղունէ (ն. ա. էջ 184, 191), ի սակայն (ՎԱԱ, էջ 172): Թվում է, որ ընդ-
գրծվածներն անվիճելիորեն նոր կազմություններ են: Այսպես, օրինակ, հիշա
է, զրաբարն ունի երեսաց բառը, բայց ոչ մակերայական, այլ կապական բառի
իմաստով: Այդ կարելի է պարզել հետևյալ երկու օրինակների համեմատու-
թյունով.

«Ապա իրրև նսես... Փառանձեմ... հանգրծ նորօք դիմաց եմուս ի բերդն
Արտագիրից... յերեսաց (=երեսից, պատճառով) զօրացն Պարսից» (ՓՔՊԷ,
IV, ՄԵ):

«Զով սիրով ևս բնգունիմ
...շնա յետև ինք յերեսաց (=առերես)
Յուցնէ դիր սէրն ու անկատար» (ԿԵՏ, էջ 193):

Օրինակներ մյուս նորակազմություններով. «Ի յառաջին օրն տուր կէս
իտր և հետէն յանցուր» (ՄՀՂՄ, էջ 41): «Յետևյալ կերակուր տուր թաղթ և
մաշ...» (ն. ա. էջ 42): «Եւ տուր յամեն որ չորս նուկի յանօրուց» (ն. ա. էջ
54): «Եւ այն խոցն, որ ի գլխուն լինի՝ հիմնէ ողջացնէ» (ԱԱԱԱ, էջ 94):

«Առաւուսուց ծոցիդ վարդն կու փոփի» (ՆՀՔ, էջ 18):
«Առաւուսուց երկնից ցօզն կարմիր վարդի վրայ մազած» (ն. ա. էջ 24):
«Վերնական օրինաց լինիս դու հմուտ,
Վաղին օրն առնենն գտնուս քեզ ի մօտ» (ՄՆՔ, էջ 148):

Գործիական հոլովով կազմված զրաբարյան վաղին (ՀՆՔ, էջ 172),
սակա (մի) (ՀՆՔ, էջ 151, 152, ԿԵՏ, էջ 182, ՄՀՂՄ, էջ 26 կին), բնա (բուն+
ալ) (ՆՇՔԲ, էջ 577, 579, ՀՆՔ, էջ 146, 198, 206 կին), շուտով (ԿԵՏ, էջ 163,
194, ՄՀՂՄ, էջ 14, 17, 20, ՀԹՏ, էջ 146, ՄՆՔ, էջ 104, 130 կին), բարով
(ՄՀՂՄ, էջ 137)՝ և այլ մակերայների կողքին ունենք նորակազմ՝ մուրառով,
ամենով (ՄՀՂՄ, էջ 71, 89, 123, 131), ցորեկով (ՆՇՔ, էջ 50, 54) մակերայ-
ները. ինչպես՝ «Յէ հեծնուն ի ձի, ոչ դահեն մուրառով» (ԿԵՏ, էջ 212):
«Երնէկ ևս անոր կուտամ որ ստեր իւր եարն է փայտեր...
Առեր ի պաղչան մտեր, ցորեկով գրչիկն է պաղչեր» (ՆՇՔ, էջ 50):
«Ամենով (=ամեն կերպ) դժով շուրս արդիլ...» (ՄՀՂՄ, էջ 71):
«Ամենով (=ամեն ինչով) օգտէ մեծ թիրեարք» (ն. ա. էջ 123):
«Ամենով (=այս բոլորով, ի վերա այս բոլորի (այս չեմբերոյս ստա-
ծումն այն է՝ որ յառաջ զգուխքն... սրբէ)» (ն. ա. էջ 131):

Հայցական հոլովից կազմված մակերայները հիմնականում զրաբարյան
են, ինչպես՝ ի դուս (ՀՆՔ, էջ 155, ԿԵՏ, էջ 200), ի նես (ՀՆՔ, էջ 159, 162),
ի յետ (ՀՆՔ, էջ 163), ի վայր (ՀՆՔ, էջ 155, 156, 183 կին), ի վեր (ՀՆՔ, էջ 170,

¹ Մենք սրանք զրե ենք պարզա՝ մակերայների շարքում, քանի որ միջին հայերենի լեզվա-
կան միջոցներով կազմված չեն:

Բայրական թերթում ձևերից կազմված մակրայնների շնք հանդիպել, միակը դարձնալ բան է (ՆՁԲ, էջ 156, 178, ՄՀՁՄ, էջ 14, 37 կն), որը դրաբարում էս մակրայն էր. հմմտ. «Դարձնալ սանն. «Զբարսմունսն... ցորդին իր ցլմմիզից ետ» (ԵԿԵԱ, II, Ե): Ահա այս պատճառով մենք զարձնալ մակրայրը որը ենք պարզապես մակրայնների մեջ:

5. Կնարագրական մակրայներ.—Որևէ լեզու կամ նրա մեկ ստանձին շքրչանք ինչպես էլ հարուստ լինի արմատական, ածանցազոր թև ալլ կազմությամբ մակրայներով, այնուամենայնիվ, անկարող է այդ բռտերով գոհացնել մարդու խոսքը: Ինչպես նույնիսկ հոլովներով հարուստ լեզուներում կան կապերի և այլ միջոցներով հոլովների գրանորման բազմաթիվ նրբություններ ու կրանդներ, այնպես էլ ամեն լեզու ունի իր նկարագրական կազմությամբ խոսքի մասերը: Անշուշտ, ամեն երևույթ ունի իր պատճառը. երբ ի մտտ ենք բննում խնդիրը, նկատում ենք, որ, օրինակ, միջին հայերենում նկարագրական կազմությամբ շատ մակրայներ առաջ են եկել մեր լեզվի տվյալ շքրանում գրաբարյան համարժեքների կորստյան, ավելի ճիշտ՝ կենդանի կիրառություն չունենալու հետևանքով: Այսպես, օրինակ՝ միջին հայերենում ունենք յամենայն պահեմ, մինչև հիմա, կետուց յետ, յայն պահեմ (=անմիջապես) նկարագրական մակրայները և անոր համար որ (=որովհետև) շաղկապը: Կարծում ենք, որ սրանք նոր լեզվամտածողության հետևանք են՝ փոխարինած գրաբարյան հանապաղ, ցայմմ, ցարդ, ապա, այնուհետև, վաղվաղակի մակրայներին և Գանգի շաղկապին: Մեր ասածը, անշուշտ, բացարձակ իմաստով շղեպ է հասկանալ. մենք դիտենք, որ գրաբարն ինքն էլ հարուստ է նկարագրական մակրայներով, և միջին հայերենով գրող մեր հեղինակներից շատերը նույնիսկ քաջ դիտերն գրաբարը, սակայն ստեղծագործությունների մեջ անպայման պետք է երևար ժամանակի կենդանի խոսակցական լեզուն կամ բարբառը: Չէ՞ որ ամբողջ միջին հայերենն էլ հենց այդպիսի լեզվական իրողությունների մի ամբողջություն է:

Ինչևիցե, մեր նպատակը նման մանրագնին հետազոտություն կատարելը չէ: Նկատենք, որ ստորև բերվող նկարագրական մակրայների մեջ կան հենց գրաբարյան կազմություններ ևս: Մյուս կողմից՝ հայտնի է, որ նկարագրական մակրայները անիսկական բարդություններ են, մեծ մասամբ հարադրություններ, ուստի և՛ անկայուն կապակցություններ, այնպես որ կապակցություն ընկալումն ու կիրառական իմաստը այդպիսի բառերը խմբավորելու հարցում մեծ դեր է կատարում: Օրինակ, ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում, ունենք սրտի մտով նկարագրական մակրայը. ինչո՞ւ մակրայ. որովհետև ստորև բերված նախադասություններում այդ կապակցությունը այլ կերպ չի կարելի ընկալել, չի կարելի բազադրիչները որպես մեկը մշտապես անկախ բառ ընկալել. «Ապա իբրև հոտե թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն զնորին բարբարոսաց, որք սրտի մտով եկեալ էին ի վաստակ արքունի... ուրախ լինէր...» (Նդիշե, I, յեղ.):

«Ճակոր, զարթի՛ր ի քնոյ մեղաց,
Սրտի մրտով զակապեղջ բաց» (ՆՁԲ, էջ 172):

Միջին հայերենում ևս նկարագրական մակրայները կազմված են լինում երկու և երեք բազադրիչներով: Մեր հաշվումներով, երկու բազադրիչով կազմված նկարագրական մակրայները ետակի ավելի են, քան երեք բազադրիչով կազմվածները: Երկու բազադրիչով կազմված նկարագրական մակրայներից են՝ նոյն ժաման (ՎԱԱ, էջ 148, 169), սրտի մտք (ՆՁԲ, էջ 172), յամենայն պահեմ (ն. տ. էջ 198), հազար բեան (ԿԵՏ, էջ 159), շուտով քեզ (ԿԵՏ, էջ 211), զեմ յանդիման (ՆՇԲՁ, էջ 577, ՎԱԱ, էջ 155), ալլ աւելի (ՄՀՁՄ, էջ 8, 13, 22, 62, ՍԳԳ, էջ 18 կն), ես առաւել (ն. տ. էջ 35, ՍԳԳ, էջ 19, ՆՁԲ, էջ 80 կն) կամայն ակամայն (ՅրՔ, էջ 81), մինչև հիմա (ն. տ. էջ 105), միշտ յարակալ (ն. տ. էջ 106), մէկ ալլ (=նորից, ՅրՔ, էջ 196), մէկ բեան (ՆՁԲ, էջ 24), կետուց յետ (ՆՁԲ, էջ 87), տեղով-առնով (ն. տ. էջ 184), յայն պահեմ (=անմիջապես—ԱԱԱԱ, էջ 39, 126, 171), ամենայն դիմաւ (ն. տ. էջ 102, 108, 118, 173) կն: Օրինակներ. «Ատ Պատէհին, թէ այն որ վայրի է՛ ուսով է ամենայն դիմաւ քան զածուցն» (ԱԱԱԱ, էջ 108): «...Աձէ ի յարանքն և ի ձռներն և նա, յայն պահեմ զծածուկ մարմինն շարժել և պղզել» (ն. տ. էջ 39):

«Երթամ, աղաչեմ, բալբի բուհամ անի, զուրն բանայ,
Մէկ բեան ինձ հետ խօսի, որ էրված սիրտս հովանայ» (ՆՁԲ, էջ 24):
«Երբ անձը մտաւ սլաքաւ նետրն,
Էնտուց յետ կուզեմ՝ խրատ տա վարդապետըն» (ՆՁԲ, էջ 87):
«Յամենայն առկն, ի յուս ըզբեզ ունիմ» (ՆՁԲ, էջ 198) կն:
Երբ բազադրիչով կազմված մակրայներից են՝ հետ մի ալլ (ԿԵՏ, էջ 190), օր մի երկու՞ (ն. տ. էջ 25), օր քան զօր (ն. տ. էջ 34, 65), մէկ հետ մէկի (ն. տ. էջ 36, ՆՁԲ, էջ 167), փորբիշատէ (ՍԳԳ, էջ 27, 32), ես քան զես (ՎԱԱ, էջ 108, ԳԱԲ, էջ 111) կն: Օրինակներ. «Եւ օր մի երկու՛ շաբարով փոխինա տակ» (ՄՀՁՄ, էջ 25):

«...ննզրի յայն սուրբ տեսոյն,
որ հետ մի ալլ (=վերստին, նորից) աւ իս նա գայ» (ԿԵՏ, էջ 190):
«Մէկ հետ մէկի (=հաջորդաբար, մեկը մյուսի ետևից) մրգուրք (=մրգերը) հասած» (ՆՁԲ, էջ 167) կն:

ՄԱԿՐԱՅՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՍՏ ԽՄԱՍԻ

Արդի բերականագիտության մեջ մակրայների տեսակներն ընդունված է որոշել ըստ նրանց ցույց տված հատկանիշի, այն է՝ թև տվյալ մակրայը խոսքի մեջ հիմնականում ի՞նչ իմաստ է արտահայտում: Ընդունված է մակրայները խմբավորել հետևյալ չորս տեսակների մեջ. տեղի, ժամանակի, ձևի և շափի:

Պետք է նկատի ունենալ, որ խոսքը տվյալ մակրայի՝ լեզվի մեջ ունեցած առավել ընդհանուր կիրառության մասին է, իրականում շատ քիչ մակրայներ կայուն կերպով պիտի կարողանային այս կամ այն տեսակի մեջ մնալ: Ծատ մակրայներ, ըստ իրենց կիրառության, մի դեպքում կարող են արտահայտել

՝ Ընդգծվածները, թվում է, նորակազմություններ են
՝ Ըստ երևույթին, զերեկամ մի ձևի հետևողությամբ կազմված:

ձեկ հատկանիշ, մյուս դեպքում՝ ձեկ ուրիշ հատկանիշ, ըստ այնմ էլ՝ ավելա կիրառությունը համարվել այս կամ այն տեսակի մակերայ: Օրինակ՝ միջին հայերենը Բիշ անվան-մակերայի կրկնությունը ունի Բիշ-Բիշ մակերայ, որը, թվում է, չափի հատկանիշ պիտի արտահայտի, և իսկպսես՝ «Բայց Բիշ-Բիշ թող խմէ» (ՄՀՁՄ, էջ 43) նախադասության մեջ այն չափի մակերայ է: սա-կան՝ «Փիշ-Բիշ նա խմեր կուզայ, դրարի լույսն ի հետ կու բերէ» (ՆՔԳ, էջ 64) նախադասության մեջ Բիշ-Բիշ մակերայն ավելի շուտ ձեկ հատկանիշ է արտահայտում, ուստի ձեկ մակերայ պետք է համարել: Այսպես և՛ էթն «ժամ-ժամ դիմ դարիպսիթիւնս ևս յիշեմ ու նստիմ ու լամ» (ՆՔԳ, էջ 102), նախադասու-թյան մեջ ժամ-ժամ մակերայը դեռ կարող է ըմբռնվել ժամանակի հատկանիշ արտահայտելու՝ «ամեն ժամ» իմաստով, այսպե՛ս «Եր նշանն այն է, որ երեսու կարմիր լինի, մէջրնդմէջ և ժամ-ժամ դեզին դաննայ» (ՄՀՁՄ, էջ 16) նախա-դասության մեջ, թվում է, ժամանակի գաղափար չի արտահայտում: Հենց մէջրնդմէջ մակերայի կից կիրառությունը ցույց է տալիս, որ երկրորդ նախա-դասության մեջ ժամ-ժամ մակերայը ձեկ հատկանիշ է արտահայտում՝ մեկ-մեկ ձեկ մակերայի իմաստով կիրառվելով: Նշանակում է, շատ մակերայներ ան-փոփոխելիորեն այս կամ այն խմբին չեն պատկանում, այլ ըստ կիրառության են զնահատվում: Ահա այստեղ պետք է խոսել ընդհանրական մակերայների մասին, որոնք այլ բան չեն, բան նույնիսկ խոսքից դուրս, որպես անկախ կենտ բառեր իրենց մեջ երկու կամ ավելի հատկանիշ արտահայտող մակերայ-ներ, ինչպես՝ դեռ, կրկին, յանկարծ, օրգաուր կեն: Օրինակ՝ «Զինչ ասուում է պատրաստել, օր զատուր ի քեզ հասանէ» (ՖրՅ, էջ 42): Օրգաուր մակերայը կարող է ընկալվել և՛ որպես ժամանակի հատկանիշ արտահայտող, և՛ որպես ձեկ հատկանիշ արտահայտող բառ:

Հետաքրքրություն կարող է ներկայացնել այն հարցը, թե վերոհիշյալ շորտ տեսակի մակերայներից ո՞րն է ավելի հաճախ հանդիպում հայերեն խոսքի մեջ: Մենք մտազուր հազվումներով ձեկ մակերայները խոսքի մեջ շատ ավելի հաճախ են հանդիպում, քան մնացած երեքը միասին վերցրած: Այսպես, օրի-նակ՝ միջին հայերենի 2 շրջանների 10 հեղինակների երկրորդ դուրս գրված ձեկ մակերայները (չհաշվելով դեռ անանցավոր մակերայները) մոտ մեկ հար-յուր են: Ժամանակի մակերայները՝ մոտ 50, տեղի մակերայները՝ մոտ 30, իսկ չափ ու քանակի մակերայները՝ մոտ տասը: Հետաքրքրական է, որ այդ նույն համամասնությունը պահպանվում է նաև փոխառյալ մակերայների մեջ:

1) Ձեկ մակերայներ.—Արտահայտում են ձեկ հատկանիշ և նախադասու-թյան մեջ հարաբերվում են ստորոգյալի հետ՝ արտահայտելով գործողության կատարման ձևը: Ստորև այբբենական կարգով տալիս ենք միջին հայերենում կիրառվող ձեկ մակերայները. այլուվայր, այլուայր, այլվի, անգուման, աղէկ, առժամայն, առանձին, ամօրեւս, անդազար, անյապատ, անքայ, ան-դուր, արտասուզին, ամենայն դիմօք, անօրեց, յանօրուց, ամենովմ, բարով, բարկ-բարկ, բացիրաց, բլգուման, զլնայ, դարձնալ, ետ, երագ-երագ, երն-դեռ, եանայ-եանայ, զիա՛րդ, գաղգառ, բնդէ՛ր, բնցգուն, բնդուր, բուարաց, ժամ-ժամ, ին՛նըստի՛նք, իլիս, խոլուր, խիտալիխ, խուտալա, խեղազնայ, ծակ-ծակ, ծին-ծին, կամկար, կամաց, կտուր-կտուր, կում-կում, կաղընդկաղ, հանց, հայնց, հետ մի այլ, հազար բերան, միասին, մէն, մէն-մէն, մաս-մաս, մին-մին, միրստի՛ռէլ, մանիման, մէջրնդմէջ, մէկտեղ, միարան, միառեղ, միատակ, միալար, մէկի հետ մէկի, մէկ բերան, մուրտառով, յանախ, յանկարծ:

յերկան-յերկան, յետիյետ, յերևաց, յերագ, հուր-հուր, նանախ, շուտ-շուտ, շարվազարով, շուտով քեզ, ո՛նց, ոգորանգին, պիղզ-պիղզ, պարզերես, պա-րապար, սուէպ, սուէպ-սուէպ, սաստկագին, ստի մտօք, վաղվազակի, վե-ր-վեր, վագ-վագ, տկուկ-տկուկ, տակ-տակ, տաք-տաք, տրամագին, տիւա-տի-րա ևն: Մրանց վրա պետք է ավելացնել նաև մակերայակերպ (ա)բար, (ա)պէս, (օր)էն անանցներով կազմվող գրեթէ բոլոր մակերայները (լրվ գու-ցակր ան՝ ս էջ 415—417), ինչպես նաև—պիի, —ին անանցներով կազմվող մակ-երայների մեծ մասը:

Ինչպես վերևում բերված ցուցակում կարելի է տեսնել, զորպանների, անկանների, թվականների ու մակերայների կրկնությունը կազմված մակերայ-ներից ձեկ հատկանիշ են արտահայտում, ձեկ մակերայներ են, օրինակ՝ «Քրո-չիմ և գամ երագ-երագ» (ԳԱՏ, էջ 131): «Եւ սովորեցաւ տղայն և փոքր փոքր անճեցաւ ի գողութիւնս» (ՎԱԱ, էջ 14): «Եւ զան տեսնայ ամենայն կենդանացն կեկալ ժողովեցան ի վերայ նորա և շարաշար հարին զնայ» (Ն. տ. էջ 18): «Գայլքն համբերցին ձ.աւր.ճ. տարուն և ժողովեցան դաս-դաս, անկան ի վերայ այծիցն և կերան» (ՎԱԱ, էջ 43): «Եւ ապա տուր կամ կամ որ իմէ» (ՄՀՁՄ, էջ 44):

Անունհետև. առանձին գործածվելիս ժամանակի, տեղի ու չափի հատկանիշ արտահայտող մակերայներ իսկ կրկնությունը գործածվելիս ձեկ հատկանիշ են արտահայտում, ձեկ մակերայներ են դառնում, օրինակ՝ «Ոտքերն էլ վե-ր-վեր էլ թաղում» (ՆՀՔ, էջ 120): «Յորժամ տեսանեն զհիւանդն, որ շուտ-շուտ շարժի... նա այդ ամէնա ցուցանեն, որ հիւանդութիւնն սուր լինի» (ՄՀՁՄ, էջ 142): «Եւ հայր վանացն բարէկենդանին -Գ.ազգ ժողով արար և յետիյետ...» (ՎԱԱ, էջ 164) ևն:

2) Ժամանակի մակերայներ.—Ժամանակի մակերայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը: Ինչպես արդեն վերևում ասել ենք, սրանք ձեկ մակերայներից հետո առավել շատ հաճախակիանությունը են օգտա-գործվում խոսքի մեջ:

Միջին հայերենի ժամանակի մակերայներն են՝ արդ, այժմ, առատուոց, այսօր, գիշեր ու ցերեկ, դեռ, երկէ, երբեմն, զկին, գօրն, քեզ, քեզ մի, քեզ մը, կանուխ, հուսկ, հիմա, հիմի, հիմիկ, հիմի էլ, մինչև հիմայ, միշտ, յարա-կայ, յեզոց, յաէտ, յայժմիկ, յափտեան, յետոյ, (ի)յար, յօրէօր, յաէտ միշտ, յետևայն, յետևանց, յամենայն առեւ, յայնժամ, յորժամ, նախ, շատ, շուտով, պան մի, վաղն, վաղին, վաղվե՛րէն, վաղէն, վաղունէն, տաւտաւ, տաւ և զի-շեւ, գիշեր ու ցերեկ, ցերեկով, օր մի երկու, օրգաուր, օր քան օր, ուրե՛մ, ուշ, ուստի ևն:

Ինչպես վերևում բերված ցուցակից էլ երևում է, ժամանակի մակերայ-ներն ինքնին ժամանակի գաղափար արտահայտող բառեր են. այստեղ չենք դռնում այլևայլ խոսքի մասերի կրկնությունը կամ անանցումով կազմված մակերայները: Նույնիսկ նկարագրական եղանակով կազմված ժամանակի մակ-երայները կազմված են ժամանակի գաղափար արտահայտող բաղադրիչներից, օրինակ՝ «Եւ օր մի երկու՝ շարառով փոխինջ ուտ» (ՄՀՁՄ, էջ 25): «Եւ երբ իմանաս որ օր քան օր երակի կու տկարանայ, ապա զհացն ի զինին թաց և սուր...» (Ն. տ. էջ 34):

Ժամանակի մակերայները ժամանակի տեղում շատ հաճախակիանությամբ ար-տահայտում իմաստով ենթարաժանվում են մի քանի տեսակների.

ա) ժամանակի տարրորում շարտաճայող, այլ ընդհանրապես մըշտատևություն արտաճայող մակերայնք, ինչպես՝ միշտ, լուստ, լամենայն ատեն, յախտան, յաւա միշտ, միշտ յարակալ կն: Օրինակ՝ «Գու ես անմահ, միշտ կենդանի» (ՅրԲ, էջ 139): «Ուրախանանք միշտ յարակալ» (ն. տ. էջ 106): «Յաւա միշտ երգել ըզգառս անձանց Երից» (ՀԵԲ, էջ 223) կն:

բ) Տարբերոված ժամանակ՝ ներկա, անցյալ, ապանի (ժամանակի բաժանման իմաստով) ցույց տվող. ինչպես՝ այժմ, արդ, հիմա, հիմի, հիմիկ, հիմի էլ, կանոն, ուշ, յետոյ, շուտով կն: Օրինակ՝

Վեր ես կացել ճիմի էլ նոր,

Գու՛ ինձ գրել ոտանաւոր» (ՆՀԲ, էջ 111):

«Թէ՛ այդ բնդ շեղաւ իրատ, մեծ վրնաս յետոյ կամի դալ» (ՅրԲ, էջ 31) կն:

գ) Համեմատարար ստույգ ժամանակի գաղափար արտաճայող մակերայնք. առատուց, վաղին, վաղվիքն, վաղէն, վաղունէ, յետանց, ցորեկով, այսօր կն: Օրինակ՝

«Իր եղբարքն առ ինք եկան,

Զփեսադրայնն առին զփեսայն,

Վաղվճին (=վաղ առաժոտյան) ի յորս էլան» (ՄԵԲ, էջ 103):

«Երեկ ես անոր կուտամ որ առեր իւր եարն է փախեր...»

Առեր ի պաղշան մտեր, ցուեկով զգնչիկն է պաղեր» (ՆԲԳ, էջ 50):

«Վարդն ալ խօշ լէղէթ ունի՝ վաղվէնէն (=վաղ առաժոտյան) երբ դալի արե» (ն. տ. էջ 56):

«Ուտի, խմէի հետ իմ սերկնաց,

Նայ մահոյ յանկարծակի հասու յետևաց» (ՄԵԲ, էջ 158) կն:

3) Տեղի մակերայնք.—Սրանք ցույց են տալիս գործողության կատարման տեղը: Տեղի մակերայնքն են՝ աղբ, ասկից, անկից, աստուտ, աստ, այտի, անդ, անդր, աստէն(ս), անդէն(ս), աստանօր, անտանօր, ասարնու(ս), աստի, անտի, ի բաց, իղենիղեն, ի վերուտ, ի ներս, ի դուս, ի վայր¹⁰. Ի վեր¹⁰, հոս, հոճ, կշտին, հետի, հետ, հետուտ, յետուտաւ, յուտ, վայր, վեր, ներս, ցներս, ցներսէ կն:

Ինչպես կարելի է տեսնել բերված ցուցակից, տեղի մակերայնքը տեղի գաղափար արտաճայող բանորից են կազմված: Տեղի մակերայնքը չեն կազմվում նաև տարբեր խոսքի մասերի բարդություններով, այլ միայն՝ տեղ ցույց տվող բանորից: Ավելին. սրանցից մի բանիսր նույնիսկ տեղ ցույց տվող դոպականի հայցական հոլովածներ են՝ ի նախգիրով կիրառված, ինչպես՝ ի ներս, ի դուս, ի վայր, ի բաց (= հոտու), ի վեր: Մենք կարծում ենք, որ բրանք չպետք է դիտվեն որպես նախգրավոր գոյականներ, այլ որպես մակերայնք, բանի որ միջին հայերենը դրանք պատրաստի վերջերի է դրաբարից: Ի ներս, ի դուս բաներում մենք գտնում ենք ս հոգնակի հայցականի հոլովական մասնիկը, որը միջին հայերենում որպես աչքադիտին չի արժեքավորվում: Մյուս կողմից՝ ց նախգիրով կազմված ցներս, ցներսէ, ցներսու մակերայնքն անհնար, որտեղ արդեն դրաբարյան ենթադրելի բառանքը չի պահպանված, իսկ այդ բաների կիրառությունը կասկած չի թողնում, որ դրանք ոչ թե

նախգրավոր գոյականներ են, այլ մակերայնք: Բերենք օրինակներ. «Ես կցներսէ պատճառն լինի որպէս տրամեն...» (ՄՀՋՄ, էջ 6): «...ե պինչեց ցներս քորին...» (ն. տ. էջ 76): «Ես ժողովի այն պաղպամին ստամոքսն կամ ցներսէ յամենայն կրախն» (ն. տ. էջ 83):

4) Չափի մակերայնք.—Չափի մակերայնքն առանց որոշակիության արտաճայում են գործողության կատարման շափր: Միջին հայերենում համեմատարար բիջ թվով չափի մակերայնք են հանրապետ: Գրանք են՝ առաւել, այլ աւելի, զլիսովիւ, եւստեղև, լման, կարի, համակ, հեղ մի, հաղ մի, մկլմկ, մկլ այլ, յոյժ, յուով, սակաւ-սակաւ, տուպլ և այլն:

Շատ անգամ զժվար է չափի մակերայնի և ձևի մակերայն օտոմանները որոշել, ուտի մենք որպէս չափի մակերայնքը ներկայացրել ենք առավել անառարկելիները: Այսպես, թվում է, թե լման նոր բառը ալիլի ձևի գաղափար պիտի արտաճայի, սակայն մեր օրինակներում այն չափի իմաստով է կիրառված. ինչպես՝ «Ան ատենն ժողովի կու պիտի, որ լման (=ամբողջովին) հասնի» (ԱԱԱԱ, էջ 21): «Ես կուտեղ գինքն լման» (ն. տ. էջ 38): Նույնպես և՛ առաւել մակերայնք, կարող է հանգիս դալ և որպէս չափի մակերայն, և՛ որպէս ձևի: Ներքոհիշյալ օրինակներում արտաճայում է գործողության չափը.

«Ես հայր վանացն ասաց—Առաւել ճըղնի,

Վասն այն է ներքաձայն և ժորու շունի» (ԳԱԲ, էջ 112):

«Անդ վասն չեքմանցն դիտումքեան առաւել պէտ անել արժան է յաղազս Երից պատճառանաց» (ՄՀՋՄ, էջ 2):

Անառարկելիորեն չափի մակերայնքն են նաև կարի և յոյժ բաները, որոնք դրվում են ինչպես անականների ու մակերայնքների (հատկանիշի հատկանիշ արտաճայուելու իմաստով), այնպես էլ ստորոգյալների վրա, ինչպես՝ «Բայց կարի շատ ի բաց կեցա» (ՆՇԲԶ, էջ 561): «Որքերն լինել յոյժ դիւրաժին» (ն. տ. էջ 562): «Այս կարի բարձրագոյն մըտացն եղական» (ՀԵԲ, էջ 189): «Դրժոխոց ահն է պատեալ և յոյժ սարսեցալ» (ՀԵԲ, էջ 205):

5) Ընդհանրական մակերայնք.—Ինչպես անվանումն էլ ցույց է տալիս, այս խմբի մեջ մտնող մակերայնքը իրենց մեջ համատեղում են մեկից ալիլի իմաստ, այնպես որ տվյալ կիրառությունից դուրս զժվար է պնդել, թե այդ մակերայնքն ինչ իմաստ է արտաճայում՝ տեղի, ձևի, չափի, թե ժամանակի: Այսպես, որեւէ ընդհանրական են կոչվում այն մակերայնքը, որոնց մեջ տեղև կու կամ ինչ մի մասնանքն այնպես են համատեղվում (հավասար կամ համարյա հավասար չափով), որ անկարելի է այդ բառը բնութաւել դրանցից միայն մեկով և մյուսին կարևորություն շտա» (Ս. Արաբաճաճյան, ԶԽՄ, Երևան, 1965, էջ 277):

Միջին հայերենի ընդհանրական մակերայնքներն են՝ աննեկի, իսկոյն, յառաջ, դեռ, կրկին, յարժամ, յար, յետ, իսպառ, հանապազ, օրբստօրէ, շուտով, յայն պանն, փոքրիշատէ, (ի)տականց, Բիշ-Բիշ կն: Օրինակներ՝ «Հանապազ ի վարդի շուրս և ի բաքուրն հոտուտալ տուր» (ՄՀՋՄ, էջ 17): «Զօր հանապազ դու կաս ի բուն» (ՅրԲ, էջ 100): «Ով զեղին աղին մօրթովն և մտովն և սակրովն այրել և տրտել գինով և առէ ի յարանքն և ի հաներն նա, յայն պանն զժածուկ մարմինն շարժէ և պնդէ» (ԱԱԱԱ, էջ 39): «Ես որ դարարե՛հ ուտե՛ ես վայրի լազըստակ և թէ այս կուտե՛ ուտե՛ նա, յայն պանն փոխե՛ ես խալի» (ն. տ. էջ 126) կն:

¹⁰ Այդ թվում է արանցով բարդված բաները՝ երեսիվայր, երեսիվեր, վերտախվայր, ծալիվայր կն:

Այս խոսքի մասի մեջ մտնող բառերը, ինչպես հայտնի է, գրաբարի ներկա բերականություններում ևս դիտվում են որպես նախդիրներ (առ, դ, ընդ, բառ, ի, ց) և նախադրություններ (առանց, վասն, առաջի կն)։ Մենք այս երկու հասկացությունները միացնելով բնում ենք որպես կապ, անշուշտ, ոչ թե արդի հայերենի բերականության ավանդույթով, այլ խնդրոս առաջին հարջի ներքին էությունից կնեելով նախ՝ հայտնի է, որ գրաբարում իսկ նախդիրները կորցրել էին իրենց բառական անկախությունը, դրա լավագույն ասպացույցն այն է, որ շատ նախդիրներ հայոց լեզվի՝ մեզ ավանդված առաջին դրավոր նմուշներում իսկ ձուլված են բառարմատներին, ինչպես՝ ընկեր (ընդ+կեր), քնդունկ (ընդ+ունկ), առողջ (առ+ողջ) ևն։ Մյուս կողմից՝ «նախադրություն» անվանումը հունարեն προθεσει բառի պատճենում է։ Իրականում գրաբար լեզվի մեջ իսկ այդ բառերից ոչ բոլորն են կապվող բայից առջև դրվում (ինչպես՝ «Հինգ հաբիւսով շափ լականէ յանտանէ ճանաչեմ» — Եղիշէ, «Ուղարաց այլս անհեթեթս վարդեցեմք» — Հայկազեան բառարան, հ. II, էջ 647) ևն։

Առավել ևս միջին հայերենում, որտեղ գրաբարի շարադասության փոփոխության հետևանքով գրաբարում կապվող բառից առաջ դրվող շատ կապեր վեր են ավել ևս ազդությունների, իսկ նոր առաջացած կապերը մեծ մասամբ ևս ազդություններ են։

Կապ խոսքի մասը, թվում է, ամենից վիճելիս է խոսքի մասերի համակարգում։ Բավական է ծանոթանալ կապի մասին զրված հատուկ ուսումնասիրություններին և դպրոցական ու բուհական դասագրքերում այդ խոսքի մասի բնութագրումներին, առանձնու համար, թե ինչպես հեղինակները այդ խոսքի մասի սահմանման, ընդգրկման և տարածքի իմաստով իրարից ինչքան տարբեր տեսակետներ են արտահայտում¹¹։ Մտանցումների դասադասությունն ու դժվարությունները հենց ուսումնասիրվող նյութից են բխում։ Խնդիրն այն է, որ մի քանի խոսքի մասեր, հատկապես զոյականներն ու մակբայները, բացի ավելայ խոսքի մասի հատկանիշի գրանորումից, կարող են հանդես գալ հոլովառու կիրառությանը (որպես կապ՝ արտահայտելով հոլովական մի նրբերանգ։ Օրինակ՝ «Արաստուլուխա... ինքն յերկան զրեանդն է, և ինքն խոտի մակ է» (ԱԱԱԱ, էջ 86) նախադասության մեջ մակ բառը զոյական է՝ «արմատ» նշանակությամբ։ Անմիտ բան կատարվիք, եթե խոտի մակ (ներքև) իմաստով հասկանալիքը։ Մինչդեռ՝ «Գամ իշանեմ վարդեանց մակ» (ԳԱՏ, էջ 131) նախադասության մեջ մակ կապ է, ևս ազդություն։ Նույնպես՝

«Ձայս փոխաբէն հատուցիք.
Չկողքն տիգաւ խոցեցիք» (ՀԵԲ, էջ 243)։

Վերևի նախադասության մեջ փոխաբէն զոյական է կամ մակբայ, մինչդեռ՝ «Այնոր փոխրէն դի՛նչ խորհեցար» (ՅԲԲ, էջ 209) նախադասության մեջ՝ կապ է։

Շատ անգամ նույնիսկ զժվար է որոշել, թե ավելայ կիրառությամբ բառը կապ է, թե մակբայ։ Օրինակ՝ «Շլայ ժողուցի դիմ մեղքն ու զըրի աղբն ու լացի» (ՀԵԲ, էջ 158) նախադասության մեջ աղբն բառն, անշուշտ, իմ աղբն

¹¹ Տե՛ս Ս. Աբրահամյանի վերոհիշյալ գիրքը, էջ 280—290.

կապվող բառ՝ կապ բառակապակցությունն սեղմ արտահայտությունն է, սակայն առաջև բառը մենք չենք կարող կապ անվանել, բանի որ ավելայ կիրառության մեջ չկա կապվող բառ (ս—ն հոդ է), մինչդեռ աղբն բառը նախադասության մեջ պարագայի պաշտոն ունի, ուստի պետք է մակբայ համարել։ Այս տեսակետից միջին հայերենում շատ զժվար է մի քանի բառերի (մատ, մէշ, նման) խոսքի մասային պատկանելությունը որոշելը։ Այսպես, օրինակ՝

«Գովելի ծաղիկ ևս դու, ի մէջ ծաղկանցն վարջ թաշտար» (նՇԲ, էջ 32)։
«Բաղլի մէջ ամէն օր վարջ կու բաղես» (ն. տ. էջ 40)։

Վերևի նախադասություններում ի մէջ, մէջն բառերը կապեր են, բանի որ հատկապես մեքը, մեքտեղը իմաստը լուծեն, մինչդեռ ներքևի նախադասություններում զժվար է որոշել բառի ո՛ր խոսքի մասի պատկանելը՝ այն կախված է անհատական ընկալումից.

«էնօր կեօբայ է տան մէջն սրգայ» (նՇԲ, էջ 88)։
«Ով անմեղաց հօր կու փորէ,
ինքն անկանի ի մէջ գրբին» (ՅԲԲ, էջ 209)։

Միջին հայերենով զրված գրականության մեջ շատ անգամ կան գրաբարյան ձևեր, որոնք, չգիտես՝ գրաբարի՝ լեզվաբանականությամբ պետք է տարբայուվեն, թե՛ բնութեմն որպես որգեզրված, կազմավորված, պատրաստի ձևեր։ Այս իմաստով մենք առանձնապես չենք ծանրանում նախդիրների կիրառության վրա. բնեկ միջին հայերենում օգտագործված նախդիրները նույնն է թե՛ բնեկ գրաբարի նախդիրները, որոնք գրաբարի անցյալի և ներկա բերականության գրբերում այնքան հանդամաճորեն ուսումնասիրված են¹²։ Մակայն արժե միջին գրական հայերենում նախդիրների կիրառության վրա մի համառոտ ակնարկ ցցել. նախ՝ սանքը, որ ինչպես XII—XIV, այնպես էլ II շրջանի՝ XV—XVII դդ. հեղինակները հավասար շափով, բոս պատեհի օգտագործում են գրաբարյան նախդիրները։ Նախդիրների կիրառության տեսակետից զժվար է անհատական նախադասության սահմանները որոշել, մինչդեռ մնացած կապերի կիրառության ժամանակ որոշակի տարբերություններ կեր նկատում։ Այս հարցի մասին մանրամասն կխոսվի քիչ ներքև։

Նրկորոգ՝ միջին հայերենում չենք գտնում նախդիրների կիրառության այն հարուստ գրանորումները, ինչ որ մեր հին լեզվում։ Այսպես՝ առ նախդիրը հայցական հոլովի հետ օգտագործվում է. առ ձեզ (ՆԵԲ, էջ 147), առ իս (ԿԵՏ, էջ 143), առ լալիքն իշխան (ՍՂԲ, էջ 146), մինչդեռ բացառական և գործիական հոլովների հետ կիրառության դեպքեր չեն հանդիպում։ Ա նախդիրը հայցական հոլովի հետ որոշյալ աման դեպքում լայնորեն կիրառվում է, ինչպես՝ զիմ ցաւ (—իմ ցավը, ԳԱԲ, էջ 106), զիմ վարդն (ն. տ. էջ 226) ևն, մինչդեռ տրական, բացառական և գործիական հոլովների հետ կիրառության դեպքեր չեն հանդիպում։ Հայտնի է, որ գրաբար լեզուն բացառական և գործիական հոլովներով զ նախդիր կիրառության հարուստ գրանորումներ ունեն, այն աստիճան որ՝ գրաբար լեզվում 6-ից ավելի հոլով բնորոնողներն այդ կիրառու-

¹² Տե՛ս Արսև Բագրատունի, Հայերեն բերականության ի պէտս գորգացիցը, Վենետիկ, 1852, էջ 95—119; Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբան, Երևան, 1964, էջ 228—262 ևն։

բյունները համարում էին առանձին հոլով՝ պատմական (զրնկերը=ընկերոջ մասին) և պարտական (զտամբ=տան շուրջը)։ Ինչքանով որ ուշագոյր ենք եղել, մեր կարգազած հեղինակների մոտ զ+գործիական միայն մեկ կիրառություն ենք գտել Մարտիրոս Ղրիմեցու մոտ, որը շատ ավելի ավանդապատ է, քան իրենից 200—300 տարի առաջ ապրած հեղինակները։ Ահա այդ օրինակը՝

«Սնօզքն աղէխորով դէմ զաւակաց լան
Անկեալ զպարանոցաւ նոցին հեկեկան» (ՄՂԲ, էջ 149)։

Բնդ նախդրն առավելագուց օգտագործվում է սեռական և տրական հոլովների հետ. առաջին դեպքում արտահայտում է փոխարեն, դիմաց իմաստը, ինչպես՝ բնդ որոյ (—որթի փոխարեն, ՅԲԲ, էջ 153), կամ՝

«Զի՛նչ գործեցիք անօրէն,
Չար՝ բնդ բարոյ փոխարէն» (ՀԵԲ, էջ 244)։

Տրականի հետ արտահայտում է նաև իմաստը, ինչպես՝ բնդ իրար (ՀԵԲ, էջ 156), բնդ Բեզ հաշտեցնես (ՄՆԲ, էջ 121) ևլն։ Բնդ նախորդ այս կիրառությունը մարդկային խոսքի ամենահամախական կիրառումներից մեկն է, սակայն միջին հայերենում առավել շարժվել այդ միտքն արտահայտվում է նաև կապով, որի մասին իր տեղում կիսովի։ Բնդ նախորդը հայցական ու բացառական հոլովների հետ սակավ է հանդիպում զալիս, եղած օրինակներից են՝ բնդ ծագել արևուն (ՄՀՁՄ, էջ 46), բնդ մարդ և բնդ Աստուած (=մարդու և աստուծո միջև—ՅԲԲ, էջ 121), բնդ աքմի հօր (ն. տ. էջ 122), իսկ գործիական հոլովի հետ սակ իմաստով կիրառությունը զրնթն վերացած է՝ տեղը գիշերով տակ, ներեկ կապական կիրառությունների։

Ըստ նախորդը կիրառվում է միայն տրական հոլովի հետ՝ «նման», «համաձայն» իմաստներով, ինչպես՝ ըստ օրհիի (ԿՅՏ, էջ 145), ըստ յիմարաց (ն. տ. էջ 152), ըստ վկայութեան (ՄՆԲ, էջ 116) ևլն։ Բացառական և հայցական հոլովների հետ ըստ նախորդի գրաբարյան կիրառությունների չենք հանդիպում։

Յ նախորդի կիրառությանը հայցականի հետ՝ «մինչև» իմաստի արտահայտությանը, սակաւ ենք հանդիպում, ինչպես՝ մինչև ցեւթն օր (ՄՀՁՄ, էջ 86)։ Գրաբարյան նման կիրառության տեղ գտնում ենք մինչև կապի տարածուն կիրառություն։ Նախորդի տրականի իմաստով կա սակավ կիրառություններ ունենք. ինչպես՝ ցեւթն (=տիրոջը—ՄԳԳ, էջ 71, 72)։

Նախորդների համեմատությանը առավել հարուստ դրսևորումներ ունի ի նախորդը։ Նախ՝ միջին հայերենում կա բացառական հոլովը ձևավորվում է ի նախորդով, ինչպես՝ յամեն շարէ (ՀԵԲ, էջ 146), ի նմանէ, ի ձեզնէ (ՀԵԲ, էջ 213), ի շարեաց անտի (նՀԲ, էջ 84), ի դրախտէն (ՀԵԲ, էջ 156), ի քամփղի ի դուրս (ն. տ. էջ 144) ևլն։ Նրկորդը՝ ճիշտ է, որ միջին հայերենը ներգոյականի գաղափարն առավելագուց արտահայտում է նկարագրական ձևով՝ մեջ կապով, սակայն գրաբարյան ներգոյականի բացում կիրառությունների կան, ինչպես՝ յարգայութեան (=արբայության մեջ—ՄՂԲ, էջ 109), ի մրարեան (=մրության մեջ—ՀԵԲ, էջ 150), ի նոյ (=նոյի մեջ—ն. տ. էջ 144) ևլն։ Նրկորդ՝ կան նաև ի նախորդի՝ հայցական հոլովի հետ կիրառության դեպքեր, ինչպես ուղեորման իմաստով, այնպես էլ նախորդի տրականի կազմության

իմաստով, ինչպես՝ ի հաց (=հացի—ՀԵԲ, էջ 158), մասնէ ի սով, ի սուր (ՄՂԲ, էջ 144), ի սուզ (=սզի. «երբ գալոյ գիտէիր, գերի, օր օւրդ ի սուզ տի փոխի»—ՄՆԲ, էջ 126), Երթախ ի յօտար երկիր (ՀԵԲ, էջ 154), հասանեն ի յօրևան (ՄՆԲ, էջ 113) ևլն։

Եթե համատարակի բնութագրելու լինենք, թե հայոց լեզվի գրաբար և միջին հայերեն դրսևորումները կապերի գործածության տեսակետից ինչ վիճակ են ներկայացնում, ապա կարելի է ասել՝ որքան գրաբար լեզվի համար հարազատ են նախդրների կիրառությունները, նույնքան միջին հայերենի համար հարազատ են կապերի (նախորդություններ և նախադրություններ) կիրառությունները։ Մենք չենք մտառում, անշուշտ, որ գրաբար լեզուն կա նախդրների հետ միասին հոլովական նրբություններ արտահայտելու համար շատ կապեր էր օգտագործում, սակայն ստորև բերված ցանկը կարող է պատկերացում տալ միջին հայերենի լեզվական այդ նախադրության մասին։ Այսպես, մեր կարողացած գրականության մեջ հանդիպած կապերն են. առանց, առէ²⁵, առաչի, աղաղաւ, առեն, առաչ, բայց (բացի), բերանով, դէմ, դիմաց, դէպ(ի), դուրս, կո(կան), կռնէն, գերթ (գերդ), գեմ (դէզ), դինչ, պինի, (ի)զատ, ընդդէմ, ժամանակ, ինչվի, իբր, իբրև, ինչպէս, (ի) խէ, հետ, հեռի, հակառակ, համար, հանց(որ), հանդէպ, հանգոյն, համեմատ, հասար, ձեռաց, (ի) ձեռն, նկրուն, մէջ, մօտ, մինչև, մինչ, մերձ, յետ, յաղաքս, յանուն, յետև, յանդիման, նման, ներև, ներքո, նմանակ, նմանալէս, շուրջ, որպէս, շափ, շափով, շափ, շուր(ի), պէս, սիրուն, (ի) վերայ, վրայ, վասն, վանց, տակ, փոխան, փոխանակ, փոխրէն, քով։ Նազար Հովնաթանն օգտագործում է նաև թուրքերենից փոխառյալ կապեր՝ կեօրայ, սպապայ, վախտ(ն)։

Ըստ տեսակների և ըստ կազմության խմբավորելիս՝ վերևի կապերը ստորև մենք մանրամասն բնկելու ենք, սակայն այստեղ առավել ընդհանուր գծերով ներկայացնենք դրանք։ Նոր կապերի մեջ ամենից շատը գրաբարին անձանոթ բառերն են, որոնք, անշուշտ, մի անգամից շրտան, այլ դարեր շարունակ պետք է եղած լինեն խոսակցական լեզվում։ Գրանք են.

Առեն—«Եւ Եփեղու առենն սելի կեղև ձգես ի պտուկն» (ԱԱԱԱ, էջ 192)։

Ինչի—«Զի թէ գողունի լինի ու գողի, ինչի (=մինչև) տարին մի յետ դասնայ» (ՄԳԳ, էջ 61)։

(ի)խէ—«Եւ սպիտակ գորիկն ի Բմիայբերն ի խէ (=մոտ) անցնել են թէ դիր շարութիւնն տանի շրիկ ձեթն» (ԱԱԱԱ, էջ 145)։

ձկրուն—«Չար փուշ պատողին նկրուն (=ի հեճուկս, հակառակ)՝ կա հաղւնիմ ձաղան կոտ» (ՆԲԳ, էջ 64)։

Չալ—«...Եւ կամ սխտան շալ (=շափ) տար չրով խմեն...» (ԱԱԱԱ, էջ 59)։

Չուր(ի)—«Չձեզ բշմ շուրի Բարզվան (=մինչև)» (նՀԲ, էջ 97)։

«Կարօտ են քո տեսուղ շուր Հապաչտան, է՛ր կա ինձն հեռանալիս» (ն. տ. էջ 195)։

Քով—«Եւ ի բղբնկան քովն աւելի միան ուտէ» (ԱԱԱԱ, էջ 133)։

Այս խմբի մեջ պետք է մտնեն նաև փոխառյալ կապերը։ Հայտնի է, որ կապերի և ընդհանրապես լքերվող խոսքի մասերի փոխառություններն անսու-

²⁵ Ընդգծված կապերը կամ գրաբար լեզվում չկան, կամ որպես կապ առավելագուց միջին հայերենին են հատուկ։

վոր երևույթ են չեղուններում: Վերոհիշյալ կապերի անկայությունը հայերենում լավագույնս վկայում է, թե թուրքերենն ի՛նչ ավելիչ չափով էր ազդել հայերեն խոսակցական լեզվի վրա: Օրինակ՝

«Ասել ես, թէ զարեան վախոն
...քեզ ցոյց կուտամ ծոցիս զարդն» (ՆՁԲ, էջ 66):
«Փրնթի մարդիբն են քեմուրի մանդալ,
Դուռն լցած է սրբանք և դաշալ,
Էնք հեծայ է տան մէջն սրբայ» (Ն. տ. էջ 88):
«Վախեմ սապապ նոցա գալն
Իրիցներն զցեն մալրն» (Ն. տ. էջ 122):

Երկրորդ խմբի մեջ կարելի է մտցնել այն բառերը, որոնք զրարարյան ձևերի համեմատությամբ հնչյունափոխված՝ նոր կապեր են դարձել. դրանք են՝ վրայ (<վերայ բառից)—«Եւ թէ կրակին այրածին վրայ դնես, շատ աւզտէ» (ԱԱԱԱ, էջ 86):

Ձեռ (զեղ բառից)—«Ձեռ դասորի եւէջ կարգայ» (ՆՇԲԶ, էջ 561):
Փոխելն (փոխարէն բառից)—«Այնք փոխելն զի՛նչ խորհեցար» (ՅԲԲ, էջ 209):

Հասար (հասար բառից)—«Չի գիտեմ թէ ի՛նձ մէն կուգայ թէ կուգայ հասար ամէնուն» (ՆՔԳ, էջ 49):

Գ) Գրարարյան կապերի գիմաց գոնում ենք նրանց համարժեքները, այսպես՝

Ինչպէս (որպէս-ի փոխարեն)—«Բեր ծծեմ լեզուդ ինչպէս մեզդի ծոր» (ՆՇԲ, էջ 26):

Ներքն (ներքն կապի փոխարեն)—«...եւ յար ներքն լեզուին պահէ» (ՄՂՁՄ, էջ 51):

Յեռ (յեռ կապի փոխարեն)—«Եւ լու թուգիրն այն է որ զինքն զեղ խմելուն յեռ ի գործ արկանեն» (ԱԱԱԱ, էջ 27):

Զորորդ խմբի մեջ կարելի էր խմբավորել այն կապերը, որոնք որպէս բառեր, հիշտ է, զրարարում կան, սակայն կապական կիրառություններ չունեն: Գրանք են՝

Դիմաց—«Չանձնը տըրի վասն օրինաց,
Մէն կանգնելով հագրի դիմաց» (ՂԹՏ, էջ 198):

Զափով—«Ենկը շունին շափով սինոխի» (ՆՇԲ, էջ 103):

Դուրս—«Չինչ ձուկն՝ ջրէն դուրս՝ ես կուգամ տապակ» (ՆՇԲ, էջ 34):

Համար—«Կորուսի դազատ հողիդ ՚ւ այդ հողեղէն մարմնոյդ համար» (ՂԾԲ, էջ 159):

Համեմատ—«Ջուրը գոռնահամ է դարձ
Համեմատ ծովու է լեզի» (ՄՂԲ, էջ 111):

Ձեռաց—«Դու բան ինձ եղեր ես եանուղ՝ էլ յի ձեռաց խիտ հուստով» (ՆՇԲ, էջ 32):

«Շատք մեռնին ի կաննոց ձեռաց» (ՄԳԿ, էջ 52):

Ինչպէս հայտնի է, կապերը հիմնականում լրացնում են բառահարաբերությունների այն թերին, որ չի կարող արտահայտվել հոյակերի միջոցով: Որ խկապան այդ է կապերի դերը խոսքի մեջ, առավել ցայտուն կերպով երևում է հոյովման համակարգ շունեցող լեզուներում, որտեղ բոլոր բառահարաբերու-

թյուններն արտահայտվում են բառերի ուղիղ ձևի վրա զբաղմ կապերի միջոցով: Նշանակում է, կապերը նյութական իմաստ չունեն և նյութական իմաստ ունեցող բառերից զանազանվում են վերաբերական իմաստ արտահայտելով: Սակայն վերաբերական իմաստ արտահայտող այլ խոսքի մասեր եւ կան, առանք, շաղկապները: Արդ, ինչո՞վ են տարբերվում կապերը շաղկապներից: Նրանով, որ կապերը, զբղելով գոյականների, որոշ զերանունների ու մակրայ-ների վրա, արտահայտում են «լրացական», ամբողջացող հարաբերություն և «կապվող բառերը» կապում զերտգաս անդամի հետ: Տեսականապես պետք է ենթադրել, որ բոլոր կապերը երբևէ անկախ բառեր են եղել, և նրանց անցումը որպէս կապ պատմական երկարատև ժամանակաշրջան է ընդգրկել՝ նյութական իմաստի աստիճանական մթոգնում և վերաբերության իմաստի աստիճանաբար տիրապետում: Ահա ինչու կապերի անուակվորման ժամանակ պետք է հաշվի առնել, թե բառի մեջ զուտ կապական և զուտ բառական (ոչ կապական) իմաստները ինչ հարաբերության մեջ են գտնվում: Այս մտացումից ելնելով, ինչպես սովորաբար ընդունված է, մենք եւ միջին հայերենի կապերը կամ կապական կիրառություն ունեցող բառերը երեք խմբի ենք բաժանում.

1. Բառեր, որոնք զբղվելով երբեմնի իրենց ունեցած նյութական իմաստից, զուտ բառահարաբերական ուժեր ունեն, «զտարյուն» կապեր են: Այս խմբի մեջ առաջին հերթին մտնում են զրարարյան նախդիրները՝ առ, գ, ընդ, բառ, ի, ց, ապա և փոխառյալ կապերը՝ կերայ, սապապ, վախտ(ն), ինչպէս նաև՝ առանց, առէ, առաջի, ապագա, առն, պէմ, դիմաց, զէլ(ի), նո(ն), ետէն, գեք (զեղ), գեռ (զեղ), զինչ, զվնի, (ի) գատ, ընդդէմ, ինչլի, իբր, իբրև, ինչպէս, (ի)սէլ, հետ, համար, հանդպ, հանգոյն, ձեռաց, ի ձեռն, նկրուն, մէջ, մօտ, մինչև, մինչ, մերձ, յազգա, յանուն, յետև, յանգրման, նման, ներոյ, նմանակ, որպէս, շափ, շու(ի), շափով, պէս, (ի) վերայ, վրայ, վասն, փոխան, փոխանակ, փոխ[ա]լըն, քով:

2. Բառեր, որոնք իրենց մեջ պահում են իրենց խոսքի մասային պատկանելություն իմաստը, սակայն այդ իմաստի հետ մեկտեղ բոտ կիրառության կարող են վերաբերական, բառահարաբերական իմաստ արտահայտել: Գոյություն կան բերականության մեջ այս բառերն ընդունված է անիսկական կապեր անվանել, ինչպես՝ (ի) բաց, առաջ, դուրս, հակառակ, հանց (որ), համեմատ, յետ, հաւ[ա]սար, ներքն, շափ:

3. Բառեր, որոնք առաջին հայացքից և անկախ կիրառությունից ընկալվում են իրենց նյութական իմաստով, սակայն ունեն նաև կապական կիրառություններ, ինչպես՝ բերանով, ժամանակ, հեղի, շուրջ, սիրուն (սիրուն), տակ:

Վերոհիշյալ երեք խմբի կապեր ինչպես զրարարի, այնպես էլ աշխարհաբարի համեմատությամբ մի շարք առանձնահատկություններ են գրեթեբոլոր, որ ստորև ներկայացնում ենք:

Առանց կապը, ինչպես զրարարում, միշտ նախագաս է. եղած բոլոր օրինակներում, ներառյալ նաև խոսքային հանգամանքներում կիրառվածները, միջին հայերենի երկու շրջանի բոլոր հնգիսկաների մոտ, միշտ նախագաս կիրառությամբ է հանդիպում, ինչպես՝

«Առանց նախարի, ՚ւ առանց քևի ո՛նց ես կացել» (ԿԵՏ, էջ 176):
«...Չի ճաշակել առանց համանի» (ԳԱՏ, էջ 143) և այլն:

Հայկազյան բառարանում եղած բոլոր օրինակներում առանց կապը սե-
ական հոլովով կապվող բառ է պահանջում. դերանունները նույնպես սեա-
կան հոլովով են գրվում, ինչպես՝ «Առանց իմ ուշինչ կարէք անել» (ՆՔԲ, հ. 1,
էջ 286): «Քուսուրն Արշակ ոչ կամեցեալ դատես նուստարդաց առանց Ի
անցուցանել» (ՓՔՊՇ, IV, ժԿ): Մինչդեռ միջին Հայերենի շքանում առանց
կապի ունենում է նաև ուղիղ ձևով գրված կապվող բառ, ինչպես՝

«Դու զիս՝րդ առանց բան դատումս ձանաչես» (ՀՆԲ, էջ 190):

«Ես եմ առանց սրլէհ...» (ԿԵՏ, էջ 183):

«...ես առանց շրբունք

Կու խրմեմ յայն գինուն շիշայ» (Ն. տ. էջ 191):

Ֆրիկի մոտ հանդիպող կիրառություններում մեծ մասամբ ուղիղ ձևի վրա
է գրված, ինչպես՝

«Եւ լիբ դու գրթած ու սուրբ, սղորմած առանց ցնճուրխն» (Բանաստեղծ.
էջ 87):

«Անող առանց հազար բեժան» (Ն. տ. էջ 102):

«Ու զուզող մարդկանց տունըն

Կու բակես առանց բաճառք» (Ն. տ. էջ 217):

Գուցե կարելի է մտածել, որ մեր հեղինակները խոսքային հանգամանք-
ների բերումով՝ հանգավորման համար են այսպես վարվում, սակայն այդ
հանգամանքներից դուրս եղած օրինակները կասկած չեն թողնում, որ առանց
կապը միջին Հայերենում նոր հոլովառություն է հանդես գալիս, ինչպես՝

«Առանց ջու՝ ձուկն չի ապրի, լոբ չբին կտրոզն անիծած» (ՆՔԲ, էջ 46):

«Ես աչք ու դու՝ լուս, հոգի՝ առանց լուս՝ աչքն խաւարի» (Ն. տ. էջ 52):

Այս տեսակետից հետաքրքրական է հատկապես նազաչ Հովնաթանի
հետևյալ մեկ օրինակը. նույն քառատողում՝ առանց կապը մե՛կ ընդունում է
սեռական հոլով, մե՛կ ուղիղ ձևով բառ.

«Առանց քննելոյ և վկայութեան

Մարդոյ շրարկանաս, շանես դատաստան,

Վերջն հայեացես դու ամենայն բան,

Առանց հարցանել մի՛ տար պատասխան» (Բանաստեղծք. էջ 89):

Գերանունների հետ կիրառության դեպքեր բիշ են հանդիպում. թվում է,
որ գերանուններն ավելի շուտ սրական-հայցական հոլովածնով են գրված,
ինչպես՝ «Առանց Բեզ ես ո՛նց ասարիմ կամ իմ աչերս տանի բուն» (ՆՔԲ, էջ
48): «Թէ նուչ թէ շաբար կուտեմ, առանց Բեզ չի երթար ի կու» (Ն. տ. էջ 67):

Ինչպես հայտնի է, ժամանակակից Հայերենում ես առանց կապը հատկա-
պես այս, այդ, այն ցուցական դերանունների հետ օգտագործվելիս բառի
ուղիղ ձևով գրված կապվող բառ է պահանջում¹⁴: Սակայն ունենք նաև հայցա-
կան հոլովով գրված զոյականի կիրառություններ, ինչպես՝ «Քո գերեզմանը չի
կորչի խոով, Առանց շիբմաւար չի մնա երկրում» (ՀՇ, էջ 17): Ժամանակակից

¹⁴ Չենք ասում՝ հայցական, քանի որ այս, այդ, այն դերանունները արդի Հայերենում չեն
հոլովում:

հայերենում նման կիրառությունները գնահատվում են որպես բարբառային:
Հարցական է մնում այն կետը, թե արդյոք բարբառնե՞րն են ժառանգել միջին
Հայերենից, թե վերջինս է այն ժառանգել հայերենի բարբառներից:

Առջ կապը Հայկազյան բառարանը դիտել որպես «սամկական բառիս
առաջնա կամ առաջն» (հ. 1, էջ 312): Այս կապը միջին Հայերենում շատ ավելի
լայն կիրառություն ունի, քան առաջի բառը: Սակայն զարմանալիորեն, ի տար-
բերություն մյուս նոր կապերի, մեծ մասամբ նախագաս կիրառություն ունի՝
հաճախ հանդես գալով ի նախդիրով, ինչպես՝ «Ճրբագի ի յառչե կուրի՛ն կու
վառի՛ ինքրն լրգիտէլ» (ՀՆԲ, էջ 137):

«Եւ եղիր յառչե ճիւրերին» (ՀՓՏ, էջ 210):

«Մի ասող էլաւ պայծառ

առչե Արաւկիին լուսոյն» (ԿԵՏ, էջ 124):

«Առչե աչերուս քայլես» (Ն. տ. էջ 160):

Առջ կապը հանդես է գալիս նաև ետագաս կիրառությամբ. քնդհանուր
սպալկորությամբ՝ XV—XVII դդ. հեղինակների մոտ առավել շահով է օգտա-
գործվում որպես ետագրություն և առանց ի նախդրի, թեև օրինակներ ունենք
նաև I շրջանից, ինչպես՝

«Շատ ճարտ ու ծառայք ու զօրք կան ի ներ առչերդ կանգընել» (ՀՆԲ,
էջ 147):

«Հանց գերդ քղզառն էր անմեղով,

Հայք սպանողին առչե հեղուկ» (ՆՔՔՊ, էջ 581):

«Կթխակ ի գինով լեցած իմ նարին առչե է զբրած» (ՆՔԲ, էջ 59):

«Ձեռ առչե կանանչ պաղշայ, ծաղկուրն և շիման» (ՆՔԲ, էջ 178):

Առաջի կապը, ինչպես վերևում էլ ասացինք, միջին Հայերենում սակաւ է
էկրառվում և միշտ նախագաս է, ինչպես՝ «...Կարմիր այծենի գտակ ի գլխինն
ու արեխ ի յոտվին և առաջի քալաւորին երթան և զամբոխն ի բաց վարեն»
(ՍԳԳ, էջ 42):

«Կամ առաջի Բո ամօթով» (ՀՆԲ, էջ 180):

Հանդես է գալիս որպես ետագրություն, ինչպես՝

«Քո առաջի կամին բերել» (ՖԲԲ, էջ 53):

Ատեն «սամկական» բառը, բոտ Հայկազյան բառարանի, առաջացել է
«ատեն հողմոյ» (ղէպ, ժամանակ) կապակցությունից: Ինչպես հայտնի է,
այս բառը ներկայումս արևմտահայերենում ամենակենդանի կապերից մեկն է.
ավելին՝ մեր երկու զրական լեզուները «սահմանագատող» երևութներից մեկը
կարելի է համարել:

Միջին Հայերենում սակավ կիրառություն ունի, որպես նոր կապ միշտ
ետագաս կիրառություն ունի, ինչպես՝ «Եւ Լիփլու առենն սխիկ կեղև ձգես ի
պտուկն» (ԱԱԱԱ, էջ 122): «Ինձ գնալու ատեն այլ անպատե՛հ է» (ԳԱՏ,
էջ 236):

Վերջին նախագասության մեջ ատեն բառը կարելի է ընկալել նաև որպես
զոյական՝ «ժամանակ» իմաստով: Բայց (բաց) կապը հանդես է գալիս միշտ
նախագաս և պահանջում է բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝

«Ով է անմեղ բաց ի Բէնէ» (ՅրԲ, էջ 124):
«Տամենայնէ ոտակ պատուիրեաց նոցին,
Բաց ի ծառայն միոյ բարոյ և յարին» (ԳԱՏ, էջ 107):

Պէմ կապը, ինչպես գրաբարում, միջին հայերենում ևս մեծ մասամբ նախադաս կիրառություն ունի, պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝

«Ապա ինչ ցեղ յառաջ երթան
Պէմ քշեամոյն կամ ոնջ յաղթեն» (ՅրԲ, էջ 190):
«Եկին զէմ յիւր առին» (ՀՊՏ, էջ 209) և այլն:

Հաճախ զէմ կապը հանդես է գալիս ի նախդիրով, ինչպես՝

«Քաղցր ձայնով կարկաչէ նա
'ի ի զէմ վարդին յերակ խօսել» (ԿԵՏ, էջ 121):
«Գիշեր ցորեն կամ երկրուն
Եւ ես կայրիմ ի զէմ վարդուն» (ԳԱԲ, էջ 222):

Պէմ կապը ևս, բնօրինակ սովորությունը, 2-րդ շրջանի հեղինակների մոտ ետադաս կիրառությամբ է հանդես գալիս, ինչպես՝ «Իմ եարս ինձ զէմ էլաւ, իւր երեսն էր վարդ ու տերես (ՆՔԴ, էջ 56): «Կու հագարաց զէմ պահապան» (ՀՊՏ, էջ 198): Թվում է, որ ինձ զէմ էլաւ բառակապակցություն է, որտեղ զէմ էլաւ պետք է առանձին վերցնել, իսկ ինձ բառը ստորոգյալի անուղղակի խնդիր լրացում է, սակայն այդպես չէ: Այլ օրինակներ ևս ցույց են առելու, որ ինչպես այլ կապեր էլ, զէմ կապը գերանունների հետ կիրառվելիս արական հոլովով կապվող բառ է պահանջում, ինչպես՝ «Ձգունն քո՝ զէմ ինձ մի փակել» (ՀՆԲ, էջ 178):

«Վարդն ի բլրուն ասաց. ի՞նչ սիսամթ է,
Որ այժմս բոլոր զէմ Բեզ հարաթ է» (ՄՆԲ, էջ 112):
«Սիրտս է դեղին ի զէմ Բեզի» (ԿԵՏ, էջ 121) և այլն:

Նոր Հայկազյան բառարանը զիմաց բառ՝ որպես կապ շփոտե: Պիմաց գրաբարում զէմ բառի հոգնակի սեռ.-տրականն է, ինչպես՝ «Բայց որչափ զիմացն էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել... փութայր, բան թէ ի նուաճել» (ՄԽՊՁ, I, ԺԵ)¹⁵: Պէմ բառը համանիշ է երես բառին: Վերջինից հենց գրաբարում էլ կապ (կապական բառ) առաջացել էր. ինչպես՝ «չլրեսաց գորացն Պարսից» (Բուզանդ. IV, ՍԵ), «Փախստական լինի Շամիրամ յերեսաց Զաղաշուի ի Հայս» (ՄԽՊՁ, I, ԺԷ): Կոստանդին Երզնկացու հետեւյալ նախադասությունը զիմաց բառաձևի դեպի կապ անցնելու մի լավ օրինակ է.

«Շատոց խրրատ կուտատ,
Բեզ հաւատարն ու ևն լրսել,
Եւ ի Բո զիմաց փակել
Ես դու զականջող ու պինդ կրցել» (Տաղեր, էջ 177):

¹⁵ «Բայց որքան զմեքից երևում էր, ոչ այնքան սպանելու... էր շտապում...»:

Մինչդեռ՝ «Ձամէնն արա՝ հիմի յայտնի».

Ի՞նչ կամ ի Բո զիմաց կացել» (ն. տ. էջ 121) նախադասության մեջ զիմաց բառն արդեն բառական-նյութական իմաստ չունի, այլ կապական բառի կիրառությամբ է: Աս բավական լույս է սփռում զիմաց կապի առաջամասն վրա: Որպես նոր կազմված բառ, միշտ ետադաս կիրառություն ունի, ինչպես՝ «Եւ թէ զակրան Ա մարդ մի ի ձեռն առնու ևս բունէ, այն մարդուն զիմաց¹⁶ իսկի շուն չի հաջէ ևս վնաս շաննէ» (ԱԱԱԱ, էջ 44): «Եւ թէ զայս թուփխս թածա ճրագրով խառնես և կեակին զիմաց¹⁶ ածես... բուսցնէ (ն. տ. էջ 182):

Դերանունների հետ գործածվելիս ևս սեռական հոլովով կապվող բառ է պահանջում, ինչպես՝ «Իմ եա՛ր, խրմէ՛ իմ զիմաց, որ երէ՛ Հոգիս Բո զիմաց» (ՆՔԴ, էջ 59):

Պիմաց կապը, ինչքանով որ ուշադիր ենք եղել, նախադաս կիրառության միայն մեկ դեպք ունի, այն էլ՝ Ֆրեկի մոտ.

«Ձիւր պատուիրանն ևս մոռացել,
Պիմաց հոգոյդ ևս քարացել» (Բանաստեղծ. էջ 51):

Պէլ կապը, ինչպես հայտնի է, գրաբարում առավելագույն օգտագործվում էր ի նախդիր՝ ուղևորման հայցական արտահայտող բառակապակցություն մեջ: Այդպես է նաև միջին հայերենում, ինչպես՝ «Բայց դատարբն պատահ է, որ հային ի յայն գնողն, թէ յաղքատութենէ լինի պատճան, նա ներելով անեն զէլ ի հարուստն» (ՄԳԳ, էջ 61): «Եկ ի տուն ևս ի զար ի յայն պատն ևս ի յայն ևս գնաց զէլ ի կին» (ՎԱԱ, էջ 174): Այսպես նաև՝ «Յանկարծ էլաւ օր մի հեղեղ

Ձիս զէլ ի ծով արար վարար» (ՅրԲ, էջ 201):
«Եկայք եղբայրք, իմ սիրելիք,
Պարտ է զինուն մեզէն հոգալ,
Պէլի պաղծան սէլրան երթալ» (ՄՂԲ, էջ 138) ևլն:

Դժբախտարար գրություններից չի կարելի ստույգ մի եզրահանգում անել՝ արդյոք ի նախդիր զէլ կապին կից էր գրվում, թե՛ ոչ, այսինքն՝ գրաբարյան ի նախդիր ուղևորման հայցականի իմաստը պահպանում էր, թե՛ ոչ, սակայն զէլ(ի) կապի կիրառությունը ամօականների հետ, ինչպես նաև զէլ ձևով (առանց նախդիր) հանդես գալը ապացույց է, որ միջին հայերենի շրջանում զէլ բառը ինքնին պիտի ընկալվեր որպէս կապ այն նույն ձևով, ինչ որ գրաբարում տրական հոլովի հետ (հմտա. «Եւ ամբոխն տեսալ զայսպիսի ահագին զործ քաշութեան՝ փայտան խրաքանչիւր զէլ երեսաց իրեսից» (ՄԽՊՁ, I, ԺԱ): Ահա մեր ենթագրությունն ապացուցող օրինակներ. «Եւ զողին գոյնն զէլ ի սպիտակ լինի... ևս երեսացն գոյնն չի լինի կարմիր, մանաւանդ զէլ ի սպիտակն լինի» (ՄՀՋՄ, էջ 10): «...աշացն երախն ևս քներոյն ուշին, ևս լինի որ կարմիր շտեր երեւան կամ զէլ ի կանաչն» (ն. տ. էջ 66): Վերևի օրինակներում զէլ կապը զրված է գոյականարար վերցված ամականների վրա (կանաչ, սպիտակ). մյուս կողմից՝ ոչ թեմ գնալու, շարժման գործողություն արտահայտող բայի, այլ՝ լինել բայի հետ (երկրորդ նախադասության մեջ բայը լուծյալն է հասկացվում): Իսկ Ն. Հովնաթանը կապն օգտագործում

¹⁶ Մարդն, կեակին բառերը և որոշյալ հոգով սեռական հոլովաձևերն են:

է մեծ մասամբ զէպ ձեռով, ինչպես՝ «Շամալ կուռզ մեկնէ, ծաղիկ զէպ ինձ բեր» (Բանաստեղծք, էջ 54): «Ճեսածը ծիանն, Գէպ մեր վարսն» (ն. տ. էջ 74): «Գնաց զէպ Թիֆլիզու խանն» (ն. տ. էջ 110) ևն:

Ջերգ (գերբ).—Հայկազյան բառարանն այս երկու ձևերը դնում է նույն բառահոլովածի տակ: Սկզբնաձևն, անշուշտ, գերբ բառն է, որտեղ դ-ն շնչոգ խոցման է ենթարկվել: Իմաստով համապատասխանում է ինչպես, որպես, նման, իբր(և) բառերին: Ի զեպ, գրարար լեզվում գերբ բառին հաջատար և գուցե ավելի կիրառություն ունեն իբրև, որպես կապերը, սակայն միջին հայերենում վերջիններս հատուկ կիրառություն ունեն: Ջերգ, ինչպես նաև սրա հնչյունափոխված գետ ձևերն իրենց վրա են վերցրել իբրև, որպես կապերի պարտականությունը: Ջերգ նախադրությունն ունենում է հայցական հոլովով կապվող խնդիր, ընդ որում, ինչպես զ նախդիրով, այնպես էլ առանց նախդիր՝

- «...Ջերբ զուկի է խալստ, որ այդ շերեի» (26Բ, էջ 185):
- Ջերբ զոնար ակն է լալ, որ լոյս կու ցաթի» (26Բ, էջ 185):
- «...Ջերբ զախուճ էն ի շարման» (46Տ, էջ 155):
- «Ոմանք ծաղկին գերբ բուսաստանէ» (ն. տ. էջ 150):
- «Ջերգ մրնիբայ Լր հանց շխակ» (ՆՇԲԶ, էջ 564):
- «Մէկին գերբ գեղայր հասնի» (ն. տ. էջ 583):
- «Ջերգ բզբոլորեալ լուսն ևս լուսով» (ԳԱԲ, էջ 211) ևն:

Ջերգ (գերբ) նախադրության հնչյունափոխված ձևն է գետ (զէպ), որը Հայկազյան բառարանը դնում է որպես գերբ բառի բացատրություն, ժողովրդական ձև: Պետ կապը նույնպես պահանջում է հայցական հոլովով կապվող բառ և, ինչպես գերբ կապի դեպքում, կապվող բառը հանդես է գալիս զ նախդիրով կամ առանց նախդիր, ինչպես՝ «...Ձի զէլ օտար համարած է իրաց ժառանգացն վխառուճոյ՝ Մովսէսի բերանով» (ՍԳԳ, էջ 16): «Նւ բորբոսին պղզամին կամ ցնեբբսէ ի յերական լինի, և կամ ի դուրս յերակացն, գեր ստամուսն...» (ՄՀԶԲ, էջ 80):

- «Պետ մում ի տեղրս հանցայ» (26Բ, էջ 169):
- «Պետ զգաղար խիստ է յար» (ՆՇԲԶ, էջ 562):
- «Պետ նոյ ունէր երեք որդի» (ն. տ.):
- «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» (2ԹՏ, էջ 122) ևն:

Արդ, ի՞նչ կարելի է ասել գերբ, գետ կապերի և սրանց համանիշ նման կապի կիրառության հաճախակիության մասին: Նկատելի է, որ միջին հայերենով գրող մի շարք հեղինակներ նախապատվություն են տալիս այս կամ այն ձևին, իսկ մյուսները հավասարապես օգտագործում են և՛ մեկը, և՛ մյուսը: Այսպես, Հովհաննես Երզնկացին օգտագործում է բոլոր երեք ձևերն էլ, մինչդեռ Կոստանդին Երզնկացին ու Ամիրդովլաթը գետ ձև չունեն: Մյուս կողմից՝ նկատելի է, որ 2-րդ շրջանի հեղինակներն ավելի շուտ նման կապն են օգտագործում: Ինչքան որ ուշագիր ենք եղել, Ֆրիկի, Քուշակի, և. Հովնաթանի մոտ գերբ կամ գետ բառերի կիրառության շնորհ հանդիպել, իսկ մյուս հեղինակների՝ Հ. Թվկուրանցու, Մ. Նազաչի, Նույնիսկ Գ. Աղթամարցու և Մ. Ղրիմեցու (վերջին երկուսը առավել ավանդադաս են) ստեղծագործություններում գերբ, գետ բառերի կիրառության միայն եղակի օրինակներ ենք գտնում, մինչդեռ

վերևի հեղինակների մաս նման կապը փնջերով ենք գտնում: Սա, անշուշտ, նոր՝ աշխարհաբար լեզվամտածողություն մի դրսևորումն է:

Վերևի երկու կապերի համեմատությունը առավել սահմանափակ կիրառություն ունի զինչ նախադրությունը, որն իմաստով համանիշ է գրանց: Սա ևս պահանջում է հայցական հոլովով կապվող բառ, ընդ որում՝ ինչպես զ նախդիրով, այնպես էլ առանց նախդիր:

- «Մարդիկ զինչ զարեան ծաղիկ փթթին՝ Է այլվի շորանան» (26Բ, էջ 160):
- «Գեղեցիկ ևս հաւատ, զինչ բզձաւ ծաղիկած» (ն. տ. էջ 196):
- «Ղինչ ձուկն՝ չըլն դուրս՝ ևս կուգամ տապալ» (ՆՀԲ, էջ 34):

Պինի գրարարյան նախադրությունն առավելապես օգտագործում են Մխիթար Հեռացին և Գուճգոստալը. ինչպես՝ «Վասն այն շերմանն որ զկնի փորագաւութեան և փորանցութեանն լինի» (ՋՄ, Յանկ գրոց, ԺԼ): «...Պինի այստ»՝ խնձորի չուր...» (էջ 47): «Քայց վասն զի էլան եկեղեցիքն իրենց բահմանէն, նա էլան ևս թագաւորքն յիրենց եղեալ կանոնացն և աստիճանաւորքն զկնի իրեանց» (ՍԳԳ, էջ 42):

Պինի նախադրության փոխարեն միջին հայերենում ավելի շուտ օգտագործում են յետ, յեակ կապերը, որ իր տեղում կտեսնենք:

(ի)Պատ բառը, ի տարբերություն գրաբարի, որտեղ առավելապես մակբայական կիրառություն ունի, միջին հայերենում հանդես է գալիս որպես կապ՝ բացի իմաստով, ընդ որում՝ որպես նտադրություն. պահանջում է բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝

- «Յամենան յնեղաց ի գատ, ասէ, դու կացիր» (26Բ, էջ 200):
- «Քեզնէ գատ էլ չունիմ կուման» (ՆՀԲ, էջ 19):
- «Մեզնէ գատ ոչնելով մեր ցան յմացաւ» (ն. տ. էջ 152):
- «Քեզնէ ի գատ, շալպուտ»,
- Ոչ-ով իմացաւ (ն. տ. էջ 58):
- «Աշխոս երբ Բէնէ ի գատ մարդ չուզեր ել՝ ևս ի՛նչ անեմ» (ՆԹԳ, էջ 75):

Այսպես նաև՝ «չարեաց ի գատ» (26Բ, էջ 201), «գործոյ ի գատ» (ՍԳԳ, էջ 37), «չաղօթից ի գատ» (ՖրԲ, էջ 90), «երամէն ի գատ» (ՄԵԲ, էջ 165) ևն: Պատ կապը նախադաս կիրառության միայն մեկ դեպք ունի Ֆրիկի մոտ, ահա այդ օրինակը. «Կեր դու յամէն պտղոյ, Ագամ,

Պատ ի մէկէն որ չէ հրամած» (Բանաստեղծք, էջ 70):

Ընդդէմ կապը, ինչպես գրաբարում, միշտ նախդաս է. ինչպես՝ «ընդէ՛ր արարեր զայդպիսի անարէնութիւնդ ընդդէմ ձեռաղի Էն (ՎԱԱ, էջ 14): «Ի դալ սաստիկ հողմոց ծառքն հպարտութեամբ հակասակին ընդդէմ նոցայ» (ն. տ. էջ 121):

- «...Թէ չէ ըզ՛նոզ հոլի
- Ընդդէմ մարդկան ևս ցուցուցել» (46Տ, էջ 176):

Նաղաշ Հովնաթանի հետևյալ նախադասությունն մեջ ընդդէմ կապը, կարծես, նտադաս կիրառություն ունի. «Մեծատան մարդոյ ընդդէմ մի կացցես» (Բանաստեղծք, էջ 90): Փանի որ նախադասությունն ընդհանրապես գրաբարյան է, ընդդէմ բառը կարելի է ընկալել նաև որպես ընդդէմ մի կացցես բացառյալ բայածին բաղկացուցիչ մաս:

Նոր կապ է ինչվի նախադրությունը, որ պահանջում է հայցական հոլովով կապվող բառ։ Ուշագրություն արժանի է այն փաստը, որ նրբերը զ նախդիրով հայցական հոլովի հետ չի գործածվում. ինչպես՝ «...եւ թէ գրչանայ, նա ինչվի մանն ապշախարէ» (ՄԳԳ, էջ 42)։ «Կու հրամայէ, որ ինչվի յեփ փողն յետ տան» (ն. տ. էջ 45)։ «Զի թէ գորտնի լինի ու դավի, ինչվի տարին մի յետ դանայ» (ն. տ. էջ 61) եւն։ Ինչվի կապը գրվում է նաև յափտեան մակրայի գրա, ինչպես՝ «...Ձեզ հերեփոսն ձգեն զինք ի կարգէն ինչուի յափտեան» (ն. տ. էջ 37)։

Բերված օրինակներից կարելի է տեսնել, որ այս կապի օգտագործումը հատուկ է Մերատ Գունդատապլին։ Միջին հայերենի և ոչ մի հեղինակ այս կապը չի օգտագործում։ Սա, անշուշտ, հայերենի մինչ(և) բառի բարբառային հնչյունափոխված, ազնի շուտ՝ ալլափոխված ձևն է։ Եվ իրոք, Ս. Գունդատապլը մինչև կապը չի կիրառում։

Գրաբարյան իբր և իբրև նախադրությունները նույնպես սակավ կիրառություն ունեն։ Եղած օրինակները 2-րդ շրջանի հեղինակների մոտ են, միշտ նախադաս կիրառությանը. պահանջում են հայցական հոլովով կապվող բառ, բնոյ որում՝ կամ զ նախդիրով, կամ առանց զ նախդրի։ Մարտիրոս Կրիստեոս մոտ, որը ինչպես վերևում էլ նշել ենք, խիստ ավանդապահ է, հայցականով գրված կապվող բառը միշտ զ նախդիր ունի, ինչպես՝

- «Կրճառեալ ատամամբ իբր դշոր զագան» (Բանաստեղծք. էջ 149)։
- «Եղեալ բաներս, որ պատմեցի,
- Իբր զխառ ձեզ գրեցի» (ն. տ. էջ 103)։
- «Կարմիր գունով ցուցանէ նա,
- Իբրև զվաղ զեղեցկանայ» (ն. տ. էջ 137)։

Մյուս հեղինակների մոտ հայցականով գրված կապվող բառը զ նախդիր չի ունենում, ինչպես՝ «Թէ սխալալ ես, խոսվարար, իբր անօրէն անցաւր ես» (ՄԵԲ, էջ 122)։

- «Իբր խրճոն մի ի ճրդի» (ԳԱԲ, էջ 180)։
- «Եւ զի՛արդ իշխես զու հայհոյել զնտսին,
- Որք են իբրև հրեշտակ ամենակալին» (ն. տ. էջ 114)։

Նկատի ունենանք, որ վերջին նախադասությունը և՛ մտածելաձևով, և՛ արտահայտությամբ գրաբարյան է, բայց, այնուամենայնիվ, կապվող բառը զ նախդիր չունի։

Զարգյուն բարբառային բառ է նաև (ի)սէջ կապը։ Իմաստով համապատասխանում է մտա կապին և պահանջում է սեռական հոլովով կապվող բառ։ Հայկադասն այն գիտն որպես «սամկական»։ Բառն հատուկ է Ս. Գունդատապլին և Ամիրզովյան բժշկագետի բարբառներին։ Միայն մեկ օրինակ գտնում ենք Քուչակի մոտ։ Սակայն դարձանալին այն է, որ Ս. Գունդատապլն այս կապն օգտագործում է որպես նախադրություն, մինչդեռ Ամիրզովյանը՝ որպես նուսադրություն։ Ն. Քուչակի մոտ ևս որպես նուսադրություն է օգտագործված։ Ահա այդ օրինակը. «Այն մարդուն ի խէջ մի՛ նտարի՝ նրբ նրթա գրեզ գրուցէ» (Գիվան, էջ 83)։ Կարելի է ենթադրել, որ, աշխարհաբար լեզվամտածողությամբ հարազատ, բայտ պետք է նուսադրություն լինեն, իսկ Գունդատապլը գրաբարյան կապ-նախադրությունների սովորություն է նախադաս կիրառել։ Ստորև

բերում ենք (ի)սէջ կապի կիրառության մի քանի օրինակներ. «Եւ թէ կինն մայր լինի որդոց, ու թէ օտար մօրու, զիբ պուշուն և զմահհն առնու, եւ թէ պիտի կենայ ի խէջ որդեցն, ու թէ ոչ՝ նա կնիւ առնու իր այրիկն...» (ՄԳԳ, էջ 57)։ «Եւ առաւել, թէ թիշ լինին կեցել խէջ իրեաց այրուկներ, ու տղայ չկենայ, նա ամէնն դանայ» (ն. տ. էջ 65)։ «Եւ ոչ թագաւորն ի խէջ հայրապետի թող նստի, զի չէ հրաման» (ն. տ. էջ 17)։ Կրկին նշենք, որ ի տարբերություն Գունդատապլի օրինակների՝ Ամիրզովյանը (ի)սէջ կապն օգտագործում է հայցական հոլովով (առանց զ նախդրի) կապվող բառի հետ, ինչպես՝ «Եւ որ ի ճակտին կաշուն հետն վերցնէ, ի մարդի ի խէջ խիստ սիրուն լինի» (ԱԱ, էջ 76)։ «Արքի՛ֆա... ինքն ի ներկարաճին ի խէջ կու գտուի» (ն. տ. էջ 85)։ «...Ձիր շար կամն յաղթէ եւ ամենայն մարդ ի խէջ պատուական լինի եւ հարկար» (ն. տ. էջ 113) եւն։

Ամբողջ միջին հայերենում լայն կիրառություն ունի հետ կապը։ Սրանով է արտահայտվում գրաբարի հանգրժն, (ի) միասին կապելով և այլ նախդիրով կառուցվածքով արտահայտվող միասնության դադափարը։ Հետաքրքրական է նշել, որ միջին հայերենում հանգրժն և (ի) միասին կապելով կիրառություններ չեն հանդիպում։ Հետ բառը գրաբարում ևս օգտագործված է, սակայն ո՛չ թե «միասին», «ճանգրժն» իմաստով, այլ այնպիսի շուտ՝ հեղինակների հայտնաբերած ևստարանը հենց այդպիսի օրինակներ է բերում՝ «Հետ սոթն տեսան շրջեցան։ Հետաքրքիր շրջելն հետ սոթն սրբոյն (Տ. II, էջ 89)։ Հետ կապի հանգրժն, ի միասին իմաստային կիրառությունը Հայկազյանը բնորոշում է որպես «սամկական», թեպետ հետադասական գրաբար մատենագրությունից էլ ավանդված է։ Նախ նշենք, որ մեր հեղինակները շատ անգամ հետ կապը շփոթում են յետ բառի հետ. այսպես՝ «ՄՀՋՄ, էջ 104)։ «Եկէք որ պաղան մտնումք ու խմենք հետ ծառ շխուսն» (ՆԲԳ, էջ 65)։ «Եւ թէ փակչի ի ծանու ու հետ ծամանակի ընկի ու սպանել զմարդ...» (ՄԳԳ, էջ 74)։ «Նաղայր բաշոյ կենայր ու յանէր, Ու հետ տանձին զաշերն անէր» (ՆՇԲԶ, էջ 565) նախադասություններում բացահայտորեն երևում է, որ պետք է լինեն յետ և ոչ թե հետ, քանի որ միասնության իմաստ չկա։ Այս շփոթը շատ ավելի հստակ երևում է Մ. Հերացու հետեւյալ նախադասության մեջ. «Փօջու սակ, եթէ այս հրանդուրթինս հետ քրսմին լինի, եւ հետ զուգամին կամ հետ շատ նուզայի, որ ի զլիտն իշանէ, կամ հետ յերկարօրեայ հազի, կամ յետ շատ արեան ձկնոյ...» (ՋՄ, էջ 49)։

Հետ կապը սովորաբար նախադաս կիրառությամբ է հանդես գալիս, պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «Ապա թէ շերտն հետ շատ հազին լինի...» (ՄՀՋՄ, էջ 30)։ «Տեսէք, թէ ի՛նչ զարմանք եղև հետ բուռային և Առովին» (ՖրԲ, էջ 209), «Հետ մոլլանուն ժուս զայ պիտիս» (ՀԹՏ, էջ 229)։ «Հետ անգլտին մի՛ դատիր, թէ հազար որ գրեզ կու սիրէ» (ՆԲԳ, էջ 94) եւն։ Սակավ օրինակներում հետ կապից առաջ գրվում է ի նախդիր, ինչպես՝

- «Հոն քո տէրտէրրոյ կու ճորայ,
- Թ՛Աշան ընկեր է ի հետ նորայ» (ՀԵԲ, էջ 166)։
- «Աղէկին վատն է ատող
- ՛ ի հետ բարոյն շարն է նենգով» (ԿԵՏ, էջ 170)։
- «Զի ճանչել զվատն յաղէկէն,
- Ի հետ սմանց անէր քուշտ» (ն. տ. էջ 185) եւն։

Հետ կապը դերանունով արտահայտված կապվող բառ ունենալու դեպքում տարբեր հոլովառություններ է հանդես գալիս: Այսպես՝ ցուցական, փոխադարձ, ինչպես նաև անձնական դերանունների III դեմքը սեռական հոլովով է գրվում. «թի հետ նորա» (ՉԵՔ, էջ 166), «հետ իւր» (ԿԵՏ, էջ 163), «հետ նորա» (ն. տ. էջ 217), «հետ այնոր» (ՄՀՁՄ, էջ 11), «հետ այսոր» (ն. տ. էջ 24), «հետ անոր» (ՆՔԳ, էջ 68, 84), «հետ մկվմկի» (ԱԱԱԱ, էջ 12, 13), «հետ միմեանց» (ՖՐԲ, էջ 188) կն, միջդեռ անձնական դերանունների I և II դեմքերն առավելագույն արականով են գրվում, ինչպես՝ «հետ ինձ» (ՉԵՔ, էջ 155), «հետ ինձ» (ԿԵՏ, էջ 174, 233), «հետ մեզ» (ն. տ. էջ 165), «հետ ինձ» (ն. տ. էջ 185, 187), «հետ ինձի» (ն. տ. էջ 123), «մեզ հետ» (ՖՐԲ, էջ 144), «հետ ինձ» (ՉՔՏ, էջ 224, ՄՆԲ, էջ 108, 111, ՆՀՔ, էջ 18, 21, 39, 90, ՆՔԳ, էջ 47, 94) կն, կն:

Վերևում նշեցինք որ հետ կապը նախադաս կիրառություն ունի, սակայն պետք է ավելացնենք, որ առանձին դեպքերում նաև ետադաս կիրառությամբ է հանդես գալիս: Ինչպես ստորև բերված օրինակներից կտեսնենք, մեր հեղինակները հետ կապը հազվադեպ են ետադաս օգտագործում, իսկ ն. Հովհաննիսյանը գրեթե միշտ ետադաս է օգտագործում. «Այն քա հաստուն հետ կու ջանայ» (ՉԵՔ, էջ 167), «Խօսե՛ դու լիս հետ մէկ կոյա» (ԿԵՏ, էջ 162), «Ճակատդ լցել ես սակով, Ունեբեղի հետ խիստ է խոսան» (ՆՀՔ, էջ 51), «Եկե՛ջ մարդդ հետ շրջիր և խօսել» (ն. տ. էջ 94), «Դու ինձ հետ գրուցէ» (ն. տ. էջ 18), «Գրե՛ս ինձ հետ շատ խօսք ունիմ» (ն. տ. էջ 229) կն, կն: Նշանակում է, զեռես ԱՄՄ դարում վաղ աշխարհաբարբ արձեթն անցում էր կատարել հատկապես չիչ-հատկապես կապակցությամբ արտահայտված կապերի ետադաս կիրառություն:

Մեր լեզվի այս շրջանում լայն կիրառում է գտնում համար կապը: Հայկազյան բառարանը բառս որակում է որպես «ոսմկական»: Ճիշտ է, ետրեւացին ևս օգտագործել է «(h)համար» («հաշիվ») բառը, սակայն նախադաս կիրառությամբ և որպես իր ժամանակի խոսակցական հայերենի ձև՝ «(Հանդրանիկ) պահէ առ իւր ի համար բազարուրեան»: «Շինեալ են տուն ի համար Բն իւրոյ հոտրովիդատոյ»: Բառի անցումը կապական կիրառության, անշուշտ, կատարվել է համար «հաշիվ» իմաստի շնորհիվ: Գրաբար լեզվում համար կապի փոխարեն օգտագործված ենք գտնում վասն բառը, որին կարելի է հանդիպել ամեն նախադասության մեջ: Միջին հայերենը մեզ ավանդել է լեզվական գեղեցիկ նմուշներ, որտեղ միաժամանակ օգտագործված են դրաբարբան վասն և «ոսմկական» համար կապերը: Գրաբար ուսած հեղինակն ուզում է վասն բառն օգտագործել, բայց դարաշրջանի խոսակցական լեզվին հարազատ մնալով «ավելորդաբար» գնում է նաև համար կապը: Ահա այդ օրինակները.

- «Վասն մերձադրութեան համար» (ԱԱԱԱ, էջ 187);
- «Վասն ազրուկ հանելու համար» (ն. տ. էջ 54);
- «Վասն Ազամալ սիրոյն համար» (ՉՔՏ, էջ 163);
- «Վասն իմ սրտիս սիրուն համար» (ԿԵՏ, էջ 122);
- «Վասն անցաւոր կեանքի համար» (ն. տ. էջ 194);
- «Վասն այն մարգարտի համար» (ՖՐԲ, էջ 44):

Բոլոր հեղինակներին մոտ էլ համար կապը բացառապես ետադաս կիրառություն ունի, և գոյականով ու դերբայով արտահայտված կապվող բառը սե-

ռական հոլովածն է ունենում, ինչպես՝ «Եւ իր փոխանն՝ վասն ազրուկ հանելու համար՝ հիթիսն է» (ԱԱԱԱ, էջ 54): «Եւ առայ զնն. Աստուծոյ համար և Աստուծոյ սիրոյն համար զնալ ի դունս արդիւլ մեկ պահ մի» (ՎԱԱ, էջ 135): «Հիւանդացաւ մամու համար, Բայց սարկեցաւ նա շատ Երկար» (ՆՇՔԲ, էջ 568): Այսպես նաև՝ «սիրոյն համար» (ՉԵՔ, էջ 159), «աղաղցոց համար» (ՄԳԳ, էջ 20), «մարմնոց համար» (ՖՐԲ, էջ 176) կն, կն:

Գերանուն կապվող բառ ունենալու դեպքում հոլովառությունը փոխվում է: Այսպես՝ ցուցական դերանուններով, ինչպես նաև անձնական դերանունների III դեմքով գրված կապվող բառերը սեռական հոլովածն են ունենում. «այնոր համար» (ՄՀՁՄ, էջ 40, 41), «այդոր համար» (ՖՐԲ, էջ 44, 58), «նորա համար» (ՆՀՔ, էջ 52), «նրա համար» (ն. տ. էջ 52), «անոր համար» (ՎԱԱ, էջ 137) կն: Միջդեռ անձնական դերանուններ I և II դեմքերի հետ կիրառության բոլոր դեպքերը արականով են գրված, ինչպես՝

- «Թէ զու գիս խաղուլ անես, ինձ համար կանգնիմ ևս ի ժամ» (ՆՔԳ, էջ 72);
- «Զհուրն ինձ համար է պարտաստել» (ՖՐԲ, էջ 124):
- «Եկայք ամէնքս յոտք անկաններ,
- «Որ մեզ համար ստեղծած է նա» (ն. տ. էջ 125);
- «Կինն Երզնու, Երզմամբ ճայթէ.
- «Քեզի համար ինձ մահ տիրել» (ՉՔՏ, էջ 120) կն:

Համար, պատճառով կապերի իմաստով է գործածվում սիրուն կապական բառը, ինչպես՝ «Բլրուլին անենք նուգար. Որ ի բաժնոր վարդի սիրուն Ի շատ կուգայլ քան զդիտանար» (ՉՔՏ, էջ 160): «Քո սիրուն Եղեն գուսան» (ՄՆԲ, էջ 102): «Ոմանք յայն ծաղկի սիրուն յորցան ու դարձան դեղին» (ն. տ. էջ 105) կն:

Նախդրավոր կապվողությամբ կապական բառերից է ի ձեռն բառը, որ պահանջում է սեռական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «ի ձեռն այլք պատճառանգդ այս չերմս ընձայի» (ՄՀՁՄ, էջ 31): «...Եւ հոտի ի ձեռն գիներեան» (ն. տ. էջ 122): «Նույնպէս ևս յամենայն մարմնոյն՝ ի ձեռն հազարոյն՝ արկեուի նիւթ» (ն. տ. էջ 48): «Թագաւորք յԱստուծոյ ևս կարգած, որպէս չիօրայելի Աստուած ցուցնէր ի ձեռն մարգարեից օծութեան» (ՄԳԳ, էջ 46): Գրաբար լեզվում նույնպես ի ձեռն կապը լայն կիրառություն ունի, ինչպես՝ «Թէպէտ և գանձն յարբանիս Պարսկաց Երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն հախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (ՆՔԳ, էջ 1, Եղանակ): Ինչպես վերին կիրառություններից էլ կարելի է անենք ի ձեռն կապակցությունն իր մեջ պահում է կես բառական-նյութական, կես կապական իմաստ: Հայտնի է, որ գրաբարում ի նախորդը հայցական հոլովի գաղափար, ինչպես՝ «...ասելով ի պարսկերէն լեզու» («պարսկերէն լեզվով»-Քուրանդ, IV, ժՁ): Ուրեմն՝ ի ձեռն սկզբնապես նշանակել է ձեռնով՝ բառի նյութական առումով, իսկ հետո կիրառվել է կապական իմաստով:

Ներդրական գաղափարի դարբարան նախորդի կառուցվածքի պահանջուն զուգահեռ միջին հայերենում աշխուժանում են (ի)մէջ կապով կապվող ներդրականի դրսևորման ձևերը: Գրաբարում ևս (ի) մէջ կապով կապվող ձևեր գտնում ենք: Բերենք Նզնիկ Կողբացու հետևյալ օրինակը. «Արդ բարիք

է արեգակն... Իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղումն և յառակի յուցեալ...» (Նզմ ազնազոց, I, Գ): Ստիպան, իշպես Հայկազայան բառարանի օրինակներէց էլ կարելի է եզրակացնել, բառս պարզ մէջ ձեռով չի օգտագործուում, իսկ ի նախորդ հասկումը բառի վրա ցույց է տալիս, որ գրաբարում մէջ բառը դեռևս իր բնական-նյութական իմաստը պահում է: Մինչդեռ մեր լեզվի այս շրջանում մէջ բառը հաճախ հանդես է գալիս սոսկ որպէս կապ, որ ստորև կտեսնենք: Նախ՝ նշենք, որ (ի)մէջ բառը գրաբարյան ձեռով շատ կիրառու-
 ւթյուններ ունի, նույնիսկ 2-րդ շրջանի հեղինակների մոտ, ինչպէս՝ «Եւ անտայ մասյործացն ժողովեալ դմարթն և զկաշին եզին յաղաղոցն ի մէջ շուկային և ինքեանք զնացին ի տունս իրեանց: և ի մէջ զիշերին ժողովցան շուք...» (ՎԱԱ, էջ 128): «Եւս առաւել ի մէջ իւր զեղի» (ՆՆԲ, էջ 80): «Ք[Ո] բան[ն] պահեսա՛ ի մէջ քս մրտաց» (Ն. տ. էջ 92): «Եզին ի բանս ի մէջ արզվին» (ՆՇԲԶ, էջ 569): Այսպէս նաև՝ «Ի մէջ երկրի» (ԿՅՏ, էջ 180), «Ի մէջ զիշերս» (Ն. տ. էջ 167), «Ի մէջ զբրին» (ՖրԲ, էջ 209), «Ի մէջ ծաղկանց» (ՀԹՏ, էջ 166), «Ի մէջ զիշերոյ» (ՄՆԲ, էջ 47), «Ի մէջ բերնին» (ՄՂԲ, էջ 102), «Ի մէջ արդոց» (Ն. տ. էջ 112) ևլն:

Մէջ կապի կիրառութիւնը միջին հայերենում գրաբարի համեմատու-
 ւթյամբ ունի մի բանի առանձնահատկութիւններ: Նախ՝ այս շրջանում մէջ բառը, ճիշտ է, նախագաս կիրառութիւնը, բայց առանց ի նախորդի է հանդես գալիս, իսկ այդ նշանակում է, որ բառի նյութական իմաստը թուլացել է և անցում է կատարում դեպի վերաբերական իմաստ արտահայտող խոսքի մասը: Օրինակներ ունենք ինչպէս առաջին, այնպէս էլ երկրորդ շրջանի հեղինակների մոտ՝ «Տեսէր մէջ զիշերի շատը, որ պահ մի շին լել ի բուն» (ԿՅՏ, էջ 124): «Մէջ անգիտաց հարբ եմ ընդել» (Ն. տ. էջ 122): «Տանին մէջ հողուն զընեն» (ՖրԲ, էջ 172): «Մէջ յամէն սրբոց սներես» (Ն. տ. էջ 155): «...Քէ արկանէր մէջ հերիսի» (ՄՂԲ, էջ 104) ևլն, ևլն: Երկրորդ՝ մէջ կապը, առավելա-
 պես 2-րդ շրջանի հեղինակների մոտ, գտնուում ենք նապաստ կիրառութիւնը, իսկ դա նշանակում է, որ բառն ամբողջում է որպէս կապ և աշխարհարարի շարահատուկյան է ենթարկում: Եթէ առաջին և երկրորդ շրջանի մի բանի հեղինակների լեզվի բնութիւնն կատարենք, կտեսնենք, որ, օրինակ, Հովհաննէս և Կոստանդին Երզնկացիները մէջ կապը նապաստ կիրառութիւնը չեն օգտա-
 ցործում, մինչդեռ Ամիրզովաթի մոտ միայն նապաստ կիրառութիւնը է, ինչ-
 պէս՝ «Էալի մէջ» (ԱԱ, էջ 50), «Եղի մէջ» (Ն. տ. էջ 55), «Ետերի մէջ» (Ն. տ. էջ 85) ևլն: Մէջ կապը մեծ մասամբ նապաստ է օգտագործում նաև Ն. Հովնաթանը, ինչպէս՝ «Խնձորի մէջ (Բանաստեղծութ. էջ 8), «բարի մէջ (էջ 19), «Իմ ստիմ մէջ» (էջ 24) ևլն:

Մտ կապը գրաբարում, ճիշտ է, օգտագործվում է, սակայն ո՛չ զուտ կապական իմաստով: Մտ բառի գրաբարյան բոլոր կիրառութիւնները մի տեսակ անցումային վիճակ են անակաճ-մակրային դեպի կապ. այսպէս՝ «Մտ յոճման արգելոցացն որսոյն էրիոցն...» (Բուզանդ, IV, ԺԵ): «Մտ ան նսաս» ևլն: Մտ բառի գրաբարյան կիրառութիւնները կարելի էր հավասարեցնել աշխարհարարի հետևյալ կապակցութիւնների մէջ ունեցած դերին. «Եւ նրան մոտ եմ»: «Կայարանին մոտ մի տեղում գրախանութի կա». «Գրակին մոտ մի՛ դն» ևլն:

Ինչպէս վերևում բերված օրինակներից էլ կարելի է նկատել, գրաբարում մտ բառից հետո զրվում է ի նախորդով բառ: Միջին հայերենում ևս պահ-

պանված է այս կիրառութիւնը. մեր հեղինակները մեծ մասամբ մտ բառը նախագաս են օգտագործում ի նախորդով զրված հայցական հոլովով բառի հետ, ինչպէս՝ «Կու ընդէ՛ր մտ ի մանալն յայտնի լինիս պարզ երևութ» (ԿՅՏ, էջ 174): «Եւ իւր սիդրն ի յարտեշ մաղծին բորբոսելուն լինի՛ որ ի ներքս ի յերական բորբոսի, որ մտ ի սիրուն լինի և մտ ի սասմարաց բերանն...» (ՄՀՁՄ, էջ 103): «Մտ ի Բալախն եկան հասան» (ՀԹՏ, էջ 200) ևլն:

Միջին հայերենում մտ բառի կիրառութիւնը գրաբարի համեմատու-
 ւթյամբ մի շարք առանձնահատկութիւններ ունի: Նախ՝ մտ բառը, ճիշտ է ի նախորդ ունեցող կապովով բառի հետ, սակայն նապաստ կիրառութիւնը է հանդես գալիս, ինչպէս՝ «Ետերն ի յանդուտն ի մտ, միտք արս թէ ի՛նչ նշանն է» (ՀԵԲ, էջ 157): «Ղէա ըզթիթեզն ի մտն ի մտ» (ՀԹՏ, էջ 132): Այս դեպքում կապովով բառը զրվում է ինչպէս նախորդով հայցականով, այնպէս էլ սեռական հոլովով՝ «...Պատեհ է որ տեղոյն մարդիկ յառաջ գան և ժողովին զայլ շէնեբաց ազէկ մարդիկն ու շափեն թէ ի յո՛ր շինու ի մտ է սպանածն (ՍԳԳ, էջ 68):

«Անդէա և յիմար մարցն ի մտ՝
 Մտ շաթէ ափով մի բիրթ» (ՖրԲ, էջ 114):
 «Թէ յանդէա մարցին ի մտ» (ԿՅՏ, էջ 155):

Վերին կիրառութիւններից անցումը մտ կապի այսօրվա իմաստով կապ-
 կան կիրառութիւն, ինչպէս ասում են, միայն մեկ բալլ է, որ առավելապէս օգտագործված ենք գտնում 2-րդ շրջանի հեղինակների մոտ, մասնավորապէս՝ Ամիրզովաթի ու Ն. Հովնաթանի, ինչպէս՝ «...Պիտի որ զարբինն բուրան զնեն և փշեն որ հալելու մաս լինի և հանեն» (ԱԱԱԱ, էջ 158): «Անդէա մարցան մտ նա փող մի շաթէ» (ՆՇԲ, էջ 82): «Ծամբա գտէք, ինձ սիրտնու մտ տարէք» (Ն. տ. էջ 193): «Ննձ մտ նստիր, պատկերիդ նման բաշնձ» (Ն. տ. էջ 41) ևլն: Անձնական գերանունների I և II դիմերի հետ մտ կապը տարբեր հոլովառութիւնը է հանդես գալիս, ինչպէս՝ «Շատ վախտ է երեսդ ու ծոց իմ մտ շես բացել, կարմիր վարդի թէք» (ՆՇԲ, էջ 30): «Թէ դն բամպասես՝ էլ Լեզ մտ չի գար» (Ն. տ. էջ 90): «Մէկ օր ինձ մտ արի, պատկերիդ նման բաշնձ» (Ն. տ. էջ 229):

Կապերի՝ միաժամանակ տարբեր հոլովներով կապովով բառերի հետ հան-
 դես գալը, անշուշտ, նրանց մէջ բնական իմաստի թուլացման հետևանք է Հայագիտութիւն մէջ ընդունված է կործել, որ այդ երևութիւն սկսվել է գրաբարյան մտ բառի հոլովայան կապակցութիւն փոփոխութիւնից: Ինչպէս վերևում ցույց տվեցինք, մտ բառը գրաբարում զրվում է ի նախորդով հայցականի վրա, ուստի անձնական գերանունների հետ պիտի սար մտ լիս, մտ ի Լեզ մտ ի մեզ, մտ ի ձեզ: Հայտնի է, որ աշխարհարար լեզվամասնագո-
 ւթյունն առաջին հերթին վերացրեց գրաբարյան նախորդները: Ի դեպ, ասե՛ք, որ այսպէս առաջացավ ներդրական հոլովն աշխարհարարի որոշ բարբառե-
 րում՝ ի հնում-հնում, յառաջնում-առաջ(ի)նում ևլն: Նախորդներից զրված գերանունների վերին ձևերն աշխարհարարում ընկալվեցին որպէս տրական հոլովաձևեր: Ինչպէս զրում է բանասիրական գիտութիւնների զոխոր Վ. Առաքելյանը, հետազոտում ի նախորդը ընկնում է և լինում է մտ բեզ-բեզ մոտ, մտ մեզ-մեզ մոտ, մտ ձեզ-ձեզ մոտ, իսկ եզակի առաջին դիմում

էլ համարանոթայմար՝ ինձ մտա: Սրանից համարանոթայմար առաջանում են ինձ վրա, ինձ համար, ինձ վրա, ինձ համար կըն՞: Եվ իրոք, ստորև բերված երկու օրինակներում կարելի է շոշափելորեն նկատել, թե ինչպես կարող էր կատարվել այդ երևույթը: «Չաստուած մտա ի ինձ դու տես ու գմահոն օրըն դու ինչէն» (ՀԵԲ, էջ 147): «Սրանից որ սիրու տէր կան, Ամէնն մեզի մտա թող պան» (ԿԵՏ, էջ 154):

Առաջին օրինակում մտա բառը գրաբարին հարազատ ձևով ի նախդիրով հայցական հոլովածն է պահանջում, մինչդեռ երկրորդ օրինակում ի նախդիրը միանալով մեզ հայցական հոլովածին՝ տվել է մեզի տրական հոլովածը, մի հոլովածն, որ ինչպես միջին հայերենին, այնպես էլ այսօր արևմտահայ աշխարհաբարին հարազատ է:

Մինչ և մինչև կապերը, ինչպես գրաբարում, միայն նախադաս կիրառությունն ունեն է գրվում են ի նախդիրով արտահայտված հայցական հոլովի վրա, ինչպես՝ «Մէկն այն է՝ որ իւր տարութիւնն հանապազ միացեց լինի յառաջէ մինչև ի վնարն» (ՄՀՁՄ, էջ 57): «Պատե՛հ է որ հրահեղութեան սկզբէն մինչև ի հրահեղութեան ի կատարիլն լինի» (ն. տ. էջ 125): «Ե յԱզա-մայ մինչև ի ինգ» (ՀԹՏ, էջ 178): «Չասեմ թէ հանց հողմ ինչէ, որ բախէ մինչև ի յառակ» (ՅԲԲ, էջ 57) կն: Ի տարբերություն մյուս բոլոր հեղինակների՝ ն. Հովնաթանը այս կապերն օգտագործում է ուղղակի հայցական հոլովով կապվող բառի հետ, ինչպես՝ «Աստուած կու սիրէք, մինչև օրհնելն մարդ չի վեր կե-նայ» (Բանաստեղծութ. էջ 161): «Քո սիրոյց հալվիմ և մաշիմ մինչև կալ տարք» (ն. տ. էջ 230): «Մինչ համարանոթ քառուս օր է» (ն. տ. էջ 102) կն:

Յեւ կապը, ինչպես գրաբարում, գրեթե միշտ նախադաս է հանդես գալիս և սեռական հոլովով գրված կապվող բառով, ինչպես՝ «Անպա յեւ երկու առա՛ն դարձաւ ի բազանիս մտա՛» (ՄՀՁՄ, էջ 14): «Ձի յեւ կերպուր ուսելոյն տա-րութիւնն յաւելայ» (ն. տ. էջ 39): «Եւ յեւ տարոյ միայ զնա մըկրտոցիս» (ԴԱԲ, էջ 116) կն: Մ. նաղաշի հետևյալ օրինակում յեւ կապն օգտագործված է, թվում է, տրական հոլովածնի հետ. «Անոնց, որ յեւ ձեզ կուգան, օրինակ շարեաց մի՛ լինիր» (Բանաստեղծութ. էջ 127): ն. Հովնաթանն այս կապը եւ նուազան է օգտագործում: Գծրախոսարար շատ կիրառություններ չկան, սակայն երբեք կիրառությունը խոսքային հանդամանքների թեկադրանքով չէ, այլ ուղղակի աշխարհարար լեզվամտածողության ու շարադասության մի օրինակով գրանորում. «Համարանոթս յեւ՝ եղիս կայ» (Բանաստեղծութ. էջ 103): Յեւ կապի փոխարեն այս շրջանում գործածվում է նաև յեւս կապը: Սա, անշուշտ, կազմված է յեւ բառի վրա և շոշափակի հավելումով: Հաշվադրանք բառապարբեր յեւս բառ չկրիս: Ըստ երևույթին, այս կապը բարբառային է և բնականաբար՝ ետադրություն: Ինչպես կարելի է օրինակներից էլ նկատել, յեւս կապն օգտագործում է Ամիրբեյլիս թշխապետը. մեկ օրինակ էլ գտնում ենք Մ. Հերա-ցու մոտ, թեև վերջինս ավելի շուտ յեւս կապն է օգտագործում: Օրինակներ. «Եւ թէ կերակրելն յեւս ուտեն՝ ղկերակուրն կու մարսէ» (ԱԱ, էջ 107): «Եւ յաւ թուպին այն է, որ զինքն գործ ղեզ խմելուն յեւս է ի գործ արկանեն» (ն. տ. էջ 27): «Եւ ուսելուն յեւս կնէ յարեն նստի մերկ» (ն. տ. էջ 27): «Եւ երբ չերմն պակասի, ի բաղանիս մտէ, եւ եղի չրով յուցվի, եւ ի բազանեացն յեւս ի բուն լինի» (ՄՀՁՄ, էջ 26) կն:

¹⁷ Վ. Խառեկյան, Փամեսականից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 186:

Յեւս բառն ունի նաև անկախ, մակերայական կիրառություն՝ հետո բառի իմաստով. ինչպես՝ «Եւ թէ զգայն մէկ բանի ար ոսկրով բռեն և յեւս՝ զազրն աղով և պղպեղով խառնեն և չրով խմցնեն, ազտէ» (ԱԱԱ, էջ 112): «Եւ եւ օր ի շուքի դիր, եւ յեւս կտարէ զգողմն...» (ն. տ. էջ 121):

Նման բառը գրաբարում անսկան է, մակերային և նախադրություն: Կապական հետակ կիրառություն չունի. պատահական չէ, որ նման բառի հետ գրաբարում հանդես է գալիս տրական հոլովով կապվող բառ. ինչպես՝ Աբամայ ոչ գտաւ օրհական նման նմա, նման ինգ, եւ դու՛ նման նոցա կն, որտեղ, թվում է, նման բառն ավելի շուտ անսկան է և տրական հոլովով լրացում է պահանջում:

Միջին հայերենում եւ մենք գտնում ենք նման կիրառություններ, սակայն մեր լեզվի այս շրջանի համար բնորոշը նման բառի կապական կիրառությունն է, ինչ որ ստորև բերված օրինակներում կերտն: Նախ՝ նման բառն ունենում է նախդիրով հայցականով արտահայտված կապվող բառ, ինչպես՝

- «Շատ կայ ի յաւ երման ի պնէն օճըն կու վազէ» (ՀԵԲ, էջ 157):
- «Աշխարհս ի տղայ նրման, որ ի վեր ՚ի վայր թաւալի» (ն. տ.):
- «Քո տեսն ի լուսն երման
- ...Աչերդ է ի ծով երման» (ԿԵՏ, էջ 156):
- «Անկէտն ի հուր նման, ուր ընկնի գանդն կու էրէ.
- Գիտուն ի ջուր նման, ուր երթայ՝ կանանչ բուսեր է» (ՆԹԳ, էջ 94) կն:

Նման կապի հետ նախդիրով հայցականով որպես կապվող բառ հանդես եկող այս ձևերից է, որ ի նախդիր վերանալով, ստացվեցին նման+հայցական բառ արտասովոր կապակցությունները, ինչպես՝

- «Եկօքն ի յանգլտն ի մտա, միտք արա թէ ի՞նչ նման է
- Աշխարհս է ոչինչ նրման, շատ դատին դառան փոշիման» (ՀԵԲ, էջ 157):
- «Երեսդ է լուսն նման ու զիջերդ ի դատիր դիշեր» (ՆԹԳ, էջ 48):
- «Երես՝ այն զումաչ նման, որ հանած է ֆուսակաց մէջէն» (ն. տ. էջ 61):
- «Պոկուրդ է լիտն նման, կու բանաս զու մարդու մատան:
- Լեզուդ է պլուղ նման, կու գովէ զինչ գարեան նման» (ն. տ. էջ 43) կն:

Միջին հայերենում նման կապը մեծ մասամբ սեռական-տրական հոլովով կապվող բառ է պահանջում, ընդ որում՝ երկնակցների մոտ զեւ նախադաս կիրառություններ հանդիպում են, ինչպես՝ «Նման արեգական» (ԿԵՏ, էջ 188), «Նման միմանց» (ն. տ. էջ 173), «Նման արալին» (ՀԵԲ, էջ 209) կն, սակայն Ֆրիկից սկսած մեծ մասամբ ետադաս կիրառություններ ենք գրտնում, իսկ Ամիրբեյլիսի, ն. Քուչակի, ն. Հովնաթանի մոտ՝ միշտ ետադաս: «Եւ տերեխն տակն գերդ դալտան խոտի նման կու բուսի» (ԱԱԱԱ, էջ 84): «Գու հագրվարդի նման, մարրն չէ բերել բեզ նման» (ՆԹԳ, էջ 43): «Լուսնի նման պայծառ երես բուրած» (ՆՀԲ, էջ 5): «Միւսմարգի նման բային» (ն. տ. էջ 13): «Վարքի նման բոյ երեսդ փայլի, շողողայ» (ն. տ. էջ 21): «Երեկ վարդի նման եւ կու փայլէի, Միւսմարգի նման ի շուրջ կու գայի» (ՄՆԲ, էջ 159): «Գովեմք զհարսն ու զփեսայն, Սորայ Տակորայ նրման» (ն. տ. էջ 103) կն, կն:

Գերանունների հետ կիրառելիս նման կապը տարբեր հոլովներ է պահանջում: Այսպես, III դեմքի անձնական դերանունն ու ցուցական դերանունները սեռական հոլովով են գրվում, ինչպես՝

«Եւ բլրուլն յանկարծակի
Երևե-կանն է ի վերայ վարդին» (—վարդի մասին— ԿԵՏ, էջ 147):
«Շատ պարծեցայ ի վերայ սուխոյ» (ՖրՔ, էջ 92) ևլն:

Մեր լեզվի այս շրջանում վերայ կապն առավելագույն հանդես է գալիս առանց ի նախորդի, իսկ այդ նշանակում է, որ բառական-նյութական իմաստի միացում է կատարվում: Իսկ վերայ բառի ետագուս կիրառություններն արդեն ապացույց են, որ բառս ընկալվում է զուտ որպես կապ. «Քարձր էս նըստեր վերայ խալաղ» (ՖրՔ, էջ 177): «Պանդոկ մի կայր վերայ երկի» (ՆՇՔԶ, էջ 563): «Ի խրեկարեր լլորին վերայ...» (Ն. տ. էջ 584): «Յայս ասարևարիս վերայ վատն խոխի մարդոյ չի մնար» (ՀԵՔ, էջ 156): «Թռչիմ նստիմ թևդ վերայ» (ՀՔՏ, էջ 229):

(Ի)Վերայ կապն անձնական գերանունների I և II դեմքերի հետ գործածվելիս, թվում է, սեռական հոլովով կապվող բառ է ունենում. ինչպես՝ «ի վերայ իմ» (ՎԱԱ, էջ 151): «Բն վերայ» (ՄՂՔ, էջ 132): «Ի ձեր վերայ» (ԿԵՏ, էջ 122): Բայց և՛ «Բեզ վերայ» (ՖրՔ, էջ 87):

Ինչպես վերևում բերված օրինակներից էլ կարելի է տեսնել, (ի) վերայ կապի մասին ետագուս կամ նախագուս կիրառության իմաստով որևէ ստույգ բան դժվար է ասել: Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների մոտ ունենր ետագուս կիրառության դեպքեր, մինչդեռ, ասենք, Ամիրզովյանի մոտ կան նախագուս կիրառության դեպքեր («ի վերայ նարամարին» — էջ 43, «ի վերայ ննդապատին» — էջ 44):

Բանաստեղծական արվեստի պահանջներն առավել ևս են խանդարում, որ այս կիրառությունները հատակ կերպով երևան Այսպես, թվում է, որ Ն. Շնորհալին և Կ. Երզնկացին հետևյալ նախադասությունների մեջ հարկադրաբար, հանգամարիչու համար են վերայ կապը ետագուս կիրառել.

«Ի խրեկարեր բլրին վերայ,
Չոր կիպարի ծառ մի տեսայ» (ԲԶ, էջ 584):
«Բաժանեչէ՛ր ի ձեր վերայ
Ձվարդս, որ վանց ձեր ցատուս մեռայ» (Տաղեր, էջ 122):

Սրանց հակառակ՝ Ն. Հովնաթանը վրայ կապը նախագուս է կիրառում, ինչպես՝

«Ես գարիպ եմ, դիպչիլ մի երած սրտիս,
Միծաղելով եկ ասենմ վրայ գրկիս» (Բանաստեղծք. էջ 40):

Ստորև կարելի է տեսնել, որ Ն. Հովնաթանը վրայ կապի բազմաթիվ կիրառություններ ունի, որոնցից ոչ մեկը նախագուս չէ:

Հատկապես 2-րդ շրջանի հեղինակների մոտ ենք հանդիպում վրայ կապի կիրառությանը: Սա, անշուշտ, նույն վերայ բառն է՝ հնչյունափոխված: Գրաբարը վրայ կապ չգիտե. Հայկազյան բառարանը ոչ մի օրինակ չի տալիս և հղում է ի վերայ բառին: Վրայ բառը բացառաբար որպես ետագործված է հանդես գալիս, ինչպես՝ «Ե թէ կրակին այրածին վրայ դնես, շատ արգտէ» (ԱԱԱԱ, էջ 86): «Փարչ մալ գրին կէս սպումայ, Գառան մսին վրայ շուտ տայ» (ՄՂՔ, էջ 98): «Անուն գԱղամայ հոգին ու գրեմ ի թրքին վրայ» (ՆՇՔԶ, էջ 89): Ն. Հովնաթանը միայն վրայ կապն է օգտագործում: Ծիշտ է, էջ 29-ում գտնում ենք «Բուխախի վերայ» ձևը, սակայն պարզվում է, որ գրչություննե-

րում տարրեր ձևեր կան: Ստորև տալիս ենք օրինակներ Ն. Հովնաթանի ստեղծագործություններից.

«Առաւօտաց երկնից ցօղ կարմիր վարդի վրայ մազած» (էջ 24):
«Ես բաց երեսիդ վրայ Հարստես» (էջ 25):
«Մեր մոճերի վերայ փարսան» (էջ 118):
«Նազանի, ես բաց նակապի վրայ մոչըաղն» (էջ 236) ևլն, ևլն:

Առավելագույն միջին հայերենին հասուկ կապեր են ի վեր, ի վայր կապակցությունները, որոնք պահանջում են բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝ «Եւ ի կիսէն ի վեր մանտր տերև ունի» (ԱԱԱԱ, էջ 132): «...այլ ասեր են թէ զեն է միջացն ի վայր» (Ն. տ. էջ 180): «Սատանան յիշոցք ասաց. զես անկից ի վեր կու վայէ» (ՆՇՔԶ, էջ 88) ևլն:

Վասն կապը զրարբի համեմատություն կիրառական առանձնահատկություններ չունի: Բացառաբար գործածվում է նախագուս՝ զրարբի յաղագս, ի պատճառս կամ աշխարհարբի համար կապի իմաստով, ինչպես՝ «Վասն նայի իմ կողակցին... ես այլ նորայ հաւանեցայ» (ՀԵՔ, էջ 229): «Ես պատուիրան վարն պրտաղն՝ շուտն անդ» (ԿԵՏ, էջ 222) ևլն:

Վասն կապն այն ցուցական գերանվան հետ կիրառվելիս ուղիղ ձևով գրված կապվող բառի հետ է հանդես գալիս: Հայկազյանը գիտե այս ոճը և որպես հունարանություն է որակում: Ավելացնենք, որ զրարբում այն գերանունը բացառաբար հայցական հոլովով հանդես չի գալիս, այլ մե՛րթ սեռականով, մե՛րթ էլ հայցականով. Օրինակ՝ «Կարծեմ վասն այնոր (=այն պատճառով) արար, թէ ի վեր քարչել զնա կարէ» (ՀԵՔ, էջ 163): «Վասն այնորիկ սուրբ հրեղեն ի մի ծառոյ կայ պատրաստած, Որ ոչ բերէ պրտուլ բարի նա, հատանէ հասարակաց» (ԿԵՏ, էջ 151): «...Վասն այնորիկ ի լէտիբէլ Գնայ Ստամբուլ վտարական» (ՄՂՔ, էջ 83): Ինչպես նաև՝ «Վասն այնորիկ» (ՀԵՔ, էջ 247), «Վասն այնոր» (ԿԵՏ, էջ 144), «Վասն այնոր» (ՆՇՔԶ, էջ 580) ևլն, ևլն: Բայց և՛ «Եւ իւր ստածունս խիտ գծար է վասն այն՝ որ հիւանդութեան զլուխն բնութեան յաղթեայ լինի» (ՄՀՋՄ, էջ 33):

«Եւ հայր վանացն ասաց.—Առանկ հզնի
Վասն այն է նըբրաճայն և մօրտս շունի» (ԳԱՔ, էջ 112):
«Վասն այն՝ տերտըների ձեռացն Կուսան շումաղ ևս զուսազան» (ՆՀՔ, էջ 138):
«Վասն այն ևս այս շարիս դիպիմ որ ի յառաջ զայս լիմանամ» (ՖրՔ, էջ 168) ևլն, ևլն:

Ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներում, վասն այն կամ վասն այնոր (իկ)¹⁹ կապակցությունները բաղադրյալ շաղկապի իմաստ ունեն. իմաստով մոտ են որովհետև շաղկապին:

Գծախառաբար օրինակներ չունենք, սակայն մեզ թվում է, որ շաղկապական կիրառությունից զուրս, այսպես կոչված «չա՛հի տրականի» կիրառությանը զժվար թե վասն կապը հայցական հոլովով կապվող բառ պահանջեր:

¹⁹ Այնոր ձևը զուտ միջին հայերենյան է: Գրաբան ունի այսը, այլը, այնը, այսորիկ, այնորիկ այնորիկ ձևերը: Հետագուս կիրառության պատճառով վասն կապի հետ միշտ՝ երկրորդ ձևվեր են որվում:

Միջին հայերենում եօր կապ է աակ բառը, որն, անշուշտ, հին հայերենի աակ (գլխաակ իրաց, ստորին մասն. արմատ) բառի կապական կիրառութունն է: Ինչպես իր բառական իմաստն էլ ցույց է տալիս, համանիշ է ներեայ, ներեկ կապերին: Տակ բառը գտնում ենք երկրորդ շրջանի հեղինակների մոտ. միայն ևսադաս կիրառություն ունի. պահանջում է սեռական հարվով զրված կապվող բառ, ինչպես՝ «Այր մի ցանեալ էր լրեկոյզի ծառի աակն պարտեկ ձմերուկ» (ՎԱԱ, էջ 149): «Գրամ իջանեմ վարդենայն աակ» (ԳԱԲ, էջ 131): «...որ եզբարբն նստեն ծաղկեալ ծառի աակ» (ՆԷԲ, էջ 170): Հետաքրքրական է, որ Վ. Այդեկցին, օգտագործելով հանգերմ աակ կապը, չի կորվում գրաբարյան լեզվամատածողությունից և սովորություն ունի աակ կապն օգտագործում է ի նախորդ հետ. ինչպես՝ «Վարդացող[ն] ասաց. ... գնայ քշէ զէն ի ծառին աակն և ևլ յիջոյն ի ծառն» (Առակը, էջ 174): «Եւ բերին զձեր բահանայն ի սանդղատին աակն» (ն. տ. էջ 138) կն:

Փոխան և փոխանակ կապերը, ինչպես գրաբարում, միշտ սեռական հարվով կապվող բառ են պահանջում՝ «փոխան պաղոյ» (ԿԵՏ, էջ 151), «փոխան հողոյ» (ն. տ. էջ 182), «փոխանակ բարոյոյ» (ՄԵԲ, էջ 149), «փոխանակ շարի» (ՄԳԳ, էջ 70), «փոխանակ նորա» (ՎԱԱ, էջ 179) կն: Սակայն միջին հայերենում այն կապերի կիրառությունը գրաբարի հետ չի նույնանում: Գրաբարում միայն նախագաս կիրառություն ունեն, մինչդեռ միջին հայերենում՝ առավելապես նստգաս, իսկ առանձին հեղինակների մոտ փոխան կապը՝ քաղաքապես ևստգաս. «Եւ թէ հազ լինի, տուր խմելոյ տաճիկ կոչ և հայ կաւ. և ևկերակոր՝ ուրան փոխան՝ հացի փշրուկ... և սերկեխիյն ջրի փոխան՝ մրտի բամբուկն տուր... ապա թէ աչո ջրերոյ չիգտի... դու իւր փոխան փրփրեմի շուր առ...» (ՄԷՋՄ, էջ 45): «Ապա թէ մարդ սպաննի, նա տայ զարեան զին կամ զինքն սպաննն նորա փոխան» (ՄԳԳ, էջ 67): «Զգիտես թէ աչոռ փոխան ...բեզ ինչ պիտի դալ» (ՖԵԲ, էջ 89): «Պուտ ևմ կերն հացի փոխան» (ն. տ. էջ 71) կն, կն:

Նոր կապ է Բով բառը: Հայկազյան բառարանում ո՛չ Բով բառը և ո՛չ էլ այն հիշեցնող որևէ բառ կարելի է գտնել: Ակար. Հ. Աճառյանը ևս սկրմատականում²⁰ բառի ստուգաբանությունը չի օվել, այլ պարզապես՝ հնագույն վկայություններ: Ինչպես վկայում է Հ. Աճառյանը, Բով բառն օգտագործված ենք գտնում Վաստակոց գրքի, Ուոհանցու և Մխիթար Հերացու մոտ: Քով բառն, անշուշտ, հեղվորպական ծագում պետ է ունենա: Ավելորդ է ասել, որ հայերենի ամենակենդանի և ամենատարածված բառերից մեկն է: Աճառյանի վկայությամբ՝ Բով բառը պահանջված է Ախալցխայի, Ակնա, Ասլանբերկի, Արարկի, Երզնկայի, Եվզոկիայի, Զեյթունի, Գրեմի, Խարբերդի, Պուսի և մի շարք այլ բարբառներում, մեկ խոսքով՝ ամբողջ արևմտահայ բարբառներում ու գրական լեզվում:

Գծրախառար միջին հայերենում բառն սակավ կիրառություն ունի. ինչպանով որ ուշագրի ենք եղել, այն գտնում ենք Ամիրզովլաթի մոտ և միայն մեկ օրինակ Մ. Հերացու մոտ: Աճառյանը օրինակները՝ «Երկրորդն ի տեղեսասան, որ յերակացն փարփուտ են, և քնչյերակն ի մէջ են, զերդ Բովն և այլ տեղեստան...» (ՄԷՋՄ, էջ 36): «...և ի ըզրեկան Բովն գաւելի միսն ուտէ» (ԱԱԱԱ, էջ 133): «Եւ թէ ըզրեկին Բովն յաւելի միս լինի, աճես՝ տանի» (ն. տ. էջ 149): «Եւ ինքն որ բուսնի՝ ի յաւունեցո Բովերն կու բուսնի» (ն. տ. էջ 194):

²⁰ Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. 2, էջ 1509:

Ինչպես տեսնում ենք, միայն երկրորդ և երրորդ օրինակներում է որպես կապ օգտագործվում. առաջին օրինակում գոչական է (գոչականաբար օգտագործված), իսկ չորրորդ օրինակում՝ գոչական, սակայն կապական բառի իմաստով օգտագործված: Քով բառը նույնանիշ է մոտ բառին, սակայն որպես միանություն գաղափար արտահայտող բառ օգտագործվում է նաև կող(Բ) իմաստով, ինչպես որ առաջին օրինակում է (կարելի էր համեմատել կուշտ «կողք» բառի «կուշտ ցավում է» կիրառության հետ):

Ինչպես Աճառյանն էլ «Սկրմատականում» հերքում է իր իսկ տված մեկնությունը, սխալ է Բով բառը կապել կողի հետ: Ոչ թէ կող բառի հնչյունափոխությունից է առաջացել Բով, այլ Բով բառն բառ իր բառական իմաստային բովանդակությունն օգտագործվել է նաև կող(Բ) իմաստով:

Վերևի շարադրանքից ելնելով՝ այժմ փորձենք կապերի շարադասական կիրառությունները, այն է՝ կապերի դիրքը կապվող բառի համեմատությամբ՝ ներկայացնել խմբավորված ձևով:

Որոշ կապեր միշտ զրվում են կապվող բառից առաջ. սրանք ընդունված է նախադրություններ անվանել: Միջին հայերենի կապ-նախադրություններն են նախ և առաջ գրաբարյան նախդիրները՝ առ, գ, ընդ, քառ, ի, ց, ապա և՛ սասոնց, բաց(ի), (ի)ղվմ, դկպ(ի), գերդ(գերք), գետ (գէդ), գինչ, զկնի, ընդդէմ, ինչվի, իրը, իրեն, հակառակ, հանց (հանց զաբար = ինչպես շաբար), հանգոյն, հանցէպ, մինչև, մինչ, մերձ, (մերձ ի մեզ), յետ, յազագ, յանուն, (ի)ներեայ (ի ներքոյ հողին), որպէս, չուր, վասն, (ի)ձնոն, սպապայ: Միջին հայերենի կապ-նախադրություններն են. առնե, արդգաւ, բեաւեով, դիմաց, դուրս, ետէէն, ժամանակ, կեօրայ, կերուն, ձեռաց, համար, շափ, չափ, չափով, պէս, սիրուն (քո սիրուն), վրայ, վախա(ն), (ի)վեր, տակ, Բով:

Միջին հայերենում մի բանի կապերը գործածվում են ն՛ նախագաս, և՛ ևստգաս: Պատճառը հետևյալն է. որանց մեծ մասը գրաբարի շարադասություններ նախադրություններ են, սակայն աշխարհաբարի շարադասությամբ որպես լրացյալներ պետք է ևստգաս օգտագործվեն: Ինչպես հայտնի է, միջին հայերենն իր ամբողջության մեջ մի անցումնային վիճակ է. մեր հեղինակները կապերն օգտագործել են մեկ գրաբարի շարադասությամբ, մեկ աշխարհաբարի շարադասությամբ: Այսպես է առաջացել ներքոհիշյալ կապերի շարադասական երկվությունը. (յ)առչև, առաջի, (ի)գառ, (ի)խէ, հետ, մէջ, մոտ, յետև, նման, ներև, (ի)վերայ, փոխան, փոխանակ, շուրջ:

Շ Ա Ղ Կ Ա Պ

Շաղկապ կոչվում են նյութական բովանդակություն չունեցող ու շիբրվող այն սպասարկու բառերը, որնք «վերաբերական տարրեր իմաստներով իրար են կապակցում համադաս բառեր, բայց նախադասություն կազմող մասեր, ինչպես և ամբողջական նախադասություններ ու խոսքի հատվածներ» (Ս. Արբաշանյան, ՉԽՄ, էջ 382): Այսպես, օրինակ՝

«...Նուրն և ճառագայթն և նիւթն միացել ու երկու չէ նայ» (ՀԵԲ, էջ 152): «Անց, ի մէջ դրախտին, երեք անձինք կային.

Աղամ եւ Եւայ ևս պատուիրանքն տեսնես» (ն. տ. էջ 237):

Վերևի օրինակներում ևս համադասական շաղկապով միացած են հետ,

նտագայր, նիր, ապա և՛ Ազամ, նայ, պատուիրան համազաս բռները, նկատենք, որ նման իմաստ ու կիրառություն միայն համադասական շաղկապներն ունեն:

Ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական շաղկապները կարող են կապակցել բարդ նախադասություն կազմող մասեր, այն տարբերություններ, որ առաջինները համադասական կապակցություն են արտահայտում, իսկ երկրորդները՝ ստորադասական կապակցություն: Այսպես, օրինակ.

«Նաղա՛շ, թէ դու խեղ ունես
Միտ արա դու գարնան ծաղկին,
Ու գունավք մի պայծառ լինին,
Չորանան ու դառնան դեղին» (ՄՆԲ, էջ 106):
Քանի որչ ես, զքեզ պահէ,
Գլուխ 'ւ անձինդ պէտ արայ.
Եթէ հաբիմ կարի լինիս՝
Կեանքդ քան զհով անցնի 'ւ երբբայ» (ՀՔՏ, էջ 191):

Վերևի նախադասություններում՝ առաջին բառատողում ու համադասական շաղկապը միացրել է համադասություն կազմող մասեր, մինչդեռ երկրորդ բառատողի մեջ Գանի և եթէ ստորադասական շաղկապներն ստորադասություն կազմող մասերն են միացնում գերազաս նախադասություններին:

Ինչ վերաբերում է ամբողջական նախադասություններն ու խոսքի հատվածներ շաղկապելու խնդրին, ապա պետք է նկատել, որ միայն համադասական շաղկապները կարող են տանձնել այդ պարտականությունը, քանի որ նման դեպքերում գերազաս նախադասությանը շաղկապվելու անհրաժեշտություն չի զգացվում: Այսպես, օրինակ՝ «Իսկ այն աղջ շերմն, որ պատճառն յերեք հոգիքն լինի, միօրեայն ասեն»: «Այլ այն ցեղ շերմն որ ի յերեք հոգիքն լինին, շունի օրինակ որ ի յինքն ի նման լինի ամէն դիօր» (ՄՀՁՄ, էջ 4): «Քայց յորժամ խաղաղի շերմն, ապա ի բողնիս մտո՛ւ՝ և տես որ շօժանես զմարմինն ձիթով, որ չիխցիկի գաղտ շնչահանքն...» (Ն. ա. էջ 10): «Առջ սկիզբն առնեմ օգնականութեամբն Աստուծոյ...» (Ն. ա. էջ 6) և այլն:

Վերևի 4 օրինակներից առաջին երեքում իսկ, այլ, բայց համադասական շաղկապներն ամբողջական նախադասություններ են իրար կապում, բոտ պատեհի և բնկալման՝ նաև խոսքի ամբողջական հատվածներ, իսկ առջ բառը, որ հենց այս կիրառության պատճառով մակերային անցել է շաղկապական կիրառության, խոսքի ամբողջական հատված է կապակցում:

Ստորադասական շաղկապի՝ նախադասության սկզբում, նույնիսկ խոսքի սկզբում հանդես գալը նրան ամբողջական նախադասություններն ու հատվածներ կապակցելու իրավունք չի ընձեռում, քանի որ արամբարանորեն նա միշտ պետք է ունենա իր գերազաս նախադասությունը: Օրինակ՝ «Քանզի ի բառնայ ազգին Արշակունեաց, տրեքցին աշխարհի» Հայոց ազգն Մասանայ պարսկի...» նախադասությունը է սկսում եղիչն պատմիչն իր գլխադասակապը, սակայն ուշադիր լինելու դեպքում կանանկը, որ Բանգի ստորադասական շաղկապը իր ղյխալորած ի բառնայ ազգին Արշակունեաց զերբայակապմ ստորադաս նախադասությունը կապում է փրեցին աշխարհիս Հայոց ազգն Մասանայ պարսկի գերազաս նախադասության հետ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, համադասական շաղկապները կիրառու-

թյան առավել շատ դեպքեր ունեն, քան ստորադասական շաղկապները: Վերջիններս խոսքի մի ամբողջ բնագավառի՝ պարզ նախադասության կառուցվածքին շն կարող մասնակցել: Զմտանանք նշել, որ խոսքն ընդհանրապես համադասական շաղկապների մասին է, իսկ անանձին-առանձին վերցրած կոնցրասակններ, որ շատ համադասական շաղկապներ միայն այս կամ այն կապակցում են հանդես գալիս: Այսպես, օրինակ՝ բայց, իսկ, սակայն, այլ և նման համադասական շաղկապները չեն կարող իրար կապակցել համադաս բռներ, մինչդեռ թէ բառը համադասական իմաստով օգտագործվելիս (ոչ կրկնություններ) միմիայն համադաս անդամներ է կապակցում. ինչպես՝

«Ենթեքն որ խօսի ի դուրս թէ ի ասն,
Տգէտքն ծռնն նորս ամէն բան» (ՆԶԲ, էջ 84):

Մինչդեռ նույն թէ բառը հարցականով օգտագործվելիս (որ նույնպես համադասական շաղկապ է) կարող է իրար կապակցել ինչպես համադաս բռներ, այնպես էլ բարդ նախադասություն համադաս մասեր, ինչպես՝ «Եթէ որ ընդ անգլես հաղորդի անսուրբ, նա պատեհ է անսնուլ զմարդն, թէ ի՛նչ մարդ է, և կամ յի՛նչ հասակի, խե՛ւ է, թէ՛ խելօք, որ հարբեց ու արար» (ՄԳԳ, էջ 44): «Կին որ ամուլ լինի, և աղայ շքերէ, նա պատեհ է բժշկօք տեսնուլ և իմանուլ թէ յոր դիմաց է, ի յայրկնէ՛, թէ՛ կնկնէ՛» (Ն. ա. էջ 49) և այլն:

Ստորադասական շաղկապների բառային իմաստը, ինչպես նաև համադասական շաղկապների տարբերակված կիրառությունները լավագույնս ապացուցում են, որ շաղկապի՝ որպես խոսքի մաս գնահատման ու բերողման ժամանակ պետք է նկատի ունենալ բառի իմաստային կողմը՝ անշուշտ, ձեռքառնական արժեքն ու շարժունական կիրառությամբ հանդերձ: Եթե շաղկապները բառային իմաստից զուրկ լինեին, ապա ինչպես ստորադասականներն իրենց մեջ, այնպես էլ համադասականներն իրենց մեջ տարբերակված կիրառություններ չպիտի ունենային: Համադասական շաղկապների բառակազմ կիրառություններին մասին վերևում խոսվեց. այդ նույնը վերաբերում է նաև ստորադասական շաղկապներին: Եթե ու, թէ (եթէ) ստորադասական շաղկապները բերականական իմաստով ընդհանուր առմամբ նույնական կիրառություններ ունեն, ապա նույնը չի կարելի տեսլել, եթե (ներկա իմաստով) յարժամ, երբ, Բան, որովհետև և այլ ստորադասական շաղկապներին մասին, որոնք կիրառությունից զուրկ էլ ակնհայտ բառական իմաստ ունեն՝ թկալտ—գիման, երէ—պայմանի, յարժամ, երբ—ժամանակի, Բան—բաղդատություն, որովհետև—պատճառի և այլն:

Իրենց կիրառությամբ ու նախադասության մեջ արտահայտած իմաստով միջին հայերենում շաղկապները հարաբերակց են որոշ գերանունների (առավելապես հարաբերական), ինչպես նաև մակերանիքի ու կապերի: Արդ, ի՛նչ հօդի վրա է այդ հարաբերակցությունը և ինչպե՛ս է բառը գերանունից, մակերային կամ կապից անցնում շաղկապական կիրառության: Տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի անցումը շաղկապի որոշ առանձնահատկություններ է ներկայացնում, սակայն որպես ընդհանուր պատճառ պետք է նշել բառի շարահյուսական տվյալ կիրառությունը նախադասության մեջ: Երբ ուշադիր բարեններ այլ խոսքի մասերից եկած շաղկապները, կտեսնենք, որ նրանք բարեններ այլ խոսքի մասերից եկած շաղկապներ, կտեսնենք, որ նրանք բարեններ մեծամասնությամբ ստորադասական շաղկապներ են: Այսպես՝ միջին

Հայերենում դերանուններից անցած շաղկապներից են՝ որ, ուր, Գանի²¹, ինչպես՝ «Նա ի հիմա օրէնքս կու հրամայէ, որ վասն այսօր եպիսկոպոսն շիջել պահանջնէլ յաթոռոյն իրացն բնաւ... եւ եթէ իրք կենայ, որ Տանջան, որ բոլոր իւր լինի ու բնաւ չլինի աթոռին, նա կարէ վկայեցնել...» (ՍԳԳ, էջ 21): Եվ կամ՝

«Հարստին գանձն ամեն զերթ շուր հեղեղի:
Որ հոսէ պահ մի գայ ու շուտ ցամաքի.
Որ գրասն է ու սուրբ՝ յԱստուած նրմանի,
Որ միայն է անմահ ու անեղանկի» (ՀԵԲ, էջ 186—187):

Վերին կիրառություններում որ բառը ստորագասական շաղկապի արժեք ունի, քանի որ նախադասությունների մեջ որնէ այլ պաշտոն չունի, մինչդեռ՝

«...Ով դիտուն է ու սուրբ՝ ճրագ է լուսով,
Որք գրկած են անդից՝ տանջին խաւարով» (ՀԵԲ, էջ 187):
«Եւ կէսք... էին ազգէն հրէկից,
Որվ յիք դարձան ու հաւատացին» (ԿԵԲ, էջ 147):

Այս նախադասությունների մեջ որվ բառը հարաբերական դերանուն է ու ենթակա: Կամ՝

«Քանի միտք դու սուրբ ունիս ու ջանիս ես սիրող ուսման,
Գիտուն է հոգիդ պայծառ, որ լոյս տայ քեզ ի մթութեան» (ՀԵԲ, էջ 150):
«Քանի մարն զիս բերբ, քահանի շեմ խոտովաներ» (ԵՓԳ, էջ 50):

Այս օրինակներում Գանի բառը ստորագասական շաղկապ է, քանի որ իր դերանվանական որոշակի իմաստից զուրկ է, մինչդեռ՝

«Քանի՛ լամ ու զթեղ ուղեմ զարթըրցնեմ օդոց հանելով» (ՆՔԳ, էջ 50).
«Քանի՛ ու Գանի՛ սանձ, զու ահանջ ունիս նա լսէ» (ն. տ. էջ 97):

Նախադասությունների մեջ Գանի դերանուն է՝ պարագայական պաշտոնով: Նշանակում է՝ դերանուն-շաղկապ անցման ժամանակ որոշ իմաստով բառի նախկին իմաստի մթաղում է անդի ունենում, որի հետևանքով բառը որոշակի պաշտոն չի ստանձնում նախադասության մեջ և վերաբերական իմաստ է արտահայտում:

Միջին հայերենում կան նաև կապ (նախադրություն)—շաղկապ անցումներ: Հետաքրքրական է, որ կապերից միայն նախադաս կիրառություն ունեցողները կարող են շաղկապի իմաստով կիրառվել, և առավելագույն ստորագասական շաղկապներ են առաջանում, քանի որ միջին հայերենի շարագասությունը (և ընդհանրապես հայ լեզվամասնագիտությանը) ստորագասական շաղկապն է զլիսափորում երկրորդական նախադասությունը: Այսպես՝ «...Եւ ի զագթէն մինչև ի աակն ծաղիկ կունենայ...» (ԱԱԱԱ, էջ 73), «Մինչ համարձուս քառսուն օր է» (ՆՁԲ, էջ 102), «Նա ինչլի մահն ապաշխարէ» (ՍԳԳ, էջ 42) նախադասությունների մեջ մինչ, մինչև, ինչլի բառերը կապեր են, քանի որ աակ(ի), համարձուս և մահ կապվող բառերի հետ նախադասության անդամ են դառնում, մինչդեռ՝ «Զայս ամէն անուշ ջրով եփէ՛ մինչև ջուրն զբեղբուն ուժն լինքն առնու» (ՄՁՋՄ, էջ 9), «...Եպիսկոպոսն և դատաւորքն եկե-

զեցուն արգելին զժողովորքն եւ դժամն՝ մինչև ապաշխարէ...» (ՍԳԳ, էջ 36), «...Տաք հանդերձով զմարմինն աղէկ ծածկէ, մինչև մարմինն աղէկ քրտնիս» (ՄՁՋՄ, էջ 11), ապա և՝

«Յանկարծակի լերբորդ յաւուր,
Մինչ պահպանքն պահէին
Տէրքն յարեալ ի մեռելոց» (ԿԵՏ, էջ 228),
«Մինչ հիւրքն գայր՝ մեծարէին
Եւ մինչ գրեայր՝ կողոպտէին» (ՆՇԲՁ, էջ 563)

Նախադասությունների մեջ մինչ, մինչև ստորագասական շաղկապի իմաստով են գործածված և ստորագաս նախադասությունը կապում են գերադասին:

Կապ-շաղկապ անցումը շոշափելիորեն պատկերացնելու համար դեղեցիկ «րինակ է ինչուի բառի հետևյալ կիրառությունը. «Եւ հրամայած է, որ ինչ իսկ մարդ մեռնի, թէ հարուստ եւ թէ աղքատ, նա ամենին պակեկիքն եւ հայան ինչուի գօտին ու սօլերն ի վանքն երթայ» (ՍԳԳ, էջ 31): Ինչուի բառն այստեղ տարածական իմաստով (ամինչև գոտին ու կոշիկները) չի օգտագործված, իսկ ենթադրվելիք կապվող բառերը՝ գօտիւ, սօլերն, ենթակա են: Ինչուի բառը չի օգտագործված նաև ստորագասական շաղկապի իմաստով, այլ համադասական նույնիսկ, մինչև իսկ շաղկապի իմաստով:

Միջին հայերենում կան նաև մակրայ-շաղկապ անցումներ: Վերցնենք թեկուզ յարձամ²², ապա և այլ մակրայներից առաջացած շաղկապները: Ինչպես էլ զժվար լինի յորժամ բառի շաղկապական և մակրայական ստույգ կիրառությունները ցուցադրել, կարծում ենք, որ, օրինակ՝

«ՅՈՐժԱՄ ԵՍՆ օրեր լինի, կամ զատկի կամ բարեկենդանի,
ԱՄԷՆՔՆ ԵՆ զբրախտ ծաղկած, նա կտրած քան ղճիւղ մի ծառի (ՀԵԲ, 148),

«ՅՈՐժԱՄ քեզ տեղ մի ցափ, այլվի շուտ լանայ» (ն. տ. էջ 205)

և այլ քաղմաթիվ կիրառություններում բառն իր պաշտոնը չունի նախադասության մեջ, այլ պարզապես ստորագաս նախադասությունը կապում է գերադասի հետ: Թվում է, որ այդ առավել շոշափելի երևում է հետևյալ կիրառության մեջ.

«Իւրոսի լեր հանապազ, յորժամ վշտանաս,
Դոհայիբ զու... երբ աղքատանաս.
...Մեկաց պտուհան բզբեղ ասա՝ երբ առանձնանաս» (ՀԵԲ, էջ 200):

Ապա բառի մակրայական հայանի կիրառություններից տարբերվում է, անշուշտ՝ «Սահման էր, որ յառաջ լիշեւր եպիսկոպոսն վանացն, ապա միայն թեմին իշխէր» (ՍԳԳ, էջ 34) նախադասության մեջ ունեցած կիրառությունը, որ ապա բառը այլ (ներկա իմաստով) ներհանական համադասական շաղկապի արժեք ունի:

Ինչ վերաբերում է այլ բառի շաղկապական կիրառությանը, ապա արժեք հակադրել հետևյալ կիրառությունները՝ «Ամա ով ուղէ, որ ուսնի, նա թող անտի ուսնի, զի մենք յայս կանոնս շահարձակեցաք այլ (=այլ, ուրիշ—անորոշ

²¹ Որ (<որ), Գանի բառերը առանց հարցական նշանի պետ է ընդունել որպես հարաբերական դերանունների:

²² Նախապես՝ անորոշ դերանուն:

դերանուն) ինչ գրել» (ՄԳԳ, էջ 27): «Եւ այն որ յիտասկ է, սեն փայտին մեջն է, եւ բոլորն պատած է այլ (=այլ, ուրիշ—անորոշ գերանուն) դունով»: «Եւ ցեղ մըն այլ (=էլ, ես—շաղկապ) կայ որ գունն կարմիր է եւ սպիտակ»: «Եւ Ք ցեղ յայտանաւան այլ (=էլ, ես—շաղկապ) երբ ի ջուրն ձգես՝ յատաւին իջնու նստի վասն ծանաղութեան» (ԱԱԱԱ, էջ 67): «Եւ այլ (=ավելի—մակբայ) կարմիր բան գան» (Ն. տ. էջ 99): «Եւ այլ (=էլի, նորից—մակբայ) իմացիր, որ զհեղիւրուն զհերպն այսպէս է պատմած» (Ն. տ. էջ 15):

Այլ բարի հնչունափոխված ալ ձևը նույնպէս հանդես է գալիս մակբայա-կան և շաղկապական կիրառութեամբ, ինչպես՝

- «Աշկունք, ծրարն բղբեզ կրակով որ երթաս էրիս.
- Ազո՛ւ, ա՛լ կարիմ բղբեզ սուր դանկով որ ա՛լ չի խօսիս.
- Մորկիս, ա՛լ դանակ ասեմ, արիւնին մէջն թապլտիս» (ՆՔԳ, էջ 49):
- «Յուլիս ամիսն ալ կրիցեցար,
- Հացէ չրէ ալ կորեցար» (ՄՂԲ, էջ 115):

ՇԱՂԿԱՊԵՆԻ ՏԵՄԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Միջին հայերենում շաղկապներն ըստ կազմութեան կարելի է խմբաբաժնի հետևյալ տեսակների մեջ.

- ա) Պարզ շաղկապներ.
- բ) Քերականական ձևերից առաջացած շաղկապներ.
- գ) Բարդ շաղկապներ.

1. Պարզ շաղկապներ²³.—Պարզ համադասական շաղկապներն են՝ այլ, ալ, էլ, բայց, եւ, իսկ, քե, (հին թե նոր), քե՛, եւ, կամ, սակայն, ու, մանավանդ: Պարզ ստորադասական շաղկապներն են՝ երբ, եփ, գի, քելպտ, երէ, բէ, որ, քան, քանի:

2. Քերականական ձևերից առաջացած շաղկապներ են՝ որովհետև և յոր-ժամ:

Առաջինը որ և հետ բառերի գործիական ձևերի բաղադրությունը, իսկ երկրորդը որ+ժամ>որժամ բարդությունն է ի (>լ) նախդիրով:

3. Բարդ շաղկապներ.—Միջին հայերենում անհամեմատ շատ են բարդ շաղկապները, որոնք հանդես են գալիս բարդության հետևյալ տեսակներով.

- ա) Կցական—նաև, այլև, մինչդեռ, երբոր, եփոր, բէև, քանգի.
- բ) Հարադրական—1) համադասականներ՝ բայց միայն, կամ բէ, և կամ, ու կամ, մանաւանդ թէ, նոյնպէս և, սոյնպէս և, մանաւանդ որ, և ապա, նոյն-պէս թէ, սուպ որ, կամ թէ չէ. 2) ստորադասականներ՝ յորժամ որ, քանի ինչ, թէ չէ նէ, որտեղ որ, քան թէ, ոճց որ, քանի որ, ավ որ, թէ որ, քելպտ և, ապա թէ, ապա երէ, որ թէ, ինչ որ, վասն զի, և քելպտ, քող թէ, թէ չէ, գոր ինչ, զի որ, քելպտ որ, մինչև որ, մինչ որ:
- գ) Կրկնություն կազմված—ո՛չ... ո՛չ, թէ՛... թէ՛, կամ՛... կամ՛, երէ՛... երէ՛.

Սրանցից բացի կան նաև դուգադրական շաղկապներ, ինչպես՝ այն... որ, յայնժամ..., որժամ, ոչ թէ... այլ, ոչ երէ... այլ, հանց... զինչ, չէ թէ... քանց որ, ոչ թէ... քան և այլն:

²³ Պարզ շաղկապ հասկացությունը հարթորական է. վերին շաղկապների մեջ կան այնպիսիք, որոնք ակնհայտորեն բաղադրված են տարրեր բառերից, ինչպես՝ թելպտ—թէ+պտ, սու-կայն—սակ+այն, երէ—ե+թէ, ես—ե+ս եւն: Մենք գրած պարզ ենք համարել, քանի որ մի-ջին հայերենի լեզվաբանությունը բաղադրիչների անկախաբար չեն գիտակցվում:

Նկատենք, որ շաղկապները, հատկապես պարզ շաղկապները և՛ կազմի, և՛ կիրառության տեսակետից դրաբարի համեմատությունում մեծ փոփոխու-թյուններ չեն գրանցում. միջին հայերենում ոչ այնքան նոր շաղկապներ պետք է փնտրել, որքան հետաքրքրվել, թե դրաբարյան ի՛նչ շաղկապներ մեր լեզվի մյո շրջանում գործածությունից դուրս են մղվել: Եղած փոփոխությունների մասին ստորև խոսվելու է: Այստեղ նշենք, որ միջին հայերենում մեր լեզվի մեջ մուտք են գործել նաև օտար շաղկապներ, դրանցից են՝

Ամա (=բայց)—«Ամա ով ուզէ որ ուսնի, նա թող անտի ուսնի...» (ՄԳԳ, էջ 27):

Հա՛մ... հա՛մ | (=հ... հ) —«Հա՛մ թանն անիծած, հա՛մ իր բբղուդն» (ՆՁԲ, Հա՛մ... հա՛մ | էջ 153): «Հա՛մ կանանչ կու հոգիս, հա՛մ գոյն ի րախ» (Ն. տ. էջ 192): Զեհա(յ) (=բանգի)—«Ետն եմ եւ եղեալ խումար.

Զեհա քո տեղ է դամար» (ԿԵՏ, էջ 159):

«Ամն աշխարհուր քեզ ֆրով,

Զեհայ շունիս իսկի դալատ» (ՀՔՏ, էջ 128).

Զե՛ւ (=բանգի)—«Մեռելաբազի գլուխ շունի,

Զե՛ւ հեռու է գերեզման» (ՄՂ, էջ 85) և այլն:

Այժմ քննենք միջին հայերենի շաղկապների կիրառությունները: Համա-դասական շաղկապների մեջ, դրաբարի համեմատությունում, լայն կիրառու-թյուն է ձևոր բերել ու շաղկապը: Ասենք, որ դրաբար մատենագրության մեջ ու շաղկապ գրեթե չի օգտագործվում, իսկ կիրառության առանձին դեպքեր էլ «քնտիր» չեն համարվում: Արսեն Բաղդասարյանը, օրինակ, «Հայերէն բերական-նություն» (Վենետիկ, 1852) աշխատության մեջ գրում է. «Կայ և ու, որ առանկ ուսմիտելն վարի, ի գիրս սակաւ ուրեք...» (էջ 230): Նախ՝ նշենք, որ միջին հայերենով գրող ոչ բոլոր հեղինակներն են օգտագործում ու շաղկապը: Ընդ-հանուր առմամբ առաջին շրջանի հեղինակներն ավելի քիչ են օգտագործում, բայց երկրորդ շրջանի հեղինակները: Այսպես՝ Մխիթար Հեղաքցին, Վարդան Այվեկցին, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիները, երկրորդ շրջանից՝ Ամիր-զովբա Մեմախաքցի բացարձակապես ու շաղկապ չեն օգտագործում. ներսես Ծնորհային, Գրիգորիս Աղթամարցի և Մարտիրոս Արմենցի սակավ կիրա-րություններ ունեն, մինչդեռ Ֆրիկը, Միլիտիչ Նաղաշը, Քուչան և Նաղաշ Հով-նաթանը լայնորեն օգտագործում են: Այս բոլորի մեջ, անշուշտ, առավել զար-մանալիս են Ամախաքցին է, որ XV դարի հեղինակ լինելով և ժամանակի խո-սակցական հայերենով գրած լինելով հանգրծ՝ այս հարցում ավելի պահպա-նողական է, քան դրաբարի դասական հեղինակները: Վերջիններք թեև ուղի հե-տևյալ հատվածը. «Ինքն յայտնի է, եւ աղէկն այն է որ Հնդի լինի եւ կամ Հա-պաշի, եւ թէ ի ջուրն ձգես նա, ի տանի իջնու եւ նստի. եւ տաք է եւ չոր է ք տարանան. կապող է. եւ կայ ի յինքն սահունություն. Եւ յորժամ պինք չրով տրորեն եւ ի յաչքն բաշեն՝ գաշիցն սպիտակն տանի, եւ թէ զմթնայն այլ տա-նի, եւ զարտեսանունքն րուցնի. եւ իխնանական դադրածոցն զարտութիւնն շունի, եւ դպալղամն լուծէ, եւ ազո՛ւ...» (ԱԱ, էջ 66): Թվում է, միապաղա-զություն իսկ պիտի թեկադրեն տեղ-տեղ ու շաղկապ օգտագործել: Գալով ու, և շաղկապների կիրառության շրջանակներին, նշենք, որ եթե հեղինակը ու շաղկապ չգիտէ, ուրեմն և՛ բառեր, և՛ նախադասություններ ու խոսքի հատ-վածներ իրար է կապում և շաղկապով:

Ինչ վերաբերում է ու շաղկապի կիրառությանը, ապա նշենք, որ և շաղկապի համեմատությանը կիրառական սահմանափակություն չունի: Այլ շաղկապով միացվում են ինչպես համադաս անդամներ, այնպես էլ համադաս նախադասություններ ու խոսքի հասվածներ, ինչպես՝

- «Տօթ և ցրտոյն և ծարաւի.
- Մերկ և քաղցած և անօթի
- ...Մարգարտաշար թագ ու զօտի» (ՖրՔ, էջ 28);
- «Անիմ շունչ ու հոգի ու շնմ կենդանի
- ... Բլրուն ի վարդն սասց. Հոգիս կու քակի
- Ա բաժանիլն ի քէն ինձ մաս կու թուի» (ՄՆՔ, էջ 108);

Արդի հայերենի համար դիտված է, որ «և շաղկապը... բարդ նախադասություններում հակված է ավելի բազմաբղիչ նախադասություններ կապելու, իսկ ու շաղկապը՝ նախադասության անդամներ» (Ս. Արքաճամյան, ՉԽՄ, էջ 409); Միջին հայերենում նման բան որպես լեզվամասնագիտություն չի կարելի տարբերակել: Այդ նպատակով ահա բերում ենք և, ու շաղկապների խառն շարժումներում մի բանի նախադասություններ. «Նի ինչ շահ կենայ, ըրորդն այն է, որ դամենն յիրար քշանն, ու կէս թագուրին է և կ'ս այլ իշանաց...»: «Արծաթն և արծաթով կտաւ և պրիսմէն, որ ուրդի՝ իշխանացն է ամենն. պղինձ և երկաթ, բրդեղն և բամբակեղն զօրացնէ այն բաժինք...»: «Սակեհանքն թագուրինն է, և արծաթահանքն ի կէս է քնդ պարունն, և քնդ թագուրն, և երկաթ ու պղինձ ու կաշիկն՝ յորում, երկիր գտնվի՝ այնոր է» (ՄԳԿ, էջ 18); Այս օրինակներում տեսնում ենք, որ և շաղկապն առավելագույն նախադասության անդամներ է կապում, իսկ ու շաղկապը՝ բազմաբղիչ նախադասություններ:

Այլ շաղկապը գրաբարում լայն կիրառություն ունի, ինչպես՝ «Ո՛ր յնդիպատու միայն, այլ յերուսաղէմէ միշն ի կրիկիս»։ «Մի՛ յաղթիր ի շարէն, այլ յաղթեա՛ր բարեան շարին» (ՆՃՔ, հ. 1, էջ 83): «Ներհակական այդ նույն իմաստով օգտագործվում է նաև միջին հայերենում, ինչպես՝ «Բայց կարճեցի բան կրքի, որ չի լինի քնորդութիւն առաջնորդացն որպէս սահմանած է, այլ կու բանի բորշֆաթն և ամեն սղալանքն ի յայնոր կուզայ...» (ՄԳԿ, էջ 24): «Մի՛ մարմին հասկանայք զբանս, այլ հոգեոր (ԿՆՏ, էջ 117):

«Ով երեսօց զբրտց անկ ի մեր միջին ինքն է դաւատ,
Այլ արգար մեզ դատաստան արէք խելօք, պարզ և ազատ» (Ն. տ. էջ 184):

- «Ամէն մարդոյ մի՛ հաւատայք,
- Այլ ընտրեցէք զշար և կրարին» (ՄՂՔ, էջ 108):

Միջին հայերենում այլ բառն ավելի շատ օգտագործվում է միավորիչ (էլ, և) իմաստով, ինչպես՝ «Նե կեզերուն ցեղ մըն այլ հօրմ կայ» (ԱԱԱԱ, էջ 23): «...ե մէկ ազգ մըն այլ կայ որ ի լերունքն կու բուսնի» (Ն. տ. էջ 31):

- «Միշն զերկիր ապականեաց,
- եղեն ամէնքն շնատակ.
- Այս այլ լեզի հերբ խրատ» (ՖրՔ, էջ 133):
- «Յողքն ջօհար և՛րը հանչէ, զօրն ի բուն զազբըն կու փորէ.

Կիտի նա զբո ջօհարն, զընչոյն այլ ըզբեզ խողէ» (ՉՆՔ, էջ 143):

«Նորայ փոշիման գնացին, և զուք այլ կերթայք, մի՛ խարիք» (ՄՆ, էջ 127):

Միավորիչ շաղկապի այս նույն կիրառության մի արտահայտություն է այլ շաղկապի՝ խոսքի հասվածներ, նախադասություններ կապելու պաշտոնով հանդես գալը, ինչպես՝ «Այլ որ դիտենաս որ յառաջ բան դամենայն ստածումն գհիանդին ումն և զտարիքն և զկերպն և զերկիրն և ծամ... դու երակ առ... Այլ ի յանկնայն և ի կատարելն հիանդութեան, որ է երրորդ ժամանակը, պատրաստ՝ որ շանուն երակ» (ՄՂՋՄ, էջ 66): «Այլ պարտ է դիտենայ զղկին տէրն և զլլին...» (Ն. տ. էջ 52):

Այլ համադասական շաղկապն այս կիրառությանը հանդիպում է նաև գրաբարում. ինչպես՝ «Այլ ի վախճանելն Վաղնետիանոսի՝ թագաւորէ անօրէնն վաղէս» (ՆՃՔ, հ. 1, էջ 83):

Այլ շաղկապի հնչյունափոխված նոր ձևեր են ալ և էլ շաղկապները, մեր նախնայաց լեզվին անձանոթ, որոնք միջին հայերենում այլևայլ կիրառություններ ունեն. ինչպես՝ «Ն այն որ իսանունած է մէկ մէկի, ան ալ շորո է» (ԱԱԱԱ, էջ 7): «Ն ա ալ շէ ստուգ» (Ն. տ. էջ 85): «Ատ է նորնձայն, թէ այն որ ինձ պատահեցաւ թէ քեզ ալ էր պատահեալ յառաջն, դու ալ պիտի փաղչէիր յեպիսկոպոստիկնէ» (ՎԱԱ, էջ 138—139): Ապա ն՝

- «Կո՛նկէղ էլ արձակ անն ու ձերմայ ծոցըր ցըցընես» (ՆՔԳ, էջ 70):
- «Ներկու քնդ իրար կուին, մէկ ի մէկ իսկի չի նմանին.
- Մէկ էլ ի նոցա միջին ք մեռած «անեղծ ի տեղին» (ՉՆՔ, էջ 156):
- «Քեամար էլ ևս կապել տունդ աադան» (ՆՃՔ, էջ 5):
- «Նս հոգայ աէֆիլ զարանչի,
- էլ ի՛նչ իսկի կու մընայ ինձի» (Ն. տ. էջ 20) և այլն:

Միջին հայերենով զրոզ որոշ հեղինակների մոտ, ինչպես՝ Ն. Շնորհափ, Մ. Ներսիս, Գ. Աղթամարցի, Հ. Քրիտրանցի ալ կամ էլ շաղկապի կիրառության զեպեր չկան: Մյուս կողմից՝ մեր հեղինակները, ինչպես վերևում բերված օրինակներից էլ կարելի է եզրակացնել, նախապատվություն են տալիս այս կամ այն ձևին:

Ինչպես հայտնի է, աշխարհարարի շրջանում ալ և էլ շաղկապները մեր լեզվի երկու տարբեր հատվածների սեփականություն դարձան, էլ՝ արևելահայ գրականի, ալ՝ արևմտահայ գրականի: Միջին հայերենի շրջանում նման տարբերակում չի կարելի տեսնել. Սմբատ Գունդատապը, օրինակ, որ Ռուբինյաց հարստության ներկայացուցիչ ու արբանկերաբ էր նույնիսկ, օգտագործում է էլ: Օրինակներ. «Բայց պղունին վատութեան պատճառն էլ պիտի տեսնու...» (Գատաստանագիրք, էջ 81), «Ապա այրկանն հայրենատեներոյ վերայ էլ պիտի հայն...» (Ն. տ. էջ 50) և այլն:

Թէ շաղկապի համադասական իմաստով կիրառությունը գրաբարի համեմատությանը նոր բան չունի, միավորում է համադաս անդամներ, ինչպես՝

- «Տով որ դու նայիս և ամեն նատար
- Ինի բան ըզմոմ՝ պողպատ է քն բայ» (ԳԱՔ, էջ 209):

Թէ շաղկապը հարցականով օգտագործվելիս ավելի շատ համադաս նախադասություններ է իրար կապակցում, ինչպես՝ «Ապա թէ մնայ ջերմն, տես

«⁴ր ազդ է. Ի նուպառ⁴ վ եւ ի բորբոսային շերմերուն են, քէ՛ ի յաննուպայ եւ յանբորբոսային շերմերոյն» (ՄՀՋՄ, էջ 31): «Զի գիտեմ, թէ Ի՛նձ մէն կուզայ, թէ՛ կուզայ հասար ամենուն» (ԵՔԳ, էջ 49):

Սակայն համադասական շաղկապը, ինչպես գրաբարում, ներհակական իմաստ ունի, ինչպես՝ «Թէպէտ եւ ասացաք զքնութեան զործերն՝ որ խափանին ի շերմերոյն եւ ի յալլ ամենայն ցեղ հիւանդութիւնէ, սակայն ոչ կատարեալ խափանումն» (ՄՀՋՄ, էջ 3): Եվ կամ՝

«Գինին անէլ զքեզ ուրախ.
...եւ զէմք ի նա փայլեալ լինալ,
Սակայն եթէ խնամ պիտին,
Կամ սակաւուկ, կամ հետ չրին» (ՄՂԲ, էջ 136):

Թուղիկ համեմատութիւնն իսկ ցույց է տայիս, որ սակայն ներհակական շաղկապն ավելի սահմանափակ կիրառութիւն ունի, քան երան համեմտիչ բայց բարո:

Այժմ տեսնենք, թե ի՛նչ կիրառութիւններ ունեն ստորագասական պարզ շաղկապները: Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում բազմիմաստ կիրառութիւններ ունի զի ստորագասական շաղկապը: Այսպես՝ զի շաղկապը միջին հայերենում առավելագույն հանդես է գալիս որովհետև բառի իմաստով պատճառի պարագա ստորագաս նախադասութիւնը կապելով գերադաս նախադասութիւնը, ինչպես՝ «եւ հանապաղ ի վարդի ջուրն եւ ի բաժուրն հոտոտայ տուր, եւ ի յար ընդ բուն լինէլն զբաղի, զի օգտակար է» (ՄՀՋՄ, էջ 17): Եվ կամ՝

«Պլպո՛ւզ, մի՛ դու գարմանար
զպաշտառ վարդիս գեղ պատկերին,
Զի ով որ սէր շունենայ՝
առ ինք շրկայ գեղեցկութիւն» (ԿԵՏ, էջ 142):

Այս պատճառով սակավ կիրառութիւն ունի որովհետև շաղկապը՝ շատ ավելի սակավ, քան գրաբարում էր: Այս կիրառութիւնը մտտ է զի շաղկապի Իսնի որ բազաղըյալ ստորագասական շաղկապի իմաստով գործածվելը, երբ պատճառից ավելի հիմունքի դադափար է արտահայտում, ինչպես՝ «եւ երեսացն զոյնն կարմիր լինի, զի արիւնն մխորած լինի եւ շարժած» (ՄՀՋՄ, էջ 22): Եվ կամ՝

«Միայնակ հայրն է հայր, զի հայր եւ շունի.
Բանն որդի եւ ծրնուց, զի ոչ որ որդի» (ՀԵԲ, էջ 189):

«Բայց զունին ալլ խիստ հաւատալ չկայ. զի վատուծ է» (ԱԱԱԱ, էջ 8) ևն: Զի ստորագասական շաղկապը հաճախ հանդես է գալիս որպէս ընդհանուր իմաստով նույնասակի պարագա երկրորդական նախադասութիւնը կապելով գերադասին, ինչպես՝ «...եւ ցերեկով ի բուն շի լինի, զի գիշերութեան քունն հանդիստ բերէ» (ՄՀՋՄ, էջ 21): Եւ կամ՝

«Մնանի տղայաբար մանուկ կուտածին,
Զի եւ մեզ շտորհնայէ ծնունդ հոգէժին,
...ի յերկինս համբարձաւ յոյնն արարածոց,
Զի եւ մեք բարձրացուք յերկինս ի խորոց» (ՀԵԲ, էջ 195):

Զի ստորագասական շաղկապն ունի նաև առավել ընդհանուր կիրառութիւն. այս գեղբում հանդես է գալիս որ ստորագասական շաղկապի իմաստով ե բոտ հարկի կարող է այս կամ այն ստորագասական շաղկապի իմաստով հանդես գալ, ինչպես՝ «եւ արդ բաւական է վասն հայեմաշ շերմանն՝ որ ի հովութեան լինի, վասն այն զի յունի առօջրութիւն» (ՄՀՋՄ, էջ 41): «...կերան ե ծանեան նորա, զի մերկ լին» (ՀԵԲ, էջ 237):

Միջին հայերենում այժմայն իմաստով քէ եւ երէ շաղկապների իմաստային որոշակի սահմանազատում չենք նկատում. քէ օգտագործվում է երբ պայմանի ստորագասական շաղկապի իմաստով և՛ ընդհակառակն, ինչպես՝ «...եւ քէ (=եթե) այրն եւ զմոխիրն ածեն տաշուսայլակին՝ ազատէ... եւ քէ (=եթե) զջուրն յաշիկ ակաշն կաթեցնես՝ լախիկ դի՛տու արագատութիւնն տանի. եւ քէ (=եթե) զիւր պտուղն եւ զժաղիկն տաւ կարճահարին՝ ազատէ. եւ քէ (=եթե) զտակն ածես հերբունին՝ ազատէ...» (ԱԱԱԱ, էջ 227): Ապա թէ ջերմն եւ ծագտակն ածես հերբունին՝ ազատէ...» (ԱԱԱԱ, էջ 227): Ապա թէ ջերմն եւ ծագտակն ածես հերբունին՝ ազատէ...» (ԱԱԱԱ, էջ 227): «Ապա թէ այս ջերմն յամուսն աւուրբն լինի, հով ջուր տուր խմել. քէ (=եթե) ձմեռն լինի՝ տար ջուր թող խմէ» (Ն. տ. էջ 34) Եվ կամ՝ «Թէ (=եթե) ի յատակս զժողոց ծանր մեղօք ընկածեալ ես, Թէ (=եթե) խոնարհիս քո ընկերին, յերկինց խորանն վեր էլանես» (ՄՆԲ, էջ 121):

Երէ ստորագասական շաղկապն իր հերթին քն շաղկապի իմաստով օգտագործվելիս պայմանի իմաստ կարող է չենթադրել. ինչպես՝ «Ջայս գիտաշեր, եթէ (=եթե) քանի՛ ազդ են եւ ընդ քանի՛ ցեղ բաժանին, եւ դիրանց պատճառն եւ գոեղիքն, երէ (=եթե) ո՛ր եւ ո՛րպէս լինի» (ՄՀՋՄ, էջ 35): «Ի նոյն պատճառն եւ ի նոյն նշանից Մարտոտայն աւէ, երէ (=եթե) իւր առաջի ստածումն այն է, որ տաք հանդերձով գմարմինն աղէկ ծածկէ...» (Ն. տ. էջ 11): «Քանզի սացցին բնութեանց իմաստաւերն, երէ (=եթե) կենդանի մի կայ ի ծոլն...» (Ն. տ. էջ 7): «Ոմանք ասեն, երէ (=եթե) շտորութիւն արդիւլ գորբոսիլն» (Ն. տ. էջ 92): Բերված նախադասութիւններում երէ ստորագասական շաղկապը գերադաս նախադասութիւնների ուղիղ խնդիր լրացում երկրորդական նախադասութիւններ է զիստովորում: Այս նույն իմաստով երէ ստորագասական շաղկապը գերադասին է կապում ուրիշի ուղղակի խոսքով արտահայտված երկրորդական նախադասութիւնը, ինչպես՝

«Այլ հարցանէր ողորմագին
Երէ՛ Ո՛վ պարտիգպան,
միթէ՛ տեսե՛ր դու դիմ որդին» (ԿԵՏ, էջ 229):

Թէ եւ երէ շաղկապների նույնական կիրառութիւնն զեղիցիկ օրինակ է հետևելու նախադասութիւնը, ուր քէ...երէ կրկնութիւնը են օգտագործված. «Պատեհ է բժշկին՝ որ դայս շերմանս գտածումն բոտ յաղթող նիլին այրնէ, քէ՛ կրկնութիւնը կազմված համադասական շաղկապի օրինակներ, ինչպես՝ «Երէ՛ կրկնութիւնը կազմված համադասական շաղկապի օրինակներ... իր ընկիցն միայր եւ երէ՛ կին, զի որ եկեղեցական լինի եւ անորդի մեռնի... իր ընկիցն միայր. բաճանայութեան կամ մխերոյն չկարէ դնել...» (ՄԳԳ, էջ 33): «Եւ հանարին բոտ ուժոյն, երէ՛ երակ առնուս եւ երէ՛ ապիկիր» (ՄՀՋՄ, էջ 49) և այլն: Վերին կիրառութիւններից բացի, միջին հայերենում գտնում ենք նաև

չանուն չեկեղեցին, այլ շկարէ պահեսցնել կախկոպութի յիբ պարմանց՝ մայր մի առանց իրական» (ՍԳԲ, էջ 22): «Ապա թէ անայր կին լինի բերել... նա ճարն է, որ պատկի, ու եւի պսակվի, նա տուժանք չպարտի» (ն. տ. էջ 52): Այս շղեղապով ունենք նաև Եփոր կցականը: Ահա օրինակը. «Եփոր դու էլ ինձ կու սիրես, մէկ դու խմես, մէկ ինձ տաս» (ՆՁԲ, էջ 240):

Բարդ շաղկապներ.—Միջին հայերենում պարզ շաղկապների համեմատութեամբ բավական շատ են բարդ շաղկապները: Բարդ շաղկապները հիմնականում հանդես են գալիս կցական և հարադրական բարդութիւններով: Սրանցից դատ, ունենք նաև կրկնութեամբ կազմված և զուգարական կիրառութեամբ շաղկապներ: Կցական բարդութիւններով կազմված շաղկապներից մի բանիւր միջին հայերենում հանդես են գալիս նաև հարադրական կազմութեամբ: Հայտնի է, որ կցական բարդութիւնները ենթադրում են ավելի վաղ կազմված միացութիւններ, որոնք մարդկանց լեզվամտածողութեան մեջ որպես բառական մեկ միավոր են ընկալվում: Մենք հենկում ենք, անշուշտ, դրավոր վկայութիւնների վրա. այն բոլոր տեղերում, երբ հեղինակները կամ գրիչները բարդութեան բաղադրիչները կից գրութեամբ են ավանդել, ուրեմն՝ կցական բարդութիւն ունենք, այսպէս թէ՛ հարադրական: Այսպես, հայտնի է, որ գրաբար լեզվում նա, և՛ հումանիշ համագասական շաղկապներն օգտագործվում են ինչպես կցական, այնպես էլ հարադրական բարդութեամբ, ինչպես՝ «Նա և արքե օրհասականը ընդ վարձանել շնչոցն հօրապոռչն կուտին» (ՆԳԻԻ, I, լեզ.) Բայց և՛ «Նաև ի մեկ ձեր եւ հին ատուրց գոյ» (ՆՁԲ, հ. II, էջ 383): Այդպես և միջին հայերենում. մի կողմից ունենք հարադրական բարդութեամբ օրինակներ, ինչպես՝

«Նա եւ յա իմանայր, թէ ի՛նչ կու խօսի» (ՖԲԲ, էջ 153):

«Ըղջուրն հրոյ նրման տեսայ,

նա եւ պաճառ, բան գլուարնկայ» (ՆՇԲԶ, էջ 566):

Մյուս կողմից՝ կցական բարդութեամբ օրինակներ, ինչպես՝

«Զբարոզն անաղ առնէիք

նաև բարկ բարկ ծիծաղէիք» (ՖԲԲ, էջ 111):

«Նաև սալին ընդ մանկան,

Թէ բրնցէր, որդեակ սիրական» (ՆՁԲ, էջ 128) և այլն:

Որպես նորակազմութիւն երբու շաղկապի ավելի որպես հարադրական բարդութեան է հանդես գալիս, քան կցական: Կոտտանդին Երզնկացու, Ֆրիկի և նույնիսկ նազաշ Հովնաթանի մոտ հանդիպող բոլոր օրինակները հարադրական բարդութեամբ են, ինչպես՝ «Երբ որ հնչեց» (ՆՁԲ, էջ 118), «Երբ որ տնասն» (ն. տ. էջ 121), «Երբ որ հոգոց ես կու հաննեմ» (ՖԲԲ, էջ 32), «Երբ որ մահն ինձ հանդիպի» (ն. տ. էջ 33), «Երբ որ լիչեցի» (ն. տ. էջ 45) և այլն:

Այնուամենայնիվ, միջին հայերենում կան մի քանի կաշուն կցական բարդութեամբ շաղկապներ, որոնք կա՛մ գրաբարից են գալիս, կա՛մ ստորալուծվելիս այլ իմաստ արտահայտելուց զգուշանալով՝ մեր հեղինակները կցական բարդութեամբ են մեկ ավանդել: Այսպես՝ Բանգի ստորադասական շաղկապը, որ հայտնապես կազմված է Բան և զի բառերից, միշտ կցական բարդութեամբ ենք գտնում, ինչպես՝

«...զբո՛ւ ձայնրդ լուայ, սասանեցայ ես,

Քանգի մերկ եմ՝ ւ ամօթով, փախեալ թագեայ ես» (ՆՁԲ, էջ 210):

«...Տեսցուք թէ ուտտի լեալ եկայր յաշարհն այն,

Քանգի ոչ էր այն մեկ երկիր սեփհական» (ՄԳԲ, էջ 144):

«Տամենայն ժամ տացուր փոռս տեսուն Աստուծոյ յազնեալին,

Քանգի ես կարօղութիւն մեկ հարազատ եղբայր Այվազին» (ՆՁԲ, էջ 157) ևն:

Թէև ստորադասական շաղկապը, որ կազմված է քի+ն բառերից, թեպետև սակավ կիրառութիւն ունի, բայց միշտ կցական բարդութեամբ է հանդես գալիս, ինչպես՝

«...Թէև գերեալ զբեղ սատանայ եւ ժանտ ախտից շար ծառայ ես» (ՄՆԲ, էջ 121):

«...Թէև լինի պարտնորդի եւ անմտան» (ն. տ. էջ 169):

Այլև համադասական շաղկապը նույնպես հաճախ կցական բարդված ձևով է հանդիպում, ինչպես՝ «Աշխարհս տուն է լի գանձով, փարթաութեամբ և ճոխութեամբ, Այլև սեղան է բարեխի...» (ՄՆԲ, էջ 113): «Այլև քան կամենայն խրատ գտնե և լողի» (ն. տ. էջ 178): Այս շաղկապը հանդես է գալիս նաև հարադրական բարդութեամբ, ինչպես՝ «Եւ ի պալլամէ որ լաղճ լինայ՝ լուծէ, այլ և ազաղէ արծուց» (ԱԱԱԱ, էջ 94):

Որովհետև ստորադասական շաղկապը, բնականաբար, միշտ կցական բարդութեամբ է հանդես գալիս, քանի որ բերականական ձևերի միացութեամբ լինելով՝ բաղադրիչներն անշատ-անշատ չեն կարող օգտագործվել: Վերևում արդեն նշել ենք, որ այս շաղկապը սակավ կիրառութիւն ունի, քանի որ բազմալանկ է և երկարահունչ, ուտտի հատկապես շափածո խոսքի մեջ գրեթէ չի հանդիպում: Արձակ գրող հեղինակները նույնպես խուսափում են որովհետև շաղկապից: Եղած սակավ օրինակներից է հետևյալը. «Եւ արջ առվհետև Աստուծ ոչ լիչէր զշնութիւն քո, նոյնպէս և եւ թողում յայսմ գիշերիս...» (ՎԱԱ, էջ 70):

Միջին հայերենում անհամեմատ շատ են հարադրական կազմութեամբ բարդ շաղկապները: Սրանք իրականում նախապես հանդես են գալիս որպես ազատ կապակցութիւններ, սակայն հետագայում իմաստային մերձեցման ու միասնութեան հիման վրա վեր են անցնում միիմաստ բարդութեան: Հարադրական բարդութեամբ կազմված շաղկապներն ստավեպայես երկու բաղադրիչ ունեն, թեև առանձին ղեպերիում հանդիպում են երեք և ավելի բաղադրիչներով: Երբ ի մտտ քննենք հարադրական բարդութեամբ հանդես եկող շաղկապները, կտեսնենք, որ մեծ մասամբ հենց շաղկապների միացութիւններ են, որոնք օգտագործվում են խոսքն ավելի պատկերավորելու, ուժգանցնելու, մասնավորելու և նման այլ նպատակներով: Պատկերավոր ասած՝ արանք շաղկապների կիրառութեան մեջ այն նույն դերն ու նշանակութիւնն ունեն, ինչ որ կապով կապակցումները հոլովական հարաբերութիւնների արտահայտման մեջ:

Հարադրական բարդութեամբ ունենք ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական շաղկապներ. շաղկապի տեսակի որոշումը կապված է ինչպես նրա բաղադրիչների, այնպես էլ բարդութեան արտահայտման ընդհանուր իմաստի հետ. այսպես՝ կամ քէ, նոյնպէս քէ, կամ քէ չէ համարատարական շաղկապներ են, քանի որ բարդութեան մեջ կամ, նոյնպէս շաղկապներն են իմաստով ախրապետում, ինչպես՝

«Թէ հոգի տայ կու պիտի,

կամ քէ հոգի հանել մարդուն,

Նա յօժար եմ ես հոգով» (ԿՅՏ, էջ 126):

«...Կարծեմ թիկի չէ մեռնած»

Կամ քէ լոկ ձիթով է օժած» (ՄՂԲ, էջ 90):

«Նայնպէս քէ կնիկն տանեն. նա ալքիկն համբերէ. ու թէ չհամբերէ, նա նոյն պատիժը է» (ՄԳԳ, էջ 33): «Թող համբուրեմ կամ քէ չէ իմ հոգիս առ, է՛ր ես ինձնէ հեռանալիս» (ՆՂԲ, էջ 15):

Մյուս կողմից՝ մանաւանդ որ, ապա քէ, քէ չէ եւ ստորագասական շաղկապներ են, քանի որ բարդութեան բնորոշանութիւնը իմաստն իսկ ստորագասութեանն է ենթադրում, ինչպիսի՝ «Ապա կարէ եպիսկոպոսն զայլ եպիսկոպոս հարկետրի եւ մեծարի սիրելարար, մանաւանդ որ եպիսկոպոսն զարհիպիսկոպոսն մեծարէ» (ՄԳԳ, էջ 24): «Եւ զայս գիտեա՛ւ, եղբայ՛ր, զի միտրեայ չերմն... փութով փոխի ի հայեմա՛ջ չերմն, մանաւանդ որ պատճառն յերեք հոգիքն լինի» (ՄՂՁՄ, էջ 34): «Ապա քէ չօգտէ, զնոյն ստածումնդ դարձեալ արս» (ն. տ. էջ 11): «Ապա քէ քրիստոնեայ լինի սպանածն, նա բնաւ չկարէ այլ պատարայ այնել» (ՄԳԳ, էջ 26):

«—Կտրի՛ճ, կու սիրե՛ս դու զիս, մի՛ աներ շատ խալիխի իմաց»

Թէ չէ եւ կ'ենես զուխդ, արեւուդ ու ալ շատ իրաց» (ՆԹԳ, էջ 56):

Եթէ բազաղրիչները միատեսակ շաղկապներ են, աչիքն՝ երկուսն էլ համադասական կամ երկուսն էլ ստորագասական, ապա հարադրութեան՝ շաղկապների որ տեսակին պատկանելը որոշելը դժուարին է, ինչպես՝ և կամ, ու կամ, նայնպէս և, եւ ապա համադասական շաղկապներ են, քանի որ բազաղրիչները համադասական շաղկապներ են, ինչպես՝

«Ձուծիմ հանգիստ եւ կամ քուն» (ԿՅՏ, էջ 159):

«Ով զող է այս գանձիս,

ու կամ նենգով ինձ լինայ,

Աստուծոյ է հակասակ» (ն. տ. էջ 188):

«...Նայնպէս եւ ձեռն եւ բազուկն յորժամ այտլի... անէ՛ղ զերմն» (ՄՂՁՄ, էջ 22):

Ասն խանին, պարոն եղի քեզ սասան,

Կամի զքեզ բառնալ զորդիդ առնել խան»

Նայնպէս եւ պարոնին պատրողական բան...» (ՄՂԲ, էջ 147):

«...եւ ապա թէ մեղկան լինի եպիսկոպոսն՝ նա կաթողիկոսի գիտելութեանը ձգեն զինք կամ տուժին՝ ըստ մեղանացն» (ՄԳԳ, էջ 25):

Մյուս կողմից՝ քէ որ, երբ որ, յորժամ որ, զի որ, քան քէ, մինչ(և) որ, քէպէս որ, զոր ինչ ստորագասական շաղկապներ են, քանի որ բազաղրիչները կա՛մ ստորագասական շաղկապներ են, կա՛մ ստորագասական շաղկապի վերածված բաներ՝ Օրինակներ.

Թէ որ—արտահայտում է պայմանի գաղափար, ինչպես՝

«Ինձ դուրսաց արիք, կու պահես շաֆով,

Թէ որ զիմիշ կանես, արս ինսաֆով» (ՆՂԲ, էջ 25):

«Թէ որ դու էլ ինձ կու սիրես, ասէ՛, իմանամ» (ն. տ. էջ 46):

«Թէ որ զատէ մարդ զիր ընկերն՝

զանձն իր դատապարտէ» (ԿՅՏ, էջ 213):

Յորժամ որ—արտահայտում է ժամանակի գաղափար, ինչպես՝

«Յորժամ որ... պարզեցնեց մեզ զայս բարիս,

...Պարտիքը բնարի զարտութիւնս, մերժել ի մէնջ զարբիս»

(ՆՂԲ, էջ 180):

«Թէ շար թէ բարի գործես, յորէ օր զամէն կու գրեն»

Յորժամ որ դիւան զրենն, զայն դաւթարն յառաջ կու բերեն»

(ՅՐԲ, էջ 87):

Ձի որ—առավելապես պայմանի գաղափար է արտահայտում, ինչպես՝ «Եթէ այր եւ եթէ կին, զի որ եկեղեցական լինի...» (ՄԳԳ, էջ 33):

Քան քէ—արտահայտում է համեմատութեան գաղափար, ինչպես՝

«Այլ ո՛վ է մեծ բժիշկ եւ ւէր զօրաւոր,

Քան քէ նա, որ զմեզ ստեղծեաց եւ է՛ թաղաւոր» (ՆՅԲ, էջ 213):

«Լաւ է ի տուն սղոյ ողբ եւ լաց երթալ,

Քան քէ արբեցողաց տունն վեր խաղալ» (ՆՂԲ, էջ 91):

Մինչ(և) որ—առավելապես արտահայտում է ժամանակի գաղափար, ինչպես՝

«Ընդ հոգոյդ միացիր, մինչ որ մեռանիս» (ՄՆԲ, էջ 144):

«Մնայ այսպէս ի յեփոցի,

Մինչ որ գիշերն կէս լինի» (ՄՂԲ, էջ 103):

«Տէ՛ր, մի՛ հաներ զմեզ ի կենացս,

Մինչ որ մեր պարտքս վրճարին» (ՅՐԲ, էջ 214):

«Գարձեալ աղաչեմ զքեզ, որ շտոնես զինչ ինձ կայ պահած»

Մինչև որ վճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուտած»

(ՅՐԲ, էջ 229):

«Մինչև որ յարութիւն լինի, անդ պահեմ որ դուք զայք տանջիք»

(ն. տ. էջ 85):

(զ)ինչ որ (զոր ինչ)—արտահայտում է ստորագասութեան բնորոշանութիւնը գաղափար՝ զրվելով առավելապես ուղիղ խնդիր երկրորդական նախադասութեան սկզբում, ինչպես՝

«Սասանայ զայն ի՛նչ գիտէ,

Ձինչ որ քո մըտօրդ քրնեկս» (ՅՐԲ, էջ 157):

«Ձամէնն, զոր ինչ աստէն զորժէր դուք՝ անդէն գտանկոց էր» (ՄԳԳ,

էջ 19) և այլն:

Հարադրական բարդութեամբ կազմված ստորագասական շաղկապի մեկ բազաղրիչը կարող է համադասական շաղկապ լինել, ինչպես՝ «...Ըմպելոյ պարզ եւ անուշահոտ զինի տուր, ապա քէ չօգտէ, զնոյն ստածումնդ դարձեալ արս. օգտակար է» (ՄՂՁՄ, էջ 11): «...Ապա քէ ամասն լինի եւ օղն տար, զմարմինն հով ջրով աղէկ լուս» (ն. տ. էջ 17): «Ապա երէ պատճառն ցուրտ ջրոյն լուանալոյն լինի, իր ստածումն այն է՛՝ որ ի տաք ջուրն աւազան մտանէ» (ն. տ. էջ 11) և այլն:

Հաճախ հարադրութեան բազաղրիչը այլ խոսքի մասի պատկանող բառ է լինում, որ լեզվի մեջ երբեք շաղկապական կիրառութիւն չունի, ինչպես՝

Թէ զէ (շաղկապ+բայ)—օրինակ՝

«Երենկ այն մարդոյն ասեմ, որ յաշխարհս ի սուզ կու կենայ»

...Քէ՛ չէ՛ օր հարսնեցրն գայ, նա հանդերձ հարսին շունենայ» (ՉԹԲ, էջ 149)։

«Այլոց այնչափ բառցիր որչափ բեզ ևս բերան՝ զբրևի, Քէ՛ չէ՛ ըզհողո հողի բնդգէմ մարդկան ևս ցուցուցել» (ԿԵՏ, էջ 176)։

Ոնց որ (մակրայ+շաղկապ)—օրինակ՝
«Ոնց որ (=հենց որ) տեսան զվարդըն պայծառ, Մարդուրն առին թէզ մի աւար» (ԿԵՏ, էջ 120)։

«Ոնց որ դու ելլես քաղես, արեգակահերպ կու փայլես. Ոնց որ դու ի տուն մտնուս, խաւարի ամէն աստուերս. Ոնց որ առուստ լինի, դամ ի դուռդ ասեմ, թէ՛ «Աբի...» (ՆԹԳ, էջ 72)։

Ապա քէ (մակրայ+շաղկապ)—օրինակ՝ «Յորժամ բորբոսն ի ներքս ի յերական լինի ի յարենն՝ ի յար եւ ի սուր եւ այրեցող շերմանն, հումայի հրիղայ կասեն. ապա քէ (=իսկ եթէ) դուրս յերակացն բորբոսին, այն ևս նուայայով շերմերն» (ՄՉՋՄ, էջ 4)։ «Եւ շուր գոր խմէ, հով թող խմէ, ապա քէ (=իսկ եթէ) ի բաղանիսն եզկ շքով աւազան մտէ ևս շուտ ելանէ, խիստ օգտակար է» (ՄՉՋՄ, էջ 9)։

«Շողի՛, թէ՛ հողիս ուղես, չէ՛ շասեմ՝ հանեմ տամ ի բեզ. Ապա քէ (=իսկ եթէ) աչերս ուղես, ինչո՞վ նայեմ զէպ ի բեզ» (ՆԹԳ, էջ 75)։

Հետևյալ նախադասության մեջ ապա քէ շաղկապական բաղադրություն չէ, այլ քէ շաղկապը որպես թարմատար ավելորդաբար զրգված է ապա մակրայի վրոս. «...Աստուած թագաւոր թագաւորաց է. Աստուծոյ հրամայն պարտ է կատարել յառաջն, ապա քէ դիմ բեռոյն» (ՎԱԱ, էջ 143)։

Նանց որ (ցուցական բառ+շաղկապ)—օրինակ՝

«...Նանց որ յորտագան ելան, Մէկ մի համբուրեաց զփեսայն» (ՄՆԲ, էջ 103)։

Թող քէ (եղանակավորող բառ+շաղկապ)—օրինակ՝ «Որդունքըն շեն ինձի լսել քող քէ (=թեկուզ) հազար երգումըն ասմ» (ՖԲԲ, էջ 168)։

«Մինչ ամէ զմահն ու մօտ է եւ անողորմ զբրոջն գայ. ...Ձի խրջճար յօտարականն քող քէ (=թեկուզ) հազար դարն կուլայ» (Ն. տ. էջ 45)։

«Ձիմատունն ո՞վ է յաղթել, քող քէ (=թեկուզ) հրնար բերին շարով, կամ զուգն բանք ազտեղի և բամբասեն սուտ խօսելով» (ԿԵՏ, էջ 170)։

Վասն զի (նախադրություն+շաղկապ)²⁰—օրինակ՝ «...Բաղուս աշխատանք աշխատեցայ ի դատաստանագիրս ձերայեայ մօտք, վասն զի այլակերպած էք եւ հեռացած ի հին հայ բառէն...» (ՍԳԳ, էջ 15)։

«Թագաւորն ոմն կազմեաց զարայց իւրոց ճաշ. վասն զի դուստանք եկեայ էին» (ՎԱԱ, էջ 128)։

Վերսիշյալ հարադրական կազմություններից պետք է տարբերել խոսքային հանդամներով պայմանավորված՝ շաղկապների խարտուսիկ կուտակումները, որոնք իրականում առանձին-առանձին տարբեր նախադասությունների

²⁰ Վասն զի բառը մեքէ հարադրության երբ դիտում, քանի որ երկու բաղադրիչներն էլ միջին հարկերում անխառնոր կիրառվում են։ Գրաբարում նա Վասն զի կցական բարդություն չէ (տե՛ս ՆՉԲ, հ. II, էջ 787)։

կամ բառերի են վերաբերում, ինչպես՝ «Երանի ոչ բնեն զվկայութիւնս նորա, բոլորով սրտի իւրեանց խնդրեն դեա, զի ոչ երբ որ զորմեն գանօրիտութիւն, ի շանադարհս նորա գնացին» (ՍԳԳ, էջ 15)։ Այս նախադասության մեջ իրար կողքի զրգված են զի, երբ, որ շաղկապները, սակայն երանք հարադրություն չեն կազմում, քանի որ վերաբերում են առանձին նախադասությունների. այսպես՝ զի անկախ ստորադասական շաղկապ է, որ գլխավորում է ի նախադասին նորա գնացին ստորադաս նախադասությունը, իսկ որ ստորադասական շաղկապը գլխավորում է զորմեն գանօրիտութիւն ստորադաս նախադասությունը, իսկ ոչ երբ կապակցությունը կարելի է համարել մի շարահարադրված զուգադրության մաս կամ, դրաբար լեզվամասնագիտության ավելի հարազատ մեղադր ոչ-ը համարել ի նախադասին նորա գնացին նախադասություն ստորգլխի միտական բառը՝ ոչ գնացին, իսկ երբ բարձր թարմատար։ Այսպես և՛

«Յայնժամ ողորմի Աստուած, որ աստին լայով դու խնդրես, Քէ՛ չէ՛ երբ տանին ըզբեզ, դու ի հօն ճար ո՞ր դտանես» (ՖԲԲ, էջ 156)։

Վերին նախադասության մեջ քէ չէ՛ երբ բառերը հարադրություն չեն կազմում, քանի որ երբ ստորադասական շաղկապը առնին զԲեզ Երկրորդական նախադասությունն է գլխավորում, եվ կամ՝ «Ապա թէ բաղանիքն հով լինի, շուտ ի դուրս ելանէ, զի երբ շատ նստի, կրկիւզ կայ որ շերմն բորբոսային դառնայ, նախադասություն մեջ զի երբ հարադրություն չեն կազմում, քանի որ զի շաղկապը վերաբերում է երկիւզ կայ ստորադաս նախադասությանը, իսկ երբ շաղկապը՝ շատ նստի նախադասությանը։ Ամբողջ նախադասությունը կարելի է արտահայտել հետևյալ ձևով՝ «Ապա թէ բաղանիքն հով լինի, շուտ ի դուրս ելանէ, զի կրկիւզ կայ, որ շերմն բորբոսային դառնայ, երբ շատ նստի»։ Սրբեկանները կարելի էր շատացնել, սակայն բնված օրինակներից էլ կարելի էր առնել, որ շաղկապների ամեն կուտակում բաղադրություն չի կազմում։ Բաղադրություն կազմելու համար շաղկապները պետք է ունենան ներքին սերտ միասնություն ու մեկ իմաստ։

Վերին ձևերից բիշ բանով են տարբերվում զուգադրական կիրառության հանգեւ եկող շաղկապները, որոնք թեև մեկը մյուսին են ենթադրում, սակայն գլխավորում են առանձին նախադասություններ, ինչպես՝ «...Ձի ոչ քէ եկեղեցին տանիքս է, այլ տանը եկեղեցոյն» (ՍԳԳ, էջ 30)։ «...Նա չէ՛ քէ՛ վասն կաթողիկոսութիւնս պատճառանաց փոխեցայ, Բանց որ երկու հարկերն մէկ եղաւ» (Ն. տ. էջ 37)։

Միջին հայերենում կան նաև կրկնությունը օգտագործվող շաղկապներ՝ բոլորն էլ, առանց բացառության, համադասական շաղկապի իմաստով, քանի որ կրկնավոր շաղկապները միավորիչ-հավելական են։

Կրկնավոր շաղկապներն մեծ մասամբ կրկնված համադասական շաղկապներ են, ինչպես՝ կամ... կամ... օրինակ՝

«Կամ կերէք, բարի հերեր. Կամ հրաման արւէք որ թուին» (ՉԹՏ, էջ 211)։

«Կամ ա՛ն զիս ծոցդ ի բուն, կամ՝ տէօթուր սուր երթամ ի տուն» (ՆԹԳ, էջ 53)։

«Կամ՝ խօսիր ընդ իս, կամ՝ նստիր ի յաշ» (ԳԱԲ, էջ 196) և այլն։

Թէ՛... քէ՛ կրկնությունը կազմված շաղկապը նույնպես քէ շաղկապի համադասական միավորիչ կիրառության կրկնությունից է կազմված, ինչպես՝

«Թէ հետ ֆալաքին սագիս.

Ըստվիս քէ՛ Թայց տա, քէ՛ շոր» (ՅրԲ, էջ 220):

«...Թէ՛ աստուածագաշտութիւն է, քէ՛ իմաստասիրութիւն է, քէ՛ աստեղաբաշխութիւն է և քէ՛ կրկրաշափութիւն է, և քէ՛ թուականութիւն է. քէ՛ բժշկութիւն է. և քէ՛ կրթութեանութեան արհեստն է, և քէ՛ քերականութեան արհեստն է» (ԱԱԱԱ, էջ 1):

Քանի որ միջին հայերենում երբ շարկապն օգտագործվում է քն համադասական շարկապի իմաստով, ուստի՝ երբ... երբ... կամ քէ... երբ... կրկնութեամբ ևս համադասական շարկապներ ունենք, ինչպես՝ «եքէ՛ այր և երբ՛ կին...» (ՄԳԳ, էջ 33), «...քէ՛ շար և երբ՛ բարի» (ն. տ. էջ 19), «...քէ՛ մաղան յաղթէ, երբ՛ պաղզամն» (ՄՀՋՄ, էջ 111) և այլն:

Վերջի ձևերից տարբերվում է ո՛չ... ո՛չ կրկնութեամբ կազմված համադասական շարկապը, քանի որ բազադրությունը շարկապից կազմված չէ, այլ՝ մակրայ-պատասխանական բառից՝ ո՛չ... ո՛չ: Այս շարկապը, թվում է, և՛... և՛ կրկնավորին որպես հականիշ է կազմված, ինչպես՝

- «Աչերդ ուռնայի նման. ո՛չ ի բուն ևս և ո՛չ արթուն» (ՆԺԳ, էջ 48);
- «Երթում յանսպատ կենում, ո՛չ տեսնում, ո՛չ ցանկանամ» (ն. տ. էջ 97):
- «Ո՛չ դարդս գիտես, ո՛չ հայս կիմանա»,
- «Ո՛չ ինսաֆ կանես, ո՛չ երեսդ բանաս» (ՆՁԲ, էջ 18);
- «Մինչ ամէ զմահն ու մօտ է և անդորմ գրբոցի գայ.
- «Ո՛չ ի ծեր կու խնայէ, ո՛չ ի մանուկ ՚ա՛նէ երեսխայ» (ՅրԲ, էջ 45) և այլն:

ՆՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Վերջին երկու տասնամյակներում հայ քերականական միտքն արժեքավորում է մեկ խոսքի մաս ևս՝ «եղանակավորող բառեր» անվանումով: Ինչպես գիտական ուսումնասիրությունների²⁷, այնպես էլ գործնական քերականությունների մեջ եղանակավորող բառերն առանձնացվում և արժեքավորվում են որպես ուրույն խոսքի մաս: Բնականաբար, հարց է առաջ գալիս՝ իսկ նախկինում ի՞նչ խոսքի մասի մեջ էին մտնում եղանակավորող բառերը, քանի որ դրանք միայն վերջին տասնամյակների կամ մեր լեզվի պատմության որևէ որոշակի ժամանակաշրջանի արդյունք չեն: Խնդիրն այն է, որ, ինչպես ստորև միջին հայերենի ու գրաբարի մասին խոսելիս կտեսնենք, նման բառեր մեր լեզվում միշտ էլ եղել են, սակայն ուշագործության չեն արժանացել: Մենք այստեղ նպատակ չունենք հարցի պատմության մասին խոսել, այլ նկատենք, որ գեուև Մ. Աբղղյանի կողմից առաջարկված այս խնդիրն աստիճանաբար ըմբռնում գտավ հայ քերականների կողմից, և այսօր այդ խոսքի մասը ուսումնական ձևերում, դպրոցական դասագրքերում մտցնելու աստիճան մշակված է ու հիմնավորված: Միջին հայերենի շեքվող խոսքի մասերի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն ճշմարտության, որ այստեղ կան բառեր ու բառակապակցություններ, որոնք չեն նույնանում ո՛չ մակրայների,

ո՛չ ձայնարկությունների և ո՛չ էլ մյուս շեքվող խոսքի մասերի հետ, այլ առանձին երևույթ են մեր լեզվի մեջ, ուստի մենք այդ բառերը բնում ենք որպես առանձին խոսքի մաս՝ «եղանակավորող բառեր» պայմանական անվանումով²⁸: «Եղանակավորող բառեր» անվանումն, անշուշտ, ինչ-որ չափով խոսում է այդ բառերի բառական-իմաստային և քերականական կիրառության մասին: Եվ իրք, «եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտական վերաբերմունքը, որով եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը, նրա որևէ անդամը» (Ս. Գ. Աբրահամյան, ՉԽՄ, էջ 507): Նկատենք, որ եղանակավորող բառերը չեն նույնանում ձայնարկությունների հետ, քանի որ վերջիններս հիմնականում զգացական և կամային վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառեր՝ ժամանական, դատական վերաբերմունք: Մյուս կողմից՝ հայտնի է, որ ձայնարկություններն առավել չափով, հատուկ առողանություն արտասանվող ձայնավոր հնչյուններ են, երբեմն նաև մեկ կամ երկու բաղաձայնի կցումով, մինչդեռ եղանակավորող բառերը գրեթե առանց բացառության բառական-քերականական այլևայլ կազմություններ են, թող թև ներկայումս այդ կազմություններ իրենց նյութական իմաստը կորցրել են: Այսպես, օրինակ՝ «Իսկ ևս կոչեցի զերիցունս եկեղեցուն Տիփոնի բաղարի և կարծեցի քէ նորա նենգութեամբ ինչ ետուն նմա զերգումն ևս ետուն ինձ ստել» (ՓԲՊՁ, IV, ԾԳ) և «Կարծնմ քէ նազարն նաչաղ է» (ՆՁԲ, էջ 12) նախադասություններում «կարծել» բայի երկու տարբեր ժամանակներ են օգտագործված, սակայն դրաբար նախադասության մեջ բայի իր նյութական արժեքով է, մինչդեռ երկրորդ օրինակում՝ իր նյութական արժեքից հեռացած: Ստորև արված օրինակներում կարելի է մտավոր պատկերացում կազմել, թե ինչպես է բառն իր նյութական արժեքից հեռանում.

- «Եղև յանկարծակի
- Ինձ բան խօսիլ՝ ով ուղենայ.
- Այնպէս, որ ևս ի չիմ
- խօսից շարելըս դարմացայ» (ԿԵՑ, էջ 190):
- «Կարօտ շատ ունիմ, դալում,
- Թող մէկ համբուրեմ, զալում» (ՆՁԲ, էջ 6):
- «Թող Տովնաթան մէկ ստղ սուէ քո թասին» (ն. տ. էջ 35):

Ինչպես տեսնում ենք, առաջին օրինակում շատ բան կախված է առողանությունից և շեշտադրությունից, եթե այնպէս բառի արտահայտումն ըստ արտասանության ճիշտ իսկ լիներ, բոլոր զնայքերում ավելի արամաբանական կլիներ կարգավ այնպես որ առանց արտահայտում, քանի որ այդ առավել չափով է համապատասխանում նախադասության մտքին: Բայց չէ՛՝ որ այդ զնայքում մենք կունենանք այնպես որ եղանակավորող բառ: Այդ անցումն ավելի շոշափելի է հարցող օրինակներում: Չեղեկակն, անշուշտ, թող բառն իր նյութական իմաստով չի օգտագործել, այլ որպես եղանակավորող բառ, սակայն բավական է թող բառը շեշտված արտասանել և այնուհետև փոքր-ինչ զայքում ստալ, այնպիսի կունենանք նյութական իմաստով բառ, այսինքն՝ այն նույն իմաստով, ինչ որ ունենք հետևյալ օրինակում՝ «Թո՛ղ մեզ այսօր, և վաղին պատասխանի արասցուք բեզ» (ՓԲՊՁ, IV, ԾԳ): Փորձառական հնչյունաբանու-

²⁷ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, ՉԽԵՎՈՂ ԽՈՍՔԻ ԺԱՌԵՐ Ե ԵՐԱՅԵ ԲԱՌԱԿԱՆ ՈՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՌԱԿՆԻՉՆԵՐԻ ՓԻԻՆՆԱԳՐԱԲԵՐՈՒՄԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ԻՐԱՆ, 1965: Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն:

²⁸ Մ. Աբղղյանն իր «Շարժ լեզվի տեսության մեջ եղանակական բառեր կամ ձայնարկներ է անվանում (էջ 132):

թյան խնդիրն է պարզել, թե վերևի կիրառություններում բառն ինչպե՛ս է արտասանվում, սակայն անվիճելի է, որ մենք և՛ բառական, և՛ կիրառական ու բերականական իմաստով տարրեր ներուլթյաների հետ գործ ունենք. կարո՞ւս ասած՝ առաջին կիրառություններում քող եղանակավորող բառ է, իսկ վերջին կիրառությունում՝ բայ՝ զրկված հրամայական եղանակով: Այսպես նաև նախադասությունների համար, օրինակ՝

«Կուր են հոգով աչօր,
կըտօք լիմար են, անլիմայ,
թէ տէր ով է խելաց,

Կամ այս շնորհիս, որ առ իս կայ» (ԿՅՏ, էջ 187):

Այս նախադասության մեջ տէր ով է կապակցությունը, մեր կարծիքով, զրկված է՝ «ո՛ւմ է պետք» իմաստով և ոչ թե՛ տերք «владелец» ո՛վ է իմաստով, ուստի եղանակավորող բառ է:

Եղանակավորող բառերն առավելապես առնչակցվում են մակրայների հետ: Պատահական չէ, որ դրանք անցյալում մեծ մասամբ մտել են այդ խոսքի մասի մեջ: Սակայն ուշագիտ բնութիւնը ցույց կտա, որ եղանակավորող բառերը բոլորովին չեն նույնանում մակրայների հետ: Այսպես՝ նրանց միջև նախ կա շարահյուսական որոշակի տարբերություն: Մակրայները գերազանցապես ստորոգյալի պարզագ լրացումներ են լինում՝ կախված իրենց տեսակից, մինչդեռ եղանակավորող բառերը, զրկված լինելով նյութական իմաստից, նախադասության անդամ չեն դառնում, այլ պարզապես խոսողը զրանցով իր վերաբերմունքն է արտահայտում իրողության նկատմամբ: Անս ինչու, մակրայները զրկվում են հատկանիշ արտահայտող բառերի վրա, մինչդեռ եղանակավորող բառերը զրկվում են ինչպես նախադասությունների ու բառակապակցությունների, այնպես էլ ամենայն բանի վրա: Այսպես, օրինակ՝

«Տանին գերեզման զընեն եւ հոգով իւր աշքըն լըցուի.
Ապա փոշիմանի՝ չ աւէ թէ՛ հերիք է՝ ալլ լի սիտի» (ՇԲՔ, էջ 156):

«Այլ ստեղծ յոչնչէ զօրովեամբ ինքեան.

Նախ գերկինս երկնանօք, յոյժ վայելչական.

Ապա զորս ի նիսիոյ շորից տարրական» (ՄՂԲ, էջ 142):

Վերսիշխյալ նախադասությունների մեջ ապա և նախ բառերը ժամանակի մակրայներ են և ստորոգյալի լրացում: Նախ... ապա զուղազրությունը կասկած չի թողնում, որ մենք մակրայի հետ գործ ունենք, իսկ ինչ վերաբերում է ապա բառի՝ առաջին նախադասության մեջ անկախ կիրառությանը, ապա այն իմաստով համարժեք է հետո մակրային: Մինչդեռ՝ «...ապա ով կանէի ի հօվանոյ նորա՝ ի պատուիրանցն եւ զօրժէ մեղս եւ անզեղջ մնայ, սատանայ՝ աւան հարեալ սպանցէ զնայ եւ կորընչի» (ՎԱԱ, էջ 46) նախադասության մեջ ապա բառը մակրայ չէ, քանի որ շեշտված կերպով ժամանակ չի արտահայտում:

Ճիշտ է, որ եղանակավորող բառերն՝ առավելապես աղերսակցվում են նախ մակրայների, ապա և ձայնարկությունների հետ: Սակայն ճիշտ չէր լինի կարծել, որ մյուս խոսքի մասերի հետ չեն առնչակցվում: Որպես երբեք նյութական արժեք ունեցող բառաձևից առաջացած ձևեր նրանք կարող են աղերսակցվել այլևս ի խոսքի մասերի պատկանող բառերի հետ: Այսպես, զրա-

բարյան իսկ զոյականի (որ մեր հին լեզվում նշանակում էր «բուն գոյացություն») շաղկապական կիրառությունները հայանի են, սակայն իսկ բարը ոչ պակաս չափով օգտագործվում է նաև որպես եղանակավորող բառ, ինչպես՝

«Ով ընդրէ զչարն ի բարոյն

՛ չ ի սուրբ սըրտէ սիրէ զԱստուած,

Նա նմա իսկ վայել է

Իմաստութեան զուռն ու խելաց» (ԿՅՏ, էջ 205):

Անկասկած, նույն իսկ բառից է ձևավորվել իսկի եղանակավորող բառը, որը, կարծես, միջին հայերենով խոսք ձևավորելու համար կենսականորեն անհրաժեշտ է. այն հանդիպում է ամեն բանաստեղծության, ամեն շեքի մեջ, ինչպես՝ «...և իսկի ճոհար շիայ որ ինքն մուտ շայնէ» (ԱԱԱԱ, էջ 37)։ «Ձիւնը որ դժար բառ կայ հայ լեզուաւ՝ պատմէ. զի որ կարգացողը դիւրութեամբ հասկնայ, և ուսնողն դիւրութեամբ ուսանի, և իսկի ծածուկ իրք շմայն» (ն. ա. էջ 25) և այլն:

Եղանակավորող բառերն աղերսակցվում են նաև դերանունների հետ. այսպես՝ հանց, հենց միջին հայերենում ցուցական դերանուններ են: Հապաջույց կարելի է բերել այդ բառերի հետևյալ կիրառությունները. «Տանց աման լինի որ բերանն նեղ լինի» (ԱԱԱԱ, էջ 22)։ «Եւ սոսց այլն այն, թէ գիտէի, որ դուր նանց գեղեցիկ էիք» (ՎԱԱ, էջ 137)։ «այա և՛ «հենց բարկացող կայ՝ որպէս շիւ հոզ է» (ՆՇՔ, էջ 84) և այլն, մինչդեռ այդ բառերը միջին հայերենում հանգստ են դալին նաև որպես եղանակավորող բառեր, ինչպես՝ «եկի առի հանց կրակի» (ՇԲՔ, էջ 164)։ Հանց եղանակավորող բառն առավել շատ օգտագործված ենք գտնում որ բառի բաղադրությանը, ինչպես՝ թէ բ որամ արորես եւ խմցեսն՝ զփայծաղն հալ... եւ թէ ջրով արորես... գերկնուն բերանն բանայ, հանց որ (= այնպես որ) արուն յուժէ» (ԱԱԱԱ, էջ 94)։ Եվ կամ՝

«Լաշկարն արար զիզան զիզան.

Հանց որ (= այնպես որ) արիւն գետեր կան» (ՇՔՏ, էջ 202):

Եղանակավորող բառերն աղերսակցվում են նաև թվականների հետ. այսպես՝

«Մեկ մարդ մի ճուհար ունէր, ՛ ի խելաց շահն շրկարաց» (ՇԲՔ, էջ 160):

«Թող էդ բաղչէն մէկ վարդ կտրեմ, դու էլ պինդ պահէ» (ՆՇՔ, էջ 46):

Վերևի կիրառություններում մէկ, մի թվականներ են, մինչդեռ ստորև բերված օրինակներում նրանք այլևս իրենց նյութական իմաստը կորցրել են, չեն նշանակում հատկապես մի, մէկ (1)։ ինչպես՝

«Պարի եկ մին ինձ մօտ՝ դու մտրվաթ արայ, է՛ր ես ինձնէ հոանայիս» (ՆՇՔ, էջ 196):

† «Եկել ես օտար լերկիր, մէկ ցուցու, թէ ի՞նչ կու կենաս,

Մեռնիս դու՝ ի հող մրտնիս, մէկ ասա, թէ ո՞ր կու դնաս» (ՇԲՔ, էջ 144) և այլն:

Եղանակավորող բառերի՝ կապերի հետ աղերսակցվելու դեպքեր նույնպես կան. լավ օրինակ է իբրև եղանակավորող բառը, որտեղ և շաղկապը փոխաբերված է հոմանիշ ու շաղկապով:

«Անեն խանին, պարոն էղ ընդ սասան
նոյնպէս և պարոնին պատրդական բան
Իբրս (= իբրև թի) փեսայն լինել նորա գաւաճան» (ՄՂԲ, էջ 147):

Գրաբարում ևս իբրև բառը, ստորագասական շողկապի իմաստով հայտնի է իբրառութիւնից բացի, ունի նաև կապական և եղանակավորող բառի իմաստով կիրառութիւններ: Որպես օրինակ կարելի էր բերել Եղնիկից հետևելու նախադասութիւնները. «Ձիա՛րդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իբրև զժառանգ ի սպանս՝ յոր կարգեցաւ հասանելոյ...»: Մյուս կողմից՝ «...և իբրև խօսուն բերանով անշշունքն բողբէ» (եղծ աղանդոց, 1, 9):

Առաջին նախադասութիւն մեջ իբրև կապ է, իսկ երկրորդում՝ եղանակավորող բառ:

Բազմաթիվ խոնարհված ձևեր ևս, հետանալով իրենց նյութական բովանդակութիւնից, վեր են ածվել եղանակավորող բառերի: Եղանակավորող բառ զարձած բայական ձևերն առավելապէս հանդես են գալիս թէ՛ ստորագասական շողկապով, ինչպէս՝

«Չլինի թէ ստես դճոյդդ
Ի վերայ ոսկուց տաբանաս» (ՅրԲ, էջ 195):
«Մեծ իմն փորձութիւնք աշխարհիս զիպան
Միջերկրեայց որ կոչեն աշխարհ՝ յունական,
Դեւթէ Ստամպոլու մինչ ի Պարսկաստան» (ՄՂԲ, էջ 151):

Նկատենք, որ զրաբար լեզվում նույնպէս որպէս եղանակավորող բառ նման կազմութիւններ կային: Բերենք թեկուզ հետևելու օրինակները. «Սէ յորժամ կարացն տեւրանան՝ որում ցանկայր, այնուհետև հնարս խնդրելք անն կնոջն կորտակն ո՛ր փրակ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել» (ՓԲՊՁ, IV, ԺԵ): «Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւժանի, գրեթէ և մեռանի» (ԵԿԵԱ, I, 9): «Երկնչելով երկնու թագաւորն Պարսից Շապուհ, հիթ զուցէ ստեսցէ սիրուն նորա Արշակ արքայ Հայոց» (ՓԲՊՁ, IV, ԺՁ) և այլն:

Միջին հայերենում թեև քիչ չափով, բայց կան նաև կոչականներից ու օժանկաններից առաջացած եղանակավորող բառեր, ինչպէս՝ «Սէ զիբեր ի չուրն զնես զչուրն իբրև բաշէ. և զկապանին իրմով կու ածեն և կու կոկեն. և շատն (= առավելապէս) ի Սարտկինոսացն ևս ալլազդացն զլուխ ամիրդին ի բան կու անցանեն ի մեր յերկիրն» (ԱԱԱԱ, էջ 81):

«Անհայ իմեցինք կտորած զդալով,
Ամօթուս կերանք՝ բալով, սգալով:
Շիտակ (= ուղղակի) մեռնելէ պրծանք ինչ հալով» (ՆՁԲ, էջ 152):

Անկասկած, արաբերեն աخیر «վերջ, վերջին» գոյական-ածական բառից է առաջացել ախիր (օրից և՛ ախր) եղանակավորող բառը, որ դանում ենք նազաշ Հովնաթան բանաստեղծի մոտ.

«Ախիր ճող կու դանաս, այդպէս շես մնալ» (Բանաստեղծք, էջ 218):

Առաջանալով նյութական բովանդակութիւնից զրկված ալլախ բառերից ու խոսքային կապակցութիւններից, ի տարբերութիւն մակրայինների, որոնք կարող են զրկել միայն հատկանիշ արտահայտող բառերի վրա՝ իրենց հերթին հատկանիշ արտահայտելու համար, եղանակավորող բառերը կարող են զրկել ինչպէս նախադասութիւնների, այնպէս էլ նախադասութիւն մի մասի, որևէ

բառակապակցութիւն կամ առանձին մեկ բառի վրա (գոյական, բայ, դերանուն և այլն): Բառահարաբերութիւն մեջ շնն մտնում վերջիններեա հետ, այլ պարզապէս արտահայտում են խոսողի վերաբերմունքը, մասնավոր՝ Այսպէս՝

1) «...և ա՛հա իրօի (< իբրաօի) աղուէսն խես է և իմաստուն կենդանի» (ՎԱԱ, էջ 38):

2) «Գիտե՛ս մարմին ևմբ մտեղի.
Գէմ արձան շէմբ ինչ պղքնծի» (ՅրԲ, էջ 234):

3) «Ամ, երբ հանց ընկերք քո բախան.
Ու թալեհն, ամ, ի՛նչ կայ հարկիր» (ՅրԲ, էջ 113):

4) «Սո կայնաւորին քաղցրածայն բառքն,
Սո զոզան էշ, խօ թագա գառքն,
Սո քաղցր մեղր, խօ լեղի դան...» (ՆՁԲ, էջ 79):

5) «Կարծեմ թ՛իակի չէ՛ մեռուած,
Կամ թէ լոկ ձիթով է օժտ» (ՄՂԲ, էջ 90) և այլն:

Վերևի օրինակներից առաջին երեքում իրաօի, գէմ, ամ եղանակավորող բառերը զրկված են նախադասութիւն վրա, չորրորդ օրինակում խօ եղանակավորող բառը զրկված է առանձին բառակապակցութիւնների վրա, իսկ հինգերորդ օրինակում լոկ բառը զրկված է ձիթով գոյականի վրա:

Գրաբար լեզվում ևս եղանակավորող բառերը զրկվում էին ինչպէս նախադասութիւնների, այնպէս էլ նախադասութիւն այս կամ այն մասի ու անդամի վրա: Հնաաբբերական է, օրինակ, իսկ եղանակավորող բառի կիրառութիւնը, որ զրկվում է ինչպէս գոյականի ու անկանի, այնպէս էլ բայի, զերանվան և նույնիսկ մակրայի վրա, ինչպէս՝ «Նշանագիրքն իսկ» (ԿՎՄ), «ուր բնակ իսկ իցէ հոյն» (ՓԲՊՁ), «որով և և տեսանմի իսկ» (Եղիշէ), «որում պարգևեր իսկ վիճակ» (ԿՎՄ), «նա և ևս փին իսկ» (ԵԿԵԱ), «իսկն իսկ կարող էր» (ն. ա.) «պատահեցաք ևս մեկ իսկ» (Եղիշէ), «չառաբազայն իսկ ասացաւ» (ԵԿԵԱ) և այլն, և այլն:

Վերևում շարադրվածից կարելի է եզրակացնել, որ միջին հայերենում կամ մի խօսքի մաս, որի մեջ մտնող բառերը շնն նույնանում ո՛չ մակրայինների ու ձայնարկութիւնների և ո՛չ էլ մյուս խօսքի մասերի պատկանող բառերի հետ: Քանի որ ընդհանրապէս շիթելով խօսքի մասերն առավել չափով առաջացել են նյութական բովանդակութիւն ունեցող բառերից, ուստի եղանակավորող բառերը քայքայութիւն չէին կարող կազմել Անշուշու, եղանակավորող բառերի մեջ կան առանձին բառեր, որոնց խօսքի մասային պատկանելութիւնը որոշելը զբոսն զժվար է, սակայն ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ եղանակավորող բառերը հեշտական նույն կազմի մեջ բոլորովին տարբեր իմաստ ու բերականական երեսվթ են արտահայտում, ուստի և ըստ իրենց արտահայտած իմաստի և բերականական կիրառութիւնն այնքա է տարբերվել նույն հեշտական կազմով արտահայտված այլ իմաստ ու կիրառութիւն ունեցող բառերից: Մեկ անգամ որ նյութական կամ բառական իմաստ ունեցող բառերը, զրկվելով իրենց նախնական իմաստից, դանում են եղանակավորող բառեր, այնուհետև հեշտական նույն կազմի մեջ նրանք համատեղում են երկու իմաստ, ուստի և երկու տարբեր բերականական կիրառութիւններ և ըստ հարկի օգտագործվում են այս ու այն իմաստով ու բերականական կիրառութիւնով:

Միջին հայերենը եղանակավորող բառերով հարուստ է, դրանք տանջակեղծով են. առավելապես շատ են պարզ ու բարձր տարրեր բաղադրիչներով և խոսքի կապակցություններով կազմված եղանակավորող բառերը:

Հաս կազմաօձիճան եղանակավորող բառերը նույնպես լինում են պարզ, ածանցյալ, բերականահան ձևերից առաջացած, բարդ և նկարագրահան:

ա) Պարզ եղանակավորող բառեր—մէկ, մին, լոկ (լուկ, լոֆ), բոզ, իսկ (իսկի), հանց (հեց), անա, հուկայ, ամ, աղ, գլմ, հետ, ապա, մաեսաւոց, ոչ, նախ, նա, քերև, ամէն, հաւասար, խո (խօ, խոյ), հասարակ, հա, շիտակ, ստոզ, այո, շատն և այլն:

Պարզ եղանակավորող բառերի շարքը պետք է գրվեն նաև փոխառյալ եղանակավորող բառերը՝ անապ, ախիւր, բալի (բալիմ, բալամ), հալա, պարի, դէյի, Քելիէ «երան»:

բ) Ածանցյալ եղանակավորող բառեր—նմանապես, անպաճնա, անենար, անկասկած, անաստակ:

գ) Քերականական ձևերից առաջացած—իւա (իւակ, յիւակ), կարծն:

դ) Բարդ և եկարգաբան եղանակավորող բառեր—մի՞րէ, միայն, շինի, որպէս, նորնպէս որ, մէկ մի, հանց որ (հանցում որ), որպէս և, նորնպէս և, այնպէս և, մէկ էլ, այնպէս որ, ապա թէ ոչ, թէ ոչ, թէ չէ, թէ չէ նա, միայն թէ, ապա թէ (հապա թէ), ո՞նց որ, տեր ով է, որչափ ևս առաւել, ի վերայ այս ամենայնի, աստուած կու սիւրէֆ, արեւոզ համար, հաշուէ թէ, հաշուեմք թէ, գրէթէ, լինիք, ալ, շինի թէ, բոզ թէ, կարծն թէ, ասես թէ և այլն, և այլն:

է) Պարզ եղանակավորող բառեր.—վերնում բերված պարզ եղանակավորող բառերը միևնույն ծագումն ու կիրառությունը չունեն, դրանց մեջ կան այնպես կոչված՝ բուն եղանակավորող բառեր, որոնք միջին հայերենում միմիայն որպես եղանակավորող բառ են օգտագործվում: Գրանք են՝ լոկ (լուկ, լոֆ), անա, հուկայ, ամ, պէմ, ոչ, նա, քերև, ամէն, խո (խօ, խոյ), հա, այո: Անկասկած սրանց հետ պետք է զննել նաև փոխառյալ եղանակավորող բառերը՝ անապ, ախիւր, բալի, (բալիմ, բալամ), հալա, պարի, դէյի, Քելիէ: Եղանակավորող բառերի՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած աղերսակցությունների շարքը բննելիս մնացած պարզ եղանակավորող բառերի մասին այս կամ այն չափով խոսել ենք, ուստի ստորև բննում ենք բուն եղանակավորող բառերն ու նրանց կիրառությունները:

Լոկ—Գրաբար լեզվում այս բառն առավելապես ածականական կիրառություն ունի. ինչպես՝ «Երկիր պագանէին նմա ոչ իրբն մարդոյ լոկոյ, այլ իրբն Աստուծոյ ճշմարտոյ» (ՆՁԲ, հ. 1, էջ 891): Մեր հին լեզվում նա լոկ բառը կիրառված ենք գտնում եղանակավորող բառի իմաստով, ինչպես՝ «Ընկ մնաց դերիդմանն, յորում յառաջագրին տեսին զնա եղևալ»: «Թեպէտև զայլ ժամանակն լոկ ի շնորհացն իցեմք, այլ ոչ եթէ և այժմ» (ն. տ. էջ 892) և այլն:

Միջին հայերենում լոկ բառը միայն եղանակավորող բառի իմաստով է օգտագործվում, ինչպես՝ «Ութերորդ դասք են, որ ասեն իրենց զեկանիոն. և են դարս աղեղնատորք և ուննան զուպլ վարոցս ի ձևովին և լոկ տապար» (ՄԳԳ, էջ 42): Բայց թէ արծող չկենայ դրած, լոկ փրթուցած լինի ու սնէ վնաս, նա անասնոյն տէրն վճարէ զդենն և զզարպսուն հնկահն» (ն. տ. էջ 79): «Եւ այն որ արզով և ջրով է դրած՝ լաւ է քան զայն որ լոկ ջրով է դրած» (ԱԱԱԱ, էջ 142): Առանձին հեղինակների մոտ լոկ եղանակավորող բառը հանդես է գալիս նաև հնչյունափոխված լոկ և լոֆ ձևերով, ինչպես՝

«...նոյնպէս որ բանի արնտես լոկ խայթոց ունի զինչ մեղու» (ՆԲԲ, էջ 149):

«...Լոկ շրջիս զօրրն դու մուր» (ՅԲԲ, էջ 220): «Երբ մահն ի վերայ հասնէր, լոկ անհոգ դաշտն խրփէին» (ն. տ. էջ 129): «Անադ, թէ կտրեն զբուն, լոֆ մընայ ձուկն ծառուած» Ապա և՛ «Առանց ջուր՝ ձուկն չի ապրի, լոֆ ջրին կարողն անիծած» (ՆԲԳ, էջ 46): «Հոգիս պարտիկան էի գրողին, լոֆ Թող գայ ու առնու տանի» (ն. տ. էջ 48): «Միբու հանն ի ձայն կած, լոֆ լսեց սրտիկս ու դողաց» (ն. տ. էջ 45) և այլն:

Հովհաննես Երզնկացու մոտ գտնում ենք հուկայ եղանակավորող բառը: Ահա այդ օրինակը. «Հուկայ մերկ եմ ես հիմայ» (բանաստեղծութ. էջ 229) և հնց այն հանգամանքը, որ տարրեր գրչություններում հուկայ բառը փոխարինված է «հաւաստի» սահմանում, թէպէտ որ այն մասին, որ դա եղանակավորող բառ է, Հուկայ բառը վկայված չէ ո՛չ Հայկազյանում և ո՛չ էլ Ստ. Մախառանյանի մոտ ու Հ. Աճառյանի Արմատական ու Գավառական բառարաններում:

Ամ—Միջին հայերենով գրող զրեթե բոլոր հեղինակներն օգտագործում են այս եղանակավորող բառը: Զարմանալի է, որ Հ. Աճառյանը ո՛չ Արմատականում և ո՛չ էլ մանավանդ Գավառականում չի նշում այս բառը: Ս. Ամատունին նույնպես չունի Ստ. Մախառանյանի Բացատրականում բերում է օրինակներ Կեղծ Շ. Բաղրատունուց և կարծում, թէ պուցլ պատուագրութիւն [է] այժմ բառի (տե՛ս Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 54): Ամ եղանակավորող բառն, բայց երևույթին, այժմ, ճիշտ մակրայններից կամ ամս «բայց» փոխառյալ շղկիւպից է առաջացել: Օրինակներ.

